ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2019

ՀՏԴ
ԳՄԴ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Երաշխավորվել է հրատարակման ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պ.գ.դ., դոցենտ Ա. Ց. Մարուքյան

Ա. Մելքոնյան, Գ. Պողոսյան, Ա. Աղասյան, Ա. Մարուքյան, Դ. Քերթմենջյան, Հ. Մելիք-Ադամյան, Վ. Վարդանյան, Գ. Բաղալյան, Ա. Հովհաննիսյան

Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը, – Եր., , 2019, 480 էջ + 127 էջ հավելված:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի ընդունումից հետո ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ 2016-2018 թթ. ընթացքում իրականացվեց Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական խմբի ծրագիրը, ինչի արդյունքում էլ ստեղծվեց սույն կոլեկտիվ աշխատանքը:

Արխիվային փաստաթղթերի, ականատեսների վկայությունների, մամուլի նյութերի և տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների հիման վրա աշխատանքում ներկայացվում են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված տարածքային, ժողովրդագրական, մշակութային և նյութական կորուստները, որոշակիացվում են դրանց ծավալներն ու հետևանքները, ինչպես նաև առաջարկներ են արվում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման՝ հատուցման գործընթացի կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերի վերաբերյալ:

Գիրքը նախատեսված է Հայոց ցեղասպանության պատմության ու, մասնավորապես, պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-9939-

© Ա. Մելքոնյան, Գ. Պողոսյան, Ա. Աղասյան,
Ա. Մարուքյան, Դ. Քերթմենջյան, Հ. Մելիք-Ադամյան,
Վ. Վարդանյան, Գ. Բաղալյան, Ա. Հովհաննիսյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2015 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի ընդունումից հետո ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ 2016-2018 թթ. ընթացքում իրականացվեց Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական խմբի ծրագիրը, որը ֆինանսվորվել է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից:

Հետազոտական խմբում ընդգրկված գիտաշխատողները կողմից ուսումնասիրվել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասների վերաբերյալ արխիվային փաստաթղթերում, ականատեսների վկայություններում և մամուլի նյութերում պարունակվող հսկայածավալ նյութեր, որոնցից հավաքագրված տեղեկությունները համակարգվել ու դասակարգվել են ըստ որոշակի խմբերի՝ տարածքային կորուստներ, ժողովրդագրական կորուստներ, մշակութային կորուստներ, հողագույքային և ֆինանսական կորուստներ:

Ցեղասպանության իրագործմամբ հայերի կրած գլխավոր կորստի՝ հայրենազրկման, Արևմտյան Հայաստանի հայաթափման խնդիրը քննարկվում է ոչ միայն պատմական, այլև միջազգային իրավական ու քաղաքագիտական հարթություններում: Այս առումով քննական վերլուծության են ենթարկվել Հայաստանի տարածքներին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերը, վեր են հանվել հայ ժողովրդի թիկունքում կնքված պայմանագրերի մեզ համար անբարենպաստ դրույթների հաղթահարման հնարավոր կառուցակարգերը:

Ժողովրդագրական կորուստների հստակեցման շրջանակներում նախ ճշգրտվվել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության թվաքանակը 1914 թ. դրությամբ, որից հետո, բնական աճի հաշվառմամբ

ուրվագծվել է հանցագործությունից մեկ դար անց հայ բնակչության հաշվարկային հնարավոր թիվը:

Մշակութային կորուստների հստակեցման շրջանակներում ուսումնասիրվել են արևմտահայ թատրոնին, կերպարվեստին, երաժշտական և ժողովրդական արվեստին, ազգագրական հարուստ ժառանգությանը, բանահյուսությանը, ինչպես նաև ճարտարապետական կոթողներին ու պեղումների ենթական հնավայրերին հասցված անդառնալի կորուստների մոտավոր ծավալները: Հետազոտություններ են տարվել նաև մշակութային՝ նյութական ու ոչ նյութական, այդ թվում՝ գեղարվեստական արժեքների գնահատման, ինչպես և դրանց պատճառած վնասների փոխհատուցման հնարավոր ուղիների, եղանակների ու մեխանիզմների հայեցակարգի մշակման ուղղությամբ: Այս առումով հետազոտվել են մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ Թուրքիայի Հանրապետության կողմից ստորագրված ու վավերացված միջազգային կոնվենցիաները՝ նշելով թուրքական պետության կողմից այդ փաստաթղթերի բազմաթիվ խախտումները և դրանից բխող պատասխանատվությունը:

Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված հողագույքային և ֆինանսական կորուստների հստակեցման առումով ուսումնասիրվել են Մեծ եղեռնի տարիներին Արևմտյան Հայաստանի Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Բիթլիսի և Վանի նահանգներում, ինչպես նաև Տրապիզոնի նահանգում և Պարսկահայքում հայ բնակությանը հասցված վնասների վերաբերյալ ՀԱԱ-ի ֆոնդերում պահվող նյութերը: Հավաքագրվել են նշված նահանգների գյուղերում և քաղաքներում հայերին պատկանող անշարժ և շարժական գույքի, արդյունաբերական ձեռնարկությունների, հանքավայրերի և արհեստագործական կազմակերպությունների, բանկային հաշիվներում և առձեռն ունեցած դրամական և այլ միջոցների մասին: Տեղեկություններ են հավաքագրվել նաև համայնքային ունեցվածքի, մասնավորապես՝ դպրոցների, ակումբների, կրոնական և այլ շինությունների վերաբերյալ: Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի կողմից 1919 թ.

Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հայ ժողովրդի կրած նյութական կորուստների վերաբերյալ հուշագրի հիման վրա կազմվել է Մեծ եղեռնի ընթացքում հայերի նյութական կորուստների ընդհանուր պատկերն արտահայտող աղյուսակ: Հայերի ունեցվածքին վերաբերող տարբեր աղբյուրներից հավաքագրված ու համակարգված տեղեկությունները մուտքագրվել են նշված աղյուսակի համապատասխան բաժիններում, ինչը վերջնարդյունքում մեզ հասանելի տվյալների հիման վրա հնարավորություն է տալիս ոչ ամբողջական պատկերացում կազմել Արևմտյան Հայաստանի այս կամ այն նահանգում հայերի ունեցած և բռնազավթված ունեցվածքի մասին: Նշվածից բացի ուսումնասիրվել է նաև Հայոց ցեղասպանությունից հետո Թուրքիայի Հանրապետության իշխանությունների կողմից հայերի զանգվածային ունեզրկման գործընթացի շարունակականությունը՝ ի ցույց դնելով դրա բացասական ազդեցությունը Թուրքիայի տարածքում մնացած հայության հատվածների վրա:

Կոլեկտիվ աշխատության շրջանակներում հետազոտական խմբի համակարգող, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մելքոնյանը ներկայացրել է ցեղասպանության հետևանքով հայերի հայրենազրկման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի և հատուցման հիմնանդրին նվիրված բաժինը: Սոց. գ. դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Պողոսյանը կոլեկտիվ աշխատության շրջանակներում կատարել է հայ ժողովրդի կրած ժողովրդագրական կորուստների և դրա հետևանքների ուսումնասիրությունը: Հետազոտական խմբի անդամներից արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Աղասյանը ներկայացրել է արևմտահայ կերպարվեստի, թատրոնի և երաժշտության բնագավառում կրած կորուստները, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դ. Քերթմենջյանը՝ ճարտարապետական հուշարձանների նկատմամբ իրականացվող մշակութային եղեռնի քաղաքականությունը և դրա հետևանքները, երկր. գ. թ. Հ. Մելիք-Ադամյանը՝ Արևմտյան Հայաստանի հանքերի ու բնական պաշարների կորուստները, պ. գ. դ. Ա. Մարուքյանը՝

հայ ժողովրդի կրած հողագույքային և ֆինանսական կորուստներն ու դրանց հետևանքները, ավագ գիտաշխատող Ա. Հովհաննիսյանը՝ ցեղասպանությունից հետո թուրքական հաջորդ իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ շարունակվող թալանի և ունեզրկման քաղաքականությունը, իսկ ի. գ. թ. Վ. Վարդանյանը՝ Հայոց ցեղասպանության համար թուրքական պետությանը պատասխանատվության կանչելու և այդ հանցագործության հետևանքների հաղթահարման միջազգային իրավական հնարավորությունների հատվածը*:

Ուսումնասիրության վերջում զետեղվել են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման կառուցակարգերի վերաբերյալ գործնական առաջարկներ:

---

* Հետազոտական խմբի անդամներ պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանը և պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պ. Ավետիսյանը իրենց կատարած ուսումնասիրությունները կներկայացնեն առանձին հրապարակումներով:

1. «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ» ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՇՈՒՐՋ

2015 թ. հունվարի 29-ին պաշտոնապես հրապարակվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», որով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարեցին, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար, ինչը ենթադրում է իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ[1]:

Միանգամայն բնական պետք է համարել այն, որ պաշտոնական շրջանառության մեջ դնելով «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում» ձևակերպումը, ինչը հատուցման գաղափարի դիվանագիտական արտահայտությունն է, հռչակագրային բնույթ ունեցող սույն փաստաթղթում չէր հստակեցվում, թե ի՞նչ է հասկացվում «Հայոց ցեղասպանության հետևանքներ» հասկացության տակ և թե ինչպե՞ս կամ ի՞նչ չափով է պատկերացվում այդ հետևանքների հաղթահարումը, քանզի կան հետևանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են:

Այս առումով անհրաժեշտություն է առաջանում հստակություն մտցնել նշված հարցերում: Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կո-

[1] Տե՛ս Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագիրը, http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/

ռուստներ, ե) հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ:

Հայրենազրկում. Հայոց ցեղասպանության գլխավոր կորուստը հայ ժողովրդին իր բնօրրանից զրկելն է: Ցեղասպանության կազմակերպիչների համար հայրենազրկումը (պատրիոցիդը) միաժամանակ հանդիսացել է տվյալ հանցագործությունը կատարելու կարևորագույն շարժառիթն ու նպատակը[2]: Քանի որ խոսքը հայրենիքի մեծ մասի կորստի մասին է, ուստի պետք է հստակեցնել, թե դա ինչ հետևանքներ է ունեցել և ինչպես է անդրադարձել մեր ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման վրա:

Մի կողմից՝ հայրենիքի կորստի հետևանք պետք է համարել Սփյուռքի գոյավորումը, քանզի ցեղասպանությունից հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց հայրենի օջախները, ստիպված էին հայերնիքից դուրս ամեն ինչ սկսել զրոյից, օտար միջավայրում անցնելով համակերպման դժվարին ճանապարհ: Մյուս կողմից՝ հայրենիքի մեծ մասի կորուստը և արևմտահայության ողջ մնացած հատվածի դուրս մղումը Արևմտյան Հայաստանից երկփեղկել է հայ ժողովրդին, խաթարել է նրա միասնականությունը, ջլատել ուժերը ու կասեցրել բնականոն զարգացման հեռանկարները: Ցեղասպանության հետևանքով միմյանցից հեռացվել են հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները, ինչը լուրջ խզում է առաջացրել նրանց միջև: Արևմտահայերը դարձել են սփյուռքահայեր, իսկ արևելահայերն ու Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայ գաղթականության մի հատվածը՝ հայաստանցիներ: Ապրելով տարբեր վարչակարգերի պայմաններում ժամանակի ընթացքում նրանք ձեռք են բերել միմյանցից տարբերվող մտածողություն, ինչը բարդացնում է համահայկական հարցերի լուծման գործընթացը:

Մշակութային ժառանգության կորուստ. Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցվել են վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. թուրքական-պաշտոնա-

---

[2] Տե՛ս Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013, էջ 427-428:

կան տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ[3]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464 լիովին ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի[4]: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Պետք է նշել, որ երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող՝ ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ հայերի մասին:

Մշակութային ժառանգության կորուստ ասելով, սակայն, չպետք է սահմանափակվել միայն պատմաճարտարապետական կառույցների ոչնչացումով: «Գենոցիդ» եզրույթի հեղինակ և ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծի կազմողներից մեկը՝ Ռաֆայել Լեմկինը, դեռևս 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման հինգերորդ կոնֆերանսում ունեցած իր զեկույցում առաջին անգամ բավականին հստակորեն տվել է ազգային-մշակութային ցեղասպանության սահմանումը: Մանրամասն ներկայացնելով Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ոչնչացումը, Լեմկինը դա անվանում էր «անա-

---

[3] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915-1923թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, էջ XVI-XVII:

[4] Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007թ., Եր., 2011, էջ 144:

նուն հանցագործություն», որի դրսևորումներից էր համարում նաև «վանդալիզմի այն գործողությունները, որոնք ուղղված են ազգային, կրոնական, ռասայական կամ էթնիկ խմբի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ **մայրենի լեզուն արգելելու, տպագիր գրքերի, դպրոցների, պատմական հուշարձանների, պաշտամունքային օջախները ոչնչացնելու կամ դրանցից օգտվելու արգելքի միջոցով** (ընդգծումը մերն է - Ա.Մ.)»[5]:

Ուրեմն՝ հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը, որոնցում ամփոփված էր հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքն ու հանճարը: Այդպիսով ցեղասպանության կազմակերպիչները մեզ մասնակիորեն կտրել են մեր նախնիների մտքից ու ոգուց, այն անգին գիտելիքներից, որոնք նրանք մեզ փորձում էին փոխանցել այդ ձեռագրերի միջոցով[6]: Մշակութային ցեղասպանության այս հետևանքները որևէ նյութական հատուցմամբ չեն կարող վերականգնվել:

Մարդկային կորուստները Հայոց ցեղասպանության ընթացքում կազմեցին շուրջ 1,5 միլիոն մարդ: Սակայն, մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս, անպայմանորեն պետք է հաշվի առնվի նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացած հայերի թիվը, որոնք ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուծացման այդ գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց հայ համարել:

Մարդկային կորուստների թվի հստակեցումից հետո անհրաժեշտ է պարզել, թե այդ կորուստները ի՞նչ հետևանքներ են ունեցել և ինչպե՞ս են անդրադարձել հայ ժողովրդի հետագա վերարտադրման վրա և որքան կկազմեր հայերի թիվն այսօր՝ հանցագործությունից մեկ դար անց, եթե ցեղասպանության զոհերը ողջ լինեին: Այս առումով պետք է հաշվի առ-

---

[5] Барсегов Ю. Геноцид армян – преступление по международному праву, с. 7.

[6] Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство”, (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, с.15.

նել այն, որ արևմտահայերի ընտանիքները, որպես կանոն, բազմազավակ էին: Բացի այդ, 25 տարին մեկ կատարվում է բնակչության վերարտադրություն (ռեգեներացիա), այսինքն՝ անցած մեկ դարի ընթացքում առնվազն չորս անգամ պետք է կատարվեր նաև սպանված հայերի վերարտադրությունը, եթե նրանք ողջ մնային:

Հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ. Հայոց ցեղասպանության հետևանքով հասցված հոգեբանական սթրեսները նույնպես անհետևանք չեն մնացել և անդրադարձել են հայ ժողովրդի հետագա կենսագործունեության վրա: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդույթներ ու վախեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնը անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ցեղասպանության անմիջական վերապրածների ու նրանց սերունդների, այլև ողջ հայ ժողովրդի մասին է, որի մոտ առաջացել են թերարժեքության բարդույթներ: Չի վերացել այն վախը, որ կատարվածը մի օր կարող է կրկնվել, քանի դեռ մեղավոր կողմը ոչ միայն չի ընդունել իր մեղքը և չի ապաշխարհել, այլև շարունակում է ժխտել պատմական իրողությունը: Իր հայրենիքի մեծագույն մասը կորցնելով՝ հայ ժողովուրդը զրկվել է սեփական կենսատարածքի և նախնիների կերտած ազգային արժեքների հետ շփվելու հնարավորությունից: Դրա հետևանքով առաջացած թերարժեքության բարդույթներից մեկն էլ պետք է համարել այն, որ ոմանց մոտ առաջացել է թերահավատություն ու անվստահություն ազգի ապագայի, սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և օտար արժեքներին ապավինելու հակում[7]: Ուստի՝ հայ ժողովրդի մոտ զարգացման ու առաջադիմության ձգտումների փոխարեն Սփյուռքում ու Հայաստանում տասնամյակներ շարունակ տիրապետում էր գոյատևման հոգեբանությունը: Բարեբախտաբար, Արցախյան հաղթական պատերազմով սկսվեց ցեղասպանված ժողովրդի բարդույթի հաղթահարման գործընթացը, իսկ Հայոց ցեղաս-

[7] Стратегические последствия геноцида армян, с. 16.

պանության 100-րդ տարելիցի միջոցառումներից հետո հայ ժողովուրդը ցեղասպանվածից վերածվեց պահանջատերի[8]:

Հոգեբանական լուրջ հարված է հասցվել նաև ցեղասպանության ընթացքում բռնի մահմեդականացված հայերին, որոնք մահվան սպառնալիքի տակ ստիպված հրաժարվել են իրենց ինքնությունից և ընդունել օտարի կրոնը և հատկանիշները: Տասնամյակներ շարունակ նրանք Թուրքիայում ապրել ու ապրում են վախի մթնոլորտում՝ ստիպված թաքցնելով իրենց իրական ինքնությունը[9]: Ներկայումս այսպես կոչված՝ «թաքուն հայերի» շրջանում դրական միտում է նկատվում, քանզի նրանցից ոմանք արդեն խոսում են իրենց հայկական արմատների մասին և նույնիսկ փորձում են վերադառնալ իրենց կրոնին, սակայն պետք է խոստովանել, որ դա կատարվում է լուրջ հոգեբանական բարդույթների, առաջին հերթին՝ վախի հաղթահարման դժվարին ճանապարհով:

Հայոց ցեղասպանության **նյութական կորուստների** հետ կապված հիմնականում հիշատակվում է 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագիրը, որի համաձայն 1915-1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում են 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000 բաժին է ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000՝ Հայաստանի Հանրապետությանը[10]: Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման պահանջով առաջին անգամ նման հեղինակավոր միջազգային վեհաժողովին ներկայացված այս փաստաթղթի նշանակությունը կարևորելով հանդերձ, պետք է նշել, որ նրանում նշված հաշվարկները որոշ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով չեն կարող համարվել վերջնական և դրանք ենթակա են ճշգրտման:

---

[8] Տե՛ս Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենազրկում. ճանաչումից՝ հատուցում, հոդվածներ և հարցազրույցներ, Եր., 2015, էջ 358, 377:

[9] Տե՛ս Այլախոս և այլադավան հայեր, Եր., 2007:

[10] Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող Լ. Բարսեղյան, Եր., 1999, էջ 13:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների և դրանց հատուցման հիմնահարցը ճիշտ պատկերացնելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ մեխանիզմներով ու «օրենսդրական» հնարքներով են թուրքական իշխանությունները ցեղասպանությանը զուգահեռ իրականացրել հայ ժողովրդի զանգվածային ունեզրկման քաղաքականությունը: Բացի դրանից, հարկավոր է հստակեցնել, թե ինչ պարտավորություններ է թուրքական պետությունը ստանձնել միջազգային պայմանագրերով իր ոչ մահմեդական ու մասնավորապես հայերի ունեցվածքի հետ կապված: Հնարավոր չէ շրջանցել նաև այն հարցը, թե ցեղասպանությունից հետո հայ գաղթականները ինչպես էին փորձում գոնե բռնազավթված սեփականության նկատմամբ վերականգնել իրենց իրավունքները: Վերջապես պետք է պարզել, թե ներկա պայմաններում ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը ինչ հնարավորություններ ունի հաղթահարելու այդ հանցագործության հետևանքները և վերականգնել իր իրավունքները բռնազավթված հայրենիքի ու սեփականության նկատմամբ:

2. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

XIX դարի վերջին սուլթան Համիդ II-ի, իսկ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ «Երիտասարդ թուրքերի» կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության միջոցով օսմանյան իշխանությունները նպատակ ունեին ասպարեզից հանել դեռևս 1878 թվականի Բեռլինի վեհաժողովում կյանքի կոչված Հայկական հարցը, որն ըստ թուրքերի՝ եվրոպական մեծ տերություններին հնարավորություն էր տալիս հայկական բարենորոգումների իրականացման հսկողության անվան տակ մշտապես միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին, ինչը կարող էր հեռանկարում Բալկանյան ժողովուրդների օրինակով հանգեցնել նաև հայկական պետության ստեղծմանը:

Ի դեպ, Արևմտահայաստանի հայաթափումից հետո խնդիրն այլևս Հայկական հարց կոչելն անիմաստ էր: Այն հայության կողմից այդուհետ ընկալվում էր որպես բռնազավթված Հայրենիքը վերադարձնելու, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու, տարածքային, նյութական ու բարոյական հատուցման հասնելու խնդիր: Ուստի արդարության համար հայ ժողովրդի մղած այդ պայքարն ամբողջապես ստացավ **Հայ դատ** խորհրդանշական անվանումը:

Հայոց ցեղասպանությունից հետո Հայ դատի համար մղված 100-ամյա պայքարի պատմությունը կարելի է բաժանել մի քանի շրջափուլերի՝ հաշվի առնելով պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում խնդրի նկատմամբ միջազգային ասպարեզում առկա վերաբերմունքի սկզբունքային տարբերությունները:

Առաջին փուլն ընդգրկում է 1915-1923 թթ., այսինքն՝ բուն ցեղասպանության տարիները, երբ աշխարհի մի շարք երկրներ, միջազգային կազմակերպություններ զանազան մակարդակներով ոչ միայն դատապարտեցին հայերի ֆիզիկական բնաջնջման ու հայրենազրկման թուրքական քաղաքականությունը, այլև որպես եղեռնի հետևանքների վերացման եղանակ, առաջարկեցին Միացյալ Հայաստանի ստեղծման ծրագիրը: Հենց այդ շրջափուլում էլ սկսվեց Հայոց եղեռնի միջազգային դատապարտման գործընթացը, որի առաջին դրսևորումն իրավամբ կարելի է համարել դեռ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համատեղ հայտարարությունը: Դրանում մասնավորապես ասվում էր. «Ամբողջ վերջին ամսվա ընթացքում **Հայաստանում** (ընդգծումն իմն է - Ա.Մ.) օտտոմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, երբեմն էլ ուղղակի գործակցությամբ քրդերի և թուրքերի կողմից տեղի է ունենում հայերի կոտորած»[11]: Այնուհետև կոտորածների գլխավոր վայրերը թվարկելուց հետո տերություններն արձանագրում են, որ օս-

[11] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Ред. и сост. профессор Ю. Г. Барсегов, т. 1, М., 2002, с. 238.

մանյան իշխանությունների այս վայրագությունները որակվում են որպես Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ[12]:

Պատահական չէ, որ պատերազմում հաղթանակած Անտանտի երկրները, հետպատերազմյան սահմանների հարցը քննարկելիս փորձեցին հաշվի առնել նաև ցեղասպանված ու հայրենազրկված հայության շահերը: Նրանք նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ այդ հարցերն արծարծեցին 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովում: 1920 թ. ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի կոնֆերանսում հաղթանակած տերությունների Գերագույն խորհուրդը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին հայ-թուրքական սահմանագծման հարցով իրավարարի դեր ստանձնելու առաջարկ է անում, մայիսի 17-ին վերջինս հայտնում է, որ համաձայն է գործել որպես իրավարար և այդպիսով մեկնարկում է հայ-թուրքական սահմանի հստակեցման հարցով միջազգային իրավարարությունը[13]: Հայ-թուրքական սահմանի հստակեցման հանձնառությունը հաղթանակած տերությունների կողմից հետագայում լրացուցիչ կերպով վերահաստատվեց նաև օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի դաշնագրի 89-րդ հոդվածով: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից նոյեմբերի 22-ին հայ-թուրքական սահմանի վերաբերյալ ներկայացրած իրավարար վճռով ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի համար կենսագոյության պայմաններ ստեղծելու, նրան վերջնական ֆիզիկական բնաջնջումից փրկելու համար մասնավորապես առաջարկեցին հետևյալ լուծումը. Արևելյան Հայաստանում ստեղծված հանրապետությանը միացնել Արևմտյան Հայաստանի չորս նահանգների՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի զգալի մասը, որոնց միացման արդյունքում Հայաստանի տարածքը պետք է կազմեր ավելի քան 160 հազար քառ. կմ:

---

[12] Տե՛ս նույն տեղում£

[13] Барсегов Ю. Г., Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Центр русско-армянских инициатив, Ер., 1995, с. 15.

Սակայն քեմալաբոլշևիկյան գործակցության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցությամբ հայ ժողովրդի այդ արդարացի երազանքն իրականություն չդարձավ: Հայաստանը բռնի խորհրդայնացվեց, նրա բնակչությունը գործնականում զրկվեց միջազգային ատյաններում այդ հարցը բարձրացնելու հնարավորությունից:

Հայ դատի համար պայքարի սկզբնափուլում հույժ կարևոր էին 1921-1922 թվականները, երբ մի շարք հայ երիտասարդներ՝ Սողոմոն Թեհլիրյանը, Արշավիր Շիրակյանը, Արտաշես Գևորգյանը և ուրիշներ վրեժ լուծեցին Թալեաթից, Ջեմալից, Բեհաէդդին Շաքիրից, Սայիդ Հալիմից, Ջեմալ Ազմիից և Մեծ եղեռնի գլխավոր այլ կազմակերպիչներից: Այդ գործողությունները հայտնի են “Նեմեսիս»[14] անունով:

Երկրորդ փուլում՝ 1922-1923 թթ. Լոզանի կոնֆերանսից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտն ընկած շրջափուլում, աշխարհը հետզհետե մոռացության տվեց Հայոց մեծ եղեռնը և աշխարհասփյուռ հայ ժողովրդին միայնակ թողեց իր ազգային ողբերգությանը դեմ հանդիման: Պատճառն այն էր, որ տարբեր երկրներում առանց կարգավիճակի՝ նանսենյան անձնագրերով, հաստատված արևմտահայ գաղթականությունը Սփյուռքում, իսկ հայրենաբնակ հայությունը՝ ստալինյան բռնաճնշումների պայմաններում, չունենալով անհրաժեշտ լծակներ, մինչև Երկրորդ աշխարահամարտի ավարտն ի վիճակի չեղան աշխարհին հիշեցնելու ո՛չ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի, ո՛չ էլ Սևրի դաշնագրով ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ եվրոպական ազդեցիկ տերությունների կողմից իսկ ստանձնած պարտավորությունների կատարման մասին: Հենց այդ «մոռացությունից» էլ օգտվելով՝ Ա. Հիտլերն ու իր ֆաշիստական կուսակցությունն իրականացրին 20-րդ դարի երկրորդ ցեղասպանությունը՝ հրեական հոլոքոստը: Ուստի իրավամբ կարելի է այդ ժամանակահատվածը համարել որպես հայ դատի մոռացումի և ուրացումի շրջափուլ: Բայց միաժամանակ այդ ժամանակաշրջանը բնութագրելի է որպես լռելյայն պայքարի փուլ, քանի որ հա-

[14] Նեմեսիսը հունական դիցաբանության մեջ վրեժի աստվածն է:

յությունը չմոռացավ իր ազգային ողբերգությունը և հատկապես սփյուռքում ստեղծեց բազմաթիվ հայրենակցական կազմակերպություններ, նրանց ջանքերով տպագրեց Մեծ եղեռնի մասին ահռելի փաստական նյութ՝ վավերագրեր, աշխատություններ, հուշեր և այլն:

Երրորդ փուլ կարելի է համարել Երկրորդ աշխարհամարտից հետո մինչև 1965 թ. ընկած քսանամյակը: Այդ փուլի սկզբնաշրջանում Խորհրդային Միությունը Հայաստանի ու Վրաստանի անունից 1945 թ. ամռանը Պոտսդամի կոնֆերանսում բարձրացրեց հանիրավի Թուրքիային մնացրած հայկական ու վրացական հողերի վերադարձի հարցը: Թեպետ խնդիրն ի սկզբանե հանդիպեց ԽՍՀՄ նախկին դաշնակիցների, հատկապես ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կոշտ հակազդեցությանն ու նրանց մեղքով վիժեցվեց, այնուամենայնիվ, այն սփյուռքահայության աննախադեպ աշխուժացման լուրջ ազդակ հանդիսացավ:

Հայկական հարցը քննարկելու, արևմտահայ տարածքները Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պահանջով բազմաթիվ դիմումներ հղվեցին նորաստեղծ Միավորված ազգերի կազմակերպությանը, մեծ տերությունների ղեկավարներին, ստեղծվեցին մի շարք սփյուռքահայ հաստատություններ, հրավիրվեցին համահայկական համաժողովներ, սկսեցին գործել Հայ դատի առաջին գրասենյակները: Հայկական տարածքների խնդրի վերաբացումը յուրահատուկ ազդակ հանդիսացավ հայերի աննախադեպ հայրենադարձության համար: Եվ վերջապես՝ այդ ժամանակաշրջանում՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի կողմից ընդունվեց ցեղասպանության վերաբերյալ հայտնի հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինի հեղինակած կոնվենցիայի նախագիծը, որում **գենոցիդ** երևույթը բնութագրելիս հեղինակը հիմնականում նկատի էր առել այն ամենը, ինչն Առաջին աշխարհամատի տարիներին տեղի էր ունեցել հայ ժողովրդի հետ:[15]

---

[15] Մանրամասն տե՛ս Yair Auron: Israel and the Armenian Genocide, Maba, Tel Aviv, 2005, “Конвенция о предупреждении преступления геноцида и наказания за него”, Права человека. Сборник международных договоров,

Ցավոք, պայմանավորված այդ փուլում Թուրքիայի նկատմամբ խորհրդային նոր ղեկավար Նիկիտա Խրուշչովի քաղաքական ուղեգծի փոփոխությամբ, հայությունը խոր հիասթափություն ապրեց:

Հայ դատի միջազգային պայքարը նոր՝ **Չորրորդ փուլ** թևակոխեց 1965 թ.՝ Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ Ուրուգվայի խորհրդարանի կողմից հատուկ բանաձևի ընդունումով: Շուտով պետական մակարդակով եղեռնը դատապարտեցին Կիպրոսի ու Արգենտինայի, ապա նաև՝ Ռուսաստանի ու Հունաստանի խորհրդարանները: 1998 թվականից, երբ Հայաստանի Հանրապետությունը Մեծ եղեռնի հարցը դարձրեց իր արտաքին քաղաքականության ուղղություններից մեկը, սկսվեց խնդրի միջազգային ճանաչման հաղթարշավը. Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևեր ընդունեցին Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Լիբանանը, Շվեդիան, աշխարհի բազմաթիվ քաղաքապետարաններ, ԱՄՆ-ի տասնյակ նոր նահանգներ և այլն: Մինչև ցեղասպանության 100-րդ տարելիցն այդ երկրների թիվը մոտեցավ երեք տասնյակին:

1965 թ.՝ ցեղասպանության կեսդարյա տարելիցի օրերին և՛ Սփյուռքում և՛ Հայրենիքում մարդիկ դուրս էին եկել փողոց՝ ոչ այնքան Հայոց ցեղասպանության ճանաչման, մեր ազգային խնդիրը, ցավը աշխարհին ներկայացնելու, որքան տեղի ունեցածի դիմաց հատուցում ստանալու հստակ պահանջով: Նկատի ունենալով, որ հայությունը ոչ միայն ֆիզիկապես բնաջնջվել է, այլև հայրենազրկվել, այսինքն՝ ենթարկվել **պատրիոցիդի,** հատուցումը, բնականաբար, պետք էր պահանջել **հայրենիքով:**

Խնդրի միջազգայնացման հեռանկարից անհանգստացած՝ թուրքական քաղաքական ու «գիտական» շրջանակները դրան յուրովի արձագանքեցին՝ որդեգրելով ժխտողական քաղաքական ուղեգիծ. այն է՝ նման բան Առաջին աշխարահամարտի տարիներին տեղի չի ունեցել, և հայկական կողմը քաղաքական նկատառումներով կեղծում է իրականությունը:

том I (часть вторая). Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 780-785.

Հարցի ուշադիր քննությունը բերում է այն համոզման, որ շուտով հայկական կողմը Հայոց ցեղասպանության խնդրում ոչ միայն կանգնեց սխալ ուղու վրա, այլև մոտ կես դար ակամայից հայտնվեց թուրքերի լարած թակարդի մեջ: Ըստ էության, մոռանալով գլխավոր նպատակը՝ հատուցման խնդիրը, հայերն սկսեցին պայքարել գենոցիդի իրողությունն ապացուցելու և դրանում թուրքերին ու աշխարհին համոզելու համար: Այդպես՝ ցեղասպանության դիմաց հայրենիք պահանջող համայն հայությունն ակամայից վերածվեց անիմաստ բանավեճի մեջ ներքաշված կողմի: Ցավոք, այդ պայքարի ընթացքում հայ ժողովուրդն ահռելի ջանքեր գործադրեց՝ ի սպաս դնելով վիթխարի միջոցներ: Փաստորեն՝ բռնազավթված հայրենիքը վերադարձնելուն նպատակաուղղված ռազմավարական պայքարը ժամանակի ընթացքում ստորադասվեց ժխտողականության դեմ մղվող պայքարի մարտավարությանը:

Ընդ որում՝ այդ բնագավառում կարևորելով երրորդ կողմի անաչառ մոտեցումը՝ հայությունը պայքարի միջոց դարձրեց հատկապես զանազան երկրների խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների կողմից հայանպաստ բանաձևերի ընդունման մարտավարությունը: Այսպես, հակառակ այն հանգամանքին, որ Հայ դատի համար պայքարի վերջին՝ չորրորդ փուլն ամենաբուռն ու ընդգրկուն ժամանաշրջանն էր, պահանջատիրության պայքարը վերածվեց ճանաչման համար պայքարի: Պատահական չէ, որ մեզանում «ճանաչում» եզրաբառը զգալիորեն դուրս մղեց «հատուցում» եզրույթին և փաստորեն բովանդակազրկեց Հայ դատի գաղափարը: Դրանում կհամոզվենք, երբ փորձենք վերլուծել վերջին 50 տարվա պայքարի արդյունքները՝ արդեն փաստորեն ոչ թե հատուցման, այլ ճանաչման բնագավառում: Այդ նպատակով անդրադառնանք Հայոց ցեղասպանությունը ճանաչած մի շարք երկրների խորհրդարանական որոշումներին և փորձենք դրանք գնահատել հատուցմանը հասնելու օգտակարության տեսանկյունից:

Նախ՝ նկատենք, որ վերջին կես դարի ընթացքում Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ընդունված խորհր-

դարանական այդ փաստաթղթերն իրենց իրավական կարգավիճակով նույնական չեն: Դրանք կարելի է բաժանել հիմնական երեք խմբերի՝ հայտարարություն-հռչակագրեր, բանաձև-որոշումներ և օրենքներ:

Հայտարարությունները, թերևս իրենց իրավական ուժով ամենաթույլն են և որպես կանոն, միայն արձանագրում են տվյալ երկրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը, այդ կապակցությամբ ցավակցում հայ ժողովրդին կամ ապրիլի 24-ը հայտարարում եղեռնի զոհերի հիշատակի օր: Բանաձև-որոշումները, մեր կարծիքով, բովանդակային առումով շատ չեն տարբերվում հայտարարություններից, սակայն իրավական առումով, երևի թե, ավելի կարևոր փաստաթղթեր են: Օրենքներն, անշուշտ, ավելի լուրջ իրավական փաստաթղթերն են, դրանց ընդունումով Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը տվյալ երկրի պետական մարմինների համար դառնում է ոչ թե հայեցողական, այլ պարտադիր: Որոշ երկրների խորհրդարանների կողմից ընդունվել են նաև օրենքներ, որոնցով ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ է նախատեսվում: Բայց վերջին դեպքում ևս, հաշվի առնելով Հայոց ցեղասպանությունը հրապարակավ մերժող թուրք դիվանագետ Դողու Փերենչեքի գործի կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից շվեյցարական դատարանի կայացրած դատապարտող վճռի չեղարկումը[16], կարելի է պնդել, որ օրենքների ընդունումից նույնպես առանձնապես ակնկալիքներ չպետք է ունենալ, քանի որ հատուցման հասնելու տեսանկյունից դրանք դժվար թե սպասելի արդյունք ապահովեն:

Հայոց ցեղասպանության կապակցությամբ ընդունված փաստաթղթերի մեծագույն մասը հայտարարություններ են

---

[16] Թուրք դիվանագետ Դողու Փերենչեքի նկատմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը երկիմաստ որոշում կայացրեց. չժխտելով Հայոց ցեղասպանության իրողությունը՝ միաժամանակ այն ժխտելու թուրք դիվանագետի քայլը գնահատեց որպես ազատ խոսքի իրավունքի դրսևորում:

կամ բանաձևեր: Այսպես՝ Ուրուգվայի սենատի ու ներկայացուցիչների պալատի 1965 թ. ապրիլի 20-ի հռչակագրում ապրիլի 24-ը հայտարարվում է “Հայ նահատակների հիշատակի օր» և այն ազգությամբ հայերի համար դառնում է ոչ աշխատանքային:[17] Փաստաթղթում ոչ միայն չի նշվում հայերի հայրենազրկման մասին, այլ անգամ 1915 թ. դեպքերը չեն որակվում որպես ցեղասպանություն:

Գրեթե նույն բովանդակությունն ունեն Արգենտինայի սենատի 1993 թ. մայիսի 5-ի[18], Հունաստանի խորհրդարանի 1996 թ. ապրիլի 26-ի բանաձևերը և հուլիսի 10-ին Հունաստանի նախագահ Կ. Ստեֆանոպոլոսի ստորագրած հռչակագիրը՝ միայն այն տարբերությամբ, որ այդ փաստաթղթերում արդեն գործածվում է «ցեղասպանություն» բառը[19]:

Հետագա տարիներին ընդունված նույնատիպ, այդ թվում՝ միևնույն երկրի կողմից արդեն քանիերորդ անգամ ընդունված փաստաթղթերի մեծ մասում շեշտադրումներն ավելի հստակեցվում են՝ ցեղասպանության հանգամանքն այլևս կասկած չի հարուցում, երիտթուրքերի կատարած ոճրագործության և դրա շարունակությունը հանդիսացող ժխտողականության գնահատականներն ավելի խիստ են դառնում և այլն: Օրինակ. եթե Լիբանանի խորհրդարանի 1997 թ. ապրիլի 3-ի բանաձևը 1915 թ. դեպքերը գնահատում է որպես «աղետ», ապա 2000 թ. մայիսի 11-ի բանաձևում դրանք գնահատվում են իբրև «ցեղասպանություն»[20]:

---

[17] Legislative Power. Law № 13926. Senate chambers in Montevideo, the 20th of April, 1965. Martin R. Echegoyen, President. Jose Pastor Salvanach, Secretary.

[18] Number of Resolution: 1554/92, S-92-1554: Mario A. Losada, http://www.genocide-museum.am/rus/Argentina_Senate_Resolution_1993.php#sthash.3KRoFHS4.dpuf

[19] Hellenic Parliament Resolution 23 97/1996 (A'80). International Affirmation of the Armenian Genocide; Armenian National Institute, Washington, DC. USA, http://www.armenian-genocide.org/affirmati-on/156/current category.7.

[20] International Affirmation of the Armenian Genocide. Armenian National Institute. Washington, D. C U.S.A. Տե՛ս նաև՝ http://www.armenian-genocide.org/affirmation/resolution/163.html, Հմմտ. Геноцид армян: ответствен-

Այդուհանդերձ, դրանք իրավական առումով ծանրակշիռ չեն: Պատահական չէ, որ անգամ Ֆրանսիայի Ազգային ժողովի երեք փաստաթղթերը (1998, 2000 և 2001 թթ.), որոնք ընդունվել են երկարատև ու բուռն քննարկումներից հետո, պարունակում են սոսկ միանման երկու նախադասություններ: Առաջին և երկրորդ փաստաթղթերում միայն մեկ նախադասությամբ նշվում է. «Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է հայերի 1915 թ. ցեղասպանությունը»[21]: Դրանց միջև տարբերությունն այն է, որ առաջինը «օրինագիծ» է, երկրորդը՝ «օրենք»: Համապատասխանաբար երրորդ՝ 2001 թ. փաստաթուղթը, վերոհիշյալ նախադասությունը տառացիորեն կրկնելուց հետո, արձանագրում է՝ “Սույն օրենքը պետք է գործադրվի որպես պետական օրենք»[22]: Հետևելով Ֆրանսիայի լակոնիկ ոճին՝ Կանադայի Համայնքների պալատն իր 2004 թ. ապրիլի 21-իր բանաձևում փաստում է. «Պալատը ճանաչում է հայերի 1915 թ. ցեղասպանությունը և դատապարտում է այդ ոճրագործությունը որպես հանցագործություն մարդկության դեմ»[23]:

Համանման ոճը, ցավոք, նկատվում է հետագայում ընդունված այլ խորհրդարանական բանաձևերում (Նիդեռլանդ-

---

ность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, М., 2003, էջ 736, 807.

[21]Assemblee Nationale de France. Session ordinaire 1997-1998. Loi no 140. Adoptée 29 Mai 1998.//www.genocide museum.am/rus/France_National_ Assembly_Law.php#sthash.oTbHmjHT.dpuf. Հմմտ.՝ Le Senat Nationale de France N 22. Session ordinaire de 2000-2001. Proposition deloi. Adoptee 7 Novembre 2000. Հմմտ. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, М., 2003, էջ 784, 814, 818

[22] Loi по 2001-70 du 29 janvier 2001 relative a la reconnaissance du génocide arménien de 1915(1). Travaux preparatoires: loi no 2001-70. Senat: Proposition de loi no 60 (2000—2001). Discussion et adoption le 7 novembre 2000. Assemblée nationale: Proposition de loi, adoptee par le Senat, no 2688. Տե՛ս նաև http://www.genocide-museum.am/rus/France_Law.php#sthash.89x4Hfd2 .dpufdpuf

[23] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Ред., сост. и автор комментария профессор Ю.Г.Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, с. 53).

ներ, Իտալիա, Շվեյցարիա և այլն), որտեղ, որպես կանոն, տեղի ունեցած ցեղասպանության վայր մատնանշվում է ոչ թե Հայաստանը, այլ Օսմանյան կայսրությունը կամ «Արևելյան Անատոլիան»,[24] առանց եղեռնի հետևանքները վերացնելու՝ հայ-թուրքական հաշտեցման պահանջն է, միայն բարոյապես հայությանն աջակցելը և այլն:

Թուրքական ժխտողականության դեմ պայքարում և հայ ժողովրդին բարոյական աջակցություն ցուցաբերելու հարցում բնավ չթերագնահատելով վերոհիշյալ փաստաթղթերի նշանակությունը, միաժամանակ ընդգծենք, որ դրանք Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման, մասնավորապես հատուցման խնդիրն առաջ մղելու տեսանկյունից, ցավոք, իրավական լուրջ կռվաններ չեն:

Այդուհանդերձ, ուշադիր քննության դեպքում նկատվում է, որ առանձին երկրների կողմից ընդունված փաստաթղթերում Հայոց ցեղասպանության վերաբերյալ գնահատականները բովանդակային առումով ավելի համարձակ են, իրավական հարթության վրա՝ առավել ճշգրիտ ու կազմված են մասնագիտական խորությամբ ու պատշաճ մակարդակով: Դրանցում առկա են այնպիսի կարևոր ձևակերպումներ, ինչպիսիք են թուրքերի իրականացրած Հայոց ցեղասպանության աշխարհագրական արեալի՝ հայերի հայրենիք Հայաստանի մատնանշումը և հայության ոտնահարված իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը: Համառոտ անդրադառնանք այդ բանաձևերին:

Հատկանշական է, որ ի սկզբանե՝ դեռ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի երկրների կողմից ընդունված համատեղ հայտարարության մեջ հստակ նշվում է, որ սկսված հայկական

---

[24] ուրինակ՝ Արևմտյան Հայաստանի փոխարեն Կանադայի սենատի 2002 թ. հունիսի 13-ի բանաձևում գտնում ենք Արևելյան Անատոլիա, այսինքն՝ Արևելյան Արևելք ասված տխմար բառակապակցությանը (տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Сост. Автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 858):

կոտորածներն ընթանում են Հայաստանում[25]: Դա հասկանալի է, քանի որ դեռ չէր ավարտվել հայերի հայրենազրկման գործընթացը, և Հայաստանը հիմնականում հայաբնակ էր:

Ուշագրավ է, որ Մեծ եղեռնից հետո ինչպես խորհրդարանական, այնպես էլ իրավական այլ փաստաթղթերում «Հայաստան» բառի գործածությունը դառնում է հազվադեպ: Բայց 1974 թ. թուրքական վայրագ ներխուժմանը ենթարկված Կիպրոսում խորհրդարանի ներկայացուցիչների պալատի պատգամավորները կարողանում են հայերի հայրենազրկման ու իրավունքների վերականգնման գաղափարը 1982 թ. ապրիլի 29-ին իրենց ընդունած բանաձևում արտացոլել դիվանագիտորեն, բայց միաժամանակ՝ շատ հստակ. քանի որ այդ ցեղասպանությունը «…հայերին զրկել է իրենց հին հողերից», իրենք «զորակցում են հայ ժողովրդի անկապտելի իրավունքների ամբողջական վերականգնմանը»[26]: Պարզ է, որ ամբողջական իրավունքների մեջ հստակ հասկացվում է նաև հայրենիքի նկատմամբ իրավունքը, առավել ևս, որ վերևում խոսվում է կորցրած հայկական հին հողերի մասին:

Միջազգային մեծ մասշտաբով Հայոց ցեղասպանության հարցում առկա լռությունը խախտեց Եվրախորհրդարանը: Թուրքիայի մուտքը Եվրամիություն փակելու նպատակով, այդ կազմակերպությունը 1987 թ. հունիսի 18-ին՝ իր ընդունած ընդարձակ բանաձևով «հիշեց» մոռացված Հայ դատը: Այդ հեղինակավոր կառույցի մեջ մտնելու համար, ի թիվս այլ հարցերի, թուրքական իշխանություններից պահանջվում էր ճանաչել ու դատապարտել Հայոց մեծ եղեռնը: Փաստաթղթում նշվում էր, որ «Թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն և դրանով իսկ զրկում է հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից. Մինչև այժմ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպա-

---

[25] Տե՛ս վերևում մեր կողմից հիշատակված այդ փաստաթղթի համապատասխան ընդգծումը:

[26] International Affirmation of the Armenian Genocide. Armenian National Institute. Washington, D. C U.S.A. Տե՛ս նաև՝ http://www.armenian-genocide.org/Affirmation-detail.html.

նությունը չի ենթարկվել քաղաքական դատապարտման և չի ստացել իր համապատասխան հատուցումը»:[27] Ինչպես տեսնում ենք, Թուրքիային անելանելի վիճակի մեջ դնելու համար Եվրոպան հիշեցնում էր հատուցման անհրաժեշտությունը:

Սակայն միաժամանակ, իրենց նատոյական դաշնակցին չվշտացնելու համար, նույն փաստաթղթում Եվրախորհրդարանի անդամ պետությունները հավելում էին վերոհիշյալին տրամագծորեն հակառակ այլ պնդում. թեև 1915-1917 թթ. հայերի հետ տեղի ունեցածը լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի ցեղասպանությունների վերաբերյալ կոնվենցիայի դրույթներին, այնուամենայնիվ «… ներկայիս Թուրքիան չի կարող պատասխանատվություն կրել **Օսմանյան կայսրությունում** (ընդգծումն իմն է- Ա.Մ) հայ ժողովրդի ողբերգության համար …և ո՛չ քաղաքական, ո՛չ իրավական կամ նյութական պահանջ չի կարող հետևել ներկայիս Թուրքիայի համար այդ պատմական իրադարձությունը որպես ցեղասպանություն ճանաչելու փաստից»:[28] Եթե ասվածին էլ ավելացնենք, որ փաստաթուղթը նաև խստորեն դատապարտում է հայ նորօրյա ազատամարտի վրիժառուական գործողությունները թուրքերի նկատմամբ՝ դրանք որակելով որպես ահաբեկչական, պարզ կդառնա, որ այս բանաձևն իրականում քաղաքական խաղաթուղթ է Եվրոպայի ձեռքին թուրքերի դեմ՝ որքան էլ մի մասով իր մեջ ներառում է ցեղասպանության դիմաց հատուցելու պահանջ:

1988 թ. փետրվարից ծավալված Արցախյան ազատագրական շարժման ընթացքում ժողովրդական զանգվածների ճնշման տակ Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհուրդն անդրադարձավ Հայոց ցեղասպանությանը և նոյեմբերի 22-ին ընդունած բանաձևով դատապարտեց Հայոց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած այդ ոճրա-

---

[27] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю.Г.Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 701.
[28] Նույն տեղում:

գործությունը[29]: Նման ճշգրիտ՝ հայրենի հողում ցեղասպանության ենթարկվելու վերաբերյալ ձևակերպումով հատուկ կետ մտցվեց նաև այնպիսի կարևոր իրավական փաստաթղթում, որպիսին Հայաստանի անկախության հռչակագիրն էր՝ ընդունված Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսի 23-ին[30]:

Վերջին քառորդ դարի ընթացքում Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունված շուրջ քսանհինգ բանաձևերում միայն մի քանիսում կարելի է գտնել թեզեր, որոնք տարածքային հատուցման առումով կարող են որոշակի իրավական կռվան հանդիսանալ: Դրանց մեջ առանձնակի նշանակություն ունի Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի 1995 թ. ապրիլի 14-ի որոշումը,[31] որը կազմվել է բարձր մասնագիտական մշակման արդյունքում: Միաձայնությամբ ընդունված այդ բանաձևում հստակ նշվում է՝ Ռուսաստանի Դաշնության Դաշնային Ժողովը դատապարտում է անհերքելի փաստերով ապացուցված Հայոց ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել «**Արևմտյան Հայաստանի** (ընդգծումն իմն է - Ա. Մ.) տարածքում 1915-1922 թվականներին»:[32] Ընդ որում՝ Արևմտյան Հայաստանի գաղափարը փաստաթղթում կրկնվում է և ընդգծվում, որ «իր **պատմական հայրենիքում** (ընդգծումն իմն է - Ա. Մ.) եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումն իրականացվել է Ռուսաստանի փլուզման համար պայմաններ ստեղծելու նպատակով»:[33]

Վերոնշյալից հետևում է, որ Ռուսաստանի օրենսդիրների կարծիքով՝ հայերը ոչ միայն ենթարկվել են էթնիկ բնաջնջման, այլև հայրենազրկվել են: Կարևոր է, որ բանաձևի հեղինակները փաստաթուղթը կազմել են ցեղասպանության վերաբերյալ

---

[29] Բարսեղյան Լ., Տարեգրություն Հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003 թթ.), էջ 50:

[30] Տե՛ս www.gov.am/am/independence/

[31] Տե՛ս Собрание законодательства РФ, Москва, 1995, N 17, с. 1497, Ведомости Федерального Собрания РФ, Москва, 1995, N 14, с. 1024.

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

միջազգային հայտնի կոնվենցիաների դրույթների ոգուն և տառին հավատարիմ: Հետևաբար, Ռուսաստանի Դաշնության սույն բանաձը կարևոր իրավական փաստաթուղթ է՝ ի լրումն Խորհրդային Ռուսաստանի կառավարության՝ ժողկոմխորհի 1917 թ դեկտեմբերի 29–ի «Թուրքահայաստանի մասին» հռչակագրի, որտեղ ևս փաստվում էր հայերի իրավունքն Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Այլ հարց է, թե այդ մասին այժմ որքանով է իրազեկված ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ ու ռուս հասարակայնությունը:

Ցավոք, իրավական հստակ, ոչ հռչակագրային բնույթի ձևակերպումներով բանաձևեր հետագայի խորհրդարանական որոշումներում քիչ ենք հանդիպում: Թերևս կարևոր է Սլովակիայի խորհրդարանի որոշումը՝ ընդունված 2004 թ. նոյեմբերի 30-ին: Այս դեպքում ևս դրսևորվում է փաստաթղթի հեղինակների բարձր պրոֆեսիոնալիզմը: Նրանում սլովակ խորհրդարանականներն ընդգծում են, որ թուրքերը հայերին ցեղասպանության են ենթարկել ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլ նաև Արևելյան Հայաստանում, որտեղ ներխուժել են 1918 թ.: Թուրքերի ցեղասպան քաղաքականության հետևանքով «Մինչև 1923 թ. ամբողջ Փոքր Ասիայի և պատմական **Արևմտյան Հայաստանի տարածքում** (ընդգծումն իմն է - Ա.Մ.) բնաջնջվել է հայ բնակչությունը»:[34] Սլովակիայի խորհրդարանը միաժամանակ դատապարտում է Թուրքիայի ղեկավարության քաղաքականությունը՝ Կիպրոսը բռնազավթելու, Հայոց ցեղասպանությունը ժխտելու, Հայաստանը շրջափակելու, պոլսահայերի իրավունքները մշտապես ոտնահարելու համար:

Այսպիսով, տարբեր երկրների խորհրդարաններում Մեծ եղեռնի հարցի վերաբերյալ քննարկումների գործընթացի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ սեփական հայրենիքում բնաջնջվելու վերաբերյալ ձևակերպումը, բացառությամբ Կիպրոսի, Ռուսաստանի, Սլովակիայի խորհրդա-

---

[34] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Сост. Автор предисловия и комментария Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, с. 60-61.

բանների, մասամբ նաև՝ Եվրախորհրդարանի բանաձևերում, ամենայն հավանականությամբ միտումնավոր հանվել է կամ ի սկզբանե տեղ չի գտել այդ բանաձևերում՝ տարածքային հատուցման հարցում միջազգային պատասխանատվությունից իրենց երկրներին «ազատելու» նպատակով, հանգամանք, որը նշանակում է համաշխարհային հանրության կողմից 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքված դաշնագրից հրաժարվելու փորձ:

Իհարկե՝ պնդել, որ տասնյակ երկրների խորհրդարանների կողմից վերոհիշյալ բանաձևերի ընդունումը լիովին տեղավորում էր թուրքական մարտավարության մեջ, ճիշտ չի լինի: Թուրքերը չէին սպասում, որ այդ խնդիրը կարող է դուրս գալ իրենց «հսկողությունից» և առանձին պետություններ ցեղասպանության ճանաչումից զատ կարող են նաև իրենց խորհրդարանական բանաձևերում հատուցման պահանջներ դնել: Ուստի նրանք փորձեցին հայության համար նոր թակարդներ լարել:

2001 թ. Թուրքիայի ու նրան աջակցող միջազգային տարբեր ուժերի ջանքերի շնորհիվ ստեղծվեց այսպես կոչված «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը»[35]: Գտնվեցին հայեր, ովքեր թուրք «մասնագետների» հետ սկսեցին բանավիճել ցեղասպանության իրողության շուրջ: Այդ թեմայով հայկական կողմին ներքաշելով բանավեճի մեջ՝ թուրքերը համաշխարհային հանրության առջև սկսեցին փաստորեն ներկայանալ ոչ թե ոճրագործ, այլ՝ բանավիճող «հավասար» կողմ, իսկ հայերը ոչ թե զոհ, այլ՝ միայն ցեղասպանված լինելու իրենց պնդումների համար պայքարողներ: Բանավիճելով նման հարցի շուրջ՝ հայերն ակամայից դառնում էինք ցեղասպանության իրողությունը կասկածի տակ առնող կողմ, ոճրագործն ու զոհը հայտնվում էին նույն հարթության վրա:

---

[35]«Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» գործունեության մասին հանգամանորեն տե՛ս Անանյան Արամ, Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին), Եր., 2003:

Շատ շուտով պարզվեց, որ դրա նպատակը մեկն է՝ ստեղծել տպավորություն, թե խնդրահարույց թեմայով ընթանում է հայ-թուրքական բանավեճ, ուստի՝ կողմերի հաշտեցման գործընթացը չվիժեցնելու համար անհրաժեշտ է կասեցնել աշխարհի զանազան երկրների խորհրդարաններում 1915 թ. դեպքերը դատապարտող բանաձևերի ընդունման արշավը: Դա թուրքերին առժամանակ հաջողվեց: Պատահական չէ, որ 2001 թ. կեսից մինչև 2003 թ. աշուն, այսինքն՝գործունեության ընթացքում, ոչ մի երկիր խորհրդարանական մակարդակով որևէ բանաձև չընդունեց Հայոց ցեղասպանության մասին: Հավելենք նաև, որ այդ ամենով հանդերձ, հայկական կողմը զարմանալիորեն “հաշտվել» էր այդ հանձնաժողովի անվան մեջ հայերի համար վիրավորական “հաշտեցում» բառի հետ: Այնպիսի տպավորություն էր, որ կարծես ոչ թե խոսքը մի դեպքում ցեղասպան երկրի և մյուս դեպքում՝ ցեղասպանության զոհ դարձած ժողովրդի, այլ ինչ-որ խնդրի շուրջ ծագած վեճը կողմերի միջև հարթելու ուղիներ գտնելու մասին էր:

2003 թ. աշնանը հայկական կողմը վերջապես հասկանալով, որ հայտնվել է ծուղակի մեջ, միակողմանիորեն դուրս եկավ հանձնաժողովից: Անմիջապես Շվեյցարիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, հաջորդ տարին Կանադան և Լեհաստանը համանման քայլերի դիմեցին: Ճանաչման գործընթացը շարունակվեց: Դարձյալ ոչինչ չփոխվեց: Թերևս ունեցանք բարոյական որոշ բավարարվածություն: Զարմանալիորեն՝ հոլոքոստի դիմաց հատուցման հասնելու հրեական հայտնի փորձը մեզ դաս չեղավ: Ընդհակառակը՝ մենք 2008–2009 թթ. ներքաշվեցինք նոր խաղի մեջ, այս անգամ իսկապես «մարզական» բնույթի՝ ֆուտբոլային:

2009 հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Թուրքիայի և Հայաստանի Հանրապետությունների արտգործնախարարներ Ահմեդ Դավութօղլուն և Էդուարդ Նալբանդյանը նախաստորագրեցին “Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և “Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների

զարգացման մասին» արձանագրությունները, որոնցով որոշակի պայմանների կատարման դեպքում, նախատեսվում էր կողմերի միջև հաստատել դիվանագիտական հարաբերություններ, բացել միմյանց միջև 1993 թվականից փակված փաստական սահմանը, «համագործակցել» տարբեր բնագավառներում և այլն:

Սակայն փաստաթղթի ուսումնասիրությունից հստակ երևում էր, որ այն առաջին հերթին բխում էր Թուրքիայի շահերից[36]: Ուստի պատահական չէ, որ ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում այդ արձանագրություններն առաջացրին հայ հանրության բուռն դժգոհությունը: Հայաստանը և Թուրքիան, լինելով ՄԱԿ-ի անդամ երկրներ, եթե վավերացնեին այդ արձանագրությունները, կնշանակեր՝ Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի և Կարսի հոկտեմբերի 13-ի անօրինական պայմանագրերով ծնված Ախուրյան-Արաքս գիծը (իրականում՝ խորհրդա-թուրքական փշալարը) կդառնար օրինական միջպետական սահման, Հայաստանը պաշտոնապես կհրաժարվեր ցեղասպանության ենթարկված արևմտահայության հայրենիք Արևմտյան Հայաստանից, Սևրի դաշնագրից, այն է՝ պահանջատիրությունից: Բարեբախտաբար, այդ արձանագրությունները, չվավերացվեցին Թուրքիայի կողմից և, ի վերջո, Հայաստանի ղեկավարությունը, համոզվելով, որ թուրքական կողմը նպատակ չունի վավերացնել արձանագրությունները, 2018 թ. մարտի 1-ին ստիպված եղավ չեղարկել այդ անհեթեթ ու վտանգավոր փաստաթղթերը:

Ի՞նչ ռազմավարություն և մարտավարություն է ընտրելու Հայաստանը Հայոց ցեղասպանության հարցում: Խնդիրն անկասկած, բարդ է: Փորձագետների մեծ մասը գտնում է, որ Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման համատեքստում դրա արծարծումը ոչ միայն անհնարին է, այլև վտանգավոր: Պատահական չէ, որ դեռ 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետ-

---

[36] Հայ-թուրքական արձնագրություններում հայկական կողմի համար ոչ հայանպաստ ձևակերպումների մասին տե՛ս Մելքոնյան Ա., Ցեղասպանություն և հայրենազրկում, Եր., 2015, էջ 256-287:

ռոսյանը դեմ էր անկախության հռչակագրի տեքստում Հայոց ցեղասպանության մասին հատուկ հոդված մտցնելուն՝ ենթադրելով, որ դա կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ անկախության ուղին բռնած Հայկական հանրապետության համար: Սակայն պատգամավորները ձայների մեծամասնությամբ քվեարկեցին հօգուտ այդ հոդվածի, և կյանքը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունը կարող էր այդ խնդրի միջազգային հետապնդման պայմաններում ոչ միայն գոյատևել, այլև արձանագրել աննախադեպ հաջողություններ Արցախի համար հարևան Ադրբեջանի դեմ անհավասար պատերազմում:

Այսօր էլ կան քաղաքական ուժեր, որոնք գտնում են, որ Հայոց ցեղասպանության, առավել ևս՝ հատուցում պահանջելու մարտավարությունը մեծապես վտանգում է Հայաստանի անկախությունը և քաղաքական արկածախնդրություն է: Սակայն իրականությունն այն է, որ ո՛չ ցեղասպանության, ո՛չ էլ տարածքային խնդիրների արծածումներն ամենևին էլ արկածախնդրություն չեն: Այսօր արծարծել իրական հատուցման խնդիրը, մի հանգամանք, որը փաստորեն իրավաբանորեն ձևակերպվել է 1920 թ. օգոստոսի 10-ին մեծ տերությունների կողմից Սևրի դաշնագրի 88-93-րդ հոդվածներով և ԱՄՆ-ի նախագահի նոյեմբերի 22-ի իրավարար վճռով, նշանակում է մտահոգվել Հայաստանի Հանրապետության անվտանգության հարցով, բարձրաձայնել աշխարհով մեկ այն իրողությունը, որ ներկայիս Հայաստանը գործ ունի նույն ցեղասպան երկրի հետ, որովհետև մերժողականության այդ նույն քաղաքականությունը, որը թուրքերի կողմից տարվում է տասնամյակներ շարունակ՝ նույն ցեղասպանության քաղաքականության շարունակությունն է: Այսինքն՝ այսօր էլ իր համար բարենպաստ պայմանների ստեղծման պարագայում Թուրքիան ունակ է հայերի դեմ իրագործելու նոր ցեղասպանություն, քաղաքական ծրագիր, որի կենսագործման հարցում նրան զորավիգ կլինի Ադրբեջանը:

Հատկանշական է, որ Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքական ուղեգիծ որդեգրած Թուրքիան վերջերս սկսել է Հայաստանին սպառնալ նաև միջազգային դատարան դիմելու մտադրությամբ՝ իր այդ քայլը հիմնավորելով հայերի կողմից ի-

րեն զրպարտելու, ինչպես նաև հանիրավի ցեղասպանության մեջ մեղադրելու հայկական պնդումները “մերկացնելու» անհրաժեշտությամբ: Հետևաբար, խնդիրը հանգուցալուծելու ուղին բոլոր դեպքերում մնում է միջազգային դատարանը: Միանգամայն հասկանալի է, որ Հայաստանի նկատմամբ ռազմական ուժ գործադրելու թուրքերի ավանդական մեթոդն այլևս ժամանակավրեպ է, ուստի միջազգային դատարան դիմելու տարբերակը ակամայից «ընդունելի» է դառնում նաև Թուրքիայի համար:

Վերոհիշյալից հետևում է, որ հայ պետական ու քաղաքական շրջանակները պարտավոր են ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից շուտափույթ անցնել հատուցման պահանջին՝ խնդիրը միջազգային դատարանում վիճարկելու եղանակով: Դա է հուշում նաև միջազգային փորձը. Նյուրենբերգյան դատավարության արդյունքում գերմանական նացիստների պրագլուխներին պատժելուց հետո 1950-ական թթ. սկզբից Գերմանիան սկսեց հատուցել Իսրայելին ու համայն հրեականությանը, գործընթաց, որը շարունակվում է նաև այսօր: Սակայն մինչ այդ հրեաները ճանապարհ անցան՝ նախապատրաստելով իրենց հաղթանակը: Նրանք նախապես միջազգային օրենսդրությունը նախապատրաստեցին իրենց նպատակներին և հետո անցան դրա իրագործմանը: Հիմնարացի էությունը հասկանալու համար անդրադառնանք խնդրի նախապատմությանը:

Էթնիկ-ազգային հողի վրա սպանությունները համաշխարհային պատմության մեջ հայտնի են վաղնջական ժամանակներից: Դրանք ի հայտ են եկել դեռ առաջին պետական կազմավորումներից առաջ, երբ միևնույն լեզվական ընդհանրության հենքի վրա ձևավորվել են տոհմային ու ցեղային միությունները: Աստիճանաբար դրանք վերածվել են պետական կազմավորումների, որոնց առաջացման հիմքում դարձյալ էթնիկ-լեզվական գործոնն էր: Ժամանակի ընթացքում էթնիկ դրդապատճառով սպանություններին զումարվել են նաև կրոնական շարժառիթները, կամ ավելի ճիշտ՝ դրանք ձեռք են բերել էթնոկրոնական ու էթնոընկերային բովանդակություն:

Ազգային բնույթի հանցագործություններն ի սկզբանե սովորական սպանություններից հիմնականում տարբերվել են այն հանգամանքով, որ դրանք առավելապես կազմակերպվել և իրականացվել են պետությունների, մասնավորապես՝ կայսերական իշխանությունների կողմից կամ՝ առնվազն ուղղորդվել են դրանց կողմից: Որպես կանոն, այդ էթնիկ բռնություններն ուղղված են եղել զանազան աշխարհակալ տերությունների տիրապետությունից ազատագրվելու համար պայքարի ելած ազգային փոքրամասնությունների դեմ և նպատակ են հետապնդել կանխելու տվյալ կայսրության փլուզումը, հպատակության մեջ պահել ենթակա տարբեր ժողովուրդներին ու կրոնական հանրույթներին:

Այդուհանդերձ, որքան էլ հին և միջնադարյան ժամանակներում էթնոկրոնական բնույթի սպանությունները մեծ թիվ ու ծավալներ են ունեցել, չենք կարող պնդել, որ դրանց նպատակն այլազգիներին ու այլադավաններին իսպառ ոչնչացնելն էր: Այդ բռնություններն ավելի շատ նպատակաուղղված էին մայր երկրի՝ մետրոպոլիայի պահպանմանը և այլ ազգություններին ու կրոնական համայնքներին հպատակ ու հարկատու պահելուն: Այլ հարց է, որ նման քաղաքականության հետևանքով արձանագրվել են դեպքեր, երբ մի շարք էթնոկրոնական համայնքներ նաև իսպառ վերացել են, ինչպես XVI–XVIII դարերի ընթացքում ամերիկյան մայրցամաքի բազմաթիվ հնդկացիական տեղաբնիկ ցեղախմբեր:

Ինչևէ, իրականությունն այն է, որ մինչև XX դարի սկիզբը միջազգային հանրությունը լրջորեն չի զբաղվել տարբեր քաղաքական ուժերի կողմից էթնիկ կամ էթնոկրոնական հանրույթները ոչնչացնելուն ուղղված քայլերը կանխելու, առավել ևս դատապարտելու ու պատժելու խնդիրներով: Հատկանշական է, որ թերևս էթնիկ հողի վրա իրականացվող բռնությունները դատապարտող միջազգային առաջին փաստաթղթերը վերաբերում են Օսմանյան կայսրությունում վտանգված ազգային փոքրամանություններին, մասնավորապես՝ հայությանը: 1870-ական թթ. սկզբին Կ.Պոլսի հայոց պատրիարք Մկրտիչ Խրիմյանը, օգտագործելով «Արևմտա-

հայերի ազգային սահմանադրության» ընձեռած հնարավորությունը, իշխանություններին ներկայացրեց հայերի “Հարստահարությունների մասին» փաստաթուղթը, որտեղ կոնկրետ փաստերի հիման վրա բացահայտվում էր ազգային-կրոնական մղումներով հայության նկատմամբ իրականացված բռնությունների իրական պատկերը[37]:

Միջազգային ասպարեզում հայերի անապահով վիճակի և նրանց անվտանգությունը պետականորեն ապահովելու հարցը տեղ գտավ ինչպես 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3) Սան Ստեֆանոյի հաշտության 16-րդ, այնպես էլ նույն թվականի հուլիսի 13-ին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածներիի տեսքով, որտեղ արձանագրվում էր քրդերից ու չերքեզներից հայերին պաշտպանելու կառավարության ստանձնած պարտավորությունը: Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածում ասվում էր. “Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից»[38]: Ճիշտ է, ինչպես երևում է՝ օսմանյան իշխանություններն այս հոդվածներում ոչ միայն չէին մեղադրվում հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների համար, այլ անգամ նկատվում էին «անվտանգության երաշխավորներ»: Այդուհանդերձ, միջազգային փաստաթղթում առաջին անգամ տեղ էր գտնում հայերի անապահով ու անպաշտպան լինելու ձևակերպումը: Հավելենք նաև, որ համիդյան վարչակարգը միջազգային հանրության հանդեպ այդ հոդվածներում ամրագրված «պարտավորություններով», անշուշտ, փորձում էր իրեն ազատել մեղքի բաժնից և հարստահարությունների պատասխանատվությունը բարդել կայս-

---

[37] Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, Հասարակական-քաղաքական գործունեությունը, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2008, էջ 178–196:

[38] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 128:

ության համար լրջագույն վտանգ ներկայացնող քրդերի ու չերքեզների վրա:

Միաժամանակ, կարևոր ենք համարում ընդգծել, որ ի տարբերություն Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի, որտեղ որպես բարենորոգումների իրականացման վայր էր նշվում “Հայաստանը», այսինքն՝ հայերի հայրենիքը, Բեռլինի 61-րդ հոդվածում, ինչպես տեսնում ենք, գործածվում էր «հայաբնակ մարզեր» բառակապակցությունը[39]: Հասկանալի է, որ թուրքական կողմն արդեն այս փաստաթղթում, հատկապես Անգլիայի աջակցությամբ տեքստից հանել էր հայության հայրենիքի գաղափարը՝ այն փոխարինելով սոսկ հայերի բնակության վայրեր արձանագրող «հայաբնակ մարզեր» արտահայտությամբ:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին, պայմանավորված աշխարհի տարբեր մասերում ընթացող պատերազմներով, որոնց մեջ առանձնակի տեղ ունեին գաղութային համակարգից ազատագրվելու համար պայքարի ելած ազգերի շարժումները (անգլո-բուրական պատերազմ, բալկանյան պատերազմներ և այլն), միջազգային ասպարեզում ավելի հաճախակի դարձան էթնիկ սպանությունների մասին քննարկումները, դրանք կանխելու մտահոգությունները: Ավելի ու ավելի էթնիկ հանրույթների բնաջնջման հարցը ընկալվեց երկիր մոլորակի վրա տեսակի պահպանմանն ուղղված ընդհանուր շարժման անքակտելի մաս: Սակայն նման երևույթները կանխելու համար անհրաժեշտ մեխանիզմներ այդպես էլ չստեղծվեցին, որով էլ պիտի բացատրել ինչպես 1894–1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի, այնպես էլ 1915–1918 թթ. երիտթուրքերի ու հետագայում՝ 1919-1922 թթ. արդեն քեմալականների կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության անարգել ընթացքը: Ավելին՝ այդուհետ ևս, բացառությամբ Անտանտի երկրների (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա) 1915 թ. մայիսին արված համատեղ հռչակագրի, Հայոց մեծ եղեռնը չդատարպարտվեց:

---

[39] Տե՛ս նույն տեղում, հմմտ.՝ էջ 92 և 128:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության համար ոճրագործների անպատիժ մնալու խնդրին՝ միաժամանակ չի կարելի մոռանալ, որ, այնուամենայնիվ, այդ հարցում եղան որոշակի զարգացումներ, որոնք արժանի են ուշադրության: Պատժելիության մասին միջազգային համապատասխան օրենքի բացակայությունն էր նաև, որ հայ վրիժառուներին մղեց համարձակ քայլերի. ինչպես արդեն նշվել է՝«Նեմեսիս» գործողության արդյունքում Մեծ եղեռնի գրեթե բոլոր կազմակերպիչ ղեկավարները ստացան իրենց արժանի պատիժը[40]: Երկրորդ՝ Փարիզի վեհաժողովում Հայկական հարցի քննարկման ժամանակ մեծ տերությունների ղեկավարները Հայկական միացյալ պետության ապագա սահմանները գծելիս հարկադրված եղան այսպես թե այնպես հաշվի առնել ցեղասպանված էթնոսին լիակատար բնաջնջումից փրկելու անհրաժեշտությունը, այն է՝ կենսագոյության պայմաններ ապահովելու հրամայականը: Ուստի պատահական չէ, որ տերությունները 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրով, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին ներկայացրած իրավարար վճռով ոչ միայն ճանաչում էին Հայաստանի Հանրապետության իրավունքն արևմտահայ չորս նահանգների՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի մեծ մասի վրա, այլև նրան էին հատկացնում նավահանգիստ, այսինքն՝ ելք դեպի Սև ծով[41]:

Սակայն Օսմանյան կայսրությունում ծավալված քեմալական շարժումը, քեմալաբոլշևիկյան գործակցությունն արմատապես փոխեցին իրավիճակը տարածաշրջանում, որի հետևանքով ի չիք դարձավ իր հայաթափված հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում պետություն ստեղծելու հայության ծրագիրը, կործանվեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ Արևելյան Հայաստանի մի հատվածի վրա ստեղծված ՀՍԽՀ-ն

---

[40] Տե՛ս Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 4, գիրք 1 Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ., Եր., 2010, էջ 231–236:

[41] Մանրամասն տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրություն. Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, հոդվածների ժողովածու, Եր., 2012, էջ 30:

փաստորեն զրկվեց Հայկական հարցն առաջ մղելու տարրական ամեն մի միջոցից:

Այսպիսով, մինչև Երկրորդ աշխարհամարտը միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության դատապարտման խնդիրն առաջ տանելու բնագավառում հայությունը չուներ լուրջ միջոցներ: Խորհրդային Հայաստանում՝ ստալինյան վարչակարգի և խորհրդաթուրքական համեմատաբար ջերմ հարաբերությունների պայմաններում խնդիրն ամբողջապես լռեցվել էր: Սփյուռքահայությունն էլ, սփռված աշխարհով մեկ, միայն կայացման փուլի մեջ գտնվելով, ի զորու չէր խնդիրը պատշաճ մակարդակով հետապնդել: Թերևս կարելի է հիշել միայն 1945–1947 թթ., երբ Խորհրդային Միության արտաքին քաղաքականության համատեքստում, Խորհրդային Հայաստանի անունից, խնդիր դրվեց շոշափել նաև հայկական հողերի հարցը: Սակայն այն հանդիպեց անգլո-ամերիկյան կողմի ուժեղ հակազդեցությանը: Շուտով այն մոռացության տրվեց նաև ԽՍՀՄ-ի կողմից: Ավելին՝ 1953 թ. մայիսի 30-ին խրուշչյովյան ղեկավարությունը հրաժարվեց Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Հայ դատի հարցը խորհրդային երկրում կրկին դարձավ խիստ վտանգավոր և փակ թեմա:

Սակայն «մոռացված» Հայոց ցեղասպանությունը, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ իրեն հիշեցնել էր տալիս: Այն հատկապես սկսել էր հետաքրքրել հրեա, լեհաստանցի ճանաչված իրավաբան Ռաֆայել Լեմկինին: Ազգային պատկանելության դրդապատճառով զանգվածային կոտորածների իրավական ձևակերպման խնդիրը, իրերի բերումով դարձավ նրա լուրջ մտահոգության առարկան:

1933 թ. Գերմանիայում նացիստական կուսակցության իշխանության գալն ու հրեաների նկատմամբ բնաջինջ քաղաքականության սկզբնավորումը Լեմկինին ստիպեցին խորությամբ ուսումնասիրել իր ազգակիցներից առաջ՝ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի էթնիկական ոչնչացման պատմությունը:

Ռ. Լեմկինն արդեն 1933 թ. Մադրիդի միջազգային համաժողովում փորձեց ստանալ մասնակից երկրների ներկայացուցիչների աջակցությունը՝ էթնիկ պատկանելության հիմքի վրա իրականացված և իրականացվող հանցագործություններին իրավական ձևակերպում տալու, դրանք կանխարգելելու ուղղությամբ միջազգային ջանքերը համադրելու համար: Սակայն նրա առաջարկը չարժանացավ պատշաճ ուշադրության[42]:

Հրեա իրավաբանն իր հետազոտությունների արդյունքում եկավ այն համոզման, որ հատկապես Երկրորդ աշխարհամարտի սկսվելուց հետո հրեաների նկատմամբ ֆաշիստական Գերմանիայի իրականացրած քաղաքականությունն իր հիմնական գծերով կրկնում է Առաջին համաշխարհային պատերազմի օրերին հայերի հանդեպ երիտթուրքերի կատարած ոճրագործության տարրերը: Հենց հայերի հետ տեղի ունեցածն էլ Լեմկինը հիմնականում ըստ կետերի ձևակերպեց հատուկ բանաձևում, որն իր վերջնական տեսքը ստացավ Երկրորդ աշխարահամարտի ավարտից մի քանի տարի առաջ[43]: Էթնիկ դրդապատճառով կանխամտածված այդ սպանությունը նա անվանեց «գենոցիդ» (**γένος** - հունարեն՝ ցեղ, տոհմ, caedo - լատիներեն՝ սպանում եմ):

1945 թ. Փարիզի համաժողովում վերոհիշյալ բանաձևն ընդունել տալու հարցում Լեմկինը չստացավ լուրջ աջակցություն. նախագիծը չընդունվեց: Սակայն Գերմանիայի նացիստական պարագլուխների նյուրենբերգյան դատավարության շրջանակներում և դրանից հետո Միավորված ազգգերի կազմակերպության կողմից ընդունված 1946 թ. փետրվարի 13-ի թիվ 3(I) և 1947 թ. հոկտեմբերի 31-ի թիվ 170 (II) բանաձևերը՝ ռազմական հանցագործներին հանձնելու և պատժելու վերաբերյալ, հող նախապատրաստեցին Լեմկինի գործունեության հաջողության համար: Հատկապես Ֆրանսիայի,

---

[42] Տե՛ս Барсегов Ю. Г., Геноцид армян – преступление против человечества (о правомерности термина и юридической квалификации), Ер., 1990, с. 7.

[43] Մանրամասն տե՛ս Yair Auron: Israel and the Armenian Genocide, Maba, Tel Aviv, 2005.

Միացյալ Նահանգների, ինչպես և շուրջ 20 երկրների աջակցությամբ, վերջապես 1948 թ. դեկտեմբերի 9-ին նա հասավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից իր հեղինակած այդ կոնվենցիայի ընդունմանը[44], որը 1951 թ. հունվարից մտավ գործողության մեջ: Մեկ տարի անց՝ իրականացրած ցեղասպանության դիմաց Արևմտյան Գերմանիայի կանցլեր Կոնդրատ Ադենաուերի կառավարությունն սկսեց հոլոքոստի դիմաց նորաստեղծ Իսրայել պետությանը և հրեությանը հատուցելու գործընթացը, որը շարունակվում է առ այսօր:

1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» Լեմկինի բանաձևած կոնվենցիայի մանրազնին ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ նրանում որքան էլ օգտագործված են Հայոց ցեղասպանության իրողությունները, այնուամենայնիվ, այնտեղ բացակայում է մի հույժ կարևոր ձևակերպում. այն է՝ հայ ժողովուրդը եկվոր թուրքերի կողմից ենթարկվել էր ոչ միայն էթնիկ բնաջնջման, այլև որպես բնիկ ժողովուրդ, զրկվել էր իր բուն Հայրենիքից, որտեղ ապրել էր հազարամյակներ շարունակ: Կարծում ենք, այդ ձևակերպումը, ըստ Լեմկինի՝ հրեաների համար որևէ հետաքրքրություն չէր կարող ներկայացնել, քանի որ նրանք հայրենազրկման չէին ենթարկվել և ի տարբերություն հայերի, ցեղասպանվել էին իրենց հայրենիքից դուրս՝ Եվրոպայում:

Այսպիսով, Մեծ եղեռնից 100 տարի անց, երբ վերջապես համահայկական մակարդակով Հայոց ցեղասպանության դիմաց դատական կարգով նյութական ու հողային հատուցման հասնելու խնդիրը դառնում է խիստ արդիական: Ստացվում է, որ ազգին, էթնիկ կամ կրոնական դրդապատճառներով ոչնչացնելն օրենսդրորեն պատժելի է, իսկ նույն հանրությանն իր «սեփականությունից»՝ հայրենիքից զրկելու գործո-

---

[44] Տե՛ս “Конвенция о предупреждении преступления геноцида и наказания за него”, Права человека. Сборник международных договоров, том I (часть вторая). Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, сс. 780–785.

ղության համար միջազգային օրենսդրությունը որևէ պատիժ չի նախատեսում: Հետևապես, խիստ անհրաժեշտություն կա ՄԱԿ-ի օրենսդրությունը հարստացնել նաև **հայրենազրկում՝ պատրիոցիդ** հասկացությամբ, որը լիովին կիրառելի է ինչպես հայերի, այնպես էլ ասորիների ու Պոնտոսի հույների համար: Նշանակում է այդ ձևակերպմանը պետք է հասնել ցեղասպանության ու հայրենազրկման ենթարկված քրիստոնյա վերոհիշյալ ժողովուրդների հետ համատեղ պայքարի արդյունքում:

Համոզված ենք, որ նման նոր օրինագծի ընդունումը միանգամայն հնարավոր է: Նախ՝ այն չընդունելու որևէ պատճառաբանություն չի կարող լինել, քանի որ եթե անհատի սեփականության նկատմամբ ոտնձգությունը քրեորեն պատժելի է յուրաքանչյուր երկրի քրեական օրենսգրքով, ապա ամբողջ ազգի սեփականության՝ տան, այն է՝ հայրենիքի, ունեցվածքի նկատմամբ ոտնձգությունը չի կարող պատժելի չհամարվել: Ավելացնենք, որ միջազգային իրավունքը ցեղասպանության վերաբերյալ նոր փաստաթղթով հավելելու նախադեպ կա. 1968 թ. նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի կողմից ընդունվեց նոր կոնվենցիա՝ «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին»[45]: Նոր կոնվենցիայի երկրորդ հոդվածի «մարդկության դեմ կատարված հանցագործություն է համարվում նաև ցեղասպանության հանցագործությունը, որը սահմանվել է ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով, նույնիսկ եթե այդ գործողությունները այն երկրում, որտեղ կատարվել են, չեն համարվում ներքին օրենսդրության խախտում»[46]:

Այսպիսով՝ առաջիկայում հատկապես հայերի, հույների ու ասորիների առաջնահերթ խնդիրը պետք է լինի ՄԱԿ-ում

---

[45] Տե՛ս Конвенция о неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества, http//un.org/ru/documents/decl-conv/conventions/ warcrimes-limit.shtml

[46] Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, с. 787.

հայրենազրկման մասին հատուկ բանաձև անցկացնելը, որն էլ ավելի դյուրին կդարձնի միջազգային դատական կարգով հատուցման հասնելու իրավական ճանապարհը:

3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

3.1. Հայ բնակչությունն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս տարածաշրջաններում Առաջին աշխարհամարտի նախօրեին

XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարածքում օսմանյան վարչական համակարգն իր հիմնական գծերով արդեն ավարտուն տեսք էր ստացել և էական փոփոխությունների չենթարկվեց մինչև Առաջին աշխարհամարտը: Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանի տարածքում գոյություն ուներ 6 նահանգ՝ Էրզրումի (Կարնո նահանգ), Վանի, Բիթլիսի (Բաղեշի նահանգ), Դիարբեքիրի (Տիգրանակերտի նահանգ), Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) և Սեբաստիայի (Սվազ): Կիլիկիայի մեծագույն մասն ընդգրկված էր Ադանայի նահանգի մեջ: Լեռնային Կիլիկիայի արևելյան հատվածն ընդգրկող Մարաշի ընդարձակ գավառը նախապես մտնում էր հարևան Հալեպի նահանգի մեջ, սակայն 1910 թ., որպես «ինքնուրույն» գավառ, դուրս բերվեց վերջինիս կազմից[47]: Անփոփոխ էր մնացել նաև ներքին վարչական բաժանումը՝ սանջակ-կազա-նահիե (գավառ-գավառակ-գյուղախումբ):

Էրզրումի նահանգը զբաղեցնում էր շուրջ 50.000 կմ^2 տարածք՝ գրավելով Արևմտյան Հայաստանի հյուսիսարևելյան և արևելյան հատվածները[48]: Այն ուներ 3 գավառ՝ Էրզրումի,

---

[47] Նման վարչամիավորների կառավարիչներն անմիջապես ենթարկվում էին ներքին գործերի նախարարությանը: 1912 թ. Օսմանյան կայսրության տարածքում գոյություն ուներ այդ կարգավիճակով 18 վարչամիավոր: Տե՛ս Kemal H. Karpat, Ottoman Population. 1830–1914, Wisconsin, 1985, pp. 188–189:

[48] Ա-Դօ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, էջ 6: Аверьянов П. И., Этнографический и военно–политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912, с. 58. Վիլայեթների զբաղեցրած մակերեսը տրված է միջինացված թվերով, քանի որ սկզբնաղբյուրները հաղորդում են հաճախ հակասական տեղեկություններ: Որպես կանոն՝

Երզնկայի, Բայազետի և 20 գավառակ[49]: 1900-ական թթ. սկզբին գավառի էր վերածվել նաև Խնուսը, սակայն 1908 թ. այն, կրկին վերածվելով գավառակի, մտավ Էրզրումի գավառի մեջ: Էրզրումի նահանգից անմիջապես հարավ տարածվում էին Վանի և Բիթլիսի նահանգները, որոնք զբաղեցնում էին Արևմտյան Հայաստանի կենտրոնական ու հարավարևելյան հատվածները (Մեծ Հայքի Տուրուբերան, Վասպուրական, Աղձնիք և Մոկք աշխարհների տարածքները): Դրանցից առաջինը զբաղեցնում էր 33.600 կմ^2 տարածք[50], ուներ 2 գավառ՝ Վանի և Հաքքարիի (Հեքյարի), 13 գավառակ: Շուրջ 28.000 կմ^2 տարածք ունեցող[51] Բիթլիսի (Բաղեշ) նահանգը կազմված էր 4 գավառից՝ Բիթլիսի, Մուշի, Գենջի, Սղերդի, որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին 16 գավառակի: Բիթլիսին հարավից սահմանակցում էր Դիարբեքիրի նահանգը՝ զբաղեցնելով 47.250 կմ^2 տարածք[52]: Վերջինիս կազմում էին Մեծ Հայքի Աղձնիքի արևմտյան և Ծոփքի արևելյան շրջանները, ինչպես նաև Հայոց Միջագետքը: Նահանգը բաժանվում էր 4 գավառի՝ Դիարբեքիրի, Արղանայի (Մադեն), Սևերակի (Սևավերակ), Մարդինի և 15 գավառակի: Դիարբեքիրից արևմուտք ընկած էր Խարբերդի (պաշտոնական անվանումը՝ Մամուրեթ-ուլ-Ազիզ) նահանգը, որի հիմնական մասը կազմում էին Մեծ Հայքի հարավարևմտյան և Փոքր Հայքի հարավային հատվածնե-

---

ռուսական սկզբնաղբյուրներում տարածքը տրված է քառակուսի վերստերով, որոնք վերածված են կմ^2-ու:

[49] Վարչական բաժանումը տրված է ըստ 1912 թ.: Տե՛ս Karpat, op. cit., pp. 170–187:

[50] Ըստ Վանի ռուսական փոխհյուպատոս Վ. Մանսկու՝ 31 600 կմ^2: Տե՛ս Маевский В. Т., Военно–статистическое описание Ванского и Битлисского вилаетов, Т., 1904, Географический очерк, с. 11–12.

[51] Маевский В.Т., указ. соч., Географический очерк, с. 12–13. Հմմտ. Аверьянов П. И., նշվ. աշխ., Ա-Դոյի մոտ՝ 27 100 կմ^2 (25 000 վերստ^2), ինչը ճիշտ չէ, քանի որ 25 000 վերստ^2-ն հավասար է 28 450 կմ^2-ու:

[52] Отчет о поездке по Азиатской Турции Генерального штаба подполковника Томилова в 1904 году, часть 1, СПб., 1907, с. 178.

ը, ինչպես նաև Կոմմագենեն: Այն ուներ 37.700 կմ^2 տարածք[53] և 3 գավառ՝ Մամուրեթ-ուլ-Ազիզի, Դերսիմի, Մալաթիայի, որոնք իրենց հերթին բաժանվում էին 16 գավառակի:

Արևմտյան Հայաստանի ամենաընդարձակ՝ Սեբաստիայի (Սվազի) նահանգը տարածվում էր Էրզրումից և Խարբերդից արևմուտք՝ մինչև Տրապիզոնի նահանգ: Այն ներառում էր Փոքր Հայքի հյուսիսային հատվածը՝ հարակից մի շարք այլ շրջաններով (Հելլենոպոնտոս): Նահանգի տարածքը 83.000 կմ էր[254], ուներ 4 գավառ՝ Սեբաստիայի (Սվազի), Շաբին Կարահիսարի, Թոխաթի (Եվդոկիայի) և Ամասիայի՝ 26 գավառակներով: Մինչև 1910 թ. Ադանայի նահանգը զբաղեցնում էր 38.300 կմ^2 տարածք[55]: Նույն թվականին վերջինիս արևմուտքը կազմող Իչիլի (Իչել) գավառի (Քարուտ Կիլիկիա) առանձնացումով նահանգին մնաց շուրջ 26.000 կմ^2 տարածք: Առաջին աշխարհամարտի նախօրյակին այն ուներ 4 գավառ՝ Ադանայի, Սսի (Կոզանի), Մերսինի և Ջեբել-Բերեքեթի, որոնք էլ իրենց հերթին՝ 15 գավառակ: Վերջապես, Լեռնային Կիլիկիայի արևելյան հատվածը ներառված էր Մարաշի ինքնուրույն գավառի մեջ, որն ուներ 14.100 կմ^2 տարածք[56] և կազմված էր 5 գավառակից, ի թիվս որոնց՝ նաև Զեյթունն իր շրջակայքով (Ֆոնուզ, Կոկիսոն, Ալբիստան):

XX դար արևմտահայությունը մուտք գործեց նախորդ տասնամյակներին ունեցած անդառնալի և ծանր կորուստների բեռով: Համիդյան վարչակարգի կողմից սկիզբ առած ցեղասպանության քաղաքականությունը հիմնովին աղճատել էր Արևմտյան Հայաստանի ազգացեղային նկարագիրը: Ընդ որում՝ թուրքական պետությունը, անշուշտ, միջազգային որո-

---

[53] Պ. Ավերյանովի տվյալներով՝ 37.540 կմ^2 (указ. соч., с. 58): Այլ տվյալներով՝ 37.860 կմ^2: Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 119:

[54] Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 88: Ըստ Պ. Ավերյանովի՝ 83.690 կմ^2 (там же):

[55] Томилов, указ. соч., с. 34. Մեկ այլ տվյալով Ադանայի նահանգը (ներառյալ՝ Իչիլը) ուներ շուրջ 40.000 կմ^2 տարածք (Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 195):

[56] ՀԱԱ, ֆ. 397, ց. 1, գ. 11, թ. 44:

շակի ճնշման ներքո բացահայտ զանգվածային կոտորածնե-րից անցել էր ավելի քողարկված և նենգ մարտավարության կիրառման՝ դաժան, հաճախ անտանելի հարկային քաղաքա-կանության միջոցով հայերի համար ստեղծել այնպիսի տնտե-սական պայմաններ, որոնք կնպաստեին Արևմտյան Հայաս-տանի «խաղաղ» հայաթափմանը: Ճիշտ է, չէին մոռացվել նաև հին «մեթոդները»: Մինչև 1908 թ. ժամանակ առ ժամանակ տեղ են գտել նաև հայ բնակչության մասնակի ջարդեր: Դրանց շարքում առանձնանում է հատկապես 1904 թ. ապրիլ-մայիս ամիսներին՝ Սասունի ապստամբության ճնշմանը զուգահեռ, օսմանյան բանակի և համիդիեների կողմից իրականացված վայրագ նոր կոտորածը, որին, որոշ տվյալներով, զոհ գնաց 7.800 մարդ[57]: Բացի այդ, թուրքական պետությունը չէր հրա-ժարվել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարբեր մասե-րում մահմեդական վերաբնակիչների՝ «մուհաջիրների», զանգվածային հաստատման քաղաքականության իրականա-ցումից: Հարկ է նշել, որ այն շարունակվեց երիտթուրքական հեղաշրջումից հետո ևս՝ որոշակիորեն հավաստելով օսման-յան պետության հայակեր էության շարունակականությունը ցանկացած վարչակարգի օրոք: Առավել ցայտուն օրինակը Կիլիկիայի հայության 1909 թ. ապրիլյան զանգվածային կոտո-րածներն էին:

Չնայած նոր իշխանությունների բոլոր ջանքերին՝ պատ-մաբանների կողմից իրավամբ Մեծ եղեռնի նախերգանք որակված այս ոճրագործության մեղքն ամբողջությամբ բար-դելու համիդյան վարչակարգի վրա, անհերքելի փաստերն ու ժամանակակիցների բազմաթիվ վկայությունները հաստա-տում են այդ սպանդի իրագործման երիտթուրքերի անմիջա-կան մեղսակցությունը: Կիլիկիայի ջարդերը, որոնք առանձին ականատեսներ որակեցին որպես «Ողջակիզում» (Holocaust)[58], իրականում բացահայտ նոր մարտահրավեր էր ողջ արևմտա-

---

[57] Պողոսյան Հ.Մ., Սասունի պատմություն, Ե., 1985, էջ 265:

[58] Այս եզրն առաջինը կիրառել է ամերիկացի ս. Զ. Դաքիթ-ներիմանն իր 1913 թ. Բոստոնում հրատարակված The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor during April, 1909 հայտնի գրքում:

հայությանը, քանի որ կոտորածներին զոհ գնացին ոչ միայն Ադանայի և Հալեպի նահանգների, այլև Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից (Դիարբեքիր, Խարբերդ, անգամ՝ Մուշ, Վան) Կիլիկիա ամենամյա արտագնա աշխատանքների մեկնող հազարավոր հայեր: Հատկանշական է նաև, որ հայ բնակչության բնաջնջումը հատկապես հետևողական կերպով իրականացվել էր գերմանական իմպերիալիզմի նախաձեռնությունը հանդիսացող խոշոր ռազմավարական նշանակություն ունեցող Բեռլին-Բաղդադ երկաթուղու երկայնքով ընկած շրջաններում, որի հետևանքով խիստ տուժեցին Ադանայի և Ջեբել-Բերեքեթի (Հայ լեռ) հայահոծ գավառները: Սա ցեղասպանության դասական օրինակ է, քանի որ «մրցակից» հայ տարրին «մաքրելով» հաղորդակցության խոշոր ուղիներից՝ թուրք նորաթուխ գործարար դասը վերջնականապես տիրանում էր վերջինիս բարենպաստ դիրքին և ունեցվածքին. մի երևույթ, որը հսկայական չափերով գործադրվեց արդեն Մեծ եղեռնի տարիներին: Որոշ տվյալներով 1909 թ. Կիլիկիայի տարածքում հարձակման և ավերածությունների ենթարկված բնակավայրերի թիվը հասնում էր 200-ի[59]: Այս ամենի հետևանքով 2 նահանգների առանձին բնակավայրերում հայ բնակչությունն ուղղակի անհետացավ (Մսիս, Անտիոք, Ջիհան կամ Համիդիե, Ինջիրլիք, Օսմանիե ևն): Ընդհանուր առմամբ, 1909 թ. ջարդը խլեց 25.000-30.000 հայի կյանք[60]: Կոտորածներին հաջորդած ամիսներին տարափոխիկ հիվանդություններից, սովից և հակասանիտարական պայմաններից մահացածների թիվը կազմեց շուրջ 8.000 մարդ[61]: Փաստորեն, հայերի անդառնալի կորուստները մոտենում են 40.000-ի սահմանագ-

---

[59] Woods H. Charles, The Danger Zone of Europe, Boston, 1911, p. 154.

[60] Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Ե., 2005, էջ 79–82: Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009, էջ 201–206:

[61] Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 206: Հարկ է նշել, որ զոհերի թիվը կարող է և ավելին լինել, քանի որ Կիլիկիայում գտնվող բազմաթիվ պանդուխտներ որևէ տեղ չէին հաշվառվել, և հետևաբար նրանց ճակատագիրն այդպես էլ անհայտ մնաց: Տե՛ս մասնավորապես Թէրզեան Յ., Կիլիկիոյ աղէտը, Կ. Պոլիս, 1912, էջ 281:

ծին: Հարկ է ավելացնել, որ 1909 թ. ջարդերի ընթացքում նկատելիորեն տուժեցին նաև Կիլիկիայի քրիստոնյա մյուս ժողովուրդները՝ հույները և ասորիները (ավելի քան 1500 զոհ)[62]: Ջարդերի բնական հետևանքն էր նաև վերսկսված արտագաղթը, որի հետևանքով հիմնականում Եգիպտոս, Կիպրոս և Լիբանան տեղափոխված հայերի թիվը կարճ ժամանակում հասավ 13.000 մարդու[63]: Ահռելի էր հայերին հասցված նյութական վնասը, որն, ըստ Ժորժ Բրեզոլի (Պետրոս Ազնավուր), կազմում էր 20 միլիոն թուրքական լիրա (500 միլիոն ֆրանկ)[64]: Ի դեպ՝ կիլիկիահայության սպանդը նոր համահայկական կոտորածների վերածելու առանձին փորձեր և դրսևորումներ նկատվեցին Այնթապում, Կեսարիայում, Ուրֆայում, Խարբերդում, Չնքուշում և այլուր[65]:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայկական բարենորոգումների հարցի վերարծարծումը կրկին հրատապ դարձրեց արևմտահայության թվաքանակի ճշգրտման խնդիրը: Երկարատև ընդմիջումից հետո, ինչը հետևանք էր համիդյան վարչակարգի բռնաճնշումների և բացահայտ արգելքների, Կ. Պոլսի պատրիարքարանը 1912 թ. հնարավորություն էր ստանում Օսմանյան կայսրության տարածքում գտնվող իր թեմերում իրականացնելու վաղուց արդեն հասունացած համընդհանուր նոր վիճակագրություն[66]: Ընդ որում՝ գրեթե միա-

---

[62] Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (օսմանեան երեսփոխան Էտիրնէի), Կ. Պոլիս, 1919, էջ 48:

[63] Սիմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 208–209:

[64] Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 82:

[65] Woods, op. cit., pp. 164–165: Հմմտ. Փուսուլեան Մանուկ, Դրուագներ Չնգուշի անցեալէն, Հալէպ, 1929, էջ 68–88: Պատմութիւն Անթէպի Հայոց, աշխատասիրեց ու խմբագրեց Գէորգ Ս. Սարաֆեան, Ա հատոր, Լոս Անճէլըս, 1953, էջ 615–618:

[66] XX դ. սկզբին թեմական մոտավոր վիճակագրության փորձ կատարել է Կ. Պոլսո նախկին պատրիարք Մ. Օրմանյանը, որի տվյալներով Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և կայսրության մյուս հայաբնակ շրջաններում հայ բնակչության թիվը կազմել է 1.845.000 կամ 2.120.000 մարդ: Տե՛ս van den Steen de Jehay F., De la situation legale des Sujets Ottomans non–musulmans, Bruxxeles, 1906, p. 52. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Հայոց եկեղեցին, Ե., 1993, էջ 259–265:

ժամանակ՝ 1911-1912 թ., անց էր կացվել պաշտոնական՝ «համընդհանուր» հորջորջված վիճակագրությունը, որը դարձավ վերջինը կայսրության պատմության մեջ: Պաշտոնական տվյալներով առաքելական և կաթոլիկ հայերի թիվը, առավելագույն ցուցանիշներով[67], կազմում էր 1.255.656 մարդ: Եթե դրան ավելացնենք ավետարանական հայերին՝ 51.000 մարդ[68] (ըստ ավետարանական միությունների տվյալների), ապա «համընդհանուր» վիճակագրության համաձայն օսմանահպատակ հայ բնակչության թիվը կկազմի շուրջ 1 310.000 մարդ, ինչը դարձյալ իրականի բացահայտ և հերթական կեղծումն էր: Երիտթուրքական իշխանությունները, հավատարիմ նախորդ վարչակարգի քաղաքականությանը, ջանք ու եռանդ չէին խնայել այս անգամ ևս նվազեցված ցույց տալու հայերի թիվը և վերջիններիս ուղղակիորեն զրկելու օսմանյան խորհրդարանի առաջիկա ընտրություններում ավելի մեծ թվով պատգամավորական տեղեր զբաղեցնելու հնարավորությունից: Այն, որ պաշտոնական տվյալները խիստ կեղծված էին, խոստովանում է անգամ հայ ժողովրդի մեծագույն դահիճ, 1908-1916 թթ. օսմանյան ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրած Թալեաթը: Իր, այսպես կոչված, «Սև գրքում», որը Թուրքիայում հրատարակվեց միայն 2008 թ. (վերահրատարակվել է 2009 թ.), Թալեաթը հավաստում է, որ «համընդհանուր» վիճակագրության ցուցակներում հայերի թվի թերհաշվառումը կարելի է ընդունել 30%[69]: Վերջինս, անշուշտ, խիստ թեական ցուցանիշ է, սակայն անգամ այն ընդունելու դեպքում ստացվում է, որ ողջ կայսրությունում հայերի թիվն Առաջին աշխարհամարտի նախօրյակին 1.700.000-ից

---

[67] Սովորականի պես այս վիճակագրության տեղեկագրերում ևս հանդիպում են մեկից ավելի ցուցանիշներ:

[68] Մ. Օրմանյանի տվյալներով՝ XX դ. սկզբին §բողոքական¦ հայերի թիվը կազմում էր 41.500 մարդ. ն. տ.: Օսմանյան վիճակագրության մեջ ավետարանական (բողոքական) եկեղեցու բոլոր հետևորդները (ինչպես հայ, այնպես էլ մյուս ազգությունների ներկայացուցիչները) գրանցված են առանց էթնիկական պատկանելության նշման՝ protestan ընդհանուր անվան տակ:

[69] Murat Bardakçı, Talaat Paşa'nın Evrak-ı metrokesi, İstanbul, 2009, s. 109.

պակաս չի եղել: Կ. Պոլսի պատրիարքարանի 1912 թ. վիճակագրությունը պաշտոնականի լիակատար հակապատկերն էր: Վերջինիս համաձայն, որի տվյալներն ամբողջությամբ հրատարակվեցին միայն 1922 թ. արևմտահայ նշանավոր գրող և հրապարակախոս Թեոդիկի (Թեոդորոս Լապճինճյան) կողմից, Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը կազմում էր 2.026.700 մարդ, որից 1.163.000-ը՝ արևմտահայկական 6 նահանգներում, իսկ 205.000-ը՝ Կիլիկիայում[70]: Փաստորեն, ըստ նոր հայկական վիճակագրության՝ արևմտահայության բացարձակ մեծամասնությունը՝ 67,5%-ը, շարունակում էր ապրել իր բնօրրանում:

Ինչպես հայտնի է, 1912 թ. Արևմտյան Հայաստանին վերաբերող տվյալներն առաջին անգամ ֆրանսերեն հրատարակել է Գրիգոր Զոհրապը՝ գրական կեղծանվան ներքո[71]: Ընդ որում, հաշվի առնելով նախորդ տասնամյակներին ստեղծված անբարենպաստ էթնոժողովրդագրական իրավիճակը, առաջարկվող Հայկական «պրովինցիայի» մեջ ամբողջությամբ ընդգրկված էր միայն Էրզրումի նահանգը: Մյուս 5-ը ներկայացված էին կրճատված սահմաններով, քանի որ հայկական կողմը փորձել էր դուրս թողնել նահանգների այն հատվածները, ուր հայերն արդեն կազմում էին հարաբերական փոքրամասնություն[72]: Ըստ այդմ՝ ապագա «պրովինցիայի» ազգային կազմը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

---

[70] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 261–263:

[71] Marcel LՈart, La question ArmՈnienne a la lumiՈre des documents, Paris, 1913, pp. 60–61.

[72] Այդ հատվածներն էին Վանի նահանգում՝ Հաքքարիի (Հեքյարի) գավառը, Սեբաստիայի նահանգում՝ Ամասիայի և Թոխաթի (Եվդոկիա) գավառները, Դիարբեքիրի «հարավը» (իմա՝ Մարդինի գավառը), ինչպես նաև Խարբերդի նահանգի Մալաթիայի և Բիթլիսի նահանգի Սղերդի գավառների հարավային շրջանները: Առանձնացված վարչամիավորների հայերի ընդհանուր թիվը, ըստ նույն աղբյուրի, կազմում էր 145.000 մարդ (նույն տեղում, էջ 60):

Աղյուսակ 1

No	Անցություն, ցեղ	Էրզրում	Վան	Բիթլիս	Խարբերդ (Մամուրեթ-ուլ-Ազիզ)	Դիարբեքիր	Սեբաստիա (Սվազ)	Ընդամենը	%-ային հարաբերակցություն
	Թուրքեր	240000	47000	40000	102000	45000	192000	666000	25,4
	«Չերքեզներ» (կովկասցի լեռնականներ)	7000	-	10000	-	-	45000	62000	3,4
	Պարսիկներ	13000	-	-	-	-	-	13000	
	Լազեր	10000	-	-	-	-	-	10000	
	Գնչուներ (բոշա, չինգենե)	-	3000	-	-	-	-	3000	0,1
	Նստակյաց քրդեր	35000	32000	35000	75000	30000	35000	242000	16,3
	Քոչվոր քրդեր	40000	40000	42000	20000	25000	15000	182000	
	Ղզըլբաշներ	25000	-	8000	80000	27000	-	140000	8,2
	Զազա-դմլիկներ, չարրքցիներ	30000	-	47000	-	-	-	77000	
0	Եզդիներ	3000	25000	5000	-	4000	-	37000	1,4
1	Հայեր	215000	185000	180000	168000	105000	165000	1018000	38,9
2	Ասորիներ (նեստորական, հակոբիկյան, քլդանի)	-	18000	15000	5000	60000	25000	123000	4,7
3.	Հույներ և այլ քրիստոնյաներ	12000	-	-	-	-	30000	42000	1,6
		630000	350000	382000	450000	296000	507000	2615000	100

Փաստորեն, Արևմտյան Հայաստանի այն տարածքում, ուր նախատեսված էր իրականացնել բարենորոգումներ, ըստ վերոնշյալ վիճակագրության՝ հայերը կազմում էին «հարաբերական» մեծամասնություն ունեցող ամենախոշոր էթնիկական տարրը՝ 1.018.000 մարդ կամ բնակչության 38,9%-ը: Ընդ որում՝ քրիստոնյաներն ու մահմեդականներն ունեին գրեթե հավասար տեսակարար կշիռ՝ համապատասխանաբար 45,2% և 45,1%, իսկ 9,6%-ը կազմում էին այլ էթնոկրոնական խմբերը: Ինչ վերաբերում է հայ բնակչության տեղաբաշխմանը նահանգների ամբողջական սահմաններում, ապա համաձայն նույն Թեոդիկի 1922 թ. հրատարակված տեղեկագրի՝ այն ուներ հետևյալ պատկերը[73].

1) Էրզրումի նահանգ – 215.000 բնակիչ
2) Վանի նահանգ – 197.000 բնակիչ
3) Բիթլիսի նահանգ – 198.000 բնակիչ
4) Խարբերդի նահանգ – 204.000 բնակիչ
5) Դիարբեքիրի նահանգ – 124.000 բնակիչ
6) Սեբաստիայի նահանգ – 225.000 բնակիչ

Ընդամենը – 1.163.000 բնակիչ:

Այդուհանդերձ, վերոնշյալ վիճակագրությունը Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից վերջնական չի դիտարկվել: Դրա ապացույցն էր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի կողմից 1914 թ. ձեռնարկված հայ բնակչության նոր հաշվառումը, որի ընթացքում նախատեսվում էր հայթայթել ավելի մանրամասն և, թերևս, ճշգրիտ տեղեկություններ: Ցավոք, այն ևս չհաջողվեց անցկացնել հավուր պատշաճի: Նախ մինչև տարեվերջ Կ. Պոլիս առաքված վիճակագրական տեղեկագրերը հնարավոր չեղավ լրամշակել: Բացի այդ, Կ.Պոլիս այդպես էլ չհասան մի շարք առաջնորդարանների (այդ թվում՝ Վանի և նախկին Աղթամարի կաթողիկոսության), ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա թեմերի հայ բնակչության թվաքանակը լուսաբանող վիճակագրական նյութերը[74]: Այդ

---

[73] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, էջ 261–262:

[74] Ոչնչացումից հրաշքով փրկված այս տեղեկագրերը հրապարակելու առաջին փորձը եղել է 1920–ական թթ. սկզբին Եղեռնը վերապրած

իսկ պատճառով 1914 թ. վիճակագրական տեղեկագրերը, որոնք, որքան էլ թերի, այնուամենայնիվ, որոշակի գիտական հետաքրքրություն են ներկայացնում, հետին պլան մղվեցին և իրենց տեղը զիջեցին 1912 թ. վիճակագրությանը, որի տվյալներն էլ հայ հասարակության մեծագույն մասի կողմից դիտարկվել են և այսօր էլ դեռ դիտարկվում են որպես առավել ամբողջական:

Հարկ է նշել, սակայն, որ 1912 թ. վիճակագրությունը պարունակում է բազմաթիվ թերություններ և, անգամ, լուրջ սխալներ: Ինչպես ցույց են տվել նորագույն՝ այլևայլ սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա հիմնված ուսումնասիրությունները, բոլոր նահանգներում հայերի թվաքանակը, հետևաբար և տեսակարար կշիռը էական վերահաշվարկի կարիք ունեն: Մասնավորապես Վանի նահանգի հյուսիսն ընդգրկող համանուն գավառին վերաբերող տվյալների քննությունը պարզորոշ ցույց է տվել, որ գրեթե բոլոր օտարազգիների թվաքանակը խիստ ուռճացված է, երբեմն՝ մի քանի անգամ (սրանով հանդերձ՝ հայերը կազմում էին 52,9%-ը): Իրականում Վանի գավառում Առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերի թիվը հասնում էր 204.000 մարդու՝ կազմե-

---

նախկին պատրիարքի կողմից: Նրա հանձնարարականով դրանք հրատարակության էր նախապատրաստել նույնպես ցեղասպանությունը վերապրած Թեոդիկը: Ցավոք, վերջինիս հաջողվեց 1922 թ. լույս ընծայել նախատեսվող ընդարձակ գործի միայն աննշան հատվածը (1 պրակ): Քեմալական բանակի առաջխաղացումը Կ. Պոլիս հարկադրեց Թեոդիկին շատուշատ հայ մտավորականների հետ մեկընդմիշտ հեռանալ այստեղից: Սփյուռքահայ շրջանակները միայն 1960–ական թթ. ձեռնամուխ եղան հրատարակելու հեղինակի 4 տետրից բաղկացած ձեռագրերը, որոնք ինչ–ինչ ճանապարհներով ընկել էին Երուսաղեմ: Ի վերջո դրանք ամբողջությամբ հրատարակվեցին 1985 թ. Նյու Յորքում՝ Արա Գալայճյանի կողմից (Գողգոթայ հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին): Հարկ է նշել, որ 1914 թ. վիճակագրության նյութերը պահվում են Փարիզի Նուբարյան ազգային գրադարանում: Դրանք կազմում են 1992 թ. Հարություն (Ռայմոնդ) Գևորգյանի և Պոլ (Պողոս) Փաբուջյանի կողմից ֆրանսերեն հրատարակված Les Armeniens dans l'Empire Ottoman a la veille du Genocide գրքի հիմնական մասը:

լով բնակչության 63%-ը[75]: Ընդ որում՝ ողջ նահանգում հայերի թիվը կազմում էր շուրջ 219.000 մարդ (բնակչության 46%-ը)[76]: Պետք է նշել, որ առանձնակի վերանայման կարիք ունեն Բիթլիսի, Դիարբեքիրի և Սեբաստիայի նահանգների ցուցանիշները: Դրանցից առաջինում, առանց Սղերդի[77], հայերի թիվը կազմում է 180.000 մարդ (բնակչության 47,1%-ը)[78]: Սակայն Մշո առաջնորդարանի նախկին քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի կողմից 1913-1914 թթ. կազմված ոչ ամբողջական մի վիճակագրության համաձայն՝ միայն Մուշի գավառում, ինչպես նաև Բիթլիսի և Գենջի գավառների առանձին գավառակներում բնակվել է շուրջ 190.000 հայ (որոշակի վերահաշվարկից հետո)[79]: Ընդ որում՝ քննությունը ցույց է տվել, որ առանձնացված տարածքում հայերի իրական թիվը կազմել է 220.000-225.000 մարդ՝ շուրջ քառորդով գերազանցելով պատրիարքարանի տվյալները: Հաշվի առնելով Ն. Մարտիրոսյանի մոտ բացակայող Բիթլիսի նահանգի մյուս հատվածներում բնակվող հայերի թիվը՝ որն, այլևայլ սկզբնաղբյուրների տեղեկությունների համաձայն, նույն ժամանակահատվածում կազմել է 55.000-60.000 մարդ[80], Բիթլիսի նահանգի հայ բնակչությունը նշված ժամանակահատվածում 250 000-ից պակաս չէր (1912 թ. վիճակագրությամբ՝ 198.000 բն.)[81]:

---

[75] Տե՛ս Բաղալյան Գ., Կ. Պոլսի Հայոց պատրիարքության 1912 թ. վիճակագրության տվյալների քննությունը (Վանի սանջակի օրինակով). Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I. Վան (Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (7-9 հոկտեմբերի, 2010 թ.) նյութերի ժողովածու, Ե., 2013, էջ 153-157:

[76] Տե՛ս «Հայոց Մեծ Եղեռնը: 1915» բուկլետ-քարտեզ, Երևան, 2005:

[77] Թեև 1912 թ. տեղեկագրում նշվում է, որ դուրս էր թողնված «Սղերդի (իմա՝ գավառի) հարավը», սակայն Թեոդիկի տվյալները պարզորոշ ցույց են տալիս, որ այն ամբողջությամբ էր անտեսվել:

[78] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, էջ 261–262:

[79] «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, № 12, էջ 8–9, № 13, էջ 6–7, № 14, էջ 7–8, № 15, էջ 8 և այլն:

[80] Տե՛ս մասնավորապես Թէոդիկ, Գողգոթայ..., էջ 60–67, 90–94, 102–103: KՈvorkian, Paboudjian, op. cit., pp. 468–470, 475–477, 502–506:

[81] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ն. տ.:

Ի դեպ, 1918 թ. կազմված կոտորածների ամբաստանագիր-տեղեկագրի համաձայն՝ նահանգի հայ բնակչության նախապատերազմյան թիվը կազմում էր 255.000 մարդ[82]: Այդ առումով արևմտահայկական նահանգների շարքում իրականում ամենահայաշատը եղել է Բիթլիսի նահանգը, ուր հայերն ունեցել են առավել բարձր տեսակարար կշիռը (բնակչության կեսից ավելին)[83]: Պատրիարքարանի վիճակագրությամբ Դիարբեքիրի նահանգի հայերի թիվը 124.000 էր, որից 105.000-ը բնակվում էր ստեղծվելիք «պրովինցիայի» մեջ մտնող և Դիարբեքիրի ու Մադենի գավառներն ընդգրկող հյուսիսային հատվածում (բնակչության 35,5%-ը)[84]: Սակայն Դիարբեքիրում Մեծ Բրիտանիայի նախկին փոխհյուպատոս Թովմաս Մկրտչյանի (Մկրտիչյան) վիճակագրական տվյալներով նահանգի հայ բնակչության նախապատերազմյան թիվը կազմում էր 150.000 մարդ[85]: Գրեթե նույն տվյալներն է հաղորդում 1919 թ. Դիարբեքիրի նահանգի տարածքով շրջագայած բրիտանացի մայոր Է. Նոյելը: Վերջինիս ոչ ամբողջական, երբեմն նույնիսկ սխալ հաշվարկներով՝ Դիարբեքիրի 3 առավել հայաշատ գավառներում (Դիարբեքիրի Մադենի և Սևերակի) Առաջին աշխարհամարտի նախօրյակին բնակվում էր 143.540 հայ, ո-

---

[82] «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԵ, Պէյրութ, 1995, էջ 530 (այսուհետև՝ ՀՀՀ):

[83] Այն տեսակետը, թե իբր ամենաբարձր տեսակարար կշիռը հայերն ունեցել են Վանի նահանգում, ձևավորվել է առանձին ուսումնասիրողների կողմից 1912 թ. տվյալները որպես ողջ վարչամիավորի հայ բնակչության թվաքանակ դիտարկելու սխալից:

[84] Lnart, op. cit., p. 61: Նույն գրքում տեղադրված հավելված¬քարտեզում թեև հայկական հատվածից դուրս են թողնված Սևերակի (Սևերեկ) և Մարդինի գավառները, սակայն Թեոդիկի տեղեկագրից պարզ է դառնում, որ հայ բնակչության հաշվարկից դուրս են թողնվել միայն վերջինիս վերաբերող տվյալները:

[85] Մկրտիչեան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու գազանութիւնները, Գահիրէ, 1919, էջ 87: Այս վիճակագրության մանրամասներն այժմ պահվում են դիվանագետի ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում բնակվող ազգականների մոտ (տե՛ս «Բնօրրան», Երևան, 2004–2007, թիվ 1–4, էջ 262):

րից 27.500-ը՝ նահանգային կենտրոնում[86]: Հեղինակի մոտ ակնհայտորեն աղճատված է Բալուի հայ բնակչության թիվը՝ 2.500 տուն և 2.000 (!) բնակիչ[87]: Եթե այն սրբագրվի գոնե 12.000 բնակիչ (ինչը խիստ նվազեցված ցուցանիշ է նահապետական կենցաղով ապրող գավառի հայ բնակչության համար), ապա վերոնշյալ 3 վարչամիավորների հայերի թիվը պետք է նվազագույնը կազմեր 151500 մարդ: Նույն նահանգի չորրորդ՝ Մարդինի գավառում այլևայլ տեղեկություններով ապրող հայերի թիվը 1914 թ. կազմում էր շուրջ 22.880 մարդ (1912 թ. վիճակագրությամբ՝ 19 000 մարդ)[88]: Փաստորեն, Առաջին աշխարհամարտի նախօրյակին Դիարբեքիրի նահանգի հայ բնակչության թիվն անցնում էր 174.000-ից: Հատկանշական է, որ եթե օսմանյան «համընդհանուր» վիճակագրության համաձայն Դիարբեքիրի նահանգում բնակվում էր 73.226 հայ[89], ապա 1915 թ. սեպտեմբերին տեղի հայության դահիճ նահանգապետի օսմանյան ՆԳՆ ուղարկված ծածկագիր հեռագրում միայն աքսորված հայերի թիվը նշվում է 120.000 մարդ (ի բացառյալ թուրքական բանակ զորակոչված հայերի)[90]: Ընդ որում՝ նահանգի առանձին գավառակներից բռնագաղթի ենթարկված հայերի պաշտոնական տեղեկագրերը ևս բացահայտում են «համընդհանուր» վիճակագրության տվյալների կեղծված և մտացածին լինելը[91]: Ըստ էության, պատրիարքարանի վիճա-

---

[86] Diary of Major E. Noel on Special Duty, [ա. տ.], 1919, p. 10.

[87] Ibid, p. 12.

[88] Միայն Մարդին քաղաքում և Թիլ¬Արմեն (Թլարմեն) ավանում հայերի թիվը կազմել է 2300 տուն, այսինքն՝ ամենահամեստ հաշվարկներով՝ շուրջ 14 000 բն.: Տե՛ս Studio Orientalia Christiana. Collectanea, 29–30, Studia –documenta, Cairo–Jerusalem, 1998, po. 66): Հմմտ. Knvorkian, Paboudjian, op. cit., p. 59.

[89] Karpat, op. cit., p. 188:

[90] Հայկազն Ղազարեան, էջ 190–191:

[91] Այսպես, եթե 1911–1912 թթ. Ջեզիրեում §գրանցվել է¦ 358 հայ, ապա 1915 թ. աքսորվածների թիվը կազմում է 1049 մարդ (3 անգամ ավելի): Նույնն է նաև իրավիճակը Սևերակում՝ համապատասխանաբար՝ 2853 և 6235 մարդ, Ջերմուկում (Չերմիկ)՝ 821 և 3055 մարդ, Վերանշեհիրում՝ 1102 և 4200 մարդ, Բալուում՝ 8390 և 12370 մարդ և այլն: Տե՛ս Հայկազն Ղազարեան, նշվ. աշխ., էջ 195:

կագրության թերհաշվառման ամենաբարձր ցուցանիշը հանդիպում է Դիարբեքիրի նահանգում՝ 40,3%: Ինչ վերաբերում է Սեբաստիայի նահանգին, ապա հայկական տվյալներով միայն համանուն և Շաբին Կարահիսարի գավառներում հայերի թիվը կազմում էր 165.000 մարդ (բնակչության 32,5%-ը)[92], իսկ դուրս թողնված 2 գավառների (Ամասիայի և Թոխաթի) հաշվառումով՝ 225.000 մարդ[93]: Սակայն 1914 թ. Սեբաստիայի առաջնորդարանի աջակցությամբ ՍԴ հնչակյան կուսակցության անդամ Միհրան Չուգասըզյանի կողմից կազմված նոր վիճակագրության համաձայն՝ նահանգի հայերի թիվը եղել է 262.000 բնակիչ (ողջ բնակչության 35,1%-ը), ինչն արդեն 16,4 %-ով գերազանցում է երկու տարվա վաղեմություն ունեցող պատրիարքարանի ցուցանիշները[94]:

Պահպանված բնակավայրերի ցուցակների տվյալների քննությունը նույնպես պարզորոշ ցույց է տալիս, որ տեղի առաջնորդարանի կողմից Սեբաստիայի նահանգի հայ բնակչության հաշվառումն անց է կացվել անփույթ կերպով և բազմաթիվ լուրջ թերություններով: Այսպես՝ Շաբին Կարահիսարի ըստ առանձին բնակավայրերի կազմված տեղեկագրի և պաշտոնական «համընդհանուր» վիճակագրության տվյալները միմյանցից շատ քիչ են տարբերվում (համապատասխանաբար՝ 23.300 և 20.500 բնակիչ)[95]: Մինչդեռ հայկական սկզբնաղբյուրներում հանդիպող նույն վարչամիավորի կրկնված 10 բնակավայրերի վիճակագրական տվյալների համադրումով ստացված հայ բնակչության թերհաշվառման ցուցանիշը կազմել է 35,4%[96]: Փաստորեն, ամբողջ գավառի հայերի թիվը, որը, 1914 թ. մի թերի տեղեկագրի համաձայն, կազմել է 3.684 տուն, իրականում պետք է լիներ նվազագույնը 5000 տուն կամ

---

[92] Lnart, op. cit., p. 61.

[93] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, էջ 261:

[94] Համբարձումյան Վ., Գյուղաշխարհ, Երևան, 2000, էջ 24:

[95] Knvorkian, Paboudjian, op. cit., pp. 249–250. Karpat, op. cit., p. 178.

[96] Դրանք են՝ Աներդի, Աբանա (Ապանա), Անդրեաս (Սուշեհրի) գյուղաքաղաք, Բուրք, Էսկիշեհիր, Թամզարա գյուղաքաղաք, Մշակնոց (Մեսայնոց), Բուսեյիդ, Սևինդիք, Սիս: Հաշվարկն ըստ Թէոդիկ, Գողգոթայ.., էջ 140–148: Knvorkian, Paboudjian, ibid.

39.000-40.000 բնակիչ[97]: Նույն երևույթն է նկատվում մի շարք այլ հայաշատ վարչամիավորների տվյալների քննության դեպքում ևս (Թոնուզ, Հաֆիկ, Տևրիկ և այլն): Իսկ նահանգային կենտրոն Սեբաստիա քաղաքի հայ բնակչության թիվը, որը այլևայլ տվյալներով գերազանցում էր 30.000-ը[98], ցույց է տրված 19.507 բնակիչ: Նշված փաստերն անհերքելիորեն խոսում են այն բանի օգտին, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Սեբաստիայի նահանգում բնակվել է առնվազն 270.000 հայ: Ավելին, նորագույն ուսումնասիրության համաձայն՝ 1914 թ. նահանգի հայ բնակչության թիվը հասնում էր 294.000-ի՝ կազմելով 40,2%-ը[99]:

Որոշակի ճշգրտման կարիք ունեն նաև Էրզրումի նահանգի տվյալները: Ըստ 1912 թ. վիճակագրության՝ տեղի հայ բնակչության թիվը կազմել է 215.000 մարդ[100]: Մինչդեռ առանձին թեմերի վիճակագրական տվյալների քննությունը բացահայտել է թերհաշվառման բավական բարձր ցուցանիշներ: Օրինակ՝ ամբողջությամբ համանուն գավառակի տարածքին համապատասխանող Բասենի եպիսկոպոսական «վիճակի» հայերի թիվը նշված է 10.000 անձ (ի դեպ՝ այս ցուցանիշը տարօրինակ կերպով համընկնում է օսմանյան պաշտոնական տվյալներին)[101]: Մինչդեռ 1914 թ. հոկտեմբերի վերջին Բասենի միայն արևելյան հատվածի գյուղերից Կարսի մարզ և Երևանի նահանգ տեղափոխված հայերի թիվը կազմում էր 15.500 մարդ[102]: Փաստորեն, գավառակի մի հատվածի հայ բնակչութ-

---

[97] Ըստ 1918 թ. կազմված ամբաստանագիր-տեղեկագրի, Շաբին Կարահիսարի հայերի թիվը կազմում էր 44 431 բն.: Տե՛ս ՀՀՀ, էջ 515:

[98] Աղեքսանդրեան Ա., Պատմութիւն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ եւ սահմանաց նորա կամ արքեպիսկոպոսութեան նորին, Վենետիկ, Ս. Ղազար, 1911, էջ 359: Գաբիկեան Կ., Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1929, էջ 598: ՀՀՀ, էջ 500:

[99] Սահակյան Ա. Գ., Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Ե., 2005, էջ 98:

[100] Lnart, op. cit., p. 60.

[101] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, էջ 261:

[102] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 128, թ. 11:

յան թիվն արդեն իսկ 55%-ով գերազանցում էր 1912 թ. վիճակագրության տվյալները: Ընդհանրապես, տարբեր սկզբնաղբյուրների տվյալների քննությունից պարզվում է, որ Բասենի ողջ հայ բնակչության իրական թիվը 1914 թ. եղել է 21.000 մարդ[103]:

Զգալիորեն բարձր էր նաև նույն նահանգի Բայազետի գավառի հայ բնակչության թիվը՝ 30.700 մարդ (ըստ Էրզրումի առաջնորդարանի՝ 26.250 մարդ)[104]: Փաստորեն, միայն 2 վարչամիավորների առումով Էրզրումի նահանգի հայ բնակչության թիվն աճում է 15.450 մարդով (7,2%): Իրականում 1914 թ. Էրզրումի նահանգում հայերի թիվը կազմել է 249.800 մարդ՝ 16,2%-ով գերազանցելով պատրիարքարանի ցուցանիշը[105]: Նույնը կարելի է ասել՝ Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառի հայերի թվաքանակի հետ կապված: Կան տվյալներ, որ վերջինիս տարածքում 1914 թ. ապրել է շուրջ 44.000 հայ[106], ինչը նույնպես զգալիորեն (22,2%-ով) գերազանցում է պատրիարքարանի ցուցանիշը[107]:

Այսպիսով՝ Արևմտյան Հայաստանի 6 նահանգների հայ բնակչությունը 1914 թ. տեղաբաշխված էր հետևյալ կերպ.

1. Էրզրումի նահանգ – 249.800 բնակիչ
2. Վանի նահանգ – 219.000 բնակիչ
3. Բիթլիսի նահանգ – 255.000 բնակիչ
4. Դիարբեքիրի նահանգ – 174.000 բնակիչ
5. Խարբերդի նահանգ – 212.000 բնակիչ
6. Սեբաստիայի նահանգ – 294.000 բնակիչ

Ընդամենը – 1.405.800 բնակիչ

---

[103] Բաղալյան Գ., Էրզրումի վիլայեթի որոշ կազաների հայ բնակչութեան թուաքանակի ճշդումն ըստ Արևելեան Հայաստանում ապաստանած արեւմտահայ գաղթականների 1914–15–ին կազմուած վիճակագրական ցուցակների, ՀՀՀ, հտ. Ի, Պէյրութ, 2000, էջ 211:

[104] Նույն տեղում, էջ 214–215: Հմմտ. Knvorkian, Paboudjian, op. cit., p. 59:

[105] «Հայոց Մեծ Եղեռնը: 1915» բուկլետ–քարտեզ:

[106] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961, էջ 455:

[107] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, նույն տեղում:

Վերջինս 37,9%-ով գերազանցում է 1912 թ. տվյալները: Ընդ որում՝ այս ճշգրտումները հաշվի առնելու դեպքում հայերը կազմելու էին ողջ բնակչության 45-46%-ը, այն է՝ գրեթե կեսը:

Որոշակի բարդությունների հետ է կապված նաև Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակի ճշգրտման խնդիրը: Ինչպես արդեն նշվել է, վերջինիս նախապատերազմյան էթնոժողովրդագրական իրավիճակը լուսաբանող մանրամասն տեղեկագրեր, փաստորեն, բացակայում են: Բացի այդ, հաճախ Կիլիկիայի մեջ են դիտարկվել նաև Հալեպի նահանգի կազմում գտնվող մի շարք հարակից տարածքներ (Այնթապ, Քիլիս, Սիրիայի ծովափնյա Լաթաքիայի շրջանը, անգամ Հալեպը): Միաժամանակ, որպես կանոն, հաշվառումից դուրս էր թողնվում երկրամասի արևմուտքն ընդգրկող Իչելի (Իչիլ) գավառը, որտեղ հայերը փոքրամասնություն են կազմել: Սրանով հանդերձ՝ մի շարք սկզբնաղբյուրների տվյալների համաձայն Կիլիկիայի հայ բնակչությունն անգամ 1909 թ. կրած անդառնալի կորուստներից հետո, Առաջին աշխարհամարտի նախօրեին մնում էր երկրամասի առավել խոշոր էթնիկական տարրը: Այսպես, 1910 թ. մի փաստաթղթի համաձայն՝ Ադանայի նահանգի 4 գավառներում ապրել են 124.750, իսկ Մարաշի գավառներում (այն ժամանակ՝ Հալեպի կազմում)՝ 86.800 հայեր (ընդամենը՝ 211.550 բն.)[108]: Ի դեպ, բավական մոտ տվյալներ են հաղորդում նաև գերմանացի միսիոներները, որոնց տեղեկություններով Կիլիկիայի հայ բնակչության թիվն Առաջին աշխարհամարտի նախօրեին հասնում էր 237.000-ի [109]: Եթե հաշվի առնենք, որ Հալեպի գավառի կազմում գտնվող Միջերկրականի ծովափնյա Ալեքսանդրետի (Իսքենդերուն), Բեյլանի և Մուսալեռ-Քեսաբի շրջաններում նույն ժամանակ բնակվել է ավելի քան 35.000 հայ (միջինացված տվյալնե-

---

[108] Թորոսյան Շ. Թ., Կիլիկիայի հայերի ազգային–ազատագրական շարժումները 1919–1920 թթ., Ե., 1987, էջ 15:

[109] «Արմէնիա», Մարսէյլ, 1913, թիւ 6, թերթ 1:

րով)[110], ապա ողջ Կիլիկիայի հայ բնակչության թիվն անցնում էր 270.000-ից: Հարկ է նշել, որ Հայկական Կիլիկիայի սահմաններում հայերը կազմում էին բնակչության գրեթե կեսը, իսկ մյուս քրիստոնյաների (հույներ, ասորիներ և ուր.) հետ՝ 55%-ը[111]: Ընդ որում՝ վստահորեն կարելի է ասել, որ եթե չլիներ 1909 թ. կիլիկյան եղեռնը, ապա հայ բնակչության թիվը 1914 թ. կազմելու էր առնվազն 300.000 մարդ: Ըստ էության, Ցեղասպանության նախօրյակին հայերն իրենց բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, շարունակում էին մնալ մեծամասնություն:

Հայ բնակչությունը զանգվածաբար ապրում էր նաև Օսմանյան կայսրության որոշակի տարածաշրջաններում: Դրանց շարքում առանձնանում են հայկական տարածքներին անմիջապես սահմանակցող Պոնտոսը (Տրապիզոնի նահանգը՝ Ջանիկ-Սամսունի ինքնուրույն գավառի հետ միասին), Գամիրք-Կապադովկիան [Կեսարիայի ինքնուրույն գավառը և Անգորայի (Անկարա) նահանգի արևելքը զբաղեցնող Յոզղաթը], ինչպես նաև Հյուսիսային Ասորիքի տարածքն ընդգրկող Ուրֆայի (Ուռհա, Եդեսիա) ինքնուրույն և Հալեպի նահանգի Այնթապի գավառները:

Հայաշատությամբ առանձնացող Կեսարիայի գավառում պաշտոնական տեղեկագրերն անգամ XX դարասկզբին ցույց են տալիս 68.000 հայ բնակիչ[112] (ըստ պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության՝ 47.500 հայ, ինչը բացահայտ թերհաշվառված ցուցանիշ է)[113]: Աչքի էր ընկնում նաև Կեսարիային

---

110 Հաշվարկներն ըստ՝ «Արմէնիա», ն. տ.: Թորոսյան Շ., նշվ. աշխ., ն.տ.: KՈvorkian, Paboudjian, op. cit., p. 58.

111 Հաշվարկը՝ ըստ ֆրանսիացի Է. Բրեմոնի տվյալների: Տե՛ս Թորոսյան, էջ 18: Գր. Գուտուլյանի տվյալներով Կիլիկիայի հայերի թիվը կազմում էր 200000 մարդ (բնակչության 48,3%-ը): Տե՛ս Կիլիկեան աշխարհագրութիւն, Կ. Պոլիս, 1922, էջ 72:

112 Գալֆաեան Ա. Տ., Չօմախլու, Նիւ Եորք, 1930, էջ 7 (Հայկազն Ղազարյանի Առաջաբանը):

113 Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, էջ 262: Այս տվյալը նույնիսկ 10%–ով զիջում է թուրքական պաշտոնական վիճակագրության ցուցանիշին (52192 հայ: Karpat, op. cit., p. 186):

հյուսիսից Հալիս կամ Կզըլ-իրմաք գետով սահմանակից Յոզ-գաթի գավառը, որի հայ բնակչության թիվը 1914 թ. այլևայլ սկզբնաղբյուրներից վերցված տվյալներով կազմել է շուրջ 73.000 մարդ[114]:

Ընդհանուր առմամբ, Կեսարիայի ինքնուրույն գավառի և Անգորայի նահանգի հայ բնակչության թիվն անցնում էր 168.500-ից, ինչը 46,5%-ով գերազանցում է 1912 թ. վիճակագ-րության տվյալները (115.000 մարդ)[115]: Չնայած 1880-ական թվականներից սկիզբ առած խոշոր արտագաղթին՝ հայերի թի-վը զգալի էր նաև պատմական Պոնտոսի տարածքը կազմող Տրապիզոնի նահանգում և Ջանիկի ինքնուրույն գավառում: Պատրիարքարանի վիճակագրությունն այստեղ արձանագրել է միայն 65.000 հայ[116] (առանց XVII-XVIII դդ. բռնի կերպով մահմեդականացած և XX դ. սկզբին հիմնականում դեռ հայա-խոս Համշենի ու Սնգետի բնակչության, որը հաշվվում էր 200.000 մարդ)[117]: Ի դեպ՝ օսմանյան «համընդհանուր» վիճա-կագրության տվյալներով նշված վարչամիավորներում հայե-րի թիվը նույնիսկ ավելին է ցույց տրված՝ 68.800 բնակիչ[118]: Իրականում որոշակի փաստեր խոսում են այն բանի օգտին, որ պատմական Պոնտոսի տարածքում քրիստոնեությունը պահպանած հայերի թիվը Ցեղասպանության նախօրեին 90.000-ից պակաս չի եղել[119]: Եթե նկատի առնենք, որ նույն ժա-մանակաշրջանում Ռուսական կայսրության տարածք գաղ-թած պոնտահայերի թիվը հասնում էր 70.000-75.000 մարդու[120],

---

[114] Տե՛ս մասնավորապես՝ Պատմագիրք Եռզկատի եւ շրջակայից (Գա-միրք) Հայոց, խմբագրութիւն՝ Արմէն Դարեան եւ Անդրանիկ Երկանեան, Պէյրութ, 1988, էջ 71–74: Հմմտ. Հայկազն Ղազարեան, էջ 135–136: Ըստ պատրիարքարանի բազմիցս անդրադարձած վիճակագրության՝ ընդա-մենը 45000 հայ (Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, նույն տեղում):

[115] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, նույն տեղում:

[116] Նույն տեղում:

[117] Յովակիմեան (Արշակունի) Է.,Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյ-րութ, 1967, էջ 28:

[118] Karpat, նշվ. աշխ., էջ 188:

[119] Հայկազն Ղազարեան, նշվ. աշխ., էջ 73:

[120] Թէոդիկ, Գողգոթայ..., էջ 443: Յովակիմեան, նշվ. աշխ., էջ 764:

ապա երբեմնի Տրապիզոնի նահանգում 1914 թ. հայ բնակչությունը բնականոն զարգացման պայմաններում 1914 թ. պետք է կազմեր 170.000-ի հասնող պատկառելի մի թիվ: Ինչ վերաբերում է Հյուսիսային Ասորիքին, ապա այստեղ հայերը գերազանցապես բնակվում էին այնպիսի մարդաշատ քաղաքներում, ինչպիսիք են Ուրֆան (Ուռհա կամ Եդեսիա՝ շուրջ 35.000 բնակիչ) և Այնթապը (շուրջ 36.000 բնակիչ)՝ կազմելով տեղի բնակչության մի խոշոր հատվածը (40-45 %-ը)[121]: Զգալի թվով հայություն կար նաև նշված տարածքի մի շարք բնակավայրերում, որոնց շարքում աչքի էին ընկնում Քիլիս (պատմական Կիլիզա) քաղաքը՝ շուրջ 8.000 բն.[122] և գրեթե ինքնավար կյանքով ապրող Կարմուճ (Կամուրջ) գյուղաքաղաքը՝ 6.000 բն.[123]: 1914 թ. Հ. Գևորգյանի հաշվարկներով Ուրֆայի ինքնուրույն գավառի հայերի թիվը կազմել է 41.790, իսկ Այնթապում՝ 44.414 մարդ, այսինքն՝ Հյուսիսային Ասորիքում ապրել է 86.100 հայ[124]:

Առավել հայաշատությամբ աչքի են ընկել նաև Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասում ընկած Բրուսայի (Խուդավենդիգյար) նահանգն ու Իզմիթի ինքնուրույն գավառը (համապատասխանում են պատմական Նիկոմեդիա և Բյութանիա երկրամասերին): Թե՛ հայկական և թե՛ պաշտոնական վիճակագրությունները տեղի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հաղորդում են գրեթե համանման տվյալներ՝ 120.000-125.000 մարդ[125]: Իրականում այստեղ ևս հայերի թիվը նկատե-

---

121 Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, աշխատասիրեց Արամ Սահակեան, էջ 611–612: Պատմութիւն Անթէպի Հայոց, հտ. Գ, Լոս Անճէլըս, Գալիֆորնիա, 1994, էջ 12: Հատկանշական է, որ թուրքական տվյալներով անգամ Այնթապի հայերի թիվը 1914–ին անցնում էր 30000–ից (Պատմութիւն Անթէպի Հայոց, հ. Գ., էջ 13):

122 Knvorkian, Paboudjian, op. cit., p. 58.

123 Դիւցազնական Ուրֆան, էջ 659–669:

124 Knvorkian, Paboudjian, op. cit.

125 Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ն. տ.: Karpat, op. cit.. 1912 թ. վիճակագրական տեղեկագրից դուրս են թողնված մի շարք վարչամիավորների տվյալները: Հարկ է նշել, որ հայկական տարածքներից դուրս օսմանյան

լիորեն ավելի բարձր էր՝ գերազանցելով 151.000-ը[126]: Բրուսայի նահանգում առանձնանում էր հատկապես Բազարի գավառակը, ուր հայերը, պաշտոնական վիճակագրության համաձայն, նույնիսկ, կազմել են բնակչության գերակշիռ մեծամասնությունը՝ 65,4%-ը[127]: Վերջապես խոշոր համայնք էր ձևավորվել նաև կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսում (Ստամբուլ), ուր Առաջին աշխարհամարտի նախօրյակին հաշվվում էր 161.000 հայ[128]: Բացի այդ, հայ բնակչության աչքի ընկնող համայնքներ էին հանդիպում Փոքր Ասիայի այլևայլ մասերում՝ Արևելյան Էգեյանի և Իզմիրի (Այդընի) տարածաշրջանում, Սաքարիա գետի ավազանում (Քյութահիա-Կուտինա, Էսքիշեհիր, Աֆիոն-Կարահիսար), Կոնիայի նահանգում, մերձսևծովյան Կաստեմոնիի նահանգում (պատմական Պափլագոնիա): Զգալի թվով հայություն է բնակվել նաև Եվրոպական Թուրքիայում՝ Արևելյան Թրակիայի տարածքն ընդգրկող Էդիրնեի (պատմական Ադրիանուպոլիս) նահանգում: Ընդհանուր առմամբ, 1914 թ. Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը կազմում էր գրեթե 2.500.000 մարդ: Ընդ որում՝ ըստ տարածաշրջանների հայերի տեղաբաշխումն ուներ հետևյալ պատկերը.

1) Արևմտյան Հայաստան և Կիլիկիա – 1.675.800 բնակիչ
2) Գամիրք-Կապադովկիա – 168.500 բնակիչ
3) Պոնտոս – 90.000 բնակիչ
4) Հյուսիսային Ասորիք – 86.100 բնակիչ

«համընդհանուր» վիճակագրությունը դառնում է ավելի «անաչառ»՝ հաղորդելով հայկականին զգալիորեն մոտ տվյալներ:

[126] Հաշվարկն ըստ Գասապեան Մ. (սարհատ), Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ 240–244: Հայկազն Ղազարեան, նշվ. աշխ., էջ 156–157: Թէոդիկ, Գողգոթայ..., էջ 359–388: Վերոհիշյալ թվի մեջ հաշվարկված են նաև ժամանակին Ակնից Նիկոմիդիա տեղափոխված հայ–հոռոմների (քաղկեդոնական հայեր) հետնորդները (շուրջ՝ 8.800 բն.):

[127] Karpat, op. cit., p. 176.

[128] Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ն. տ.:

5) Փոքր Ասիայի այլևայլ շրջաններ[129] - 65.000 բնակիչ

6) Նիկոմիդիա և Բյութանիա – 151.000 բնակիչ

7) Արևելյան Էգեյանի տարածաշրջան[130] - 40.000 բնակիչ

8) Արևելյան Թրակիա և Դարդանել - 27.500 բնակիչ

9) Կ. Պոլիս՝ շրջակայքով – 161.000 բնակիչ

10) Հալեպ և Դամասկոս – 16.700 բնակիչ

11) Լիբանան և Պաղեստին – 4.000 բնակիչ

12) Միջագետք (Մուսուլի, Բաղդադի և Բասրայի նահանգներ) – 2.500 բնակիչ

Ընդամենը – 2.488.100 բնակիչ:

Ճիշտ է, 1870-1880-ական թթ. համեմատ հայերի թիվը զգալիորեն նվազել էր (շուրջ 560.000 մարդ կամ 19%)՝ իջնելով, փաստորեն, XIX դ. 40-50-ական թթ. մակարդակին, սակայն նրանք շարունակում էին մնալ օսմանյան պետության առավել բազմամարդ ժողովուրդներից մեկը: Եթե հաշվի առնենք կայսրության բնակչության թիվն ըստ պաշտոնական «համընդհանուր» վիճակագրության՝ 18.520.000 մարդ, ապա հայ բնակչության տեսակարար կշիռը կազմելու էր 13,2%: Փաստորեն, ի հեճուկս թուրքական պետականության կողմից տասնամյակներով կիրառած ցեղասպանության քաղաքականության, հայ ժողովրդի գերակշիռ մեծամասնությունը՝ ավելի քան 80%-ը, ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտ, ապրում էր իր բնօրրանում և հայրենիքի մասեր համարվող հարակից մի շարք տարածաշրջաններում (Գամիրք, Պոնտոս, Եդեսիա, Այնթապ):

---

[129] Կոնիայի և Կաստեմոնիի նահանգները, Անթալիայի, Նիգդեի, Աֆիոն–Կարահիսարի, Քյութահիայի, Էսքիշեհիրի և Բոլուի ինքնուրույն գավառները:

[130] Իզմիր-Այդընի նահանգը և Կարեսիի ինքնուրույն գավառը:

3.2. Հայերի սոցիալ-ժողովրդագրական վիճակն Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունից առաջ և ներկայիս Թուրքիայի Հանրապետությունում

Օսմանյան կայսրությունում հայերն, ինչպես նաև տեղաբնիկ ոչ մահմեդական մյուս ժողովուրդները՝ հույները, ասորիները և հույները, տվյալ պետության բնույթից ելնելով համարվելով երկրորդ դասի բնակչություն, ժամանակ առ ժամանակ ենթարկվում էին կրոնական բնույթի հետապնդումների[131]: XVI դարից մինչև XIX դարը Հայկական լեռնաշխարհի հայաթափումը, ինչին հետազոտողները բավարար ուշադրություն չեն դարձրել, ինքնին հանդիսանում է օսմանական կառավարիչների քայքայող քաղաքականության համոզիչ ապացույցը[132]: XIX դարի ընթացքում կայսրության քրիստոնյաների, մասնավորապես հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների բռնությունները դարձան ավելի հետևողականորեն՝ էապես նվազեցնելով Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թվաքանակը: Թուրքական իշխանությունների հակահայկական քաղաքականության հետևանքով XIX դարի ընթացքում դիմախեղվեց Էրզրումի նահանգի հայ բնակչության ժողովրդագրական պատկերը՝ հանգեցնելով նահանգի հայ բնակչության թվաքանակի գրեթե երկու անգամ կրճատման:

---

[131] Տե՛ս Բաում Վ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները. Անցյալը–Ցեղասպանությունները–Ներկան, Եր., 2010:

[132] Տե՛ս Armenian Karin/Erzerum, Edited by Richard G.Hovannisian, California, 2003, p. 134.

Էրզրում նահանգի հայությունը 1809 և 1909թթ.[133]

	Գավառը	Հայերով բնակեցված քաղաքների թիվը		Հայերի թվաքանակը (հազար մարդ)	
		1809	**1909**	**1809**	**1909**
	Էրզրում	129	52	67,960	34,376
	Դերջան	57	31	32,920	9,128
	Բաբերդ	79	30	30,960	14,314
	Երզնկա (Կամախի, Կուրուչայի և Կերչանիսի հետ)	124	52	44,760	25,095
	Քղի	75	50	25,440	18,705
	Սպեր	81	18	28,300	3,122
	Թորթում	53	13	16,960	2,829
	Բասեն (Վերին և Ստորին)	87	57	35,130	12,404
	Խնուս	59	33	20,960	15,295
0	Ալաշկերտ (Ղարաքիլիսայի հետ)	88	22	28,160	10,248
1	Խամուր և Դութախ	23	22	7,360	1,421
2	Դիադին	36	7	11,520	1,092
3	Բայազետ	40	4	30,800	3,920
	Ընդամենը	**931**	**391**	**381,230**	**151,949**

[133] Տե՛ս նույն տեղում, էջ 134-145:

Հրապարակված աղբյուրների համաձայն, 1820-1890 թվականների ընթացքում Օսմանյան կայսրությունում կոտորվել է 93 հազար հայ, հույն և բուլղար[134]: 1890-ական թվականներին համիդյան վարչակարգի կազմակերպած բռնությունների հետևանքով ավերվեց 2 600 հայկական բնակավայր, կործանվեց 568 եկեղեցի և վանք, 328 եկեղեցի վերածվեց մզկիթի, բռնի մահմեդականացվեցին 559 գյուղերի բնակիչներ, որոնց թիվը հասնում էր մոտ 100 000 մարդ, 546 000 կին, երեխա, ծերունի կորցրեցին իրենց կերակրողներին և մնացին առանց խնամակալների[135]:

Օսմանյան կայսրության հայ բնակչությունը հիմնականում բնակվում էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում, ինչպես նաև Կիլիկիայում, Ասիական և Եվրոպական Թուրքիայի տարածքներում ու մայրաքաղաք Կոստանդնուպոլսում: Չնայած հետևողական հալածանքներին ու անտանելի հարկային բեռին, հայ բնակչության մեծամասնությունը շարունակում էր բնակվել իր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի գյուղական բնակավայրերում և հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Միևնույն ժամանակ, կայսրության մեծ ու փոքր քաղաքներում հայերը, որպես կանոն, գտնվում էին սոցիալական միջին կարգավիճակում և զբաղվում էին արհեստագործությամբ, առևտրով, բժշկությամբ և մանկավարժությամբ: Մայրաքաղաք Կոստանդնուպոլսում հայերը ներկայացված էին հասարակության բարձր խավերում, նրանց մեջ կային բժիշկներ, գրողներ, ճարտարապետներ, երաժիշտներ, իրավաբաններ, ֆինանսիստներ, բարերարներ, դպրոցների և վարժարանների մանկավարժներ, ինչպես նաև խոշոր առևտրային կազմակերպությունների սեփականատերեր: Հայերի ձեռքում լուրջ արտադրական միջոցներ կային: Այսպես օրի-

---

[134] Տե՛ս Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը. Ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, «Հայաստան», 1965, էջ 21: Տե՛ս նաև. «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, с. 285.

[135] Տե՛ս Մնացականյան Ա. Ն., նշվ. աշխ., էջ 27: Տե՛ս նաև «Братская помощь армянам», сборник, Москва, 1898, II отдел, стр.134-142.

նակ, հայտնի գործարար Հովհաննես ամիրայի զավակները դեռ 1845 թ. հրավիրվել են սուլթան Աբդուլ Մեջիդի պալատ, որտեղ հաստատվել է գործարանի հոգաբարձությունը հորից որդիներին հաջորդական ժառանգելու փաստը[136]: Միայն Իզմիրի շրջանում հայերին 11 ձեռնարկություններ էին պատկանում[137]: Օսմանյան կայսրությունում հայ արհեստավորները արհեստների բազմաթիվ բնագավառներում մրցակիցներ գրեթե չունեին[138]:

Օսմանյան կայսրությունում առաջին պաշտոնական մարդահամարն անցկացվել է 1844 թ. ռազմական նախարար Ռեզա-փաշայի կողմից: Ա. Ուբիչինին նշում էր, որ Կոնստանդնուպոլսի հայությունն այդ տարիներին կազմում էր 222 000 մարդ, իսկ հայերի ընդհանուր թվաքանակը նշվում է 2 մլն[139]: 1867 թ. անցկացված երկրորդ պաշտոնական մարդահամարի տվյալներով հայերի թիվն արդեն նշվում էր 2 մլն 400 հազար[140]:

Թուրքական պաշտոնական վիճակագրության համաձայն 1878 թ. դրությամբ Արևմտյան Հայաստանի հինգ նահանգներում բնակվող հայ բնակչությունը բաշխված էր հետևյալ կերպ.

	ԷՐԶՐՈՒՄ	ԲԻԹԼԻՍ	ԴԻԱՐԲԵՔԻՐ	ԽԱՐԲԵՐԴ	ՎԱՆ	ԸՆԴԱՄԵՆԸ
Հայեր	107 868	106 306	22 464	75 093	59 382	371 113
Մահմեդական կաներ	445 548	167 054	101 065	300 188	54 582	1 068 437
Հույներ	3 356	-	-	812	543	47 11
ԸՆԴԱՄԵՆԸ	**556 772**	**273 360**	**124 341**	**375 824**	**113 964**	**1 444 261**

136 Տե՛ս Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը, Սոցիալ-տնտեսական ակնարկ, Երևան, “Հայաստան», 1984, էջ 201: Տես նաև. Պողոսյան Ե., Տատյան գերդաստանը, Վիեննա, Մխիթարյան ապարան, 1968, էջ 51:

137 Ինճիկյան Հ. Գ., նշվ. աշխ., էջ 240:

138 Նույն տեղում, էջ 248:

139 Տե՛ս Кеворкян Р., Полная история, М., «Яуза каталог» , 2015, с. 298.

140 Տե՛ս նույն տեղում:

Այս պաշտոնական տվյալների կողքին կային նաև Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանի 1878-1879 թթ. խիստ տարբերվող վիճակագրական տվյալները: Պատրիարքարանի տվյալների համաձայն, 1878 թ. հայերի թիվն Օսմանյան կայսրությունում արդեն կազմում էր 3 մլն, որից կայսրության եվրոպական հատվածներում՝ Կոնստանդնուպոլիս, Թրակիա, Բուլղարիա, Ռումինիա, բնակվում էր 400 000, Փոքր Ասիայի արևելյան հատվածներում՝ Անգորա, Այդին, Կոնիա, Ադանա, Հալեպ և այլ նահանգներում՝ 600 000, Սեբաստիայի, Տրապիզոնի, Կեսարիայի և Դիարբեքիրի նահանգներում՝ 670 000[141]: Արևմտյան Հայաստանի միայն երեք նահանգներում՝ Վանում, Էրզրումում ու Դիարբեքիրում, հայերը կազմում էին բնակչության ընդհանուր թվի՝ 2 062 300-ի կեսից ավելին՝ 1 330 000 մարդ[142]:

Պոլսի պատրիարքարանը Արևմտյան Հայաստանի հինգ նահանգների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ ներկայացնում էր հետևյալ տվյալները[143].

	ԷՐԶՐՈՒՄ	ԲԻԹԼԻՍ	ԴԻԱՐԲԵՔԻՐ	ԽԱՐԲԵՐԴ	ՎԱՆ	ԸՆԴԱՄԵՆԸ
Հայեր	280 000	250 000	150 000	270□000	400 000	1 350 000

Համեմատության համար բերենք նաև նույն ժամանակվա թուրքական պաշտոնական վիճակագրության այլ տվյալներ, որոնք հենց թուրք պաշտոնյաների խոստովանությամբ առանձնապես մեծ հավաստիություն չունեին[144].

	ԷՐԶՐՈՒՄ	ԲԻԹԼԻՍ	ԴԻԱՐԲԵՔԻՐ	ԽԱՐԲԵՐԴ	ՎԱՆ	ԸՆԴԱՄԵՆԸ
Հայեր	135 0187	131 390	83 226	69 718	80 000	499 421
Մահմեդականներ	500 782	257 863	388 644	504 366	241 000	1 892 655
Հույներ և	3 725	210	53 420	650	99	157 790

[141] Տե՛ս Кеворкян Р., նշվ աշխ., էջ 298:

[142] Տե՛ս Арцруни Г., Экономическое положение турецких армян. М., 1980, с. 24.

[143] Տե՛ս Кеворкян Р., նշվ աշխ., էջ 299:

[144] Տե՛ս նույն տեղում:

սիրիացիներ					785	
ԸՆԴԱՄԵՆԸ	**639 594**	**389 463**	**525 290**	**574 734**	**420 785**	**2 549 866**

Ներկայացված վիճակագրական տվյալների պարզ համեմատությունից հստակ երևում է, որ հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Պոլսի հայոց Պատրիարքարանի տվյալներն էականորեն տարբերվում են թուրքական պաշտոնական մարդահամարի վիճակագրական տվյալներից: Բանն է, որ Օսմանյան կայսրությունում անցկացված պաշտոնական մարդահամարների հիմքում դրվում էր ոչ թե բնակչության էթնիկ կազմը, այլ կրոնական պատկանելությունը, ուստի որպես հայեր հիմնականում գրանցվում էին հայ առաքելական եկեղեցու հետևորդները:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ հայերի թիվն Օսմանյան կայսրությունում Հայոց Պատրիարքարանի կողմից կատարված հաշվարկներում ներկայացված են ստորև բերված աղյուսակում[145].

Վարչական միավորը	**Բնակելի վայրերը**	**Հայերի թիվը**	**Եկեղեցիները**	**Դպրոցները**
1.Կոնստանդնուպոլիս	43	161 000	47	64
-Գելիբոլու	6	2 670	6	-
Ընդամենը	49	163 670	53	64
2. Թրակիա				
- Էդիրնե	5	7 948	7	6
-Ռոդոսթո	4	22 368	7	9
Ընդամենը	9	30 316	14	12
3. Իզմիթի գավառ				
- Իզմիթ	12	25399	14	18
-Ադաբազար	6	15169	8	16
- Քանդիրե	9	3 652	8	7
- Հեյվե	7	8 628	10	6
- Ղարամուրսել	8	8 827	11	6
Ընդամենը	42	61 675	51 և 1	53
4. Բրուսայի նահանգ				
Ա. Բրուսայի գավառ		16		
-Բրուսա	4	10 000	6	
-Փազարքյոյ	6	22 209	11	-
-Գեմլիկ	3	12 100	2	-
-Միխալըճ	6	3 218	1	-
-Քիրմասթի	1	1 016	1	-
-	3	4 225	1	-

[145] Տե՛ս Кеворкян Р., նշվ. աշխ., էջ 304-309:

Էդրենոս/Աթերնոս				
Բ. Բիլեջիկի գավառ	10			
-Բիլեջիկ	5	13 110	5	-
-Ցենիշեհիր	3	4 750	3	-
-Ինեկյոլ	2	5 350	2	-
-Սոյուտ	5	6 872	5	-
-Գ.Քյոթահիայի գավառ	5			
- Քյոթահիա	5	3 578	6	-
-Ուշագ	1	1 100	1	-
-Էսկիշեհիր	3	4 510	3	-
Դ. Աֆիոն Գարահիսարի գավառ	3	7 448	3	7
Ե.Բալըքեսիրի գավառ	8	20 006	4	8
Ընդամենը	58	118 992	54	50
5. Այդինի/Զմյուռնիա նահանգ				
Ա.Զմյուռնիայի գավառ	8	13 679	17	
Բ.Մանիսայի գավառ	5	5 875	6	
Գ. Այդինի գավառ	2	1 043	2	
Դ. Դենիզլիի գավառ	1	548	1	
Ընդամենը	16	21 145	26	27
6. Կոնիայի նահանգ				
Ա. Կոնիայի գավառ	6	11 650	6	
Բ. Նիգդեի գավառ	5	5 727	4	
Գ.Իսպարտա/ Բուրդուր գավառ	2	2 600	2	
Դ. Թեքե/Էլմամի գավառ	2	761	2	
Ընդամենը	15	20 738	14	26
7. Կոստամոնուի նահանգ				
Ա. Կոստամոնուի գավառ	5	3 978	4	
Բ. Չանկիրիի գավառ	1	1 000	1	
Գ. Ինեբոլուի գավառ	6	3 217	7	
Դ. Սինոպի գավառ	6	5 266	5	
Ընդամենը	18	13 461	17	18
8. Տրապիզոնի նահանգ				
Ա. Տրապիզոնի գավառ		116		
- Տրապիզոն, Ակչաաբաթ, Սուրմենե	37	20 158	25	
-Գյորելե	2	562	3	
-Տիրեբոլու	1	868	1	
-Կերասուն	2	2 335	3	
-Օրդու	30	13 565	25	
Բ. Սամսունի գավառ				
-Սամսուն	1	5 315	1	3
-Բաֆրա	1	2 035	1	3
-Չարշամբա	21	13 316	21	33
-Տերմե	5	3 427	6	8
-Ունե	11	7 700	14	21

-Ֆատսա	3	1 330	3	3
Գ. Գյումուշխանեի գավառ	3	2 749	3	
Դ. Ռիզեի գավառ	1	35	1	
Ընդամենը	118	73 395	106	90
9. Անգորայի նահանգ				
Ա. Անգորայի գավառ				
-Անգորա	2	111 319	72	15
-Կալեջիկ	1	830	1	2
-Ստանոզ/Զիր	1	3 142	3	2
-Նալլիխան	1	1 030	1	2
-Միհալիչիկ	1	272	1	1
-Սիվրիհիսար	1	4 265	1	2
Բ. Քիրշեհիրի գավառ	2	4 400	2	4
Գ. Յոզղաթի գավառ				
-Յոզղաթ	4	13 969	5	6
-Սունգուրլու	1	1 936	1	2
-Չորում	6	3 520	4	6
-Բոգազլիան	32	35 825	36	22
-Ակդագմադեն	5	3 361	3	6
Դ. Կայսերիի գավառ	31	52 000	40	56
Ընդամենը	88	135 869	105	126
10. Սեբաստայի նահանգ				
Ա. Սեբաստիայի գավառ				
-Սեբաստիա	37	31 185	13	19
-Ենիխան	2	2 175	3	3
-Թոնուս	26	21 063	20	22
-Ազիզիե	1	1 106	1	8
-Բյունյան	5	4 781	6	
-Կյուրին	7	13 874	10	12
-Դարանդա	2	3 983	2	2
-Ղանղալ	9	7 339	7	8
-Տևրիկ	18	10 605	18	10
-Կոչկիր	9	7 651	10	7
-Քոչիհիսար	30	13 055	30	28
Բ. Շապին Գարահիսարի գավառ				
-Շապին Գարահիսար	9	9 104	8	9
-Սուշեհիր	35	13 430	24	23
-Այաջրա	3	627	3	2
-Կոյլուհիսար	2	190	2	
- Համիդիե	2	520	2	2
Գ. Թոկատի գավառ				
- Թոկատ	18	17 480	17	11
-Նիքսար	3	3 560	3	2
-Հերեկ	9	6 948	6	2
-Զելա	4	4 283	2	3
Դ.Ամասիայի գավառ				
-Ամասիա	1	13 788	5	12

-Մարզվան	3	10 666	1	8
-Լադիկ	2	350	1	1
-Խազվա	1	333	1	1
-Վիզիր Քյոփրյու	1	1 612	1	2
-Գյումուշ	1	4 064	2	6
-Մեջիդ Օզու	1	700	1	1
Ընդամենը	241	204 472	198	204
11. Ադանայի նահանգ				
Ա. Ադանայի գավառ	6	27 990	4	25
Բ. Մերսինի գավառ	3	6 987	4	
Գ.Գավառ Իչել	2	466	2	
Դ.Սսի/Կոզան գավառ				
-Սիս	11	5 600	2	7
-Ֆեկե/Վահկա	8	4 948	7	9
-Հաջին	5	27 850	8	4
-Կարսբազար	6	5 645	4	
Ե. Ջեբել-Բերեքետի գավառ	29	39 928	13	18
Ընդամենը	70	119 414	44	63
12. Հալեպի նահանգ				
Ա. Մարաշի գավառ				
-Մարաշ	23	32 844	20	23
-Բազարջիկ	1	1 500	1	
-Գեկսուն	18	9 505	12	
-Զեյթուն	18	22 456	14	10
-Էլբիստան	4	5 838	4	4
Բ. Այնթափի գավառ				
-Այնթափ	3	36 448	8	25
-Քիլիս	1	7 966	1	1
Գ. Ուրֆայի գավառ				
-Ուրֆա	10	38 680	6	20
-Բիրեջիկ	2	1 600	2	
-Ռուկմալե/Հրոմգլա	4	1 460	3	
Դ. Անտիոքի գավառ				
-Անտիոք	8	8 532	7	10
-Շուհուր/Քեսաբ	9	8 736	9	8
-Իսկենդերուն	16	14 000	6	10
Ալեքսանդրեթ և Բեյլան				
Ընդամենը	117	189 565	93	113
13. Խարբերդի նահանգ				
Ա.Խարբերդի գավառ				
-Խարբերդ	57	39 788	67	92
-Կապան-Մադեն	3	789	3	2
-Արաբկիր	5	10 880	9	14
-Փոթուրկե	1	679	1	1
-Ակն/Էզին	25	16 741	25	20
Բ. Դերսիմի գավառ				
-Խոզատ	16	2 299	18	5

-Կրզըլքիլիսե	1	89	5	
-Մեծկերտ	9	1 835	14	2
-Չարգավառ	43	7 940	51	23
-Չմշկածագ	22	4 494	19	17
-Օվաճրգ	1	50	-	
Գ.Մալաթիայի գավառ				
-Մալաթիա	5	17 017	7	8
-Քյախտա	57	10 245	11	
-Ադիաման	21	5 202	5	4
-Պեհեսնի	8	4 550	3	4
-Հյուսնի Մանսուր	5	1 691	4	4
Ընդամենը	279	124 289	242	204
14. Դիարբեքիրի նահանգ				
Ա. Դիարբեքիրի գավառ				
- Դիարբեքիր	25	16 352	10	11
-Սևերեկ	8	9 275	8	3
-Դերիկ	3	1 782	2	1
-Վիրանշեհիր	1	1 339	1	2
-Բշերիկ	40	5 038	15	14
-Սիլվան	70	13 824	28	35
-Լիսե	33	5 980	24	5
Բ. Արղանամադենի գավառ				
- Արղանամադեն	11	10 559	10	7
-Բալու	37	15 753	38	26
-Ջերմիկ	3	12 418	5	5
Գ. Մարդինի գավառ				
- Մարդին	2	7 692	3	4
-Նիսիբին	1	90	1	
-Ջեզիրե/Ջիզրե	12	4 281	1	5
-Միդիադ	1	1 452	1	2
-Սավուր	1	1 032	1	2
Ընդամենը	249	106 867	148	122
15. Էրզրումի նահանգ				
Ա. Էրզրումի գավառ				
-Էրզրում	53	37 480	43	52
-Խնուս	25	21 382	21	17
-Քղի	51	19 859	45	63
-Դերջան	41	11690	36	27
-Բաբերդ	30	17 060	5	9
-Սպեր	17	2 602	17	13
-Թորթում	13	2 829	14	3
-Կիսկին	13	8 136	14	5
-Նարման	2	748	2	2
-Բասեն	57	16 740	16	20
Բ. Երզնկայի գավառ				
- Երզնկա	38	25 795	53	37
-Պյուլումուր/ Պոլորմոր	4	862	4	3

-Կամախ	15	6 396	37	13
-Կուրուչայ	6	2 989	6	5
- Ղուզուջան	3	1 570	3	3
Գ. Բայազետի գավառ	25			
- Բայազետ	5	4 884	14	6
-Դիադին	8	1 649	6	2
-Կարաքիլիսա	12	8 180	9	4
-Ալաշկերտ	12	9 914	13	11
-Դութաղ	20	1 624	7	2
Ընդամենը	425	202 391	406	322
16. Բիթլիսի նահանգ				
Ա. Բիթլիսի գավառ				
- Բիթլիս	57	23 899	57	15
-Խլաթ	22	13 432	23	15
-Խիզան	76	8 207	48	14
-Մոտկան	27	5 469	26	1
Բ. Մշո գավառ				
-Մուշ	103	75 623	113	87
-Սասուն	156	24 233	127	15
-Մանազկերտ	39	11 931	25	15
-Բուլանըխ	30	25 053	29	14
-Վարդո	9	4 649	7	4
Գ. Գենջի/Արդուշեն գավառ	23	4 344	18	5
Դ. Սղերդի գավառ				
- Սղերդ	9	4 437	3	2
-Խարզան	76	8 343	22	14
-Պարվար	15	2 538	7	2
-Էրուն	20	3 393	4	2
-Շիրվան	19	2 853	11	2
Ընդամենը	681	218 404	510	207
17. Վանի նահանգ				
Ա. Վան գավառ				
-Վան	116	53 589	200	19
-Բերկրի	41	5 152	40	8
-Արճեշ	54	10 381	24	4
-Արծկե	25	6 460	19	3
-Մահմուդիե	4	826	3	
-Գավաշ	25	6 851	30	15
-Կարճկան և Ստորին Կառկառ	36	7 281	26	7
-Մոկս	45	4 459	36	14
-Շատախ և Նորդուզ	65	8 433	49	5
Բ.Հաքքարիի գավառ				
-Ջուլամերիկ	5	534	2	
-Խոշաբ	12	1 746	7	2
-Էլբագ	20	3 505	19	3
-Գյավառ	2	1 680	2	
Ընդամենը	450	110 897	457	192
ԸՆԴԱՄԵՆԸ	**292 5**	**1 914 620**	**2 538**	**1 996**

Ինչպես հայտնի է, Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի և Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի կողմից 1919 թ. Փարիզում հրավիրված Խաղաղության վեհաժողովին ներկայացվեց համատեղ հուշագիր՝ “Tableau Aproximatif des Reparations et indemnities pour les Dommages Subris par le Nation Armenienne en Armenie de Turquie et dans la Republique Armenienne de Caucase” խորագրով, որում ներկայացվում էր Առաջին աշխարհամարտի ընթացքում հայերի կրած նյութական ընդհանրական կորուստները, որոնք գնահատվում էին 19 մլրդ 130 մլն 982 հազար ֆրանսիական ֆրանկ[146]: 1919 թ., ֆրանսիական մեկ ֆրանկը կամ արծաթե մետաղադրամները արժեին 2.18 ԱՄՆ դոլար, հետևաբար նշված գումարը համարժեք էր 41.5 մլրդ ԱՄՆ դոլարի[147]: Այս թիվն, անշուշտ, չի ներառում պարտքերի ուշացման համար հարուցված վնասի վճարը: 1919 թվականից հետո տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ի դոլարը վերարժևորվել է մոտ 20 անգամ: Հետևաբար, 20 x 42.5 մլրդ = 850 մլրդ դոլար, ինչը չի ներառում անմիջական կամ անուղղակի կորուստներն ու կորցրած շահույթը:

Նյութական կորուստներից բացի հուշագրում ներկայացված էին նաև 1914 թ. դրությամբ իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ տարածքներում բնակվող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ[148].

---

[146] Տե՛ս 1915-1965. Յուշամատեան Մեծ Եղեռնի, Պէյրութ, 1965, էջ 1020-1022, 1025-1028:

[147] Տե՛ս Արդարացի լուծում. Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց, Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը, Հ. Թերիո, Ա. դե Զայաս, Ջ. Օ. Մաքքալփին, Ա. Պապյան, սեպտեմբեր 1914, էջ xiii:

[148] Տե՛ս Հայ Ժողովրդի կորուստները Առաջին Աշխարհամարտի տարիներին: «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի եվ նյութերի ժողովածու: Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ա. Զաքարյան, Եր., 2005, էջ 220-221:

	Նահագների անվանումը և հայերի բնակության վայրերը	Հայկական բնակավայրերի թիվը	Հայ բնակչության թիվը	Հայկական եկեղեցիների թիվը	Հայկական դպրոցների թիվը
	Էրզրումի նահանգ	425	215 000	482	322
	Վանի նահանգ	450	197 000	537	192
	Դիարբեքիրի նահանգ	242	124 000	158	122
	Սեբաստիայի նահանգ	241	225 000	219	204
	Խարբերդի նահանգ	279	204 000	307	204
	Բիթլիսի նահանգ	681	220 000	671	207
	Տրապիզոնի նահանգ	118	73 390	109	190
	Ասիական Թուրքիա	237	371 800	281	300
	Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա	187	309 000	537	176
0	Եվրոպական Թուրքիա	58	194 000	67	79
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2 925**	**2 133 190**	**3 368**	**1 996**

Այսպիսով, թուրքական վիճակագրության, արևմտյան փորձագետների և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համադրությամբ ստացվում է, որ Առաջին աշխարհամարտից առաջ Օսմանյան կայսրությունում հայերի թվաքանակը կազմել է 1,6-ից մինչև 2 միլիոն մարդ: Սակայն, հաշվի առնելով քաղաքական նպատակներից ելնելով հայերի թվաքանակը արհեստականորեն նվազեցնելու թուրքական վիճակագրության միտումները, ինչպես նաև Պոլսի հայոց պատրիարքարանի հաշվարկներում առկա թերությունները[149], հակված ենք այն կարծիքին, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը պետք է կազմեր 2.5-3 մլն:

Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես հայերի ջարդերն ու սպանությունները հասան իրենց գագաթնակետին: Վենեսուելացի Ռաֆաել դե Նոգալեսը, որն Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական զորքերի կազմում իբրև սպա ծառայում էր Օսմանյան կայսրությունում, իր հուշերում գրում է. «Մինչև 1914 թ. Թուրքիայում բնակվող երկուսուկես միլիոն հայերից թերևս չի մնացել անգամ կես միլիոն՝ ներառ-

[149] Տե՛ս սույն կոլեկտիվ հետազոտության մեջ զետեղված Գեղամ Բադալյանի հոդվածը:

յալ նաև այն երեք կամ չորս հարյուր հազար հայերին, որոնք ապրում են Կոնստանդնուպոլսում և Զմյուռնիայում և ողջ են մնացել՝ հրաշքով փրկվելով տեղահանություններից»[150]:

Թեև Առաջին աշխարհամարտում Գերմանիան Օսմանյան կայսրության դաշնակիցն էր, այդուհանդերձ, գերմանական աղբյուրներում թուրքերի կողմից բնաջնջվող հայերի մարդկային կորուստների վերաբերյալ ամենաբարձր տվյալներն էին նշվում: Այսպես, 1916 թ. մայիսի 27-ին գրված գերմանական դիվանագիտական զեկուցագրերից մեկում նշվում է, որ պատերազմի սկզբից մինչև 1916 թ. փետրվար ընկած ժամանակահատվածում կայսրությունում մոտ 1,5 մլն. հայ է սպանվել[151]: Գերմանիայի Բունդեստագի պատգամավոր Էրցբերգերը 1916 թ. գրած իր զեկուցագրում հայերի ունեցած մարդկային զոհերի նույն թիվն է նշում, որը կրկնվում է նաև 1916 թ. հոկտեմբերի 4-ին Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար կոմս ֆոն Մետերնիխի զեկուցագրում: Հետևաբար, թուրքական իշխանությունների կողմից իրագործվող հայերի ցեղասպանության հետևանքով մարդկային կորուստների 1.5 մլն. թիվն, ըստ ամենայնի, շրջանառության մեջ է դրվել հենց գերմանական աղբյուրների կողմից:

Հայերի բռնի տեղահանությունն ու կոտորածներն ուղեկցվում էին նրանց թողնված մեծածավալ շարժական ու անշարժ գույքի զանգվածային բռնագրավումով: Թուրքական իշխանություններն իրենց պաշտոնական փաստաթղթերում այն կոչում էին «լքված գույք»: «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի ընդունումից հետո մի քանի շաբաթ անց երիտթուրքական իշխանություններն ընդունեցին երկրորդ՝ «Լքյալ գույքի մասին» օրենքը, որով «օրինական» տեսք էր հաղորդվում բռնի տեղահանված հայ բնակչության ունեցվածքի ու գույքի բռնազավթման գործընթացին: Այդ ունեցվածքն այնքան

---

[150] Рафаэль де Ногалес. Четыре года под полумесяцем. М., Русский Вестник, 2006, с. 44.

[151] Տե՛ս Volkswirtschaftliche Studien in der Türkei, AA Türkei, 134/35, A 18613:

հսկայական էր, որ թուրքական իրար հաջորդած երեք կառավարությունները 1914-1930 թթ. ընթացքում հայկական «լքված» կամ բռնագրավված գույքիվերաբերյալ տասներկու օրենքներ և հրահանգներ են ընդունել:

Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի փաստաթղթերի և նյութերի ժողովածուում նախա և հետ-պատերազմյան ժամանակահատվածների համար հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ բերվում են հետևյալ տվյալները[152].

	Նահանգների անվանումը և հայերի բնակության վայրերը	Բնակչության թիվը 1914թ.	Բնակչության թիվը 1922թ.	Տեղահանվել կամ ոչնչացվել են
	Էրզրում	215 000	1 500	213 500
	Վան	197 000	500	196 500
	Խարբերդ	204 000	35 000	169 000
	Դիարբեքիր	124 000	3 000	121 000
	Բիթլիս	220 000	56 000	164 000
	Սեբաստիա	225 000	16 800	208 200
	Տրապիզոն	73 390	15 000	58 390
	Կենտրոնական և արևմտյան նահանգներ	371 800	27 000	344 800
	Կիլիկիա և Հյուսիսային Սիրիա	309 000	70 000	239 000
0	Եվրոպական Թուրքիա	194 000	163 000	31 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2 133 190**	**387 800**	**1 745 390**

Հայերի ցեղասպանության քաղաքականությունը չսահմանափակվեց միայն Օսմանյան կայսրության տարածքով: 1915 թ. թուրքական զորքերի Հյուսիսային Իրան ներխուժելու հետևանքով այնտեղ բնակվող շուրջ 80 հազար հայեր սպանվեցին: 1918-1920 թթ. Արևելյան Հայաստան և Այսրկովկաս թուրքական զորքերի ներխուժման հետևանքը նույնպես եղավ տասնյակ հազարավոր հայեր սպանվելը:

---

[152] Տե՛ս Հայ Ժողովրդի կորուստները Առաջին Ախարհամարտի տարիներին: «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի« փաստաթղթերի եվ նյութերի ժողովածու: Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ Ա. Ջաքարյան, Եր., 2005, էջ 220-221:

ԱՄՆ-ի առաջատար գործիչները դեռ այն տարիներին հրատարակել էին մի պաստառ, որի վրա 1895-1922 թթ. հայերի ջարդերի և մարդկային զոհերի մասին զետեղված էին հետևյալ տվյալները.

1895 թ. - 360 000 Թուրքահայաստանում,
1909 թ. - 30 000 Կիլիկայում,
1915 թ. - 1 500 000 Թուրքահայաստանում, Կարսում, Ալեքսանդրապոլում
1918 թ. - 30 000 Բաքվում,
1919 թ. - 10 000 Քունջուլարում,
1921 թ. - Կիլիկիայում,
1922 թ. - Իզմիրում[153]:

Ազգերի Լիգայի փաստաթղթերում նշվում է Հովհաննես Քաջազնունու կառավարության կողմից փախստականների վերաբերյալ ներկայացրած թվական տվյալը, որը հրապարակվել է 1926 թ[154]. և «Հայ փախստականների Կովկաս տեղափոխման և այդ տարածաշրջանում հայկական օջախների հիմնումը»[155] վերտառությամբ զեկույցում: Այդ աղբյուրների համաձայն, 1919 թ. սկզբին Հայաստան Հանրապետությունում ապրելու համար դիմել են Օսմանյան կայսրությունից շուրջ 393 700 հայ փախստականներ, որոնց մեծ մասի տեղաբաշխվածությունը Հայաստանի բնակավայրերում ներկայացնում ենք ստորև.

Համայնք	Երևան	Աշտարակ	Ախտա-Եղեմակա	Բաշ-Գառնի	Նոր Բայազետ	Դարալագյազ	Բաշ-Ապարան	Էջմիածին	Ղարաքիլիսա	Դիլիջան
Փախստական-ների թիվը	75,000	30,000	22,000	15,000	38,000	36,000	35,000	70,000	16,000	13,000
Ընդամենը	350 000 մարդ									

[153] Տե՛ս Մնացականյան Ա. Ն., նշվ. աշխ., էջ 160-161:
[154] Տե՛ս League of Nations. Assembly: Fifth Committee published reports: *Armenian and Russian Refugee Problems;* Report... Geneva: np, 1926.
[155] Տե՛ս "Transfer of Armenian Refugees to the Caucasus and Creation of an Armenian National Home in That Region; *Report... Geneva: np, 1924.*

Ցեղասպանության հետևանքով 1918 թ. դրությամբ հայերի թիվն Օսմանյան կայսրությունում նվազել էր հինգ ու կես անգամ, իսկ 1921-22 թթ. արդեն քեմալականների կողմից ցեղասպանության քաղաքականության շարունակության պայմաններում Մեծ եղեռնից հրաշքով փրկված Կիլիկիայի և Զմյուռնիայի հայության մնացորդները ստիպված եղան հեռանալ իրենց բնակավայրերից:

Ինչ վերաբերում է ցեղասպանությունը վերապրած ու Թուրքիայի տարածքներում իրենց գոյությունը մի կերպ պահպանած հայերի թվաքանակին, ապա այս հարցում նույնպես կան տարբեր վիճակագրական տվյալներ: Մասնավորապես, ըստ Կոստանդնուպոլսում հրատարակված 1925 թ. «Ընդարձակ տարեցույցի» [156] տվյալների, Թուրքիայի տարբեր նահանգներում և Կոստանդնուպոլսում հայերի թվաքանակն ունեցել է հետևյալ պատկերը.

Քաղաքներ, գյուղեր, բնակատեղեր	Հայերի թվաքանակը
Կոստանդնուպոլիս	60.000
Անկարա	1.300
Կեսարիա-նահանգում (քաղաքում 2.653)	4.402
Կաստեմունի-շրջանի գյուղերով	3.426
Նալլու խան	30
Յոզղաթ	1.000
Յոզղաթի 9 գյուղերում	1.000
Բողազլյան, Սունգարլու, Ակդաղմաղեն և Զորում	1.500
Իյդելի	150
Թալաս	200
Բյունյանի շրջան-Գիգի, Սըվղըն, Էվերեգ, Սարըօղլան գյուղերում	
Էվերեգ	195
Ֆենեսե	379
Էվերեգ-Ֆենեսի	375
Թոմարզա	172

[156] Տե՛ս Ղասաբյան Զ.Մ., Նիկոմիդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը, Երևան, «Ապագա», 1998, էջ 32-34:

Գերմիր	240
Թավլուս ուն	80
Մանջուսուն	40
Էֆքերե	105
Սուրբ Կարապետ վանքում-որբեր	60
Ազիզե	
Գեմերեկ 11 գյուղերով	250
Զմյուռնիա-Նիկոմիդիա	90
Էսքի-Շեհիր	700
Քյոթահիա	-
Կոնիա	15
Էրեյլի	104
Սեբաստիա	448
Սեբաստիայի շրջանի գյուղերում	349
Ամասիա	2.000
Թոքատ150 տուն միջին 5 անձով	
Զառա 500 տուն	1.000
Կոչ-Հիսար 300 տուն	1.500
Թամզարա 50 տուն	
Սիմհաջի 100 տուն	750
Յենիխան, Ղանդալի, Դիվրիկ,	2.500
Պուռնավիլ, Գյուրառին, Օդուռ, և այլ	1.500
շրջակա գյուղերում	250
Սամսուն	500
Խարբերդ շրջաններով	
Ակն	
Ակնա շրջանի Ապուչեխ,	600
Կամարակապ, Գարուշլա, Լիճք,	300
Պինգյան, Զըմմառ գյուղերում	2.000
Արաբկիր	300
Մալաթիա (100 տուն)	
Դիարբեքիր (Տիզրանակերտ)	150
Արևմտյան Հայաստան (Արևելյան նահանգներ-Բաղեշ, Վան, Մուշ, Կարին)	2.000
Տրապիզոն	500
Ադրիանուպոլիս	500
Կարա-աղաջ	867
Ընդամենը	**93 827 հայ**

Նույն աղբյուրում ըստ առանձին թաղամասերի ներկայացված են Կոստանդնուպոլսում բնակվող հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ[157].

Թաղամասեր	Տներ	Հայերի թվաքանակը
Ղալաթիա	75	375
Պերա	1.200	8.000
Ֆերիգյուղ	2.000	9.000
Դում-Գափու	600	3.000
Գում-Գափուից դուրս	250	1.250
Գեդիկ փաշա	600	3.000
Յենի Գափու		400
Նարլը Գափու	40	200
Սամաթիա	600	3000
Մաքրի գյուղ	500	1.800
Սան-Սթեֆանո	80	450
Թոփ-Գափու	160	1.000
Բալաթ	250	1.200
Խասգյուղ	2885	1.500
Գաղթականների կայան		
Բեշիքթաշ		800
Օրթազյուղ	300	1.600
Կուրու Չեշմե	300	1.600
Ռումելի Հիսար	300	1.600
Բոյաջը գյուղ		360
Յենի գյուղ	60	300
Բեյուք ղերե և Յենի	30	150
Մահալլե		500
Սկյուտար		
Նոր թաղ	1.000	5000
Գադր գյուղ		1500
Քարթալ	400	2000
Քընալը		162
Մեծ կղզի	90	450
Բեյկոզ	60	300
Քանդիլլի	30	150
	25	120
Ընդամենը		**50.767**

[157] Տե՛ս Ղասաբյան Զ.Մ., նշվ. աշխ., էջ 35-36:

Արդեն 1947 թ. դրությամբ Թուրքիայի փոքրասիական նահանգներում ու առանձին քաղաքներում հայերի թվաքանակը ուներ հետևյալ պատկերը[158].

Քաղաքներ, գյուղեր, բնակատեղեր	Հայերի թվաքանակը
Կեսարիա	2.250
Կեսարիայի շրջակա գյուղերում	1.095
Ցոզղաթ	200
Ցոզղաթի շրջակա 18 գյուղերում	1.525
Սեբաստիա	1.525
Սեբաստիայի 7 գյուղերում	1.405
Թոքատ	350
Թոքատի 3 գյուղերում	42
Ամասիա	500
Մարզվանի Հաջի գյոյում և շրջակայքում	
Զորումի և Մեջիդ յոզուն	485
Արաբկիր	41
Խարբերդ	1250
Մեզիրե	750
Մալաթիա	700
Դիարբեքիր-Տիզրանակերտ	500
Օրդու	1005
Կոն իա	200
Էրեյլի	100
Անկարա	250
Այնթաւդ	1.500
Այնթապի 7 գյուղերում և	150
Քիլիսում	375
Ընդամենը	**15.180**[159]

Դժվար չէ նկատել, որ 20 տարվա ընթացքում Ստամբուլից դուրս՝ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի այլ տարածքներում բնակվող հայերի թիվը 33 827-ից նվազել է 15.180-ի՝ կրճատվելով ավելի քան երկու անգամ: Ակնհայտ է, որ հայ բնակչության նվազման պատճառը ինչպես թուրքական իշ-

[158] Տե՛ս Ղասաբյան Զ.Մ., նշվ. աշխ., էջ 36-37:

[159] Այս տվյալներում հաշվի չէ առնվել մահմեդականացված ու թրքախոս հայերի թիվը:

խանությունների խտրական քաղաքականության շարունակությունն էր, այնպես էլ այդ տարածքներում բնակվող գերակշիռ մահմեդական բնակչության թշնամական վերաբերմունքը:

Ներկայումս, ըստ պաշտոնական տվյալների, Թուրքիայում հայ համայնքի թիվը գնահատվում է մոտ 70 հազար: Բացի այդ, բավականին մեծ թվով (500 հազարից մինչև 1 միլիոն) իսլամացած հայեր կան: Կան նաև գրեթե 2 500 հայ կաթոլիկներ և 500 հայ ավետարանականներ[160]:

Այսօր Ստամբուլում կան 35 հայկական եկեղեցիներ: Գործում են բազմաթիվ համայնքային կենտրոններ, ուսանողական միություններ, երգչախմբեր, մշակութային և սպորտային կազմակերպություններ (Սուրբ Փրկիչ հիվանդանոց, Գալֆայան հիմնադրամ, Գալֆայան և Կարագյոզյան Մանկատներ, թուրքահայ ուսուցիչների հաստատություն, Շիշլիի սպորտային միություն, «Մարալ» երգի ու պարի համույթ, «Սայաթ-Նովա» մանկական երգչախումբ և այլն): Ստամբուլում գործում են 18 հայկական կրթական հաստատություններ, որոնցից 14-ը պատկանում են Հայ Առաքելական եկեղեցական համայնքին, իսկ 4-ը՝ հայ կաթոլիկ համայնքին: Վերջին տասնամյակների ընթացքում Թուրքիայում հայկական դպրոցների թիվը զգալիորեն նվազել է՝ աշակերտների թվաքանակի կրճատման պատճառով, ինչը Ստամբուլի հայ համայնքի նկատմամբ թուրքական իշխանությունների հետևողական խտրական քաղաքականության հետևանքներից մեկն է: Ստամբուլի հայ համայնքն ունի իր պարբերականները՝ «Ժամանակ» և «Մարմարա» թերթերը և երկլեզու (հայերեն-թուրքերեն) «Ակոս» շաբաթաթերթը[161]:

«Հրանտ Դինք» հիմնադրամի և Համազգային հայ կրթական և մշակութային միության ջանքերով 2016 թ. հոկտեմբերի 7-8-ին Ստամբուլում կազմակերպված «Հայկական ինքնության քննական մոտեցումները 21-րդ դարում. Խոցելիություն,

---

[160] Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթոլիկ և ավետարանական համայնքները Թուրքիայում. Ժամանակակից միտումներ, Եր., 2012:

[161] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Եր., 2010:

առաձգականություն, փոխակերպություն» խորագրով գիտաժողովի ընթացքում Հրակ Փափազյանն իր «Հայերն ու այլ հայերը Թուրքիայում» զեկույցում նշեց, որ Թուրքիայում այսօր կան երեք «տեսակի» հայեր՝ պաշտոնական հայեր, «թաքուն» կամ «ծպտյալ» հայեր և համշենահայեր: Թուրքիայի քրիստոնյա հայ քաղաքացիների թիվն այսօր տարբեր տվյալներով 60-70 հազար է գնահատվում: Նրանց ավելի քան 90 տոկոսը բնակվում է Ստամբուլում, որտեղ ունեն բազմաթիվ գործող եկեղեցիներ, տարրական և միջնակարգ դպրոցներ, մի քանի թերթեր ու պարբերականներ: Նրանցից բացի կան նաև Թուրքիայի մահմեդական հայ քաղաքացիները[162]:

Որոշ հետազոտողներ ու քաղաքական գործիչներ խոսում են հարյուր հազարավոր կամ միլիոնավոր մահմեդական հայերի կամ «իսլամացած հայերի ժառանգների» և «մահմեդական հայերի» մասին[163]: Մահմեդական հայեր ասելով, նկատի չունենք իսլամացված բոլոր հայերի ժառանգներին, այլ ավելի շուտ միայն նրանց, ովքեր ունեն հայկական ինքնագիտակցություն և իրենց հայ են համարում:

Ի դեպ, մահմեդական հայերը պատմական և սոցիալ-մշակութային տարբեր միջավայրերից են՝ ոմանք սուննի են, մյուսները մեծացել են ալեվիական միջավայրում: Այսպես օրինակ՝ Դերսիմից եկողները սովորաբար իսլամի հետ ոչ մի կապ չունեն, բացի նրանից, որ իրենց անձնագրերում նշված է մահմեդական լինելու մասին: Ոմանց նախնիները մահմեդականություն են ընդունել 1915 թ. ցեղասպանության ընթացքում, մյուսների նախնիները կրոնափոխվել են ավելի վաղ՝ ինչպես համշենցիները: Կրոնական տարբերություններից զատ, նրանցից ոմանք ապրել են քրդական, իսկ մյուսները՝

---

[162] *Տե՛ս Փափազյան Հ., Հայերն ու այլ հայերը Թուրքիայում, http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenian-diaspora-ar/armenians-and-other- armenians-in-turkey-armenian-armenian.*

[163] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014:

թուրքական մշակութային միջավայրում, ինչն իր ազդեցությունն է ունեցել նրանց ինքնության վրա[164]:

Տարբեր աղբյուրներում նշվում է, որ համշենցիներն իսլամացվել են դարեր առաջ՝ 17-18-րդ դարերում: Թեև Թուրքիայի տարբեր տարածքներում բնակվող համշենցիների ցեղային ծագման վերաբերյալ տարակարծությունները շատ են, սակայն առկա են օսմանյան արխիվային փաստաթղթեր, որոնցում համշենցիները հիշատակվում են իբրև կրոնափոխ հայեր: Առկա են նաև համշենցիների հայկական արմատները հաստատող արխիվային փաստաթուղթերի պատճեններ, որոնք հրապարակվել են «Ակօս» շաբաթաթերթին էջերում[165]:

Ներկայումս Թուրքիայի ամբողջ տարածքում ապրում են մոտավորապես 300 000 համշենցիներ: Այսպես, արևելյան համշենցիները հիմնականում կենտրոնացած են Արդվինի Խոփա, Քեմալփաշա և Բորչկա շրջաններում, իսկ արևմտյան համշենցիները՝ Ռիզեի Հեմշին, Չամլըհեմշին և Չայելի շրջաններում, որոնք կազմում են պատմական բուն Համշենի տարածքը[166]:

Թուրքիան բացառիկ երկիրն է, որտեղ իր քաղաքացիների ինքնության հարցը ազգային անվտանգության տեսակետից լրջագույն խնդիր է: Այնուամենայնիվ, բոլորովին վերջերս Թուրքիայի բնակչությունը լուրջ անակնկալի եկավ, երբ առցանց տվյալների բազայում գրանցված մարդիկ իրենց մասին ցնցող բացահայտումներ կատարեցին, ինչի հետևանքով համացանցային տվյալ համակարգը մի քանի ժամվա ընթացքում կաթվածահար եղավ: Բրիտանացի լրագրող Ռոբերտ Ֆիսկն այս կապակցությամբ իր հոդվածում գրում է,

---

164 Տե՛ս Փափազյան Հ., Հայերն ու այլ հայերը Թուրքիայում, http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenian-diaspora-ar/armenians-and-other-armenians-in-turkey-armenian-armenian

165 Տե՛ս Թուրքիա Ապրող 300,000 Համշէնցիներուն Միակ Փափաքն Է Իրենց Մայրենին Չկորսնցնել. Թրքական Կայք, http://asbarez.com/arm/311818/

166 Տե՛ս Թուրքիա Ապրող 300,000 Համշէնցիներուն Միակ Փափաքն Է Իրենց Մայրենին Չկորսնցնել. Թրքական Կայք, http://asbarez.com/arm/311818/

որ իրենց թուրք համարող Թուրքիայի շատ քաղաքացիներ շոկի մեջ էին, երբ այդ համակարգի միջոցով պարզեցին, որ իրականում ծագումով հայեր են կամ կիսով չափ հայ, հույն կամ հրեա: Ֆիսկն ընդգծում է, որ 2007 թ. իր խմբագրության մոտ սպանված «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը հայտարարել էր, որ թուրքական կառավարությունը բնակչության ռեգիստրում գաղտնի գրանցում էր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Բրիտանացի լրագրողը նշում է, որ շուրջ չորս միլիոն իրենց թուրք համարող Թուրքիայի քաղաքացիներ 48 ժամվա ընթացքում գրանցվեցին այդ առցանց կայքում՝ իրենց ընտանեկան տոհմի ծագումը պարզելու նպատակով, ինչի հետևանքով համակարգն ուղղակի շարքից դուրս եկավ: «Հնարավոր է, որ համակարգ մուտք գործածներից երկու միլիոն թուրքերն ունեցել են հայ տատիկներ, սակայն, չնայած դրան, նրանք շարունակում են հավատալ, որ ցեղասպանություն չի եղել» [167] - գրում է Ֆիսկը:

Ժողովրդագրագետ Ջորջ Աղջայանը նշում է, որ երբ համակարգը կրկին վերագործարկվեց, արդեն շուրջ ութ միլիոն մարդ, այսինքն, ներկայիս Թուրքիայի ընդհանուր բնակչության 10%-ը, գրանցվել էր կայքում՝ իր արմատները պարզելու նպատակով: Թուրքական աղբյուրների համաձայն, համակարգը հայկական արմատներ է բացահայտել նաև Թուրքիայում հայտնի լրագրողների, գրողների, քաղաքական գործիչների և նույնիսկ ամենաակնառու թուրք ազգայնականների շարքերում: Նշվում է նաև, որ համակարգի շարքից դուրս գալուց և կրկին վերագործարկվելուց հետո շատ հայտնի իշխանավորների և քաղաքական գործիչների մասին տեղեկություններ արդեն անհասանելի էին դարձել[168]:

Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանում ու տարածաշրջանի հարևան երկրներում հայ բնակչության թվաքա-

---

[167] Տե՛ս Роберт Фиск: “Выяснилось, что многие турки были на самом деле армянами”, http://www.golosarmenii.am/article/63404/

[168] Տե՛ս Роберт Фиск: “Выяснилось, что многие турки были на самом деле армянами”, http://www.golosarmenii.am/article/63404/

նակին, ապա պետք է նշել, որ 1920 թ. Արևելյան Հայաստանի բնակչությունը կազմում էր 881 հազար մարդ: Հայաստանի հարևան երկրներում՝ Վրաստանում և Ադրբեջանում բնակվող հայերի թիվը 1990 թ. դրությամբ յուրաքանչյուր երկրում հասնում էր կես միլիոնի: 1920 թ. մինչև այսօր՝ 100 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը միայն բնական աճի շնորհիվ կարող էր հասնել գրեթե 5 միլիոնի, իսկ տարածաշրջանի երկրների հայության թվի հետ մեկտեղ՝ 10 միլիոնի, եթե Երկրորդ համաշխարհային պատերազմի, Ղարաբաղյան հակամարտության և Սպիտակի երկրաշարժի ժամանակ չկրեինք հերթական լուրջ մարդկային կորուստները: Ցավոք, վերջին տասնամյակներում Հայաստանի հարևան և տարածաշրջանի այլ երկրներում նույնպես բացասական միտումներ արձանագրվեցին, հայկական բնակավայրերի թիվը նվազեց 58% -ով, իսկ հայ բնակչության թիվը՝ 60% -ով՝ XX դարի վերջին ստանալով հետևյալ պատկերը՝

Երկիր	Բնակչություն	Հայեր
1. Ադրբեջան	7 600 000	34 000
2. Վրաստան	4 335 000	250 000
3. Թուրքիա	63 450 000	60 000
4. Իրան	69 000 000	150 000
5. Իրաք	21 800 000	10 000
6. Լիբանան	4 000 000	100 000
7. Սիրիա	15 600 000	65 000
8. Արցախ	138 000	138 000
Ընդամենը	**185 923 000**	**807 000**

Այսպիսով, եթե չլինեին հայերի կորուստները երկու համաշխարհային պատերազմներում, Ղարաբաղյան հակամարտությունում և Սպիտակի երկրաշարժը մեր տարածաշրջանում ապրող հայերի ընդհանուր թիվը կարող էր հասնել առնվազն 16 (10 + 5 + 0.5 + 0.5+) կամ նույնիսկ 20 միլիոնի: Սակայն այսօր տարածաշրջանում միայն 4 միլիոն հայ է բնակվում:

4.ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

4.1. Հայոց ցեղասպանության ընթացքում հայ պատմա-ճարտարապետական ժառանգության ոչնչացումն ու դրա դիմաց հատուցման խնդիրները

Հայոց ցեղասպանությունը իրականացվեց ոչ միայն ծրագրված սպանդով, տեղահանություններով, լքված գույքի հափշտակությամբ, այլ նաև կատարվածի քողարկմամբ, յուրացմամբ և նենգափոխմամբ: Բնականաբար փաստարկները բազմաթիվ են, սակայն Հայաստանի և հայության օրհասական իրավիճակի պատճառով կատարված անիրավությանը պաշտոնական պահանջատիրական ընթացք հնարավոր չեղավ տալ: Վերջինը ուշ թե շուտ պետք է միջազգային վավերականությամբ իրականացվի՝ և՛ որպես լքված գույքի փաստագրություն, և՛ որպես այդ գույքի արժեքային գնահատում, և՛ որպես հատուցման պահանջատիրություն, և՛ որպես ազգային և տարածքային ժառանգության պահպանության գործընթաց:

Վերոհիշյալ ճարտարապետական ունեցվածքի պահանջատիրության կայացումը և նրան իրավական ընթացք տալը այսօր անհետաձգելի անհրաժեշտություն է: Ժամանակակից աշխարհում առավել քան երբևէ առկա են միջպետական մարմիններ, որոնք ունեն համապատասխան համակարգեր և համամարդկային հարաբերությունները կազմակերպելու միջոցներ: **Ուսումնասիրության նպատակն է**՝ մանրամասնորեն ամրագրել ցեղասպանության տարիների անհավասար պայքարում կորցրած ճարտարապետական գույքը և իրավաքաղաքական միջոցներ որոնել դարերի ընթացքում ստեղծված ազգային հարստությունը վերդարձնելու՝ հատուցելու համար: **Գիտական խնդիրներ են հետևյալ հարցերը**: Հայկական ճարտարապետական հուշարձանների ոչնչացման ենթարկված և գույքի փաստագրումը՝ հուշարձանացուցակների և դաշտային զննումների միջոցով: Հայկական ճարտարապետական հարստության կորստի գնահատումը և հատուցման

մեխանիզմի բնութագրումը, ինչպես նաև՝ հայրենիքի բռնագրված տարածքներում գոյատևող հուշարձանների պահպանության կազմակերպումը:

Ներկայացվող բաժնի ուսումնասիրության առարկա է դարձել Արևմտյան Հայաստանի լքված ճարտարապետական գույքը:

Գրականության մեջ՝ 1894-1896 և 1915-1925 թթ. հայկական կոտորածների ու ցեղասպանության ընթացքում լքված ճարտարապետական գույքի չափը գնահատող աշխատությունները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը՝ համաերկրային, այսինքն՝ տարածքային և քաղաքաշինական ընդգրկման ուսումնասիրություններն են, իսկ երկրորդ խումբը հուշարձանախմբերի և հուշարձանների նվիրված հետազոտություններն են:

Տարածքային և բնակավայրային գույքին են վերաբերում բնագավառի առաջին հրատարկությունները[169]: Ճարտարապետական հուշարձանների կորստի իրական չափի բացահայտմանն են վերաբերում՝ մինչև 1915 թ. իրադարձությունները և նրանից հետո մնացած նյութական մշակույթի տվյալների տեղեկատվական գործերը: Մինչ Մեծ եղեռնը հրատարակված գործերից են՝ աշխարհագիրների, ճանապարհորդների և տեղագիրների նկարագրական աշխատությունները և հատկապես տվյալ դեպքում առանցքային նշանակություն ունեն եկեղեցացուցակները[170]: Այդպիսիք են՝ Պոլսենի հեղինակնե-

---

[169] Տես՝ Ահարոնյան Գ., Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965, Պէյրութ, 1965, 1987: Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970: Ղազարեան Հ., Հայոց լքեալ գոյքերու և կալվածքներու թալանը թուրքերու կողմէ, Հայրենիք, Պոսթըն, 1964, և նույնի՝ Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968: Գէորգ Մեսրոպ, Թուրքիոյ Հայոց կորուստները 1915-1921-ին ազգապատկան գույքերու տեսակետով, «Հայաստանի կոչնակ», Նիւ Յորք, 1931: Baghdjian K., ,,La confiscation, par le gouvernement turc, des biens armeniens … dits `abandonnes,, , Montreal, Quebec, 1987. Kevorkian R. & Paboudjian P., Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide, Paris: Arhis. 1992.

[170] Տես՝ Kertmenjian D., Armenian-Russian cooperation in the study of Armenian Architectural cooperation, pp. 175-177.

րի բազմաթիվ գործերը, դրանցից հատկապես մասնավորվում են՝ Մանվել Միրախորյանը, Ղևոնդ Փիրղալեմյանը, Պողոս Նաթանյանը, Գևորգ Մարզպետունին, Տրդատ Պալյանը, Խաչիկ Լևոնյանը, Գարեգին Սրվանտձյանցը և այլն[171]: Խնդրո առարկայի կապակցությամբ անփոխարինելի ժառանգություն է Մխիթարյան միաբանության երախտավորների ուսումնասիրությունները, ինչպես՝ Ղուկաս Ինճիճյանի, Մինաս Բժշկյանի, Ներսես Սարգիսյանի, Ղևոնդ Ալիշանի, Հակոբոս Տաշյանի, Համազասպ Ոսկյանի, Միքայել Հովհաննեսյանի հրատարակությունները[172]: Բնականաբար, տվյալ դեպքում ունեցվածքի կադաստրային տվյալները լիարժեքորեն առձեռն չկան: Բայց գոնե հուշարձանների կապակցությամբ դրանց փոխարինելու կգան հուշարձանացուցակները կամ, ծայրահեղ դեպքում, վանքերի և եկեղեցիների ցանկերը, որոնց լավագույն օրինակներից է Վարագավանքի ցանկը[173], և՝ ցուցակներ որոնք իրավիճակը պատկերում են անմիջապես ցեղասպանության նախօրեի վավերագրերով, դրանցից կարևորագույնն է Արշակ Սաֆրաստյանի հոդվածաշարը և Կիլիկիո կաթողիկոսությունում պահպանվող տվյալները[174]: Այդ կապակցությամբ մեծ կարևորություն ունեն Համազասպ Ոսկյանի Արևմտյան Հա-

---

171 Նույն տեղում, էջ 180:

172 Տես՝ Քերթմենջյան Դ., Հայկական պատմական քաղաքաշինության նյութերը Մխիթարյանների գիտական ժառանգությունում, Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանություն – 300, ցուցահանդես միջազգային գիտաժողով, ծրագիր, Երևան 2017, էջ 13:

173 ,,Ցուցակ Վան-Տոսպ նահանգի հայասեռ ժողովրդոց եկեղեցեաց,, «Արծուի Վասպուրականի», Վարագավանք, 1858, Թ-8 և 11:

174 Տես՝ «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները 1912-1913 թթ.», «Էջմիածին, 1965 Թ- Ա, էջ 40-47, Թ. Բ-Դ, էջ 174-187, Թ.- Ժ, էջ 43-48. 1966 Թ-Բ, էջ 38-44, Թ.Գ, էջ 57-60, Թ.Զ, էջ 41-47, Թ.Ը, էջ 60-63, Թ.Թ-Ժ, էջ 106-114: Հմմ. Բիւզանդ Եղիայեան, «Ատանայի Հայոց պատմութիւն» , Անթլիաս, 1970:

յաստանի վանքերին նվիրված կոթողային հատորյակների նյութը և նրանց իրադրական ցանկերը[175]:

Ցեղասպանությանը հաջորդող տարիների Արևմտյան Հայաստանի տարածքների դաշտային դիտումները նախորդ կետում թվարկված աշխատությունների շարունակությունն են: Այդ աշխատությունները կարելի է դասակարգել շատ հաստատությունների, կամ կազմակերպությունների և անհատների գործունեության: Այդ շարքում է մինչև Երկրորդ աշխարհամարտը Արևմտյան Հայաստանի տարածքում կատարված արշավախմբերի գործունեությունը: Ինչպես՝ ամերիկյան արշավախմբի աշխատանքները, որոնց մի մասը Ռայտվալդ համալսարանի արխիվի անվամբ արտացոլված են Հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող կազմակերպության համագործակցությամբ և Վազգեն Բարսեղյանի ղեկավարությամբ հրատարակված միքրոֆիշերի բազմահատորյակում (IDC-1987թ.): Այս բնագավառում մեծ կարևորություն ունեն Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ժան Միշել Թիերիի ղեկավարությամբ 1960-70-ական թվականներին Արևմտյան Հայաստան կատարված այցելությունները: Նույն ժամանակահատվածին է վերաբերվում նաև հայ արվեստի գործերին նվիրված հայ -իտալական համագործակցությունը, որ պսակվեց հայկական ուսումնասիրությունների բազմահատոր աշխատություններով, որոնցից հատկապես կարելի է առանձնացնել Հայկական ճարտարապետության նվիրված հանրագիտարանային բնույթի երկհատորյակը (1988 թ.)[176]: Անգլիական աշխատություններից այստեղ կարելի է առանձնացնել Թոմաս Սինկլերի Արևելյան Թուրքիայի հուշարձանների հետազոտությանը նվիրված քառահատոր անփոխարինելի ուսումնասիրությունը (1987-1990 թթ.), ինչպես նաև Ստիվըն Սիմի նախաձեռնությամբ ստեղծված հայկական ճարտարապետության «Վիրտուալ Անի» կայքը: Մեծ ներդրում այս գործուն

---

[175] Տես նաև Հայկական պատմական քաղաքաշինության նյութերը Մխիթարյանների գիտական ժառանգությունում:

[176] Տես Paolo Cuneo, Architettura Armena,Tomo I,II, De Luca Editore, Roma 1988.

կարող են համարվել Քալիֆոռնիայի համալսարանի և Վաշինգտոնի «Դյումբբրտըն Օքս» հետազոտական ինստիտուտի համագործակցությամբ կայացած գիտաժողովները և տպագրված աշխատությունները: Հատկապես կարևորվում են՝ Քալիֆորնիայի համալսարանի «Հայկական պատմական քաղաքներ և գավառներ» 14 հատորով մատենաշարը (2000-2016 թթ.) և Ռոբերտ Էդվարդսի հեղինակած՝ Կիլիկիայի հայկական թագավորության ամրաշինությունը (1987 թ.) և այլն:

Բնականաբար, տվյալ գործունեության մեջ անմասն չմնացին «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը (2015 թ.) և ներկայումս Թուրքիայում գործող «ՀԱՅՃԱՐ»-ի մասնագետները: Վերջինիս համագործակցությամբ ուսումնասիրական մեծ ալիք բարձրացավ, որը միավորում է Անկարայի համալսարանի, «Անադոլու Քյուլթուր»-ի, Եվրասիա համագործակցություն, «Հրանդ Դինքի», ԱՄՆ-ի «Հուշարձանների միջազգային» և «Նորվեգիայի մշակութային ժառանգության և հետազոտությունների ինստիտուտի» (NIKU) հիմնադրամները: Համապատասխան պետական մարմինները և նրանց ներգրավմամբ զանազան կազմակերպություններ և անհատ գիտնականներ՝ հարցի կապակցությամբ նաև ուղղակի և անուղղակի ներդրում ունեցան: Դրանցից այստեղ կարելի է նշել Երևանի Հրաչյա Աճառյանի անվան Համալսարանի «Հայկական հարց» վերնագրված հոդվածների ժողովածուն (1990, 2004), «Հայկական Հարց» Հանրագիտարանը (1996 թ.), ՀՀ Ցեղասպանության գիտահետազոտական կենտրոնի միջոցառումները և բազմաթիվ այլ աշխատություններ, որոնք, արձանագրեցին փաստեր, սակայն լքված ճարտարապետական գույքի հատուցման խնդիրները լիարժեք չամրագրեցին: Սույն բաժնում կփորձենք հանձինս խորությամբ քննարկել այդ հարցերը, դրանք դիտարկելով միջազգային հուշարձանապահպանության կոնվենցիաների լույսի ներքո: Ուսումնասիրվող հարցերին են վերաբերում նաև 20-21-րդ դարերի միջազգային համաձայնագրերը և հատկապես դրանց այն ճյուղը, որը կիզակետում է պահում ցեղասպանության ընթացքում և գրավված տարածքներում մշակութային գույքի, այդ թվում և՝ ճարտա-

բապետական ժառանգության պահպանության ու հատուցման հիմնահարցերը:

Այսու մինչ և ցեղասպանության տարիներին հայկական ճարտարապետության ոչնչացվաց, ավերված և գոյատևող ժառանգությունն ու նրա հատուցման ժամանակակից խնդիրների ուսումնասիրությունը կներկայացվի չորս հաջորդական մասերով, որտեղ կուսումնասիրվեն խնդրո առարկա հուշարձանների 1/ թվային և որակական փաստագրման խնդիրները, 2/ դաշտային դիտումները, 3/ շինարարական կորստի գնահատումը և նրա հատուցման մեխանիզմի բնութագրումը, 4/ համաձայն միջազգային գործող կոնվենցիաների՝ գոյատևող ճարտարապետական ժառանգության պահպանության իրավական և ներդրումային կազմակերպումը:

Հայկական կորցրած ճարտարապետական հարստության քանակական հաշվառման պատմատեսական հենքը

Ինչպես Հայաստանը ընդհանրապես, այնպես էլ Արևմտյան Հայաստանը պատմականորեն մարդկության հնագույն ուրբանիզացված տարածքներից է, որ ունեցել է համաերկրային տարածական բաժանում: Թե՛ ճարտարապետական կառույցները և թե՛ Արևմտյան Հայաստանի տարածքում բնակավայրերից դուրս և բնակավայրերում եղած շինությունները առհասարակ, ըստ էության, հայ ժողովրդի շինարարական ունեցվածքն է: Այդ հարստության ստվար մասը գործել է բնակավայրերում և հատկապես քաղաքներում: Բնակավայրերը ըստ մեծության հաշվառվում են գոյություն ունեցող ինֆրակառուցվածքով, բնակելի թաղամասերով, հասարակական, արտադրական և արդյունաբերական ու այլ գոտիներով: Տոկոսային բովանդակությամբ հաշվարկվող այս ուրույն հետազոտության բնագավառը թողնում ենք համապատասխան մասնագետների[177]: Տվյալ ուսումնասիրության առարկա ենք

[177] Տե՛ս Гаспарян М.Ю., Оценка, Москва 2006, стр.69-85. Гаспарян М.Ю., Тучи не могут долго скрывать солнечный свет / М.Ю.Гаспарян,– М.: Тро-

դարձրել հոգևոր հաստատությունները, որոնք կարող են ուղեցույց հանդիսանալ վերևում նշվածների ավելի ճշգրտված տեղեկատվության համար, քանի որ մինչ 19-րդ դարի կեսերը քաղաքաշինական մասշտաբների մասին կարելի է գաղափար կազմել տվյալ բնակավայրերում եղած պաշտամունքային հաստատությունների, եկեղեցիների կամ ծխական եկեղեցիների քանակությունից: Փաստորեն դրանք նոր՝ նորմավորված քաղաքաշինության ծիրից դուրս են, որն ուսումնասիրվող տասնամյակներին՝ 19-րդ դարի ավարտից դեպի 20-րդ դար առաջին տասնամյակները բյուրեղացման փուլ էր ապրում: Բնականաբար, տվյալ դեպքում առանցքային են համարվում հայկական ազգային եկեղեցու տվյալները, չմոռանալով, որ Հայաստանում կային կաթոլիկ և ավետարանական համայնքներ ևս՝ իրենց համապատասխան հաստատություններով:

Ցեղասպանության հետևանքով լքված ճարտարապետական գույքի հատուցման համար սկզբունքային համարվող կրոնական շենքերի քանակական տվյալների ուսումնասիրությունն առաջին հերթին հիմնվում է մատենագրական աղբյուրներից քաղված տարածական բաշխման տվյալների վրա: Այդ աշխատությունների առաջնեկներից են՝ Հ. Ղուկաս Ինճիճյանի «Հին Հայաաստան» և «Նոր Հայաստան» անվանումներով աշխարհագրական գործերը, որոնք հետևողականորեն ընդարձակվել են Պոլսենի, Մխիթարյան, Էջմիածնական և այլ տեղագրողների գործերում :

Արդի ժամանակների հրատարակությունների շարքում են՝ «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանը», «Հայաստանի սովետական հանրագիտարանը», հինգհատորյա «Հայաստանի և հարակից տարածքների տեղանունների բառարանը», «Թուրքական աղբյուրները Հայաստանի մասին» երկու հատորները, որոշ վերապահությամբ նաև թուրքերեն հրատարակություններ՝ «Իսլամի» և «Յուրդ (իմա՝ հայրենական)» հանրագիտարանները, Բարսեղ Թուղլաջյանի հեղինակությամբ

вант, 2010.–602 с.. Гаспарян М.Ю., Давыдов А.В. Пилипович В. И., Основы оценки: исторические и практические аспекты…, 57 с. и другие работы.

հրատարակված «Թուքերեն հանրագիտարանատիպ բառարանը», «Անադոլյան քաղաքները» և այլն: Եթե նշված հեղինակները իրազեկում են Արևմտյան Հայաստանի գույքի պատմական իրավիճակային տեղեկությանը, ապա նույն համատեքստում եղեռնի տարիների հայկական լքված գույքի վերաբերյալ տեղեկությունները ամփոփված են Արմեն Մարուքյանի աշխատությունում[178]: Մինչև Ա.Մարուքյանի աշխատությունը տվյալ հարցով սկզբում զբաղվել են սփյուռքահայ հեղինակներ, որոնցից հատկապես կարևորվում են վերևում նշված հեղինակները:

Վերոհիշյալներից առանձնապես ներկայիս կարևորվում է՝ **Ռայմոնդ Գևորգյանի և Փոլ Փաբուճյանի աշխատությունը, որ 2012 թ.** հրատակվել է նաև թուրքերեն լեզվով: Հեղինակների լայնածավալ աշխատությունը կազմված է հիմնական երկու մասերից: Առաջին մասում ներկայացվել են Օսմանյան կայսրության տարածքներում բնակվող հայ ժողովրդի մասին պատմական և վիճակագրական տեղեկությունները: Ճարտարապետական հուշարձանների քանակի ուսումնասիրության տեսանկյունից առանձնապես կարևորվում է այդ աշխատության երկրորդ մասը և հատկապես այն հատվածները, որոնք փաստագրում են Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակավայրերի ճարտարապետական գույքը: Ամրագրենք այդ տարածքային միավորները՝ փակագծերի մեջ նշելով աշխատությունում կատարված բնակավայրերը: Դրանք են՝ 1. Սեբաստիայի նահանգը (Սեբաստիա, Շապինգարահիսար, Թոքատ, Ամասիա), 2.Կիլիկիան (Ադանա, Մերսին,Սիս), 3. Հալեպի նահանգը, որ ունենալով Սիրիայի տարածքի քաղաքներ ևս, դրանցից այստեղ առանձնացվում են հայաբնակները (Մարաշ, Այնթապ, Ուրֆա), 4. Բարձր Հայքը (Խարբերդ, Դերսիմ, Մալաթիա), 5. Էրզրումի նահանգը (Էրզրում, Երզնկա, Բայազեդ), 6. Բիթլիսի նահանգը (Բիթլիս կամ Բաղեշ, Մուշ, Արդուշեն, Սղերթ), 7. Վանի նահանգը (Վան, Արտամետ, Մոկս, Շատախ, Խիզան, Դատվան, Խլաթ, Արծկե, Արճեշ, Հաք-

[178] Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Երևան, 2015:

քիարի կամ Աղբակ): Փաստորեն աշխատության որդեգրած աշխարհագրական բաժանումը լինելով Օսմանյան կայսրության տվյալներով, շատ դեպքերում ուսումնասիրություններից դուրս է մնացել: Իրականում այն չափազանց կարևոր տեղեկատվություն է պարունակում: Նրանում իրադրական կարգով ներկայացվել են նահանգների և սանջակների տարածքային քարտեզը, կարևորագույն քաղաքացիական հուշարձանները, ժողովրդագրական կազմը և այլն: Այնպես որ, տվյալները հասցվել են մինչև կադաստրային մակարդակի, հստակորեն ընդգրկելով կարևորագույն հուշարձանները: Տվյալ դեպքում մեծ կարևորություն ունի բնակավայրերում եղած եկեղեցիների քանակությունը, որոնք գերակշռությամբ հարակցում էին նաև ուսումնական հաստատություններին: Նման մոտեցումը հստակորեն կիրառված է նաև՝ «Արդարացի լուծում. Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց» անվանումը կրող աշխատություններում[179]: Ինչ խոսք, որ ուսումնասիրվող հարցը վերոհիշյալ աշխատություններում ամբողջությամբ չեն ներկայացվել և ավելի մանրամասն հետազոտման կարիք ունի: Մանավանդ որ վերջին տարիների դաշտային այցելությունները բացահայտեցին, որ և՛ վերևում ներկայացված փաստաթղթերը, և՛ օսմանական պաշտոնական փաստաթղթերում եղած վիճակագրությունը և՛ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ներկայացված փաստերը ակնհայտ թերի են:

1914 թ. թուրքական պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի ու մատուռ, 451 վանք և շուրջ 2000 վարժարան[180]: 1919 թ. Պողոս Նուբար փաշայի և Ավետիք Ահարոնյանի կողմից ստորագրված հուշագրի համաձայն տարածքում մնացել էին՝ ամբողջությամբ կամ մասամբ կործանված 83 եպիսկո-

---

[179] Տես, «Արդարացի լուծում. Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց,, Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը, վերջնական զեկույց – սեպտեմբեր 2014,,:

[180] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «ՎԷմ» համահայկական հանդես, Երևան, 2010, Թ-3(31), էջ XVI-XVII:

պոսանիստ աթոռներ, 1860 եկեղեցիներ և մատուռներ, 229 վանքեր, 26 բարձրագույն վարժարաններ, 1439 դպրոցներ և 42 որբանոցներ[181]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը լիովին ոչնչացվել է, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի[182]: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Պետք է նշել, որ երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի Հանրապետության կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ հայերի մասին: Հայոց ցեղասպանության 50 ամյակից հետո հայկական վրիժառության շարժմանը հաջորդեցին թուրքական զինվորականության կողմից բազմաթիվ վանքերի պայթեցումները: Ներքոհիշյալ աղյուսակում ամփոփված տվյալները, այնուամենայնիվ ստույգ չեն, քանի որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հաշվառումները ներկայացվել են ըստ թուրքական պաշտոնական տվյալների, որոնք հավատ չեն ներշնչում:

---

[181] Տե՛ս Հ. Տաճատ Եարտըմեան, Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն, Վենետիկ –Ս.Ղազար 2001, էջ 45: Հմմ. Tableau approximatif des reparations et indemnities pour les damages subis par la Nation Armenienne en Armenie de Turquie et dans la republique armenienne du Caucase, Paris 1919, p. 8.

[182] Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ XVI-XVII:

փաստաթուղթ	Թվ-ը	Առաջնորդարան	եկեղեցի	վանք	վարժարան	որբանոց	ընդամենը
1.	1914 թ.	8 3	1860	51	2000		4394
2.	1919 թ.	8 3	1860	29	1465	42	3679
*Նշանակում է 1915-1919 թթ ոչնչացվել են 715 հուշարձան							
3.	1974						913
**Նշանակում է 1920-1974 թթ. ոչնչացվել են 2766 հուշարձան							
4.	1974 հետո						450 (չափազանց ավերված 252 հուշարձան և 198 ավերակ հուշարձան)
** Նշանակում է 1974 թ հետո ոչնչացվել է 464 հուշարձան							

2010-2015 թթ. տարեկան այցելությունների ընթացքում ականատես ենք եղել Մուշ քաղաքի հին կենտրոնի քանդման աշխատանքներին և դրա նոր նպատակներով օգտագործմանը: Տեղում պահպանվում էին միայն հայկական ապացույց չպարունակող շինությունները, որի մասին տեղյակ էին նույնիսկ բնակչությունն ու բանվորները: Նույնը կարելի է ասել նաև Մանազկերտի, Հաճնի, Բիթլիս, Խարբերդի, Էրզրումի, Կարսի տարածքների մեր կատարած այցելությունների մասին: Այսինքն՝ այն ինչ որ չէր վերացվել, մինչ ՀՀ անկախությունը արագացված բնույթ կրեց և կրում է դրան հաջորդած տարիներին: Այս ամենով հանդերձ, նշված տարածքներում երկարաժամկետ մնալու դեպքում կարելի է ականատեսը լինել չհաշվառված այլանդակված բազմաթիվ եկեղեցական և այլ հուշարձանների, որոնք լավագույն դեպքում վերածվել են մզկիթների կամ էլ օգտագործվում են այդ կառույցներին անհարիր նպատակներով:

Թուրքական ատյանները ուսումնասիրվող խնդրի կապակցությամբ, անշուշտ, խեղաթյուրող դիրքորոշում ունեն, սակայն ցեղասպանության տարիներին եկեղեցական հուշարձանների մասին հավաստի աղբյուր են եղեռնի նախօրեին և եղեռնից հետո կատարված եկեղեցացուցակների հրատարա-

կությունները, արխիվային նյութերը և վերապրած հայ հեղինակների հայրենակարոտ հուշագրությունները: Հենց վերջիններն են հայկական լքված գույքի իրական պատկերը արտացոլող տվյալներ: Քանկական տվյալների ամբողջական պատկերը ստանալու համար անհրաժեշտ է բնակավայրերի տվյալների բազայի ստեղծումը: Այդ կապակցությամբ այս հատվածում առայժմ հիմնարար նշանակություն ունեն վերևում նշված հեղինակների և Ռ. Գևորգյանի ու Փ. Փաբուճյանի աշխատության հետ՝ Ա. Սաֆրաստյանի և հ. Հ. Ոսկյանի հրատարակությունները:

Ա. Սաֆրաստյանի՝ "Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները 1912-1913 թթ. " ութ հոդվածներից բաղկացած շարքն այս առումով չափազանց կարևոր է: Այն Պոլսո պատրիարքարան ստացվել է այն ժամանակվա նահանգների և քաղաքների առաջնորդարաններից: Փաստորեն տվյալները հավաստի պետք է համարել, որքան էլ դրանցում նույնպես ուղղելու ենթակա թերացումներ կան: Ցուցակները կազմված են ըստ Առաջին աշխահամարտի տարիներին Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումների: Հեղինակի՝ Ա.Սաֆրաստյանի վկայությամբ, թաքրիրներում բացակայում է Վանի նահանգը, որ ըստ 1858 թ. Վարագավանքի ցանկի ունեցել է 56 վանքեր և 377 եկեղեցիներ[183]: Ցուցակները պակասավոր են, քանի որ դրանցում արտացոլված են կայսրության մասշտաբով առավել նշանակություն ունեցող տարածքները և հայկական մի շարք բնակավայրեր ու գաղթավայրեր չեն ընդգրկվել: Ընդգրկված բնակավայրերն ու տարածաքներն են՝ Ստամբուլը, Էրզրումը, Մուշը, Դիարբեքիրը, Սեբաստիան, Ադանան, Տրապիզոնը, Սամսոնը: Տվյալ տարածքներում ընդհանուր առմամբ եղել է հայկական 1270 վանք և եկեղեցի: Վանի սրբավայրերի ավելացմամբ ստացվում է՝ 1703 վանք և եկեղեցի: Հոդվածաշարի

[183] Էջմիածին, 1965, Թ-Ա, էջ 41: Հմմ. «Արծուի Վասպուրականի», Վարագավանք, Վան, 1858, Թ-1, ներդիր Ա և Բ:

առաջին մասում, սկզբում ներկայացվել է վանքերի և եկեղեցիների ընդհանուր թվերը՝ ներառելով Ստամբուլը և Էրզրում, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Սվազ, Տրապիզոն, Անկարա, Կեսարիա, Այդընն, Կոնիա, Կասթեմունի և այլ նահանգները: Ա. Սաֆրաստյանը նշվածներից առանձնացված ձևով ներկայացրել է նաև հայկական և հայաշատ բնակավայրերի սրբավայրերը հետևյալ թվային տվյալներով[184]՝ Էրզրումում (77), Մուշում (82), Դիարբեքիրում (108), Սեբաստիայում (89), Ադանայում (25), Տրապիզոնում (49), Սամսոնում (43), Կոտանդնուպոլսում (47): Ընդամենը ստացվում է 520 հուշարձան: Իրականում տվյալ ցանկը ցույց է տալիս, որ ոչ միայն Վանի նահանգն է բացակայում, այլև՝ Խարբերդը, Կարսը և Կիլիկիայի մեծ մասը: Այնուամենայնիվ, եթե նշված նահանգներից առանձնացնենք Արևմտյան Հայաստանի բնակավայրերը, ապա կստացվի, որ դրանցում եղել է 248 վանք և եկեղեցի: Մինչդեռ միևնույն տվյալները մանրամասնված հաշվարկով ստորև ներկայացվող նույն փաստաթղթում 800-ից ավելի են: Այսինքն՝ դեռևս թերի հաշվարկով իրականում եղածի 31% է կազմում: Ավելացնենք, որ վերջինը 1914 թ. վիճակագրությամբ 2310-ն (1860 եկեղեցի + 450 վանք) է: Բնականաբար սա Օսմանյան կայսրության կողմից բացահայտ խաբեության քաղաքականության արդյունք էր: Իրական պատկերը ստանալու համար տվյալ բացը պետք է լրացվի: Այնուամենայնիվ, նշենք, որ Ա.Սաֆրաստյանի կողմից ներկայացված տվյալ փաստաթղթերի կիրառական կարևորությունն այն է, որ այսօր Էրզրումի, Մուշի և Սասունի, Բիթլիսի, Խարբերդի, Սեբաստիայի և այլ բնակավայրեր այցելելիս, այն թեկուզ թերի, բայց որոշակի ուղղեցույցի նշանակություն ունի: Ուշագրավ է, որ Ա. Սաֆրաստյանի թարգմանությամբ ներկայացվող հուշարձանացուցակներում ներկայացված են նաև ամեն տարածքին «հաշվառված» սրբավայրերի անվանական և տեղագրական տվյալները: Այսպես՝

[184] Բնակավայրերի հետ փակագծերում ցույց տրված թվերը վանքերի և եկեղեցիների քանակությունն է:

ա/ Առաջին հոդվածում ներկայացվել են՝ Ստամբուլն (քաղաքի (39) և շրջակայքի (8) ու Էզրումի նահանգը Երզնկայի մի հատվածով (77) հուշարձան)[185]:

բ/ Երկրորդ հոդվածում ներառվել են Էրզրումի նահանգի շարունակությունը, ընդգրկելով Երզնայի և Քեմախի եկեղեցիների ու վանքերի ցանկերը (43), Քղին (47), Երզնկայի մերձակա Ռիֆահիյեն (5) և Փելումերին (6), Բաբերդը (57): Նույն հոդվածում են նաև Բիթլիսի (Գենջ (26), Մուշ (82)) և Խարբերդի (Չարսանջաք և շրջակայից (31+ 22), Դերսիմ (28)) նահանգները[186]:

գ/ Երրորդ հոդվածում շարունակվում է Խարբերդի նահանգը՝ ներառելով Ակնն ու շրջակայքը (17+ 11), ինչպես նաև Արաբկիրը (3): Հաջորդաբար ներկայացվում է Դիարբեքիրի նահանգը (Դիարբեքիր քաղաք (108))[187] :

դ/ Չորրորդ հոդվածում՝ սկզբում ներկայացվել է Փալու քաղաքի եկեղեցիները

(38): Նույն հոդվածում ընդգրկված է նաև Սեբաստիայի նահանգը (Սեբաստիա քաղաք (64), Քերուն (5), գյուղերի եկեղեցիները (64))[188]:

ե/ Հինգերորդ հոդվածում ներկայացվում են Սեբաստիայի նահանգի եկեղեցիները, այդ թվում՝ Դիվրիկ քաղաքի (20), Քերունի գյուղերի (5), Ամասիա սանջակի (12), Թոքատի սանջակի և հարակից (15+17) սրբավայրերը[189] :

զ/ վեցերորդ հոդվածում ներկայացվել են Տրապիզոնի նահանգի սրբավայրերը (Տրապիզոն քաղաք (63), Կիրասուն (3), Ջանկ կամ Սամսոն քաղաք (43) և գյուղեր (4)), Անկարայի նահանգի (Յոզղատ (44), Անկարա քաղաք (5))[190]:

է/ Յոթերորդ հոդվածում ներառված է Էրմիշե (Արմաշի) տարածքը, որն ընդգրկում է Արմաշի սրբավայրերը (2), Ադա-

---

185 Սաֆրաստյան Ա., նշվ.աշխ., Էջմիածին Թ.Ա, էջ 40-47:
186 Նույնի, նշվ.աշխ., Էջմիածին, 1965, Թ. Բ-Դ, էջ 174-187 :
187 Նույնի, նշվ.աշխ., Էջմիածին, 1965, Թ.Ժ, էջ 43-48:
188 Նույնի, նշվ.աշխ., Էջմիածին, 1966, Թ.Բ, էջ 38-44:
189 Նույնի, նշվ.աշխ., Էջմիածին, 1966, Թ. Գ, էջ 57-60:
190 Նույնի, նշվ.աշխ., Էջմիածին, 1966, Թ. Զ, էջ 41-47:

նայի նահանգը (Ադանա քաղաք (25), Ուրֆայի սանջակը (5), Խուդվենդիգյարի նահանգը (Խուդվենդիգյար (7), գյուղերի ե-կեղեցիները (4), Բրուսա (5))[191]:

ը/ Ութերորդ հոդվածում շարունակվում են Բրուսայի գյուղերի սրբավայրերի ցանկը (11), Բոլիի սանջակը (5), Քոթահիայի սանջակը (7), Կոնիայի նահանգը (Կոնիա քաղաք 4 եկեղեցի), Կասթեմոնուի նահանգը (Կասթեմունի կազա (7), Բանդըրմա (՞), Էդիրնե (4), Մոսուլ (՞), Բաղդատ (՞), Բիլեջիկ (3), Բեյրութի նահանգ (3), Այնթապի սանջակ (4), Հալեպի նահանգ (Ջըսըր Շուղուր (9), Հալեպ քաղաք (4), Անթաքիա (7)[192] և այլն:

Բնականաբար, Ա. Սաֆրաստյանի հոդվածաշարը մեծ կարևորություն է ներկայացնում, քանի որ դրանով բացահայտում է Օսմանյան կայսրության ծրագրված «մշակութային ե-ղեռնի» քաղաքականությունը:

Հաջորդ հայագիտական մեծ ներդրումը պատկանում է Հ. Հ. Ոսկյանի աշխատություններին, որոնք այլ ենթատեքստ ունեն: Երախտավորի հրատարակությունները հատկապես խոր-բանում են Հայաստանի վանքերի պատմության, տեղագրության ու հետազոտության հիմնահարցերում: Վիեննայում Մխիթարյան մատենաշարով հրատարակված «Վասպուրա-կան-Վանի վանքերը», մաս 1-3 (1940-1947 թթ.), «Սեբաստիայի վանքերը» (1946թ.), «Բարձր Հայքի վանքերը» (1951 թ.), «Տա-րոն-Տուրուբերանի վանքերը» (1953 թ.), «Կիլիկիայի վան-քերը» (1957 թ.), «Գուգարքի վանքերը» (1960 թ.), «Սեբաս-տիայի, Խարբերդի, Դիարբեքիրի և Տրապիզոնի նահանգնե-րու վանքերը» (1962 թ.), ինչպես նաև անտիպ մնացած «Արա-ռատյան նահանգի վանքերը», «Սյունյաց աշխարհի վան-քերը», «Հայ վանքեր ի սփյուռս» և այլ աշխատությունները մեծ ներդրում են հայագիտական և ճարտարապետական ուսում-նասիրություններում: Հանդիսանալով ուսումնասիրական շտեմարաններ, մատնանշում են Հայոց ցեղասպանության տարիներին լքված գույքերի կենտրոնները և մշակութային

---

[191] Սաֆրաստյան Ա., նշվ.աշխ., էջ միածին, 1966, Թ.Ը, էջ 60-63:

[192] Նույնի, նշվ.աշխ., էջ միածին, 1966, Թ.Թ-Ժ, էջ 106-114:

հարստության կորուստի ծավալները: Նշված աշխատություններում արտացոլված վանական համալիրները ոչ միայն նկարագրական և պատմամատենագիտական տեղեկություններ են պարունակում, այլև ներառում են ցուցակագրական վավերագրեր և քաղաքային ու համաերկրային կյանքում դրանց ունեցած դերի փաստեր: Հ. Ոսկյանի հուշարձանացուցակներում արձանագրված վանքերը ներկայացված են և՛ մատենագրական տվյալներով, և՛ իրավիճակային տեղեկություններով, որոնք կարևոր ու անհրաժեշտ են ռեվիտալիզացիոն (վերականգնողական) խնդիրների համար: Հ. Ոսկյանի փաստագրումներն այն գլխավոր հենքն են, որոնց հիման վրա կարելի է ստեղծել հայկական հոգևոր ճարտարապետության ողջ բազան: Հեղինակի տվյալներով թերի ամբողջությամբ փաստագրվել են մեծ քանակությամբ վանքեր, որոնք ունեն հետևյալ թվային տվյալները՝ Վասպուրական-Վանի տարածքից՝ 200, Սեբաստիայի տարածքից՝ 15, Բարձր Հայքի տարածքից՝ 116, Տարոն-Տուրուբերանի տարածքից՝ 48, Կիլիկիայի տարածքից՝ 100, Սեբաստիայի-Խարբերդի–Դիարբեկիրի-Տրապիզոնի միացյալ տարածքներից՝ 129 վանք և այլն: Այս տվյալներն ընդհանրացնելով, վանքերի թիվը կազմում է 506 (Արևմտյան Հայաստան) + 100 (Կիլիկիա), գումարայինը՝ 606 վանք, այն դեպքում, երբ 1914 թ. վիճակագրական տվյալներով այդ թիվը ներկայացվում է 451:

Ընդհանուր առմամբ, առայժմ հեռանկարային թողելով մանրամասն բաղդատական ուսումնասիրությունները և առանց հաշվի առնելու հայկական քաղաքացիական ժառանգությունը, հոգևոր կառույցների ընդհանուր հաշվարկային թիվը Արևմտյան Հայաստանում (առանց Կիլիկիայի)՝ թերի ամբողջությամբ պետք է ընդունել 506 վանք և 2228 մեծ ու փոքր եկեղեցի:

Արևմտյան Հայաստանի տարածքում իրականացված հուշարձանների դաշտային դիտումները

Կ. Պոլսի Հայոց պատրիարքի 1915 թ. հուլիսի 13-ի և 15-ի նամակներում արդեն իսկ տեղեկություններ կան այն մասին,

որ կողոպտվում, քանդվում ու սրբապղծվում են հայկական եկեղեցիներն ու վանքերը: Այսինքն՝ հայկական եկեղեցիների ու վանքերի կողոպուտի ու ոչնչացման գործընթացը կատարվում էր հայերի զանգվածային սպանություններին զուգահեռ: Պոլսի Զավեն պատրիարքը նաև վկայում էր, որ եկեղեցիներից թալանված գույքն արդեն իսկ սկսել էին վաճառել Պոլսի հրապարակներում: Մեծ եղեռնի սկզբնական փուլում Օսմանյան կայսրության 50 շրջաններում կողոպտված, կիսով չափ կամ ամբողջությամբ ավերված հայկական եկեղեցիների թիվը կազմում էր 2050, իսկ վանքերինը՝ 203[193]: Տվյալ մշակութային ջարդը հետագայում դարձավ Թուրքիայի Հանրապետության չհայտարարված քաղաքականությունը: Այս թվային տվյալը ցեղասպանության առաջին տարվա կորցրած գույքի տեղեկատվությունն է, որի մասշտաբը ըմբռնելի է դառնում, եթե համեմատելու լինենք այս բաժնի առաջին մասի ենթադրվող արդյունքի հետ: Հուշարձանների պահպանությանն հարցին ավելի իրական ընթացք հաղորդելու համար կարևոր են ցեղասպանության տարիներին հաջորդող Արևմտյան Հայաստանի դաշտային դիտումները, որպեսզի հնարավորինս ավելի հստակորեն գնահատվեն կորստի ծավալները:

Արևմտյան Հայաստանի հուշարձանների վերաբերյալ տվյալները բազմաթիվ են: Ցեղասպանությանը հաջորդած տարիների այցելությունների համար հիմք են ծառայել կամ անմիջապես առնչվել են վերոհիշյալ և ստորև ներկայացվող հեղինակների աշխատությունները, որոնց հիմքը դրվեց 20-րդ դարի կեսերին և ավելի ուշ կատարված այցելություններից հետո:

Հենրի Լինչի «Հայաստան՝ ճանապահորդական ուսումնասիրությունները»[194] երկհատոր աշխատությունն իր քարտեզագրական և նկարագրական տվյալներով ուղղորդող նշանակություն ունեցավ 20-րդ դարի Հայաստան կատարված այցելություններին: Հ. Լինչի աշխատության երկրորդ հատորում

---

[193] Տես՝ Ահարոնեան Գ., Յուշամատեան Մեծ Եղեռնի, էջ 501: հմմ. Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, նշվ.աշխ, , էջ 60-62:

[194] H.F.B.Lynch, Armenia: Travels and Studies, volumes 1,2, London, 1901.

անմիջապես Անիից և Կարսից հետո անցում է կատարվում դեպի Արևմտյան Հայաստանի նաև ճարտարապետական հարստությունները՝ Արճեշում, Վանում, Ախթամարում, Բաղեշում, Մուշում, Կարինում, Խնուսում, Մանազկերտում, Ախլաթում, Նեմուրթում և այլուր: Այն ճարտարապետական և հնագիտական հեռավորություն ստացավ Վոլտեր Բախմանի[195], Երվանդ Լալայանցի[196], Թորոս Թորամանյանի[197], Նիկողայոս Մարրի[198], Հովսեփ Օրբելու[199] գործունեությամբ և հատկապես մեթոդական հիմքով օժտվեց շնորհիվ Ժոզեֆ Ստրժիգովսկու երկհատոր աշխատության[200]: Փաստորեն հենց ցեղասպանության տարիներին, համաշխարհային ճարտարապետության պատմության մեթոդական կատարելագործմանը զուգահեռը, կազմավորվեց հայկական ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը, որ հիմքը դրեց ինչպես Հայաստանի ճարտարապետության հետազոտությանը ընդհանրապես, այնպես էլ Արևմտյան Հայաստանի հուշարձանների կարևորագույների ամրագրմանը դասընթացներում, ինչը մեծ նշանակություն ունի ցեղասպանության տարիներից փրկված հուշարձանների պահպանության գործընթացները կազմակերպելու համար: Չհաշված Թ.Թորամանյանի չափագրական ուղևորությունները, Վ.Բախմանի ու Ժ.Ստրժիգովսկու հետախուզական արշավները, Դաշտային դիտումները հիմնականում կատարվեցին 20-րդ դարի երկրորդ կեսին, որոնց առաջ-

---

195 Տես Walter Bachmann, Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan, Lepzig 1913.

196 Տես Լալայանց Երվանդ, Վասպուրականի նշանավոր վանքերը, Ազգագրական Հանդես, 1910 էջ 197-212, 1911, էջ 37-100 և 1912, էջ 101-106: Ինչպես նաև այլ գավառներին նվիրված հրատարակությունները:

197 Տես Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հտ.1,2, Երևան՝ 1942 և 1948: & այլ հրատարակությունները:

198 Марр Н. Я., Ани, Ленинград. Москва 1934 և այլ աշխատությունները:

199 ОрбелиЪ И. А., Избранные труды, том 1, Москва, 1968 և այլ աշխատությունները:

200 Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, teils 1,2, Wien, 1918 և այլ աշխատությունները:

նեկներից են 1960-ական թվերին հրատարկված հետևյալ գիտնականների գործերը:

Ժան Միշել Թիերրիի արշավախումբը և ֆրանսիական ուսումնասիրությունները: Ժ. Մ. Թիերրին արդի ժամանակների առաջին հեղինակներից էր, որ ուսումնասիրվող բնագավառում նկատելի ներդրում ունեցավ: Նա 1960-ական թվականներից սկսյալ պարբերաբար հրատարակում էր Արևմտյան Հայաստանի ճարտարապետությանը նվիրված փաստագրական և ընդհանրացնող բնույթի աշխատություններ, որոնցում մեծ տեղ են գրավում Տարոնի և Վասպուրականի հուշարձանները: Նշվածները սկզբում հոդվածների ձևով հրատարակվել են ֆրանսիական և այլ լեզուներով հանդեսներում[201] և հաջորդաբար վերածվել մենագրությունների՝ 1.Monuments armeniens de Haute–Armenie, Paris 2005. 2. L'Armenie au Moyen Age, Paris 2000. 3.Repertoir des monasteres armeniens, Paris 1993. 4. Monuments armeniens du Vaspurakan, Paris 1989. 5. Les Arts Armeniens, Paris 1987. 6. Le Couvent aremnien d'Horormos, Paris 1980. 7. La Cathedral des Saints –Apotres de Kars, 930-943, Paris 1978 և այլն:

Ժ. Մ. Թիերրիի վերոհիշյալ աշխատություններն առանձնապես կարևորվում են ոչ միայն մեթոդական փաստագրությամբ, այլ նաև բազմատասնյակ չափագրություններով, որոնք մինչ այդ գերակշռող մասով չկային: Թիերրին այդ նպատակով մատենագրական տեղեկությունների հետ օգտվում է տեղագրություններից և իրադրող գծագրերով հարստացնում տեղեկատվությունը:

Իտալական ուսումնասիրությունները և Միլանոյի պոլիտեքնիքի տվյալները:

Ժ.Մ. Թիերրիի գործունեությանը զուգահեռ Արևմտյան Հայաստանի հուշարձանների ուսումնսիրության աշխույժ գործընթաց սկսվեց հայ-իտալական «Հայ արվեստի ուսումնասիրության միջազգային գիտաժողովների» շրջանակներում: Եղան բազմաթիվ նոր հրատարկություններ, ներդրվեցին բազ-

---

[201] Տես Revue des etudes Armeniennes (1967-1977, 1980, 1985), Հանդես Ամսօրյա (1975), Chaier Archealogique (1976), Archealogia (1979), Բազմավեպ (1984) և այլն:

մաթիվ գիտնականների կարողությունները, ինչպես՝ Պաոլո Կունեոն, Ալպակո Նովելլոն, Թոմազո Բրեչիա ֆրաթադոկին, Ֆրանչեսկո Գոնդոլֆոն, Ֆեդերիկո Դե Մաֆֆեյը, Ադելաիդա Լալա Կոմնենո և շատ ուրիշներ: Սա իսկապես հայ-եվրոպական գիտական համագործակցության նոր զարթոնք էր: Դրանում առանձնապես արդյունավետ պետք է համարել Պաոլո Կունեոյի գործունեությունը և նրա հեղինակակցությամբ իրականացված հայկական ճարտարապետության գլխավոր հանրագիտարանատիպ հրատարկությունը[202]: Աշխատությունում առաջին անգամ ներկայացվում են Արևմտյան Հայաստանի նորհայտ հուշարձանները, որոնք դիտարկվում են հայկական ճարտարապետության համատեքստում: Միևնույն մոտեցմամբ են Պ.Կունեոյի մի շարք այլ աշխատությունները, ինչպես օրինակ՝ «Վաղ միջնադարյան երկու նորհայտ բազիլիկներ Վասպուրականում» (1973), «Սորադերի Սբ. Էջմիածին եկեղեցին Վասպուրականում» (1968), «Հայաստանի վաղ քրիստոնեական եկեղեցիները» (1973), «Հոգյաց վանքի, Խնձորգինի և Թուխի բազիլիկաները» (1973), Անիի միջնադարյան ճարտարապետության դպրոցին նվիրված աշխատությունը (1977)[203] և այլն: Սա և վերևում նշված հայկական ճարտարապետության հանրագիտարանը դետալների դասակարգմամբ և քարտեզագրական հիմքերով, մեթոդական խորք ստեղծեցին հայկական ճարտարապետության ուսումնասիրությունների հետագա զարգացման համար, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի դաշտային դիտումներով բացահայտված նյութերի ներգրավմանը հայկական ճարտարապետության համատեքստում:

Անգլիական ուսումնասիրությունները և Թոմաս Սինկլերի քառահատոր աշխատությունը[204], դաշտային դիտման ա-

---

[202] Տես Paolo Cuneo, Architettura Armena,….

[203] Paolo Cuneo, L'Architettura della scuola regionale di Ani Nell'Armenia medieval, Roma 1977.

[204] Sinclair T. A., Eastern Turkey: An Architectural & Archaeological Survey, volume I (London, 1987), vlume 2 (London 1988), volume 3 (London, 1989), volume 4 (London, 1990).

ռումով մի քայլ ավելի առաջ է: Այն 1980-ական թթ. դրությամբ Թուրքիայի արևելյան շրջաններում եղած հուշարձանների համատեքստում նաև հայկական մի շարք հուշարձանների այցելության ուղեցույց է: Ինչպես հեղինակն է վկայում՝ մշակույթների բազմազանությունը Թուրքիայի արևելյան շրջանները դարձնում է հնագիտական և արվեստաբանական հետազոտության աշխարհի կարևոր տարածքներից մեկը: Չորս հատորներում ամփոփված են տարածքի կարևորագույն հուշարձանները, որ արդյունք է ութ տարիներում կատարված հեազոտական ճանապարհորդության: Ամեն մի հուշարձան ներկայացվել է՝ աշխարհագրական դիրքով, տեղանքի լիարժեք նկարագրությամբ, ինչպես նաև տրանսպորտային հասանելիության մանրամասն նկարագրությամբ, կարևորագույն աղբյուրների նշումով և լուսանկարչական և գրաֆիկական պատկերազարդումներով:

Թ. Սինկլերի հետազոտությունում ձեռնպահ արձանագրվում է Թուրքիայի արևելյան տարածքների կամ Արևմտյան Հայաստանի և նրա հարակից տարածքների պատմական հուշարձանները: Իրականում աշխատության անվանումներին և պատկանելությանը, հայկական տեսանկյունից, պետք է քննական մոտեցում ցուցաբերել: Ուղղակի այստեղ քննարկվում է հայկական հուշարձանների ներկայիս դաշտային դիտումների փաստը, առանց ձեռնամուխ լինելու նրանց պատկանելության խնդիրներին: Թ.Սինկլերի աշխատության ընտրությունը, նպատակային է, որովհետև ի դեմս տվյալ աշխատության, կրճատվում է մի շարք աշխատությունների ներկայացումը, ինչպես օրինակ Թուրքիայում ուսումնական պաշտոններ զբաղեցրած Ալբերտ Գաբրիելի[205], Սիրիլ Մանգոյի[206] և այլոց հրապարակումները:

Առաջին հատորում կիզակետում է վերցված՝

[205] Albert Gabriel, Voyages archeologiques dans la Turquie Orientale, tom 1&2, Paris 1940.

[206] Cyril Mango, Byzanz, Weltgrschicte der Architecktur, Stuttgart 1986.

1/ Ուրատուն և Վասպուրականը, որ ներառում է՝ Թոփ-բակալեն, Վանը, Աղթամարը, Վարագավանքը, Ախլաթի և Աղ-բակի (Հաքքարի) տարածքի նեստորական վանքերը:

2/ Կարսը և Արարատը, որ ներառում է՝ Կարս քաղաքը և Առաքելոց եկեղեցին, միջնաբերդը, ևս այլ եկեղեցիներ որոնք մզկիթների են վերափոխված: Առանձին մաս է կազմում պատ-մական Անի մայրաքաղաքը: Մանրամասնորեն ներկայացվել են քաղաքի պարիսպները, միջնաբերդը, քաղաքի հայտնի ե-կեղեցիները, բաղնիքը, Հոռոմոսի վանքը, Մրենը, և այլք[207]: Նույն մանրամասնությամբ ներկայացվել է Աղրին և Բայազե-տը, որտեղ առկա են զանազան աշխարհիկ, ամրաշինական և ե-կեղեցական շենքեր:

Երկրորդ հատորում ընդգրկված են՝

3/ Տայքի տարածքը՝ Իշխանի, Օշքի և Հոհու վանքերը:

4/ Պոնտոսը և Տրապիզոնի միջնադարյան հունական կայսրությունը և զանազան բյուզանդական հուշարձանները:

5/ Կարինն ու Սալթուքիդ թագավորության հուշարձաննե-րը: Առանձնապես կարևորվում է հայ-սելջուկյան փոխառն-չությունները, առանձնակի շեշտադրելով տարածաքի հայկա-կան հուշարձանները:

6/ Սեբաստիան և Թոքատը և նրանցում եղած սելջուկյան հուշարձաններն ու հայկական առանչությունները:

7/ Անդր Տավորսի բյուզանդական ամրոցները և նրանց տարածքային կապերը միջնադարյան ժամանակաշրջանում և 19-րդ դարում:

8/ Վերին Եփրատի Երզնկա և Դիվրիկ քաղաքների հայ-կական և այլ հուշարձանները, ինչպես նաև 9-10-րդ դարերի սահմանային ամրոցները և այլն:

Երրորդ հատորում փաստագրվել են՝

9/ Տավրոսյան լեռնաշղթայի արևելյան և հարավային տա-րածքները, որ սկսելով

Վերին և Ստորին Եփրատներից, ներառում է Խարբերդի հուշարձանները, Մալաթիան և Քեբանի տարածքն ու նրա ե-կեղեցական ու վանքային հուշարձանները:

---

[207][207] Թ. Սինկլեր, հտ.1, 356-377.

10/ Տիգրիսի տարածքը, որ Տավրոսից երկարում է դեպի Տուր-Աբդինի սիրիական վանականության պատմական կենտրոնը:

11/ Դիարբեքիրի և Մարդին (Նիզբին) քաղաքներն ու նրանց շրջակա տարածքները: Ներկայացվել են մի շարք քրիստոնեական և իսլամական հուշարձաններ, քանի որ տարածքը միջնադարում եղել է նաև Արթուքիդների թագավորության տիրույթը:

Չորրորդ հատորում ներկայացվել են՝

12/ Կոմագենեի հելլենիստական թագավորությունը:

13/ Խաչակրաց մայրաքաղաք Եդեսիան կամ Ուրֆան, ներառյալ մի քանի իսլամական հայտնի հուշարձանները:

14/ ուսումնասիրության վերջին մասը նվիրված է Հաթայի տարածքին, որ կիզակետում է վերցնում պատմական Անտիոքը և նրա սելուսիդյան, հռոմեական և բյուզանդական հուշարձանային մնացորդները, ինչպես նաև մերձակայքում գտնվող խաչակրաց ամրոցները:

Փաստորեն ստացվում է, որ Թ. Սինկլերի աշխատությամբ, Հայոց ցեղասպանության տարիներին լքված շուրջ 100 հուշարձանները որպես այցելության վայրեր մուտք են գործում «Արևելյան Թուրքիայի» պատմական տուրիզմի ցանկերում, տրվում է դրանց այսօրվա մատչելիության ու այցելության բոլոր նախադրյալները:

Արևմտյան Հայաստանի հայկական ճարտարապետության հուշարձանների դաշտային դիտումների մյուս ալիքը վերաբերում է 1980-ականներին և հաջորդող տասնամյակներին: Այդ առումով առանձնապես կարևորվում են ԱՄՆ-ի և ՀԱՅՃԱՐ-ի գործունեությունները, որոնցում ուղղակի թե անուղղակի մասնակցել են նաև Հայաստանի մասնագետները: Տվյալ ուսումնասիրություններում առանձին խումբ է Կիլիկիայի հայկական թագավորության ժառանգության ուսումնասիրությունը: Պաշտամունքային կառույցները ինչ որ չափով ուսումնասիրված են հ.Հ. Ոսկյանի համապատասխան աշխատությունում[208]: Նրանց դաշտային դիտումների կիզակետում է

[208] Տես Հ. Համազասպ Ոսկեան, «Կիլիկիայի վանքերը», Վիեննա, 1957:

գտնվում քաղաքներն ու ամրաշինական ժառանգությունը: Քանի որ հայկականի հետ մեկտեղ դրանցում առկա են բյուզանդական, խաչակրաց, արաբական, սելջուկյան, օսմանական ժամանակաշրջաններին վերաբերող շերտերուստի դրանց նկատմամբ հետաքրքրությունների շրջանակը լայն է և ի հայտ են գալիս ամբողջապես նոր աշխատություններ[209]: Վերջիններից առանձնապես դաշտային դիտումների առումով կարևորվում են՝ Ռոբերտ Էդվարդսի և հ. Միքայել Հովհաննեսյանի աշխատությունները: Առաջինը անմիջապես լինելով ստորև ներկայացվող պրոֆեսոր Վազգեն Բարսեղյանի ղեկավարությամբ հրատարկված միքրոֆիշերի շարքում, այստեղ կներկայացվի միայն հ.Մ. Հովհաննեսյանի

«Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները» (Վենետիկ- Ս.Ղազար, 1989) աշխատության տվյալները: Գիրքը, հեղինակի «Հայաստանի բերդերը» (Վենետիկ-Ս.Ղազար 1970) աշխատության շարունակությունն է և որպես Կիլիկյան տարածքի ուսումնասիրություն՝ հ. Հ. Ոսկյանի աշխատության «Կիլիկիայի վանքերի» ամբողջացումը: Երկու աշխատություններն էլ ընդարձակում են հ. Ղ. Ալիշանի «Սիսուան» հատորում ամփոփված ցեղասպանությունից առաջ եղած տեղեկությունները[210], որ հիմքում ուներ նաև Վիկտոր Լանգլույի կիլիկյան տեղագրությունները[211]:

Ի տարբերություն Ալիշանի հ. Մ. Հովհաննիսյանի հետազոտությունում պատմավավերագրական տեսանկյունից ընդգրկվել են 115 բերդերի փոխարեն 150 բերդեր, որոնք մեծամասամբ փաստագրված են: Մինչդեռ հ.Ղ.Ալիշանի աշխատությունում փաստագրված նյութը շուրջ 40 տասնյակ է: Ուշագրավ է, որ Հ. Մ. Հովհաննեսյանի աշխատությունում արտացոլված են նաև 20-րդ դարի կիլիկյան հատազոտությունների արդյունքները:

---

[209] Այդ կապակցությամբ հատկապես տես հ. Մ.Հովհաննեսյանի Կիլիկիայի բերդերի աշխատության մատենագիտությունը, էջ 618-619:

[210] Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ – Ս.Ղազար 1885:

[211] Victor Langlois, Voyages dans la Cilicie, Paris 1861.

ԱՄՆ-ում կատարված Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և առհասարակ ցեղասպանության տարիներին կորցրած գույքի կապակցությամբ կատարված հրապարակումներն իրականացվել են զանազան հայագիտական կենտրոններում, որոնցից առանձնապես ուշագրավ են՝ Վաշինգտոնի «Դյումբրտրն Օքս Պարք» գիտահետազոտական կենտրոնը, պրոֆեսոր Վ. Բարսեղյանի նախաձեռնությամբ Տրոյ Նյորքի և Զորյան գիտահետազոտական հաստատությունները, ինչպես նաև Քալիֆորնիայի համալսարանը և այլք:

Նյու Յորքյան հրատարակություններից առանձնապես կարևոր է միկրոֆիշերի 8 հատորյակը: Այն իր տեսակի մեջ եզակի աշխատութուն է, որ փաստագրումը կատարում է արխիվավորման սկզբունքով: Ութ հատորներով ամփոփված են հայկական պատմական ճարտարապետության ներկայիս գոյություն ունեցող հուշարձանների փաստագրությունը: Հուշարձանացանկերում և նրանց մասին տեղեկատվությունը ընդգրկում է Արևելյան և Արևմտյան Հայաստանը միասնաբար: Աշխատությունը միջազգային ժառանգության հավաքածուի հայկական մասն է, որ արխիվացվեց Տրոյ Նյու Յորքի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Միկրոֆիշերի բազմահատորյակը լրացնելով Թիերրիի ճանապարհորդությունը, հող պատրաստեց Պ.Կունեոյի և հեղինակակիցների հայկական ճարտարապետության հանրագիտրանատիպ հատորին: Աշխատութան առաջին հինգ հատորներում ընդգրկված են Հայկական ՍՍՀ-ի և Արևելյան Հայաստանի, պատմական Վասպուրականի (Վանա լճի և Մոկքի) և Կիլիկիայի Միջերկրականի ափերի տարածքները, որտեղ գրավված տարածքներից ներգրավված հուշարձանները ունեն հետևյալ թվային տվյալները:

1. Արարատի տարածքից՝ (Աղրի և Կարս) 5 հուշարձան:
2. Անիի տարածքից 40 և Կարսի տարածքից՝ 7 հուշարձան:
3. Վանալճից և Վանա լճի ավազանից ընդգրկված հուշարձանները՝ լճի կղզիները (4), Վան քաղաքը (3), Ուստան կամ

Գավաշը (11), Վանա լճի հարավային ափերը (9), Շատախը (12), Մոքսը (13), Խիզանը (9), Բաղեշը (3), Դատվանը (6), Մուշը և Սասունը (10), Խլաթը (4), Արծկեն (2), Արճեշը (3), Մանազկերտը (մոտ 15):

4. Էրզրումի՝ Կարինի և Արդվինի տարածքից՝ ընդհանուր (2), Խնուսից (մոտ 15), Կարին քաղաքից (20), Օլթու-Պենեկ (9), Օլթու-Թորթում (23), Արդահան-Արդվին (20).

5. Կենտրոնական Թուրքիայի տարածաքից՝ Օնդհանուր (8), Մալաթիա (2), Էլազիկ (5), Քղի (19),Երզնկա (9), Բաբերդ (10),

6. Պոնտոսի տարածքից՝ Գյումուշհանե (14), Շապինգարահիսար և Կերասուն (20), Տրապիզոն (5):

7. Կիլիկիայի տարածքից 151 հուշարձան:

Ընդհանուր առմամբ, առանց Կիլիկիայի տարածքն ընդգրկելու, ստացվում է 437 հուշարձան:

Պարզ է, որ Միկրոֆիշերի հավաքածուի մեծ ներդրումը Կիլիկիայի տարածքից է, որ ներառում է Ռոբերտ Էդուարդսի աշխատությունների տեղեկատվությունը ընդհանրապես: Փաստորեն հուշարձանացանկում ներգրավված են պաշտամունքային շենքեր, որոնք ավելի են քան նույն հեղինակի հույժ կարևոր Կիլիկյան Հայկական թագավորության ամրաշինությունը աշխատության մեջ եղածներից[212]: Հատկանշական է, որ և՛ Հելլենկեմպերի, և՛ Էդուարդսի աշխատության մեջ առկա են պատկերազարդումներով նյութերը, համեմատած մյուս աշխատությունների հետ՝ միանգամայն ճարտարապետական են:

Ցավոք, Բոստոնի և Տորոնթոյի Զորյան ինստիտուտը, ինչպես նաև «ԱՆԻ» գիտահետազոտական կենտրոնը իրենց տեղեկատվական նյութերում լքված ճարտարապետական գույքին վերաբերյալ նկատելի ներդրում չունեն:

Լոս Անջելեսի Քալիֆորնիայի համալսարանի բազմաթիվ հրատարկություններից մեծ կարևորություն ունի «Հայկական պատմական քաղաքներ և գավառներ» 14 հատորյակը, որոն-

[212] Edwardsm R., The Fortification of Armenian Kingdom of Cilicia, Washington D.C. 1987.

ցից յուրաքանչյուրը հատկացված լինելով առանձին տարածքի, սկզբում անցել է գիտաժողովով և նոր հրատարակվել անգլերեն լեզվով և հիմնականում Ռիչարդ Հովհաննեսյանի խմբագրությամբ: Ներկայացվող հրատարակությունները լինելով բազմապրոֆիլ, ամեն մի հատորում ունեն ճարտարապետական գույքին նվիրված մի քանի հոդվածներ: Առանց մանրամասնությունների մեջ թափանցելու, նշենք ամեն մի հատորի տարածքային ընդգրկողությունը: Առաջին հատորը նվիրված է Վան/Վասպուրականի տարածքին և հրատարակվել է 2000 թ.: Երկրորդ հատորը նվիրված է Բաղեշ/Բիթլիսի և Տարոն Մուշի տարածքին և հրատարակվել է 2001 թ.: Երրորդ հատորը նվիրված է Ծոփք/ Խարբերդի տարածքին և հրատարակվել է 2002 թ.: Չորրորդ հատորը նվիրված է Կարին/ Էրզրումի տարածքին և հրատարակվել է 2003 թ.: Հինգերորդ հատորը նվիրված է Սեբաստիա-Սիվաս և Փոքր Հայքի տարածքին և հրատարակվել է 2004 թ.: Վեցերորդ հատորը նվիրված է Տիգրանակերտ/ Դիարբեքիրի և Եդեսիա/ Ուրֆայի տարածքին, հրատարակվել է 2006 թ.: Յոթերորդ հատորը նվիրված է Կիլիկիայի տարածքին և հրատարակվել է 2008 թ.: Ութերորդ հատորը նվիրված է Տրապիզոնին և Սև ծովի հայկական համայնքներին, հրատարակվել է 2009 թ.: Իններորդ հատորը նվիրված է Կ.Պոլսի հայկական համանքին և հրատարակվել է 2010 թ.: Տասներրորդ հատորը նվիրված է Կարսին և Անիին, հրատարկվել է 2011 թ.: Տասնմեկերորդ հատորը նվիրված է Զմույռնիային (Իզմիր) և հրատարկվել է 2012թ.: Տասներկրորդ հատորը նվիրված է Կեսարիային (Կայսերի) և Կապադովկիային, հրատարակվել է 2013 թ.: Տասներրորդ հատորը նվիրված է Փոքր Ասիայի հայկական համայնքներին և հրատարակվել է 2014 թ.: Տասնչորրորդ հատորը նվիրված է Միջերկրական ծովի հյուսիսարևելյան տարածքի համայնքներին՝ Մուսադաղ-Դյորտյոլ-Քեսաբ և հրատարակվել է 2016 թ.:

ՀԱՅՃԱՐ-ը և միջազգային հայասիրական նոր միջոցառումները՝ Անիի թանգարանացումը.

ՀԱՅՃԱՐ-ը՝ «Թուքիոյ սահմաններու և արտասահմանի երկրներու մէջ գործող հայ ճարտարապետ և ճարտարագէտ-

ները մի երդիկի տակ ամփոփելու նպատակաւ մեկտեղուած խմբակը իր առաջին ժողովը գումարած է 24 ապրիլ 1999 թ.: Ժամանակի ընթացքին մասնակիցներու քանակը մեծացած և վերջապէս 27 յուլիս 2007 թ. միութեան հանգամանք ստանալով պաշտօնապէս հիմնուած Հայճար անուան ներքև»[213]: Միության գործունեության մեջ է նաև հայկական պատմական հուշարձանների պահպանության հնարավոր միջոցառումները: Վերջին տասնամյակներին թուրքական պետության և միջազգային կազմակերպությունների հետ կատարված ուշագրավ իրականացումներ են՝ Աղթամարի տաճարի վերականգնումը, ընթացքի մեջ եղած Անի մայրաքաղաքի տարածքի թանգարանացումը, Միջազգային հուշարձանային հիմնադրամի հետ «Անին իր տարածքային համատեքստում», ինչպես նաև «Եվրազիա» և «Հրանդ Դինք» հիմնադրամների համագործակցությամբ՝ Մուշի, Սեբաստիայի, Խարբերդի, Կիլիկիայի և այլ տարածքների դաշտային դիտումները և կարևորագույն պատմաճարտարապետական համալիրների և շենքերի ամրակայման և հազվագյուտ դեպքերում նաև վերականգման ձեռնարկումը:

«Երկիր և մշակույթ» կազմակերպության[214] պաշտոնական կայքում նշված է.

«Գիտակցելով թէ ոչ մէկ հատուցում կրնայ այդքան մեծ ոճիր մը հակակշռել, բայց գիտակցելով նաեւ թէ անոր հատուցումը, ինչ հիմք ալ ստանայ ան, առաւել եւս անհրաժեշտ կը դառնայ, բնական իրավունքի թելադրանքով իսկ ներկայ յայտարարութեամբ կը կրկնենք «2015 Հատուցում համախմբութեան» եւ Երկիր եւ Մշակոյթ համազգային կազմակերպութեան Թուրքիոյ ներկայացուցած հատուցման պահանջը. այն է վերադարձը գրաւուած բոլոր հայ ազգային կալուածներուն եւ յուշարձաններուն՝ վանքերուն, եկեղեցիներուն, գերեզմանոցներուն, հիւանդանոցներուն, դպրոցներուն եւ անոնց պատկանող սեփականութիւններուն, նշուած ձեւերով եւ միջոցներով:

---

213 Տես ՀԱՅՃԱՐ համացանցային կայք՝ http://haycar.com/hy/.

214 Նյութը քաղված է Երկիր մշակույթի պաշտոնական կայքից: https://www.collectif2015.org/fr/

Բացի գործուած յանձանքին ծածկաբար տրուելիք հաւանութենէն կամ լոկ բրտութեամբ ձեռք բերուած շահ մը իրաւացի նկատելէն, ոչինչ կրնայ հակառակիլ հատուցման այս յատկանշական արարքին, որ անհրաժեշտօրէն կ՚ուղղուի նաեւ բոլոր անոնց՝ որոնք, յառաջդիմութեան ձգտող աշխարհի մը մէջ, լիովին կ՚արժեւորեն մարդկային ընկերութիւններու մշակութային ժառանգը, ընկալուած իր բազմազանութեամբ եւ իր համամարդկային նկարագրով»[215]:

«Խտրական եւ անհանդուրժողական կեցուածքներէն անդին, արդարացման կամ ժխտողականութեան փորձութիւններէն անդին, կը հաւատանք որ պիտի յաղթեն միտքն ու բանականութիւնը, որովհետեւ անոնք իրենց տեղն ունին Թուրքիոյ մէջ, ինչպէս այլուր: Այս համոզումով է որ կ՚ակնկալենք Թուրքիոյ իշխանութիւններէն՝

• որ վերադարձնեն Հայ Ազգին իրմէ յափշտակուած կալուածները, ասոր համար փոխ հատուցում ապահովելով առընչուած երրորդ անձերուն.

• որ յանձն առնեն միաժամանակ այդ ստացուածքները վերարժեւորել, նորոգել, վերականգնել կամ, ի հարկին, վերաշինել, այս գործին յատկացնելով միջազգային նպաստներու բաց՝ յատուկ սնտուկ մը.

• որ այսպիսով կատարեն շատ երկար ատեն եւ ի զուր յետաձգուած արդարութեան եւ եղբայրակցութեան պարտականութիւն մը:

Վերջապէս կոչ կ՚ուղղենք բոլոր անոնց որ կը մտահոգուին նման ժառանգի մը փրկութեան եւ ապագային համար, որպէս զի անվեհեր յարակցին ներկայ կոչին»:

Այսպիսին են «Երկիր և մշակույթ» կազմակերպության նպատակն ու խնդիրները, որ առիթ տվեց պատրաստելու Օսմանյան կայսրության տարածքի հայկական պատմական հուշարձանների վերաբերյալ վավերագրեր: Այդ ուսումնասիրությունները թվով 96-ն են, որոնք բնականաբար ամբողջա-

[215] Նույն տեղում:

կան չի կարելի համարել[216]: Փաստորեն, ներկայացված են միայն այցելություն կատարված հուշարձանները:

Ամփոփելով նշենք, որ 1960-ական և հաջորդաբար 1980-ական թթ. և մինչև օրս շարունակվող Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարածքներում գոյատևող հուշարձանների դաշտային դիտումները հայկական ժառանգության գոյատևման փաստաթղթեր են: Այդ հուշարձանները համարելով միջազգային հարստության բաղկացուցիչներ և տարածքային ժառանգության օրինակներ, հնարավորին սահմաններում, որոնվում են միջոցներ դրանց ստաբիլիզացման (ամրակայման) և կոնսերվացման (պահպանման) համար: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ կազմակերպված միջոցառումները միահամուռ ապացուցում են մի իրողություն, որ թուրքական պետությունը միանգամայն անտարբեր վերաբերմունք է դրսևորում այդ հուշարձանների ճակատագրի և պահպանության կապակցությամբ: Կարելի է հաստատագրել, որ XX դ. դաշտային դիտումները, գոյություն ունեցող տեղագրական տվյալների վրա չնչին նյութ են ավելացնում, բայց մի իրականություն ակնհայտ է, որ դաշտային դիտումները փաստագրական՝ գծագրական, չափագրական, լուսանկարչական մեծ նյութ ներմուծեցին հայկական ճարտարապետության պատմության գոյություն ունեցող շտեմարանում:

Արևմտյան Հայաստանի ճարտարապետության լքված գույքի գնահատումը և հատուցման մեխանիզմի ներկայիս դրությունը

Հայկական ճարտարապետության լքված գույքի նյութական արժեքի գնահատման համար կան բազմաթիվ մասնագիտական մեթոդներ, որոնք իրականության կոչելու համար խնդրո առարկա բնակավայրերի և հուշարձանների փաստա-

---

[216] Ակնարկվող հուշարձանների համար տես կայքի 100 հուշարձան մասը: Կայքի ընդհանուր վերնագիրն է Localités et biens cultuels arméniens de la Turquie ottomane.Un patrimoine en destruction. Հեղինակային կազմն է՝ Haroutiun Khatchadourian, Patrick Aslanian, Lucie Aslanian, Jean Michel.

գրական տվյալների գոյությունը անհրաժեշտություն է: Փաստացի թվային հաշվումներով ճարտարապետական գույքի ինքնարժեքի կամ հատուցման չափի որոշումը շինարարական էկոնոմիկայի մասնագիտական ճյուղ է: Հարցի բարդությունը կայանում է նրանում, որ հավաստի վավերագրերը միշտ չէ, որ առձեռն գոյություն ունեն, այդ պատճառով էլ տվյալ աշխատանքը շատ դեպքերում անհրաժաշտաբար համադրվում է պատմաբանասիրական հետազոտություններով, հետևաբար և՝ մոտավոր բնույթ է կրում:

Ըստ Հայկազն Ղազարյանի աշխատությունում բերված տվյալների՝ Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայ վանական և եկեղեցական շենքերն ու նրանցում եղած մշակութային ժառանգությունը նվազագույն չափով գնահետում է 1 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ հայոց ընդհանուր կորուստը ավելի քան 5 բիլիոն ԱՄՆ դոլար[217]: Մի ուրիշ հեղինակ՝ բժիշկ Երվանդ Խաթանասյան տվյալ կորուստը գնահատում է շուրջ 3 բիլիոն և 750 միլիոն ԱՄՆ դոլար[218]: Որքան էլ որ տնտեսական հաշվարկներով կարելի է հասնել հատուցման այս կամ այն դրամական արժեքի, այնուամենայնիվ, դա արդյունավետ մոտեցում չէ և նշանակում է վաճառել կամ հրաժարվել անհավասար պայքարում կորցրած Արևմտյան Հայաստանի տարածքներից: Հատուցման համար տրամաբանական մոտեցում է միջազգային պայմանագրերի հենքով լքված հայրենիքի պահանջատիրական իրավունքի վերականգնումը: Իրոք, ցեղասպանության հաջորդող տարիներին Հայկական հարցը աստիճանաբար տեղափոխել էր դեպի միջազգային հարաբերությունների բանակցային սեղան: Սակայն 1920 թ. Արևելյան Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմամբ այդ գործընթացները պետք եղած ընթացքը չստացան: Հիմա՝ անկախության տարիներին ժամանակները և հանգամանքները փոխվել են: Հարկավոր է սկսված միջոցառումները շարունակել կենտրոնացված ջանքերով: Ներկայիս, ակնարկվող պայ-

---

217 Ղազարյան Հ., Ցեղասպան թուրքը , Պէյրութ 1968, էջ 212 , 217 և 239:

218 Տես Հ. Տաճատ Եարտըմյան, նշվ. Աշխ., էջ 102: Հմմ. Հայոց թիւը, Պոստըն, 1965, էջ 22-23:

մանագրերը անհապաղ վերարդիականացման կարիք ունեն և հարկավոր է դրանք վերադարձնել միջազգային բանակցային սեղան: Անհրաժեշտ է թարմացնել անցյալի պայմանագրերի բովանդակությունը և պայմանները, որոնցից համառոտակի կարևորագույն փաստաթղթերը կներկայացնենք:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների առնչությամբ առաջին հերթին հիշատակվում է 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ՝ Արևմտահայերի Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագիրը, որի համաձայն 1915- 1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում էին 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000-ը բաժին էր ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000-ը՝ Հայաստանի Հանրապետությանը: Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման պահանջով, որում տեղ էր գտել նաև հայ հոգևոր կառույցների ոչնչացման դիմաց հատուցում պահանջելու հարցը, առաջին անգամ միջազգային վեհաժողովին ներկայացված այս փաստաթղթի նշանակությունը կարևորելով հանդերձ պետք է նշել, որ դրանում տեղ գտած հաշվարկները որոշ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով չեն կարող այսօր ընդունելի համարվել և 100 տարի հետո ենթակա են թվային գործակիցներով արդիականացման:

Սա Փարիզի վեհաժողովին անմիջապես հաջորդող պայմանագիրն է, որտեղ տեղ գտած 144-րդ հոդվածով, ինչպես նաև լրացուցիչ 285 և 288 հոդվածներով, ուսումնասիրվող հատուցման պահանջատիրությունը միջազգային իրավունքի ուժ է ստանում: Հակառակ քեմալականների ոտնձգությանը, այնուամենայնիվ, այն ձևակերպում ստացավ: Պայմանագրում ամրագրված է՝ արևմտահայության կորցրած սեփականության վերականգնման իրավունքի փաստը և դրա հետ կապված գործընթացների միջազգային վավերականությունը: Թուրքիայի կողմից արևմտահայերին բռնագաղթեցումը և հաջորդաբար հպատակությունից զրկելը, կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը թուրքական իշ-

խանությունների համար չէր կարող հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելուն: Սակայն այս դրույթներն իրականացնելու փոխարեն[219] քեմալականները փորձեցին ուժով փոխել Սևրի պայմանագրի դրույթները՝ հարկադրելով հայկական կողմին հրաժարվել Սևրի պայմանագրի օրինական իրավունքներից՝ նրան պարտադրելով նոր պայմաններ: Թեև Սևրի պայմանագիրը չկիրառվեց, այնուամենայնիվ, այն ունի թուրքական պետական ստորագրված վավերականություն և միջազգային ատյանների ճանաչումը: Այն միանգամայն օրինական փաստաթուղթ է և այդպիսին էլ մնում է մինչև օրս[220]: Թուրք-հայկական պատերազմից հետո 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանին պարտադրվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որի 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով կրճատվում էին Սևրի պայմանագրի իրավասությունները: Այն փորձ էր հայերին զրկել Հայոց ցեղասպանության հետևանքով հասցված նյութական վնասների հատուցման պահանջի իրավունքից: Սակայն, ինչպես հայտնի է, Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապօրինի լինելուց բացի, չվավերացվեց ու ուժի մեջ չմտավ:

Լոզանի պայմանագիրի 42-րդ հոդվածով թուրքական իշխանությունները պարտավորվում էին ապահովել ոչ մահմեդական փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգների, գերեզմանատների և կրոնական այլ հաստատությունների պաշտպանությունը և պահպանությունը: Այսինքն՝ համաձայն այս հոդվածի՝ հայկական 81 եկեղեցիները ոչ միայն չպետք է քանդվեին, այլև՝ վերականգնվելու էին: Սակայն Լոզանի պայմանագիրը վավերացնելուց և ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո թուրքական իշխանություններն ընդունեցին մի օրենք, որի դրույթները տրամագծորեն հակասում էին ոչ միայն տվյալ պայմանագրի դրույթներին, այլև կոպտորեն խախտում էին միջազգային իրավունքի ու մարդու իրավունքների տարրա-

---

[219]Տե՛ս Treaty of Peace with Turkey. Sighned at Sevres. August 10, 1920, p. 65-66, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf

[220] Հմմ. Պապյան Ա., Հայցող պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու) Երևան, 2007, էջ 42:

կան նորմերն ու սկզբունքները: Սակայն որքան էլ Թուրքիան ընդդիմացավ և շարունակում է ընդդիմանալ, այնուամենայնիվ, վերջինս ինքնին միջազգային օրենսդրությունը կայացնողը չէ: Հարցը միջազգային իրավունքի հնչեղություն ունի և կամա ակամա իր արձագանքները գտավ միջազգային գիտության մեջ: Այն այսօր գիտության ուրույն բնագավառ է և՛ որպես պատմություն, և՛ որպես տեսություն, և՛ որպես միջազգային իրավունք, և՛ որպես մշակութային պահպանության հարաբերություններ ու նյութական հատուցում: Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված կորուստներին, ինչպես նաև դրանց դիմաց հատուցման հիմնահարցերի վերաբերյալ գոյություն ունեն օտար և հայ բազմաթիվ հրատարակություններ:

Հ. Տաճատ Ծ.վրդ. Եարտըմյան «Հայաստանի վանքերուն և եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 և 1915-1925 տարիներուն» (Վենետիկ-Ս.Ղազար, 2001 թ.). աշխատությունը դեպքերի հաջորդականության սկզբունքով անդրադառնում է հայկական լքված ճարտարապետական գույքին և մշակութային արժեքներին: Հակիրճ գրված գիրքը կազմված է նախաբանին հաջորդող հինգ ենթամասերից: Նրա նպատակն է բնութագրել ցեղասպանության արդյունքով հայկական մշակույթի կրած կորուստը: Գիտական խնդիրներ են՝ Արևմտյան Հայաստանի սրբավայրերի քանակության ճշտումը, դրանց և դրանցից հափշտակված մշակութային արժեքների չափի ու արժեքի գնահատումը: Մեր կողմից կատարվող ուսումնասիրության տեսանկյունից առանձնապես կարևորվում է գրքում ընդգրկված հայկական գույքի բռնազավթման 34 հոդվածներից կազմված «Թալիմաթնամե» թուրքական ներքին գործոց ատյանների հրամանագիրը, որ հրապարակվել է 1915 թ. մայիսի 16-ին[221]: Հ. Տ. Եարտըմյանը փաստերով մեկնաբանում է թուրքական պետության ծրագրված կարգադրությամբ հայկական հողերի յուրացումը, շենքերի և արտերի վերօգտագործումը և նրանցում եղած գույքի վերավաճառումը և այլն և այլն[222]:

---

[221] Հ. Տաճատ Եարտըմյան, նշվ. աշխ., էջ 52-55:

[222] Նույն տեղում, էջ 55-69:

Ցույց է տալիս թե ինչպես հայոց լքված գույքը իր համայն ընդգրկողությամբ թուրքական պետական կարգադրությամբ նենգաբար վերածվեց նյութական արժեքի և յուրացվեց ամենայն թողտվությամբ: Սա նշանակում է, այսօր հայկական լքված գույքի հատուցման պահանջատիրությունը և ժառանգված ճարտարապետական հարստության պահպանությունը երբեք էլ պատահական չէ բարձրացնելը, այլ այն իրավական ակտ է, որ պետք է կատարվի իր բոլոր պահանջատիրական տվյալներով:

Գրքում մեջբերված բազմաթիվ մշակութային կորստի տեղեկատվության շարքում, կարելի է ընդգծել նաև մինչև ցեղասպանությունը Արևմտյան Հայատանում եղած դպրոցների և աշակերտության թվային տվյալները՝ 803-ից ավելի վարժարաններ, 59.495 աշակերտներ և 21.713 աշակերտուհիներ:[223] Սա ուղղորդող տվյալ է, որ անհրաժեշտ է բնակավայրերի և անշարժ գույքի տնտեսական հաշվարկների համար:

Հայկական 1915 թ. ցեղասպանության հետևանքով կորստի հատուցումը, այսօր Հայաստանի անկախության ժամանակաշրջանում օրակարգային հարց է և օր ըստ օրի ուրճանում է, որպես գիտություն: Վերջինիս ցայտուն արտահայտություններից է

2012 թ. Արամ Ա-ի կատարած դիմումը թուրքական Սահմանադրական դատարանին՝ Սիսի կաթողիկոսության հողերի վերադարձի կապակցությամբ: 2012 թ. Անթիլիասի մայրավանքում կազմակերպվեց միջազգային խորհրդաժողով «Ճանաչումից դեպի հատուցում» խորագրով, որին հրավիրվել էին միջազգային իրավունքի մասնագետներ և 30 արտասահմանցի ցեղասպանագետներ: Խորհրդաժողովի ընթացքում քննարկվում էր հայոց պահանջատիրության իրավական հնարավորությունների հարցը, որի հետ կապված մասնագետների մոտեցումները թեև կիսվում էին, սակայն, ի վերջո, հանգեցին այն եզրակացության, որ արժե դիմել նման հանդուգն քայլի:

Ի հարկե, նշված և այլ բազմաթիվ հեղինակների մոտ անհնարին թվացող հաշվարկային մեթոդները այսօր իրակա-

[223] Նույն տեղում, էջ 99:

նություն են: Չխճողելու համար տվյալ շարադրանքը բազմաթիվ հեղինակների և նրանց մեթոդական աշխատությունների անուններով, բավարարվենք Մարտիկ Գրիգորյանի և հեղինակային խմբի հրատարակություններով, որոնք հետազոտվող նյութի առումով հաշվարկման ուղեցույց կարող են հանդիսանալ, ինչպես՝"Методика обязательного и инициативного аудита" (Москва 2008), "Практикум аудита" (Москва 2009), "Практикум оценочной деятельности" (Москва 2009), և այլն[224]: Հատկապես ուշագրավ է Մ. Յու. Գասպարյանի "Родная земля одного народа не может стать вечной радной другого" (Москва 2015) աշխատությունը, որ նվիրվել է Հայոց ցեղասպանության 100 ամյակի հիշատակին:

1915 թ. ցեղասպանությունից հետո գոյատևող ճարտարապետական ժառանգության պահպանության իրավական և ներդրումային կազմակերպումը ըստ միջազգային կոնվենցիաների

Հայկական ճարտարապետական ժառանգության պահպանությունը ներկայիս միջազգային գործող համաձայնագրերով պատկանում է «զրավված տարածքներում մնացած մշակութային արժեքների պահպանության» օրենսդրական դաշտին: Այդ կապակցությամբ գոյություն ունեցող փաստաթղթերից առաջին և հիմնարար փաստաթուղթը Հաագայի կոնվենցիան է, որ կայացվել է 1954 թ. և վերամշակվել է 1999 թ.[225]: Ուսումնասիրության այս մասում քննականորեն կներկայացվի 1999թ. փաստաթղթի բովանդակությունը և հայկական պատմաճարտարապետական հուշարձանների իրավիճակը Արևմտյան Հայաստանի տարածքներում:

---

[224] Տես՝ Линецкий А.В., Гаспарян М.Ю., Родина Е.Ю., "Практикум аудита" (Москва 2009), Նույն հեղինակների "Практикум оценочной деятельности" (Москва 2009), Նույն հեղինակների "Методика обязательного и инициативного аудита" (Москва 2008) և այլն:

[225] Տես Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict with Regulations for the Execution of the Convention 1954.

Հաագայի փաստաթուղթը վերնագրված է՝ «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պահպանության մասին 1954 թ. և Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը» (Հաագա, 1999 թ. մարտի 26): Արձանագրությունը ուժի մեջ է մտել 2006 թ. օգոստոսի 18-ից: Համաձայնագիրը կազմված է 9 ներքոհիշյալ գլուխներից, որոնք ստորև կդիտարկվեն նաև ելնելով Արևմտյան Հայաստանի ճարտարապետական գույքի պահպանության ներկայիս նկատառումներից:

1. **Առաջին գլուխը** ներածական բնույթի է և կազմված է 4 հոդվածներից: Առաջին հոդվածում ձևակերպված են համաձայնագիրը պարզաբանող հիմնական դրույթներն ու սահմանումները: Համաձայնագրում որպես կողմեր հանդես են գալիս նաև ներկայիս Թուրքիայի և Հայաստանի հանրապետությունները: Ուսումնասիրության առարկան են հանդիսանում «մշակութային արժեքների» 1915 թ. ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանում և մյուս հայաշատ բնակավայրերում լքված ճարտարապետական գույքը, առանձնապես կարևորելով ներկայիս պահպանության ենթակա հուշարձանների «ցուցակը» և դրանց պահպանության կազմակերպումը:

2. **Երկրորդ գլուխը** կազմված է 5 հոդվածներից, որտեղ առանձնապես կարևորվում են հետևյալ հանգամանքները՝

ա/ Պաշտպանության ենթակա ճարտարապետական հուշարձանների ցուցակների նախապատրաստումը և դրանց պահպանության խնդիրների բնութագրումը, որ մինչև այսօր Թուրքիայում երբևէ քննարկման առարկա չի դարձել:

բ/ Պահպանության ենթակա ճարտարապետական հուշարձանները չի թույլատրվում շահագործել որպես ռազմական հենակետեր, ինչպիսին որ ներկայիս Տիգնիսի ամրոցի և այլ մի քանի սահմանային պատմական հուշարձանների կարգավիճակն է: Առավել ևս՝ հայկական պատմամշակութային շենքերը Թուրքիայում գերակշռող մասով սեփականաշնորհվել են կամ օգտագործվում են անհարիր ֆունկցիոնալ նպատակների համար, ինչպես օրինակ եկեղեցիները վերած-

վել են գոմերի կամ լավագույն դեպքում մթերքի կամ ռազմական պահեստների:

Երրորդ գլուխը, որքան էլ որ վերաբերում է հույժ կարևոր կամ միջազգային նշանակության հուշարձանների ուժեղացված պահպանությանը կամ օգտագործման տեսակետից անձեռնմխելի կառույցներին, այնուամենայնիվ դրանք թուրքական կողմից ենթակա են ամենայն թողտվության: Ինչպես օրինակ Մշո Սբ. Կարապետի վանքի, Մշո Առաքելոցի, Վարագավանքի և այլոց դեպքերն են: Նշված վաղ քրիստոնեական կարևոր համալիրներն այսօր բնակեցված են և համապատասխանաբար քանդվել կամ խեղաթյուրվել են: Փաստորեն այս գլխի հինգ հոդվածներն էլ հատկապես վերաբերելով ուժեղացված պաշտպանության դեպքին, բացի Աղթամարի վանքից և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի թանգարանացվող տարածքից ոչ մի ուրիշ օրինակում չեն կիրառվել:

3. Չորրորդ գլուխը վերաբերում է «քրեական պատասխանատվության և իրավասության»: Գլխի վեց հոդվածներում ձևակերպված են այն քրեական ակտերը, որոնք սահմանված են ուժեղացված պաշտպանության ենթակա հուշարձանների նկատմամբ խախտումներ կատարելու դեպքում: Դրանք ներառում են՝ քանդելու նպատակով հարձակումը հուշարձանի վրա, հուշարձանի տարածքի իրացումը ռազմական նպատակներով, թալանը, գողությունը, հրկիզումը և այլն: Հենց այդ նկատառումներով էլ սահմանվում են կողմերի իրավասությունները, դատական հետապնդման ձևերը, հուշարձանի հանձման ակտերի պարտավորությունները, կողմերի փոխօգնությունը այդ գործընթացներում, խախտումների իրավական ձևակերպումը և այլն: Բնականաբար, վերևում նշված բոլոր խախտումներն էլ հայկական ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ կատարվել են: Նույնիսկ կան այնպիսի խախտման ակտեր, որոնք շատ դեպքերում գնահատվել են որպես արհավիրք արհավիրքից հետո: Այդպիսի օրինակները բազմատասնյակ են, ինչպես օրինակ՝ Բագարանի, Բագավանի, Դեկորի, Արգինայի, Նարեկավանքի, Խծկոնքի և այլ բազ-

մաթիվ հուշարձանների պայթեցումները կամ վերօգտագործումներն են:

4. Հինգերորդ գլուխը վերաբերում է՝ մշակութային արժեքների պաշտպանությունը տեղական ընդհարումների կամ զինված հակամարտությունների ժամանակ, ինչպիսին ներկայիս թուրք-քրդական ընդհարումներն են: Տվյալ դեպքում, բնականաբար, պետք է ակնկալել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոֆլիկտային տարածքներում նախատեսվող ծառայությունները հակամարտության կողմերի համար, նպատակ ունենալով պահպանելու տվյալ ճարտարապետական գույքը:

5. Վեցերորդ գլուխում քննարկվում են հուշարձանապահպանության կազմակերպչական հարցերը հատուկ իրավիճակների պարագաներում: Այդ թվում են հետևյալները:

ա/ Կողմերի միջև ծագած խնդիրների լուծումը համապատասխան խորհրդաժողովների կազմակերպման միջոցով:

բ/ Պատմական հուշարձաններով զբաղվող մասնագետների ներգրավմամբ կոմիտեների ստեղծումը և այդ կոմիտեների տարեկան կամ արտահերթ հանդիպումների կազմակերպումը: Կոմիտեների գործունեության ժամկետների սահմանումը, քվեների կազմակերպումը, գործունեության գործառույթների, այդ թվում և նպաստների և հիմնադրամային ներդրումների իրականեցումը, գործընթացների համար ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագետների խորհրդատվության ապահովումը և այլն:

գ/ Կոմիտեի գործառույթների կարևորագույն փաստաթղթերի և հարաբերությունների կազմակերպումը: Բոլոր դեպքերում կազմակերպչական ատյանը կամ քարտուղարությունը վստահվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական անձնակազմին, որ հատկապես կիրառվում է՝ “զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության հիմնադրամ”-ի հարաբերությունների գործառույթներում: Նշենք, որ ցարդ հայ-թուրքական հուշարձանապահպանության հարաբերություններում համագործակցությունը շրջանցվում է: Թուրքիայի կողմից Հայաստանի մասնագետների պաշտոնական ներգրավումը նման գործարքներում բացառ-

վում է և լավագույն դեպքում իրականացվում է անուղղակի՝ ոչ պաշտոնական հրավերների ձևով:

6. Յոթերորդ գլխում քննարկվում է հուշարձանապահպանության ենթակա շենքերի և համալիրների վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու միջազգային օգնության ապահովումն է:

Տեղեկատվության տարածումը նախատեսվում է ուսումնական հարաբերությունների և ժողովրդական կազմակերպությունների միջոցով, հասարակության ուսուցողական ծրագրերով և սահմանված մշակութային հարաբերությունների կանոնակարգերով և մասնավոր դեպքերում նույնիսկ ՄԱԿ-ի համագործակցությամբ:

Արևմտյան Հայաստանի ճարտարապետական լքված գույքի պահպանության համար միջազգային օգնության ապահովումը խիստ կարևոր է: Այդ կապակցությամբ՝ «Կողմերը կարող են դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ին իրենց մշակութային արժեքների պաշտպանության կազմակերպման գործում տեխնիկական աջակցության ակնկալիքներով: Այդ թվում են՝ մշակութային արժեքների պաշտպանության ուղղությամբ նախապատրաստական միջոցների ներգրավումը, արտակարգ իրավիճակների դեպքում կանխարգելիչ կամ կազմակերպչական միջոցների կազմակերպումը, մշակութային արժեքների ազգային ցանկի կազմումը և այլն: ՅՈՒՆԵՍԿՕ-ն օգնությունը տրամադրում է իր ծրագրերի հնարավորության սահմանված շրջանակներում»[226]:

7. Ութերորդ գլխում քննարկվում են կոնվենցիայի վերևում առաջադրվող Դրույթների իրականացման եղանակներն ու նրանց ներդրման ձևերը: Սա նաև վերաբերվում է կողմերի միջև ծագած վեճերի հաշտեցման ընթացակարգերին: Վերջինը սովորաբար կազմակերպվում է հակամարտության կողմ չհանդիսացող երրորդ պետության տարածքում: Կողմերը որպես օրենք, նվազագույնը չորս տարին մեկ՝ պետք է կոմիտեին իրազեկեն նախատեսված միջոցառումների արդյունքների վերաբերյալ:

---

[226] Տես կոնվենցիայի էջ 17-18:

8. Իններորդ գլուխը կոնվենցիայի եզրափակիչ մասն է: Այստեղ ներգրավված հոդվածները վերաբերում են կողմերի միջև կատարվող թղթակցական համագործակցության լեզուական խնդիրներին: Թղթակցական համագործակցությունը կատարվում է միջազգայնորեն ընդունված վեց լեզուներով՝ արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն:

Գրավված տարածքներում հուշարձանների պահպանության հարցերը, ինչպես միջազգային բազմաթիվ հակամարտության տարածքներում, այնպես էլ հայ-թուրքական առնչություններում կարելի է ղեկավարել Հաագայի կոնվենցիայի սկզբունքներով: Այս կապակցությամ ներկայիս կուտակվել է միջազգային հարաբերությունների ստվար փորձ և համապատասխան գրականություն: Ակնարկվող առնչությունները խնդիրների լուծման կապակցությամբ հաճախ դիմում են փորձի զուգահեռ կիրառության մեթոդին: Այն մասնավոր իրավիճակների համար կիրառված լուծումների ադապտացումն է որևե ընթացիկ տարածքի օրինակում: Պետք է ասել, որ գրականությունը ստվար լինելով, սա կիրառական գիտահետազոտության պաթոլոգիական միջոցառում է, որտեղ ամեն մի հակամարտության տարածք ունի իր յուրահատկությունը: Հայ-թուրքական հուշարձանային պահպանության կազմակերպման գործում պաթոլոգիական օրինակները բազմաթիվ կարող են լինել, որոնք կլուծվեն ամեն մի շարժառիթի առանձնահատկությունների տվյալներով: Ստորև անդրադարձ է կատարվում նման մի քանի ընտրված զուգահեռների:

«Վրաստանի ստրատեգիական նկատառումները գրավված տարածքների կապակցությամբ» փաստաթուղթը[227], որտեղ առանձին պարբերությամբ ներկայացված է նաև մշակութային ժառանգության պահպանությունը: Այն վերաբերելով Աբխազիայի, Ցխինվալիի և Հարավային Օսետիայի տարածքներին, շոշոփման կետեր ունի Հայաստանի Հանրապե-

[227] Տես՝ file:///F:/Currents/Genos%20project/genoc/225_31228_851158_15.07.20-State Strategyon Occupied Territories-EngagementThroughCooperation(Final).pdf

տության և Արևմտյան Հայաստանի տարածքում եղած հուշարձանների պահպանության խնդիրների հետ: Տվյալ դեպքում զուգահեռման ենթակա է գործի սկզբում հուշարձանացուցակների կազմումը և հատատումը միջազգային համապատասխան մարմինների օժանդակությամբ, այդ թվում և՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի: Փաստորեն տվյալ հանգամանքը որքան էլ սկսվել է հայկական իրականությունում, սակայն թուրքական մարմինների կողմնակալության պատճառով վերջնական հանգուցալուծման դեռևս չի հանգել:

Ինչպես նշվեց նախորդ փաստաթղթի կապակցությամբ գոյություն ունեն ճանաչված կամ հաստատված միջազգային օրենսդրական մարմիններ: Այստեղ դրանցից կարելի է ամրագրել՝ «Դիակոնիա» կազմակերպությունը[228]: Այն ճանաչում է ստացել իսրայելա-պաղեստինյան տարածքներում եղած հուշարձանային և բնակավայրային գույքի պահպանության իրականացրած ծրագրով: Վերջինիս գործունեությունը նախադեպ կարող է ծառայել նաև հայ-թուրքական ուսումնասիրվող հուշարձանապահպանության համար: Տվյալ դեպքում հուշարձանապահպանության նպատակով շրջանառության մեջ են դրվել ինչպես գիտական հոդվածներ, գրքեր, վիդեո փաստագրական ֆիլմեր և այլ ինֆորմացիայի տարածման բազմաթիվ միջոցները: Փաստորեն, ի տարբերություն Հաագայի համաձայնագրին, կիրառվել են գիտահետազոտական, իրազեկման նոր ինկուբատոր տեխնոլոգիաներ: Վերջինները կարող են իրականացվել գիտության, հետազոտության ներդրման զանազան մեթոդներով և նրանցից ածանցվող ներքոհիշյալ հասկացություններով:

1. «Պատմական հիշողության ոչնչացումն ու նրա եղելությունները» կամ «մշակութային ցեղասպանությունը» տվյալ դեպքում կիզակետում են պահում հակամարտության գոտիներում հուշարձանների պահպանությունը՝ անցյալի փաստերի վերակենդանացման մեթոդներով:

---

228 Տես՝ file:///F:/Currents/Genos%20project/genoc/archeology-report-report.pdf

2. «Միջավայրակայուն ճարտարապետության պատմական հիմքերի ստեղծումը ի դեմս հուշարձանների», որոնք միջազգային և տեղական կայուն փիլիսոփայության հանգրվաններ են: Մշակութային ժառանգության ոչնչացումը միայն նյութական արժեքի կորուստ չէ, այլ այն մարդկային ձեռքբերված փորձի և անցած դարերի քաղաքակրթական պատգամի վերացում է, որն անփոխարինելի նշանակություն ունի, ինչպես նաև գիտահետազոտական միջոց է քաղաքակրթության հետագա ընթացքը նվաճելու համար: Այս առումով հայկական լքված բնակավայրերը, քաղաքային անսամբլները, վանական համալիրները, իրենց բովանդակությամբ նույն և նույն հունական, հռոմեական, բյուզանդական, արաբական և եվրոպական ու մարդկային նվաճուների արժեքներից են և պետք է պահպանվեն:

3. Ստացվում է այնպես, որ վերևում նշված փաստերի լույսի տակ, հետադարձ հայացքով և այսօրվա հիմքերով հարկավոր է ուսումնասիրել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի տարածքի հայկական տարածքային, քաղաքաշինական և ճարտարապետական լքված գույքը և համագործակցություն ծավալել կոնվնցիաներով սահմանված հարաբերությունների օգնությամբ: Հետազոտվող բնագավառին հետևողական հիմքի ստեղծումը կարելի է համարել սկսված, ի հաշիվ վերևում ներկայացված միջոցառումների և օրերես ընթացող հարաբերությունների: Փաստորեն հայկական իրականությունում գործընթացը կա: Այդ գործընթացի միջավայրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի և նրա մասնաճյուղերում գործող կազմակերպություններն են և նրանց հրապարակած կոնվենցիաները: Հաագայի հռչակագրի կողքին այդ կոնվենցիաների տվյալներից օգտվելը մասնագիտական հմտություն է, որին պետք է տիրապետել հայ թուրքական հուշարձանապահպանության գործընթացները կարգավորելու համար:

Հուշարձանապահպանության վերաբերյալ տեսություններ ունեն Ջոն Ռասկին (1848), Կամիլո Բոիտոն (1883), Կամիլլո Սիտտեն (1889), Պատրիկ Գեդդեսը (1915), Լուիս Մամֆորդը (1938), Ռոբերտ Վենտուրին (1966), Կոնստանտին Դոք-

սիադիսը (1968), Կենզո Թանգեն (1969), Լեոնարդո Բեննեվոլոն (1973), Ռոբ Կրայերը (1975), Ալդո Ռոսսին (1975), Չարլս Ջենկսը (1980), Կեվին Լինչը (1980), Քրիստոֆոր Ալեքսանդրը (1987), Լուկա Բերտրամին (1987), Տերի Ֆարելը (1993), Ռենցո Պիանոն (1998), Ռիչարդ Ռոջերսը (1998), Բերնարդ Տշումին (2000) և այլն: Նշված բոլոր հեղինակներն էլ արձագանքում են քաղաքների զարգացման ժառանգորդականության անհրաժեշտությունը: Այն և՛ գեղագիտություն է և՛ առողջ ապրելակերպ: Շենքերի պահպանության և նորի ստեղծման գործում օրգանապես պետք վերակենդանացվի անցյալը և որպես ոճ և որպես էկոլոգիա: Այսինքն՝ Արևմտյան Հայաստանի բոլոր բնակավայրերն էլ անխտիր՝ ուշ թե շուտ պետք է դավանեն անցյալի ժառանգության ժամանակակից օգտագործումը:

1972 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի ընդունման սկզբից ի վեր ուշադրության կենտրոնում այն էր, որ «մշակութային կամ բնության ժառանգության ցանկացած օբյեկտի վնասումը կամ անհետացումը հանգեցնում է աշխարհի բոլոր ազգերի ժառանգության կործանարար աղքատացման»: Կոնվենցիաների ուղղորդող սկզբունքը, ըստ Վենետիկի կոնվենցիայի (1964), եղել է քաղաքակրթության խորհրդանիշները պահպանումը «իրենց ողջ հարստությամբ»: Իրականում կոնվենցիաները կազմված են տեղական նախադրյալներից, նրանց լուծման մեթոդներից և այդ մեթոդների կիրառության պաթոլոգիայից: Այս ձևով են շարադրվել միջազգային բոլոր կոնվենցիաները, այդ թվում են՝ Աթենքյան կոնվենցիան (1931 թ.), Վենետիկյան կոնվենցիան (1964 թ.), ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարականները պատմական տարածքների պահպանության համար (1976 թ.), Վաշինգտոնյան կոնվենցիան (1987 թ.), և այլ մեկ տասնյակից ավելի այլ կոնվենցիաները: Փաստն այն է, որ Արևմտյան Հայաստանի հուշարձանների և բնակավայրերի պահպանման խնդիրները ունեն յուրահատուկ պատմական խորք և հարկավոր է ձգտել ապահովել նրանց համար միջազգային ուրույն կոնվենցիա:

Վերոհիշյալի հասնելու նշված ինտենսիվ և համակարգված մոտեցումը թեկուզ աշխատատար է, բայց անխուսափելի,

որի համար դիպուկ օրինակներ կարող են ծառայել մեր կողմից Մուշի և Կիլիկյան Հաճնի օրինակներով կատարված և հրատարակված ուսումնասիրությունները[229]:

Կատարված ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության ընթացքում հայկական լքված գույքին պահանջատիրական ընթացք տալու համար համար առկա հետևյալ ժամանակակից հիմնական առաջարկներն են.

1. Կազմել հայկական լքված ճարտարապետական հարստության, տվյալ դեպքում՝ Արևմտյան Հայաստանի լքված ճարտարապետական գույքի պահպանության ենթակա հուշարձանների ցուցակները: Համաձայնեցնել այդ ցուցակները միջազգային իրավական մարմինների հետ, ինչպես նաև որպես հակամարտության կողմ թուրքական կարավարության հետ: Ստեղծել մասնագիտացված կենտրոն՝ համակարգելու Արևմտյան Հայաստանի ուսումնասիրված և դաշտային զնման ենթարկված բնակավայրերի ու հուշարձանների տվյալները: Նման կենտրոնը կարող է լինել ուրույն ինստիտուտ ՀՀ ԳԱԱ համակարգում:

2. Հայկական լքված գույքերի պահաջատիրության հեռանկարային ընթացք տալու համար հայ-թուրքական հարաբերությունները հիմնել տարածքային միջավայրակայունության հարաբերությունների նկատառումներով, որ ժամանակակից ճարտարապետության կրիտիկական ռեգիոնալիզմի առաջադեմ սկզբունքներից է:

3. Արևմտյան Հայաստանի լքված գույքի հատուցման համար առաջնորդվել բանակացկան փաստաթղթերի ստեղծման մեթոդով: Գույքի արժեքավորումը կատարել ճարտարա-

---

[229] The Architectural lagacy of Hajn from Historical Cilicia, JOAS, 2016, N1, pp.64-74. Ինչպես նաև՝ Մշո տարածքի հայկական լքված հուշարձաններն ու նրանց պահպանության հիմնախնդիրները, Միջազգային գիտաժողով հայոց ցեղասպանություն-100.ճանաչումից՝ հատուցում, Երևան հոկտեմբեր 15-16, զեկուցումների դրույթներ, Երևան, 2015, էջ 222-225:Նյութերը՝ Երևան 2016, էջ 423-431:

պետաշինարարական էկոնոմիկայի մասնագիտական գնահատման առարկայական սկզբունքներով:

4. Ցուցակագրված և միջազգային մարմինների (ՅՈՒՆԵՍԿՈ, ԻԿՈՄՈՍ, ԻԿԿՐՈՄ և այլն) օժանդակությամբ համաձայնեցված հուշարձանները ենթարկել միջազգային կոնվենցիաներով ղեկավարվող ճարտարապետական պահպանության: Այդ գործընթացներում դավանելով հանդերձ Հաագայի հուշարձանների պահպանության օրենքներին, բնակավայրերի և հուշարձանների պաթոլոգիական հարցերը լուծել գոյություն ունեցող միջազգային մյուս կոնվենցիաների դրույթների տեղայնացմամբ, հակառակ պարագայում նախընտրելի է ստեղծել Արևմտյան Հայաստանի հուշարձանների պահպանման առանձին կոնվենցիա:

4.2. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում հայկական կերպարվեստի ու կիրառական արվեստի կորուստները համիդյան ջարդերից ու Մեծ եղեռնից մինչև մեր օրերը (պատմական համառոտ ակնարկ)

19-րդ դարավերջին և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում հայ ժողովուրդը մեծ ողբերգություն ապրեց և հսկայական կորուստներ կրեց: 1894-1896 թթ. համիդյան ջարդերին հետևեցին երիտթուրքերի ծրագրած և իրագործած հայերի զանգվածային կոտորածները: Դա նոր շրջանի համաշխարհային պատմության մեջ կանխամտածված աննախադեպ ցեղասպանություն էր, մի ամբողջ ազգի ֆիզիկական բնաջնջման և հայրենազրկման առաջին փորձը[230]:

Մեծ եղեռնին զոհ գնաց, գլխատվեց հայ ժողովրդի հոգևոր, մտավոր ու ստեղծարար սերուցքը: Հասարակական ու քաղաքական հայտնի դեմքերի, կրոնական գործիչների, ազ-

---

[230] Հայոց ցեղասպանության նախապատմությանը, կանխամտածված ծրագրին ու հետապնդած նպատակներին վերաբերող հանգամանքները տե՛ս *Սաֆրաստյան Ռ.,* Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը *(1876-1920 թթ.*), Ե*րևան, 2009*.

գային բարերարների, ձեռներեց մարդկանց, բժիշկների և իրավաբանների, դասախոսների և ուսուցիչների հետ մեկտեղ նահատակվեցին նաև արևմտահայ գրողներ ու բանաստեղծներ Մելքոն Կյուրճյանը, Գրիգոր Զոհրապը, Սմբատ Բյուրատը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Երուխանը, Արտաշես Հարությունյանը, Ռուբեն Զարդարյանը, Ինտրան (Տիրան Չրաքյան), Միհրան Թապագյանը, Սիամանթոն, Գեղամ Բարսեղյանը, Տիգրան Չյոկյուրյանը, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, դերասան Շահեն Ենովքը, երաժիշտներ Մկրտիչ Տեր-Պետրոսյանը և Պետրոս Չոլաքյանը, ջութակահար Բարունակ Ֆերուխանը, ծաղրանկարիչ Պետրոս Մարիմյանը, քանդակագործ Զարեհ Բեյուքյանը և ուրիշներ: Հոգեկան հավասարակշռությունը կորցրեց ու դադարեց ստեղծագործելուց 1915 թվականի ապրիլի 24-ին ձերբակալված և հեռավոր Չանղր աքսորված հանճարեղ երգահան, խմբավար ու երաժիշտ-բանահավաք Կոմիտասը:

Ինչպես հայտնի է, «genocide» («ցեղասպանություն») հասկացությունն առաջին անգամ ձևակերպել, հայոց Մեծ եղեռնի օրինակով այն հիմնավորել ու միջազգային իրավունքի ասպարեզում շրջանառության մեջ է դրել ծագումով հրեա լեհ և ամերիկացի իրավագետ, ցեղասպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի նախագծի հեղինակ Ռաֆայել Լեմկինը 1944-ին հրատարակված իր աշխատություններից մեկում[231]: Ըստ Ռ. Լեմկինի՝ ցեղասպանությունն առանձին ժողովուրդների, ինչպես նաև սոցիալական կամ կրոնական խմբերի ոչ միայն ֆիզիկական բնաջնջումն ու բռնի տեղահանումն է, այլև նրանց ազգային, պատմական-քաղաքակրթական, հոգևոր և մշակութային արժեքների միտումնավոր ոչնչացումը: Ու թեև Լեմկինի առաջարկած «մշակութային վանդալիզմ» արտահայտությունն այդպես էլ չընդգրկվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված՝ ցեղասպանությունը կանխող և դրա համար պատիժ սահմանող փաստաթղթում, այնուամենայնիվ, միջազգային իրավունքի

[231] Տես Lemkin, Raphael. Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation – Analysis of Government – Proposals for Redress, Washington, 1944:

հեղինակավոր մի շարք մասնագետների կարծիքով «genocide» («ցեղասպանություն») իրավաբանական ընդհանուր սահմանումը պետք է ներառի նաև «մշակութային վանդալիզմ» կամ ավելի հստակ՝ «մշակութային ցեղասպանություն», «մշակութային եղեռն» հասկացությունները[232]:

Հայ ժողովրդի հալածանքների, իր պատմական հայրենիքից նրան արտաքսելու, տեղահանելու տարիներին սուլթան Համիդը, իսկ հետո նաև երիտթուրքերի կառավարությունը նպատակ ունեին ոչ միայն վերացնելու հայ ժողովրդին, այլև ոչնչացնելու հայկական բազմադարյան քաղաքակրթության ու մշակույթի նյութական բոլոր վկայությունները:

Համիդյան ջարդերի և հատկապես Մեծ եղեռնի տարիներին անդառնալի կորուստներ կրեց պատմական, հոգևոր ու գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող մեր միջնադարյան ճարտարապետությունը՝ Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերի հայկական վանական համալիրներից, եկեղեցիներից, պաշտամունքային կառույցներից շատերը թալանվեցին, ավերվեցին ու հրկիզվեցին: Կործանման վտանգի տակ հայտնվեց նաև միջին դարերում իր փառահեղ «հազար ու մեկ եկեղեցիներով» հայտնի Անի գահանիստ բերդաքաղաքը: Կանադահայ պատմաբան, հասարակագետ և իրավագետ Գևորգ Բաղջյանի «Հայերի սեփականության բռնագրավումը թուրքական կառավարության կողմից՝ իբր լքյալ գույք» ֆրանսերեն աշխատության երրորդ գլխի՝ «Մշակութային վանդալիզմ» կոչվող ենթագլխում բերված է թուրք բժշկապետ ու քաղաքական-պետական գործիչ, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, կրթության, ապա առողջապահության և սոցիալական օժանդակության

---

[232] Տես, օրինակ. Prott, Lindel V. Ethnocide – Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity. Volume one (A-H), Thomson Gale, 2005, p. 309-310: Մասնագիտական՝ իրավաբանական և սոցիոլոգիական, ինչպես նաև հանրագիտական գրականության մեջ այդ հասկացությունների գործածման ևս մի քանի օրինակներ են բերված մշակութային ցեղասպանության խնդրին բազմիցս անդրադարձած թուրքագետ Անուշ Հովհաննիսյանի «Թուրքիա. մշակութային ցեղասպանություն» (Երևան, 2005) եռալեզու գրքույկում (էջ 5 և 13):

նախարար, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի խորհրդական Ռիզա Նուր բեյի՝ արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին 1921 թվականի մայիսի 25-ին հղած նամակը, որում վերջինս կոչ է անում իսպառ վերացնել Անի քաղաքի հուշարձանների բոլոր հետքերը՝ դրանով իսկ «մեծ ծառայություն մատուցելով Թուրքիային»[233]:

Ղեկավարվելով երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից մեկի, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հրամանով՝ «ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում»[234], ջարդարարները քանդեցին, հողին հավասարեցրին ու մոխիր դարձրեցին Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի գրեթե բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Ինչպես գրում է արևմտահայ պատմաբան և բանասեր Գևորգ Մեսրոպը՝ «Նոյնիսկ մենք, հայերս, չենք գիտեր, թէ ի՞նչ էր... մեր վանքերուն, մեր եկեղեցիներուն իսկական թիւը... տեսակն ու քանակը, որակն ու արժէքը»[235]: Բայց, բարեբախտաբար, դրանց զոնե մոտավոր թվաքանակի մասին պատկերացում են տալիս Առաջին աշխարհամարտին և Հայոց ցեղասպանությանը նախորդած տարիներին հայկական վանքերի ու եկեղեցիների՝ տարբեր առիթներով կազմված ցուցակները և վիճակագրական տվյալները:

Այսպես՝ Կոստանդնուպոլսում հրատարակված վիճակագրությունը վկայում է, որ 1904 թվականի դրությամբ Օսմանյան կայսրության տարածքում եղել են 228 հայկական վանքեր և 1958 եկեղեցիներ, այսինքն՝ 2186 հոգևոր կենտրոն-

---

233 Տես Baghdjian, Kévork K. La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens... dits abandonnés. Préface d'Yves Ternon, 1st edition, Montréal, 1987, p. 55-56:

234 Տես Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ.Սահակյան), Երևան, 1991, էջ 562:

235 Տես Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նյու Յորք, 1931, 20 հունիսի, թիվ 25, էջ 776:

ներ ու պաշտամունքային կառույցներ[236]: Այդ թիվը հաստատվում է նաև 1896–1908 թվականներին Պոլսի Հայոց պատրիարքի պաշտոնը վարած Մաղաքիա Օրմանյանի՝ հայկական եկեղեցուն նվիրված հայտնի ուսումնասիրությանը կից «Թեմերու վիճակագրութիւնը (հաւանական հաշուով)» երկրորդ հավելվածը, համաձայն որի 1911 թվականին կայսրությունում կային 2200-ից ավելի հայկական վանքեր ու եկեղեցիներ[237]: Արդարադատության և դավանանքների նախարարության հանձնարարությամբ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը, երկրի տարբեր նահանգների և քաղաքների ազգային առաջնորդարաններից ստացված վավերական ստույգ տվյալների ու տեղեկությունների հիման վրա 1912-1913 թվականներին կազմել և կառավարությանն է ներկայացրել կայսրության սահմաններում այդ ժամանակ եղած հայկական եկեղեցիների ու վանքերի լրիվ ցուցակներն ու համապատասխան թաքրիրները (ծանուցագրեր), որոնցում նշված էին պաշտամունքային տվյալ կառույցների տեղադրավայրը, դրանց անվանումը, կառուցման ճշգրիտ կամ մոտավոր տարեթիվը[238]: 1965-1966 թվականներին թուրքագետ Արամ Սաֆրաստյանը «Էջմիածին» հանդեսում հրատարակեց Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի (1990-ից՝ Հայաստանի ազգային գրադարան) թուրքական բաժնում պահվող այդ ցուցակների ու թաքրիրների սնագիր օրինակները[239]: Դրանցում նշված հայկական վանքերի ու եկեղեցիների

---

236 Տես Առաջնորդական վիճակներ - Ընդարձակ Օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1904, էջ 349-385:

237 Տես Օրմանեան Մաղաքիա, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 259-267:

238 Տես Սաֆրաստյան Ա., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.) – Էջմիածին, 1965, Ա, Յունուար, էջ 40-41:

239 Տես Սաֆրաստյան Ա., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրու-

թիվը հասնում է 1270 միավորի[240], ինչը գրեթե 1000 միավորով պակաս է 1904 թվականի վիճակագրության արդյունքում ստացված և Մաղաքիա Օրմանյանի գրքի հավելվածում բերված թվերից: Դա բացատրվում է նրանով, որ Ա. Սաֆրաստյանի հրատարակած սևագիր ցուցակները պակասավոր են՝ մասնավորաբար, դրանցում բացակայում են Վանի նահանգի հայկական վանքերն ու եկեղեցիները[241]: Կարելի է ենթադրել, որ թուրքական իշխանություններին ներկայացված մաքրագիր ցուցակները, դրանց սևագիր օրինակների համեմատությամբ, առավել լիարժեք, ավելի ընդարձակ ու մեծաքանակ էին և չէին հակասում վերը բերված վիճակագրական տվյալներին: Վերջիններիս իսկությունը հաստատում է նաև Գևորգ Մեսրոպի կազմած ցուցակը, համաձայն որի «ամբողջ Թուրքիոյ հայ վանքերուն թիւը 1914-ին էր 210, իսկ եկեղեցիներուն թիւն էր 1639»[242]: Նկատի ունենանք, որ այդ ցուցակի մեջ «առնուած չեն հայ կաթոլիկ եկեղեցիներն ու վանքերը, ինչպէս նաեւ հայ բողոքական ժողովարանները»[243]: Հայ ժողովրդի բարեկամ, գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական և արևելագետ Յոհաննես Լեփսիուսը 1919 թվականին Կոստանդնուպոլսում լույս տեսած իր «Հայաստանի ջարդերը» աշխատության մեջ նշում է, որ Հայոց ցեղասպանության տարիներին ամայացել, ավերվել կամ ավերակների են վերածվել 1000-ից ավելի

թյան ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.) – Էջմիածին, 1965, Ա, Յունուար, էջ 40-47, 1965, Բ-Գ-Դ, Փետրուար-Մարտ-Ապրիլ, էջ 174-187, 1965, Ժ, Հոկտեմբեր, էջ 43-48, 1966, Բ, Փետրուար, էջ 38-44, 1966, Գ, Մարտ, էջ 57-60, 1966, Զ, Յունիս, էջ 41-47, 1966, Է, Յուլիս, էջ 55-60, 1966, Ը, Օգոստոս, էջ 60-63, 1966, Թ-Ժ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 106-114:

240 Տես Սաֆրաստյան Ա., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913 թթ.) – Էջմիածին, 1965, Ա, Յունուար, էջ 42:

241 Նույն տեղում, էջ 41-42:

242 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 27, թիւ 26, էջ 809:

243 Նույն տեղում:

հայկական վանքեր ու եկեղեցիներ[244]: Սակայն հետագայում կատարված ուսումնասիրությունները հաստատում են, որ այդ թիվն անհրաժեշտ է առնվազն կրկնապատկել: Գևորգ Մեսրոպի վկայությամբ, հայ լուսավորչական վանքերից ու եկեղեցիներից հիմնահատակ ավերվել և թալանվել են 1727-ը[245]: Այլ տվյալներով՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում այդ տարիներին կործանվել և կողոպտվել են ավելի քան 2000 հայկական վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ: Թուրքական արխիվներում պահվող, Հայոց ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու առիթ ունեցած արևմտահայ իրավաբան, խմբագիր ու թարգմանիչ Հայկազն Ղազարյանը նշում է, որ «պետական գրաւոր հրամանագրերու համաձայն, Թուրքիան 1914-18 բռնագրաւեց եւ կողոպտեց հայոց պատկանող բազմաթիւ շէնքեր, նաեւ 2050 հայ եկեղեցիներ ու 203 վանքեր եւ աւերեց զանոնք»[246]: Մոտավորապես նույն թվերն ենք տեսնում նաև Հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված «Հուշամատյանում»՝ «...1860 եկեղեցի եւ մատուռ, 229 վանքեր...»[247]:

Հայոց ցեղասպանության զոհերը դարձան նաև այդ վանքերին ու եկեղեցիներին պատկանող, ինչպես նաև արևմտահայերից շատերի անձնական սեփականությունը հանդիսացող, նրանց ընտանիքներում սրբությամբ պահված ու սերնդեսերունդ ժառանգաբար փոխանցված մեր միջնադարյան ձեռագիր մատյանները, այդ թվում՝ այուժետային մանրանկարներով, լուսանցազարդերով, բուսազարդ, կենդանազարդ և ֆիգուրատիվ մոտիվներով ծաղկեցված գրչագրերը, որոնց համար բանիմաց մարդիկ պատրաստ էին իրենց ունեցվածքը

---

[244] Տես Լեփսիուս Եօհաննէս, Հայաստանի ջարդերը: Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի նախագահ Մօտաւոր Արեւլքի Միսիոնին եւ գերման եւ հայկական ընկերութեան: Թարգմ. Միքայէլ Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 314:

[245] Տես Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 27, թիւ 26, էջ 809:

[246] Ղազարեան Հայկազն, Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 210:

[247] Յուշամատեան Մեծ եղեռնի. 1915-1965, Պէյրութ, 1965, էջ 1025:

տալ: Ազգային այդ անգին հարստության կորստի մասին սրտի ցավով ու անթաքույց տխրությամբ է արտահայտվել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, ականավոր հայագետ և արվեստաբան Գարեգին Հովսեփյանը: Նա գրել է. «Ոչնչացան հայ ժողովուրդի անգնահատելի գանձերը, որ ո՛չ ցեցը և ո՛չ ուտիճը պիտի ոչնչացնէր, բայց ոչնչացրեց մոլեգնեալ Էնվէրների և Թալէաթների թուրքական կառավարութիւնը՝ Վանտալների և Ատիլաների բարբարոսութիւնից առաւել աստիճաններով: Ոչնչացել են հազարաւոր ձեռագիրներից բաղկացած ժողովածուները, որոնց մէջ էր մարմնաւորուած հայ արուեստը, հայ մշակոյթը, հայի միտքը, հայի հոգին...»[248]:

Ոչ միայն հայկական, այլև համաշխարհային մշակույթի համար մեծ կորուստ էր ոչնչացումը հայկական վանքերի ու եկեղեցիների հարուստ մատենադարանների, որտեղ պահվում էին հազարավոր ձեռագրեր ու հնատիպ մատյաններ՝ Հին ու Նոր կտակարաններ, սաղմոսներ ու մաշտոցներ, ճաշոցներ ու ժամագրքեր, պատարագամատույցներ ու շարակնոցներ, հայսմավուրքներ ու ճառընտիրներ, քարոզագրքեր ու կանոնագրքեր, տոմարագրքեր ու տոնացույցներ, սրբերի վարքեր, հայ և օտար հեղինակների (Փավստոս Բուզանդ, Կորյուն, Եղիշե, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Ներսես Շնորհալի, Գրիգոր Տաթևացի, Հովհան Ոսկեբերան, Դիոնիսիոս Արեոպագացի, Թովմա Աքվինացի և այլք) գրչին պատկանող, հայ և համընդհանուր պատմությանը, փիլիսոփայությանը, բնական գիտություններին, արվեստին վերաբերող աշխատասիրություններ, հայկական մանրանկարչության գլուխգործոցներ[249]:

Հայկական հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, միջնադարյան ձեռագրեր, պատկերազարդ մատյաններ և հնատիպ

---

248 Յովսէփեան Գարեգին, Ապրիլի քսանչորսը – Դէպի լոյս եւ կեանք, Անթիլիաս, 1947, էջ 319-320:

249 Տես Հովհաննիսյան Անուշ, Հասարթյան Մուրադ, Կրկյաշարյան Սեդրակ, Ազգային-մշակութային եղեռն – «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 13:

եզակի գրքեր, կիրառական արվեստի բացառիկ գործեր, սրբազան իրեր ու առարկաներ ոչնչացվեցին և թալանվեցին դեռ համիդյան սպանդի՝ հայոց համատարած առաջին ջարդերի ընթացքում: Անդրադառնալով 1895 թվականի սեպտեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի կեսերն աննախադեպ ծավալներ ստացած, ծովափնյա Տրապիզոնից մինչև Անատոլիայի խորքերը հասած հայերի կոտորածներին, Մաղաքիա Օրմանյանը նշում է, որ «վերև գծուած սահմաններու մէջ վանք չէ եղած որ անձեռնմխելի մնացած ըլլայ, եկեղեցի չէ մնացած որ կամ քանդուած կամ պղծուած կամ մզկիթի փոխարկուած չըլլայ. վանքերը քանդուած և վնասած են, եկեղեցիները պղծուած, սրբութիւնները ոտնակոխ եղած, ծիսական գիրքերը պատռած, նուիրական առարկաները անարգ կիրառութեան գործածուած, զարդ ու սպասը բոլորովին անհետացած…»[250]: Տիգրանակերտի Ս. Սարգիս եկեղեցուն պատկանող, թուրքերի կողմից այդ տարիներին հափշտակված և կրկին ազատված, այժմ Փարիզում պահվող պատկերազարդ ձեռագրերից մեկում Տիգրանակերտի առաջնորդ Եզեկիել ծայրագույն վարդապետ Արշակունին թողել է հետևյալ հիշատակարանը. «1895 թուին Քրիստոսի, հոկտեմբեր 20, Օսմանցոց Համիտ թագաւորի ժամանակին, մեծ ջարդ մը արուեցաւ Հայոց ազգին: Բոլոր Հայաստանի մէջ գտնուած Հայոց եկեղեցիները յափշտակուեցան, ունեցած հնութիւնները եւ սուրբ անօթները պղծելով ցիրուցան եղան... Սուրբ Աւետարանը մեծ քանակութեամբ անօրէն Տաջիկներէն առնուեցաւ»[251]: Իսկ մեկ տարի անց՝ 1896 թվականին, ի պատասխան թուրքական պաշտոնական թերթերի տարածած այն ստահոդ լուրերին, թե շուտով գումարներ կհատկացվեն «վերջերս Անատոլի մէջ տեղի ունեցած անկարգութիւններէն» հետևանքով իբրև թե տուժած մզկիթները վերաշինելու և նորոգելու համար, Բարձր Դռանը հասցեագրված իր

---

[250] Օրմանեան Մաղաքիա, Ազգապատում, հատոր Գ, Երուսաղէմ, 1927, էջ 5029-5030:

[251] Տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, հատոր Ա, կազմեց Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան, Փարիզ, 1950, էջ 25:

թաքրիրում Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Գ Իզմիրլյանը զայրույթով պարզաբանել է. «Քանդուածներն ու վնասուածները հայոց սրբարաններն են, թւով 400-էն ավելի, իսկ մզկիթ ըլլալով, մէկ հատ միայն կայ Արաբկիրի մէջ…, որ հայոց թաղին կից ըլլալով, այրված է կրակի տրուած հայոց տուներուն հետ»[252]:

1894-1896 թվականներին Վան-Վասպուրականում, Էրզրումի (Կարին), Բաղեշի (Բիթլիս), Սվազի (Սեբաստիա), Խարբերդի, Դիարբեքիրի (Տիգրանակերտ), Տրապիզոնի և Օսմանյան կայսրության այլ նահանգների քաղաքներում ու գյուղավայրերում հայ ժողովրդի և նրա ստեղծած մշակութային արժեքների հանդեպ թուրք ու քուրդ մոլեռանդ խուժանի գործած հանցանքների՝ սպանությունների, բռնությունների և կեղեքումների բազմաթիվ փաստեր են պարունակում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական հանդեսի՝ «Արարատ» ամսագրի, ինչպես նաև Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության «Դրօշակ» պաշտոնաթերթի էջերում զետեղված, Արևմտյան Հայաստանից դեպքերի թարմ հետքերով ստացված անստորագիր նամակները, հոդվածներն ու տեղեկագրերը[253]: Բերենք այդ աղբյուրներից քաղված՝ մշակութային վանդալիզմի մասին վկայող առավել հատկանշական և աղաղակող օրինակներ:

---

[252] Նամակ Պոլսից – Դրօշակ, Ժընեւ, 1896, № 13, 15 մայիս, էջ 100:

[253] Տես, օրինակ. Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում - Արարատ, Վաղարշապատ, 1896, համար Բ, փետրուար (էջ 87-92), Տաճկահայք - Արարատ, Վաղարշապատ, 1896, համար Գ, մարտ (էջ 140-142), Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին – Արարատ, Վաղարշապատ, 1896, համար Ժ, հոկտեմբեր (էջ 473-476), համար ԺԱ, նոյեմբեր (էջ 525-530), համար ԺԲ, դեկտեմբեր (էջ 578-585), Սիւրմէնէի կռիվը – Դրօշակ, Վիեննա, 1896, № 6, 20 փետրուար (էջ 44-46), Կոտորածներ – Դրօշակ, Վիեննա, 1896, № 10, 1 ապրիլ (էջ 75-78), Կոտորածներ – Դրօշակ, Վիեննա, 1896, № 11, 10 ապրիլ (էջ 83-86), Նամակ Պոլսից – Դրօշակ, Ժընեւ, 1896, № 13, 15 մայիս (էջ 100), Նամակներ պարսկա-տաճկական սահմանագլխից – Դրօշակ, Վիեննա, 1896, № 16, 27 յունիս (էջ 123-124) և այլն:

1895 թվականի աշնանը Էրզրումի նահանգում կործանվել և պղծվել են Բաբերդ քաղաքի և շրջակա գյուղերի եկեղեցիները, ինչպես նաև Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Քրիստափոր վանքերը, պատառոտվել ու ապականվել են դրանց մեջ եղած սրբապատկերները: Կրակի է մատնվել Բասենի գավառում գտնվող վանքը: Երզնկայի կոտորածի ընթացքում թալանվել են թեմի ութ վանքերը, հիմնահատակ քանդվել է Մեծ Արմրդանի եկեղեցին: Լուսոնք գյուղի եկեղեցուն պատկանող Ավետարանը «հազար կտոր են արել, փողոցը ձգել և ոտքի տակ տուել»[254], իսկ եկեղեցին՝ մզկիթի վերափոխել: Մզկիթ են դարձրել նաև Բլուր, Բլուրակ, Բուխտի, Սուրբ Թորոս, Նեգ և Բալախոր գյուղերի եկեղեցիները: Քեղ (Քղի) գավառակում թալանվել են քսաներկու վանքեր ու եկեղեցիներ: Ավարի է ենթարկվել և աղտեղություններով պղծվել Թոփալ-Չաուշ գյուղի եկեղեցին, հրդեհվել են Ումուդում (Բաղնիք) և Դագ գյուղերի եկեղեցիները, մասամբ ավերվել են Դունիկ, Օձնի և Գարար գյուղերի եկեղեցիները, կողոպտվել է Խաչկավանքի եկեղեցին:

Վանի նահանգում թուրքերն ու քրդերը կողոպտել, այրել և ավերել են Աղբակի, Արճեշի, Գավաշի, Թիմարի, Կարճկանի, Հավաձորի և այլ գավառների ու գավառակների հայկական վանքերն ու եկեղեցիները: Կործանվել ու պղծվել են դրանցից շատերի Սուրբ սեղանները, իսկ առանձին դեպքերում ավարառու հրոսակները «յափշտակած քահանայական զգեստներն հագած, ձեռներին Սուրբ խաչ, Աւետարան և Սուրբ սկիհ, անամօթ պարեր են պարել թէ՛ իրենց և թէ՛ հայոց գիւղերում՝ քրիստոնէից հաւատը և եկեղեցին ծաղրելու խորհրդով»[255]:

Ավերվել ու թալանվել են նաև Բաղեշի նահանգի Սպարկերտ, Խիզան, Երուն (Արունք), Մամռտանք, Մուշ, Շիրվան և այլ գավառներում, գավառակներում, սանջակներում ու գյուղախմբերում եղած հայկական վանքերը, եկեղեցիներն ու մատուռները, որոնց մի մասը սրբապղծվել և մզկիթների է վերածվել: Սպարկերտ գավառի գյուղերում «այրած են բոլոր ե-

---

[254] Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում – Արարատ, Վաղարշապատ, 1896, համար Բ, փետրուար, էջ 88:

[255] Նույն տեղում, էջ 89:

կեղեցական գրքերը և զգեստները»[256]: Խիզան գավառի Սուրբ Խաչ վանքի եկեղեցին «զրկւել է իր փառահեղ կարգ ու սարքից, արծաթեայ անօթները տարել, պատերի քանդակները ջարդոտել են… Տակն ու վրայ են արել իր մէջ 1000-ի չափ ընտիր գրքեր պարունակող գրադարանը»[257]:

Սեբաստիայի նահանգում ավարի են ենթարկվել ու հրկիզվել շուրջ երկու տասնյակ հայկական վանքեր և եկեղեցիներ: Այսպես՝ Թամզարա գյուղի Ս. Թագավոր և Ս. Գևորգ եկեղեցիներում կողոպտվել են բոլոր անոթները, քանդվել են Սուրբ սեղանները, պղծվել են սրբերի պատկերները: Նույն ճակատագրին են արժանացել նաև Սիս գյուղի շրջակայքում գտնվող Առաքելոց վանքը, Արմուտաղ գյուղի Ս. Հակոբ վանքը, Տևրիկի Ս. Աստվածածին և Ս. Երրորդություն եկեղեցիները, Տարենտե և Աշոտի գյուղերի եկեղեցիները:

Խարբերդի նահանգում ավերել ու հրդեհել են քաղաքի Ս. Կարապետ և Ս. Ստեփանոս եկեղեցիները, թալանել, այրել ու ապականել են Ակնի գավառի Ս. Փրկիչ, Սորսորի Ս. Գևորգ և Թադեի Ս. Աստվածածին վանքերը: Ավելի քան 50 հայ գյուղեր ունեցեղ Խարբերդի թեմում «ոչ մի եկեղեցի այլևս չէ ծառայում իւր կոչմանը և ոչ մի քահանայ չկայ ժողովրդի հոգևոր պետքերը լցուցանելու համար»[258]:

Դիարբեքիրի նահանգում «բոլորովին կողոպտւել, մերկացւել... են տեղւոյս ուխտատեղի համարւած Ալիբունար գիւղի Ս. Աստւածածին մատուռը, Սադի գիւղի Ս. Թադէոս առաքեալին կառուցած Ս. Խաչ մատուռը, որ դարերէ ի վեր ժողովրդին համար սրբավայր մ'էր»[259]: Թալանի է ենթարկվել նաև թանկագին հնություններով հարուստ Արկնի (Արղնի, Արղանա) գյուղաքաղաքի Բարձրահայաց Սուրբ Աստվածածին վանքը:

---

[256] Կոտորածներ – Դրօշակ, Վիեննա, 1896, № 11, 10 ապրիլ, էջ 86:

[257] Տես Նամակներ պարսկա-տաճկական սահմանագլխից – Դրօշակ, Վիեննա, 1896, № 16, 27 յունիս, էջ 123:

[258] Հայաստանեայց եկեղեցին Տաճկաստանում – Արարատ, Վաղարշապատ, 1896, համար Բ, փետրուար, էջ 91-92:

[259] Կոտորածներ – Դրօշակ, Վիեննա, 1896, № 10, 1 ապրիլ, էջ 77:

Տրապիզոնի նահանգում 1895 թվականի հայերի կոտորածների ժամանակ ավերվել ու թալանվել են քաղաքի և մերձակա գյուղերի եկեղեցիները: Կատրաս գյուղի եկեղեցում թուրք թալանչիները «Սուրբ Սեղանին և Մայր Աստուածածնայ պատկերին վրայ պղծեցին, ժամագրքերը կտրտեցին, այրեցին»[260]:

Հայկական բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ տուժեցին նաև 1896 թվականի ամռանը Վասպուրականում տեղի ունեցած զանգվածային կոտորածների ժամանակ: Ականատեսների վկայությամբ՝ «միայն Վանի մէջը հրկիզեալ եկեղեցիաց և դպրոցաց թիւն կը հասնի 500-ի»[261]: Հարձակվելով Վանի հայկական թաղամասերում գտնվող տաճարների վրա, թուրք ելուզակները կողոպտել, այրել ու պատառոտել են մեծ քանակությամբ խաչկալներ, եկեղեցական զանազան իրեր և սրբապատկերներ: Հրդեհվել ու մասամբ քանդվել են նաև Վարագի Ս. Խաչ և Ս. Գրիգոր Լուսավորչի վանքերը, Կարմրավորի մենաստանը, Աղթամարի, Նարեկի, Մեծոփա, Անգղի և Սպիտակ վանքերը, Լիմ ու Կտուց կղզիների անապատները, Շուշանց գյուղի եկեղեցին և այլն[262]: Ինչպես հաղորդում է «Արարատ» ամսագրի անանուն թղթակիցը՝ Վասպուրականի «բոլոր գաւառի և գիւղօրէից սուրբ եկեղեցեաց և վանօրէից մէջը այժմ լռած են եկեղեցական ժամերգութիւնք և կրօնական արարողութիւնք: Եկեղեցիներն ու վանքերը ամայի և աւերակ մոխրակոյտ մը կամ իսլամական աղօթատեղիներ դարձած են... Կողոպտուեցան եկեղեցական թանկագին սպասները, անօթները, սփռոցները, որոնց գումարը կը կազմէ ահագին հարս-

---

[260] Սիւրմէնէի կռիվը – Դրօշակ, Վիեննա, 1896, № 6, 20 փետրուար, էջ 45:

[261] Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին – Արարատ, Վաղարշապատ, 1896, համար ԺԱ, նոյեմբեր, էջ 528:

[262] Համիդյան ջարդերի և Հայոց ցեղասպանության ժամանակ թուրք ու քուրդ բարբարոսների կողմից ավերված հայկական վանքերի, ինչպես նաև դրանցում եղած՝ թալանի ենթարկված կամ ոչնչացված հնությունների, մշակութային ու գեղարվեստական արժեքների մասին բազմաթիվ փաստեր և կարևոր տեղեկություններ են բերված հայտնի պատմաբան, բանասեր ու ձեռագրագետ Համազասպ Ոսկյանի «Վասպուրական-Վանի վանքերը» եռահատոր աշխատության վերջին պրակում (Վիեննա, 1947):

տութիւն... Կողոպտուեցան կամ բզիկ-բզիկ կտրտուեցան հին ձեռագիրները... Ս. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ: Այսօր զօրքեր և ուրիշ թիւրք կամ քիւրդ աւարառուներն կը բերեն ու կը ծախեն կամ ջարդել կը տան արծաթեայ և ոսկեայ ծանրակշիռ սկիհներ, խաչեր, գաւազաններ, թագեր, բուրվառներ, արծաթապատ կամ ոսկեպատ աւետարաններ...»[263]:

1894-1896 թվականների հայկական կոտորածների ընթացքում ոչնչացան կամ անհետացան հարյուրավոր միջնադարյան գրչագրեր, պատկերազարդ մագաղաթյա մատյաններ ու հնատիպ հազվագյուտ գրքեր: Կոստանդնուպոլսում լույս տեսած «Արևելք» ազգային օրաթերթը 1910 թվականի իր համարներից մեկում զետեղել է քահանա Գարեգին Ոսկերիչյանի հաղորդագրությունը, որտեղ, մասնավորաբար, ասված է. «Ցաւօք կը յայտնենք թէ 1895-ի դէպքերու միջոցին տեղւոյս (Եդեսիայի – Ա.Ա.) Ս. եկեղեցիէն կողոպտուած ու կորսուած են կարեւոր ձեռագրեր... Այս առթիւ տխրութեամբ կը յիշենք նաեւ ազգային յիշատակ մը եղող մատենական կարեւոր կորուստ մը... Դէպքերու նոյն չարաշուք թուականին քաղաքիս Ս. եկեղեցիէն կողոպտուած է ոսկեզօծ ու արծաթազօծ զարդանկարներով, պատկերներով ու գլխադիրներով պճնուած մագաղաթեայ ընտիր աւետարան մը, որ դիտողին հիացումը կը գրաւէր: Կոստանդին Ա. Հայոց Կաթողիկոս ՈՂԷ (1248 – Ա.Ա.) յատկապէս գրել տալով սոյն աւետարանը Կիրակոս անուն ճարտար գրչի մը՝ նուէր ըրած էր Հեթում թագաւորի Զապէլ թագուհիին՝ «ի վայելումն արքայորդւոյ նոցին Լեւոնի»»[264]: Դատելով Գ. Ոսկերիչյանի նկարագրությունից, խոսքն այստեղ, ամենայն հավանականությամբ, վերաբերում է 1248 թվականին Կիլիկյան Հայաստանի Հռոմկլա քաղաքում կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաբերդցու «դռան սարկաւագ եւ սպասաւոր» Ստեփանոս եպիսկոպոսի պատվերով հանճա-

---

[263] Տեղեկագիր Վասպուրականի կոտորածին – Արարատ, Վաղարշապատ, 1896, համար ԺԲ, դեկտեմբեր, էջ 581 և 585:

[264] Ոսկերիչեան Գ., Գերմանք ու հայ մատենագրութիւն – Արեւելք, Կոստանդնուպոլիս, 1910, 18 մարտի, № 7282, էջ 1:

րեղ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ուսուցիչ՝ գրիչ ու ծաղկող Կիրակոսի ստեղծած Բարձրաբերդի Ավետարանին, որը, բարեբախտաբար, չի ոչնչացել և այժմ պահվում է Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական թանգարանում (ձեռագիր № 8):

Թուրք ջարդարարների ձեռքով այրվեցին Լեռնային Կիլիկիայի Մարաշ քաղաքի Ս. Գևորգ եկեղեցում եղած մագաղաթյա կաշեպատ մատյանները[265]: Մոխրացավ նաև Խարբերդի նահանգի Ակնի գավառի Բինկա (Բինկյան) գյուղի Ս. Հրեշտակապետ եկեղեցուն պատկանող, 19-րդ դարի վերջում Կոստանդնուպոլսում նորոգված ու կրկին կազմապատված մագաղաթյա նկարազարդ Ավետարանը, որն այդ ժամանակվա գներով արժեր 200-300 օսմանյան ոսկի[266]:

Համիդյան ջարդերի, ավերումների ու ավարառության հետևանքով հայկական եկեղեցիներից շատերը պարզապես զրկվեցին գրքերից: Պատահական չէ, որ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Մատթեոս Գ Իզմիրլյանը 1896 թվականի փետրվարի 28-ին գրված, Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցուն ուղղված նամակում վերջինիս խնդրում է այդ եկեղեցիներին «սրբազան մատեանք ու պաշտամանց գրքեր» նվիրաբերել, որպեսզի «քահանայք կարող իցեն կատարել զկանոնական ժամերգութիւնսն և զխորհուրդ սրբոյ Պատարագի»[267]:

Աբդուլ Համիդի գահակալության օրոք հայ ժողովրդի և նրա ստեղծած մշակույթային ժառանգության հանդեպ կատարված անպատիժ հանցանքներն ու բարբարոսական վարվելակերպը գեղարվեստական արտակարգ ուժով ներկայացվել են 1890-ական թվականներին նկարիչ Վարդգես Սուրենյանցի մի շարք գործերում, մասնավորաբար՝ «Ոտնահարված

---

265 Տես Քոլանջյան Սուրեն, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1965, Բ-Գ-Դ, Փետրուար-Մարտ-Ապրիլ, էջ 104:

266 Նույն տեղում:

267 Տաճկահայք – Արարատ, Վաղարշապատ, 1896, համար Գ, մարտ, էջ 141-142:

սրբություն» (1895) և «Ջարդից հետո» («Կույսերի կոտորածը», 1899) հանրահայտ կտավներում: Դիտողի վրա ցնցող տպավորություն են թողնում ինչպես եկեղեցիների հատակին ընկած հոգևորականի և բռնաբարված կույսերի արնահեղձ դիակները, այնպես էլ պատառոտված ու ոտնահարված, արյամբ շաղախված մեր սրբությունները՝ միջնադարյան ձեռագրերը, մանրանկարներով զարդարված մագաղաթյա մատյանները: Սուրենյանցի այս կտավները ոչ միայն գեղարվեստական բացառիկ արժեքներ են, այլև սուլթանական վարչակարգի օրոք Օսմանյան կայսրությունում հատուկ հրահրված ու խրախուսված, հայերի դեմ ուղղված բռնությունների, համատարած կոտորածների և մշակութային վանդալիզմի անժխտելի ապացույցներ ու մեղադրագրեր, քանի որ դրանք կերտելիս նկարիչն իր ստեղծագործական երևակայության հետ մեկտեղ հենվել է նաև ջարդերից փրկված հայ գաղթականների հետ իր անձնական հանդիպումների ու զրույցների, լրատվական արժանահավատ տեղեկությունների, փաստացի վավերագրերի և լուսանկարների վրա:

Հայերի զանգվածային կոտորածները և դրանց ուղեկցող մշակութային ցեղասպանությունը կրկնվեցին ու շարունակվեցին երիտթուրքերի հեղաշրջումից ամիսներ հետո՝ 1909 թվականի ապրիլին, Ադանայի (Դաշտային Կիլիկիա) և Հալեպի նահանգների հայաբնակ մի շարք վայրերում, ուր հրկիզվեցին ու թալանվեցին հայկական տասնյակ եկեղեցիներ: Ինչպես գրում է անվանի հայագետ ու ձեռագրագետ Սուրեն Քոլանջյանը՝ «կասկածից վեր է, որ այս ժամանակ ևս այրված և թալանված այդքան սրբավայրերի մեջ պետք է, որ ոչնչացված լինեին նաև բազմաթիվ ձեռագիր մատյաններ»[268]:

Միջնադարյան գրքարվեստի այդ թանկագին կոթողները, ինչպես հայտնի է, հիմնականում ստեղծվում, ժամանակի ընթացքում նորոգվում և ընդօրինակվում էին հայկական վանական կենտրոններում ու համալիրներում, որոնք ոչ միայն հոգևոր դպրանոցներ էին, այլև ընդհանուր լայն, համալսարա-

[268] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1965, Բ-Գ-Դ, Փետրուար-Մարտ-Ապրիլ, էջ 105:

նական բազմակողմանի գիտելիքներ տվող կրթարաններ: Միջին դարերում, մինչև տպագրության սարքի հայտնագործումն ու տարածումը, հայոց աշխարհում հենց այդ վանքերը «եղան տեսակ մը տպարաններ, ուր հրատարակուած կամ բազմագրուած ամէն գիրք իբրեւ գանձ կը պահուէր անոնց մէջ՝ մեծ գուրգուրանքով»[269]: Միջնադարյան մատյաններից՝ մագաղաթի կամ թղթի վրա գրված[270], կաշվով կամ թավիշով կազմապատված, առանձին դեպքերում փղոսկրե, արծաթե և ոսկե կողքեր, պատյաններ կամ տուփեր ունեցող[271], երբեմն էլ մարգարիտներով, թանկարժեք ու կիսաթանկարժեք այլ քարերով

---

269 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 20, թիւ 25, էջ 776:

270 Ձեռագիր մագաղաթյա մատյանները հաճախ զարդարվում էին մանրանկարներով: Գեղարվեստական առավել հարուստ ձևավորումներ ունեին միասնական ավետարանները՝ այսպես կոչված քառավետարանները: Առատորեն ու շքեղորեն էին նկարազարդված նաև Աստվածաշունչը (կամ դրա առանձին հատվածները), ճաշոցներն ու ճառընտիրները: Մնացած ձեռագիր գրքերն ավելի համեստ էին ձևավորվում՝ բավարարվելով միայն բուսական կամ կենդանակերպ գլխազարդերով, լուսանցազարդերով, զարդատառերով, ինչպես նաև պայմանական բնույթ ունեցող դիմանկարներով (տես Сокровища книжного искусства в собраниях СССР. Матенадаран [составители и авторы текста В.О. Казарян и С.С. Манукян]. Том 1, Москва, 1991, с. 15): Թղթի վրա գրված ձեռագրերի մեծ մասը պատմությանը, փիլիսոփայությանը, աշխարհագրությանը, աստղագիտությանը, մաթեմատիկային, բժշկությանը, գիտության այլ բնագավառներին վերաբերող, սովորաբար մանրանկարներից զուրկ կամ սակավաթիվ պատկերներ ու զարդային դրվագներ ունեցող, արտաքուստ համեստ ձեռագրեր էին (տես Дрампян Ирина, Корхмазян Эмма. Художественные сокровища Матенадарана. Москва, 1976, с. 33):

271 Հայկական ձեռագրերից շատերն ազնիվ մետաղներից, առավելապես արծաթից պատրաստված պահպանակներ ունեն (տես Дрампян Ирина, Корхмазян Эмма. Художественные сокровища Матенадарана. Москва, 1976, с. 137): Մեզ հասած մետաղյա կազմերից ամենահինը Բարձրաբերդի վերոհիշյալ Ավետարանի 1254 թվականի արծաթապատ ոսկեջրած կազմն է, որի կատարողը, հավանաբար, Վարդան կազմողն էր (տես Հովսեփյան Գարեգին, Բարձրաբերդի Ավետարանի ոսկերչական կազմը – Հովսեփյան Գարեգին, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Բ, Երևան, 1987, էջ 263):

զարդարված, առավելապես 10-րդ դարից հետո ստեղծված կամ ընդօրինակված Աստվածաշնչի, Ավետարանի, աստվածաբանական, կրոնածիսական ու եկեղեցական այլազան ձեռագրերի, ինչպես նաև պատմական, իմաստասիրական, հնագիտական բացառիկ գրչագրերի հետ մեկտեղ վանական գրապահոցներում ու մատենադարաններում կային նաև 1512 թվականից ի վեր հայերեն լեզվով հրատարակված հնատիպ գրքեր[272]: Հայկական վանքերում գործած գրչության կենտրոնները միևնույն ժամանակ մեր միջնադարյան կերպարվեստի (մասնավորաբար՝ մանրանկարչության) յուրօրինակ դպրոցներ և թանգարաններ էին, իսկ վանական հարուստ մատենադարաններում եղած մատյանները «մեծ արժէք մը ունէին ոչ միայն գիտական, պատմական ու բանասիրական, այլեւ արուեստի տեսակէտով»[273]:

Բարեբախտաբար, մեր վանականներն ու հայ բնակիչները հասցրել են ձեռագրերի մի մասը պահել թաքստոցներում: Սակայն թուրքերը դրանցից շատերը հայտնաբերել են, ոչնչացրել կամ կողոպտել, իսկ մնացած մատյանները երկար ժամանակ հողի տակ կամ խոնավ պատերի մեջ պահվելուց հետո

---

272 Միայն Կեսարիայի Ս. Կարապետ վանքում և Պալակասի գյուղի եկեղեցում Կեսարիայի թեմի առաջնորդ, Հայաստանյաց առաքելական եկեղեցու եպիսկոպոս, բանասեր-բանահավաք ու մատենագիր Տրդատ Պալյանը դեռ 1894 թվականին, միջնադարյան ձեռագրերի հետ մեկտեղ, գտել էր նաև 1000 կտոր հնատիպ մատյաններ ու տպագիր հազվագյուտ գրքեր (տես Տ. Վ. Պ. [Տրդատ վարդապետ Պալեան], Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ'ալ – Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1894, թիւ 12, դեկտեմբեր, էջ 357): Դրանցից հատկապես արժեքավոր էին Վենետիկում 1512-1513 թվականներին Հակոբ Մեղապարտի տպագրած «Ուրբաթագիրքը», «Աղթարքը», «Պատարագատետրը» և «Տաղարանը», որոնք, ինչպես նկատում է Սուրեն Քոլանջյանը, «մրցում են մեր թանկարժեք ձեռագրերի հետ, քանի որ աշխարհով մեկ հազիվ մի քանի օրինակ կարելի է այժմ ճարել այդ հնագույն տպագիր գրքերից» (Քոլանջյան Սուրեն, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1966, Թ-Ժ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 91):

273 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 20, թիւ 25, էջ 778:

քայքայվել են: Հայտնի է, որ Սեբաստիայի Ս. Նշան վանքը կոողոպտած թուրք զինվորները, չգտնելով վանքի թաքստարանի բանալիները, կոտրել են դրա երկաթյա դուռը և թալանել 293 միջնադարյան ձեռագիր[274]: Թուրքերը գտել ու թալանել են ոչ միայն Սեբաստիայում, այլև քաղաքի շրջակայքում և նահանգի ողջ տարածքում հայերի պատրաստած թաքստարաններից ու գաղտնախցերից շատերը[275]: Դեռ 1896 թվականի Վանի հերոսական ինքնապաշտպանության ու դրան հետևած զանգվածային կոտորածների ժամանակ մեծ քանակությամբ ձեռագրեր են թաքցվել հայկական վանքերում ու եկեղեցիներում: Երբ 14 տարի անց ազգագրագետ Երվանդ Լալայանը Վասպուրականի հայկական ձեռագրերը ցուցակագրելու նպատակով ուղևորվեց Վան և այդ թաքստոցներից հանեց այնտեղ դարանված գրչագիր մատյանները, նրանից մեծ ջանքեր պահանջվեցին խոնավությունից նամշած, բորբոսնած ձեռագրերը արևի տակ չորացնելու, մաքրելու ու տեսքի բերելու համար[276]:

Մեծ եղեռնի ականատեսներից մեկի՝ թուրքահպատակ արաբ, Խարբերդի գավառապետի տեղեկալ, հետագայում Դամասկոսում աշխատած փաստաբան Ֆայեզ էլ Ղոսեյնի վկայությամբ՝ հայկական հին ձեռագրերից ու հնատիպ գրքերից շատերի թերթերը, այդ թվում նաև մանրանկարներով զարդարված էջերը, թուրք նպարավաճառներն օգտագործել են որպես փաթեթավորման անարժեք թուղթ[277]: Նույնն են հաստա-

---

[274] Տես Քեշիշյան Մ., Հայկական մշակութային եղեռնը Օսմանյան Թուրքիայի տարածքում – Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2003, № 7, էջ 127:

[275] Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Ե, Մայիս, էջ 57:

[276] Տես Մելիք-Փաշայան Կ., Երվանդ Լալայան (Ծննդյան 100-ամյակի առթիվ) – Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1964, № 3, էջ 39:

[277] Տես Էլ Ղոսէյն, Ֆայէզ, Հերոսական հայութեան անցեալէն: Ջարդերը Հայաստանի մէջ (ականատեսի վկայութիւններ), Գահիրէ, 1960 (էջ 23) և Սիրիացի արաբ ականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին (թարգմանությունը արաբերեն բնագրից, առաջաբանը, ներածությունը և ծանոթագրությունները Արշակ Փոլադյանի և Լևոն Սարգսյանի), Դամասկոս, 2017 (էջ 84-85):

տում նաև Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանի գրած հետևյալ տողերը. «Այսօր միայն մեր սիրտը դառնօրեն կը կոտտայ, երբ կը տեսնենք կորուստը հազարաւոր ձեռագիրներու, որոնք արհաւիրքի տարիներուն աւարը դարձան տգետ խուժանի մը: 1921-ին, Կարնոյ տարագրութեանս սկիզբի օրերուն, ուզեցի տակաւ ընտելանալ քաղաքի աղքատ շուկային... Ներս մտայ նպարատունէ մը եւ ուզեցի ձիթապտուղի քանի մը հատիկ գնել: Յուզումս զիս պիտի խեղդէր այդ պահուն, երբ տեսայ, որ թշուառ խանութպանը մատներուն մէջ ոլորած մագաղաթեայ նուրբ եւ երկաթագիր թերթի մը մէջ ծրարեց ուզածս հատիկները...»[278]: Ավելին՝ ինչպես գրված է հասարակական գործիչ, պատմաբան և ազգագրագետ Գրիգոր Հալաճյանի հուշերում, դեռևս 1926 թվականին Սեբաստիայի շուկայում մթերքները ծրարվում ու փաթեթավորվում էին հայերեն տպագիր գրքերի և ձեռագիր մատյանների թերթերով, որոնց մեջ հանդիպում էին նաև գունագեղ մանրանկարներով զարդարված էջեր[279]:

1914 թվականին Գևորգ Մեսրոպը երկարատև պրպտումներ է կատարել և իր տեսած ձեռագրերը ցուցակագրել Արմաշի դպրեվանքում, Կեսարիայում և շրջաններում, Մշո Ս. Առաքելոց (Թարգմանչաց) վանքում, Մարզվանում, Ամասիայում, Թոքատում, Զիլեում, Սեբաստիայում և շրջաններում, Տևրիկում, Մալաթիայում, Ակնում, Կամախում, Բիթլիսում, Խարբերդում և շրջաններում, Չմշկածագում, Չարսանջակում, Բալուում, Տիգրանակերտում, Չնքուշում, Երզնկայում, Վանի եկեղեցիներում և այլուր: Տարիներ անց հրատարակած իր վերոհիշյալ հոդվածում խոստովանելով, որ «այս ցուցակը պակասաւոր է դեռ, որովհետեւ հոն չկան Աղթամարի, Վարագի, Վանայ միւս վանքերուն, օրինակ՝ Աղբակի Ս. Բարթողիմէոս, Նարեկ, Ս. Յակոբ եւ այլ բազմաթիւ վանքերու ձեռագիրները,

---

278 Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ եւ մասնաւորաց, կազմեց Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան, Առաջնորդ Հայոց Հալէպի, Երուսաղէմ, 1935, էջ Զ:

279 Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Ե, Մայիս, էջ 57:

նոյնպէս կը պակսին Էրզրումի եւ իր շրջակայից վանքերուն եւ եկեղեցիներուն գրչագիրները, Էնկիւրիի եւ Թուրքիոյ այլ մասերու վանական, եկեղեցապատկան ու անհատական ձեռագիրները…»[280], հոդվածագիրը կարևոր տեղեկություններ է հայտնում ոչ միայն իր գտած գրչագրերի քանակի, այլև դրանց առավելագույն արժեքի մասին. «…ձեռագիրնէր կային անոնց մէջ որ պատերազմէն առաջ մինչեւ 5000 օսմանեան ոսկի գնահատուած էին օտարներէն իսկ»[281]: Եվ եթե մեզ հայտնի լիներ մեր ձեռագրական կուրուստների իրական թիվը, ապա կարող էինք որոշել նաև դրանց այսօրվա մոտավոր արժեքն ու, հետևաբար, հատուցնան չափը, թեև ամենքս էլ քաջ գիտակցում ենք, որ «այս կորուստը ո՛չ նիւթական նժարներով կարելի է կշռել, ո՛չ ալ ուրիշ արժէքներով փոխանակել»[282]:

Բայց, դժբախտաբար, չկան համիդյան ջարդերից և Հայոց ցեղասպանությունից առաջ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում եղած հայերեն ձեռագրերի համահավաք, լիարժեք ցուցակներ: Թեև այդ ժամանակ տվյալ ուղղությամբ աշխատանքներն արդեն ծավալվել էին և որոշակի արդյունք տվել, սակայն դեռևս ի մի չէին բերվել ու չէին ամփոփվել: Հայ անվանի գիտնականներ, եկեղեցական ու մշակութային գործիչներ Ղևոնդ Փիրղալեմյանը, Հովսեփ Ճանիկյանը, Գարեգին Սրվանձտյանը, Արսեն Թոխմախյանը, Տրդատ Պալյանը, Երվանդ Լալայանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Հակովբոս Տաշյանը, Գարեգին Հովսեփյանը, Հովհաննես Գազանճյանը, Բաբկեն Կյուլեսերյանը, Թորգոմ Գուշակյանը, Սմբատ Տեր-Ավետիսյանը, Հրաչյա Աճառյանը, Հակոբ Թոփճյանը, Մեսրոպ Մաքսուդյանը, Արշակ Միհրդատյանը, Հակոբ Քոսյանը, գրող և մանկա-

---

280 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 20, թիւ 25, էջ 778:

281 Նոյն տեղում, էջ 779:

282 Եարտըմեան Տ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Բ. Տպագրութիւն (Նոր յաւելումներով), Վենետիկ, 2001, էջ 95:

վարժ Հարություն Թումանովը (Թումանյան), Խրիմյան Հայրիկի ազգական Խորեն Խրիմյանը, վանեցի ուսուցիչ Հովհաննես (Օննիկ) Բարաղամյանը և ուրիշներ ուսումնասիրել, ցուցակագրել ու նկարագրել են Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերի վանքերում ու եկեղեցիներում, ազգային առանձին կրթարաններում (ինչպես, օրինակ, Կարինի Սանասարյան և Արծնյան վարժարանների գրադարաններում) և մասնավոր հավաքածուներում եղած հազարավոր ձեռագրեր[283]: Ըստ որում, թվարկվել ու հակիրճ ներկայացվել են նաև դրանցում զետեղ-

[283] Տես, օրինակ. Սրուանձտեանց Գարեգին, Թորոս աղբար. Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, մասն երկրորդ, Կ. Պոլիս, 1884, Նօտարք Հայոց, Հավաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Տոսբեցւոյ, Վարագայ վանուց վանականի, Կ. Պոլիս, 1888, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հատոր Ա, Կեսարիոյ վիճակ, Տետր Ա, Ցուցակ հայերէն ձեռագրաց սուրբ Սարգսի վանուց ի Կեսարիա, կազմեց Տրդատ վարդապետ Պալեան, Կոստանդնուպոլիս, 1892, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հատոր Ա, Կեսարիոյ վիճակ, Տետր Բ, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Կեսարիոյ եւ Սուրբ Գէորգ եկեղեցւոյն Գըրշէհրի, կազմեց Տրդատ վարդապետ Պալեան, Կոստանդնուպոլիս, 1893, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին, կազմեց Հրաչեայ Յ. Աճառեան, Վիեննա, 1900, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, պրակ Ա, Թիֆլիս, 1915 և այլն: Հայկական ձեռագրերի հավաքման, դրանց նկարագրության և ուսումնասիրության գործում առանձնահատուկ դեր է կատարել ականավոր հայագետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, արքեպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանը: 20-րդ դարի սկզբին նա ձեռնարկել է ու երկարատև հոգնաջան աշխատանքի շնորհիվ կազմել ոչ միայն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում ցրված, այլև աշխարհում եղած ու իրեն հայտնի հայերեն բոլոր գրչագիր մատյանների հսկայածավալ՝ 23.500 նմուշներ ընդգրկող ձեռագրացուցակը («Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց»), որն այդպես էլ չի հրատարակվել և այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (Մեսրոպ Տեր-Մովսիսյանի կենսագրականը և նրա կազմած ցուցակի նկարագրությունը տես Տէր-Վարդանեան Գէորգ, Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Կենսագործունէութիւնը, «Ընդհանուր ցուցակ հայերէն ձեռագրաց», Մատենագիտութիւն, Երեւան, 1999):

ված կերպարային-թեմատիկ և դեկորատիվ-նախշաձև մանրանկարները: Սակայն նկատենք, որ վերոհիշյալ հեղինակները բազմաթիվ ձեռագրեր պարզապես չեն տեսել կամ ժամանակ ու հնարավորություն չեն ունեցել դրանք ոչ միայն նկարագրելու, այլ թեկուզ թվելու, ցուցակագրելու համար: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այդ ցուցակների անտիպ բնագրերից շատերն էլ (ինչպես, օրինակ, Ղևոնդ Փիրղալեմյանի, Տրդատ Պալյանի և Երվանդ Լալայանի աշխատությունների մի մասը կամ Արսեն Թոխմախյանի և Խորեն Խրիմյանի կազմված ձեռագրացուցակները) ոչնչացել են կամ անհետ կորել:

Համահավաք, ամբողջական ցուցակների բացակայությունն է, թերևս, հիմնական պատճառը, որ մեր ունեցած ձեռագրային կորուստների, եթե ոչ իրական, ապա զոնե հավանական քանակությունը պարզելու փորձեր ձեռնարկած մասնագետները բերում են իրարից հայտնաբար տարբերվող թվեր: Այսպես, 1931 թվականին Նյու Յորքի «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթում հրատարակված, վերը մեջբերված աշխատության մեջ Գևորգ Մեսրոպը հատուկ անդրադարձ է կատարել նաև մշակութային եղեռնի ընթացքում ոչնչացված ու անհետացած ձեռագրերին, հանգելով հետևյալ եզրակացության՝ «ապահով կրնանք ըսել թէ հայ ձեռագիրներէն առնուազն 3000-4000 կտոր կորսուած պէտք է նկատել…»[284]: Տասնամյակներ անց՝ 1960-ական թվականներին, Սուրեն Քոլանջյանը մեզ արդեն ծանոթ իր հոդվածաշարում առաջին անգամ շարադրել է մեր ձեռագրական կորուստների համառոտ պատմությունը, «ուրուագծել 1894-1896, 1909, 1915 թթ. Վասպուրականում, Տարօնում, Կարինում, Կեսարիայում, Մալաթիայում, Անկիւրիայում, Արմաշում, Սեբաստիայում ոչնչացուած եւ մասամբ

---

284 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 20, թիւ 25, էջ 778:

փրկուած ձեռագրական հաւաքածուների պատկերը»[285], հենվելով ժամանակին վերը թվարկված հեղինակների տպագիր և անտիպ ցուցակների, նախքան 1894-1896 թվականները և մինչև 1915 թվականը Արևմտյան Հայաստանում եղած ձեռագրերի մասին հայ և օտար հայագետների աշխատությունների, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, աշխարհի տարբեր թանգարաններում ու գրադարաններում, հոգևոր կենտրոններում և մասնավոր հավաքածուներում պահվող հայ միջնադարյան մատյանների ուսումնասիրության ու համեմատական քննության վրա[286]: Եթե ընդհանրացնենք և ի մի բերենք Ս. Քոլանջյանի աշխատության մեջ ներկայացված մեր ձեռագրական կորուստների մոտավոր թվերը (Վասպուրականում՝ «առնվազն մի քանի հազար»[287], Տարոնում՝ «շուրջ երկու հազար»[288], Կեսարիայում՝ «ավելի քան 700 արժեքավոր ձեռագրեր և հազարների հասնող հնատիպ և հազվագյուտ տպագիր մատյաններ»[289] և այլն), ապա կստացվի, որ հայոց

---

[285] Տէր-Վարդանեան Գ., Հայերէն ձեռագրերի կորսուած հաւաքածուների ցուցակների հրատարակման խնդիրը – Էջմիածին, 2003, Ա, Յունուար, էջ 54:

[286] Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1965, Բ-Գ-Դ, Փետրուար-Մարտ-Ապրիլ, էջ 96-107, Ե-Զ-Է, Մայիս-Յունիս-Յուլիս, էջ 133-144, 1966, Ը, Օգոստոս, էջ 27-37, Թ-Ժ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 88-93, 1967, Ե, Մայիս, էջ 46-57, Զ, Յունիս, էջ 50-55: Ցավալի է, որ Ս. Քոլանջյանի այս արժեքավոր, իր կարևորությունն ու նշանակությունը ցայսօր էլ չկորցրած աշխատությունն ինչ-ինչ պատճառներով անավարտ մնաց՝ հոդվածաշարի տպագրությունն այլևս ընդհատվեց ու շարունակություն չունեցավ: Վերջերս սույն հոդվածաշարը վերատպվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակած ծաղկաքաղ գրքում (տես Գօլանճեան Ս., Հիւսեան Յովհաննէս, Կիւլէսէրեան Բաբգէն, Տէր-Վարդանեան Գէորգ, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 35-170):

[287] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1965, Ե-Զ-Է, Մայիս-Յունիս-Յուլիս, էջ 144:

[288] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1966, Ը, Օգոստոս, էջ 33:

[289] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1966, Թ-Ժ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 91:

ջարդերի ու Մեծ եղեռնի ընթացքում ոչնչացված և անհետ կորած գրչագրերի թիվը կհասնի շուրջ 10 հազարի: Ոմանք էլ գտնում են, որ այդ տարիներին «թուրք ջարդարարները ոչնչացրել են ավելի քան 20 հազար հայկական ձեռագրեր ու հնատիպ գրքեր»[290]: Իսկ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Մայր ցուցակի և ձեռագրագիտության բաժնի վարիչ, գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանի հաշվարկով համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության ժամանակ ոչնչացվել, անդարձ կորել են «աւելի քան 30.000» հայկական ձեռագրեր[291], այսինքն՝ նույնքան, որքան մենք այսօր ունենք ամբողջ աշխարհում: Հիշեցնենք, որ միայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում ներկայումս գրանցված-ցուցակագրված է հայերեն 11.230 ամբողջական ձեռագիր և 2.200 պատառիկ[292]: Հայկական ձեռագրերի մեծաթիվ հավաքածուներ ունեն նաև Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանությունը (շուրջ 4.000 միավոր), Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի Սրբոց Հակոբյանց վանքը (շուրջ 4.000 միավոր), Վիեննայի Մխիթարյան միաբանությունը (ավելի քան 2500 միավոր), Ս. Էջմիածինը (ավելի քան 1.000 միավոր), Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքը (շուրջ 1.000 միավոր) և Զմմառի (Լիբանան) կաթոլիկ վանքը (շուրջ 700 միավոր): Հայերեն ձեռագրերի ոչ այդքան բազմաքանակ, բայց պատկառելի հավաքածուներ կան նաև Կոստանդնուպոլսի Հայոց պատ-

---

[290] Տես Худавердян К., Саакян Р.. Геноцид армян сквозь призму десятилетий. Ереван, 1995, с. 38:

[291] Տես Մշակութային արժէքների վերադարձը՝ փոխհատուցման ամենակարեւոր պահանջ – Ազդակ, Պէյրութ, թիւ 84 (24943), 19 յունիս 2015, էջ 5: Հետաքրքիր է, որ նույն թվականին Էջմիածնում լույս տեսած՝ «Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները» վերոհիշյալ ժողովածուն նախաբանող իր հոդվածում Գ. Տեր-Վարդանյանը կրկնապատկում է ձեռագրական կորուստների հավանական թիվը, հասցնելով այն մինչև 62.500-ի (տես Գօլանճեան Սուրէն, Հիւսեան Յովհաննէս, Կիւլէսէրեան Բարգէն, Տէր-Վարդանեան Գէորգ, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 12):

[292] Տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատորներ Ա-Թ, Երեւան, 1984-2017:

րիարքարանում ու Անթիլիասի (Բեյրութ) Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանում, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Վատիկանի, Իռլանդիայի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի և այլ երկրների թանգարաններում ու գրադարաններում, որոնցից են Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահը, Բալթիմորի Ուոլթերս արվեստի թանգարանը, Լոնդոնի Բրիտանական թանգարանը, Օքսֆորդի Բոդլերյան գրադարանը, Փարիզի Ազգային գրադարանը, Դուբլինի Չեսթեր Բիթի գրադարանը, Ռուսաստանի՝ Մ.Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան ազգային գրադարանը (Սանկտ Պետերբուրգ), Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնը (Թբիլիսի) և այլն[293]:

Հայոց ցեղասպանության տարիներին ձեռագրական առավել մեծ կորուստներ կրեց իր նշանավոր վանքերով ու մատենադարաններով հայտնի Վասպուրականը: Մեր պատմական այդ հինավուրց նահանգի ձեռագրական չափազանց հարուստ ժառանգության մասին են Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանի «Համառօտ նկարագրութիւն Վասպուրականի մէջ եղած մի քանի նշանաւոր վանքերու...» աշխատության հետևյալ խոսուն տողերը. «Վասպուրականի ինչպէս շէն եղած բոլոր վանքերու մէջ, նոյնպէս բոլոր գիւղերու եկեղեցիներու մէջ չկար եկեղեցի մը, կամ գիւղ մը, ուր 10, 20, 30 կտոր ձեռագրեր չգտնուէին, նոյն իսկ անհատներու քով իրենց տուներու մէջը դրուած 100աւոր, շուշփաներու մէջ փաթաթուած իբրեւ նուիրական սրբութիւն կը յարգուէին, կը պահպանուէին»[294]: Թեև Հայոց ցեղասպանության ժամանակ փրկված հայկական ձեռագրերի մեծ մասը Վասպուրականից էր բերված, սակայն ձեռագրական մեծագույն կորուստ-

---

[293] Տես Дрампян И., Корхмазян Э.. Художественные сокровища Матенадарана. Москва, 1976 (с. 166) և Сокровища книжного искусства в собраниях СССР. Матенадаран (составители и авторы текста В.О. Казарян и С.С. Манукян). Том 1, Москва, 1991 (с. 7):

[294] Գօլանճեան Սուրէն, Հիւսեան Յովհաննէս, Կիլէսէրեան Բարգէն, Տէր-Վարդանեան Գէորգ, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 177:

ները ևս մենք հենց այնտեղ ունեցանք: «Ինչքան էլ չափազանցված համարելու լինենք վարդապետ Հյուսյանի այն կարծիքը, թե Վասպուրականում տասնյակ հազարավոր ձեռագրեր են եղել և ինքը կարողացել է փրկել նրանցից միայն երկու հազար յոթանասունը, այնուամենայնիվ… եղած փաստերն էլ մեզ հիմք են տալիս ասելու, որ Վասպուրականում մեր կորցրած ձեռագրերի թիվը շատ ավելի է եղել, քան փրկվածներինը...», – գրում է Սուրեն Քոլանջյանը[295]: Եթե նկատի առնենք, որ Երվանդ Լալայանը, ով հանգամանքների բերումով հնարավորություն ուներ ցուցակագրել և նկարագրել միայն Վանի եկեղեցիներում ու մերձակա վանքերում (Լիմ, Կտուց, Աղթամար) եղած «առնվազն 2000 ձեռագիրները»[296], ակամայից աչքաթող անելով մնացած վայրերում, ինչպես և տեղի հայ բնակչության մոտ պահվող բազմաթիվ ձեռագրերը, «ապա պետք է կարծել, որ բովանդակ Վասպուրականում այդ ժամանակ պետք է լինեին հիշյալ 2000-ից առնվազն կրկնակի չափով ավելի ձեռագրեր»[297]:

Հայոց ցեղասպանության տարիներին լուրջ կորուստ կրեց հատկապես Լիմ անապատի մատենադարանը: Վանահայր Հովհաննես Հյուսյանի խոսքերով՝ «եկեղեցւոյ և ամբողջ սենեկաց դռները խորտակուած, ձեռագիրներու ընտիր մասը վերցուած է. կը մնան ճառընտիր յայսմաւուրքներ և մաս մը անարժէք ձեռագրեր»[298]: Ծանր վնասներ տարավ և, ըստ էության, կործանվեց նաև Վարագավանքը: Չորս տարի թուրքական բանակում որպես սպա կամավոր ծառայած և հայերի կո-

---

[295] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1965, Ե-Զ-Է, Մայիս-Յունիս-Յուլիս, էջ 144:

[296] Տես Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, պրակ Ա, Թիֆլիս, 1915, էջ 5: Երվանդ Լալայանին չհաջողվեց ավարտին հասցնել իր ծրագիրը. մասամբ տպագրված, իսկ մեծամասամբ անտիպ մնացած նրա ձեռագրացուցակում 2000-ի փոխարեն ներկայացված է 1565 ձեռագիր:

[297] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1965, Ե-Զ-Է, Մայիս-Յունիս-Յուլիս, էջ 137:

[298] Տես Վանի շրջանի հնութիւնների մասին - Արարատ, Վաղարշապատ, 1915, համար ԺԱ-ԺԲ, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 863:

տորածների մասնակիցը դարձած վենեսուելցի գրող ու հաջողության արկածախնդիր զինվոր Ռաֆայել դե Նոգալես Մենդեսը, որը Վանի 1915 թվականի ապրիլ-մայիսյան հերոսամարտի ժամանակ քաղաքի հայկական թաղամասերը պաշարած թուրքական զորքերի, պահակազորի և հրետանու հրամանատարն էր, Հայոց ցեղասպանության մասին սառնասրտորեն պատմող իր հուշագրության մեջ նկարագրում է, թե ինչպես թուրքերը ռմբակոծեցին հայերի պաշտպանական գլխավոր հենակետերը՝ 10-րդ դարում կառուցված Սուրբ Պողոս և Սուրբ Պետրոս հարակից եկեղեցիներն ու Վարագավանքը (թուրքերեն՝ Yedi Kilise, այն է՝ Յոթ եկեղեցի) իր նշանավոր, միջնադարյան բազմաթիվ ձեռագրեր ու հնատիպ գրքեր ունեցող մատենադարանով[299]:

Ոչնչացվել են նաև չափազանց արժեքավոր եզակի ձեռագրեր: Հովհաննես Հյուսյանի վերոհիշյալ աշխատությունից տեղեկանում ենք, որ 1915 թվականին, Վասպուրականի կոտորածների ժամանակ, Վանա լճի արևելյան կողմում գտնվող, Վանի նահանգի Թիմար գավառի մեջ մտնող Այլուր գյուղի Ս. Աստվածածնի վանքից, ի շարս միջնադարյան այլ ձեռագրերի, հափշտակվել ու անհետ կորել է նաև 10-րդ դարի հայ աստվածաբան, բանաստեղծ, երաժիշտ ու փիլիսոփա Գրիգոր Նարեկացու «մատներով գրած» հանճարեղ ստեղծագործության՝ «Մատյան Ողբերգության» չափածո աղոթագրքի մագաղաթյա արծաթապատ բնագիրը[300]: Անհետացել են նաև հայ եպիսկոպոսների ձեռնադրման, կաթողիկոսի օծման ու արքաների թագադրման հինավուրց արարողությունները նկարագրող հազվագյուտ օրինակները[301]:

---

[299] Տես Ногалес, Рафаэль де. Четыре месяца под полумесяцем. Москва, 2006, с. 53-77:

[300] Տես Գոլանճեան Սուրէն, Հիւսեան Յովհաննէս, Կիւլէսէրեան Բարգէն, Տէր-Վարդանեան Գէորգ, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, էջ 182:

[301] Տես Ակադեմիկոս Ն.Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 2, էջ 3 և 7

Արևմտյան Հայաստանի և, մասնավորապես, Վասպուրականի տարածքում եղած ձեռագրերի ու հնությունների ցուցակագրման, դրանց պահպանման և փրկության հարցերի շուրջ իր մտահոգությունն է արտահայտել ու այդ ուղղությամբ գործնական քայլերի դիմել նշանավոր պատմաբան, արևելագետ և կովկասագետ, հնագետ ու ազգագրագետ ակադեմիկոս Նիկողայոս Մառը: 1915 թվականի հոկտեմբերին Սանկտ Պետերբուրգի Կայսերական գիտությունների ակադեմիայի գիտաժողովին՝ ընդհանուր ժողովին հղած իր զեկուցագրերից մեկում նա հայտնում է. «Ես ստիպված եմ ժողովի ժամանակը զբաղեցնել մի հարցով, մի շատ տխուր երևույթով, այն է՝ Վան քաղաքում ու նրա շրջակայքում հնագիտական մեծ արժեք ներկայացնող հարյուրավոր, հնարավոր է նաև հազարավոր ձեռագրերի ոչնչացմամբ... Պատմական հուշարձանների պաշտպանության դիրքերից հանդես եկող որևիցե կազմակերպության բացակայությունը խիստ անպաշտպան վիճակում թողեց երկրամասի ձեռագրերի հավաքածուները, որոնք դարձան բոլոր ցանկացողների բաժինը, ավելի հաճախ՝ տգետ գիշատիչներինը»[302]:

Դեռևս 1915 թվականի հուլիսին Սանկտ Պետերբուրգի Կայսերական գիտությունների ակադեմիայի միջնորդությամբ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի հանձնարարությամբ ու Կովկասի փոխարքայի թույլտվությամբ Վան գործուղված Թիֆլիսի Կովկասյան թանգարանի հնագիտական բաժնի ավանդապահ Սմբատ Տեր-Ավետիսյանը և այդ հարցում վերջինիս աջակցած Հովհաննես Հյուսյանը Ս. Էջմիածին են առաքել Աղթամարում, Լիմ անապատում և Վանի ու նրա շրջակայքի հայկական եկեղեցիներում հավաքած 284 ձեռագիր, իսկ ամիսներ անց Մայր Աթոռի մատենադարանին ի պահ հանձնել Աղթամարի, Լիմի, Կտուցի, Վարագի, Վանի Այգեստան թաղամասի եկեղեցիներին պատկանող

(ծանոթագրություններ):

[302] Նույն տեղում, էջ 3:

ևս 1082 ձեռագիր[303]:

Աղթամարի ձեռագրերի փրկության հետ կապված դժվարությունների ու չարաբաստիկ հանգամանքների մասին է Սմբատ Տեր-Ավետիսյանին պատմել դեպքերի անմիջական մասնակից և ականատես Ալեքսանդր Ֆլորենսկին[304]: Նրա խոսքերով՝ երբ Աղթամարի մենաստանի ձեռագրերն Ավանցի նավահանգստում լաստանավ բեռնած ռուս զինվորները մոտեցել են ափին, ինչ-որ մի սպա նրանց հրամայել է խորտակել նավը: Այդ նույն ռուս սպայից թույլտվություն ստացած Ա. Ֆլորենսկին ընդամենը մի քանի ընտիր ձեռագրեր է վերցրել որպես հիշատակ, իսկ գրչագիր մնացած մատյանները լաստանավի հետ ջրի տակ են անցել[305]: Նիկողայոս Մառին հասցեագրված նամակում Ա. Ֆլորենսկին վերջինիս տեղեկացնում է, որ իր ձեռքով փրկված ձեռագիր մատյաններից ու եկեղեցական առարկաներից (սաղավարտներ, արծաթե բուրվառներ, խաչեր և այլն) մի քանիսը Բորժոմում հանձնել է Պատերազմից տուժածների օգնության Կովկասյան կոմիտեի

---

303 Տես Նոր ստացուած ձեռագիրներ Վանի շրջանից – Արարատ, Վաղարշապատ, 1916, համար Ա-Բ, յունուար-փետրուար, էջ 46-47:

304 Ֆլորենսկի Ալեքսանդր Ալեքսանդրովիչ (1888-1938) – երկրաբան, հնագետ և ազգագրագետ, ռուս ականավոր աստվածաբան, փիլիսոփա ու բանաստեղծ Պավել Ֆլորենսկու կրտսեր եղբայրը: Մայրը՝ Օլգա Սապարովան (Սալոմե Սապարյան) սերում էր ղարաբաղյան հայերի հնամյա տոհմից: Ա. Ֆլորենսկին հետաքրքրվում էր արևելյան մշակույթներով: Առաջին աշխարհամարտի ժամանակ որպես կամավոր սանիտար նա մեկնել է գործող բանակ: Հայտնվելով Վանում, իր ազատ ժամանակն ամբողջապես նվիրել է տեղի հնությունների հավաքման ու դրանց փրկության գործին: Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության Արևելյան հանձնաժողովի նիստերից մեկում զեկուցել է Արևմտյան Հայաստանի հնագիտական հուշարձանների անմխիթար վիճակի մասին: 1915 թվականի կոտորածներից փրկել է բազմաթիվ հայ կանանց, ծերունիների ու երեխաների: Վախճանվել է ստալինյան ճամբարներում:

305 Տես Ակադեմիկոս Ն.Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 2, էջ 3:

նախագահ կոմսուհի Ելիզավետա Վորոնցովա-Դաշկովային, որն էլ դրանք փոխանցել է Վիրահայոց թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին[306]:

Վանի թեմի առաջնորդ, Աղթամարի կաթողիկոսի փոխանորդ, ծայրագույն վարդապետ Եզնիկի և գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի վկայությամբ՝ մինչև հայ կամավորների ու ռուսական զորքերի կողմից Վանի գրավումը (1915 թվականի մայիս) թուրքերն արդեն կրակի էին մատնել քաղաքի հայկական եկեղեցիները, որոնցում բազմաթիվ ձեռագրեր կային[307]: Դրանցից առավել արժեքավորները հայերը հասցրել էին առանձնացնել ու պահել ապահով գաղտնարաններում: Թաքստոցներում են պարտակվել նաև Վարագավանքի, Լիմի, Կտուցի հնություններից, եկեղեցական թանկարժեք իրերի, ձեռագիր մատյանների և հնատիպ գրքերի մի մասը[308]:

Փանոս Թերլեմեզյանի անավարտ հուշերից էլ տեղեկանում ենք, որ 1915 թվականի ամռանը, Վանի հայության գաղթի օրերին, Ախավանքում փրկված ձեռագրերը «սնդուկների մեջ առագաստանավով բերում են Ավանց գյուղի նավահանգիստը և այնտեղ հաջողացնում են երեք սնդուկ ուղարկել Էջմիածին, իսկ երկու սնդուկ ձգում են ծովը, որպեսզի թուրքերի ձեռքը չընկնի»[309]:

1915 թվականի հունիսի 22-ին՝ Սեբաստիայի հայության տեղահանման ժամանակ, պատառոտվել ու անհետացել են ոչ միայն քաղաքի և նրա շրջակայքի հոգևոր կենտրոններում ու պաշտամունքային վայրերում, մասնավորաբար՝ Մայր եկեղեցում և Ս. Նշան վանքում, այլև առանձին հայ ընտանիքների մոտ պահվող բազմաթիվ ձեռագրեր, որոնցից շատերը զարդարված էին ընտիր մանրանկարներով: Ականատեսներից մեկի անտիպ հուշագրության մեջ, որը Սուրեն Քոլանջյանին է տրամադրել Սեբաստիայում ծնված նկարիչ, գրող ու ազգագրագետ Առաքել Պատրիկը, սրտահույզ պատ-

---

306 Նույն տեղում, էջ 6:

307 Նույն տեղում, էջ 4:

308 Նույն տեղում, էջ 3-4:

309 Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը, Երևան, 2017, էջ 299:

մություններ կան ինչպես հայերի բռնի տեղահանման, այնպես էլ վերը նշված ձեռագրերից շատերի ողբերգական ճակատագրի մասին: Հուշագրության հեղինակը, որն այն ժամանակ դեռ անչափահաս երեխա էր, ջերմությամբ է հիշում պապական տունը և հատկապես այն «արգելված սենյակը», որտեղ նա գաղտագողի մտնում ու հաճույքով դիտում էր տարիներ շարունակ իր մեծ հոր հավաքած, խնամքով կազմակալված ու փայտե քանդակազարդ արկղում սրբությամբ պահվող գրչագիր մատյանների գունագեղ մանրանկարները[310]: Արտագաղթի ժամանակ տնից խուճապահար հեռացած ընտանիքի անդամներն ստիպված անտեր են թողել և ակամայից կորստի մատնել մագաղաթյա այդ թանկագին հատորները: Հուշագիրը պատմում է, թե ինչպես Եփրատի ափին հայ գաղթականների վրա հարձակված «զինված թալանչի խուժանը» պոկում էր հայերի մոտ հայտնաբերված, հաճախ մանրանկարներով զարդարված Աղոթագրքերի կամ Ավետարանների արծաթե կողքերը, իսկ մագաղաթյա գրչագիր մատյանները՝ պատառոտում ու ոտնակոխ անում[311]:

Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո ոմանք կարծում էին, թե Սեբաստիայի մեր գրչագիր մատյաններից ոչինչ չի փրկվել[312]: Բարեբախտաբար, շուտով պարզվեց, որ 1927 թվականին Երուսաղեմի Ս. Հակոբ վանքի մատենադարանին ի պահ են տրվել «Սեբաստիոյ Ս. Նշան Վանուց 157 կտոր մեծ և փոքր ձեռագիրները Կ. Պոլսոյ Պատրիարքի Փոխանորդ Տ. Սմբատ Ս. Եպիսկոպոսի միջոցաւ»[313], իսկ յոթ տարի անց՝ 1934 թվականին,

---

[310] Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Զ, Յունիս, էջ 50:

[311] Նույն տեղում, էջ 51:

[312] Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Ե, Մայիս, էջ 57:

[313] Ս. Յակոբի ներսէն. Ս. Յակոբի մատենադարանը – Սիոն, Երուսաղէմ, 1927, Հոկտեմբեր, թիւ 10, էջ 320:

Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ Գուշակյանի նախաձեռնությամբ Սրբոց Հակոբյանց միաբանության մատենադարանում գրանցում ստացան Սեբաստիայից բերված, որոշ ժամանակ Հալեպում հանգրվան գտած ևս 30 գրչագրեր[314]:

Երբ 1916 թվականի փետրվարի 2-ին ռուսական կանոնավոր բանակը և հայ կամավորական ջոկատները գրավեցին Մուշը, Վասպարականի ձեռագրերի մի մասը մինչև այդ փրկած կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կարգադրությամբ նույն թվականի մարտին ստեղծվեց ութ հոգուց բաղկացած հանձնաժողով՝ այս անգամ դեպի Մուշ անհապաղ մեկնելու համար: Խմբի առջև դրված հիմնական նպատակներից ու խնդիրներից էր «Մուշի և նրա շրջակայքի ժողովրդեան գաղթի ժամանակ թողուած կամ թաքստոցներում պահուած վանքերի և եկեղեցիների գոյքն ու զարդերը, անօթները, զգեստները, աւերից ու կողոպուտից ազատուած ազգագրական, հնագիտական, արուեստի և այլ մնացորդները արկղների կամ պարկերի մէջ դասաւորել և ապահով եղանակով տեղափոխել Մայր Աթոռ»[315]: Ընդ որում՝ հատուկ կարևորվում ու շեշտվում էր ձեռագրական հարուստ հավաքածուներով հայտնի Մշո վանքերում և եկեղեցիներում եղած գրչագրերի հանդեպ «առանձին հոգածութիւն ունենալու» անհրաժեշտությունը[316]: Մարտի 30-ից մինչև հունիսի 5-ը տևած գործուղումից Ս. Էջմիածին վերադարձած հանձնաժողովի անդամներն Ամենայն Հայոց հայրապետին հանձնեցին կատարված աշխատանքի արդյունքներն ամփոփող հաշվետվությունը, որին կցված էր Մուշից բերված և Մայր Տաճարին ի պահ տրված ձեռագրերի, եկեղեցական սպասների ու իրեղենների երկու էջանոց ցուցա-

---

[314] Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Զ, Յունիս, էջ 52:

[315] Զեկուցում Մուշ ուղարկուած յանձնաժողովի Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց – Արարատ, Վաղարշապատ, 1916, համար Է-Ը, յուլիս-օգոստոս, էջ 567-568:

[316] Նույն տեղում, էջ 568:

կը[317], որը կարող էր շատ ավելի ընդարձակ լինել, եթե դրանում ընդգրկվեին նաև Հայոց ցեղասպանության տարիներին Մուշում կողոպտված ու ոչնչացված հայկական ձեռագրերը, պաշտամունքային առարկաները, մշակութային և գեղարվեստական արժեք ներկայացնող հնությունները:

Մեծ եղեռնին զոհ են գնացել նաև Կեսարիայի ու Մալաթիայի ձեռագիր մատյաններից շատերը: Մեզ չի հասել Մալաթիայի հայկական ձեռագրերին վերաբերող որևէ ցուցակ, միայն գիտենք, որ 1916 թվականի նոյեմբերի 3-ին Թալեաթ փաշայի հրամանով Մալաթիայում, ի թիվս հայ ժողովրդի ստեղծած մշակութային բազմաթիվ արժեքների, ոչնչացվեցին նաև Ս. Փրկիչ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Երրորդություն և հայկական այլ վանքերին ու տաճարրին պատկանող, ինչպես նաև առանջին մարդկանց մոտ եղած մեր մագաղաթյա դարավոր մատյանները[318]: Ծնունդով դերսիմցի գրող և ազգագրագետ Գևորգ Հալաջյանի հուշերից տեղեկանում ենք, որ նույնիսկ 1923 թվականի սեպտեմբերին, մահմեդական Կուրբան Բայրամի՝ զոհաբերության տոնի առաջին օրը, Թուրքիայի Հանրապետության հռչակումից ընդամենը մեկ ամիս առաջ, Մալաթիայում թուրքերը հրկիզել, տոնական խարույկին են հանձնել հայերից մեկի քարաշեն տան ներքնահարկի թաքստոցում հայտնաբերված մագաղաթները՝ «գրչագիր Ավետարաններ, երկու Հայսմավուրք և զանազան ձեռագիրների հավաքածուներ»[319]: Խարույկի մեջ են գցել նաև այդ անգին ձեռագրերը կրակից ազատել փորձած տասներկուամյա հայ դեռահաս տղային[320]:

Կարինից Սեբաստիա տեղափոխելու ժամանակ անհետ կորել է Սանասարյան վարժարանի մատենադարանի ձեռագիր մատյաններով ու հնատիպ գրքերով լի սնդուկների մեծ

---

317 Նույն տեղում, էջ 585-586:

318 Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1966, Թ-Ժ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 92:

319 Նույն տեղում, էջ 92-93:

320 Նույն տեղում, էջ 93:

մասը[321]: Անհայտ է նաև Արծնյան վարժարանում գտնվող գրչագրերի՝ այդ թվում նաև 11-12-րդ դարերից մեզ հասած Ավետարանների, Լիմում 1235 թվականին Ստեփան գրչի ընդ-օրինակած Ավետարանի և 1294-ին Այրիձորի մենաստանում գրված Ավետարանի ճակատագիրը: Ըստ երևույթին, ինչպես կարծում է անվանի բանասեր, բնագրագետ և արվեստաբան Հարություն Քյուրդյանը, ոչնչացվել են Անկյուրիայի Կարմիր վանքում, Մթանող գյուղի եկեղեցում և առանձին անհատների մոտ պահվող բոլոր մատյանները[322], որոնք 1909-1913 թվա-կաններին ցուցակագրել ու նկարագրել է վաստակաշատ բա-նասեր, հետագայում՝ 1931-1936 թվականներին, Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսե-րյանը[323]: 1915 թվականին, Արմաշի հայության տեղահանման ընթացքում, թալանվեց Արմաշի դպրեվանքի մատենադա-րանը: Ու թեև, ինչպես նկատում է Սուրեն Քոլանջյանը, «Արմաշի գրչագրերը մանրանկարչական տեսակետից շատ չէին աչքի ընկնում, սակայն նրանց մեջ, Ավետարանների խորաններից և ավետարանիչների նկարներից բացի, գտնվում էին նաև մեր միջնադարյան նշանավոր դեմքերի դիմա-նկարներով զարդարված ձեռագրեր, որոնցից անհրաժեշտ ենք գտնում հիշատակել Գրիգոր Մագիստրոսի նկարը իշխա-նական զգեստով..., Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու նկարները և այլն»[324]:

Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության այլ շրջաններում եղած հայկական ձեռագրերի միայն մի փոքր մասն է փրկվել: Դա վերաբերում է նաև հայ

---

321 Տես Մատենամոլ Ուսուցչապետը – Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը. 1916-1920, Կ. Պոլիս, 1920, էջ 168:

322 Տես Քիւրտեան Յարութիւն, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից: Կազմեց Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեան, Անթիլիաս, 1957 (գրախօսական) – Բազմավէպ, Վենետիկ, 1959, Յունուար-Փետրուար, թիւ 1-2, էջ 48:

323 Տես Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957:

324 Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Ե, Մայիս, էջ 53:

միջնադարյան մանրանկարչությանը: Բերենք առանձին մանրանկարների փրկության՝ քչերին հայտնի հետևյալ օրինակները: 1915 թվականի հուլիսի 22-ին Կտուց անապատ ժամանած Փանոս Թերլեմեզյանն զբաղված էր թալանից հետո վանքում անխնամ, անտեր մնացած մատյաններից մանրանկարներ քաղելու և դրանք կորստից ու վերացումից գոնե այդպիսով փրկելու գործով[325]: Վանի նահանգում թուրքերի ավերած Պելու (Փելու, Փելլի) գյուղի հայկական եկեղեցու բակում Ալեքսանդր Ֆլորենսկին տեսել է գետնին թափված ու պատառոտված բազմաթիվ գրչագրեր ու դրանց միջից պոկոտված մանրանկարներ, որոնք հավաքել է և Էջմիածնի մատենադարանին հանձելու համար ուղարկել Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանին, իսկ շուրջ 30 մանրանկար փոխանցել է Սանկտ Պետերբուրգ և ի պահ տվել Ռուսաստանի ազգագրական թանգարանին[326]:

Բարեբախտաբար, փրկվել են նաև մանրանկարչության փայլուն նմուշներով զարդարված ամբողջական կամ գրեթե ամբողջական մի շարք ձեռագրեր, որոնցից հիշատակենք առավել հայտնի և արժեքավոր հետևյալ մատյանները:

Կարինի Սանասարյան վարժարանի ուսուցչապետ Սարգիս Սողիկյանը հիվանդանոցի վերածված վարժարանի մի փոշոտ անկյունում պատահաբար հայտնաբերել է այսօր Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող (ձեռագիր 7735) պատկերազարդ կրկնագիր մատյաններից մեկը՝ 986 թվականի Ավետարանը (հայտնի է որպես Սանասարյան Ավետարան)[327]:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակում 7729 համարը կրող, թեմատիկ մի քանի մանրա-

---

[325] Տես Ակադեմիկոս Ն.Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 2, էջ 3:

[326] Նույն տեղում, էջ 5:

[327] Տես Մատենամոլ Ուսուցչապետը – Թէոդիկ, Ամէնուն Տարեցոյցը. 1916-1920, Կ. Պոլիս, 1920, էջ 168:

նկարեր և բազմաթիվ գլխազարդեր, երկրաչափական, բուսական և կենդանական մոտիվներով լուսանցազարդեր, գլխատառեր ու զարդագրեր ունեցող ձեռագիրը Մշո Ճառընտիրն է կամ Տոնականը՝ հայերեն ամենամեծ ու ծանրաքաշ ձեռագիրը[328], որը գրվել (գրիչ՝ Վարդան Կարնեցի) և ծաղկանկարվել է (ծաղկող՝ Ստեփանոս) 1200-1202 թվականներին, Երզնկայի Ավագ վանքում: Հայոց ցեղասպանության ժամանակ, Մշո Ս. Առաքելոց վանքում շուրջ 700 տարի մնալուց հետո, այդ նշանավոր ձեռագիրն անցել է փորձություններով ու վտանգներով լի ճանապարհ: Սկզբում, Բեռլին ուղարկելու նպատակով, այն վանքից վերցրել ու Բիթլիս է տարել գերմանացի մի սպա: Սակայն 1916 թվականին, Կովկասյան ճակատում ռուսական բանակի հարձակման ժամանակ, երբ զորավար Անդրանիկն իր գնդով գրավել է քաղաքը, թուրք և գերմանացի զինվորականները խուճապահար նահանջել են՝ ստիպված Բիթլիսում թողնելով հայերից թալանված գանձերի մի մասը, այդ թվում նաև Մշո Ճառընտիրը: Շուտով, ծանր ձեռագիրն ավելի հեշտ տեղափոխելու համար, այն կիսվել է երկու մասի, որոնցից մեկը գաղթական երկու հայ քույրեր շալակել ու մեծ դժվարություններով Երևան են հասցրել, իսկ երկրորդ մասը Բիթլիսի հյուրանոցներից մեկում (այլ տվյալներով՝ Էրզրումի հայկական եկեղեցու բակում, ավերակների տակ) պատահաբար գտել է ռուսական բանակի սպա Նիկոլայ դե Ռոբերտին, տարել Թիֆլիս և հանձնել Կովկասի հայոց ազգագրական ընկերությանը: Հետագայում ձեռագիր գրքի մի կեսը հայտնվել է Ս. Էջմիածնի ձեռագրատանը, իսկ մյուսը՝ Երևանի պետական գրական թանգարանում, որտեղից էլ դրանք փոխադրվել և իրենց վերջնական հանգրվանն են գտել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Դժբախտաբար, երկար դեգերումների պատճառով Ճառընտիրը կրել է մասնակի կորուստներ: Ի սկզբանե 660 թերթից բաղկացած ձեռագրում այսօր մնացել է 601-ը: 17 թերթ պահվում է Մխիթարյան միաբանության Վենետիկի, մեկ թերթ՝ նույն միաբա-

[328] Մշո Ճառընտիրի թերթերից յուրաքանչյուրն ունի 70.5 x 55.5 սմ մակերես, իսկ մատյանի ընդհանուր քաշը շուրջ 28 կիլոգրամ է:

նության Վիեննայի մատենադարաններում: 1958 թ. ձեռագրի երկու թերթ ձեռք է բերել Ռուսաստանի պետական (նախկինում՝ Լենինի անվան) գրադարանը և փոխանակման կարգով դրանք հետագայում հանձնել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին: Մատյանում պակասող մնացած թերթերն անհետ կորել են: Սուրեն Քոլանջյանի խոսքերով՝ գրչագիր այդ հսկան «մեր ժողովրդի պատմական ճակատագրի մեծագույն վկան ու Մեծ եղեռնից վերապրող մեր մշակույթի լավագույն խորհրդանիշն է»[329]:

Մշո Ս. Կարապետ վանքի թաքստոցում պահված և կործանումից փրկված մշակութային արժեքներից է նաև Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում այժմ գտնվող մագաղաթյա արծաթակազմ Ավետարանը (ձեռագիր 9422), որը հանգամանորեն նկարագրել է վաստակաշատ պատմաբան ու ձեռագրագետ Ասատուր Մնացականյանը[330]: Ավետարանիչների ավանդական կերպարներով, տերունական պատկերներով, խորաններով և կիսախորաններով, բազմաթիվ լուսանցազարդերով ու զարդատառերով նկարապատված այս ձեռագիրն իրավամբ համարվում է հայ միջնադարյան մանրանկարչության լավագույն նմուշներից մեկը: Ավետարանը չունի հիշատակարան, բայց ակնհայտ է, որ այն գրվել ու պատկերազարդվել է Կիլիկյան Հայաստանում, 13-րդ դարում[331]: Մատյանին բարեգեղ տեսք են հաղորդում մանրանկարները, որոնք կատարված են բազմափորձ նկարչի (կամ նկարիչ-

---

[329] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1966, Ը, Օգոստոս, էջ 33: Նույնը կարելի է ասել նաև Մշո Ս. Առաքելոց վանքից 1916 թվականին փրկված, փրկության նույնքան երկար ու դժվար ճանապարհ անցած մեկ այլ մեծարժեք ստեղծագործության՝ 1134 թվականին պատրաստված և այսօր Հայաստանի պատմության թանգարանում մշտապես ցուցադրվող փայտե երկփեղկանի քանդակազարդ դռան մասին, որը հայ միջնադարյան արվեստի բացառիկ գանձերից է:

[330] Տես Մնացականյան Ասատուր, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 629-641:

[331] Տես Ազարյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դարերում, Երևան, 1964, էջ 143:

ների), ամենայն հավանականությամբ՝ Թորոս Ռոսլինի (կամ նրա աշակերտների) ձեռքով: Ավելի ուշ՝ 1496 թվականին է պատրաստվել Ավետարանի արծաթյա պատկերադրոշմ, փոքրագիր կրկնակազմը:

Հայ գրչարվեստի ու մանրանկարչության գլուխգործոցներից է Զեյթունի Ավետարանը, որը 1256 թ. Կիլիկյան Հայաստանի Հռոմկլա բերդաքաղաքում գրել և նկարազարդել է Թորոս Ռոսլինը, կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրաբերդցու պատվերով: Ձեռագիրը գրված է մագաղաթի վրա: Առաջին թերթերը խորաններ են, որոնք Հռոմկլայի գրչության և մանրանկարչության դպրոցի գեղաճաշակ նմուշներից են: Մեծ վարպետությամբ են կատարված նաև չորս ավետարանիչների չափազանց արտահայտիչ, կենդանի պատկերները: Մատյանի գրեթե բոլոր թերթերը զարդարված են լուսանցային գունագեղ և բազմատեսակ մանրանկարներով, նրբորեն մշակված հյուսագրերով: 1915 թվականի կոտորածների ժամանակ Զեյթունի միջնաբերդի Ս. Աստվածածին եկեղեցում պահվող այդ Ավետարանը տարվել է Մարաշ, իսկ 1920 թվականին, երբ թուրքերը հարձակվել են քաղաքի վրա, այն մի կերպ փրկվել է և ի վերջո հանգրվանել Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանում: Տասնամյակներ անց՝ 1969 թ., Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Շնորհք Գալստյանի և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նախաձեռնությամբ Ավետարանը նվիրաբերվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին (ձեռագիր 10450): 1994 թվականին ձեռագրի խորանազարդ թերթերից ութն ինչ-ինչ ճանապարհներով հայտնվել են Լոս Անջելեսի Ժան-Պոլ Գետտիի թանգարանում (ձեռագիր 59): Անհայտ է Զեյթունի Ավետարանի ևս չորս խորանազարդ թերթերի ճակատագիրը:

Հայոց ցեղասպանության տարիներին Սեբաստիայի Ս. Նշան վանքից է փրկվել 1262 թվականին Թորոս Ռոսլինի ձեռքով Հռոմկլայում գրված ու պատկերազարդված Ավետարանը՝ 1643 թ. Միքայել սարկավագի պատրաստած «արծաթեայ կողքով, որուն վրայ կը փայլէր թանկագին սուտակ (եագութ)

քար մը»[332]: Մեծ եղեռնից մեկ տարի առաջ՝ 1914 թ., մագաղաթյա հրաշագեղ այդ մատյանը լուսանկարած ու նկարագրած Գարեգին Հովսեփյանի խոսքերով՝ սա «Թորոսի ամենից ճոխ նկարազարդված գործերից է»[333]: 1922 թ. Գումգափուի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցու գանձատուն մտած ձեռագիրը, ինչպես վկայում է Հարություն Քյուրդյանը, 1930-ական թվականներին տարվել է Փարիզ, որտեղ այն ձեռք է բերել հասարակական ճանաչված գործիչ և դիվանագետ, հնահավաք ու նկարահավաք Տիգրան Քելեքյանը[334]: Այսօր Սեբաստիայի սույն Ավետարանը պատկանում է Բալթիմորի (ԱՄՆ) Ուոլթերս արվեստի թանգարանին և ունի հետևյալ նշագրումը՝ 1262: Sebastia Gospel, Baltimore, Walters Gallery, MS No. 539: Ավետարանը և այն զարդարող մանրանկարները հանգամանորեն ներկայացված են ականավոր արվեստաբան, հայագետ ու բյուզանդագետ Սիրարփի Տեր-Ներսիսյանի՝ Բալթիմորի այդ թանգարանում գտնվող հայկական միջնադարյան ձեռագրերին նվիրված աշխատության մեջ[335]:

Գարեգին Հովսեփյանի կարծիքով, 1266 թ. Հռոմկլայում ստեղծված և հատվածաբար մեզ հասած Հեթում Ա արքայի մագաղաթյա Ավետարանը, որը հայտնի է նաև որպես «Դաշունահար Ավետարան» (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 5458), կրկին Թորոս Ռոսլինի ու մասամբ

---

332 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 20, թիւ 25, էջ 779:

333 Հովսեփյան Գարեգին, Կոստանդին Ա կաթողիկոսը որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր – Հովսեփյան Գարեգին, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Ա, Երևան, 1983, էջ 330:

334 Տես Քիւրտեան Յարութիւն, Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա: Կազմեց Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, Վիեննա, 1961 (գրախօսական) – Բազմավէպ, Վենետիկ, 1966, Յունուար-Մարտ, թիւ 1-3, էջ 69:

335 Տես Der Nersessian, Sirarpie. Armenian Manuscripts in the Walters Art Gallery. Baltimore, 1973, p. 10-30:

նրա աշակերտների ծաղկած ձեռագիր մատյաններից է[336]: Հայոց ցեղասպանությունից դարեր առաջ այն կտրատվել և թրատվել է թշնամու ձեռքով: Ուսումնասիրելով ձեռագրի պատմությունը, անվանի աղբյուրագետ ու ձեռագրագետ, երկար տարիներ Մատենադարանի գլխավոր ավանդապահի պաշտոնը վարած Արտաշես Մաթևոսյանը նշում է, որ այն, Աղթամարից բերված այլ գրչագրերի հետ, Ս. Էջմիածնի ձեռագրատուն է մուծվել 1915 թվականին՝ «Մեծ եղեռնի տարում»[337]: Նիկողայոս Մառին հասցեագրված վերոհիշյալ նամակում Ալեքսանդր Ֆլորենսկին հայտնել է, որ նույն թվականի ամռանը նա Վան քաղաքում տեսել է բազում մանրանկարներով զարդարված այդ մագաղաթե ձեռագիրը և ցանկացել գնել, սակայն «չափազանց բարձր գների պատճառով» ստիպված հրաժարվել է իր մտադրությունից[338]: Քիչ ավելի ուշ՝ 1915 թվականի հոկտեմբերին, Սանկտ Պետերբուրգի Կայսերական Հանրային գրադարանը Հեթում Ա արքայի Ավետարանը ձեռք բերելու համար 800 ռուբլու վարկ է հատկացրել[339]:

Մալաթիայից փրկված պատկերազարդ գեղաշուք մատյաններից է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Ավետարանը (ձեռագիր 10675), որն ընդօրինակվել ու նկարազարդվել է 1268 թ.՝ նույն Հռոմկլայում և նույն վարպետի՝ Թորոս Ռոսլինի ձեռքով: Պատվիրել է Կոստանդին Ա

---

336 Տես Հովսեփյան Գարեգին, Կոստանդին Ա կաթողիկոսը որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր – Հովսեփյան Գարեգին, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Ա, Երևան, 1983 (էջ 335-337) և Հովսեփյան Գարեգին, Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները – Հովսեփյան Գարեգին, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Բ, Երևան, 1987 (էջ 247-251):

337 Տես Մաթևոսյան Արտաշես, Հեթում Ա թագավորի ռոսլինյան ավետարանի նորահայտ մասունքները – Բանբեր Մատենադարանի, Երևան, 1980, № 13, էջ 275:

338 Տես Ակադեմիկոս Ն.Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 2, էջ 5:

339 Նույն տեղում, էջ 7:

կաթողիկոսը՝ Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Գ-ի պատանի ժառանգ Հեթում Բ-ին նվիրելու համար: Ունի 1454 թվականին պատրաստված, ոսկե թիթեղներով պատված արծաթե կազմ[340]:

1932 թ.-ից Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահում է պահվում Հայոց ցեղասպանության տարիներին թուրքերի ձեռքն ընկած մեկ այլ պատկերազարդ մատյան (ձեռագիր 32.18), որը գիտական շրջանառության մեջ է դրվել որպես «Վասակ իշխանի Ավետարան»: Հայտնի չեն հիշատակարանը կորցրած գրչագրի ո՛չ ստեղծման վայրն ու ստույգ տարեթիվը, ո՛չ էլ ծաղկողի՝ մանրանկարչի անունները: Մեզ է հասել միայն ձեռագրի տիրոջ՝ Վասակի անունը: Մատյանը ջանաբար ուսումնասիրած Սիրարփի Տեր-Ներսիսյանը պարզել է, որ դա Վասակ իշխանն է՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի կրտսեր եղբայրը: Արվեստաբանը կարծիք է հայտնել, որ Ավետարանը, ամենայն հավանականությամբ, պատկերազարդել է Թորոս Ռոսլինը մոտավորապես 1268 թ., Հռոմկլայում[341]:

Նշանավոր գրիչ և ծաղկող Սարգիս Պիծակը 1336 թվականին Կիլիկյան Հայաստանի Սիս մայրաքաղաքում ստեղծում է իր լավագույն գործերից մեկը՝ այսպես կոչված «Արքունական Ավետարանը» (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 5786), որը պատկանել է Աղթամարի վանքին և կոչվել «Հրաշագործակ Ավետարան» կամ «Գանձ արքունական»՝ դառնալով պաշտամունքային սրբազան առարկա: Մագաղաթյա գրչագիրն ամբողջապես ծաղկանկարված է ավետարանիչների և տերունական պատկերներով, գլխագրերով ու գունագեղ նրբաոճ լուսանցազարդերով: 1602 թվականին Ավետարանի կազմը նորոգել, ոսկով ու արծաթով է զարդարել

---

340 Տես Հովսեփյան Գարեգին, Կոստանդին Ա կաթողիկոսը որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր – Հովսեփյան Գարեգին, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հատոր Ա, Երևան, 1983 (էջ 337-339) և Дрампян И., Торос Рослин. Ереван, 2000, (с. 226-232):

341 Տես Der Nersessian, Sirarpie. Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington, 1963, p. 26-55:

Հովսեփ կազմողը: Հայոց ցեղասպանության տարիներին Վասպուրականում փրկված այլ ձեռագրերի հետ «Արքունական Ավետարանը» բերվել է Ս. Էջմիածին:

Կողոպուտից և կործանումից փրկված տասնյակ ձեռագրեր՝ առավելապես գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող, նրբաոճ մանրանկարներով զարդարված ու թանկարժեք շքեղ կազմեր ունեցող Ավետարաններ, թուրքերից ոմանք, դրանք վաճառելու նպատակով տարան արտերկիր: Ինչպես գրում է ժամանակակիցներից մեկը՝ «1915-ի ազգային աղէտը ամայացրեց մեր հազարաւոր եկեղեցիներն ու վանքերը, կողոպուտի ենթարկեց անոնց թանգարաններն ու գանձատունները հարուստ այլազան զարդ ու սպասներով ու թանկարժէք ձեռագիրներով, որոնց շատ քիչ թիւով մնացորդները միայն 1918-ին ու 1922-ին սկսան դուրս գալ Կ. Պոլսոյ, Եգիպտոսի, Եւրոպայի ու մասնաւորապէս Մ. Նահանգներու հրապարակներուն վրայ՝ իբր հնագիտական առարկաներ ծախուելու համար պետական-ազգային մատենադարաններու եւ անհատ հաւաքողներու»[342]: Անվանի բանասեր, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի՝ գերմանացի նշանավոր հայագետ Յուզեֆ Մարկվարտին նվիրված հուշագրության մեջ ասված է. «1919 թվականի կեսերին պրոֆ. Յ. Մարկվարտին այցելում է մի թուրք սպա... Այցելուն պատմում է, որ ինքը մի քանի ձեռագիր է ուզում վաճառել Բեռլինի National Bibliothek-ին (նախկին՝ Königliche Bibliothek), սակայն քանի որ այնտեղ չեն կարողացել դրանք գնահատել, գրադարանի վարչությունն ուղարկել է ձեռագիրները պրոֆ. Յ. Մարկվարտին ի գնահատություն... Պրոֆեսորը խնդրում է ցույց տալ ձեռագրերը: Այցելուն սեղանին է դնում 4 թե 5 ձեռագիր, որոնց մեջ կային հրաշալի մանրանկարներով զարդարված երկու մագաղաթյա մատյաններ...»[343]: Մարկվարտի այն հարցին, թե որտեղից է այցելուն

---

342 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, հատոր Ա, կազմեց Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան, Փարիզ, 1950, էջ Ա:

343 Տես Մելիք-Օհանջանյան Կ., Թերթիկներ իմ հուշամատյանից – Էջմիածին, 1965, Բ-Գ-Դ, Փետրուար-Մարտ-Ապրիլ, էջ 38:

ձեռք բերել այդ մատյանները, վերջինս խոստովանում է. «...երբ մենք գերմանական մի վաշտի հետ հարձակվեցինք Վանի մոտերքի գյուղաքաղաքներից մեկի վրա և այնտեղից դուրս քշեցինք ռուսներին և հայերին, զինվորները մտան տեղի վանքը և սկսեցին կողոպտել ու ոչնչացնել այն, ինչ չէին կարող իրենց հետ տանել: Ես նկատեցի գետնին թափթփած բազմաթիվ գրքեր: Մի 10 գիրք վերցրի, որոնց մեծ մասը նկարազարդ էր...»[344]: Զայրացած գիտնականը դուրս է վռնդում թուրք կողոպտիչին, իսկ իր մոտ մնացած այդ ձեռագրերը շուտով ուղարկում Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, քանզի համոզված էր, որ «հայերի ձեռագրերը պետք է հայերի մոտ կենտրոնանան և ոչ թե ավարառու թուրքերի կամ նրանց միջոցով՝ եվրոպական գրադարաններում»[345]:

Դժբախտաբար, Հայոց ցեղասպանության ականատեսը դարձած, հրի ու սրի միջով անցած և կործանումից հազիվ խուսափած ձեռագիր մատյաններից շատերը մեզ են հասել «խիստ վնասուած, սկզբից և վերջից պակասաւոր, կազմերը պոկուած և աւերի ժամանակ օտար ձեռքերից փչացած»[346]՝ թերարժեք, խաթարված վիճակում: Բայց, այդուհանդերձ, դրանք փրկվել են ոչնչացումից, այնինչ Արևմտյան Հայաստանում եղած անթիվ գրչագրեր և պատկերազարդ մատյաններ ընդմիշտ վերացան ու մոռացվեցին:

Մանրանկարներով զարդարված մեր միջնադարյան ձեռագրերի հետ թալանվեցին և ոչնչացվեցին նաև հայկական վանքերին ու եկեղեցիներին պատկանող կերպարվեստի և կիրառական արվեստի բացառիկ նմուշները, «որոնք գրեթէ ամէն վանքի մէջ առաւել կամ նուազ քանակութեամբ կը գտնուէին»[347]: Պատմամշակութային, գեղարվեստական ու հնագի-

---

[344] Նույն տեղում:

[345] Նույն տեղում:

[346] Մայր Աթոռ – Արարատ, Վաղարշապատ, 1916, համար Ե-Զ, մայիս-յունիս, էջ 344:

[347] Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 20, թիւ 25, էջ 778:

տական մեծ արժեք ներկայացնող այդ բազմաբնույթ առարկաների մասին ամբողջական պատկերացում ստանալու համար նպատակահարմար է դրանք խմբավորել ըստ տեսակների, ինչպես վարվել է հայ հոգևոր-կրթական գործիչ, «Բազմավեպ» հայագիտական հանդեսի նախկին խմբագիր, ծայրագույն վարդապետ Տաճատ Եարտըմյանը՝ համիդյան ջարդերի և Հայոց ցեղասպանության տարիներին մեր ժողովրդի կրած մշակութային կորուստներին նվիրված իր մենագրության մեջ[348]:

Առանձին խումբ են կազմում ծիսական նպատակներով կամ եկեղեցական կենցաղում ու հանդիսավոր արարողությունների ժամանակ գործածվող, ազնիվ մետաղներից՝ ոսկուց և արծաթից, ինչպես նաև պղնձից պատրաստված սրբազան իրերն ու առարկաները. սափորներ, սկիհներ, մատուցարաններ, մյուռոն օրհնելու կաթսաներ, տարբեր չափեր ու ձևեր ունեցող խաչեր, փղոսկրյա գլխիկներով վարդապետական գավազաններ, երկար կոթերի վրա ամրացված քշոցներ, ջահեր, կանթեղներ, մոմակալներ, խնկամաններ, Ավետարանների արծաթե, երբեմն՝ ոսկեզօծ կողքեր, սրբատուփեր, մասնատուփեր, գոտիներ, ճարմանդներ, սովորական և թանկագին քարերով ագուցված մատանիներ և այլն: Մեկ այլ խմբի մեջ են մտնում ասեղնագործ կամ ձեռագործ արվեստի նմուշները. եպիսկոպոսական թագեր, սաղավարտներ, երկերես խաչվառներ, նրբահյուս շուրջառներ, վակասներ, ուրարներ, շապիկներ, վարագույրներ, ծածկոցներ, սփռոցներ, սրբիչներ, վարշամակներ, ժանյակներ և այլն: Որպես կերպարվեստի ու կիրառական արվեստի առանձին տեսակներ են դիտվում հայկական վանքերում ու եկեղեցիներում եղած որմնանկարներն ու սրբապատկերները, գորգերն ու կարպետները, փայտից պատրաստված քանդակազարդ դռները, գահերը, գրակալները, խաչափայտերը, նվիրական սուրբ մասունքների պահպանակներն ու տապանակները, վանական գերեզմանատներում ու սրբարաններում տեղադրված քանդակազեղ վիմափոր տա-

---

348 Տես Եարտըմեան Տաճատ, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Բ. Տպագրութիւն (Նոր յաւելումներով), Վենետիկ, 2001, էջ 70-99:

պանաքարերը, խաչքարերն ու խաչարձանները և այլն:

Հայոց ցեղասպանությունից առաջ Արևմտյան Հայաստանի յուրաքանչյուր վանքում ու եկեղեցում կային միայն արծաթից և ոսկուց պատրաստված բազմաթիվ սպասներ: Հենվելով վստահելի աղբյուրների ու փաստացի տեղեկությունների վրա, Գևորգ Մեսրոպը որպես օրինակ է բերում 1915 թվականին, Մեծ եղեռնի ժամանակ թալանված Չնքուշի Սիրահայաց Ս. Աստվածածին և Արմաշի Չարխափան Ս. Աստվածածին վանքերը, որոնք ունեին համապատասխանաբար 550 և 350 կտոր մետաղյա բարձրարժեք սպասներ[349]: Հաշվարկելով Օսմանյան կայսրության տարածքում այդ տարիներին եղած հայկական սրբարանների մոտավոր թիվը, նա եզրակացնում է, որ դրանց պատկանող թանկագին սպասների ընդհանուր քանակը «առնուազն 600 հազար կտորը կ'անցնէր»[350]:

«Ցեղասպան թուրքը» խորագիրը կրող իր վերոհիշյալ աշխատության մեջ նշված թվերը հաստատող կոնկրետ օրինակներ ու արժանահավատ վկայություններ է բերում նաև Հայկազն Ղազարյանը: Այսպես՝ խոսելով Սեբաստիայի Ս. Նշան վանքում եղած մշակութային արժեքների ողբերգական ճակատագրի մասին, նա արձանագրում է, որ 1915 թվականին, տեղի հայության տարագրումից հետո, թալանելով այդ սրբարանի ունեցվածքը՝ թուրք զինվորներն այնտեղից հափշտակել են շուրջ 3000 կտոր ոսկե և արծաթե իրեր, որոնց մի մասը վաճառքի են հանել տեղի շուկայում, իսկ մնացածն ուղարկել Կոստանդնուպոլիս[351]: Նույն հեղինակի տվյալներով, կողոպտված վանքից թուրքերը նաև վարդապետական թագեր են խլել: Կոստանդնուպոլիս է տարվել ու հետագայում անհետացել վանքի սրբազան գանձերից մեկը՝ Վարագավանքից Սուրբ Նշան տեղափոխված, Վասպուրականի թագավորության վերջին տիրակալ Սենեքերիմ-Հովհաննես Արծրունու հա-

---

[349] Տես Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 27, թիւ 26, էջ 809:

[350] Նույն տեղում:

[351] Տես Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 236-237:

մար 11-րդ դարի հայ վարպետների պատրաստած փայտե գահը:

Նկատենք, որ 1887 թ. ավարտված իր «Կայծեր» վեպի երկրորդ հատորում հայ մեծ վիպասան Րաֆֆին զետեղել է թագավորական այդ գահաթոռին վերաբերող հետաքրքրական, թեև իրական փաստերին հակասող հետևյալ տողերը. «Օրինակ, պատահել էին այսպիսի դեպքեր. մի գյուղացի… գտել էր Սենեքերիմ թագավորի փղոսկրյա գահի առաջին ոտները, խիստ չնչին արժեքով վաճառել էր մի զինագործի, որը գնել էր խենջարի կոթեր շինելու համար»[352]: Մինչդեռ իր ուսուցչին՝ Դանիել Վարուժանին նվիրված հուշագրության մեջ Առաքել Պատրիկը նշում է, որ Հայոց ցեղասպանությունից առաջ, մինչև 1915 թվականը, «փղոսկրեայ ոտներով, քանդակազարդ թիկունք ունեցող» այդ գահը պահվում էր Ս. Նշան վանքի հատուկ գաղտնապահարանում և «խիստ հազուադէպ էր ցոյց տրւում որեւէ մէկին»[353]: Շարունակելով պատմությունը, նա ավելացնում է. «Ժողովուրդը, սակայն, սերնդէ-սերունդ գիտէր խորհրդապահօրէն, որ այդ գահը գոյութիւն ունի այնտեղ թաքուն, որպէս անձեռնմխելի սրբութիւն, որպէս յոյս, եւ հաւատում էր, որ մի օր լոյս աշխարհ կը բերուի այն, երբ հայ ժողովուրդը տիրէ իր ազատագրութեանը…»[354]:

1960-ական թվականներին Սուրեն Քոլանջյանի խնդրանքով անվանի գրող, գրականագետ ու մշակութաբան Հակոբ Սիրունու (Ճոլոյան) շարադրած բացատրագրի մեջ կարևոր տեղեկություններ կան Մեծ եղեռնի ժամանակ հայկական վանքերից ու եկեղեցիներից թալանված և Կոստանդնուպոլիս ուղարկված ինչպես առանձին մեծարժեք ձեռագրերի, այնպես էլ թանկագին իրերի ու առարկաների մասին: Պարզվում է, որ 1922 թվականի գարնանը Պոլսի Հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ ստեղծվել է պատմության, բանասիրության,

---

[352] Րաֆֆի, Կայծեր, Երևան, 1947, էջ 385:

[353] Պատրիկ Առաքել, Դանիէլ Վարուժանն իմ յուշերում, Պէյրութ, 1968, էջ 25-26:

[354] Նույն տեղում, էջ 26:

ազգագրության, արվեստի և հնագիտության բնագավառների մասնագետներից ու հոգևոր գործիչներից բաղկացած հանձնաժողով, որի կազմում, Հակոբ Սիրունուց բացի, ընդգրկվել են նաև Փանոս Թերլեմեզյանը, Վարդան Հացունին, Վահրամ Թորգոմյանը, Աստվածատուր Խաչատրյանը, Հովսեփ Էքշյանը, Վահան Էսայանը, Երվանդ Պեկյանը, եպիսկոպոս Մեսրոպ Նարոյանը և ուրիշներ[355]: Հանձնաժողովի առաջ խնդիր էր դրված ցուցակագրել Գումգափուի Սուրբ Աստվածածին Մայր եկեղեցու գանձատանը եղած և Կոստանդնուպոլսի հայկական այլ տաճարներում մնացած միջնադարյան ձեռագրերն ու արժեքավոր առարկաները: Հակոբ Սիրունու խոսքերով՝ «իրերուն մեջ, զոր այնտեղ գտանք՝ կային, օրինակ, Սենեքերիմ թագավորի գահը, Կեսարիո Ս. Կարապետի դուռը..., եկեղեցական թանկարժեք անոթներ, ականակուռ չաթալթագեր (Վանի բարբառում՝ եպիսկոպոսի և կաթողիկոսի երկճղանի խույրը կամ թագը - Ա.Ա.), մետաղյա կազմեր…»[356]: Եզրափակելով իր բացատրագիրը, Սիրունին ցավով արձանագրում է, որ տեղեկություն չունի հայկական կերպարվեստի ու կիրառական արվեստի այդ բոլոր գանձերի ու գոհարների հետագա ճակատագրի մասին:

Ցայսօր անհայտ է նաև 1915 թվականին թուրք բարբարոսների կողմից նույնպես կողոպտված Սսի Ս. Սոփի (Ս.Սոփիա) մայր տաճարին պատկանող, առյուծի և արծվի պատկերաքանդակներով զարդարված հայրապետական մարմարե գահի և Հակոբ Սիրունու հիշատակած՝ Կեսարիայի Ս. Կարապետ վանքի գլխավոր եկեղեցու մուտքը պահպանող փայտե սադափապատ ու քանդակազարդ դռան գտնվելու վայրը:

Արևմտյան Հայաստանի բոլոր վանքերն ու եկեղեցիներն ունեցել են մեծ քանակությամբ գորգեր և կարպետներ, որոնց համբավը լայն տարածում է գտել արդեն միջին դարերում: 13-

---

[355] Տես Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1967, Զ, Յունիս, էջ 52:

[356] Նույն տեղում:

րդ դարի վենետիկցի վաճառական և ճանապարհորդ Մարկո Պոլոն, անցնելով Կապադովկիայի, Փոքր Հայքի ու Կիլիկյան Հայաստանի տարածքներով, նկատել է, որ տեղաբնակ հայերն ու հույները գործում էին «աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը»[357]: Հայ միջնադարյան գորգերի ու կարպետների լավագույն նմուշները, այդ թվում նաև մշակութային ցեղասպանությունից, բարբեխտաբար, փրկված դասական օրինակները, այսօր էլ գեղարվեստական բացառիկ արժեք են ներկայացնում, ուսումնասիրվում ու ցուցադրվում ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի տարբեր երկրների թանգարաններում:

Անդրադառնալով հայկական կիրառական արվեստի այդ բնագավառում Մեծ եղեռնից առաջ մեր ունեցած հարստության ու կրած կորուստների հարցին՝ Գևորգ Մեսրոպը գրում է. «Իսկ թանկագին գորգերը հարկ չկայ յիշելու, բաւ է միայն ըսել որ իւրաքանչիւր վանքէ եւ եկեղեցիէ մէջ միջին հաշուով 5000 օսմանեան ոսկիի արժողութեամբ թանկագին գորգեր եթէ ընդունինք թէ կային, ինչ որ երբեք չափազանցութիւն մը չէ, հայոց միայն գորգերէ ու կապերտներէ ունեցած կորուստը կ'ըլլայ աւելի քան հինգ միլիոն օսմանեան ոսկի»[358]:

Ֆայեզ էլ Ղոսեյնի գրքում էլ կարդում ենք. «Հայոց ոչնչացումէն ետք կառավարութիւնը ձեռք դրաւ անոնց բոլոր ինչքերուն վրայ, զորս կրցան գտնել անոնց բնակարաններուն և խանութներուն մէջ: Ամբողջն ալ ցուցադրուեցան եկեղեցիներու կամ մեծ բնակարաններու մէջ, և յանձնախումբեր կազմուեցան՝ վարելու համար այն իրեղէններու վաճառումը, ինչպես կը ծախեն վաճառական անձի մը գոյքերը, միայն այն տարբերութեամբ, որ այս ինչքերուն փոխարժէքը սովորապէս իր ժառանգորդներուն կը յանձնուի, մինչ հոս հայոց ինչքերուն փոխարժէքը թուրք գանձատան կը փոխանձուի: Վաճառումը աներևակայելի գիներով եղաւ. գեղեցիկ գորգ մը, որ կրնար

---

357 Книга Марко Поло. Москва, 1956, с. 56.

358 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 27, թիւ 26, էջ 809:

արժել մօտաւորապէս երեսուն ոսկի՝ նուազուրդի դրուած էր 5 ոսկիի: Արուեստի գեղակերտներ կը տրուէին գրեթէ ոչինչ գիներով: Գալով դրամին և զարդեղէններուն, անոնք... Կ. Պոլիս տարան, անձնապէս Թալէաթ Պէյին յանձնելու համար»[359]: Սակայն, ինչպես նշում է Անուշ Հովհաննիսյանը՝ հաճախ էր պատահում, որ «հայերին պատկանող գույքի թալանը տեղի էր ունենում տեղն ու տեղը. գորգերը, արծաթյա և ոսկե իրերը, հագուստը վերցնում էին ոստիկաններն ու ժանդարմներն, մանր կահկարասին՝ տեղի խուժանը»[360]:

Հենվելով Հայոց ցեղասպանության ականատեսների հետ ունեցած զրույցների, տպագիր ու անտիպ հուշերի և օրագրերի, մամուլում հրատարակված հավաստի տեղեկությունների ու հաղորդումների վրա, Սուրեն Քոլանջյանը բերում է բազմաթիվ օրինակներ ոչ միայն հայկական ճարտարապետական կոթողների և հին գրչագրերի կործանման ու կողոպուտի, այլև հայկական գերեզմանոցներում դրված շիրմաքարերի և խաչարձանների ոչնչացման կամ դրանցով տարբեր շենքեր ու շինություններ կառուցելու մասին:

Այսպես՝ երբ 1916 թվականի նոյեմբերի 3-ին Թալեաթ փաշան եկավ Մալաթիա և իր այցելության ընթացքում տեղի իշխանություններին հրամայեց վերացնել քաղաքում հայերի ներկայությունը վկայող բոլոր հետքերը, ի թիվս հայկական այլ մշակութային արժեքների՝ եկեղեցական կոթողների, ձեռագիր մատյանների ու կիրառական արվեստի նմուշների, քարուքանդ արվեցին կամ տեղահանվեցին, կառուցվող զորանոցների համար որպես շինանյութ օգտագործվեցին հայոց գերեզմանատան տապանաքարերը, խաչքարերն ու հուշարձաննե-

---

[359] Տես Էլ Ղոսէյն, Ֆայէզ, Հերոսական հայութեան անցեալէն: Ջարդերը Հայաստանի մէջ (ականատեսի վկայութիւններ), Գահիրէ, 1960 (էջ 21-22) և Սիրիացի արաբ ականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին (թարգմանությունը արաբերեն բնագրից, առաջաբանը, ներածությունը և ծանոթագրությունները Արշակ Փոլադյանի և Լևոն Սարգսյանի), Դամասկոս, 2017 (էջ 83-84):

[360] Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը – ՎԷՄ. համահայկական հանդես, Երևան, Գ (Թ) տարի, 2011, թիվ 1(33), հունվար-մարտ, էջ 171:

ը[361]:

Բառարանագիր և ազգագրագետ Կարապետ Գաբիկյանի վկայությամբ՝ Սեբաստիայի հայությանը աքսորելուց ու կոտորելուց հետո քաղաքի հայկական գերեզմանոցի շիրմաքարերով փողոցներ ու մայթեր սալապատվեցին[362]:

1916 թ. գարնանը կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կարգադրությամբ Մուշ ուղարկված հանձնաժողովի զեկուցագրի մեջ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման և մշակութային եղեռնի դառնալուր իրողությունը հավաստող փաստերի շարքում ներկայացված է նաև հայ միջնադարյան առավել նշանավոր վանական համալիրներից մեկի՝ 11-րդ դարից հայտնի Մշո Ս. Առաքելոց (Թարգմանչաց) վանքի տակնուվրա արված շիրմանոցի ողբալի վիճակը: Գետնին տապալված ու կոտրատված բազմաթիվ խաչքարերի շարքում առանձնանում էր 1141 թվականին կերտված, վաղ միջնադարի հայ ականավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի հիշատակին նվիրված, 1916 թվականին դեռևս կանգուն, թեև վերևից կիսով չափ ջարդված խաչարձանը[363]:

Փաստացի վկայություններ են պահպանվել նաև Հայոց ցեղասպանության տարիներին հայկական եկեղեցիները հարդարող որմնանկարների ու սրբանկարների ոչնչացման, ապականման կամ կողոպտման մասին: Ինչպես գրում է Գևորգ Մեսրոպը, Արևմտյան Հայաստանի «ամէն մէկ վանքի եւ եկեղեցիի մէջ կային մէկէ աւելի նկարներ, որոնք հին դարերու արուեստի գործ, երբեմն չափազանց ընդարձակ համբաւ մը կը

---

361 Տես Քոլանջյան Սուրեն, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները – Էջմիածին, 1966, Թ-Ժ, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, էջ 92:

362 Տես Գաբրիկեան Կ., Եղեռնապատում: Փոքուն Հայոց եւ Նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924, էջ 563:

363 Տես Զեկուցում Մուշ ուղարկուած յանձնաժողովի Նորին Վեհափառութեան Տ.Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց – Արարատ, Վաղարշապատ, 1916, համար Է-Ը, յուլիս-օգոստոս, էջ 579 և 581:

վայելէին...»[364]: Որպես օրինակ նա բերում է «Արղընիի Տիրամոր պատկերը»[365]: Խոսքը վերաբերում է Դիարբեքիրի նահանգում, հայոց պատմական Ծոփք նահանգի Պաղնատուն գավառի տարածքում, Պաղին (Արղանամադեն) գետի աջ ափին գտնվող Արկնի (Արղնի, Արղանա) ավանի հարևանությամբ, Քոլադ լեռան դժվարամատույց գագաթին 1433 թվականին կառուցված և Մեծ եղեռնի ժամանակ ավերված Բարձրահայաց Սուրբ Աստվածածնի վերոհիշյալ վանքին պատկանող Տիրամոր սրբապատկերին, որի ճակատագիրը ցայսօր անհայտ է: Մեզ արդեն ծանոթ մեկ այլ աղբյուրից էլ տեղեկանում ենք, որ 1915 թվականին թուրք և քուրդ հրոսակները, թալանելով Մուշ քաղաքի Վերին թաղի Ս. Հարություն տաճարը, պղծել են եկեղեցու պատերին եղած նկարները[366]:

Այսպիսով՝ կարելի է վստահաբար ասել, որ համիդյան ջարդերի և հատկապես Մեծ եղեռնի տարիներին հայ միջնադարյան կերպարվեստն ու կիրառական արվեստը վիթխարի կորուստներ կրեցին: Գևորգ Մեսրոպի պատկերավոր խոսքով՝ «թուրք բարբարոսը եթէ միայն հայ վանքերէն ու եկեղեցիներէն հաւաքէր բազմադարեան նկարները, հնութիւնները, մասունքները, գեղարուեստական առարկաները, յիշատակարանները, գերեզմանաքարերը, գրչագիրները, հին գորգերը, հնակերտ գործուածները, գոհարազարդ, գոհարակուռ առարկաները եւ զանոնք բոլոր ծախէր քաղաքակիրթ պետութեան մը՝ եթէ ինքը չէր ուզեր կամ չէր համարձակեր պահել զանոնք, մեծարժէք թանգարան մը պահպանած պիտի ըլլար մարդկային քաղաքակրթութեան համար»[367]:

---

364 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 27, թիւ 26, էջ 809:

365 Նույն տեղում:

366 Տես Զեկուցում Մուշ ուղարկուած յանձնաժողովի Նորին Վեհափառութեան Տ.Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Կաթողիկոսին Ամենայն Հայոց – Արարատ, Վաղարշապատ, 1916, համար Է-Ը, յուլիս-օգոստոս, էջ 580:

367 Գէորգ Մեսրոպ [Տէր-Մեսրոպեան Գէորգ], Թուրքիոյ հայոց կորուստները 1915-1922ին ազգապատկան գոյքերու տեսակէտով – Հայաստանի կոչնակ, Նիւ Եորք, 1931, ԼԱ. տարի, յունիս 27, թիւ 26, էջ 811:

Սակայն համիդյան ջարդերի և Հայոց ցեղասպանության հետևանքով անդառնալի կորուստներ կրեցին ոչ միայն հայ միջնադարյան ճարտարապետական կոթողները, հայկական վանքերում ու եկեղեցիներում պահվող ձեռագիր պատկերազարդ մատյանները, որմնանկարներն ու սրբանկարները, բարձրաքանդակները, խաչքարերն ու տապանաքարերը, կիրառական արվեստի տարատեսակ նմուշները: Մեծապես տուժեց նաև արևմտահայ նոր, աշխարհիկ կերպարվեստը:

Հայտնի է, որ 1915 թվականի սկզբին միայն Կոստանդնուպոլսում ապրում էին 1883 թվականին անվանի քանդակագործ ու հնագետ Երվանդ Ոսկանի նախաձեռնությամբ այստեղ բացված Գեղարվեստի բարձրագույն վարժանում (Գեղեցիկ արվեստների բարձրագույն դպրոց)[368], ինչպես նաև եվրոպական տարբեր երկրների, առավելապես՝ Իտալիայի և Ֆրանսիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթություն ստացած ու մասամբ ինքնուս 168 հայ նկարիչներ[369], որոնցից մի քանիսին վերաբերող կարևոր տեղեկություններ է հաղորդում Կոստանդնուպոլսում ծնված և Փարիզում ապրած արվեստաբան Ադոլֆ Տալասսոն[370]: Ոչ միայն պոլսահայ նկարիչների, այլև 1600 թվականից մինչև 1923 թվականը Օսմանյան կայսրությունում ապրած, այնտեղ աշխատած հայազգի այլ արվեստագետների կենսագրության ու ստեղծագործության մասին պատմող շատ արժեքավոր, բացառիկ հետաքրքրություն ներկայացնող աշխատություն է Գարո Քյուրքմանի՝ Ստամբուլում թուրքերեն և անգլերեն լեզուներով լույս տեսած ստվարածավալ, հազարից ավելի գունավոր և միագույն նկարներ ու լուսանկարներ ընդգրկող երկհատոր պատկերագիրքը, որտեղ առաջին ան-

---

368 1917 թ. վարժարանը վերածվել է Գեղեցիկ արվեստների ինստիտուտի, 1926 թ.-ին դարձել Գեղեցիկ արվեստների ակադեմիա, իսկ 1969 թ.-ից անվանակոչվել Գեղարվեստի պետական ակադեմիա: Կոստանդնուպոլսում բնակվող իտալացի ճարտարապետ Ալեսսանդրո Վալորիի նախագծով կառուցված վարժարանի այդ շենքում ներկայումս տեղավորված է Ստամբուլի Հին Արևելքի թանգարանը:

369 Տես Յուշամատեան Մեծ եղեռնի. 1915-1965, Պէյրութ, 1965, էջ 35:

370 Thalasso, Adolphe. l'Art Ottoman. Paris, 1910.

գամ շրջանառության մեջ են դրվել ինչպես Թուրքիայի, այնպես էլ հայաշատ մի շարք երկրների պետական և մասնավոր թանգարաններում, արխիվներում ու գիտական կենտրոններում, վանքերում ու եկեղեցիներում, նկարահավաք և հնահավաք անհատների մոտ պահվող բազմաթիվ անծանոթ ստեղծագործություններ, նորահայտ փաստեր ու վկայություններ[371]:

Արևմտահայ արվեստագետները նկատելի դեր են խաղացել ոչ միայն հայկական, այլև թուրքական նոր կերպարվեստի ձևավորմանը նպաստելու, դրա զարգացման հետագա ընթացքը կողմնորոշելու ու խթանելու գործում: Այդ առումով մշակութային նշանակալից երևույթներ էին 1871 թ. աշնանը Կոստանդնուպոլսում բացված, թուրքական գեղարվեստական իրականության մեջ իր նախադեպը չունեցող անդրանիկ պատկերահանդեսը, 1873 թ. Կոստանդնուպոլսի Արհեստների դպրոցում, իսկ 1875 թ. ամռանը Իսլամի բարձրագույն դպրոցում (ներկայիս Ստամբուլի համալսարան) կայացած նկարահանդեսները, որտեղ իրենց ստեղծագործություններն են ցուցադրել նաև թուրքահպատակ հայ նկարիչներն ու քանդակագործները: Է՛լ ավելի կարևոր դեր են կատարել 1881–1882, 1901–1904, 1906–1907 և 1911 թվականներին Կոստանդնուպոլսում կազմակերպված ցուցահանդեսները, ինչպես և Գեղարվեստի բարձրագույն վարժարանի սաների (այդ թվում՝ նրանց մեծամասնությունը կազմող հայ ուսանողների) բացօդյա՝ քաղաքի Գյուլհանե զբոսայգում տեղի ունեցող ամենամյա վերնիսաժները: Արևմտահայ արվեստագետներն անդամակցել են 1908 թվականին Կոստանդնուպոլսում հիմնադրված Թուրք նկարիչների ընկերությանը, մասնակցել արտասահմանում՝ Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում, Մյունխենում, Չիկագոյում և այլուր այդ տարիներին կայացած միջազգային ստուգատեսներին, տոնավաճառներին ու փառատոներին:

Համիդյան ջարդերն ու Հայոց ցեղասպանության արհավիրքները կտրուկ խաթարեցին, ըստ էության, կասեցրեցին արևմտահայ կերպարվեստի վերընթաց բնականոն զարգա-

---

[371] Տես Kürkman, Garo. Armenian painters in the Ottoman Empire (1600–1923). In two volumes, Istanbul, 2004:

ցումը: Մահվան վտանգից ու հալածանքներից փրկվելու համար արևմտահայ, առավելապես Կոստանդնուպոլսում ծնված և այնտեղ բնակված բազմաթիվ արվեստագետներ ստիպված բռնեցին գաղթի ճանապարհը: 1890-ական թվականների կեսերին, հայերի զանգվածային կոտորածների ժամանակ ու դրանից անմիջապես հետո, Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներ ընդմիշտ լքեցին, հայրենազրկվեցին ու օտար ափերում՝ Բուլղարիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Կիպրոսում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և այլուր հանգրվան գտան արդեն անվանի, հեղինակավոր, ստեղծագործական մեծ ուղի անցած և դեռ սկսնակ, տակավին անփորձ, բայց խոստումնալից հայազգի տասնյակ նկարիչներ ու քանդակագործներ:

Իր կյանքի վերջին տարիները Բուլղարիայում է անցկացնել Կոստանդնուպոլսում ծնված, Հռոմում իր ուսումը շարունակած, իսկ 1896 թվականին Սոֆիայում հայտնված գեղանկարիչ Պետրոս Սրապյանը (1833-1898): 1894 թվականին Ռուսաստան՝ սկզբում Օդեսա, այնուհետև Սանկտ Պետերբուրգ է հեռացել ու այնտեղ մինչև 1905 թվականը մնացել Կոստանդնուպոլսում ծնված, Իտալիայում կատարելագործված ծովանկարիչ, բեմանկարիչ և օպերային երգիչ Մկրտիչ Ճիվանյանը (1848-1906): Համիդյան բռնապետության շրջանում ԱՄՆ է մեկնել, ապա Եգիպտոսում հայտնվել, հետո շուրջ տասը տարի Բաքվում, Քութայիսում, Թիֆլիսում և Վլադիկավկազում ապրել ու ստեղծագործել Կոստանդնուպոլսում ծնված, Նեապոլի Գեղարվեստի ակադեմիայում, իսկ ավելի ուշ՝ Ռոդոլֆ Ժուլիանի փարիզյան մասնավոր ակադեմիայում կրթություն ստացած, 1906 թվականից Փարիզում հաստատված գեղանկարիչ Կարապետ Նշանյանը (1861-1950): 1896 թվականից բուլղարական Վառնա քաղաքում է ապրել և ստեղծագործել Զմյուռնիայում ծնված, Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանն ավարտած, ապա Իտալիայում և Փարիզի Գեղարվեստական դպրոցում մասնա-

գիտացած քանդակագործ Հակոբ Արապյանը (1867–՞): Այդ նույն ժամանակ Ռուսաստան է մեկնել, Դոնի Ռոստովում, Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում ապրել, իսկ հետո Երևան տեղափոխվել Կոստանդնուպոլսում ծնված, տեղի Գեղարվեստի բարձրագույն վարժարանն ավարտած և Իտալիայում իր վարպետությունը հղկած դիմանկարիչ Ենոք Նազարյանը (1868-1928): 1895 թվականից Բեռլինում է բնակվել Տրապիզոնում ծնված, 1915 թվականին՝ Հայոց ցեղասպանության ժամանակ հարազատներին կորցրած ծովանկարիչ, Բեռլինի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ Վարդան Մախոխյանը (1869–1937): 1896 թվականից Եգիպտոսում է ապաստան գտել իր ծննդավայր Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանում ուսանած, ապա Փարիզում սովորած գեղանկարիչ Երվանդ Տեմիրճյանը (1870–1938): Նյու Յորքում է իջևանել Տրապիզոնում ծնված, Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանն ավարտած, Փարիզի Գեղարվեստական դպրոցն ու Ռ. Ժուլիանի մասնավոր ակադեմիան հաճախած, համիդյան կոտորածների օրերին հորն ու եղբորը կորցրած նկարիչ Սարգիս Երկանյանը (1870-1950): 1896 թվականին Բուլղարիա է մեկնել ու նախ Պլովդիվում, ապա Սոֆիայում ապրել և ստեղծագործել Կոստանդնուպոլսում ծնված, տեղի Գեղարվեստի բարձրագույն վարժարանում սովորած ծովանկարիչ Տորք Զաքարյանը (1870-1940): Այդ տարիներին Փարիզում է մշտական բնակություն հաստատել Կոստանդնուպոլսում ծնված, Վենետիկի Գեղարվեստի ակադեմիայում ուսանած, համիդյան ջարդերի ականատես, ծովանկարիչ Կարապետ Ադամյանը (1872-1947): 1895 թվականին հոր՝ Դիարբեքիրում և Խարփութում Մեծ Բրիտանիայի փոխ-հյուպատոս Թովմաս Պոյաճյանի սպանությունից հետո Լոնդոն է մեկնել ու այնտեղ ապրել Դիարբեքիրում ծնված, Լոնդոնի լավագույն ստեղծագործական կրթարանում՝ Ֆելիքս Սլեյդի անվան գեղարվեստի բարձրագույն դպրոցում սովորած բազմալեզու նկարչուհի, գրող և թարգմանչուհի Զապել Պոյաճյանը (1873-1957): Նույն թվականին Փարիզ է մեկնել և այնտեղ Ռ. Ժուլիանի մասնավոր ակադեմիայում նկարչի

մասնագիտություն ձեռք բերել Վիեննայում ծնված, մանկությունն ու պատանեկան տարիները Կոստանդնուպոլսում անցկացրած օֆորտի վարպետ Էդգար Շահինը (1874-1947): 1896-ին, համիդյան ջարդերից խույս տալով, ԱՄՆ-ում է ապաստան գտել Տիգրանակերտում ծնված, Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանը գերազանցությամբ ավարտած գեղանկարիչ Հովսեփ Փուշմանը (1877-1966): Վերջինիս հետ միաժամանակ Ֆրանսիա է մեկնել Կոստանդնուպոլսում ծնված, Փարիզի Գեղարվեստական դպրոցն ավարտած շնորհալի ճարտարապետ և ծովանկարիչ Հրանտ Կազանճյանը (1879-՞): 1895-ին իր ծննդավայր Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանում ուսումն ընդհատել ու երկրից ընդմիշտ հեռացել է մի քանի տարի Կովկասում, ապա Բուլղարիայում ապրած, իսկ 1905 թվականին Փարիզում հանգրվան գտած գեղանկարիչ և արվեստի քննադատ Հրանտ Այյանաքը (1880-1938):

Արևմտահայ արվեստագետների թիվն է՛լ ավելի նվազեց, իսկ արևմտահայ կերպարվեստի զարգացման հունը գրեթե ցամաքեց Հայոց ցեղասպանության ժամանակ՝ 1915-1923 թվականներին: Ինչպես արդեն նշեցինք, հայ մտավորականներից շատերի նման Մեծ եղեռնի զոհերը դարձան նաև նկարիչներից ու քանդակագործներից ոմանք: Իսկ սպանդից փրկված, հարազատներին ու բարեկամներին կորցրած, հայրենազրկված արվեստագետները պանդուխտներ դարձան: Հիշենք նրանցից մի քանիսի անունները:

Վանում է ծնվել և պատանի հասակից ազգային-ազատագրական շարժմանը նվիրվել Աբդուլ Համիդի բռնատիրական վարչակարգի ու երիտթուրքերի իշխանության կողմից հետապնդված, կալանավորված և մահապատժի դատապարտված Վանի հերոսամարտի ղեկավարներից ու ակտիվ մասնակիցներից մեկը՝ Սանկտ Պետերբուրգի Գեղարվեստը խրախուսող ընկերության նկարչական դպրոցում սովորած, ապա Ռոդոլֆ Ժուլիանի փարիզյան մասնավոր ակադեմիան ավարտած գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը (1865-1941): 1915 թվականի գարնանը, Հայոց ցեղասպանության սարսափներից

մազապուրծ, նա հասել է Թիֆլիս, այնտեղից ուղևորվել Փարիզ, մեկնել ԱՄՆ, իսկ 1928 թվականին ներգաղթել Խորհրդային Հայաստան: Նույնպես Վանում է ծնվել Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանում ուսանած, 1912-1915 թթ. Վանի Կենտրոնական վարժարանում դասավանդած գեղանկարիչ ու գծանկարիչ Վրթանես Ախիկյանը (1873-1936), որը 1915 թվականին ստիպված հեռացել է Թիֆլիս և այնուհետև հաստատվել Երևանում: 1915 թվականին խուսափելով ձերբակալումից, իր տիկնոջ՝ գրող և ազգային-հասարակական գործիչ Զապել Եսայանի հետ Բուլղարիա է մեկնել, ապա Փարիզում հայտնվել գեղանկարիչ և քանդակագործ, Կոստանդնուպոլսում ծնված, տեղի Գեղարվեստի բարձրագույն վարժարանում Երվանդ Ոսկանին աշակերտած, իսկ հետո Փարիզի Գեղարվեստական դպրոցն ու Ռ. Ժուլիանի մասնավոր ակադեմիան հաճախած Տիգրան Եսայանը (1874-1921): Իր ծննդավայր Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանում է մասնագիտական կրթություն ստացել և Ռ. Ժուլիանի մասնավոր ակադեմիայում սովորել առավելապես նատյուրմորտի ժանրում աշխատած գեղանկարիչ Արամ Բակալյանը (1878–1959), որը Հայոց ցեղասպանության տարիներին հեռացել է Կոստանդնուպոլսից և 1919 թվականից բնակվել Փարիզում: Նրանից մի քանի տարի առաջ՝ 1916 թվականին է Փարիզում հայտնվել Կոստանդնուպոլսում ծնված, մեծահարուստ բարերար, գեղարվեստասեր ու նկարահավաք Գալուստ Գյուլպենկյանի ազգական, ֆրանսիացի նշանավոր պատկերահան Մորիս Ուտրիլլոյի հետ մտերմություն ունեցած գեղանկարիչ Հրանտ Գյուլպենկյանը (1880–1968): Ակնում է ծնվել և Կոստանդնուպոլսում ստեղծագործել Հայոց ցեղասպանության ականատես, Մեծ եղեռնին նվիրված՝ գրաֆիկական սգահունչ, խորհրդավոր բազմիմաստ շարքերի հեղինակ, մանրանկարիչ Մելքոն Քեպապճյանը (1880-1949), որը 1918 թվականից ապրել և ստեղծագործել է Փարիզում, իսկ կյանքի վերջում՝ 1947 թվականին տեղափոխվել Երևան: 1920 թվականին է Կոստանդնուպոլսից հեռացել, առժամանակ Եգիպտոսում բնակվել, այնուհետև

Նյու Յորքում իջևանել Կոստանդնուպոլսում ծնված ու տեղի Գեղարվեստի բարձրագույն վարժարանն ավարտած գեղանկարիչ, նատյուրմորտի վարպետ Հարություն Տիրիդյանը (1884–1953): Հռոմի գեղարվեստի ակադեմիայում և Փարիզի դեկորատիվ արվեստների դպրոցում է կրթվել Մալաթիայում ծնված, 1915 թ. հայոց կոտորածների ժամանակ մորն ու եղբորը կորցրած, վերահաս սպանդից մի կերպ փրկված, տարբեր երկրներում ապրած և ստեղծագործած «հայ վշտի երգիչ» Սարգիս Խաչատուրյանը (1886-1947): Նույն թվականին Կոնիա է աքսորվել ու գնդակահարման սպառնալիքից հրաշքով փրկվել Սեբաստիայում ծնված, Հռոմի և Միլանի Գեղարվեստի ակադեմիաներում սովորած ու Փարիզում կատարելագործված, երկար տարիներ Եգիպտոսում, ապա Կիպրոսում բնակված, իսկ 1947 թվականին Խորհրդային Հայաստան եկած մեզ արդեն ծանոթ նկարիչ, գրող և ազգագրագետ Առաքել Պատրիկը (1894-1984): 1915 թվականին Թիֆլիս է գաղթել, հետո Երևան տեղափոխվել բանաստեղծ ու արձակագիր, գրական-հասարակական գործիչ Վահրամ Ալազանի ավագ եղբայրը՝ Վանում ծնված, Վանի հերոսամարտին մասնակցած գծանկարիչ ու ծաղրանկարիչ, ստալինյան շրջանի քաղաքական բռնությունների ժամանակ Երևանի Կենտրոնական բանտում իր մահկանացուն կնքած Դանչոն՝ Եղիազար Գաբուզյանը (1894–1937):

Համիդյան ջարդերի և Հայոց ցեղասպանության հետևանքով արևմտահայ կերպարվեստի կրած կորուստների ու ծանր կացության մասին ստույգ և անաչառ պատկերացում կազմելու համար բավական է համեմատական պարզ հաշվարկ անել: Հայտնի է, որ 1882 թվականի մայիսին Կոստանդնուպոլսում, Բերայի «Ալքազար» հանրային այգում Բրիտանական դեսպանատան կազմակերպած՝ շուրջ 200 նկար և քանդակ ընդգրկող ցուցահանդեսին մասնակցել են գրեթե երկու տասնյակ միայն պոլսահայ արվեստագետներ: Անդրադառնալով ցուցահանդեսի հայ մասնակիցներին՝ Թիֆլիսում լույս տեսնող «Արձագանք» թերթի թղթակիցը, մասնավորապես, նշում է նկարիչներ Վիչեն Արսլանյանի, Մկրտիչ Ճիվանյանի, Ավե-

տիս Մուրադյանի, Պողոս Շաշյանի, Հովհաննես Սագըզյանի, Պետրոս Սրապյանի, նկարչությամբ զբաղված դերասան Հովսեփ Չերաչեի, քանդակագործներ Երվանդ Ոսկանի, Տիրուհի Կիվմիշյանի և այլոց անուններն ու ափսոսանքով արձանագրում, որ ինչ-ինչ պատճառներով պատկերահանդեսին չեն մասնակցել ցուցակում հայտարարված Կարապետ Նշանյանը և Մելքոն Տիրացույանը[372]: Այնինչ դրանից տասնամյակներ անց՝ Առաջին աշխարհամարտի նախաշեմին, երբ արևմտահայ արվեստագետների թվաքանակը, ինչպես արդեն ասացինք, ոչ թե պարզապես ավելացել, այլ գրեթե տասնապատկվել էր, հայերի մասնակցությունը Կոստանդնուպոլսի եվրոպական հատվածում՝ Բոսֆորի նեղուցում գտնվող Գալաթասարայ առափնյա կղզում 1917-1922 թվականներին կայացած Թուրք նկարիչների ընկերության ամենամյա մեծ ցուցահանդեսների հայազգի միակ մասնակիցը վերն արդեն հիշատակված գեղանկարիչ, Կոստանդնուպոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժանի ընթացավարտ Վիչեն Արսլանյանն էր (1866–1942)[373]:

1915 թվականին, երբ ավերվեց ու թալանվեց Կարինի Սանասարյան վարժարանը, ոչնչացվեցին կամ անհետ կորան նաև այդ կրթարանի բավական հարուստ թանգարանում պահվող ինչպես եվրոպացի ու ռուս, այնպես էլ արևելահայ և արևմտահայ նկարիչների ու քանդակագործների մի շարք հիշարժան ստեղծագործություններ: Համիդյան ջարդերի ու հատկապես Մեծ եղեռնի տարիներին Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերից հապճեպ հեռացած, հայրենազրկված, տուն ու տեղ լքած, մահից ազատված հայ արվեստագետներից շատերն անտեր թողեցին իրենց հարազատ օջախներում և աշխատանոցներում գտնվող աշխատանքները, որոնք թուրքերը կամ թալանեցին, կամ հրկիզեցին ու ջարդոտեցին: Հատկանշական ընդամենը մեկ

---

[372] Տես Մասիս, Նկարահանդէս – Արձագանք, Թիֆլիս, 1882, № 22, 18 հուլիսի, էջ 349–350:

[373] Տես Kürkman, Garo. Armenian painters in the Ottoman Empire (1600–1923). Volume I, Istanbul, 2004, p. 73-74:

օրինակ բերենք: Խոսքը Իզմիրում ծնված, Վենետիկի և Հռոմի Գեղարվեստի ակադեմիաներում մասնագիտական կրթություն ստացած ու առժամանակ Նյու Յորքում աշխատած, ուշագրավ դիմաքանդակների, թեմատիկ հորինվածքների, ինչպես նաև Իզմիրի, Կոստանդնուպոլսի ու Կահիրեի հայկական գերեզմանոցներում տեղադրված դամբարանային հուշարձանների հեղինակ Հակոբ Փափազյանի (1878–1957) մասին է: Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության տարիներին պատվերներից զրկված ու հայահալած մռայլ իրականության մեջ հայտնված արվեստագետը նյութական և հոգեբանական ծանր ճգնաժամ է ապրել: 1920 թվականի մարտին Իզմիրում քանդակագործին հանդիպած Հակոբ Սիրունին վերջինիս գտել է «իր կիսաւեր աշխատանոցին մէջ, ընկճուած, յուսահատ ու յոռետես..., մինակ, միս մինակ, լքուած ու բոլորէն անտեսուած»[374]: Դրանից երկու տարի անց՝ 1922 թվականին, հայերի հանդեպ հերթական բռնություններից մի կերպ խուսափած արվեստագետն Իզմիրում է թողել իր ստեղծագործություններից շատերն ու անվերադարձ մեկնել Նյու Յորք:

Նոր ժամանակների արևմտահայ կերպարվեստի մեծաթիվ կորուստների մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ Հայաստանի ազգային պատկերասրահում, որը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի խոշորագույն շտեմարանն է, 19-րդ դարի վերջին քառորդում և 20-րդ դարասկզբին ասպարեզ մտած, Օսմանյան կայսրությունում ապրած ու ստեղծագործած արևմտահայ նկարիչներից ու քանդակագործներից շատերն առհասարակ ներկայացված չեն, ոմանք էլ (օրինակ՝ Կարապետ Ադամյանը, Զապել Պոյաճյանը, Զարեհ Գալֆայանը, Սարգիս Երկանյանը, Տելեմաք Էքսերճյանը, Մկրտիչ Ճիվանյանը, Վահրամ Մանավյանը, Ավետիս Մուրադյանը, Կարապետ Յազմաճյանը, Կարապետ Նշանյանը, Պետրոս Սրապյանը, Սարգիս Տիրանյանը, Մելքոն Տիրացույանը, Հովսեփ Փուշմանը, Լևոն Քյուրքճյանը և ուրիշներ) ներկայացված են հատուկենտ, հաճախ պատահական, անցողիկ, նրանց արվես-

---

[374] Սիրունի [Ճոլոլեան Յակոբ], Յակոբ Փափազեան (էջ մը յուշատետրէս) – Նաւասարդ, Պուքրէշ, 1924, նոր շրջան, Ա հատոր, Ժ-ԺԲ պրակ, էջ 358:

տին ոչ բնորոշ աշխատանքներով: Բացառություն են, թերևս, միայն Փանոս Թերլեմեզյանի, Արշակ Ֆեթվաճյանի, Էդգար Շահինի, Հովհաննես Ալխազյանի, Սարգիս Խաչատուրյանի, Մելքոն Քեպապճյանի, Տիգրան Եսայանի և Ռաֆայել Շիշմանյանի բազմաթիվ ստեղծագործությունները, որոնք որոշակի, իսկ առանձին դեպքերում՝ լիարժեք պատկերացում են տալիս այդ նկարիչների ստեղծագործական ուրույն ձեռագրի, ժանրային ու թեմատիկ նախասիրությունների և ձևաոճական մտածողության մասին: Եվս մեկ անգամ կարևորելով և գնահատելով Գարո Քյուրքմանի դերն ու նպաստը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի թրքահայ նկարիչների և քանդակագործների աշխատանքները հայտնաբերելու, վերագտնելու, հավաքագրելու ու ընթերցողներին ներկայացնելու շնորհակալ գործում, այդուհանդերձ նկատենք, որ նրա երկհատոր պատկերագրքում զետեղված, ոչնչացումից ու կործանումից, մշակութային ցեղասպանությունից, բարեբախտաբար, խուսափած այդ նմուշները կազմում են արևմտահայ նոր կերպարվեստի միայն մի փոքր, չնչին տոկոսը: Տարափոխելով Գևորգ Մեսրոպի վերը մեջբերված հուզաշատ միտքը, կարող ենք հաստատ, համոզված ասել, որ եթե նոր ժամանակներում արևմտահայ նկարիչների ու քանդակագործների ստեղծած և համիդյան ջարդերի ու Մեծ եղեռնի տարիներին անհետացած աշխատանքներն անվնաս մնային, կորստից փրկվեին, ապա դրանց ցուցադրության համար ևս կպահանջվեր մի խոշոր թանգարան կառուցել:

Արևմտյան Հայաստանում հայկական մշակութային ժառանգության, ազգային ճարտարապետության ու կերպարվեստի հուշարձանների հետևողական ոչնչացումը, այլակերպումը և յուրացումը շարունակվել է նաև 1923 թվականից հետո, ընդհուպ մինչև մեր օրերը, չնայած որ պատմական ու մշակութային արժեք ներկայացնող ստեղծագործությունների և հուշարձանների պահպանության պարտավորությունն ամրագրվել է Թուրքիայի Հանրապետության ինչպես նախկին (1924 և 1961 թվականներին ընդունված), այնպես էլ ներկա (1982 թվականից գործող) հիմնական օրենքի՝ Սահմանադրության մեջ:

1974 թվականին ՅՈՒՆԵԱԿՕ-ի հրապարակած տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի Հանրապետության սահմաններում 1923 թվականին դեռ կանգուն 913 հայկական կրոնական կառույցներից ու եկեղեցական շինություններից 464-ը ամբողջովին անհետացել են, 252-ը ավերակների են վերածվել, իսկ 197-ը շտապ վերանորոգման կարիք են զգում[375]:

Ոչ միայն բնական աղետների կամ շինարարական լայնածավալ աշխատանքների, այլև չարամտաբար իրականացված պայթեցումների, զինավարժությունների ընթացքում արձակված նշանակետային համազարկերի ու կրակոցների, գանձախուզության նպատակով կատարված անկանոն պեղումների, թուրք և քուրդ գյուղացիների կողմից որպես շինանյութ օգտագործվող հայկական ավերված կամ կիսավեր կոթողների՝ օրինակ, Տեկորի Ս. Երրորդություն եկեղեցու, Բագրևանդի Ս. Հովհաննու եկեղեցու, Արգինայի Կաթողիկե եկեղեցու, Նարեկավանքի, Բագնայրի վանքի, Վարագավանքի, Գլակավանքի (Իննակնյան վանք) և եկեղեցական այլ կառույցների որմնաքարերի, սալաքարերի և նույնիսկ խաչազարդ քարերի յուրացման, անդադար թալանի հետևանքով հիմնահատակ ավերվեցին կամ մեծապես վնասվեցին հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձաններից շատերը[376]:

---

375 Տես Հովհաննիսյան Ա., Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, Երևան, 2005 (էջ 10) և Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր – Վարձք, Երևան, 2010, № 2, հուլիս-նոյեմբեր (էջ 4-5):

376 Այդ հուշարձանների նախկին և ներկա վիճակը համեմատության կարգով ներկայացնող լուսանկարները, որոնք արվել են Հայոց ցեղասպանությունից առաջ՝ 1900-1915 թվականներին, ու դրանից տասնամյակներ անց՝ 1970-ականներին և մեր օրերում, տպագրված են Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի հրատարակած «Եղեռն՝ եղեռնից հետո» պատկերագրքի առաջին հատորում (Երևան, 2015), որը լույս է տեսել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ: Նաև տես Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր – Վարձք, Երևան, 2010, № 2, հուլիս-նոյեմբեր, էջ 2-64:

Ձևախեղվել, մզկիթի է վերածվել Ծպնիի եկեղեցին, իսկ Կարսի Ս. Առաքելոց եկեղեցու գմբեթին քրիստոնեական խաչի փոխարեն տեղադրվել է մահմեդական կիսալուսին[377]:

Դրա հետ մեկտեղ ոչնչացել, անհետացել կամ լրջորեն վնասվել ու քայքայվել են նաև այդ տաճարներից շատերի գեղարվեստական կերպարը բնորոշող, դրանց անբաժան և կարևոր բաղկացուցիչ մասը կազմող որմնանկարներն ու սրբապատկերները, որմնաքանդակներն ու խաչքարերը, կիրառական արվեստի գեղազարդար տարատեսակ նմուշները: Այսպես՝ Ծպնիի վերոհիշյալ եկեղեցու ներսում սվաղվել, ծեփով են ծածկվել հայկական կենդանակերպ և թռչնակերպ բարձրաքանդակները: Ֆրանսիացի բժիշկ և արվեստաբան, հայկական միջնադարյան կերպարվեստի ու ճարտարապետության գիտակ Ժան Միշել Թիերին 1970 թվականին Արևմտյան Հայաստանի Վասպուրականի գավառում ուսումնասիրություններ կատարելու ժամանակ ականատես է եղել, թե ինչպես Կապուտկողի Սուրբ Հակոբ վանքը (Ընձաքարի վանք)՝ 10-րդ դարում ստեղծված իր բարձրարժեք մեծաթիվ որմնանկարներով, ավերվեց մղանով (բուլդոզեր)՝ հարակից ճանապարհն ընդարձակելու համար[378]: Որմնանկարների հետքեր ու մնացորդներ կային նաև Եփրատի խոշոր վտակներից մեկի՝ Մուրադ-չայի (Արածան) ափին գտնվող Թիլի (Եկեղյաց գավառ) երեք եկեղեցիներում[379], որոնք ջրի տակ անցան, խորտակվեցին 1970-ական թվականներին, Քեբանի հսկայական ջրամբարի շինարարության ժամանակ: Թուրքական պետության «պահպանության տակ» հայտնվելուց հետո վնասվել են

---

[377] Տես Քեշիշյան Մ., Հայկական մշակութային եղեռնը Օսմանյան Թուրքիայի տարածքում – Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, 2003, № 7, էջ 129:

[378] Տես Թիերի Ժան-Միշել (Պաոլո Կունեոյի աշխատակցությամբ), Հայկական հուշարձանների կրած վնասները Արևելյան Թուրքիայում – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 1, էջ 36:

[379] Տես Դրամբյան Ի., Քոթանջյան Ն., Որմնանկարչություն – «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 835:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու բարձրաքանդակներից մի քանիսը: Պարբերաբար հարձակումների են ենթարկվում և վանդալիզմի թիրախ դառնում հայկական գերեզմանատների գեղարվեստական՝ ճարտարապետական ու քանդակային ուրույն, ազգային շեշտված նկարագրեր ունեցող հուշակոթողներն ու հուշարձանները[380]: Տակնուվրա է արված Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուց ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Դիվաբույնի վանքի Ս. Հարություն եկեղեցու գերեզմանոցը, որտեղ գետնին են տապալված ջարդոտված խաչքարերը: Անմխիթար նույն պատկերն է տիրում նաև Մշո Առաքելոց (Թարգմանչաց) վանքի գերեզմանոցում, որտեղ վերջնականապես խորտակվել, ջարդվել-փշրվել ու քարակույտի է վերածվել Դավիթ Անհաղթի գեղակերտ խաչքարը, որը, ինչպես արդեն նշեցինք, 1916 թվականին թեև կեսից կոտրված, բայց դեռ կանգնած էր[381]:

1966 թվականի ավերիչ երկրաշարժից հետո լրջորեն տուժեց Թուրքիայի հարավ-արևելքում, Մեծ Հայքի Վասպուրական նահանգում, Մեծ Զաբի աղբյուրներից ոչ հեռու գտնվող Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանքի եկեղեցին, որը, ըստ ավանդության, կառուցվել է առաքյալի գերեզմանի տեղում: Երկրաշարժի հետևանքով տապալվել են եկեղեցու գմբեթն ու գավթի ծածկը, ինչպես նաև հայ միջնադարյան կերպարվեստի լավա-

---

380 Տես Hofmann T., Armenians in Turkey today. A Critical assessment of the situation of the Armenian minority in the Turkish Republic. Brussels, 2002, p. 7, 22, 24-27:

381 Խաչքարի նախկին ու ներկա վիճակը ներկայացնող լուսանկարները տես Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր – Վարք, Երևան, 2010, № 2, հուլիս-նոյեմբեր, էջ 32-33: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի հրատարակած նույն հանդեսի էջերում պատկերված են նաև Արևմտյան Հայաստանի կիսավեր վանքերում ու եկեղեցիներում և դրանց մերձակա շիրմատներում եղած այն խաչազուրկ խաչքարերից մի քանիսը, որոնց վրայից քերվել-տաշվել է քրիստոնեական խաչի նշանը՝ հայ միջնադարյան ճարտարապետության և քանդակագործության այդ բացառիկ կոթողների կարևորագույն զարդն ու խորհուրդը (տես Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր – Վարք, Երևան, 2010, № 2, հուլիս-նոյեմբեր, էջ 63-64):

գույն օրինակներից մեկը համարվող՝ շքամուտքի քանդակազարդ վերնասեմը (բարավոր), որի բեկորները շուտով յուրացվել ու անհետացել են[382]: Անիի՝ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքի պարիսպներն ու առանձին շինությունները վերանորոգելու ընթացքում խեղաթյուրվել կամ պարզապես սվաղվել ու քողարկվել են այնտեղ մնացած հայկական որմնանկարներն ու բարձրաքանդակները, այդ թվում նաև Բագրատունիների տոհմական զինանշանը՝ այսպես կոչված «Սմբատյան» պարսպի ներքին պատին, Ավագ Դռան մոտ ագուցված, հայկական խաչի հովանու ներքո պատկերված վազող առյուծի (կամ ընձառյուծի) նշանավոր սալաքանդակը:

«Թուրքական արվեստին» են վերագրվում հայ միջնադարյան ու նոր կերպարվեստի, գորգագործության, կիրառական արվեստի այլ տեսակների նմուշները[383]: Էրզրումի պատմության և հնագիտության թանգարանում է պահվում 1905 թվականին Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու պեղումների ժամանակ հայտնաբերված Գագիկ Առաջին արքայի արձանի բեկորը՝ ձախ թևի հատվածը, որը ցուցադրվում է առանց դրա հայկական պատկանելությունը վկայող ծանոթագրության կամ բացատրագրի[384]: Վանի թանգարանում են գտնվում հայկական բրդյա թավախիտ գորգեր, արծաթե գոտիներ, ոսկերչական թանկարժեք այլազան իրեր ու սպասքեղեն, բայց

---

[382] Տես Թիերի Ժան-Միշել (Պաոլո Կունեոյի աշխատակցությամբ), Հայկական հուշարձանների կրած վնասները Արևելյան Թուրքիայում – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 1 (էջ 35) և Հասրաթյան Մուրադ, Աղբակի Ս. Բարդուղիմեոս վանք – «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 34-35:

[383] Տես, օրինակ, թուրք նկարիչներ ու արվեստաբաններ Ջելալ Արսևենի և Նուրուլլահ Բերքի ֆրանսերենով լույս տեսած հետևյալ աշխատությունները. Arseven, Celāl Esad. L'Art Turc, depuis son origine jusqu'à nos jours (Istanbul, 1939) և Berk, Nouroullah. La Peinture Turque (Ankara, 1950):

[384] Այդ բեկորի գունավոր լուսանկարները տես Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր – Վարձք, Երևան, 2010, № 2, հուլիս-նոյեմբեր, շապկի դարձերեսը:

այդ բոլոր ցուցանմուշները մատուցվում են իբրև թուրք վարպետների ստեղծագործություն: Հայ ժողովրդից կողոպտված մշակութային արժեքների յուրացման, սեփականացման նույն պատկերն ենք տեսնում նաև Կարսի թանգարանում[385]:

Թեև թուրքական կառավարությունն ստորագրել է միջազգային մի շարք պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնցով պարտավորվել է պահպանել պետության տարածքում եղած մշակութային բոլոր հուշարձանները[386], սակայն, ինչպես նշում է գերմանացի հայագետ, ցեղասպանագետ, պատմաբան Տեսսա Հոֆմանը, «մինչ օրս Թուրքիայում ոչ մի հայկական հուշարձան չի վերանորոգվել առանց փոխելու իր հայկական բնույթը»[387]: Դրա առավել խոսուն և թարմ օրինակներից է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու 2007-ին ավարտված վերանորոգումը: Եկեղեցին վերաբացվեց որպես թանգարան, առանց զանգերի և վերնախաչի, թուրքացվեց ու իմաստազրկվեց՝ «Ակդամար» («Սպիտակ երակ») դարձավ վանքի բուն հայկական անվանունը: Կատարվածի հանդեպ իր զարմանքն ու բողոքը հայտնեց նույնիսկ թուրքական «Turkish Daily News» օրաթերթը, գրելով հետևյալը. «Անվանափոխության հետ կապված այս մոլուցքը, եկեղեցու խաչի ու զանգերի նկատմամբ մշակութա-

---

385 Տես Оценка историко-культурного наследия Армении (коллектив авторов). Москва, 2010, с. 541.

386 Տես Գոյ Ռայմոն, Թուրքիայի քրիստոնեական մշակութային ժառանգության պահպանությունը – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 2 (էջ 63), Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիա (Գրանադա, 3.10.1985 թ., Ստրասբուրգ) – «Անի»: Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, Երևան, 1992, № 1 (էջ 57-60) և Kouymjian, Dickran. The Destruction of Armenian Historical Monuments as a Continuation of the Turkish Policy of Genocide – A Crime of Silence. The Armenian Genocide. Permanent Peoples' Tribunal. Preface by Pierre Vidal-Naquet, London, 1985, p. 176:

387 Տես Hofmann T., Armenians in Turkey today. A Critical assessment of the situation of the Armenian minority in the Turkish Republic. Brussels, 2002, p. 42:

յին և կրոնական այսպիսի անհանդուրժողականությունը պետք է աշխարհում ընկալվի որպես «մշակութային ցեղասպանություն»: Չզարմանաք, եթե դա հենց այդպես էլ լինի»[388]: Նշված փաստերը հայկական հուշարձանների և հայ ժողովրդի ստեղծած մշակութային այլ արժեքների նկատմամբ Թուրքիայում այսօր էլ շարունակվող բարբարոսության ու ոտնձգության մասին վկայող հատուկենտ օրինակներ են, որոնց թիվն իրականում անհամեմատ մեծ է:

5.ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

5.1. Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում

Հայոց ցեղասպանության հետևանքներից են եղել ոչ միայն մարդկային կորուստներն ու հայրենազրկումը, այլ նաև՝ հայերին պատկանած անհամար գույքի կորուստը: Բազմաթիվ փաստեր և վավերագրեր վկայում են, որ օսմանյան կառավարությունը մշակել և իրականացրել է հայերի գույքը բռնագրավելու որոշակի ծրագիր: Տնտեսական շահի հետապնդումը համարվել է Ցեղասպանության իրագործման կարևոր շարժառիթներից մեկը: Հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչները, քաղաքական նպատակներ հետապնդելուց զատ, մտադիր էին նաև ազատվել հայերի տնտեսական մրցակցությունից: Բնաջնջելով Օսմանյան կայսրությունում ապրող հայերին՝ երիտթուրքական իշխանությունները տնտեսական ասպարեզից վերացրին իրենց հզոր մրցակցին, նրանց հարստության հաշվին կարողացան հոգալ պատերազմական մեծագումար ծախսերը, վճարել արտաքին ահռելի պարտքերը: Դարերի տքնությամբ հայերի ստեղծված ունեցվածքի յուրա-

[388] Տես Գրիգորյան Տ., Մշակութային ցեղասպանություն, Երևան, 2013, էջ 59-60:

ցումով նաև ձևավորվեց թուրք ազգային բուրժուազիան, իսկ արդեն Թուրքիայի հանրապետության շրջանում՝ ամբողջապես թրքացվեց երկրի տնտեսությունը:

Թուրք պատմաբան Թաներ Աքչամը արդարացիորեն համարում է, որ Թուրքիայի Հանրապետությունը ցեղասպանության արդյունք է, իսկ այսօրվա Թուրքիայի տնտեսական հզորությունը մեծապես հիմնված է հայերի, ինչպես նաև հույների և այլ փոքրամասնությունների անհատական և համայնքային սեփականության բռնազավթման ու կողոպուտի վրա[389]: Այդ առումով Հայոց ցեղասպանությունը կարելի է դիտարկել որպես ապակազմավորման և կազմավորման համաժամանակյա գործընթաց, այսինքն՝ թե ինչպես է մի խմբի՝ հայկականի, ոչնչացման հաշվին կազմվել, ստեղծվել մեկ ուրիշը՝ նոր թուրքականը: Արևմտյան Հայաստանի թուրքացման գործընթացի հետևանքը եղավ հայերի ցեղասպանությունն ու հայրենազրկումը՝ պատրիոցիդը (հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, զրկումը): Բռնի տեղահանումն ու ջարդը ուղեկցվում էին հայերի ունեցվածքի թալանով և մշակութային արժեքների ոչնչացմամբ[390]: Ընդհանուր առմամբ, փորձագետներն այդ գործողությունները որակում են որպես *Օսմանյան կայսրության հայ բնակչության անհատական և կոլեկտիվ ունեցվածքը նորահայտ թուրքական և քրդական (մահմեդական) «սեփականատերերին» ապօրինաբար փոխանցելու ծրագրված գործընթաց*:

Բազմաթիվ հետազոտողներ հայերի գույքի բռնազավթումը Հայոց ցեղասպանության հիմնական դրդապատճառներից մեկն են համարում: Արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց

---

[389] Տե՛ս Taner Akçam. *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide.* London: Zed Books, 2004; նույնի՝ *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility.* New York: Metropolitan Books, 2006:

[390] Հովհաննիսյան Ա., «Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում», *ՎԷՄ համահայկական հանդես*, թիվ 2, 2010 թ., էջ 100-109:

տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ օսմանյան բռնատիրության ու կամայականությունների պայմաններում, կարողացել էին տեր դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական զգալի կուտակումներ: Նրանք ակտիվ մասնակիցներն էին նաև այն արդիականացման փոխակերպումների, որոնք էական ազդեցություն թողեցին կայսրության սոցիալ-մշակութային և տնտեսական ոլորտների վրա՝ սկսած առևտրից և արդյունաբերական արտադրությունից, մինչև սպառողական մշակույթը, ինստիտուցիոնալ կազմակերպություններից մինչև ուրբանիզացիա և արվեստը: Փոխակերպումների կարևորագույն հետևանքներից մեկն էլ ոչ մուսուլման բնակչության շրջանում վերնախավի ձևավորումն էր: Օսմանյան արդիականացման և արևմտյան ինտեգրման առաջատար կազմակերպիչները մեծամասամբ այս վերնախավային համայնքի անդամներն էին: Նրանք դարձան ավանգարդային կենսակերպի ներկայացուցիչներ՝հարստության ակնհայտ բարձր մակարդակով, քաղաքական և մշակութային նոր դիրքորոշմամբ: Այդ փոխակերպումները բացասական արձագանք ստացան մուսուլման բնակչության կողմից, որն իրեն համարում էր կայսրության «գերակա ազգությունը» (millet-i hakime): 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին օսմանյան մասնագիտական ամսագրերի, մամուլի էջերում, ակումբներում տարբեր հայացքներ ունեցող թուրք մտավորականները՝ ազատականները, իսլամականները, էտատիստները, ազգայնականները աշխույժ քննարկում էին երկրի տնտեսական զարգացման հնարավոր ուղիները[391]: Քննարկումներից երևում է, որ ոչ մուսուլման բուրժուազիային արդյունաբերության բնագավառից, ներքին և արտաքին ասպարեզներից դուրս մղելը, շուկային

[391] Տե՛ս Necmettin Doğan, The Origins of Liberalism and Islamism in the Ottoman Empire (1908-1914), /Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie am Institut für Soziologie.Fachbereich Politik- und Sozialwissenschaften der Freien Universität Berlin, 2006/, chapter 3 “Ottoman intellectuals in the nineteenth century”, pp. 55-206, https://www.academia.edu/6346089/The_Origins_of_Liberalism_and_%C4%B0slamism_in_the_Ottoman_Empire

միանձնյա տիրելը, տնտեսական ամուր դիրքեր նվաճելը դարձել էին բարձրացող թուրք ազգային բուրժուազիայի գլխավոր մտահոգությունը[392]: Այդ վեճերում բազմիցս անդրադարձ էր կատարվում «ազգային տնտեսություն» (milli iktisad) կառուցելու անհրաժեշտությանը: Իրականում «ազգային տնտեսությունը», ինչպես նշում են հարցով զբաղվող պատմաբաններ Ա. Աքթարը, Ս. Չեթինօղլուն և այլք, ոչ այլ ինչ էր, քան «տնտեսության թուրքացում»[393]: Թյուրքականության գաղափարախոս Զիյա Գյոքալփը մասնավորապես տնտեսության զարգացման մասին իր տեսական մտքերում առաջ էր քաշում էթնոկենտրոն՝ թուրքական, տնտեսության գաղափարը[394]: «Օսմանյան, իմա՝ թուրք ազգի տնտեսական այդ իդեալին» հասնելու «առաքելությունը» որդեգրեցին իթթիհադականները և նրանց քաղաքական ժառանգորդ հանդիսացող քեմալականները: Համաձայն նրանց ծրագրի նորահայտ «թուրք բուրժուաներն» այլևս կարիք չէին ունենալու մրցակցության մեջ մտնել, նոր շուկաներ հետազոտել, սեփական դրամագլուխ կուտակել, հարկավոր էր միայն «հեռացնել» մրցակցին և տիրանալ նրա ունեցվածքին: Ս. Չեթինօղլուի խոսքերով. *«1915 թ-ի ամենամերկապարանոց փաստերից և ամենաէական հետևանքներից մեկը պատմության մեջ ամենամեծ գույքի և հարստության փոխանցման իրականացնումն է: Այդ հետևանքը Թուրքիայի հասարակությանը՝ իր թուրքով, քրդով... բոլորին հուզող և մեր օրեր հասնող ամենաէական այուներից մեկն է»*[395]:

---

[392] Սիմոնյան Հր., *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*, Երևան, 1991, էջ 21.

[393] Ayhan Aktar, "Cumhuriyetin ilk yıllarınıda uygulanan 'Türkleştirme' Politikaları", *Tarih ve Toplum*, No: 156, 1996, s. 4-18; Sait Çetinoğlu, "Etnik Temizlik ve Ekonominin Türkleşmesi", http://www.birikimdergisi.com/guncel/etniktemizlik-ve-ekonominin-turklesmesi; Rifat Bali,"Politics of Turkification during the Single Party Period" http://www.rifatbali.com/images/stories/dokumanlar/basel.pdf

[394] Զիյա Գյոքալփի մասին տե՛ս Սաֆարյան Ալ., *Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները»*,Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

[395] Սայիթ Չեթինօղլու, «2015թ.՝100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» http://akunq.net/am/?p=30783

Հայերի, ինչպես և այլ փոքրամասնությունների թալանն ու կողոպուտը մշտական երևույթներ էին օսմանյան պետությունում: Սակայն ունեզրկման գործնթացը որպես ծրագրված քաղաքականություն և ցեղասպանության բաղկացուցիչ մաս հանդես եկավ հենց երիտթուրքերի ժամանակաշրջանում: Այդ քաղաքականության ժառանգորդը և շարունակողը դարձան քեմալականները: Հանրապետական Թուրքիայի ողջ գոյության ընթացքում այդ քաղաքականությունը հետևողականորեն շարունակվում էր՝ տարբեր գործողությունների, իրավական ակտերի և քայլերի միջոցով:

ա.«Հայկական կապիտալը» Օսմանյան կայսրությունում

Թեև ունեզրկման ենթարկվեցին հայության բոլոր՝ թե՛ ունևոր, թե՛ չունևոր հատվածները, այնուամենայնիվ, այդ գործընթացի կարևորագույն թիրախ էր հանդիսանում Օսմանյան կայսրության «հայկական կապիտալը», ուստի դրան արժե հատուկ անդրադառնալ:

Վերջին շրջանում կատարվել են մի շարք նոր հետազոտություններ[396], դեռևս դժվար է ամբողջական պատկերացում կազմել Օսմանյան կայսրությունում «հայկական կապիտալի» ծավալների մասին: Արխիվային նյութերի մի հսկայական մասը դեռ ուսումնասիրված չէ (դրանք Թուրքիայում են՝ արգելանքի տակ), մի մասն էլ ոչնչացվել է հայերի ցեղասպանության ժամանակ: Այդուհանդերձ հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց առաջ հայերը Օսմանյան կայսրության տնտեսության մեջ խաղում էին կարևոր դեր, և

---

[396] Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property* , London/New York: Continuum, 2011; Nevzat Onaran, *Emvâl-i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türleştirilmesi,* Istanbul, Belge Yayınları, 2010; Bedross Der Matossian, *The Taboo within the Taboo: The Fate of'Armenian Capital' at the End of the Ottoman Empire*, in «European Journal of Turkish Studies»[online], Complete List, 2011, Online since 06 octobre 2011, URL: /index4411.html; Աստոյան Ա., *Դարի կողոպուտը, Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.*, Երևան, 2013:

նույնիսկ բռնապետության և կամայականությունների պայմաններում ունեին մեծ կապիտալ: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրության արտաքին և ներքին խոշոր առևտրում, արդյունաբերական արտադրության մեջ, բանկային գործերում հայերն ազդեցիկ դիրք էին գրավում: Նրանք իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրի տնտեսական կարևոր լծակները: Հայկականի համեմատությամբ, թուրք բուրժուազիան ածանցյալ վիճակում էր և օսմանյան տնտեսության մեջ նշանակալի դեր չուներ: Հայ վաճառականներն ու գործարանատերերը նշանակալի դեր էին խաղում աշխարհագրական երեք մակարդակներում. կենտրոնական քաղաքներում (Ստամբուլ, Անկարա, Տրապիզոն), նահանգային քաղաքներում (Կայսերի, Խարբերդ, Թոքաթ) և միջազգային քաղաքներում (Լոնդոն, Մանչեստր):

Երիտթուրքական իշխանությունները խիստ մտահոգված էին, որ հայերի տնտեսական և նյութական հզորացումը հիմք է դառնալու նրանց վաղվա քաղաքական հաղթանակների համար: Աստիճանաբար թուրք իշխանությունների մոտ ուժեղանում էր այն մտայնությունը, որ վաղ թե ուշ երեկվա հպատակ հայը տիրանալու է իրենց իշխանությանը, ինչպես դա արել էին տնտեսության ասպարեզում[397]:

Օսմանյան կայսրությունում պետական պաշտոնյաների ընտրության ժամանակ հաշվի էին առնվում ոչ թե անձերի արժանիքներն ու կարողությունները, այլ նրանց ազգային և կրոնական ծագումը: Գրեթե ողջ պաշտոնեությունը, զինված ուժերը, ոստիկանությունը և դատական մարմինները կազմված էին մահմեդականներից, մեծամասնությամբ՝ օսմանցի թուրքերից: Իրենց վերապահելով իշխողի դերը՝ նրանք երկրի ամ-

[397] Երիտթուրքերի այդ «վախերի» մասին գրել է և Գրիգոր Զոհրապը: 1913 թ. իր հոդվածներից մեկում նա կանխատեսել է, որ ազգային կապիտալի ստեղծման համար իթթիհատական իշխանությունները կփորձեն հարկադրանքի միջոցով տնտեսական ասպարեզից հեռացնել մրցակից քրիստոնյաներին՝ հետագայում նրանց մասնավոր շարժական և անշարժ գույքը յուրացնելու համար (տես Գ. Զոհրապ, «Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ», Երկերի ժողովածու, հ. Գ: Ե., 2002, էջ 531–532):

բողջ տնտեսական դաշտը թողել էին ոչ թուրք տարրերին[398]: Հայերն Օսմանյան կայսրության մյուս հպատակ ժողովուրդների հետ, ավելի քան հինգ դար տքնեցին կայսրության տնտեսությունը բարգավաճ պահելու համար: Զրկված լինելով վարչական և զինվորական գործունեության հնարավորությունից՝ օսմանյան պետության մեջ առևտուրն ու արհեստները դարձան այն թույլատրված ասպարեզները, ուր հայերը կարող էին փոքրիշատե ազատ կերպով դրսևորել և զարգացնել իրենց ցեղային-ազգային ունակությունները: XV դարից Կոստանդնուպոլսում սկսեցին բազմանալ հայ առևտրականների խանութները, առանձին շուկաները, խաներն ու վաճառատները: Միջերկրական և Սև ծովերից դեպի Իրան և Հնդկաստան տարանցիկ առևտուրը հիմնականում կատարում էին հայ վաճառականները[399]: Կայսրության մյուս տնտեսական կարևորագույն կենտրոնի՝ Զմյուռնիայի հայ առևտրականները կապված էին եվրոպական երկրների հետ: Հայ վաճառականները տիրապետում էին եվրոպական լեզուներին և եվրոպական առևտրի մեթոդներին, այդ իսկ պատճառով կարողացան դառնալ թուրք-եվրոպական առևտրի միջնորդներ[400]: Թուրք-եվրոպական առևտրի մեջ գլխավոր բաժինը պատկանում էր հայ վաճառականներին: Բազմաթիվ հայ առևտրականներ, չգոհանալով եվրոպացիների ներկայացրած ապրանքների ընտրությամբ, իրենք կապեր հաստատեցին Եվրոպայի արդյունաբերական կենտրոնների և առևտրական ընկերությունների հետ: Նրանցից շատերը նույնիսկ հաստատվեցին եվրոպական քաղաքներում, գրասենյակներ բացեցին և մասնաճյուղեր հիմնեցին: Նեղ գտնելով Օսմանյան կայսրության շուկան՝ հայերը սկսեցին դիրքեր գրավել միջազգային առևտրում՝ էապես նպաստելով Ասիայի և Եվրոպայի միջև ապրանքափոխանա-

---

398 Չորմիսեան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա. հատոր., Բեյրութ, 1972, էջ 55:

399 Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղութը, (XV-XVIIդդ.), Երևան, 2007, էջ 51-67:

400 Ղազարյան Հ., *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.*, Երևան, 1967, էջ 403.

կությանը[401]: Եվրոպական դրամագլխի և գործարանային արտադրությունների մուտքով կարճ ժամանակահատվածում հայերի տնտեսական վիճակի մեջ արագ բարելավում տեղի ունեցավ:

Պետք է նշել, որ հայերի տնտեսական առաջընթացն ու զարգացումը կատարվում էր երկրում տիրող կամայականությունների պայմաններում: Նույն եկամուտն ունեցող թուրք վաճառականից պետությունը երեք անգամ պակաս հարկ էր գանձում, քան հայ վաճառականից: Կողոպուտներն ու կանխամտածված հրդեհները մեծ վնասներ էին հասցնում Վանի, Խարբերդի, Ադանայի և այլ կենտրոնների շուկաներին: Հակառակ իրենց դեմ գոյություն ունեցող թուրքական ատելության և հալածանքների՝ հայերը շարունակում էին առաջնային տեղ գրավել կայսրության առևտրի մեջ:

Այսպես. 20-րդ դարի առաջին տասնամյակում Սեբաստիայում, որի բնակչության 35 %-ը հայեր էին, 166 ներմուծող վաճառականներից 141-ը, 150 արտահանողներից 127-ը, 9800 մանր առևտրականներից և արհեստավորներից 6800-ը հայեր էին: 150 ձեռնարկություններից 130-ը պատկանում էին հայերին, 20-ը թուրքական էին կամ խառը կապիտալով, 17700 աշխատավորներից 14000-ը հայեր էին: Այսպիսով՝ առևտրականների 85 %-ը, արհեստավորների 70 %-ը, ձեռնարկատերերի 85 %-ը, աշխատավորների 80 %-ը հայեր էին: Ամբողջ երկրի մասշտաբով հայերը վերահսկում էին ներմուծման 60 %-ը, արտահանման 40 %-ը և ներքին առևտրի 80 %-ը[402] :

---

[401] Հովհաննիսյան Ա.,«Արտոնյալ վաճառականության» (Hayriye tüccarları) նախաձեռնումից մինչև «տնտեսության թուրքացման» քաղաքականություն (19-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում թուրք/մուսուլման ձեռներեցությունը խթանելու փորձի մասին)», *Արևելագիտության հարցեր* /Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, ԵՊՀ/ No.10 (նվիրված ակադեմիկոս Ռ.Սաֆրաստյանի ծննդյան 60-ամյակին), Երևան 2015, էջ 17-50.

[402] Инджикян О.Г., Буржуазия Османской империи, Ереван, 1977; Bedross Der Matossian, “The Armenian Commercial Houses and Merchant Networks in the 19th Century Ottoman Empire,” in TURCICA, Issue # 39, Fall 2007, pp. 147-174.

Հայերի նախաձեռնությունը զուտ վաճառականության մեջ չսահմանափակվեց: Նրանք իրենց ճարտարությունը ցուցաբերեցին տնտեսության տարբեր ոլորտներում: Գտնվեցին նաև առևտրականներ, ովքեր եվրոպական սարքավորումներ, մեքենաներ փոխադրեցին երկիր և տեղում սկսեցին կազմակերպել եվրոպական որակի և արտաքին տեսք ունեցող ապրանքների արտադրություն: Աստիճանաբար փոխվում էր կապիտալի բնույթը, առևտրական կապիտալը փոխակերպվում էր արդյունաբերականի: XX դարի սկզբին, օրինակ, Արաբկիրում, որտեղ կտավագործությունը հայ ազգաբնակչության հիմնական զբաղմունքն էր, արդեն գոյություն ունեին մանուսայի՝ 15, մանրաթելի՝ 9 և սփռոցի և սավանի պատրաստման 18 ձեռնարկություններ:

Արդյունաբերության որոշ ճյուղերում նկատվում էր անցում մանուֆակտուրային արտադրությունից դեպի գործարանային արտադրություն: Կարինում, Վանում, Բաղեշում շալագործական, պղնձագործական և այլ ձեռնարկությունների արտադրանքը սպառվում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում[403]: Եվրոպական սարքավորումներով հագեցած էր Ֆաբրիկատորյան եղբայրներին պատկանող՝ 1870 թ. Խարբերդում հիմնված մետաքսի գործարանը, որն իր տեսակով միակն էր երկրի ասիական մասում: Այստեղ արտադրված որակյալ մետաքսը մեծ համբավ ուներ եվրոպական շուկայում: Այն մրցանակներ էր շահել միջազգային ցուցահանդեսներում և իր որակով չէր զիջում Լիոնի համբավավոր մետաքսին[404]:

Թուրքերն իրենք իսկ, անուղղակի կերպով, նպաստել են հայերի տնտեսական հզորացմանը, քանզի արհամարհելով տնտեսական ոլորտը՝ առևտրի և արհեստների ասպարեզները թողել էին ոչ թուրք տարրերին: Թուրքերի հիմնական զանգվածը մշտապես ձգտել է դառնալ պաշտոնյա կամ զինվո-

---

[403] Աստոյան Ա. , «Հայերն օսմանյան տնտեսության մեջ» http://hetq.am/arm/news/31209/hayern-osmanyan-tntesutyan-mej.html

[404] Հայկ Վահե, *Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը*, Նյու Յորք, 1959, էջ 640-643:

րական և թողել է, որ ուրիշ ազգերը տքնեն և բարիքներ ստեղծեն իրենց համար:

«Բոլոր չարիքների արմատն այն է,- իր հիշողություններում խոստովանել է գահընկեց արված Աբդուլ Համիդ II-ը,- որ ոչ մի օսմանցի չի աշխատում իրական արժեքներ ստեղծելու համար: Օսմանցին սովոր է պարոն լինել և աշխատանքը ուրիշներին թողնել: Նա ապրում է և զվարճանում: Մեր երիտասարդները կարծում են, թե իրենք չեն կարող այլ բան դառնալ, քան սպա և պաշտոնյա»[405]:

XIX դարի կեսերից օսմանյան տնտեսության մեջ հայերի աստիճանական հզորացումը սկսեց առաջացնել օսմանյան իշխանությունները լուրջ մտահոգությունը, որոնք և տնտեսական տեռոր սկսեցին հայերի և քրիստոնյա ողջ բնակչության հանդեպ, որի ընթացքում վերջիններս կորցրեցին մեծ քանակությամբ շարժական և անշարժ գույք և մշակելի հողերի հսկա տարածություններ[406]: Անօրինականությունների և կամայականությունների ալիքը հազիվ էր հանդարտվել, երբ ծայր առան 1894-1896 թթ. հայկական ջարդերը, որոնք բերեցին նոր ավեր, թալան ու մի շարք շրջանների առևտրական կապերի խզում, արտադրության նվազում և տնտեսական անկում:

Անգլիացի դիվանագետ Պիրսը կոտորածների դրդապատճառներից ամենանշանակալին համարում էր այն հանգամանքը, որ հայերը կարողացել էին իրենց ձեռքում կենտրոնացնել երկրի տնտեսական կարևոր լծակները և տնտեսության զարգացման գործում հանդես էին գալիս առաջամարտիկների դերում[407]:

1894 թ. Սասունի կոտորածից անմիջապես հետո սուլթան Աբդուլ Համիդը Բ-ն Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Ռատոլնիի հետ հանդիպման ժամանակ ասել է. «Ես կնախընտրեմ մեռնել, քան թե թույլ կտամ, որ Հայաստանում բարենորոգումներ լինեն, որովհետև բարենորոգումների պա-

---

[405] Աստոյան Ա. , նշվ. աշխ.:

[406] Կիրակոսյան Ջ., *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ*, Երևան, 1982, էջ 50.

[407] Նույն տեղում, էջ 132.

րագայում հայերը հավասարության իրավունք կունենան և իրենց խելքով, աշխատասիրությամբ այնքան առաջ կգնան, որ մենք՝ թուրքերս, հայերի հպատակը կդառնանք»[408]:

1894-1896 թթ. հայկական կոտորածները ազդանշան եղան թուրք հաջորդ սերունդների համար: 1908 թ. իշխանության եկած երիտթուրքերը գտնում էին, որ Աբդուլ Համիդը անկատար գործ է արել՝ ողջ հայությանը չոչնչացնելով, քանի որ հայերն, այդքան կորուստներ կրելուց հետո, քսան տարի անց, ոչ միայն վերագտել էին իրենց, այլև հզորանալով՝ «սպառնալիք» դարձել թուրքերի համար: Հայերի նկատմանբ թուրքերի վախը և ատելությունը շեշտվեց 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմում կայսրության պարտությունից և Հայկական բարենորոգումների հարցի բարձրացումից հետո: Բարենորոգումների համար հայերի պայքարը, երիտթուրքական կուսակցության պարագլուխներից մեկի՝ դոկտոր Նազըմի կարծիքով, դառնալու էր հայոց անկախության սկզբնավորումը, իսկ արևելյան նահանգների վրա հայկական պետության կազմավորումը նա համարում էր թուրանական ծրագրի տապանաքարը[409]: Դրա վկայությունը ըստ Նազըմի այն էր, որ 1908 թ. Սահմանադրության հռչակումից հետո հայերը բռնել են ազգային, մշակութային, տնտեսական անօրինակ վերելքի ճամփան: Հայոց պետության կազմավորումամբ թուրքերը ոչ միայն հրաժարվելու էին թուրք ցեղերի միավորման գաղափարից, այլև թուրքական պետությունը սահմանափակվելու էր Կոնիայի սելջուկ սուլթանների նեղ հողատարածքների վրա: Սրա մեջ Նազըմը տեսնում էր թրքության մահացման սկիզբը: Նա գտնում էր նաև, որ հայերի վերացումով Հայկական հարցին վերջ դնելուց զատ, թուրքերը կազատվեն նրանց տնտեսական մրցակցությունից, և լայն գործունեության ասպարեզ կստա-

---

408 Տատրյան Վ., Ակնարկներ Հայկական ցեղասպանութեան մասին, Երևան 2004, էջ 8-9.

409 Նույն տեղում, էջ 11

նան, իսկ հայերի հարստությանը տեր կդառնան օսմանյան պետությունն ու թուրքերը[410]:

Միայն այդ ուժեղ մրցակցի վերացումով կարելի էր ապահովել թուրքերի ապագան[411]:

Թուրքերը երկրում չունեին այլ առավելություն, քան իրենց ձեռքում կենտրոնացած զորքը և պետական կառավարման մյուս լծակները, որոնց վրա հենվելով, նրանք ձեռնամուխ եղան իրենց գոյությանը, ներկային, ապագային և իդեալներին՝ Մեծ Թուրանի ճանապարհին վտանգ ու խոչընդոտ ներկայացնող հայությանը, Հայաստանը և Հայկական հարցը հրապարակից վերացնելու գործին:

բ. Հայերի ունեզրկման գործընթացը օսմանյան ժամանակաշրջանում

Հայերի ունեցվածքը բռնագրավվեց 1915 թ., երիտթուրքերի կառավարության կողմից: Ի լրումն ավելի քան 1,5 միլիոն մարդկանց սպանդի և հայերին՝ իրենց 4000-ամյա հայրենիքից արտաքսման, օսմանյան կառավարությունը թուրք և քուրդ բնակչության միջոցով բռնազավթեց հայերի ակտիվները, նրանց գույքը և ոչնչացրեց հայկական պատմական հուշարձանները: Ըստ Տիգրան Քույումջյանի՝ «միասին վերցրած այդ գործողությունները կարելի է դիտարկել որպես մանրակրկիտ ծրագրված հսկայածավալ հանցագործություն և **«դարի կողոպուտ»**[412]:

---

[410] Մեվլան Զադե Ռըֆաթ, Օսմանեան յեղափոխութիւնը և մութ ծալքերը, Բեյրութ, 1938, էջ 160.

[411] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1967, էջ 91.

[412] Kouyumjian D., *Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process*, http://armenianstudies.csu/fresno.edu

Գործընթացը, որն սկիզբ էր առել երիտթուրքերի օրոք Օսմանյան կայսրությունում, շարունակվեց հետագա իշխանությունների կողմից արդեն նոր՝ հանրապետական Թուրքիայում: Տասնամյակներ շարունակ հանրապետական Թուրքիայի իշխանություններն օգտագործելով տարբեր օրենսդրական հրամանագրեր, կամ Ուղուր Ունգյորի սահմանմամբ **«օգտագործելով արդարադատության համակարգն անարդարության»** համար՝ վերջ դրեցին հայերի և նրանց տնտեսական ներկայությանը Արևմտյան Հայաստանում[413]:

Հայերի ցեղասպանությունը, որպես լայնամասշտաբ հանցագործություն իրականացվում էր մի շարք գործընթացների՝ հայ վերնախավի ներկայացուցիչների ձերբակալություն և սպանություն, հայ բնակչության տեղահանում, ջարդ, բռնի ձուլում, նյութական մշակույթի ոչնչացում և սեփականազրկում, համադրմամբ: Չնայած այդ գործողությունները տարբեր վայրերում տարբեր ձևերով և տարբեր գերատեսչությունների միջոցով էին իրականացվում, դրանց վերջնանպատակը մեկն էր՝ ոչնչացում:

Ջելալ Բայարի հուշագրություններից ակնհայտ է դառնում, որ երիտթուրքերը կազմել էին Արևմտյան Հայաստանի էթնիկական զտման և թուրքացման եղանակների մասին մանրամասն զեկույցներ: Երկիրը քրիստոնյաներից «մաքրելու» այդ ծրագրերը չէին սահմանափակվում միայն հայերով և իրագործվում էին դեռ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, իսկ Արևմտյան Հայաստանի թուրքացումը, հատկապես՝ Բալկանյան պատերազմներից (1912–1913 թթ.) հետո, դարձավ կառավարության հիմնական քաղաքականությունը[414] :

Երբ սկսվեց համաշխարհային պատերազմը, բարեփոխումների պահանջի պատրվակով արտաքին միջամտության

---

[413]Տե՛ս Ugur Ungor, *Confiscation and Colonization: The Young Turk Seizure of Armenian Property* http://www.armenianweekly/2011/04/22/ confiscation-and-colonization- the-young-turk- seizure-of- Armenian- property/html

[414] Tırnak içindeki tüm ifadeler: Celal Bayar, *Ben de Yazdım,* Cilt 5, Istanbul 1967, s.1573.

սպառնալիքը վերացավ, և այդ պայմաններում ավելի հեշտ ու հանգիստ հնարավոր դարձավ ավարտել Արևմտյան Հայաստանի թուրքացումը: Իզուր չէ, որ երիտթուրքերի գաղափարախոսներն ամեն առիթով պնդում էին, թե «ժամանակակից պետության ստեղծումը հնարավոր է միայն միասնական էթնիկական ընդհանրության պայմաններում»[415]:

Պատերազմի ավարտին ավելի քան 2,900 հայկական բնակավայրեր (գյուղեր, քաղաքներ, թաղամասեր) դատարկված էին, իսկ դրանց բնակիչների մեծամասնությունը՝ ոչնչացված:

Հայերի բռնի տեղահանումն սկսվեց 1915 թ. փետրվարին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին անհրաժեշտ էր օրինականացնել այդ տեղահանությունները, ուստի 1915 թ. մայիսի 27-ին Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին մի ժամանակավոր օրենք, որը «իրավական» քող ծառայեց հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային տեղահանության և ոչնչացման՝ ցեղասպանության համար: Օրենքը վերնագրված էր հետևյալ կերպ «Պատերազմի ժամանակ կառավարության գործողությունների դեմ հանդես եկողների նկատմամբ ռազմական տեսանկյունից իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր օրենք»: Թուրքական պատմագրության մեջ ընդունված է այն անվանել **Tehcir kanunu** (Տեղահանության մասին օրենք) կամ էլ՝"Sevkiyât kanunu (Տարահանման մասին օրենք): Մի քանի օր անց՝ 1915 թ. հունիսի 1-ին, կառավարությունը հրապարակեց օրենքը, որն արդեն իսկ փաստացի գործում էր, «Թաքվիմի վաքայի» պաշտոնաթերթի առաջին էջում[416]: Նշենք, որ Թալեաթ փաշան 1915 թ. մայիսի

---

[415] Ziya Gökalp, "Millet Nedir, Milli Iktisat Neden Ibarettir", 1915 ; Zafer Toprak, Türkiye'de *«Milli Ikisat»* (1908-1918), Ankara,1982, s.32; Zafer Toprak, Türkiye'de Ekonomi ve Toplum (1908-1950) Ittihat-Terakki ve Devletçilik, Istanbul, 1995.

[416] Ինչպես նշում է հայ թուրքագետ Ռ.Սաֆրաստյանը, ցայսօր այդ օրենքի և՛բովանդակության, և՛ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգամանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերժ մոտեցումների դրսևորմանը: Վիճահարույց խնդիրներից է, օրինակ,

26-ով թվակիր՝ Ներքին գործերի նախարարության գրության մեջ հայտնում է, որ ինքը հայերի աքսորին մեկնարկ է տվել նախքան օրենքի հրապարակումն ու վարչակազմի որոշում ընդունելը[417]:

Այդ օրենքուի դրույթներն ուղղված էին նախևառաջ հայերի դեմ, թեև փաստաթղթում հայերն ուղղակիորեն չէին հիշատակվում: «Տեղահանության մասին» օրենքը չէր ներառում դրույթ հայերի սեփականության վերաբերյալ, ուստի 1915 թ. հունիսի 10-ին ընդունվեց «Հայերի գույքի մասին» հրահանգը և անմիջապես նաև համապատասխան «ժամանակավոր» օրենքը: Այդ այսպես կոչված, «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը պարունակում էր ցուցումներ «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված «անձերի» (eşhas) թողած շարժական և անշարժ կայքի» հետ վարվելու մասին: Մյուս որոշումը՝ 1331 (1915 թ.) սեպտեմբերի 13/26-ի «Լքված գույքի մասին օրենքը»[418] (**Emval-i Metruke**

օրենքի ընդունման և հրապարակման ամսաթվերի հարցը: Որոշ աշխատություններում, օրինակ, նշված է 1915 թ. մայիսի 26-ը: Այլ գրքերում կարող ենք կարդալ, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915թ. մայիսի 27-ին: Մինչդեռ թուրքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի զեկուցագրին, որով նա դիմել է կառավարությանը և պահանջել, որ ընդունվի օրենք հայոց տեղահանության մասին, իսկ երկրորդը՝ օրենքի ընդունման ամսաթիվն է, այլ ոչ թե մամուլում հրապարակման, ինչը տեղի է ունեցել հինգ օր ավելի ուշ, 1915 թ. հունիսի 1-ին: Ակնհայտ է, որ նույնացվում է «Տեղահանության օրենքը» և հայերի տեղահանությունը սկսելու վերաբերյալ կառավարության որոշումը, ինչը սխալ է: Կառավարության «Տեղահանության որոշումը» ընդունվել է Նախարարների խորհրդի (Meclis-i Vükelâ) մայիսի 30-ին տեղի ունեցած նիստի ընթացքում, այսինքն՝«Տեղահանության օրենքի» ընդունումից երեք օր անց: Մանրամասն տես՝ Սաֆրաստյան Ռ.,, *Օսմանյան կայսրության 1915թ. «Տեղահանության օրենքը»*, Պատմաբանասիրական հանդես, 2007, № 2 . էջ. 72-81:

[417] Nevzat Ogün, “Türk milliyetçiliğinin ‘kanlı’ ekonomi politiği” http://akunq.net/tr/?p=1411

[418] «Թողնված», «լքված» կամ «տիրազուրկ գույք» (Emval-i Metruke), տերմինը կիրառվել է Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետու-

Kanunu), արդեն անմիջականորեն վերաբերում էր հայերին: Այն նպատակաուղղված էր հայերի բռնի տեղահանությանը, որոնք, ինչպես ասված էր, «զբաղվում են այնպիսի վտանգավոր գործունեությամբ, ինչպիսին է թշնամու հետ համագործակցությունը, սպանում են անմեղ մարդկանց և ապստամբություն են հրահրում» և նրանց գույքի բռնագրավմանը: Ի տարբերություն նախորդ օրենքի, դրա մեջ ներառվեցին նաև ունեցվածքի մասին հոդվածներ: Դրանցում կային դրույթներ՝ ուղղված «լքված սեփականության պաշտպանությանը», «սեփականատերերի վերադառնալուն պես այդ սեփականության անվանական արժեքը նրանց վերադարձնելուն» և այլն: Բացի այդ, տվյալ օրենքով նախատեսվում էր անշարժ գույքի օբյեկտների և հողատարածքների տեսակների, արժեքի ու քանակի գնահատում ու գրանցում: Այս իմաստով, իրավացի է ցեղասպանագիտության հիմնադիրներից պրոֆ. Վ. Տատրյանը, երբ այն բնութագրում է որպես «Էվֆեմիստիկ արտոնագիր՝ թալանելու և ուրախությամբ յուրացնելու զոհաբերվող ազգաբնակչության կուտակած հարստությունը»[419]: **Այդ օրենքը մնաց ուժի մեջ մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը:**

Դրանից հետո անշարժ գույքը, այդ թվում՝ հողերն ու ունեցվածքը, հանձնվեցին Բալկաններից և Կովկասից գաղթածների (մուհաջիրների) տնօրինությանը: Այլ կերպ ասած, կառավարությունն այդ օրենքն օգտագործեց գաղթական-մահմեդականների հետ կապված խնդիրների կարգավորման համար՝ նրանց տրամադրելով բռնի տեղահանված հայերի տները: Մնացած ամբողջ ունեցվածքը, ներառյալ՝ ձիթենու, թթի, խաղողի, նարնջի այգիները, արհեստանոցները, առևտրի կրպակները, գործարաններն ու խանութները աճուրդի հանվեցին: Աճուրդից ստացված գումարները պետք է իբր պահվեին «ֆինանսական մարմինների կողմից», որպեսզի հետա-

---

թյան օրենսդրության մեջ, որում, սակայն, չկա կոնկրետ նշում, թե ով է հրաժարվել այդ սեփականությունից:

[419] Vahakn N. Dadrian. The Complicity of the Party, The Government, and the Military Select Parliamentary and, Judicial Documents, *"Journal of Political and Military Sociology"*. Vol. 22, № 1, p. 29.

գայում «վերադարձվեին սեփականատերերին»: Օրենքով նաև նախատեսվում էր ստեղծել այսպես կոչված կառավարման հանձնաժողովներ (idare komisyonlar), որոնց նպատակը պետք է լիներ «լքված ունեցվածքի պաշտպանությունը», վերահսկումն ու տնօրինումը[420]: Կեսարիայի հասարակական վայրերից մեկում, օրինակ, փակցված էր հունիսի 15, 1915թ. թվագրված հետևյալ հայտարարությունը. *«Թողե՛ք ձեր բոլոր իրերը, ձեր կահույքը, անկողնային պարագաները, ձեր կահկարասին: Փակե՛ք ձեր խանութները, թողնելով ամեն ինչ ներսում: Ձեր խանութների դռները կնքվելու են հատուկ դրոշմանիշով: Ձեր վերադարձին դուք կստանաք այն ամենը, ինչ թողել եք: Մի՛ վաճառեք ձեր գույքը կամ որևէ թանկարժեք իր: Կազմե՛ք ձեզ պատկանող գույքի, այդ թվում, անասունների ցանկը և հանձնե՛ք այն հատուկ նշանակված պաշտոնյայի, այնպես, որ ձեր ամբողջ գույքը հնարավոր լինի վերադարձնել ձեզ հետագայում: Դուք ունեք տասը օր սույն հրամանագիրը կատարելու համար»*[421]:

Համաձայն վերը նշված կարգադրության, տեղական մակարդակով հատուկ հանձնաժողովներ էին կազմվելու՝ 2 վարչական (mülkiye) և 1 ֆինանսական (maliye) ներկայացուցիչներից, որոնք պետք է մանրամասն գույքագրեին հայերի ունեցվածքը (3 օրինակից): Պատճեններից մեկը տրվում էր գույքի տիրոջը, մյուսը պահվում էր տեղական համայնքում (որպես կանոն դա եկեղեցին էր, այդ է նաև պատճառը, որ ի թիվս այլ հանգամանքների, եկեղեցիները առաջին թիրախն էին դառնում՝ հարձակումների, հրկիզումների և այլն – Ա.Հ.), երրորդը՝ ուղարկվում էր Օսմանյան պետական գանձարան: Այդպիսի թղթեր հայերին տրվեցին: Շարժական գույքը՝ անասուններ, կահկարասի և այլն՝ վաճառվում էր աճուրդով և գումարը

---

[420] Հիշատակված օրենքների, շրջաբերականների, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ գաղտնի հրամանների տեքստերը տես Nevzat Onaran, *Emvâl - i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi,* Istanbul, Belge Yayınları, 2010.

[421] Mae M. Derdarian, *Vergeen: A Survivor of the Armenian Genocide,* Los Angeles: Atmus, 1996, p.38

դրվում հայերի անունով: Այս պաշտոնական գրությունները հետագայում հրատարակել էր Յուսուֆ Հալաջօղլուն, Թուրք պատմագիտական ընկերության նախկին նախագահը, փորձելով ցույց տալ, թե որքան «հոգատար» է եղել օսմանյան կառավարությունը տեղահանվող հայերի նկատմամբ[422]:

Թե ինչպես էր իրականացվում նմանատիպ աճուրդը նկարագրում է Օսմանյան կայսերական բանկի կառավարիչը՝ բրիտանական համապատասխան մարմիններին ուղարկած իր գաղտնի զեկուցագրում. «Հայերի ունեցվածքի հարկադիր վաճառքը տակնուվրա է արել ամեն ինչ: Միայն Էրզրումում 400.000 ֆունտ արժողությամբ ապրանքը վաճառվել է (աճուրդի միջոցով) 20.000 ֆունտով, միևնույն ժամանակ ոչնչացվել են հայերին պատկանող ձեռնարկություններ, ջուլհակահաստոցներ և այլ պարագաներ և, հետևաբար, արդյունաբերական կյանքը կանգ է առել»[423]:

Անգլիական հետախուզության տվյալներով, միայն Մարդինում և Դիարբեքիրում կողոպտվել էր 6.000.000 թուրքական ֆունտ արժողությամբ ակնեղեն, գորգեր, հնաոճ իրեր և 1.500.000 թուրքական ֆունտ արժողությամբ ոսկի: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ Դիարբեքիրի նահանգապետը, Կ. Պոլիս գնացքով տեղափոխել էր ոսկերչական իրերով 48 արկղ և թանկարժեք քարերով լի երկու սնդուկ[424]:

Չորս ամիս անց, 1915 թ. սեպտեմբերի 26-ին, հրապարակվում է նոր հրամանագիր, որով կարգավորվում էր աճուրդից դժգոհ անձերի՝ հանձնաժողովների գործողությունները բողոքարկելու և ունեցվածքը՝ ըստ պահանջի ետ ստանալու կարգը, որի համար նախատեսված էր 15 օր:

---

[422] Yusuf Halacoğlu, Facts, Relating to the Armenian Displacement (1915), TTK Publication, Ankara, 2001.

[423] Սարուխանյան Տ., «Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդիրը և Մեծ Բրիտանիան (1915-1924թթ.)», *Պատմա-բանասիրական հանդես*, 2002, No.1, էջ 52:

[424] Բարսեղով Յու. , *Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը* (ռեպարացիայի և փոխհատուցման խնդիրներ), Երևան, 1999, էջ 8:

Օրենքում, իհարկե, նշված չէր, թե ինչպես կարող էին Դեր-Զոր քշվածները, սպանվածները հետևեին այդ ընթացակարգին: Սարգիս Չերկեզյանը իր «Աշխարհը բոլորիս է բավարար» գրքում հուշագրություն է զետեղել, որի համաձայն Քարամանում իր ունեցվածքին տեր կանգնել ցանկացող իր հորը՝ Ղազարոսին փաստաբանը երկու ճամփա է ցույց տալիս՝ կամ լռել, կամ կախաղան բարձրանալ[425]:

Իրականում թալանը տեղի էր ունենում տեղն ու տեղը. գորգերը, արծաթյա և ոսկե իրերը, հագուստը՝ ոստիկաններն ու ժանդարմներն էին վերցնում, մանր կահկարասին՝ տեղի խուժանը: Որոշ դեպքերում աճուրդն իսկապես իրականացվում էր, բայց գոյացած գումարը իշխանավորներն իրենք էին գրպանում, այլ ոչ թե դնում հայերի հաշվին: Զավեշտական պատկեր է ներկայացնում արաբ Ֆայեզ ալ Ղուսեյնը. «5 լիրա արժեք ունեցող կոստյումը վաճառվում էր 2 մեջիդիեով, թանկարժեք սպասքը մանրադրամ արժեր, իսկ հին արժեքավոր դաշնամուրը որևէ մեկը չէր գնում: Մանրանկարներով գիրքը տրվեց պանրավաճառին՝ շուկայում վաճառելիս պանիր փաթաթելու համար»[426]: Անշարժ գույքը օգտագործվելու էր պետության հայեցողությամբ՝ երբեմն տրվում էր բանակին, որպես կայանատեղի, դառնում էր հոսպիտալ, պահեստ, Բալկաններից տեղահանվածներին տեղավորում էին հայերի տներում:

1915 թ. սեպտեմբերի 27-ի նոր՝ «Այլ վայրերում վերաբնակեցված (տեղահանված – Ա. Հ.) անձանց լքված տների, պարտքերի և վարկերի մասին» երկար անվանումով ժամանակավոր օրենքը չեղյալ հայտարարեց ունեցվածքի հետ կապված բոլոր գործարքները, այդ թվում՝ ունեցվածքի զիջումը կամ փոխանցումը այլ մարդկանց (feragat): Դա պետք է կանխեր ապագա զոհերի համար կեղծ գործարքների հնարավորությունը, այսինքն՝ պետությունը փաստորեն քաղաքացիներից խլում էր

---

[425] Sarkiz Çerkezyan, *Dünya Hepimize Yeter*, Gedik: Belge Yayınları, Istanbul, 2003, s. 59.

[426] Ֆայեզ ալ Ղոսեյն, *Ջարդերը Հայաստանի մեջ* (ականատեսի վկայություններ), Կահիրե, 1960, էջ 25-30:

իրենց սեփական ունեցվածքը տնօրինելու իրավունքը (ինչը հակասում էր օսմանյան օրենքներին)[427]:

Հայկական համայնքային բարեգործական հիմնադրամների և ընկերությունների սեփականությունը փոխանցվել էր Բարեգործական հիմնադրամի վարչության (այսպես կոչված վակուֆային գերատեսչության) հաշվեկշռին, իսկ դպրոցների և վանքերի նյութական արժեքների օգտագործման իրավունքները հանձնվել էին կրթության նախարարությանը:

1915 թ. նոյեմբերի 8-ին ընդունվեց նոր որոշում՝ բոլոր տվյալները հատուկ գրանցման գրքերում (defter) գրառելու անհրաժեշտության մասին: Տվյալ գրքերում ըստ ընդհանուր ձևանմուշի գրանցվում էին լքված ունեցվածքի տեսակները, ներառյալ՝ փողը, շարժական և անշարժ գույքը, պարտքերն ու վարկերը:

Պատմության մեջ, թերևս, աննախադեպ այդ «օրենսդրական ակտերը» թույլ էին տալիս բռնագրավելու տեղահանված հայերի «լքյալ» ունեցվածքը, անգամ՝ բանկային հաշիվները: Բացի բանկային հաշիվների բռնագրավումից, թուրքական կառավարությունը փորձ է արել տիրանալ նաև հայերին պատկանող այլ արժեթղթերին, մասնավորապես, ապահովագրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916 թ. Թալեաթ փաշան ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուիի հետ զրույցում հարցնում էր, կարող է արդյո՞ք վերջինս իրեն ներկայացնել ամերիկյան ապահովագրական ընկերություններում ընդգրկված հայերի ցուցակը: *«Նրանք բոլորը մա-*

---

[427] «Լքված գույքի մասին» օրենքի ընդունման ժամանակ Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր, սենատոր Ահմեդ Ռըզան, որը «Իթթիհադ» կուսակցության հիմնադիրներից մեկն էր, անգամ վրդովվել է. «Օրենքում տրված սահմանումը, որն է՝ «լքված գույք» ինքնին հակաօրինական է: Որովհետև հայերը, որոնք այդ ունեցվածքի սեփականատերերն էին, իրենց կամքով չեն թողել այն: Եթե ես համաձայն չեմ իմ սեփականությունը վաճառելուն, ոչ ոք չի կարող այն վաճառել բռնությամբ: Հիմնական օրենքի (Սահմանադրության) 21-րդ հոդվածն արգելում է դա: Եթե այս երկրում Հիմնական օրենք և Սահմանադրություն կա, ապա դա անհնար է», տես Bayur, Yusuf Hikmet ,Türk Inkilâbı Tarihi , Cilt III, Ankara, Türk Tarih Kurumu, 1983, s.48.

հացել են, չթողնելով ժառանգներ»: «Ուրեմն,– այդ ապահովագրերի գումարները օրինաբար պետք է անցնեն օսմանյան պետությանը»,– եզրակացրել էր նա[428]: Միևնույն ժամանակ, օսմանյան կառավարությունը հայտարարություններով դիմել էր այլ ընկերություններին, հայերի անունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով: Մանրամասն տեղեկություններ էին հավաքվել՝ ինչպիսի՞ սեփականություն ունեին հայերը՝ դեպոզիտ, ապահովագրեր, արժեթղթեր, տներ, հողային կալվածքներ, գործարաններ, խանութներ, ընկերություններ[429]:

Այդ բոլոր ժամանակավոր օրենքները, որոշումները, գաղտնի շրջաբերականներն ու կարգադրությունները հետապնդում էին երկու հիմնական նպատակ.

1. հայերի ունեցվածքի բռնագրավում մինչև վերջին մանրուքը,

2. հանուն պետության տնտեսական շահերի ձեռնարկված բռնագրավման ու սեփականազրկման ընթացքի լիովին վերահսկման ապահովում և պետական պաշտոնյաների ու տեղական խաժամուժի կաշառակերության ու գողության կանխում գոնե ինչ-որ չափով:

Զուր չէր, որ գերմանացի գիտնական իրավաբաններն ու Ստամբուլի գործարար շրջանների ներկայացուցիչներն այդ օրենքներն անվանեցին **«թալանի օրինականացում»** (*Legalisierung Des Raubes*)[430] :

Այն, որ ահռելի ծախսեր պահանջող պատերազմը մասամբ մղվում էր ցեղասպանության դատապարտված հայ ժողովրդի ունեցվածքի հափշտակման և դրա վաճառքից ստացված միջոցներով, քաջ հայտնի էր Օսմանյան կայսրության դաշնակից՝ կայսերական Գերմանիային, ինչին տեղյակ էին

---

[428] Morgenthau H., Memoires, Paris 1919, p.292.

[429] Baghdjian K., *La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens… dits « abandonneés »,* Montreal, 1987, pp. 270-280.

[430] Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*,London/New York: Continuum, 2011, pp. 41- 59.

նաև Լոնդոնում: Դեկտեմբերի 24-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ու. Լանգլիի՝ արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին և ֆինանսների նախարարին ներկայացրած «Թուրքիայի ֆինանսական կացությունը» վերնագիրը կրող զեկուցագրից: Փաստաթուղթը ստացվել էր Օսմանյան կայսերական բանկի Կ. Պոլսի վերոհիշյալ կառավարչից, իսկ տեղեկությունը երկրից հնարավոր էր դարձել դուրս բերել բանկի վտարված իտալացի աշխատակիցներից մեկի միջոցով: Փաստաթղթում խնդրանք է արտահայտվում՝ չհիշատակել այդ ամենին մասնակից դարձած որևէ անձի անուն:

Փաստաթղթում ասվում է, որ. «Օսմանյան կառավարությունը հուլիս ամսին թողարկեց 5.000.000 թուրքական ֆունտ արժողությամբ գանձապետական պարտամուրհակներ: Այս պարտամուրհակներն ապահովագրված են Բեռլինում և Վիեննայում դեպոզիտագրված ոսկով (պահ տրված): Միևնույն ժամանակ, գերմանական կառավարությունը Բեռլինում օսմանյան կառավարության տրամադրության տակ է դրել 1.500.000 թուրքական ֆունտ, որպեսզի այն վճարի Գերմանիայի զինագործական ձեռնարկություններին՝ կատարված պատվերների համար»: Ինչ վերաբերում է օսմանյան պաշտոնական պարտքին, ապա բանկը ստացել էր հետևյալ տեղեկությունը, որը ցույց է տալիս, որ գերմանացիները շահագործում են Թուրքիան՝ բացարձակապես իրենց սեփական շահերից ելնելով: Թուրքիայի 750.000 ֆունտ պարտքը Դոյչե բանկին (Deutsche Bank) մարվեց 450.000 ֆունտի չափով, իսկ մնացած 300.000-ը պետք է վճարվեր «այն բանից հետո, երբ դա հնարավոր լիներ հավաքել նահանգներից»[431]:

Եթե Բեռլինում պահ տրված ոսկե հաշվեհամարի ծագման աղբյուրների մասին քաջատեղյակ կայսերական Գերմանիայի կառավարությունը, ելնելով իր քաղաքական և տնտեսական շահերից, պետք է լռությամբ հետևեր դաշնակից Օսմանյան կայսրության վայրագություններին, ապա նույնը չէր կարելի ասել գերմանական բազմաթիվ մասնավոր ձեռնար-

[431] Սարուխանյան Տ., նշվ. աշխ. , էջ 53:

կությունների մասին, որոնք գործում էին գլխավորապես՝ Արևմտյան Հայաստանում: Այսպես, Կիլիկիայում գործող Գերմանա-լևանտական բամբակի ընկերությունը խիստ բողոք ներկայացրեց Ադանայի գերմանական հյուպատոսությանը՝ թուրքական կառավարության կողմից իր պարտատեր հայերի բռնագաղթի և, մասնավորապես, նրանց ունեցվածքի բռնագրավման և վաճառքի վերաբերյալ:

Իր գործունեությունը ծավալելուց հետո ձեռնարկությունը վերջին մի քանի տարում կարողացել էր բամբակի արտադրությունը 40.000 բեռնահակից հասցնել տարեկան 100.000 հակի: Ձեռնարկության ղեկավարությունը լայնորեն օգտագործում էր հայ գյուղացիների վարկավորման մեթոդը, ուստի չէր կարող չընդվզել այն միջոցների դեմ, որոնց հետևանքով տեղի էր ունենում իբր պարտատեր հայերի ունեցվածքի օտարումն ու յուրացումը: Կից փաստաթղթում՝ ֆինանսական հաշվետվության մեջ բերվում էր ֆինանսական կորուստների մանրամասն հանրագումարը՝ 1.628.626 թուրքական լիրա, որ կրել էր ձեռնարկությունը հայերի բռնագաղթի կազմակերպման և ունեցվածքի առգրավման հետևանքով[432]:

Մեկ այլ՝ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հոհենլոե-Լանգենբուրգին Գերմանական արևելյան բանկի կողմից հղված նամակից պարզ է դառնում, որ բանկը ահռելի կորուստներ է կրում իր կողմից վարկավորված և այնուհետև բռնագաղթված և ֆիզիկապես բնաջնջված հայերի մահվան արդյունքում[433]:

Գերմանիայի ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին ուղղված զեկուցագրի մեջ Կ. Պոլսում հավատարմագրված Գերմանիայի դեսպան Մետերնիխը, ի մի բերելով կայսրության ողջ տարածքից ստացված հաղորդագրությունները, Բեռլին ուղարկած իր զեկուցագրերից մեկում նշում է, որ հայ պարտատերերի անհետացման կամ սնանկացման հետևանքով, գերմանա-

---

[432] Микаелян В.А., *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)* - Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, Ереван, 1995, с. 199-203.

[433] Նույն տեղում, էջ 220-221:

կան ընկերությունների կրած կորուստները և վնասը ահռելի են: Դրանցից՝ Գերմանական բանկը կրել էր՝ 1.500.000, Մերձավոր-արևելյան բանկը՝ 2.000.000, Գերմանա-լևանտական բամբակի ընկերությունը՝ 500.000, Անատոլիական առևտրային ընկերությունը՝ 20.000 մարկի վնաս[434]:

Գերմանական ձեռնարկությունների և ֆինանսական կազմակերպությունների կրած նյութական ողջ վնասը 1915թ. և 1916թ.-ի առաջին եռամսյակի տվյալներով գնահատվում էր շուրջ 5.000.000 գերմանական մարկ[435]:

«Լքված գույքի» մասին օրենքում մինչև 1918 թ. ընդունվել է միայն մեկ ուղղում, համաձայն որի՝ հայերի բռնի տեղահանումն իրականացվում էր իրենց իսկ հաշվին:

Թուրքիայում այսօր էլ գործածվում է *«Gâvur malı»* (գյավուրի ունեցվածք), այսինքն՝ ունեցվածք, որը կարելի է հեշտությամբ վերցնել, յուրացնել) արտահայտությունը, որն առաջացել է այդ ձեռնարկումների ազդեցությամբ:

Այսպիսով՝ հայերի ունեցվածքի վերաբաշխումը բխում էր օսմանյան հասարակության լայն շրջանների տնտեսական շահերից և հնարավորություն էր տալիս «բաժին ստանալու» այդ յուրօրինակ բուրգի տարբեր մակարդակներում. ա/ պետության տնտեսական շահեր, բ/ բարձրագույն վերնախավի տնտեսական շահեր, գ/ տեղի վերնախավի տնտեսական շահեր, դ/ նյութական շարժառիթավորում, ուստի և քաղաքացիական բնակչության աջակցություն:

Պետք է նշել, որ հայերի, ինչպես նաև հույների սեփականությանը տիրանալու ծրագրերը կազմվել էին շատ ավելի վաղ: 1908-1909 թթ. օսմանյան ֆինանսների նախարարության տվյալներով երկրի արտաքին պարտքը գերազանցում էր բյուջեի 1/3-ը, մինչդեռ կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմանների, հետևյալ աննախադեպ աճն արձանագրեց. 1913-14 թթ.՝ 35 մլն օսմ. ոսկի, 1915-16 թթ.՝ 38 մլն, 1917-18 թթ.՝ 85 մլն: 1918 թ. կայսրության ողջ պատ-

---

[434] Նույն տեղում, էջ 325:

[435] Մեկ թուրքական ոսկե լիրան հավասարազոր էր գրեթե 18 գերմանական մարկի, տես նույն տեղում, էջ 384:

մության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր: Պարզ է, որ պետական գանձարանը լցվել էր հայերի ինչքերի և կալվածքների հաշվին[436]:

Բալկանյան պատերազմը վերջնականապես քամել էր կայսրության բյուջեն, երկիրը զրկվեց իր հարկատու շատ տարածքներից: Դրան հետևեց եռյակի հեղաշրջումը 1913 թ., որոնք ամեն ինչ առան իրենց ձեռքը: Նրանք սկսեցին իրականացնել Զիյա Գյոքալփի նախանշած **«milli iktisad»**՝ տնտեսության թուրքացման ծրագիրը:

Ծխախոտի, շաքարի մենաշնորհի սահմանումը նրանց աստղաբաշխական եկամուտներ ապահովեց: Հատուկ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնք թիրախային խմբերի փորձագիտական ուսումնասիրություններ անցկացրին՝ «ազգայնացումը» արագ իրագործելու համար: Այդ ծրագրի համակարգողն էր Շյուքրյու Քայան: Հայտնի կեղծարար Էասդ Ուրասը զբաղվում էր հայերով, Ջելալ Բայարը՝ հույներով, Զեքերյա Սերտելը՝ ալեվիներով[437]: Այդ ծրագրի հեռահար նպատակն էր տնտեսական լծակները վերցնել այլազգիների ձեռքից: Պատերազմը «նվեր էր» նման ծրագիրն իրականացնելու համար:

Այդ նպատակին էր ուղղված, մասնավորապես, Թալեաթ փաշայի 1916 թ. հունվարի 6-ի հրամանագիրը, համաձայն որի, հայերի ընկերություններից պետք է ստեղծել մահմեդական ընկերություններ, բաժնետոմսեր թողարկել և բաժանել «ազնիվ մուսուլմաններին», որպեսզի կապիտալը չընկնի օտարների ձեռքը:

Օրինակ, Դիարբեքիրի մետաքսի գործարանի տեր Թրփնջյանը տանջամահ եղավ բանտում, տեղի վելի Նեջդերը տիրա-

---

[436] Uğur Üngor, *A Reign of Terror; CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923*, Amsterdam, 2005, p. 61, pdf.

[437] Կազմակերպությունը կոչվում էր «Milli Türk Talebe Birliği», տե՛ս Uğur Üngor, *A Reign of Terror*…, pp. 20, 61-63.

ցավ նրա շքեղ տանը, իսկ գործարանը անմիջապես անցավ մուֆթիի որդուն՝ Մուֆթիզադե Հուսեյնին[438]:

Ի դեպ, երբ Դիարբեքիրում հայերի տեղահանությունը իրականացրած դոկտոր Մեհմեդ Ռեշադին հարցնում են, թե արդյո՞ք նրա բժիշկ լինելու հանգամանքը չի խանգարել նրան իրականացնել ոճիրները, նա շատ հանգիստ պատասխանել է «ես թուրք եմ, ես պետք է ոչնչացնեմ ոչ թուրքերին, չսպասելով, որ նրանք ինձ ոչնչացնեն և հետո, մի՞թե բժշկի գործ չէ միկրոբներից ազատվելը»[439]:

Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան իր «Սև տետրում» (փաշայի օրագիրը նրա այրին փոխանցել էր թուրք պատմաբան Մուրադ Բարդակչիին, որն էլ այն հրատարակեց 2008 թ.)[440] նշում է, որ միայն 1915 թ. հայերից խլված ակտիվներից մահմեդական նորաբնակներին հատկացվել է 20545 շենք, 267536 ակր հողատարածություն, 76942 ակր խաղողի, 703941 ակր ձիթենու և 4573 ակր թթի այգի: Եթե հիմնվենք այն փաստի վրա, որ հայ բնակչության թիվը նվազել էր 1,5 միլիոնով, իսկ ընտանիքում եղել է միջինը 10 մարդ, ապա հայերի կորցրած տների թիվը կկազմի նվազագույնը 150000: Լիովին ամայացել էին 2900 հայկական բնակավայրեր, որոնցում կային 2300 եկեղեցի ու վանք և 700 դպրոց՝ ենթակա Ստամբուլի Հայոց (Հայ Առաքելական Եկեղեցու) պատրիարքության տնօրինությանը: Եթե այդ թվին ավելացնենք հայկական կաթոլիկ և բողոքական եկեղեցիներն ու դպրոցները, ապա դրանց թիվը կգերազանցի 4000-ը [441]: Այդ եկեղեցիների և դպրոցների մեծ մասն ուներ իր բարեգործական հիմնադրամը՝ պահպանման

---

[438] Uğur Üngör, A reign of Terror: CUP Rule in Diyarbekir Province, 1913-1923, Amsterdam 2005, p. 62.

[439] Mithat Şükrü Bleda, Imparatorluğun Çöküşü, Istanbul, Remzi, 1979, s. 59.

[440] Murat Bardakçı, Talât Paşa'nın Evrak - ı Metrûkesi, Istanbul: Everest, 2008, p. 95.

[441] Kouyumjian D., "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", in *Anatomy of Genocide: State - Sponsored Mass-Killings in the Twentieth Century,* Alexandre Kimenyi and Otis L. Scott, eds. (Lewiston, N.Y.: Edwin Mellen Press, 2001), pp. 307 - 319.

և սպասարկման համար եկամուտ ստանալու նպատակով: Բոլոր այդ ակտիվները, բացառությամբ Ստամբուլի երկու հիվանդանոցի և մի քանի հայկական եկեղեցիների ու դպրոցների, 1915 թ. հետո անհետացան:

Վերջին հաշվով հայերի ունեցվածքը ծառայեց մի քանի նպատակի. օգտագործվեց փախստական-մահմեդականների պահանջմունքները բավարարելու, մահմեդական բուրժուական դաս ստեղծելու, տարբեր ռազմական կարիքներ բավարարելու, հայերի բռնի տեղահանության հետ կապված պետական ծախսերը փակելու, կառավարության ծախսերն ու պարտքերը ծածկելու, և, վերջապես, քեմալական շարժման ժամանակ աշխարհազոր կազմավորելու համար[442]:

գ. Հայոց «լքյալ գույքի» խնդիրը քեմալական շարժման շրջանում

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարը նշանավորեց Օսմանյան կայսրության լիակատար պարտությունը Առաջին աշխարհամարտում:

«Լքված գույքի» հարցը դրվել է Օսմանյան կայսրության հետպատերազմյան խորհրդարանի, ինչպես նաև Օսմանյան ռազմական տրիբունալների օրակարգում դեռ մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը[443] : **Այսպիսով՝ պատերազմի ավարտից մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը տևած փուլը բացառիկ կարևոր է, որպեսզի հասկանանք, թե ինչպես տարբեր մրցակցող ուժեր (կենտրոնը Ստամբուլում՝ սուլթանի գլխավորությամբ և կենտրոնն Ան-**

---

[442] Աքչամ Ա.. «Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են», http://akunq.net/am/?p=26815

[443] Taner Akçam, Vahakn N. Dadrian, "Tehcir ve Taktil" : Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması (1919–1922), Istanbul : Bilgi Univesitesi Yayinlari 2008.

կարայում՝ Աթաթյուրքի գլխավորությամբ) վերաբերվեցին հայերի «լքված գույքի» ճակատագրին:

Ուսումնասիրելով 1918 թ. օսմանյան խորհրդարանում տեղի ունեցած քննարկումները՝ թուրք պատմաբան Այհան Աքթարը շեշտում է, որ այն ժամանակ պատգամավորներից ոչ մեկը կասկած անգամ չի հայտնել հայերի զանգվածային կոտորածի կազմակերպված լինելու հարցում՝ այն անվանելով «մարդկության և խղճի դեմ ուղղված հանցագործություն», ինչպես նաև նրանց ունեցվածքի բռնագրավման անօրինականության վերաբերյալ[444]: Օսմանյան խորհրդարանի այդ լսումների արձանագրությունները ծանրակշիռ փաստարկներ են, որոնք հերքում են թուրքական պաշտոնական պատմագրության՝ Հայոց ցեղասպանության և հայերի ունեզրկման ժխտողական պնդումները[445] :

Սուլթան Մեհմեդ VI-ի կառավարման նորանշանակ կաբինետի Ներքին գործերի նախարար Ահմեդ Իզզեթ փաշայի նոյեմբերի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնագրավված հողերի և գույքի վերադարձը իրենց օրինական տերերին՝ դրանց վերադարձի և պահանջ ներկայացնելու դեպքում: Այդ հրամանագիրը կարելի է որպես ճակատագրի հեգնանք գնահատել, քանզի այնտեղից, ուր «ուղարկվել էին» հայերը, վերադարձ չկար:

1920 թ. հունվարի 8-ի որոշմամբ Ստամբուլում օսմանյան խորհրդարանը (պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո) չեղյալ հայտարարեց բնակության այլ վայրեր արտաքսված մարդկանց ունեցվածքի բռնագրավման մասին երիտթուրքերի կառավարության ընդունած օրենքը: Ընդ որում, ոչ միայն չեղյալ էին հայտարարվում բռնագրավման գործողությունները, այլև հայտարարվում էր, որ մշակ-

---

[444] Ayhan Aktar, *Son Osmanlı Meclisi ve Ermeni Meselesi: kasım - aralık 1918* ,«Toplum ve Bilim», *91, Kış 2001/2002* s.142–165.

[445] Ованнисян А., «Дебаты по Армянскому вопросу в последнем османском парламенте (ноябрь-декабрь 1918г.)», *Историко-филологический журнал (Պատմաբանասիրական հանդես),* 2017, 1(204), Ереван, с. 40-51.

վում են օրինական տերերին բռնագրավված ունեցվածքի վերադարձման համար անհրաժեշտ միջոցներ:

Սակայն այն հեռանկարը, որ եղեռնից մահապուրծ եղած թեկուզև արդեն փոքրաթիվ հայությունը կարող է հնարավորություն ստանալ վերադարձնել իր ունեցվածքը, հանգիստ չէր տալիս ազգայնական ուժերին:

Հայտնի է, որ պատերազմում պարտվելու պարագայում, երիտթուրքերը մշակած ունեին այսպես կոչված պլան «Բ», այն է՝ դիրքավորվել երկրի ասիական մասում և կոչ անել «ազգային ազատագրական պայքարի»: Այն պետք է իրականացնեին «երկրորդ էշելոնի» իթթիհադականները՝ «Իրավունքների պաշտպանության կոմիտեների» միջոցով: Շարժման ղեկավար դարձավ Քեմալ Աթաթյուրքը[446]:

Նորաստեղծ «շարժումը» մարդկային և նյութական ռեսուրսի խիստ կարիք ուներ: Դեռևս Սվազի (Սեբաստիա) համաժողովի ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել որոշ քուրդ առաջնորդների հետ, ի պատասխան նրանց օժանդակության, հետագայում թուրք-քրդական դաշնային պետություն ստեղծել: Շարժումը համալրվեց նաև երիտթուրքերի դեմ սկսված դատավարություններից խուսափած, փախուստի դիմած հանցագործներով:

Անկարայում մեջլիսն սկսեց գործել ապրիլի 23-ին, և նորընտիր մեջլիսի գործադիր կոմիտեն իր առաջին որոշմամբ (1920 թ.) արգելեց հայերի ազատ տեղաշարժը. նման որոշում ընդունելու կարևորագույն շարժառիթը հրաշքով փրկված հայերին իրենց տները վերադառնալու և կորցրած սեփականությունը հետ պահանջելու հնարավորությունից զրկելն էր: Անկարայում հրավիրված մեջլիսը 1920 թ. ապրիլին նամակ է հղում Լենինին, իսկ ապրիլի 23-ի թիվ 336, հունիսի 14 թիվ 769 որոշումներով արձանագրում է հայերի վերադարձին խոչընդոտելու անհրաժեշտությունը: Սևրի պայմանագրի (օգոստո-

---

[446] Հովհաննիսյան Ա., «Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո)», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ,* հ. IV, Երևան, 2006, էջ 124-129:

սի 10) ստորագրումից հետո, որի 144-րդ հատվածով նախատեսվում էր անշարժ գույքի վերադարձը տերերին, բիզնեսի վերականգնումը, բռնագանձված ունեցվածքի վերադարձը, «շարժման» կողմնակիցների շարքերը համալրում են նրանք, ովքեր վախենում էին կորցնել այն ամենը, ինչը դիզել էին հայերին կողոպտելով[447]:

1921 թ. օգոստոսի 7-ին Մ. Քեմալը, որպես «ազգային» բանակի գլխավոր հրամանատար, իր մոտ հրավիրված գաղտնի ժողովի 10 կետից բաղկացած որոշմամբ հրամայում է միջոցներ ձեռնարկել *«թշնամու դեմ պայքարը ֆինանսապես ապահովելու նպատակով» երկիրը թողած անձերի գանձարան անցած գույքը բռնագրավել՝ «բանակի կարիքների համար»*[448]:

Այդ գաղտնի հրամանը ուժի մեջ մտավ 1922 թ. Անկարայի պայմանագիրը ստորագրելուց հետո, երբ ֆրանսիացիները լքեցին Կիլիկիան և «ազատագրված» տարածքում (իսկ իրականում կլիկիահայության ջարդից հետո) բռնազավթվեց հայերի դեռևս մնացած ունեցվածքը[449]:

Արդեն 1922 թ. սեպտեմբերի 14-ին քեմալականները հայտարարեցին, թե չեն ճանաչում սուլթանական կառավարության կողմից ընդունված՝ «լքված գույքի» մասին ժամանակավոր օրենքը անվավեր համարելու ակտը, իսկ **1923 թ. ապրիլի 15-ին,** Լոզանի խաղաղության պայմանագրի ստորագրումից անմիջապես առաջ, ուղղումներով **վերականգնվեց նշված իթթիհաթական օրենքը, ըստ որի՝ հայերի ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր՝ անկախ այն բանից, թե երբ, ինչու և ինչ հանգամանքներում են նրանք լքել երկիրը**[450] :

---

[447] Sait Çetinoğlu, “Ankaranın ilk kararı: Ermenilerin ülkelerine/ evlerine dönmeleri yasaktır!”, www.mavidefter.org/index.php?

[448] Sait Çetinoğlu, “Ankaranın ilk kararı…”

[449] Ibrahim Halil Er, “Ermenilerin mallarına ne oldu”, http://agdistanbul.wordpress.com/2007/04/25

[450] Հովհաննիսյան Ա. Ռ., *Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը*, ՎԷՄ:
համահայկական հանդես, Երևան, 2011, հունվար - մարտ թիվ 1, էջ 168 - 182:

Հիմնվելով այդ օրենքի դրույթների վրա՝ թուրքական կառավարությունը հավակնություն ներկայացրեց թուրքական բանկերում և արտասահմանյան բանկերի բաժանմունքներում հայերի ավանդների, ինչպես նաև այդ մասնաճյուղերի կողմից Եվրոպա փոխանցված ավանդների նկատմամբ, և այդպիսով խոչընդոտեց իրենց օրինական տերերին տվյալ գումարների վերադարձմանը[451]:

Այնուամենայնիվ, Լոզանի պայմանագիրը ամրագրում էր Թուրքիայի քաղաքացի հանդիսացող հայկական փոքրամասնության իրավունքները: Ուստի, 1923 թ. սեպտեմբերին փոփոխություն մտցվեց «Mahsub-i Umumi kanunu»-ի 2-րդ կետում, որի համաձայն Կիլիկիայի և արևելյան նահանգների հայերին, որոնք «արտագաղթել» էին, արգելվեց վերադառնալ Թուրքիա:

1926 թ. փետրվարի 2-ին օրենք ընդունվեց առ այն, որ վերադարձի ենթակա չէ 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924 թ. օգոստոսի 19-ը) բռնագրավված գույքը:

1927 թ. մայիսին հրապարակվեց կառավարության օրենքը, համաձայն որի Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում բոլոր նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև արտասահմանում եղածները՝ 1923 թ.-ից (Լոզան) մինչև սույն օրենքի (մայիս 1927 թ.) ընդունումը: Այս որոշումները զրոյի հասցրեցին հայերի պահանջները սեփականության նկատմամբ: Հայ փախստականների Կենտրոնական կոմիտեի միջոցով Ազգերի Լիգային ուղղված բողոքները արդյունքի չէին բերում, դրանք մերժվում էին Թուրքիայի կողմից: Հայաստանի խորհրդայնացումից հետո դաշնակիցների շահերը այլևս հայերի հետ չէին: Հայկական գույքի պահանջը լռեցվեց, ինչպես և Հայկական հարցը[452]:

1923 թ. ապրիլին (քեմալական շրջան) բռնի տեղահանված անձանց ոչ միայն շարժական, այլև անշարժ գույքի վերջ-

---

[451] Барсегов Ю., «Державы, причастные к Геноциду армян, должны искупить свою вину» http://armenianhouse.org/barsegov/articles-ru/guilt.html

[452] Նույն տեղում.

նական բռնագրավման նպատակով Թուրքիայի Մեծ ազգային ժողովը օրենքի սկզբնական տեքստում որոշակի փոփոխություններ մտցրեց՝ այն վերանվանելով **«Լուծարման մասին օրենք» (Tasfiye kanunu):** Այդ անվանումով այն գործում էր մինչև 1988 թ. նոյեմբերը[453] :

Լրագրող Նազաթ Օնարանը «*Լքյալ գույքի դեպքը. հայկական և հունական ապրանքների թուրքացումը օսմանյան ու հանրապետական շրջաններում*» վերնագրով գրքում վերլուծում է այն տնտեսական քաղաքականությունը, որը տարվել է Արևմտյան Հայաստանում 1915 թ. և հետագա տարիներին: Վեց մասից բաղկացած այդ ուսումնասիրության գլխավոր նյութն են կազմում օրենքներն ու կարգադրությունները, դրանց կապակցությամբ մեջլիսում կատարված քննարկումները: Թուրք լրագրող Նազաթ Օգյունի հետ հարցազրույցում նա նկատում է, որ «*թուրքական բուրժուազիայի հարստության կուտակման մեջ նշանակալի տեղ է գրավում «ուրիշի» տնտեսական աղբյուրը*: Բռնագրավված «ուրիշի» ապրանքը զավթվում է, բաժանվում և վաճառվում…1915 թ. մայիսի 27-ի «Տեղահանության մասին» օրենքով իրենց տնից, տեղից և հողից աքսորված ու «կյանքի անվտանգության» խնդիր ունեցած հայերը 1915 թ. սեպտեմբերի 26-ին հրապարակված «Լուծարման օրենքով» (Tasfiye Kanunu) էլ իրենց տների, այգիների, պարտեզների, արտերի և գործարանների կողոպուտով հանդիպեցին «գույքի անվտանգության» խնդրին, որն արվում էր հանուն զանձարանի…»[454]:

Հանրապետական ժամանակաշրջանում գործողության մեջ է դրվում Լուծարման հանձնաժողովը (Tasfiye Komisyonu), որը պարտավորվում է կատարել հայերի և հույների գույքերը լուծարելու գործը: Սույն օրենքը ուժի մեջ է մնում մինչև 1988 թ. նոյեմբեր, այսինքն՝ 73 տարի: Այդպիսով՝ թեև այդ ընթաց-

---

[453] Nevzat Onaran, *Emvâl–i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi,* Istanbul, Belge Yayınları, 2010, s. 30-31.

[454] Տե՛ս Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը. http://akunq.net/am/?p=3874

քում սահմանադրությունը փոխվում է 5 անգամ, սակայն «Լուծարման մասին» այդ օրենքը միշտ մնում է ուժի մեջ: Հենց միայն դա ցույց է տալիս, թե որքան ամուր կարող է լինել *կոդոպտիչների միասնական կամքը:*

Ըստ օրենքի՝ օսմանյան ու հանրապետական ժամանակաշրջաններում գործած լուծարման հանձնաժողովների պահած «ընթացիկ և հիմնական» գրանցամատյաններից և ոչ մեկը չի հրապարակվել: Այդ գրանցամատյանների վրայից պաշտոնական քողի վերացմամբ կբացահայտվի, թե ինչ արժողությամբ և քանի «ուրիշի» գույք է լուծարվել կամ փոխանցվել: Օսմանյան պետությունում եղել են 33 հանձնաժողովներ, սակայն անհայտ է, թե քանիսն են ստեղծվել հանրապետական շրջանում: Եթե 33 հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունեցած լինի մեկական «ընթացիկ և հիմնական» գրանցամատյան, ապա պետք է որ եղած լինի 66 գրանցամատյան, բայց չկա, իբրև թե չկա…

Թուրքական «ազատագրական» պատերազմի ժամանակ 1921 թ. օգոստոսի 5-ին Ազգային մեծ ժողովի նախագահ և գլխավոր հրամանատար Մուստաֆա Քեմալի հրամանով հավաքված պատերազմական հարկի փոխհատուցումն ապահովվում է 1924 թ. ապրիլի 3-ին հրապարակված 459 թվակիր Հաշվարկի ընդհանուր օրենքով: Սակայն այդ վճարման ժամանակ բացառություն են համարվում *քաղաքացի հույներն ու հայերը:* Այդ բացառությունն ապահովված 2-րդ հոդվածի վերաբերյալ մեջլիսի գաղտնի նիստում պատգամավորներին տեղեկություններ հաղորդած Հանձնախմբի նախագահ Հասան Ֆեհմին հետևյալ կերպ է հիմնավորում նման հոդվածի պատրաստումը. «*Հոդվածի նպատակն է չներառել հույների և հայերի՝ Ազգային և ռազմական հարկերի արձանագրությունները… Մի միջոց է մտահղացվել, որպեսզի հույներն ու հայերը չօգտվեն Ազգային և ռազմական հարկերի արձանագրությունների վճարումներից: Սակայն չէինք կարող բացահայտ ասել, որ դա ուղղված է հայերի և հույների դեմ: Առաջարկվեցին տարբեր ձևեր և ձևակերպումներ… Ի վերջո, գտանք այս ձևը, որն ամե-*

նաքիչը կարող էր արգելվել կամ չարգելվել…»[455]*:* Ահա նման պարզ բացատրություն: **Ու քանի որ քաղաքացիների փոխհատուցումները վճարվելու էին պետական գանձարանից, որը մեծապես համալրվել էր փոքրամասնություններից բռնագրավված «լքյալ գույքի» հաշվին, ստացվում էր, որ սպանված, երկրից վտարված, կամ էլ «բախտի բերումով» կենդանի մնացած հայերն ու հույներն էին վճարելու իրենց իսկ դեմ մղված քեմալական «ազատագրական» պատերազմի համար (Kurtuluş Savaşı):**

Ֆինանսների նախարար Մուստաֆա Աբդուլհալիքը, որն աքսորի ժամանակ Բիթլիսի նահանգապետն էր, ինչպես նաև՝ Թալեաթ փաշայի քենակալը, *«Մեզ չպատկանողների համար հնարավորինս շատ արգելքներ ենք հարուցելու»* ասելով՝ վերջակետ է դնում այդ քննարկումներին:

Օրենքում նշված արտահայտությամբ հայերի գույքերը, որպես մի տեսակ «արյան գին», բաժանվում են այն իթթիհադական «շեֆերին», որոնք հայտնի են որպես Հայոց ցեղասպանության կազմակերպիչներ և որոնք սպանվել էին արտասահմանում կամ մահապատժի ենթարկվել երկրի ներսում: Իզմիրի մահափորձի դատաքննությունից (1926 թ. հունիսի 26) առաջ՝ 1926 թ. մայիսի 31-ին հրապարակված 882 թվակիր օրենքով Թալեաթի, Ջեմալի և Բեհաեդդին Շաքիրի ընտանիքները ներառյալ՝ 12 իթթիհադականի ընտանիքների, առանց մի դուրուշ պակասի, ուղիղ 20 հազար լիրա արժողությամբ հայկական գույք է ընծայվում՝ այդ գույքերը 10 տարի չվաճառելու պայմանով: Իթթիհադական այն ընտանիքների ցուցակում, որոնց տրվելու էին հայերի գույքերը, տեղ չի գտնում Էնվեր փաշայի անունը, որը հայտնի էր որպես «Միություն և առաջադիմություն» կուսակցության երեք առաջնորդներից մեկը՝ Թալեաթի և Ջեմալի հետ մեկտեղ: Այդ ցուցակում ընդգրկված մի իթթիհադական էլ մահապատժի է ենթարկվում Իզմիրի մահափորձի դատավարության արդյունքում[456]: Հայտնի է, որ

[455] Տե՛ս Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը. http://akunq.net/am/?p=3874

[456] Խոսքը դոկտ. Նազըմի մասին է:

Քեմալ Աթաթյուրքը խիստ հակակրանք ուներ Էնվերի հանդեպ, նրա անվան բացակայությունը ցուցակում հուշում է, որ «արյան գնի» մասին որոշումներն ընդունում էր անձամբ Քեմալը:

Ուշագրավ է, որ հրապարակախոս Մուրադ Բարդակչին, որը խիստ քննադատել է Ջեմալ փաշայի թոռան վերջին գիրքը՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ, հիշեցրել է նրան, որ նրա ընտանիքը ևս «արյան գին» է ստացել հայերի գույքից: Մուրադ Բարդաքչին «Haberturk» կայքում զետեղված իր հոդվածում ներկայացրել է կառավարության որոշման արխիվային մի փաստաթուղթ՝ Աթաթյուրքի և կառավարության բոլոր անդամների ստորագրությամբ: Այդ փաստաթղթով որոշվել է, որ պետության կողմից բռնագրավված Ստամբուլի Բեյօղլու, Ֆարիքքյոյ և ֆրանսիական գերեզմանոցի դիմաց՝ Թաթավլա պողոտայի Վիիգեն Հոկուչյանի կողմից «թողնված» անշարժ գույքը պետք է տրամադրվի հայ վրիժառուների կողմից սպանված թուրք պետական գործիչների ընտանիքներին: Փաստաթղթից նաև պարզ է դառնում, որ 1450 մ² հողատարածքը և 200 մ² շինությունները տրամադրվել են Թիֆլիսում սպանված Ջեմալ փաշայի ընտանիքին[457]:

Տեղահանված հայերի ունեցվածքի վաճառքին ու բաշխմանը վերաբերող կարգավորումներն ակտիվանում են 1930-ական թթ.: 1915 թ. արժեքավոր իրերի վաճառքը նախատեսող կանոնակարգումից (1926 թ. մարտի 13-ի 781 թվակիր օրենքը) հետո օրակարգում է այդ իրերը վերցրածների կամ զավթածների անունների արձանագրումը գրանցամատյանների մեջ: Այդ հարցն էլ է կանոնակարգման ենթարկվում:

1929 թ. ճգնաժամի սրման ժամանակ բռնագրավված աղբյուրներից մեկն էլ դառնում է այն դրամը, որը որպես «ավանդ» աքսորյալները թողել էին Ֆինանսների նախարարությունում: 1928 թ. մայիսի 24-ի 1349 թվակիր օրենքով այդ ա-

[457] Murat Bardakçı, “Atatürk, 1915'e 'soykırım' diyen Hasan ağabeyin ailesine 'kan parası' olarak Ermeni gayrımenkullerini bağışlamıştı”http://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/793024-ataturk-1915e-soykirim-diyenhasan-agabeyin-ailesine-kan-parasi-olarak-ermeni-gayrimenkullerini-bagislamisti

վանդից բյուջե է փոխանցվում 300 հազար լիրա: Ի դեպ, եթե միայն բյուջեի ծավալի աճը ի նկատի ունենանք, ապա այդ թիվը կկազմի այսօրվա 300 միլիոն նոր (տրիլիոն՝հին) թուրքական լիրա: Նման փոխանցումները շարունակվում են նաև հետագա տարիներին[458]:

Պատմաբան Սայիթ Չեթինօղլուն, որը նույնպես զբաղվում է փոքրամասնություններից բռնագրավված գույքի խնդիրներով, արձանագրում է. «Այդ առումով այսօր որ ունեցվածքի վերին շերտը մաքրեք, տակից, գրեթե առանց բացառության, լրիվ Ցեղասպանությունից մնացած հարստությունը դուրս կգա: «Թուրքական կապիտալիզմի հարստության առաջացման գործընթացի սկզբում, գրեթե յուրաքանչյուր օրինակում կա՛մ հայկական, կա՛մ էլ հունական գույքի կիանդիպեք: Ինչոր կերպ 1913-23 թվականների դեպքերի ժամանակ ձեռք բերված մի շարք հարստությունների կիանդիպեք: Սակայն երբ դրա մասին խոստովանում են, հաճախ աչքաթող են անում մի ավելի կարևոր հանգամանք: Միակուսակցական ժամանակաշրջանում եթե մեկ առ մեկ անդրադառնաք Թուրքիայի Ազգային մեծ ժողովում կամ Ժողովրդական կուսակցության *(Halk Partisi, հետագայում՝ CHP - Ժողովրդահանրապետական կուսակցություն – Ա.Հ.)* բարձրաստիճան ղեկավարության կազմում գտնվող անձանց, կտեսնեք, որ նրանք բոլորն էլ՝ գրեթե առանց բացառության, Ցեղասպանության միջոցով հարստացածներ են: Աթաթուրքը նույնպես բացառություն չի կազմում նրանց շարքում: Պատկերացրեք, որ նախագահական պալատը հանդիսացող Չանքայան Քասափյանների ապարանքն է[459]: Այլ բան ասելու կարիք էլ չի մնում. եթե ասեք՝ համառոտ կերպով ներկայացրեք Թուրքիայի Հանրապետությունը, հենց միայն այդ նախադասությունն էլ բավարար կլինի. Չանքայան Քասափյանների ապարանքն է: Գիտեք, որ երկրի

---

[458] Տե՛ս Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը. http://akunq.net/am/?p=3874

[459] Ներկայումս Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նստավայրն է նորակառույց շքեղ և ահռելի չափերի հասնող Աքսարայ պալատը:

բոլոր կողմերում առկա են Աթաթուրքի ապարանքներն ու տները: Ես ինքս հաշվում եմ մոտ 20-25 հատ՝ Տրապիզոնում, Բուրսայում, այստեղ-այնտեղ, Ադանայում, Տարսուսում, ամենուր: Այսինքն՝ աննախադեպ երևույթ է. դրանք բոլորն էլ՝ առանց բացառության, ոչ մուսուլմանների կոտորածի կամ տեղահանության միջոցով ձեռք բերված գույք են»[460]:

Այս իրադրությունը հնարավոր է նաև ներկայացնել թվերով. Զաֆեր Թոփրաքի ուսումնասիրության մեջ 1908-1913 թվականների միջև հնգամյա նախապատերազմյան ժամանակաշրջանում գոյություն ունեցող բաժնետիրական ընկերությունների ընդհանուր թիվը 113 է, որոնց ընդհանուր հարստությունը կազմել է 10.596.562 օսմանյան լիրա, իսկ պատերազմի տարիներին՝ այդ քառամյա ժամանակաշրջանում (1914-1918 թթ.), հիմնված բաժնետիրական ընկերությունների թիվը հասել է 123-ի, և ընդհանուր հարստությունն էլ կազմել է 18.545.000 օսմանյան լիրա, այսինքն՝ գրեթե 2 անգամ ավելացել է[461]: Այն դեպքում, երբ ընկերությունների թիվն աճել է, թուրքական կապիտալով ընկերությունների հարստությունն էլ անցել է Առաջին աշխարհամարտի առաջին տարվա բյուջեի կեսը: 1914 թ. բյուջեն կազմել է 35.329.950 օսմանյան լիրա: Երբ այդ թվերին հավելում ենք նաև դարձյալ Զաֆեր Թոփրաքի՝ 1919 թ. հիմնված, բայց վերը հիշված փնտրտուքների ժամանակ որպես բաժնետիրական ընկերություն չհանդիպած և 1927 թ. գործող 15 ընկերությունների (ենթադրվում է, թե դրանք 1918 թ. հետո վերածվել են բաժնետիրական ընկերությունների) 2.294.000 լիրայի կապիտալը[462], տեսնում ենք, որ թվերն ավելի են մեծանում: Այդ թվերին պետք է ավելացնենք նաև իթթիհադականների՝ 1918 թ. 19 միլիոն օսմանյան լիրայի պետական փոխառությունների ներքին շուկայում իրացնելու հաջողությունը՝ չնայած պատերազմի վերջին տարին լինելու փաստին: Ի դեպ, Օսմանյան պետությունն առաջին անգամ էր ներ-

---

[460] Սայիթ Չեթինօղլու, «2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» http://akunq.net/am/?p=30783

[461] Zafer Toprak, Türkiye'de Milli *İktisat*, Yurt Y., 1982, s. 358-365.

[462] Նույն տեղում, էջ 365:

քին շուկայում կոնվերսիա իրացնում: Այդ թվերը համեմատել կարողանալու համար հիշեցնենք, որ օսմանյան բյուջեն 1913-14 թվականներին կազմել է 35.329.950 օսմանյան լիրա, 1914-15 թվականներին՝ 57.841.339 օսմանյան լիրա[463], իսկ 1916-17 թվականներին՝ 82.980.780 օսմանյան լիրա[464]: Այսպիսով, Հանրապետության հռչակմամբ քեմալական իշխանությունը հարստության այս զավթումն օրինականացրել է *քաղաքակիրթ օրենքով*[465]:

«Միության և առաջադիմություն» կուսակցության առաջնորդներից Հալիլ Մենթեշեի այն խոսքը, թե *«Այս տեղահանության գործի հետ չառնչված թուրք շատ քիչ կա Անատոլիայում»*, մատնանշում է Ցեղասպանության համար այն հավաքական պատասխանատվությունը, որի կրելուց այդքան վախենում են Թուքիայում[466]:

«Հայկական կապիտալի» բռնագրավման գործընթացը կարևոր դեր է խաղում այն հաստատութենական ժառանգորդության ըմբռնման մեջ, որով նշանավորվեց անցումը կայսրությունից հանրապետության: Այդ շարունակականությունն ակնհայտ է, քանի որ այն սկսվում է Օսմանյան կայսրության շրջանում (բռնագրավում) և ավարտվում Թուրքիայի Հանրապետության ժամանակներում (յուրացում):

դ. Թուրքիայի Հանրապետությունում ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը. Ունեզրկման քաղաքականության շարունակականությունը

Հանրապետության հռչակումից հետո քեմալական Թուրքիան հավատարիմ մնաց ազգային փոքրամասնությունների նկատմամբ Օսմանայան կայսրության հետևողականորեն ի-

---

463 Çavdar Tevfik, *Türkiye Ekonomisi Tarihi*, İmge K. 2003, s 124.

464 Sait Çetinoğlu, «Sermayenin Türkleştirilmesi», *Resmi Tarih Tartışmaları* -2, Ed. Fikret Başkaya, 2. Baskı 2009, s.130-131.

465 Սայիթ Չեթինօղլու, «2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» http://akunq.net/am/?p=30783

466 Taner Akçam, *İnsan Hakları ve Ermeni Sorunu*, s. 587.

րականացրած ձուլման և ոչնչացման քաղաքականությանը: Թեև թուրքական ազգային պետության ստեղծումն ուղեկցվում էր Արևմտյան Հայաստանի հայ, հույն, ասորի բնակչության կոտորածներով և վերջնական տեղահանությամբ, բայց և այնպես հանրապետության հռչակման պահին էլ Թուրքիան բնակեցված էր բազմաթիվ ազգային, էթնիկ, լեզվական և կրոնական փոքրամասնություններով, որոնց իրավունքների պաշտպանության հարցը բարձրացվել էր 1923 թ. Լոզանի վեհաժողովում: Թուրքիան, սակայն, ճանաչում էր միայն երեք փոքրամասնությունների՝ հայերի, հույների և հրեաների համայնքները, այն էլ որպես «ոչ մուսուլմաններ» կարգավիճակով:

Սակայն Լոզանի պայմանագրով ամրագրված ոչ մահմեդականների իրավունքների պաշտպանության հոդվածները մնացին թղթի վրա, շարունակվեցին փոքրամասնությունների հանդեպ հալածանքներն ու հետապնդումները, ինչպես նաև նրանց ձուլման քաղաքականությունը:

Թե՛ քեմալական, թե՛ հետագա թուրքական կառավարությունները մի շարք օրենսդրական ակտերի և միջոցառումների կիրառմամբ ձգտում էին ավարտին հասցնել դեռևս ցեղասպանության տարիներին սկսված հայերի, ինչպես նաև հույների և այլ քրիստոնյաների ունեզրկման գործընթացը:Լայնածավալ այդ գործընթացը, ըստ էության, կապիտալի բռնի փոխանցում էր ոչ մուսուլմաններից՝մուսուլմաններին, ինչը պետք է հիմք հանդիսանար Թուրքիայի ապագա տնտեսական զարգացման համար:

Հայերի և հույների գույքի հետագա բռնագանձումը իրականացվեց մի քանի փուլերով:Երկրորդ համաշխարհայինի թեժ տարիներին՝ 1942 թ., թուրքական կառավարությունը վարչապետ Շուքրու Սարաջօղլուի գլխավորությամբ Ազգային մեծ ժողովի հաստատմանը ներկայացրեց, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկ»-ի (Varlık Vergisi)[467] օրենքը, որն ընդուն-

[467] Ayhan Aktar, *Varlık Vergisi ve 'Türkleştirme' Politikaları*, Iletişim Yayıncılık, Istanbul 2000. Տես նաև Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական

վեց 1942 թ. նոյեմբերի 11-ին՝ խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ: Թուրք ազգայնական իշխանությունների հաշվարկներով համաշխարհային պատերազմը փայլուն հնարավորություն էր ստեղծում նրանց համար էլ ավելի ազատ ու անկաշկանդ իրականացնելու ազգային-կրոնական փոքրամասնություններին հալածելու քաղաքականությունը, ինչպես նաև մասամբ լուծել երկրի առջև ծառացած որոշակի տնտեսական խնդիրները:

«Ունեցվածքի հարկ»-ը հարկատուներին բաժանում էր 4 խմբի՝ ըստ կրոնական պատկանելության. ա. մուսուլմաններ, բ. ոչ մուսուլմաններ, գ. հավատափոխներ, դ. օտարահպատակներ: Փաստորեն, սրանով խախտվում էր սահմանադրական այն դրույթը, որի համաձայն՝ բոլորը, այդ թվում՝ ոչ մուսուլմանները, Թուրքիայի իրավահավասար քաղաքացիներ էին, և սա ավելի շուտ հիշեցնում էր օսմանյան տիրապետության շրջանը, երբ ոչ մուսուլմանները վճարում էին մուսուլմաններից տարբերվող հարկեր: Իսկ հավատափոխներին չընդգրկելով մուսուլմանների խմբի մեջ՝ թուրքական պետությունը ևս մեկ անգամ բացահայտ ցույց տվեց, որ այդ խավի հանդեպ վստահություն չի տածում և նրանց որպես «լիարժեք քաղաքացիներ» չի ընկալում: Կան նաև փաստեր, որ անգամ իսլամ ընդունած հայերը, հույները և հրեաները հարկվել են ոչ թե որպես մուսուլման կամ հավատափոխ, այլ որպես ոչ մուսուլման:

Սույն օրենքով նախատեսվում էր, որ մուսուլմանները վճարեն ունեցվածքի 12.5 տոկոսի չափով հարկ, ոչ մուսուլմանները՝ 50 տոկոս, հավատափոխները, այսինքն՝ իսլամացածները՝ 25 տոկոս և օտարահպատակները՝ 12.5 տոկոս: Քանի որ այն ժամանակվա Թուրքիայում ոչ մուսուլմանների ամենամեծ համայնքները հայերինը, հույներինը և հրեաներինն էին, բնականաբար, հարկն առավելապես ուղղված էր նրանց դեմ:

Թուրքիայում», *Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ. 5, Երևան, 2008, էջ 127-143:

Հարկաչափը սահմանելու և հավաքելու նպատակով ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում, որ բոլոր հանձնաժողովականները լինեին զտարյուն թուրքեր: Ամենևին երկրորդական չպետք է համարել, որ հանձնաժողովների կազմում կային զգալի թվով նախկին իթթիհադականներ: «Օրենքի» ամենամեծ հակահիրավական դրույթներից էր այն, որ հանձնաժողովն ինքնակամ էր որոշում հարկի չափը, այսինքն՝ որևէ հստակ չափանիշ չկար: Սակայն հակահիրավական կետերն այսքանով չէին սահմանափակվում. մարդու իրավունքները կոպտորեն ոտնահարող հաջորդ դրույթն այն էր, որ հարկատուն իրավունք չուներ որևէ տեղ բողոքարկել հարկաչափը, այսինքն՝ հանձնաժողովի կամայականորեն սահմանած որոշումը բեկման ենթակա չէր և վերջնական էր: Իսկ հանձնաժողովները հարկաչափը որոշելիս հաշվի չէին առնում հարկատուի իրական եկամուտները և հնարավորություններն ու հարկում էին նրան մոտավորապես, ըստ ցանկության և տրամադրության:

Հարկահավաքության գործընթացում կար մի շատ կարևոր հանգամանք ևս. թուրքական իշխանությունները տարբերություն էին դնում նաև ոչ մուսուլմանների միջև, և հայերը, մյուս ոչ մուսուլմանների համեմատ, հարկվում էին ամենաբարձր տոկոսներով: Այսպես, օրինակ՝ թուրք առևտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամտի 4.7 տոկոսը, հույնը՝ 156 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը, և փաստորեն հույն առևտրականը թուրքի համեմատ վճարում էր 31 անգամ, հրեան՝ 36, իսկ հայը՝ 47 անգամ ավել գումար: Հարկերի վճարման համար սահմանված էր 15-օրյա ժամկետ, որը հետո երկարացվեց մինչև 30 օր: Այդ ընթացքում հարկը վճարել չհասցնողի շարժական և անշարժ գույքը պետականացվում և աճուրդով վաճառվում էր. մինչ այդ հենց իրենք՝ հարկատուներն էլ էին փորձում էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը: Նշենք նաև, որ գումարը չբավարարելու դեպքում բռնագրավման և վաճառքի էր ենթակա նաև հարկատուի մերձավոր ազգականների գույքը: Իսկ եթե այդ ձևով ձեռք բերված գումարն էլ չէր բավարարում հարկի վճարմանը, ապա հար-

կատուներն աքսորվում էին տաժանակրության, որպեսզի աշխատելով վճարեին պետության հանդեպ իրենց «պարտքը»: Տաժանակրության հիմնական վայրը ցրտաշունչ կլիմայով հայտնի Էրզրումի նահանգի Աշքալե գավառն էր, որն անվանում են նաև «թուրքական Սիբիր»[468]:

Թուրքիայի կառավարության 1943 թ. հունվարի 7-ի նիստում ընդունվեց թիվ 19288 աշխատանքի պարտավորության կանոնակարգը, որն ընդգրկում էր հետևյալ հոդվածները. 1-ին հոդվածով դասակարգվում էին հարկադիր աշխատանքի դատապարտված հարկատուները: Աշխատանքային ճամբարներ առաջինն ուղարկվում էին ընդհանրապես հարկ չվճարածները, այնուհետև՝ մասնակի վճարածները, և այսպես շարունակ: Նախատեսվում էր տաժանակիրներին վճարել որոշակի աշխատավարձ, որը կազմելու էր օրական 250 ղուրուշ, որից 60-ը պահվելու էր սննդի, կացության և այլ ծախսերի համար, իսկ մնացածը պետք է հատկացվեր «Ունեցվածքի հարկ»-ի պարտքի մարմանը: 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկատուները պետք է աշխատեին մինչև «Ունեցվածքի հարկ»-ի լրիվ մարումը: Սակայն այս կետը շատ հարկատուների դեպքում առաջացնում էր ոչ տրամաբանական պատկեր, և կարելի է ասել, որ դա նախատեսում էր ցմահ տաժանակրություն: Այսպես, օրինակ, այն հարկատուները, որոնց պարտքը 400-500 հազար լիրա և ավելի էր, որպեսզի իրենց ստացած աշխատավարձից լրիվ մարեին պարտքը, պետք է աշխատեին մոտավորապես 1600 տարի: Ճամբարներում հավաքված հարկատուներից 1869-ը Ստամբուլից էին, 889-ը՝ Իզմիրից, 100-ը՝ Բուրսայից: Պաշտոնական տվյալների համաձայն՝ միայն Աշքալե է ուղարկվել 1400 ոչ մուսուլման հարկատու, որոնցից 1229-ը՝ Ստամբուլից: Աշքալեում աշխատող հարկատուներից 21-ը (այլ տվյալներով ավելի շատերը) մահացան[469]:

---

[468] Տե՛ս Մելքոնյան Ռ., «Թուրքական «ազգային պետության» նախահիմքերը», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=479&sphrase_id=52414

[469] Տե՛ս նույն տեղում:

Կարևոր հարց է նաև, թե փոքրամասնություններից խլված, պետականացված և աճուրդով վաճառված գույքը ո՞ւմ ձեռքն էր անցնում: Ինչպես ցույց են տալիս փաստերը, այդ ամբողջ գույքը գնել են թուրք գործարարները, թուրքական կազմակերպությունները, բանկերը և այն էլ՝ շատ էժան գներով: «Ունեցվածքի հարկը» չվճարած հարկատուների շարժական և անշարժ գույքի բռնագրավումից հետո հերթը հասնում էր նաև նրանց անձնական իրերին, մինչև անգամ հագուստներին: Այդ ժամանակ շատ հաճախ կազմակերպվում էին աճուրդներ, որոնց ժամանակ վաճառվում էր փոքրամասնություններից բռնագրավված շարժական գույքը: Այս ապրանքների հիմնական գնորդները արևելյան նահանգներից եկած նոր հարուստներն էին, և այնքան մեծ էր գնված ապրանքների քանակը, որ խնդիր էր դառնում նաև դրանց փոխադրումը, գնացքները չէին կարողանում տեղավորել և տեղափոխել այդ քանակի ապրանքը[470]:

Այն տարիների պատգամավոր գրող Ֆայիք Ահմեթ Բարութչուի «Քաղաքական հուշեր. 1939-1954թթ.» գրքից տեղեկանում ենք, որ վարչապետ Սարաջօղլուն Ժողովրդահանրապետական կուսակցության (CHP) գաղտնի նիստի ժամանակ խոսել է «Ունեցվածքի հարկի» իրական նպատակի մասին և ասել, որ դա ուղղված է հիմնականում ազգային փոքրամասնությունների դեմ և սնանկացնելով շուկայում գերակա դիրքեր ունեցող օտարներին, նպատակ ունի նրանց այնտեղից հեռացնել և թուրքական շուկան տալ թուրքերի ձեռքը[471]:

Կարելի է ասել, որ «Ունեցվածքի հարկ»-ը կատարեց իր «առաքելությունը»՝ գրեթե ավարտին հասցրեց երկրի տնտեսության թուրքացման գործընթացը: Ստամբուլահայ հեղինակ Երվանդ Օզուզունի «Ակօս» թերթի 1998թ. նոյեմբերի 13-ի համարում «Ունեցվածքի հարկի» մասին գրած հոդվածում տեղ է գտել նաև այն միտքը, որ «Ունեցվածքի հարկի» հետևանքները բազմաշերտ են և չեն սահմանափակվել միայն տնտեսության թուրքացմամբ, այլև դրա պատճառով փաստորեն վերացել են

[470] Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը». . . , էջ 139:
[471] Նույն տեղում, էջ 134:

թուրքահայ բուրժուազիան և այդ բուրժուազիայի մաս կազմող մտավորական դասը: Կարդացած, գրագետ, տարբեր լեզուների տիրապետող դասակարգը վերացավ՝ տեղը զիջելով իրենց ունեցվածքին էժան գներով տիրացած արևելյան նահանգների նոր հարուստներին, որոնց գերակշիռ մասը անգրագետ, անմշակույթ մարդիկ էին,- կարծում է Օզուզունը և շարունակում,- «Ունեցվածքի հարկը» հայերի համար փաստորեն նաև մշակութային կոտորած էր[472]: Իսկ թուրք հեղինակ Ռըդվան Աքարը ավելի կոշտ է արտահայտվում՝ նշելով. «Ունեցվածքի հարկը» փոքրամասնությունների համար **«տնտեսական ցեղասպանություն էր»**[473]:

Ազգային փոքրամասնություններին նյութապես, բարոյապես, հոգեպես և ֆիզիկապես կոտրելուց հետո միայն թուրքական իշխանությունները, տեղի տալով նաև արտաքին գործոնների ազդեցությանը, որպես «բարի կամքի» դրսևորում, վերացրին «Ունեցվածքի հարկ»-ի կիրառումը: **Այսպիսով, «Ունեցվածքի հարկը» հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում տնտեսական ոլորտում կրոնական փոքրամասնությունների դեմ գործադրված ամենախոշոր և ծանր հետևանքներ առաջացրած քայլերից մեկն էր:**

1955 թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլի, Իզմիրի հույն, հայ բնակչությունը ենթարկվեց պետության կողմից նախապատրաստված խուժանի հարձակմանը: Սրա համար պատրվակ է հանդիսացել իշխանությունների կազմակերպմամբ հրապարակ նետված այն լուրը, թե ռմբակոծվել է Սալոնիկում գտնվող Աթաթյուրքի տունը: Դրանից հետո գազազած ամբոխը հարձակվեց հունական և հայկական թաղամասերի վրա, թալանեց, այրեց տներ, խանութներ, եկեղեցիներ, խոշտանգեց, բռնաբարեց և սպանեց մարդկանց: Այս ամենին թուրքական իշխանություններն արձագանքեցին միայն մեկ օր հետո, երբ ամեն ինչ արդեն ավարտված էր: Հետագայում ընթացող դատական քննության ժամանակ ի հայտ եկած փաստերն ապա-

---

472 Özüzün E., “Acı bir kilometre taşı ve kültür kırımı”, Agos, 13.11.1998.

473 Akar R., *Aşkale yolcuları (varlık vergisi ve çalışma kampları)*, İstanbul, 2006, s.15.

ցուցեցին, որ այդ ամենը կազմակերպված էր իշխանությունների կողմից՝ պետական ամենաբարձր պաշտոնյաների անմիջական մասնակցությամբ: Հունաստանի իրավապահ մարմինները դեպքի առնչությամբ ձերբակալեցին Թուրքիայի հյուպատոսարանի պահակին և Սալոնիկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Օքթայ Էնգինին, որն, ինչպես պարզվեց, Թուրքիայի ազգային անվտանգության ծառայության գործակալ էր: Էնգինը հետագայում Ստամբուլի նահանգապետի միջնորդությամբ աշխատանքի անցավ քաղաքապետարանում, այնուհետև դարձավ Թուրքիայի կարևորագույն շրջաններից մեկի՝ Չանքայայի գավառապետ, այնուհետև՝ ոստիկանության գլխավոր վարչության քաղաքական գործերով բաժնի պետ: 1971 թ. Օքթայը դարձավ Անվտանգության վարչության պետ և 7 տարի պաշտոնավարելուց հետո 1991 թ. նշանակվեց Նևշեհիրի նահանգապետ: Այսինքն՝ Քեմալ Աթաթուրքի ծնված տան այգում կատարված պայթյունը Սալոնիկում պետականորեն ծրագրված սադրանք էր, որպեսզի առիթ տա Թուրքիայում հույների, հայ և հրեա ազգային փոքրամասնությունների դեմ կոտորածի կազմակերպման: Ընդհանուր առմամբ թալանի ենթարկվեց 4214 տուն, 1004 գրասենյակ, 73 եկեղեցի, 26 դպրոց և հաստատություն[474]:

Այսպիսով, ազգային փոքրամասնություններին արտաքսելը, իրենց ունեցվածքից և գործից զրկելը դարձավ հանրապետական Թուրքիայի պետական տնտեսական քաղաքականության անկյունաքարը, և ինչպես երիտթուրքական շրջանում, պետականորեն ու «օրենքներով» ամրագրված՝ շարունակվեց տնտեսական տեռորը կամ ուղղակի պետական մասշտաբի թալանը, որին զոհ դարձան Թուրքիայում ապրող ոչ մուսուլմանները:

---

[474] Տե՛ս Ayhan Aktar, “6 - 7 Eylül 1955 Cumhuriyet tarihinin en karanlik gecesi...”, Pazartesi, 5 Eylül 2005, Sabah gazetesi yazı dizisi https: //www.academia.edu/20103181/6_-_7_Eyl%C3%BCl_1955_CumhuriyetTarihinin_En_Karanl%C4%B1k_Gecesi_6_-_7_September_1955_Darkest_Night_of_Republican_History_

Թուրքիայի Հանրապետությունում ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը ունեզրկման քաղաքականության առանձին թիրախ էր հանդիսանում: 1924 թ. մարտի 3-ին խալիֆայության վերացումից հետո վերաձևավորվեց կրոնի և վաքըֆների նախարարությունը (Diyanet), իսկ վաքըֆների նկատմամբ սահմանվեց պետական վերահսկողություն[475]: Իսկ 1926 թ. ընդունված Քաղաքացիական օրենսգրքի 74-րդ հոդվածով ոչ մուսուլմաններին արգելվեց նոր վաքըֆներ հիմնել[476]: 1930 թ. ոչ մուսուլմանների գերեզմանատները պաշտոնապես փոխանցվեցին քաղաքային իշխանությունների ենթակայության տակ՝ զրկվելով պետական մարմիններից անկախ գործելու հնարավորությունից[477]: 1935 թ.-ի «Կալվածքների մասին» 2762 օրենքով ոչ մուսուլմանների համայնքային վաքըֆները անցան Կալվածքների տնօրինության (Vakıflar Genel Müdürlüğü) վերահսկողության տակ:

Սակայն փոքրամասնությունների գույքի հետագա բռնագանձմանն ուղղված օրենքների այդ շարքում առավել մտահոգիչ էր այն, որը հայտնի է «1936 Beyannamesi» անունով: 1935 թ. հունիսի 13-ին ընդունված վաքըֆների մասին թիվ 2762 օրենքի հիման վրա 1936 թ. ընդունվեց պետական կարգադրություն, որի համաձայն՝ Թուրքիայի բոլոր վաքըֆներից պահանջվում էր գույքի մասին ծանուցում: Մահմեդական և ոչ մահմեդական բոլոր վաքըֆները, ենթարկվելով այդ պահանջին, իրենց պատկանող գույքերի ցուցակը հանձնեցին Վաքըֆների գլխավոր տնօրինությանը: 1936 թ. հայտարարագիրը բաղկացած էր մի ցուցակից, որը ցույց էր տալիս այն ունեցվածքը, որը պատկանել է ոչ մուսուլման փոքրամասնությունների համայնքային վաքըֆներին:

---

[475] Տե՛ս « 3 Mart devrim yasaları» http://www.atam.gov.tr/dergi/sayi-35/3-mart-1924-devrim-yasalari

[476] Aktar A., *Varlık Vergisi ve "Türkleştirme" politikaları*, Istanbul, 2000, s. 109.

[477] Տե՛ս Alptekin E., "Vakıflar Yasası kabul edildi: Sıra Lozan'a mı geldi?" http://www.turksolu.com.tr/175/alptekin175.htm

Պոլսահայ փաստաբան Սեպուհ Ասլանգիլը, ով զբաղվում է եկեղեցապատկան գույքի հետ վերադարձնելու հարցերով, նշում է. «Չիմանալով և տեղյակ չլինելով, թե ինչ նպատակ է հետապնդում այս հայտարարագիրը՝ մեր բոլոր հիմնարկները ճշտորեն չեն ներկայացրել իրենց ունեցվածքի ցանկը՝ մտածելով, որ այդ ցանկերն ուզում են տուրքեր գանձելու համար, հետևաբար բոլորը ներկայացրել են փոքր քանակությամբ կալվածքների ցանկ»[478]:

Այդ ընթացքում հայ համայնքը Թուրքիայում ներկայացված էր աշխարհիկ և կրոնական խորհրդարաններով, որից աշխարհիկը՝ 1960 թ. ռազմական հեղաշրջման արդյունքում արգելվեց և այժմ գործում է միայն կրոնականը: Այդ խորհրդարանները, սակայն, ունեին ենթահանձնախմբեր, օրինակ կալվածքների հանձնախումբ, կրթական հանձնախումբ և այլն: Համայնքապատկան կալվածքների հսկողությունը հանձնված էր կալվածքների հանձնախմբին: Մահմեդականների հիմնադրամներին վերաբերող 1935 թ. ընդունված 2762 օրենքով ձևավորված վարչություններ կային, սակայն քանի որ դրանք չէին վերաբերվում ոչ մուսուլմաններին, հետևաբար մինչև 1949 թ. ամեն եկեղեցի ներկայացուցիչներ ուներ կալվածքների հանձնախմբի մեջ, որոնք կոչվում էին խնամակալներ: «Սակայն դա էլ հանրապետության սկզբունքներին հարմար չեղավ և 1951 թ. որոշվեց կազմավորել թաղային խորհուրդներ»,- ասում է Ասլանգիլը[479]:

Հենց այս թաղային խորհուրդներն են, որոնք այսօր տնօրինում և կառավարում են եկեղեցուն, հաստատությանը պատկանող ունեցվածքը: Հայկական հիմնադրամների մեծ մասը գտնվում են Ստամբուլում, սակայն Անատոլիայում կան 5 հիմնադրամներ. Կեսարիա -1, Հաթայի շրջանի՝ Վաքֆլը, Իսքենդերուն և Քըրքքան գյուղերում՝ մեկական, Դիարբեքիր - 1: Թուրքիայում կան նաև հայ բողոքական եկեղեցու երկու և

---

[478] Տե՛ս Հայ ունեցվածքի ճակատագիրը Օսմանյան կայսրությունից ցայսօր https://annamuradyan.wordpress.com/2013/12/21/armenian-property-since-otoman-empire-by-now/

[479] Նույն տեղում:

կաթոլիկ եկեղեցու ինը հիմնադրամներ: Ասլանգիլը ընդգծում է, որ այս ընթացքում բազմաթիվ հիմնադրամներ՝ պարզապես համայնք չլինելու պատճառով, քանի որ այդտեղ հայություն չէր մնացել, զորօրինակ Սեբաստիայում, անտերության մատնվեցին և ողջ ունեցվածքն ու հիմնադրամները փոխանցվեցին պետությանը:

1936-1974 թթ. ընթացքում իրավական դաշտի այս կարգավորումների համաձայն հայկական հիմնադրամները այլ հիմնադրամների պես առանց որևէ խնդրի գործունեություն ծավալեցին՝ ըստ իրենց առաջնահերթությունների՝ ձեռք բերելով նոր գույք կամ վաճառելով այն, եթե դրա կարիքը կար[480]:

Մինչ 1974 թ. իրավական առումով այս հարցում որևէ զարգացում չարձանագրվեց: Կիպրոսյան ճգնաժամի սրացման ժամանակ թուրքական իշխանությունները, ցանկանալով Ստամբուլի հունական համայնքի վրա ճնշում գործադրելու միջոցով զիջումներ ստանալ Հունաստանից, համայնքային կառույցներից պահանջեցին ներկայացնել իրենց պատկանող ունեցվածքի սեփականության վկայագրերը: Գործնականում այս պահանջի իրագործումն անհնար էր, քանի որ վաքֆները հիմնադրվել էին օսմանյան ժամանակներում, երբ նման փաստաթղթեր չէին տրվում, ուստի Վաքֆների գլխավոր տնօրինությունը հայտարարեց, որ դրանց կարող են փոխարինել 1936 թ.-ի հայտարարագրերը: Ընդ որում, քանի որ դրանցում վաքֆներին վերապահված չէր նոր անշարժ գույք ձեռք բերելու իրավունք (այդպիսի իրավունքներ հայտարարագրերում առհասարակ չեն ամրագրվում), որոշվեց 1936 թ.-ից հետո ոչ մուսուլմանների համայնքային կալվածքներին փոխանցված անշարժ գույքն անհատույց բռնագրավել և վերադարձնել օրինական տերերին, իսկ վերջիններիս մահի կամ ժառանգներ չունենալու պարագայում՝ պետականացնել այն: Հաշվի առնելով, որ կալվածքների ձեռք բերած ունեցվածքի մեծ մասը կտակված կամ նվիրաբերված էր միայնակ ծերերի կողմից՝

[480] Տե՛ս Հայ ունեցվածքի ճակատագիրը Օսմանյան կայսրությունից ցայսօր https://annamuradyan.wordpress.com/2013/12/21/armenian-property-since-otoman-empire-by-now/

պարզ է դառնում, որ առգրավված գույքը հիմնականում պետականացվեց: Այս անօրինությանը վերջ դնելու համար ոչ մուսուլմանները սկսեցին պետության դեմ դատական հայցեր ներկայացնել, սակայն հարուցված դատական գործերը միշտ էլ հօգուտ պետության էին ավարտվում:

Համայնքային սեփականության խնդրի շուրջ նոր զարգացումներ ծավալվեցին 1999 թ.-ից, երբ Թուրքիան պաշտոնապես ճանաչվեց ԵՄ անդամակցելու թեկնածու և սկսվեց եվրոպական պետությունների հետ «ներդաշնակեցման» գործընթացը, որի շրջանակներում ի թիվս այլ խնդիրների Եվրահանձնաժողովը բարձրաձայնեց ոչ մուսուլմանների վաքըֆների տնօրինման խնդրի շուտափույթ լուծման կարևորությունը: Զուգահեռաբար ոչ մուսուլմանները սկսեցին Թուրքիայի դեմ դատական հայցերով դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և շահել դատական գործերը: Պետությունը ստիպված էր որոշակի բարեփոխումներ իրականացնել: 2002թ. Թուրքիայի ընդունած թիվ 4771 օրենքով որոշակի հնարավորություն ստեղծվեց հիմնադրամներին պատկանող ունեցվածքը հետ վերադարձնելու համար: 2002-2003 թթ.-ին ոչ մուսուլմաներին թույլ տրվեց նախարարների խորհրդի կամ Վաքըֆների գլխավոր տնօրինության համաձայնությամբ կրոնական, բարեգործական, կրթական, առողջապահական, մշակութային նպատակներով գույք ձեռք բերել և գրանցել: Այսպիսով, ձևականորեն խնդրին լուծում տրվեց, սակայն նման համաձայնություն ձեռք բերելու գործընթացի բարդության պատճառով՝ 2003-2008 թթ.-ին ներկայացված 1262 հայցադիմումից միայն 366-ը դրական լուծում ստացավ: Այս փուլում սակայն 1974 թ.-ից հետո պետականացված գույքի վերադարձի կամ դրա դիմաց փոխհատուցում վճարելու կարևորագույն խնդրին որևէ անդրադարձ չարվեց: Խնդրին լուծում տալու փորձ էր 2005 թ-ին ընդունված թիվ 5555 օրենքը, որը սահմանափակ շրջանակներում վերականգնում էր ոչ մուսուլմանների Լոզանի պայմանագրով, Թուրքիայի Սահմանադրությամբ և մարդու իրավունքների միջազգային կոնվեցիաներով ամրագրված իրավունքները: Օրենքը, սակայն, կյանքի չկոչվեց, քանի որ

երկրի նախագահ Ա. Սեզերը, պատճառաբանելով, որ դրա հոդվածներից ինը հակասում են ազգային շահերին ու հանրային բարօրությանը, վետոյի իրավունք կիրառեց: Երկրի նախագահի կողմից հնչեցված այս ձևակերպումը մեկ անգամ ևս ապացուցեց, որ ոչ մուսուլմանները Թուրքիայում համարվում են օտար, թշնամի տարրեր, ում իրավունքներ շնորհելու հարցը դիտարկվում է ոչ թե ներքին իրավական խնդրի, այլ ազգային անվտանգության տեսանկյունից: 2007 թ.-ի խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակից հետո թուրքական մեջլիսը կրկին անդրադարձավ 5555 օրենքի քննարկմանն ու 2008 թ.-ի փետրվարին առանց փոփոխությունների ընդունեց այն 5737 համարի տակ[481]:

Նոր օրենքով համայնքային կառույցները ստացան անշարժ գույք ձեռք բերելու իրավունք: Վաքըֆներին թույլ տրվեց Վաքըֆների գլխավոր տնօրինության գիտությամբ օգնություն ստանալ արտերկրից, ինչը ենթադրաբար ապագայում հնարավորություն կտար ՀՀ-ից կամ սփյուռքից օրինականորեն աջակցել Ստամբուլի հայ համայնքին: Օրենքի մի շարք կետեր սակայն կրկին ոտնահարում էին ոչ մուսուլմանների շահերը: Նախ օրենքով համայնքային վաքըֆները մնացին Վաքըֆների գլխավոր տնօրինության վերահսկողության տակ, որին իրավունք վերապահվեց միանձնյա որոշել բարեգործական նպատակներով կալվածքները կիրառելու հարցը և, բացասական պատասխանի դեպքում՝ պետականացնել դրանք: Երկրորդ՝ օրենքն ամրագրեց միջազգային իրավունքի փոխադարձության սկզբունքի կիրառումը: Մեկ այլ պետության քաղաքացիների նկատմամբ ընդունելի այս սկզբունքի կիրառումը սեփական քաղաքացիների կրոնական չափանիշով անջատված մի մասի նկատմամբ միջազգային նորմերի կոպիտ խախտում է և կրոնական խտրականության բացահայտ դրսևորում: Երրորդ՝ 5737 օրենքով նոր վաքըֆներ ստեղծվելու են գործող քաղաքա-

[481] 1999-2008 թթ. խնդրի շուրջ զարգացումների մասին առավել մանրամասն տես Kurban D. , Hatemi K., *The story of an alien(ation): Real estate ownership problems of non-Muslim foundations and communities in Turkey*, Istanbul, 2010.

ցիական օրենսգրքի հիման վրա, որն իր հերթին արգելում է ոչ մուսուլմաններին նման կառույցներ ստեղծել: Նորից ակնհայտ է կրոնական խտրականությունը: Չորրորդ՝ այս օրենքով այն համայնքային հաստատություններին, որոնց հիմնադրման փաստաթղթում նախատեսված է միջազգային շփումների զարգացում, տրվում է միջազգային ասպարեզում ազատ գործելու, նոր մասնաճյուղեր հիմնելու հնարավորություն: Փաստորեն, ոչ մուսուլմանների օսմանյան շրջանում հիմնադրված վաքըֆները, որոնց փաստաթղթերում նման կետ լինել չէր կարող, նորից անմասն մնացին: Օրենքի վերջին և ամենակարևոր կետը, որ վերաբերում էր բռնագրավված անշարժ գույքի վերադարձին, ևս չի դիմանում ոչ մի քննադատության: Նախ պետականացումից հետո երրորդ կողմերին փոխանցված գույքի համար փոխահատուցում վճարելու որևէ մեխանիզմ սահմանված չէր, իսկ պետության գերակայության տակ գտնվող գույքի վերադարձի համար նախատեսված պայմաններն ու Վաքըֆների տնօրինությանը ներկայացվելիք փաստաթղթերի ցուցակը այնքան մեծ ու բարդ էր, որ անգամ թուրք իրավաբանների կարծիքով օրենքի նշանակությունը զրոյանում էր:

Ավելին, Վաքըֆների տնօրինության արգելքը հաղթահարելուց հետո էլ հայցողները հանդիպում էին պետռեգիստրի և վարչարարական այլ մարմինների համառ դիմադրությանը: Արդյունքում՝ 2008-2010 թթ. ներկայացված 1410 դիմումներից 181 ստացան դրական, 347-ը բացասական պատասխան, իսկ 893-ը չքննարկվեցին փաստաթղթերի անբավարարության պատճառաբանությամբ[482]:

Վաքըֆների խնդրում իրավական առումով նոր առաջընթաց էր 2011 թ. օգոստոսի 27-ին թիվ 651 որոշումով Վաքըֆների մասին օրենքին կցված 11 հոդվածը, որով պետությունը երաշխավորեց բռնագրավված համայնքային սեփականութ-

[482] Պողոսյան Ն., «Թուրքիայի ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը (1923-2011 թթ.).համառոտ ակնարկ», *Մերձավոր Արևելք (հոդվածների ժողովածու)*, հ.VIII, Երևան 2012, էջ 309.

յան վերադարձը օրինական տերերին[483]: 2011թ. Թուրքիայի Հանրապետության պաշտոնաթերթ «Ռեսմի գազեթե»-ի թիվ 28071 համարում լույս տեսած թիվ 5737 օրենքի՝ ուժ ունեցող որոշման 11-րդ ժամանակավոր հոդվածի համաձայն՝ «1936 թ. կանոնագրում գրանցված անշարժ գույքերի, որոնց կալվածքները բաց են, 1936 թ. կանոնագրում գրանցված պետականացումից, վաճառքից և փոխանակումից բացի՝ այլ պատճառներով գանձարանի, Վաքըֆների գլխավոր տնօրինության, քաղաքապետարանի և նահանգային հատուկ վարչության անունով գրանցված անշարժ գույքերի, 1936 թ. կանոնագրում գրանցված հասարակական միությունների անունով գրանցված գերեզմանոցների ու աղբյուրների, գնման կայքագրի (թափու) գրանցման իրավունքի և պարտականության հետ մեկտեղ այս հոդվածն ուժի մեջ մտնելու պահից սկսած 12 ամսվա ընթացքում դիմումի դեպքում, խորհրդարանի դրական որոշումը ստանալուց հետո, կադաստրի տնօրինությունը շահագրգիռ գնման կայքագիրը գրանցելու էր համայնքային վաքըֆի անունով:

Համայնքային վաքըֆների կողմից գնված, համայնքային վաքըֆներին կտակված կամ էլ նվիրատվության դեպքում սեփականություն ձեռք բերել չկարողանալու հիմնավորմամբ Գանձարանի կամ էլ Վաքըֆների գլխավոր տնօրինության անունով գնման կայքագրի մեջ երրորդ անձանց անունով գրանցված անշարժ գույքերի՝ Ֆինանսների նախարարության կողմից հաստատված շուկայական գինը վճարելու էր գանձարանը կամ էլ Գլխավոր տնօրինությունը»[484]:

Վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ իրենց երկրում ցանկացած տիպի խտրականության ժամանակները անցել

---

[483] 11-րդ հոդվածը ամբողջությամբ տես՝www.mfa.gov.tr/sub.en.mfa?690ae1fb-2099-44cc-a4f8-925c62e1425a

[484] Տե՛ս Քարտաշյան Ա., «Փոքրամասնությունների՝ բռնագրավված անշարժ գույքը հետ վերադարձնելու վերաբերյալ «պատմական որոշմամբ» նախատեսված ժամանակահատվածը լրացավ» http://akunq.net/am/?p=24548

են[485]: Սեպտեմբերի 7-ին եվրոպական և ամերիկյան դիվանագետների հետ հանդիպման ընթացքում Վաքֆների տնօրինության գլխավոր տնօրեն Ա. Էրթեմը հայտարարեց, որ այս օրենքում հաշվի են առնված նախորդ օրենքներում տեղ գտած անճշտությունները և արված է ամեն ինչ՝ առավելագույն արդյունք ապահովելու համար[486]:

Անշուշտ օրենքի ընդունման հիմքում ընկած էր ոչ թե ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանկարծակի ծագած հոգածությունը, այլ շատ ավելի պրակտիկ նկատառումներ: Մի կողմից այն ուղղված էր թուրքական կառավարությանը նյութական վնաս պատճառած Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող հայցերի քանակի կրճատմանն ու դրանց պատճառով խարխլված միջազգային հեղինակության վերականգնմանը և նույնիսկ բարելավմանը: Մյուս կողմից օրենքը պատասխան էր 2011 թ. հուլիսի 15-ին ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված թիվ 306 բանաձևին, որում Թուրքիային կոչ էր արվում վերադարձնել եկեղեցիները, դպրոցները, հիվանդանոցները, հուշարձանները, սրբավայրերը՝ օրինական տերերին[487]: Նշված օրենսդրական ակտի հրապարակումը դրական արձագանք ստացավ միջազգային հանրության կողմից: Թուրք իրավաբան Օրհան Քեմալ Ջենգիզը այս որոշումը նույնիսկ հեղափոխություն անվանեց[488]:

Թուրքաբնակ ոչ մուսուլմանները, սակայն, թերահավատորեն էին մոտենում հարցին՝ ակնարկելով, որ թուրքական դասական տարբերակով կառավարության ընդունած թվացյալ

---

[485] Տե՛ս Sebnem Arsu, “Turkish Government to Return Seized Property to Religious Minorities” http://www.nytimes.com/2011/08/29/world/europe /29turkey.html?_r=0

[486] Տե՛ս Return of properties belonging to community foundations http://www.vgm.gov.tr/duyurudetay.aspx?Id=40

[487] Տե՛ս Return of properties belonging to community foundations http://www.vgm.gov.tr/duyurudetay.aspx?Id=40

[488] Տե՛ս Their properties have been given back, what about seized foundations? https://www.cihan.com.tr/en/cms-copied-news-on-26-10-519937.htm

ժողովրդավարական օրենքում տեղ գտած առաջին հայացքից անտեսանելի խութերը, դուրս մնալով հանրության լայն շրջանակների ուշադրությունից, կխափանեն դրանց լիարժեք կիրառումը: Օրինակ, արդեն հայտնի է, որ պետությունը վերադարձնելու կամ փոխհատուցում է տրամադրելու միայն այն գույքի դիմաց, որը բռնագրավվել է 1936 թ.-ից հետո[489] և մինչ այժմ պետական հովանու տակ է կամ որոշակի գումարով վերավաճառվել է երրորդ անձանց, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին խլված, ինչպես նաև բռնագրավումից հետո նախկին տերերին անհատույց վերադարձված գույքը որևէ կերպ չի փոխհատուցվելու: Բացի այդ, անշարժ գույքը ետ վերցնելու կամ փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ է մեջլիսի դրական որոշումը, սակայն դրա համար անհրաժեշտ չափանիշները սահմանված չեն: Թուրք պատմաբան Սաիթ Չեթինօղլուի վկայությամբ պետությունը իր համար խուսանավելու հնարավորություններ է թողել[490]:

Վաքֆային գույքը մեկն էր այն թեմաներից, որին ամենաշատն էր անդրադառնում Հրանտ Դինքը: Նրա սպանությունից հետո հիմնված «Հրանտ Դինք հիմնադրամը» 2012թ. մի գիրք հրատարակեց, որը վերնագրված է «2012 թ. հայտարարագիրը»[491]: Աշխատությունը պարունակում է մինչ այժմ Ստամբուլում գտնվող հայ վաքֆային ունեցվածքի վերաբերյալ ամենամանրամասն ցուցակը: Սույն գիրքը, որի առաջաբանի հեղինակն է դոկտոր, պրոֆ. Հյուսեյն Հաթեմին, կազմվել է Մեհմեթ Փոլաթելի, Նորա Միլդանօղլուի, Օզգյուր Լեման Էրենի և Մեհմեթ Աթըլգանի կողմից: Այս թիմը 2 տարի շարունակ արխիվներ, հին քարտեզներ, պետական ցուցակներ է ուսումնասիրել

---

489 Տե՛ս Raffi Bedrosyan, “Special Report: What is Turkey Returning to Armenians?” http://armenianweekly.com/2011/08/31/property-return/

490 Տե՛ս Sait Çetinoğlu, “Foundations of Non-Muslim communities: The last object of confiscation” https://neweasternpolitics.wordpress.com/2012/02/28/foundations-of-non-muslim-communities-the-last-object-of-confiscation-by-sait-cetinoglu/

491 Տե՛ս 2012 Beyannamesi - Istanbul Ermeni vakıflarının el konan mülkleri http://www.istanbulermenivakiflari.org/

և ավարտին հասցրել աշխատանքը: Աղբյուրներից մեկն էլ, որից օգտվել են հեղինակները, Հրանտ Դինքի արխիվն է եղել, մեկ այլ աղբյուր է ծառայել հանգուցյալ փաստաբան Տիրան Բաքարի թղթապանակները, որոնց միջոցով ձեռք են բերվել բազմաթիվ գաղտնի փաստաթղթեր: Ինչպես նշում են ուսումնասիրության մասնակիցները, որոշ տեղեկություններ բոլորովին էլ հասու չեն եղել: Արդյունքում ունենք հետևյալ պատկերը. հաստատված է, թե Ստամբուլում ներկա դրությամբ որ հայկական վաքըֆի ունեցվածքն որտեղ է և ինչ վիճակում է գտնվում. www.istanbulermenivakiflari.org կայքում ներբեռնված են դրա մասին բոլոր տեղեկությունները, քարտեզները, ինչպես նաև՝ 200-ից ավել լուսանկարներ: Առկա վիճակն ամփոփվում է գրքի նախաբանի հետևյալ պարբերությունում. *«Սույն գրքում պատմվում է ոչ թե քարից, բետոնից շինված կառույցների, բռնագրավված շենքերի, այլ՝ միս ու արյունից հունցված մարդկանց պատմության մասին: Այստեղ հիշատակված շինություններն այն արժեքներն էին, որոնք համատեղ ստեղծել էին այս հողերում ապրած մարդիկ՝ տարեց, թե երիտասարդ, կին, թե տղամարդ, հարուստ, թե աղքատ: Անարդարությամբ բռնագրավված ենթարկված այս ունեցվածքը այն նյութական աղբյուրն էր, որը կյանք էր տալիս պաշտամունքի վայրերին, դպրոցներին, որբատներին, ծերանոցներին, մի ողջ հանրության: Թուրքիայի հայերի հասարակական կյանքը և մշակույթը հիմնված էր այս տնտեսական հենքի վրա: Ոչնչացված այդ կյանքի և մշակույթի հետքերը գրանցված են այս գրքում՝ «ինչո՞ւ» և «ինչպե՞ս»-ի հետ մեկտեղ, որպեսզի անարդարությունները վաղը չկրկնվեն…»*[492]:

Գրքում ներկայացված են 5 վաքըֆների գույքի բռնագրավման պատմություններ, որոնցից արժե մեջբերել մի քանիսը.

Խոլերայի համաճարակի պատճառով որբացածների դպրոցը «ճանապարհ դարձրեցին»:

---

[492] Տե՛ս 2012 Beyannamesi - Istanbul Ermeni vakıflarının el konan mülkleri http://www.istanbulermenivakiflari.org/

«1865 թ. խոլերայի մեծ համաճարակի ժամանակ բազմաթիվ երեխաներ են որբ ու անտեր մնում: Մայրապետ Սրբուհի Նշան Գալֆայանն ստանձնում է 2-10 տարեկան 17 որբացած աղջիկների խնամքը: Հասքյոյում *(Խասգյուղ՝ թաղամաս Ստամբուլում-Ա.Հ.)* գտնվող իր տանը երեխաներին թե՛ զբաղեցնելու և թե՛ պահել կարողանալու համար սկսում է ձեռագործ ուսուցանել: Այդ անձնական նախաձեռնությունից հետագայում ծնվելու է Գալֆյան որբատունը, որը դառնալու է Ստամբուլի և այստեղի հայկական համայնքի ամենակարևոր կրթական հաստատությունը»: Իսկ ի՞նչ եղավ նման մարդկային նպատակով հիմնված այս որբատան վերջը: Երկար ժամանակ աղջիկ երեխաների համար բույն ծառայած Հալըջըօղլուում գտնվող որբատան՝ փայտից կառուցված շենքը 1960-ականների վերջերին ազգայնացվեց՝ դեպի Բոսֆոր մուտքի և իրար կապող ճանապարհների համար: Առարկություններն ապարդյուն մնացին: Քանի որ հայկական գույքը բռնազավթվել էր, թույլ չտրվեց, որ նրանք այլ շենք տեղափոխվեն: Գալֆյան դպրոցը մոտ 30 տարի գործեց նեղլիկ, փայտե տներում: Հետագայում Ուսքյուդարում *(Սկյուտար՝ թաղամաս Ստամբուլում-Ա.Հ.)* գտնվող նախակրթարանի դպրոցի հետ համատեղ օգտագործեց այս դպրոցի շենքը:

Իր իսկ կառույցի համար տարիներ շարունակ վարձ մուծած դպրոցը

Սուրբ Ղազար կղզու հայ կաթոլիկ Մխիթարյան միաբանության կողմից 18-րդ դարում հիմնված դպրոցներից մեկը 1958 թ. փոխադրվեց Էմինե Թևֆիքա Այաշլըից 710 հազար լիրայով գնված շենքը և անվանվեց Բոմոնթիի հայ կաթոլիկ մասնավոր նախակրթարան: Սակայն Վաքըֆների ընդհանուր տնօրինությունը, այն հիմնավորումը բերելով, թե շենքը չի հիշատակվել «1936 թ. հայտարարագրի» մեջ, դատական գործ հարուցեց՝ կառույցը «նակխին տիրոջը վերադարձնելու» պահանջով: 1984 թ. դատարանը դատավճիռ կայացրեց, և շինությունը, որպես Էմինե Այաշի ժառանգություն, փոխանցվեց Անկարայի Աշայի քաղաքապետարանին և Այաշլը եղբայրներին: Վերջիններս իրենց արժեթղթերը վաճառել էին Միլթաշ ան-

վամբ ընկերությանը: 1998 թ. վաքըֆը վարձատու դարձավ, որը վճարում էր այն կառույցի դիմաց, որը 30 տարի առաջ գնել էր: «Անցյալում չտրված վարձի պարտքն» էլ սկսեց մասմաս մարել: Սակայն Միլթաշ ընկերությունն իր առարկությունը հայտնեց պայմանագրի հարցում և բռնագրավման համար փոխհատուցման դատական գործ հարուցեց վաքըֆի դեմ: 1999 թ. փետրվարի 2-ին շենքն ազատելու մասին որոշում կայացվեց, և դպրոցը դատարկվեց: Կառույցից դուրս շպրտվեցին այնպիսի բազմաթիվ իրեր, ինչպիսիք են՝ գրապահարանները, նստարանները, խաղալիքները և դաշնամուրը: Աշակերտները ձմռան կեսին առանց դպրոց էին մնացել: Դպրոցի սաների ընտանիքները չհնազանդվելու գործողություն ձեռնարկեցին, մի բան, որ հազվադեպ էր հանդիպում Թուրքիայի հայերի շրջանում, և ճամբար դրեցին դպրոցի այգում: Այնուհետև նրանք շենք վերադարձան և տարիներ շարունակ վարձ վճարվեցին: 2012 թվականի նոյեմբերի 1-ին այս կառույցը վերջապես վերադարձվեց վաքըֆին[493]:

«Հայկական վաքըֆներին պատկանած 661 միավոր գույք է բռնագրավվել տարբեր պատճառներով: Դրանցից միայն 143-ն են վաքըֆին վերադարձվել՝ վերջին 10 տարիների ընթացքում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում: Այդ թիվն էլ կազմում է 1328 միավոր վաքֆային ընդհանուր անշարժ գույքի 10.77 տոկոսը միայն»,- գրում են գրքի հեղինակները[494]:

Բազմաթիվ խնդիրներ էին ծագում նաև պետության կողմից իբր երաշխավորված փոխհատուցումների հետ կապված: Այսպես,Գեդիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆն առարկությունն էր ներկայացրել իրեն պատկանող գույքի դիմաց որպես փոխհատուցում տրվող գումարի կապակցությամբ: Պոլսահայ «Ակօս» շաբաթաթերթի համաձայն՝ Գեդիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆը փոխհատուցման գումարի չափը վիճարկելուց առաջ դիմել էր մասնագետների,

---

[493] Տե՛ս 2012 Beyannamesi - Istanbul Ermeni vakıflarının el konan mülkleri http://www.istanbulermenivakiflari.org/

[494] Նույն տեղում:

որոնք գնահատել էին իրեն պատկանող սույն անշարժ գույքը: Մասնագետները 550 հազար լիրա էին գնահատել Ստամբուլի Գում Գափու թաղամասում գտնվող այդ քառահարկ շինությունը, որը խլվել էր Գեդիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքֆից և նախկինում եղել հայ օրիորդաց որբատուն: Եկեղեցին իր առարկությանը կցել էր նաև գնահատող մասնագետների զեկույցները:Գեդիքփաշայի հայ բողոքական եկեղեցու և դպրոցի վաքֆը դիմել էր, որպեսզի վերադարձներ 1980 թ. պետական գանձարանին անցած այդ անշարժ գույքը և դրական պատասխան ստացել: Դա համարվել էր Թուրքիայում ազգային փոքրամասնության համայնքին տրված «առաջին» փոխհատուցման որոշում:Վաքֆների գլխավոր տնօրինությունը ընդամենը 147 հազար 143 լիրայի չափով դրամական փոխհատուցում էր սահմանել այդ քառահարկ շինության համար, որը 8 բնակարան է ընդգրկում: Գեդիքփաշայի հայ բողոքական եկեղեցու և դպրոցի վաքֆը որոշել էր բողոքարկել այդ որոշումը:

Վաքֆի նախագահ Գրիգոր Աղաբալօղլուն թուրքական «Վաթան» պարբերականի հետ զրույցում նշել էր. «Մեզ տրվելիք փոխհատուցումը շատ ծիծաղելի է: Բոլորը Ստամբուլում գիտեն, որ Գում Գափուում տները թանկ են: Այստեղ մեկ բնակարանը 150 հազար լիրայով է վաճառվում: Դժվարանում ենք հասկանալ, թե պետությունն ինչպես է այդ գինը սահմանել: Պետությունը 30 տարի շարունակ այստեղի վարձն է ստացել, վաճառել և գումար վաստակել: Նրանք պետք է Աստծուց վախ ունենան: Այս կառույցը պահանջել ենք դեռևս 5-6 տարի առաջ, երբ հրապարակվեց բարեփոխումների սկիզբ դարձած 4771 թվակիր օրենքը: Սակայն չտվեցին: Հետո, չնայած որ դատական գործ էինք հարուցել, շենքը հապշտապ վաճառվեց ոմն Մուրադ Ասլանի»[495]:

Համաձայն Վաքֆների գլխավոր տնօրինության ներկայացրած տվյալների՝ հայկական համայնքային անշարժ գույքը

---

[495] Գեդիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքֆն իր առարկությունն է հայտնել իրեն պատկանող գույքի դիմաց որպես փոխհատուցում տրվող գումարի կապակցությամբ http://akunq.net/am/?p=25748

վերադարձնելու որոշման շրջանակում 165 համայնքային վաքքֆից 56-ը 430 անշարժ գույքի վերաբերյալ դիմում է ներկայացրել, որից որոշվել է 51 անշարժ գույքը հետ վերադարձնել, մեկ անշարժ գույքի գինը վճարել: 32 դիմում մերժվել է, այդ թվում՝ նաև Թուզլա կամ «Քամփ Արմեն» ճամբարը հետ վերադարձնելու դիմումը[496]:

«Քամփ Արմեն» հայկական ճամբարը Ստամբուլի Թուզլա շրջանում գտնվող լքյալ ու կիսաքանդ մի շինություն է: Ներկայումս ավերակի վերածված շինությունը ժամանակին եղել է չքավոր ու որբ հայ երեխաների ամառային ճամբարը: Այն 1961 թ. գնվել է Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամի կողմից և ծառայել է որպես ամառային ճամբար՝ Գեդիքփաշայի հայկական դպրոցի չքավոր ու որբ սաների համար: Այստեղ են մեծացել նաև 2007 թ. Թուրքիայում սպանված հայտնի հայ լրագրող Հրանտ Դինքը և նրա կին Ռաքել Դինքը: Հետագայում ճամբարը թուրքական իշխանությունների կողմից ապօրինաբար խլվել էր հայ համայնքի ձեռքից: 2015 թ. մայիսի 6-ի առավոտյան ճամբարի ներկայիս սեփականատիրոջ նախաձեռնությամբ սկսվել էր ճամբար-մանկատան ապամոնտաժումը, սակայն կարճ ժամանակ անց Թուրքիայի հայկական համայնքի սկսած բողոքի լայնածավալ միջոցառումների շնորհիվ շինության ապամոնտաժումը ժամանակավորապես հնարավոր եղավ դադարեցնել: Թուրքական «Ենի Շաֆաք» պարբերականի իր այունակում հայտնի լրագրող Ալի Բայրամօղլուն, ով նաև «Ներեցեք մեզ, հայեր» ակցիայի ակտիվ անդամներից է, բարձրացրել էր Ստամբուլի «Քամփ Արմեն» որբանոց-ճամբարի ոչնչացման հարցը: Բայրամօղլուն նշում էր, որ իրեն է զանգահարել Հրանտ Դինքի եղբայր Լևենթ Դինքը՝ խնդրելով բարձրաձայնել հայերի համար մեծ նշանակություն ունեցող որբանոցը քանդելու մասին: «Այս երկրում ոչ մուսուլմանների գույքին անվերջ տիրանալու համար ամեն ժամանակ իր տեխ-

---

[496] Տե՛ս Քարտաշյան Ա., «Փոքրամասնությունների՝ բռնագրավված անշարժ գույքը հետ վերադարձնելու վերաբերյալ «պատմական որոշմամբ» նախատեսված ժամանակահատվածը լրացավ» http://akunq.net/am/?p=24548

նիկան ունի»,-նշում էր հեղինակն ու օրինակներ բերում, թե ինչպես հանրապետական Թուրքիայի տարբեր ժամանակաշրջաններում պետությունը տիրացել է ազգային/կրոնական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի գույքին: «Մարդկանց բարձրացրած աղմուկը պետք է լսեն Թուրքիայի նախագահը, վարչապետը, ԵՄ հարցերի նախարարը, արտգործնախարարը: 1915-ի ցավակցությունը բավարար չէ: Խնդիրն այս ոչնչացմանն ու ավերմանը վերջ տալն է: Մի քանի օր անց կարող է շատ ուշ լինել», - գրում էր Բայրամօղլուն[497]: 2015թ. հոկտեմբերի 27-ին, երբ լրացավ ապամոնտաժումը թույլ չտալու նպատակով «Քամփ Արմեն»-ում սկսված հերթապահության 175-րդ օրը, ճամբարը վերադարձվեց հայ համայնքին և «Քամփ Արմեն»-ի սեփականության վկայականը հանձնվեց Գեդիքփաշայի Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամին[498]:

Հայկական կալվածքների հարցի վերաբերյալ «Ակունք»-ի հետ զրույցի ժամանակ «Ակօս» շաբաթաթերթի հայերեն բաժնի խմբագիր Բագրատ Էստուկյանը ցավով նշել էր, որ կատարվածի մեջ մեղավոր է նաև Պոլսո հայ համայնքը. «Դժբախտաբար մենք որպես համայնք այնքան էլ լավ կազմակերպված չենք: Հայտնի է, որ մեր արխիվները շատ անմխիթար վիճակում են: Մենք մեր ունեցվածքը ճշգրիտ չենք գրանցել և պահել, որպեսզի հարկ եղած դեպքում ներկայացնենք, թե այսինչ կալվածքն ունեինք, այսինչ թվականին այսպես եղավ, այնինչ թվականին էլ՝ այսպես, և անիրավորեն ձեռքներից խլեցին: Մենք դժվարացանք սա տվյալներով փաստել: Շատ քիչ հաստատություններ էին խնամքով կազմել իրենց կորցրած ինչքերի ցանկը, հետևաբար, կա մեզ հատուկ համայնքային թերացում: Մենք չպահանջեցինք մեր իրավունք-

---

[497] Տե՛ս Ali Bayramoğlu, “Kulak verin: Kültürü yıkmak, belleği aşağılamak…” http://www.yenisafak.com.tr/yazarlar/alibayramoglu/kulak-verin-kulturu-yikmak-bellegi-asagilamak-2010609

[498] Տե՛ս «Քամփ Արմեն»-ը վերադարձվեց հայ համայնքին. Ermenihaber http://www.azatutyun.am/archive/news/20151027/2031/2031.html?id=27329570

ների կարևոր մեծ մասը: Եվ այս պարագայում, հակառակ այն բանի, որ մեզանից որոշները համառորեն պայքարել են, սակայն մենք, որպես համայնքային իշխանություն, պահանջատեր չենք եղել, հետևաբար՝ այսօրվա եղելությունը դիտում ենք որպես կառավարության շնորհ, կառավարության բարի կամքի դրսևորում: Ճիշտ է, եթե կառավարությունը հակառակ դիրքորոշում որդեգրի, մենք անելու շատ բան չունենք: Պետք է նաև շեշտել, որ այս համայնքում եղել են մարդիկ, ովքեր պահանջել են իրենց իրավունքները, ձայն են բարձրացրել անարդարության դեմ, որքան որ հնարավոր է՝ դիմել են դատարաններ, թեև դատարաններն այս համակարգի մաս են կազմել և ոչ թե արդարությամբ են շարժվել, այլ՝ քաղաքականությամբ: Եթե այսօր կա որոշ առաջընթաց, ապա այդ մարդկանց պայքարի հետևանքն է, ցավոք, այսօր սրա մասին չեն հիշում: Օրինակ՝ իրավաբան Տիրան Բաքար կար, որ այս ուղղությամբ հսկայական աշխատանք է կատարել: Հրանտ Դինքը «Ակօս»-ում համառորեն հրապարակումներ է տպել այս անարդարության դեմ, բայց ո՛չ Տիրան Բաքարն էր այս համայնքի կողմից սիրված իրավաբան եղել, ո՛չ էլ Հրանտ Դինքը՝ սիրված լրագրող: Պատճառն այն է, որ այս համայնքի դիմագիծը ներկայացնողը առհասարակ պահպանողականներն են, և նրանք իրենց ձեռքից խլվածի համար այն գիտակցումն ունեն, թե «ինչ կարող ենք անել, պետություն է, եթե չուզի՝ ջուր էլ չի տա, ծարավ կմնանք»: Ահա այս հոգեբանության կրողն են: Միչդեռ մյուսները պայքարելու որոշ փորձ ունեն և պահանջատեր են: Պահպանողականները նաև միաժամանակ իշխանություն են ձեռք բերել, ներկայացնում են ստամբուլահայ համայնքը: Պատրիարքարանը պահպանողականների բերդն է, հասկանալի է, քանի որ եկեղեցի է: Մեր թաղական խորհուրդները, մեր բոլոր բարերարները ևս այդ պահպանողականների մասն են կազմում: Պահպանողականներն ունեն նույն հետաքրքրությունները ու մտայնությունը, ինչ որ Օսմանյան կայսրության ժամանակ մեր ամիրաների դասն ու մեծահարուստներն ունեին»[499]:

---

[499] Տե՛ս Քարտաշյան Ա., «Փոքրամասնությունների՝ բռնագրավված

«Քամփ Արմենի» օրինակը ցույց տվեց, որ ի հեճուկս թուրքական օրենսդրական բազմաթիվ խոչընդոտների՝ առանձին դեպքերում հետևողական պայքարը կարող է բերել հաջողության: Պոլսահայ փաստաբան Սեպուհ Ասլանգիլը շեշտում է, որ աշխարհի տարբեր երկրներում փոքրամասնությունների իրավունքները կարգավորելու համար տարբեր օրինավոր լուծումներ են եղել, սակայն Թուրքիան միշտ խուսափել է հարցին օրինականության տեսանկյունից մոտենալ: «Թուրքիան միշտ աշխատել է շրջանցել փոքրամասնությունների և նրանց իրավունքների հարցը, և, հատկապես դպրոցներ ունեցող հիմնադրամները բազմաթիվ նեղություններ են տեսնում, սա էլ ինքնին ԵՄ սկզբունքներին հակասող երևույթ է, - ասում է նա, - ճիշտ ճամփան հատուկ օրենք ձևավորելն է, որում, անշուշտ պատրիարքարանի կարգավիճակի հարցն էլ պիտի լուծվի, քանի որ Պոլսո պատրիարքարանը կարգավիճակ չունի և, հետևաբար, զրկված է կալվածք ունենալու իրավունքից»[500]: Ասլանգիլը նաև նշում է, որ մեր հիմնադրամներին պատկանող հողերի մեծ մասը խոշոր քաղաքների կենտրոնում են, մեծամասնությամբ՝ Ստամբուլում, և դա է պատճառը, որ պետությունը դրա վերադարձը դժվարացնում է, քանի որ դրանք մեծ արժեք ունեն:

Թե ինչ արժողությամբ ունեցվածք է բռնագրավել Թուրքիան կրոնական փոքրամասնություններից, կամ դրա որ մասն է հայկական, գնահատված չէ. փաստաբանը միայն հղում է անում Ռեջեփ Թայիփ Էրդողանի հայտարարությանը, որ այս ընթացքում 3-4 մլրդ. դոլարի ունեցվածք է հետ վերադարձվել:«Սա վերաբերվում է բոլորին, սակայն իրենք վերադարձրել են ընդամենը 10-15 տոկոսը, ընդ որում՝ այն գույքի, որոնք 1936թ. ցուցակներում են»[501],- նշում է Ասլանգիլը:

անշարժ գույքը հետ վերադարձնելու վերաբերյալ «պատմական որոշմամբ» նախատեսված ժամանակահատվածը լրացավ» http://akunq.net /am/?p=24548

[500] Նույն տեղում:

[501] Նույն տեղում:

Մեկ տարվա ընթացքում իրավական ուժ ունեցող 5737 օրենքի 17-րդ հոդվածի 11-րդ ժամանակավոր ենթահոդվածով նախատեսված դիմումների ընդունումը ավարտվել է 2012թ. օգոստոսին, սակայն դիմումները քննելու ընթացքը շարունակվում է: «Տարբեր գործերի վերաբերյալ բազմաթիվ տարակարծություններ կան, որոնք դատական համակարգով շարունակվում են, բայց անոնց դատը ներկա օրենքներով լուծման ենթակա չեն և բողոքարկվում են ՄԻԵԴ-ում», - ասում է Ասլանգիլը[502]:

Մինչ համայնքների գույքի վերադարձման հարցը դեռ մնում է չլուծված, թուրքական իշխանությունները փոքրամասնություններին պատկանող կալվածքների բռնագրավման նոր նախադեպեր են ստեղծում: Այսպես, Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից պետականացման որոշում էր ընդունվել շուրջ 6.300 տարածքի ու անշարժ գույքի վերաբերյալ, որոնց շարքում են հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին, ասորական ու բողոքական եկեղեցիները:

Հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին գրեթե 100-ամյա լքվածությունից հետո ամբողջովին վերաբացվեց 2012 թ. նոյեմբերի 3-ին, ինչից հետո այն դարձավ տեղի հայերին միավորող կարևորագույն կենտրոն: Վերանորոգման ծախսերի մեծ մասը հոգացել էին թուրքահայ մեկենասները, մի մասն էլ տրամադրել էր Դիարբեքիրի քաղաքապետարանը: Սբ. Կիրակոսը Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին է: Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցու հիմնադրամը դատական հայց է ներկայացրել եկեղեցին պետականացնելու մասին Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշումը չեղյալ հայտարարելու պահանջով: Թուրքիայի կառավարության և տարածքային կառավարման ու քաղաքաշինության նախարարության դեմ ներկայացված դատական հայցում նշվում է, որ այդ որոշումն ամբողջությամբ հակասում է օրենքին: «Եկեղեցիները և վանքերը հա-

[502] Տե՛ս Հայ ունեցվածքի ճակատագիրը Օսմանյան կայսրությունից ցայսօր https://annamuradyan.wordpress.com/2013/12/21/armenian-property-since-otoman-empire-by-now/

տուկ պահպանության տակ գտնվող մշակութային և բնական ժառանգությունների ցանկում են: Նշյալ անշարժ գույքերը պետականացնելու ժամանակ պետք է կիրառվի «Մշակութային և բնական ժառանգության պահպանման մասին» օրենքը: Նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշմամբ կոպտորեն խախտվել է նշյալ օրենքը»,- ասվում է հայցադիմումի մեջ: Դիմումի մեջ հղում է կատարվել նաև Լոզանի պայմանագրին. «Լոզանի պայմանագրով ազգային փոքրամասնությունների համար հավասար իրավունքներ է նախատեսված բարեգործական, կրոնական և սոցիալական կազմակերպություններ հիմնելու, ղեկավարելու և դրանք վերահսկելու հարցում: Մասնավորապես պայմանագրի 42-րդ հոդվածով Թուրքիայի կառավարությունը երաշխավորում է փոքրամասնությունների եկեղեցիների ու կրոնական կառույցների պաշտպանությունը: Պետականացման որոշումը հակասում է Լոզանի պայմանագրին և սահմանադրության 90-րդ հոդվածին»[503]:

Այսպիսով, տասնամյակներ շարունակ ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների՝ վաքֆների հարցում Թուրքիայի Հանրապետության վարած քաղաքականությունը արտացոլում էր պետության կողմից նրանց նկատմամբ որդեգրած խտրական մոտեցումները և նպատակ ուներ հնարավորինս կրճատել դրանց կշիռն ու ազդեցությունը: Սակայն ԵՄ-ին անդամակցելու թեկնածու-երկիր դառնալուց հետո Թուրքիան արտաքին ճնշման տակ ստիպված էր այս հարցը ընդգրկել բարեփոխումների օրակարգում: 2003-2011 թթ. ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք տեսականորեն լուծեցին առկա խնդիրների մի մասը: Սակայն իշխանությունները չդրսևորեցին հետևողականություն դրանց գործնական կիրառությունը ապահովելու համար, ավելին վարչարարական համակարգը ամեն կերպ փորձեց տապալել դրանք: Որպես հետևանք բարեփոխումների իրագործումը գրեթե ձախողվեց: Ավելին, թուրքական իշխանությունների վերջերս ընդունած որոշումը՝ հայկական Սուրբ Կիրակոս եկեղե-

[503] Տե՛ս Դիարբեքիրի հայկական Սբ. Կիրակոս եկեղեցու հիմնադրամը դիմել է դատարան http://akunq.net/am/?p=50092

ցին, ասորական ու բողոքական մի շարք եկեղեցիները պետականացնելու վերաբերյալ տագնապալի ցուցիչ է առ այն, որ Թուրքիան փորձում է վերադառնալ ազգային փոքրամասնությունների գույքազրկման իր ավանդական քաղաքականությանը:

2005 թ. Թուրքիայի կադաստրային վարչությունը ձեռնամուխ եղավ իր գերատեսչության շրջանակում գտնվող, օսմանյան շրջանի փաստաթղթերի թուրքացման, թվայնացման և հետագայում՝ Պետական արխիվային գլխավոր վարչությանը հանձնելու TARBIS ծրագրին: Այդ աշխատանքները իրականացնելու ընթացքում ի հայտ էին եկել որոշ փաստաթղթեր, որոնց մասին վարչությունը տեղեկացրել էր Ազգային Անվտանգության Խորհրդին: 2005 թ. օգոստոսի 26-ին գաղտնի նամակով ԱԱԽ Զինակոչի և պատերազմական գործողությունների նախապատրաստման պլանավորման բաժնի ղեկավար՝ բրիգադային գեներալ Թայյար Էլմասը հայտարարում է, որ մատյաններում առկա տեղեկությունները էթնիկ և քաղաքական, այն է՝անհիմն ցեղասպանության պնդումներ, օսմանյան վակուֆների պահանջներ և նմանատիպ այլ անցանկալի շահարկումների տեղիք կարող են տալ, ուստի նպատակահարմար է այդ նյութերը գաղտնի պահել և սահմանափակ անձանց կողմից օգտագործելու իրավունք տրամադրել[504]:

Տեղեկատվական արտահոսքի հետևանքով այս նյութը հայտնվել էր որոշ թուրքական թերթերի էջերում պարզաբանումներով, որ մատյաններում նշված էին, անուն առ անուն, այն մարդկանց ցուցակները, որոնք անշարժ գույքի տեր են եղել Թուրքիայում՝ նախկան 1915 թ. դեպքերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օսմանյան պետությունում դարերի ընթացքում մշակվել էր ռայաներից հարկ հավաքելու նպատակով մանրակրկիտ գրառումներ կատարելու պրակտիկան, կարելի է չկասկածել, որ հայտնաբերված ցուցակները իրոք «վտանգ» էին ներկայացնում այսօրվա Թուրքիայի համար:

---

[504] Տե՛ս «Osmanlı arşivleri açılırsa resmi tez zayıflar» , www.ulkucuderlerbize .com/forum/-t

Ի դեպ, երիտասարդ հետազոտողների մի խումբ դիմել էր Հողի և փախստականների տեղավորման վարչության արխիվ՝ (Toprak ve Iskan Genel Müdürlüğü) տվյալներ ստանալու համար: Դիտարկվել էին Kilis, Antakya և Idlib (Cisr-i Şugur) բնակավայրերի տեղական արխիվային նյութերը: Այստեղ առկա էին բազմաթիվ նշանակություն չունեցող փաստաթղթեր, նաև մանրամասն գույքացուցակներ՝ կով, ալրաղաց, կոշիկ, կահկարասի և այլն, որոնց տերերի անունները բացակայում էին[505]:

Այսպիսով, հայերի «լքյալ գույքի» թեման դարձավ Թուրքիայի հանրային քննարկման առարկա: «Nor Zartonk» կազմակերպության կարծիքով, լուսահոգի Հրանտ Դինքի՝ թուրք իշխանություններին նետած մարտահրավերից կարևորագույնները երեքն են.

1. 1915 թ. հայերի հանդեպ իրականացրածը ցեղասպանություն էր:

2. Հայ որբերի ճակատագիրը՝ «թաքուն» հայեր, բռնի իսլամացում, «թուրք ինքնության ճգնաժամ»:

3.Ի՞նչ եղավ հայերի գույքի հետ:

Հրանտ Դինքը՝ 2005 թ. «Ռադիկալ» օրաթերթի լրագրող Նեշե Դյուզելին տված հարցազրույցի ժամանակ ասեց. «Հայոց գույքի խնդիրն իրականում ներկա պահին Թուրքիայի՝ ապագային վերաբերող ամենասարսափելի, ամենաահավոր հարցն է…»: «Իսկ ինչու՞» հարցին հետևյալ պատասխանն էր տվել.«Որովհետև կբացահայտվեն անհավատալի ճշմարտություններ: Եթե հարց բարձրացվի, թե ում միջև է բաժանվել հայերից մնացած գույքը, և «ում ինչ է պատահել», դա շատ մեծ ցնցում կհարուցի»[506]: Այս երրորդը, թերևս ամենավտանգավո-

---

[505] Տե՛ս Sait Çetinoğlu, « Ermeni Emval-i Metrukeleri Üzerine -1 », www.nor zartonk.org/xml

[506] Տե՛ս Neşe Düzel, “Neden? Hrant Dink”, www.radical.com.tr/haber.php?/ 2005/05/23

Տես նաև Ayşe Hür, “Ermeni mallarını kimler aldı?”, www.taraf.com.tr/ayse-hur/makale/2008/02/03

ը թուրքական «derin devleti»՝ խորքային պետության համար, պատճառ դարձավ նրա սպանությունն իրագործելու համար:

Ամփոփելով վերը նշվածը, արձանագրենք հետևյալ կարևոր իրողությունները.

1. Միջազգային իրավունքի հայտնի մասնագետ Ալֆրեդ դե Զայասի կարծիքով, հանցագործության «պտուղներից» գիտակցաբար օգտվելը նույնպես պատասխանատվություն է առաջացնում[507]: Բացի դրանից, հանրապետական Թուրքիայի իշխանությունները նույնպես ազգային փոքրամասնությունների նկատմամբ շարունակեցին երիտթուրքերից ժառանգած հալածանքների, վտարման և ունեզրկման քաղաքականությունը:

2. «Թուրք ազգային ինքնությունը» խարսխված է պատմության խեղված ներկայացման վրա: «Հպարտ թուրքը, որը ժառանգորդն է անկախության համար մղված պայքարի» արդյոք կուզենա՞ իրեն տեսնել որպես ժառանգորդ հանցագործի, մարդասպանի, կողոպտիչի: Գուցե բացարձակ ժխտումը ավելի՞ ձեռնտու է: Մանավանդ որ փոխհատուցման խնդիր կծագի: Ինչպես նշում է թուրք հրապարակախոսներից մեկը այսօր Հայոց ցեղասպանության ճանաչումը նշանակում է ամեն ինչ դնել սեղանին. հանրապետությունը, քեմալիզմը, պետությունը, պետական գաղափարախոսությունը, Թուրքիայի ռեժիմը, ղեկավարներին, քաղաքական համակարգը, բանակը, ուսումնական ծրագրերը և այլն[508]: Թուրք պատմաբաններ Թաներ Աքչամը և Ումիթ Քուրթն իրենց «Օրենքների ոգին. «Լքյալ գույքի» մասին օրենքներում ցեղասպանության ձգվող հետքը» գրքում[509] պնդում են, որ հայերի ողջ ունեցվածքի զավթումը կարևորագույն դեր է խաղում Հայոց ցեղասպանության ժխտողականության մեջ: Հարցազրույցներից մեկում Թ. Աքչամը նշում է. «Եթե պետությունը 1915 թ. իրագործած հանցագոր-

---

[507] Alfred de Zayas, The Genocide against Armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide Convention, Brussels-Geneva, 2005, p. 27.

[508] Erol Özkoray, “Ermeni Soykırımı niçin hâlâ tabu?”, *KÜYEREL,* 10.03.2010.

[509] Taner Akçam, Ümit Kurt, *Kanunların Ruhu. Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek*, İletişim Yayınları, Istanbul 2012

ծությունները ճանաչի, հարկադրված կլինի ընդունել նաև այդ մարդկանց կրած վնասները հատուցելու անհրաժեշտությունը: Դրա համար էլ նախընտրում է ժխտել: Մենք նաև բացահայտեցինք մեկ այլ ճշմարտություն, որի մասին դեռ ոչ ոք չգիտի: Դա ևս շատ ուշագրավ կետ է իրականում: Մենք ցույց տվեցինք, որ «Լքյալ գույքերի» առնչությամբ հրապարակված բոլոր օրենքներում ու որոշումներում թե՛ օսմանյան կառավարությունը և թե՛ հանրապետական շրջանի կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են: Կառավարությունները կա՛մ ասել են, թե հայերի գույքը բռնագրավվում է՝ «դրա արժեքը տիրոջը հատուցելու համար», ինչպես դա երևում է իթթիհադականների օրինակում, կա՛մ էլ հայտնել, թե «քանի որ գույքի իրական տերերը վերացել են, ապա մենք ժամանակավոր կերպով տիրոջ անունից տեր ենք կանգնում այդ ունեցվածքին, որպեսզի վնաս չհասցվի դրան»: Այդ պատճառով էլ երկու ժամանակաշրջաններում էլ կրկնվել է այն սկզբունքը, ըստ որի՝ հայերին անպայման տրվելու է կա՛մ գույքի փոխհատուցում, կա՛մ էլ՝ հենց ունեցվածքն ինքը: Դա է օրենքների էությունը: Ուշագրավ է, որ հատկապես հանրապետական շրջանում հրապարակված օրենքներից ոչ մեկում չի ասվում՝ «մենք բռնազավթել ենք այս գույքը. այն հայերինը չէ»: Նշվում է, թե «դրանք ղեկավարվել են հայերի անունից»: Այսինքն՝ մեր ձեռքի տակ գտնվող օրենքների համաձայն ևս կառավարությունը հարկադրված է հայերին վերադարձնել նրանց ունեցվածքը կամ տալ դրա հատուցումը»[510]:

Այսպիսով, հայերը, ցեղասպանության զոհերի ժառանգները, տեսականորեն հնարավորություն կարող են ստանալ փոխհատուցման պահանջ ներկայացնելու, ուստի հայության կարևորագույն խնդիրներից մեկն է՝ ձեռնամուխ լինել պա-

---

[510] Տե՛ս Աքչամ Թ., Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են, http://akunq.net/am/?p=26815&print=1#comments_controls#comments_controls

հանջատիրության լուրջ և մանրակրկիտ իրավաբանական-փորձագիտական հայեցակարգի և փաթեթի ձևավորմանը:

5.2. Հայոց ցեղասպանության իրագործմամբ Արևմտյան Հայաստանի հանքահումքային ռեսուրսների շահագործումից տեղաբնիկ հայ ժողովրդին զրկելն ու դրա հետևանքները

Ցայսօր համաշխարհային ցեղասպանագիտության ասպարեզում այդ հանցագործության հետևանքների հաղթահարման տարբեր հարցերի (բարոյական, տարածքային, նյութական, դրամական և այլն), ինչպես նաև հատուցում տրամադրելու միջազգային իրավական մեթոդաբանական չափորոշիչների և մեխանիզմների մշակման շրջանակներում դեռևս քննարկման առարկա չի դարձել ցեղասպանության կամ էթնիկ զտման հետևանքով տեղաբնիկ ժողովուրդների բնակության տարածքի ընդերքում առկա օգտակար հանածոների շահագործման անհնարինությունից առաջացած նյութական և դրամական վնասների դիմաց վերջինիս հատուցում տրամադրելու հարցը: Այս հարցը չի քննարկվել Հայոց ցեղասպանության նյութական կորուստների և դրանց հաղթահարման խնդիրներին նվիրված գիտական հրապարակումներում[511], ինչպես նաև միջազգային փորձագիտական խմբի կողմից պատրաստված Հայոց ցեղասպանության հատուցման զեկույցում[512]:

---

[511] Տ՛ես Baghdjian K. K., La confiscation par le gouvernement turc des biens Arméniens… dits abandonnés, préface Y. Ternon, Montréal, 1987, Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1999; Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ. Եր., «Նաիրի», 2013:

[512] Տ՛ես Alfred de Zayas, Jermaine McCalpin, Ara Papian, and Henry Theriault "Resolution with Justice: Reparations for the Armenian Genocide," The Report of the Armenian Genocide Reparations Study Group, p. 125. Available at: www.armeniangenocidereparations.info', last accessed: April 13, 2015.

Ընդերքի մասին միակ հիշատակումը վերաբերում է ցեղասպանության զոհ դարձած և տեղահանված հայերի կողմից իրենց բնակավայրերի մոտակայքում հապճեպ թաղված անձնական կամ հավաքական բնույթի ոսկե և արծաթե իրերից պատրաստված գանձերի և ժամանակակից Թուրքական պետության՝ որպես Օսմանյան կայսրության իրավաշարունակողի այդ ձեռակերտ գանձերի նկատմամբ հնարավոր նյութական պատասխանատվությանը[513]: Ակնհայտ է, սակայն, որ Արևմտյան Հայաստանի տարածքի օգտակար հանածոների հանրագումարային արժեքն* ընդերքում թաքցրած ձեռակերտ բոլոր գանձերի արժեքից անհամեմատ մեծ է: Ընդ որում, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման այսօրինակ հարցում պետք է նկատի ունենալ հայ ժողովրդի կրած ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի նյութական և դրամական կորուստներն ու վնասները:

Ուղղակի կորուստներ ասելով, հասկանում ենք այն նյութական վնասը, որը ցեղասպանության հետևանքով հասցվել է այս կամ այն հայազգի կապալառու կամ սեփականատեր հանքարդյունաբերողին, որոնց օրինական իրավունքները ոտնահարվել էին ինչպես Արևմտյան Հայաստանի և դրա մի մասը կազմող Վիլսոնյան Հայաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներում:

Օրինակ՝Արևմտյան Հայաստանի տարածքից դուրս, Բուրսայի նահանգում, այսօրինակ խոշոր հանքարդյունաբերողներից էին Տրդատ Տատյանը (1860-1916 թթ.), ով զբաղվում էր պղնձի, երկաթի և արծաթի հանքավայրերի գնմամբ և շա-

---

[513] Տ՛ես Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, էջ 31:

* Օգտակար հանածոները բնական ռեսուրսների մի կարևոր մաս են և որպես ազգային հարստություն, այսինքն՝ կուտակված նյութական և ոչ նյութական ակտիվների համակցության մի կարևոր բաղադրիչ, պատկանում են երկրին կամ նրա ռեզիդենտներին և կարող են գտնվել ինչպես այս կամ այն երկրի տնտեսական տարածում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, որը կարող է դիտարկվել որպես ազգային ունեցվածք: Տե՛ս Հակոբյան Հ.Մ., Ազգային հարստության վիճակագրություն, Եր., 2004, էջ 9:

հագործմամբ, Հակոբ Կարապետյանը, Հովհաննես Մարկոսյանը, ովքեր Էսկիշեհիրի շրջակայքում զբաղվում էին ծովային փրփրաքարի (սապոլիտ) հանքավայրերի շահագործմամբ և արտահանմամբ, իսկ այդ փրփրաքարից ծխամորճ արտադրող և այդ արտադրանքը եվրոպական շուկաներ արտահանող Օսմանյան կայսրության միակ գործարանը պատկանում էր հայազգի Թոմաս Չուքուրյանին[514]: Կայսրության արևմտյան նահանգներում՝ Ափիոն-Կարահիսար քաղաքի մերձակայքի Բանազի բարձրարժեք մարմարի հանքավայրը առավելապես շահագործվում էր ոմն վաճառական-արդյունահանող Ըշլյանի կողմից[515]: Ցեղասպանության իրագործմամբ այս ձեռնարկատերերը, ինչպես նաև նրանց ժառանգները զրկվել են հանքաարդունաբերությամբ զբաղվելու և դրանից եկամուտներ ստանալու հնարավորությունից:

Արևմտյան Հայաստանի տարածքում հանքաարդյունաբերության տարբեր ճյուղերում ևս գործում էին առնվազն մի քանի տասնյակից ավելի հայազգի գործարարներ, այսպես՝ Կողբի հանրահայտ աղահանքերի կապալառուները Միրիմյաններն էին, Խուդաբաշովները, հետագայում՝ Ջանփոլադյանները, Արղանամադենի պղնձի հանքավայրերի կապալառուներն Արփիարյան գերդաստանի ներկայացուցիչներն էին, Ճիտէշեան (Ճիտեջյան) եղբայրները Վանա լճից արդյունահանում էին բորակ (սոդա), իսկ Տրապիզոնի նահանգի Ծինկալա արծաթաբեր հանքավայրի շահագործմամբ զբաղվում էին կապալառու Մարմարյան եղբայրները և այլն*:

Անուղղակի նյութական հանքարդյունաբերական կորուստներ ասելով, հասկանում ենք տեղաբնիկ հայ բնակչութ-

---

[514] Տ՛ես Աստոյան Ա., Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին. Երևան, ՀՀ ԳԱԱ, 2017, էջ 34, 128:

[515] Տ՛ես Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում 15-րդ դ. – 1915թ. Փաստերի ժողովածու, կազմ. Խ. Դադայան, Երևան, «Գասպրինտ», 2012, էջ 25:

* Արևմտյան Հայաստանի հանքարդյունահանողների մասին ավելի մանրամասն տե՛ս սույն մենագրության այս կամ այն օգտակար հանածոյին նվիրված համապատասխան հատվածներում:

յանը բնաջնջելու հետևանքով վերջինիս հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի տարածքների ընդերքում առկա տարբեր օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումից ստացված եկամուտների հնարավոր մասնաբաժնից հարկադրաբար զրկվելը: Օսմանյան կայսրության հանքաարդյունաբերության ոլորտում ունեցած լուրջ դերակատարումը հաշվի առնելով, միանգամայն ենթադրելի է, որ չբնաջնջվելու և բնական աճի շարունակության պարագայում հայերն իրենց մասնակցությունն էին ունենալու Արևմտյան Հայաստանի առնվազն հայ բնակչությամբ խիտ բնակեցված տարածքների հանքավայրերի շահագործմանը: Տեղաբնիկ հայ ժողովրդի ցեղասպանության իրագործման և նրա հայրենիքի մեծագույն մասի բռնազավթումով թուրքական իշխանություններն արևմտահայերին ու նրանց ժառանգներին զրկեցին նաև իրենց հայրենի տարածքի բնական պաշարների շահագործումից ստացվելիք պոտենցիալ շահույթներից օգտվելու հնարավորությունից, ինչը ծանրակշիռ փաստարկ է Թուրքիայի կողմից առնվազն Արևմտյան Հայաստանի նահանգներում բնակված նախկին օսմանահպատակ հայերի ժառանգներին այդ տարածքներում շահագհործվող հանքերից ստացվող եկամուտներից նյութական-դրամական հատուցումներ տրամադրելու հարցում:

Այս առումով խոսքը վերաբերում է նաև Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներին, որոնք 1920 թ.-ի նոյեմբերի 22-ի ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով հայ-թուրքական սահմանազծմամբ Հայաստանի առաջին Հանրապետությանը չէին միացվում: Օրինակ, մինչև Մեծ Եղեռնը ավելի քան 200.000 հայ բնակչություն ունեցող Խարբերդի նահանգի հայաթափված տարածքում (պատմական Ծոփք) 1936 թ. հայտնաբերվել են քրոմիտի հսկայածավալ հանքավայրեր (Գուլեյմանի հանքային հանգույց), որտեղից մինչև 2015 թ. ներառյալ արդյունահանվել ու հիմնականում արտահանվել է մոտ 13 մլրդ դոլարի քրոմիտի հանքանյութ և վերամշակված քրոմիտ (ֆեռոքրոմ): Եթե Խարբերդի նահանգի շուրջ 200 հազար օսմանահպատակ

հայ բնակչությունը[516] չբնաջնջվեր, ապա միայն բնական աճի շնորհիվ ներկայումս ամենահամեստ հաշվարկներով կկազմեր մոտ 0.5-0.7 մլն մարդ և, հետևաբար, նշված 13 մլրդ դոլար հանքային հարստության շահագործումից ստացվող շահույթի նվազագույնը 6-10 % (զուտ շահույթ) ամենայն հավանականությամբ բաժին էր հասնելու տեղաբնիկ հայերին:

Կարծում ենք, որ հետագայում իրավաբան միջազգայնագետների կողմից հայ ժողովրդի հավաքական ունեցվածքի այս նորահայտ ասպեկտի իրավական հիմքերի հիմնավորման և թուրքական պետությանը պահանջներ ներկայացնելու համար ամենայն հավանականությամբ հնարավոր կլինի կիրառել ժամանակակից միջազգային իրավունքում ամրագրված պետությունների պատասխանատվության ձևերն ու տեսակները՝ կոմպենսացիա, ռեստիտուցիա, սատիսֆիկացիա[517]:

Միջազգային իրավունքի տեսակետից միանգամայն այլ կարգավիճակ ունեն թուրքական պետության կազմում մնացած Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգների մեծագույն մասը, Տրապիզոնի նահանգի մեկ երրորդ մասը, ինչպես նաև Կարսի մարզը: Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանի Վանի, Էրզրումի և Բիթլիսի նահանգները, ինչպես նաև Տրապիզոնի նահանգի մեկ երրորդ մասը միջազգային իրավարարությամբ՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռով միացվել էր Հայաստանի առաջին Հանրապետությանը, իսկ Կարսի մարզը ընդհուպ մինչև 1921թ. Մոսկվայի ու Կարսի ապօրինի պայմանագրերի ստորագրումը Հայաստանի Հանրապետության ան-

---

[516] Տ՛ես Բաբլումյան Ա., Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչությունը XIX դարի վերջին – XX դարի սկզբին (պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2017, էջ 201:

[517] Տ՛ես Բաղդասարյան Ա., Հայոց Ցեղասպանության հատուցման հնարավոր ձևերի հիմնախնդիրների շուրջ Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները Ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները, «Հայ ժողովրդի ժողովրդագրական և նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում և դրանց հատուցման հիմնախնդիրները», գիտական հոդվածների ժողովածու, խմբագիր Ա. Մարուքյան, Եր., ՀՀ ԳԱԱ, 2015, էջ 157-167:

բաժան մասն էր կազմում[518]: Ասվածից բխում է, որ ցեղասպանությունից տուժած հայ ժողովուրդն ու նրա իրավունքների ու շահերի արտահայտիչ ներկայիս Հայաստանի Հանրապետությունն առավել հիմնավոր պահանջ ներկայացնելու իրավունք ունի թուրքական պետությանը, որ վերջինս հատուցում տրամադրի նշված տարածքներում տեղակայված օգտակար հանածոների հանքավայրերի տասնամյակներ շարունակ շահագործումից ստացած շահույթների դիմաց և մասնաբաժին հանի ինչպես արդեն շահագործվող, այնպես էլ դեռևս չշահագործված հանքավայրերի ակնկալվող շահույթներից:

Կարևոր է նշել, որ ներկայիս թուրքական պետությունը, որպես Օսմանական կայսրության իրավաշարունակող, որոշ օգտակար հանածոների (պղինձ, քարաղ, ծծումբ) արդյունահանումը և վաճառահանումը ամբողջապես, իսկ որոշները (պեռլիտ, պեմզա, քրոմիտ, լիգնիտ, ցինկ և այլն) մասնակիորեն իրականացրել է և մինչ այժմ իրականացնում է պետական կազմակերպությունների, այլ ոչ թե մասնավոր կապալառուների միջոցով: Այս հանգամանքն ավելի հիմնավոր է դարձնում առնվազն Վիլսոնյան Հայաստանի և Կարսի մարզի տարածքներում տեղակայված օգտակար հանածոների հանքերի շահագործումից թուրքական պետության ստացած շահույթից ներկայիս Հայաստանի Հանրապետության կողմից պահանջի ներկայացնելը:

Ինչպես հայտնի է, Հայկական լեռնաշխարհի զգալի մասը կազմող Արևմտյան Հայաստանի նահանգների տարածքը չափազանց հարուստ է բազմատեսակ ինչպես մետաղական, այնպես էլ ոչ մետաղական օգտակար հանածոներով: Հայ ժողովուրդը, հազարամյակներով ապրելով և արարելով իր հայրենի բնօրրանում, դեռևս վաղնջական ժամանակներից մշտապես օգտվել է այնտեղ առկա հարուստ բնական պաշարներից և շահագործել դրանք:

---

[518] Տ՛ես Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 279:

Հայկական լեռնաշխարհում նախնադարյան մարդու կողմից օգտագործված առաջին օգտակար հանածոն, ամենայն հավանականությամբ, կայծքարին էր, որն օգտագործվել է դեռևս վաղ պալեոլիթում: Այսպես, օրինակ, Ուրֆայի վիլայեթի Բիրիջիք լեռան շրջակայքում դեռևս 20րդ դարի սկզբներին հայտնաբերվել են բաց գույնի կայծքարից պատրաստված աշելյան տիպի ձեռքի հատիչներ[519]: Կարս քաղաքից քիչ հյուսիս՝ Սուսուզ լեռան շրջակայքից գտնված աշելյան տիպի ձեռքի հատիչը պատրաստված է տրախիտից (պորֆիրային կառուցվածքով արտավիժված ապար)[520]: Ավելի ուշ՝ ամենայն հավանականությամբ սկսած ստորին պալեոլիթի վերին աշելյան ժամանակահատվածից մինչև բրոնզե դար, Հայկական լեռնաշխարհի տարածքում շատ լայն տարածում են ստանում հրաբխային ապակուց՝ վանակատից (օբսիդիանից) պատրաստված աշխատանքային գործիքներ:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում այս քարատեսակի հարստությամբ և բազմազանությամբ առանձնապես աչքի է ընկնում Վանա լճի հյուսիս-արևմտյան մերձակայքը (Նեմրութ, Սիփան և այլն), որտեղի օբսիդիանն առաջացել է վերը նշված հանգած հրաբուխների ժայթքումների հետևանքով: Վանա լճի անունից է առաջացել այս քարատեսակի հին հայկական անվանումը՝ վանակատ[521]: Վանա լճի օբսիդիաններից պատրաստված միջին հին քարե դարի (պալեոլիթի) մուստյե (մոտ 130-40 հազ տարի առաջ ընկած ժամանակահատված) աշխատանքային գործիքներ են գտնվել Վանի և Կարսի շրջակայքներում[522]: Վերին պալեոլիթում (մոտ 40-12 հազար տարի առաջ ընկած ժամանակահատված), միջին քարե դարում (մեզոլիթում)՝ (համապատասխանաբար՝ մոտ 12-9

---

[519] Եսայան Ս. Ա., Հայաստանի հնագիտություն պրակ. 1, Եր., ԵՊՀ, 1992, էջ 45:

[520] Любин В.П., Палеолит Турции и проблема раннего расселения человечества. Советская археология, XXVII, 1957, с. 87.

[521] Կարապետյան Ս., Մելքումյան Ա., Օբսիդիան, «Գիտություն և տեխնիկա», 1984, N 7, էջ 30, 32:

[522] Лэнг Д. М., Берни Ч. Древний Кавказ от доситорических поеселений Анатолии до христианских царств раннего средневековья. М. 2016, с. 41.

հազար տարի), նոր քարե դարում (նեոլիթում)՝ (մոտ 9-6 հազ տարի) և պղնձե քարե դարում (էնեոլիթում)՝ (6-4 հազ տարի) ամբողջ Մերձավոր Արևելյան տարածաշրջանում առանձնապես հռչակված էին Վանա լճի արևմտյան մերձակայքի Նեմրութ հանգած հրաբխի օբսիդիանները, որոնք, ըստ որոշ տվյալների, աչքի էին ընկնում կանաչավուն երանգներով, իսկ մեկ այլ տեղեկության համաձայն՝ Վանի շրջակայքի օբսիդիաններն ընդհանրապես շագանակագույն պուտերով էին պատված[523]: Նեմրութի կանաչավուն օբսիդիաններից պատրաստված աշխատանքային գործիքներ հայտնաբերվել են այդ հրաբխից մոտ 300 կմ հարավ-արևելք գտնվող հյուսիսային Իրաքի հանրահռչակ Շանիդար վերին պալեոլիթյան քարայրի C մշակութային շերտից, որը թվագրվում է մոտ 30 հազար տարով[524]:

Սկսած վերին պալեոլիթի վերջերից մինչև նեոլիթի վերջ՝ ներառյալ հալաֆյան մշակույթը (14-6 հազար տարի առաջ) ամբողջ Մերձավոր Արևելքի հնագույն քաղաքակրթության հայտնի կենտրոններին օբսիդիան էին մատակարարում հիմնականում Վանա լճի շրջակայքից: Այդ ժամանակահատվածում նկատվում է օբսիդիանի աշխույժ և մեծաքանակ առևտուր, և Վանա լճի՝ առավելապես Նեմրութի օբսիդիանը, արտահանվում էր մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը (Երիքով, Բեյդա) և Պարսից ծոցի հյուսիսային ափամերձ շրջաններ՝ Նեմրութից մինչև 1200 կմ հարավ-արևելք՝ Թալի--Բակուն, Ալ-Կոշ[525]:

---

[523] Տե՛ս նույն տեղում, էջ 73, տե՛ս նաև Ибрагимова Э.Р., К вопросу о распространении обсидиана в северной Мессопотамии IV-III тыс. до н.э. по данным арехологии. Вестник археологии, анторпологии и этнографии 2016, N 1, с. 30.

[524] Տե՛ս Лэнг Д. М., Берни Ч. Древний Кавказ от доситорических поеселений Анатолии до христианских царств раннего средневековья, с. 41, տե՛ս նաև Chataigner C., Poidevin J.L., Arnaud N.O. Turkish Occurences of Obsidian and by Prehistoric Peoples' in the Near East from 14,000 to 6,000 BP. Journal of Volcanology and Geothermal Research 85, 1998, p. 533.

[525] Տե՛ս Chataigner C., Poidevin J.L., Arnaud N.O. Turkish Occurences of Obsidian and by Prehistoric Peoples' in the Near East from 14,000 to 6,000 BP, p. 531,

Նեմրութի կանաչավուն օբսիդիանից պատրաստված շեղբերն ու ծլեփները հայտնի են նաև Վանա լճի հարավ-արևելյան ափամերձ՝ Շամիրամալթի (Թիլիկ-Թեփե) բնակատեղի ուբեյդյան խեցեղենով (մ.թ.ա. V հազ. վերջ - IV հազ. սկիզբ) բնութագրված մշակութային շերտերից[526]:

Էնեոլիթից սկսած Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է նաև տարաբնույթ մետաղների՝ պղինձ, ոսկի, արծաթ, կապար, երկաթ և այլն արդյունահանման և մետաղաձուլման կենտրոններից մեկը[*]: Դիարբեքիրի նահանգի Արղանամադենի բնակավայրի պղնձահանքերը շահագործվել են արդեն իսկ մեր ժամանակներից մոտ 9000 տարի առաջ և ներկայումս համարվում են աշխարհի ամենահին պղնձահանքերը:

Անտիկ շրջանում լայն ճանաչում ունեին Բարձր Հայքի Սպերի գավառի (Ճորոխ գետի ավազան) ցրոնային ոսկու հանքավայրերը, որոնք ավելի քան մեկ հազարամյակ (մ. թ. ա. XIII դարից մինչև մ. թ. I դարը) ինտենսիվ շահագործվել են[527]: Ինչպես հայտնի է, այս հանքավայրին տենչացել է տիրանալ Ալեքսանդր Մակեդոնացին, սակայն դա նրան չի հաջողվել:

Չնայած Պատմական Հայաստանի տարածքի ընդերքի հարստությանը՝ հայ պատմիչները բավական կցկտուր տեղեկություններ են հաղորդում Արևմտյան Հայաստանի օգտակար հանածոների մասին և իրենց աշխատություններում ուրվագծել են հանքավայրերի տեղակայման մոտավոր շրջանները, ինչն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր այդ հանքավայրերի հույժ կարևոր, ռազմավարական նշանակությամբ, ուստի դրանց վերաբերյալ տեղեկությունները պարուրված էին որոշակի գաղտնիությամբ: Այդուհանդերձ, Վա-

---

տե՛ս նաև Խնկիկյան Օ.Ս. Հայաստանի հնագիտություն. Երևան, Ասողիկ, 2009, էջ 179:

[526] Տե՛ս Եսայան Ս. Ա., Հայաստանի հնագիտություն, պրակ. 1, Երևան, ԵՊՀ, 1992, էջ 79, տե՛ս նաև Мелларт Дж. Древнейшие цивилизации Ближнего Востока, М., Наука, 1982, с. 117.

* Պղնձի, ոսկու և արծաթի մասին մանրամասն տե՛ս ստորև՝ համապատասխան հատվածներում:

[527] Մադաթով Է.Մ. Ձեռագրեր դարերի խորքից, «Գիտություն և Տեխնիկա», Եր., 1984, N 7, с. 27:

նա լճից հարավ ընկած Ռշտունյաց լեռները հայ պատմիչների կողմից՝ սկսած Փավստոս Բուզանդից և Անանիա Շիրակացուց, կոչվում էին «կապարահատաց և երկաթահատաց լերինք», ինչը վկայում է դեռ վաղ միջնադարից այնտեղ երկաթի և կապարի առկայության մասին: Հետաքրքիր է նշել, որ համաձայն ներկայումս ընդունված համընդհանուր տեսակետի՝ աշխարհում երկաթի արդյունահանման ամենահին կենտրոններից են հանդիսանում Հին Հայաստանի տարածքի Բարձր Հայքի մերձսևծովյան հարավ-արևելյան շրջանները, որտեղ դեռևս մ.թ.ա. II հազարամյակում Հայաստանում բնակվող խալիբների կամ արմենոխալիբների ցեղն է առաջին անգամ երկաթ ստացել ու հիմնականում գոյատևել է երկաթի հանքաքարի արդյունահանմամբ և երկաթ ձուլելով[528]: Բուն Սասունի Տալվորիկ լեռներում (Մուշից քիչ հարավ-արևմուտք) հնուց ի վեր նաև երկաթ էր արդյունահանվում, և ընդհուպ մինչև 1914-1915 թթ. տեղի հայ բնակչությունը պարզունակ եղանակով տարեկան մոտ 95-115 տ երկաթ էր արդյունահանում[529]: Հարդիք կամ Հարթիկ գյուղի երկաթի հանքարդյունաբերողներից էր նաև ոմն Գասպար Խաչոյանը[530]:

Ասորական սեպագիր արձանագրությունների համաձայն, Վանից արևմուտք ընկած Սասունի լեռները դեռ մ.թ.ա. II հազարամյակում հայտնի էին որպես հին աշխարհում կապարի արդյունահանմամբ առաջին տեղը գրավող տեղանք[531]: Հետաքրքիր է նշել, որ կապարի հանքանյութով հարուստ մի հանքավայր՝ Էգիլ կամ Ազլ գյուղի շրջակայքում՝ Դիարբեքիրից մոտ 35 կմ հյուսիս, XX դարի սկզբին թուրքական իշխա-

---

[528] Տե՛ս Шевкун Е.Б., История гордного дела. Хабаровск. Изд. Тихоокеанскогоо университета 2015, с. 55, տե՛ս նաև Նահապետյան Ռ.Ա. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան ԵՊՀ, 2018, էջ 103-142:

[529] Ավետիսյան Կ., Ավետիսյան Ա., Հայրենագիտական էտյուդներ, Երևան, «Սովետական Գրող», 1979, с. 216:

[530] Պողոսյան Հ.Մ. Սասունի պատմությունը (1750-1918), Երևան, Հայաստան, 1985, էջ 119:

[531] Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Երևան, 1971, էջ 159:

նություններից վարձակալել և շահագործել է ազգությամբ հայ, դավանանքով կաթոլիկ ոմն **Գազազյանը**[532]:

Արևմտյան Հայաստանի տարածքից արդյունահանվող մի շարք քարատեսակների և հանքանյութերի համբավն այնքան մեծ է եղել հին աշխարհում, որ դրանց մասին հատուկ տեղեկություններ են թողել այդ ժամանակաշրջանի երևելի պատմաբաններ և ճանապարհորդներ, իսկ երբեմն էլ որոշ քարանյութեր ի պատիվ Հայաստանի անվանակոչվել են **արմենիում՝** հայկական քար կամ հայքար:

Հին հույն պատմիչ Քսենոփոնը (մ.թ.ա. 430-455 թթ.) իր հանրահռչակ «Անաբասիսում» վկայում է, որ Եփրատի վերին հոսանքի ավազանից, այսինքն՝ Չորրորդ Հայքից (Ծոփք) դեպի Բաբելոն էին արտահանվում բազալտից պատրաստված ջրաղացքարեր: Բարձր Հայքի (Կարինի շրջան) տարածքից Հունաստան արտահանվող հայկական հղկաքարի մասին իր հայտնի աշխատությունում ուշագրավ տեղեկություններ էին հաղորդում նաև մ.թ.ա. III դարի հույն պատմիչներ և աշխարհագրագետներ Թեոֆրաստոսը և Եվդոքոս Հռոդոսացին, ում վկայությամբ այդ քարերն օգտագործվում էին նաև կնիքներ պատրաստելու համար: Իսկ հանրահռչակ հռոմեացի գիտնական Պլինիոս Ավագն (27-29 թթ.) իր «Բնական Պատմության» մեջ նշում է, որ Բարձր Հայքից արտահանված հայկական հղկաքարն իր որակական հատկանիշներով գերազանցում է Կիպրոսի հայտնի «Նակսիան» քարին և հին աշխարհում լայնորեն օգտագործվում է ինչպես թանկարժեք քարերի հատման և հղկման, այնպես էլ մարմարների՝ մասնավորապես հռչակավոր փարոսյան մարմարի, մշակման նպատակով[533]: Ուշ միջնադարում մեծ հռչակ էին վայելում նաև Բարձր Հայքի Բաբերդ բնակավայրից մոտ 1.5 կմ հյուսիս-արևմուտք Երկի կամ

---

[532] Калантарь А., Экономические перспективы Восточной Анатолии, Тифлись, «Эпоха», 1913, с. 8.

[533] Տե՛ս Սեյրանյան Վ., Հին Հայաստանի հանքային հարստությունները, էջ 31: Տե՛ս նաև Хомизури Г.П. История зарождения геологических знаний в Армении, Известия НАН РА, “Науки о Земле”, 2016, N 2, с. 31.

Էրկի հայաբնակ գյուղից Կարսի մարզ արտահանվող ընտիր ջրաղացքարերը[534]:

Կարևոր է նշել, որ աշխարհահռչակ հույն պատմիչ Ստրաբոնը (մ.թ.ա. 64/63 թթ. – մ.թ. 23/24 թթ.) իր հանրահայտ «Աշխարհագրություն» աշխատությունում՝ Բարձր Հայքի (Ճորոխ գետի վերին հոսանքի ավազան) Սպեր կամ Ըսպեր (Սիսպիրիթիդե) բնակավայրի շրջակայքի հարուստ ցրոնային ոսկեհանքերի շահագործման մասին եղած տեղեկություններից բացի, հատուկ նշում է, որ այստեղից արդյունահանվում էր նաև մեկ այլ մետաղ՝ սանդիկ (*sandyx*), որից ստացված ծիրանի գույնի բարձրորակ ներկանյութը լայն ճանաչում ուներ հին աշխարհում և անվանվում էր նաև հայկական ներկ: Մասնագետների կարծիքով, այդ ներկանյութը կամ պիգմենտը ստացվում է կապարի և երկաթի օքսիդների միացությունից[535]:

Անտիկ աշխարհում մեծ համբավ էր վայելում նաև հայկական քար կամ հայքար (*armenium*) անվանումով հայտնի միներալը, որից կապույտ ներկանյութ էր ստացվում: Լազուրիտ հիշեցնող այս կապույտ գեղեցիկ փայլաքարի մասին առաջին անգամ տեղեկություններ է հաղորդում հռոմեացի աշխարհահռչակ ճարտարապետ և ճարտարագետ Մարկոս Վիտրուվիոս Պոլին (մ.թ.ա. I դ), որն իր «Ճարտարապետության մասին» հռչակավոր աշխատությունում նշում է. «Սուսրին հաջորդում է խիրզոկոլը (մալաքիտ), պուրպուրը և հայկական լազուրը (ուլտրամարին), այդ բոլոր ներկերը, երբ ջրով բացում են, կուրացուցիչ արդյունք են թողնում… Ինչ վերաբերում է հայկական լազուրին և հնդկական լեղակին (ինդիգո), ապա այդ նութերն իրենց անուններով ցույց են տալիս դրանց հան-

---

[534] Տե՛ս Калантарь А., Экономические перспективы Восточной Анатолии, с. 10.

[535] Манандян Я.А., О торговле в городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ер., Изд. ЕГУ, 1954, с. 229: Տես նաև Хомизури Г.П., նշվ. աշխ., с. 79, ինչպես նաև Կրքաշարյան Ս. Մ., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, ՀՍՍՀ ՀԱ, 1970, էջ 167, Նահապետյան Ռ.Ա., Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Եր., ԵՊՀ, 2018, էջ 94:

քատեղը»[536]: Քիչ ավելի ուշ մեկ այլ աշխարհահռչակ հռոմեացի բնագետ-գիտնական Պլինիոս Ավագը (23-79 թթ.) իր պատմության մեջ հայքարի մասին անում է հետևյալ հիշատակումը. «Հայաստանը մեզ առաքում է մի ներկանյութ, որը կրում է հենց այդ երկրի անունը: Դա քար է, որը խրիզոկոլի նման ներկում է: Լավագույնն այն տեսակն է, որն իր բաց կապույտ գույնով նմանվում է խրիզոկոլին: Լեղակից տարբերվում է որոշ բաց, մեղմ գույնով: Հարգի է թանկագին ներկանյութերի շարքում»[537]: Ներկայումս ապացուցված է, որ հայքարը լազուրիտ միներալի մի տարատեսակ է, որը հայերենում անվանվել է լաջվարդ և արդյունահանվել է Մեծ Հայքի Չորրորդ Հայքի (Ծոփքի) Հանձիտ կամ Բալահովիտ գավառում Արշամաշատ մայրաքաղաքի շրջակայքից՝ ներկայումս Էլյազիգ (Խարբերդ) քաղաքից մոտ 30-35 կմ արևելք[538]:

Անտիկ շրջանի և միջնադարի բնագետների մոտ հայքարը լայն ճանաչում էր գտել նաև որպես դեղամիջոց և հիշատակվում է որպես *Petra Armenia*, այսինքն՝ հայկական քար: Այսպես, օրինակ, հռոմեացի դեղաբան և բժիշկ Պեդանիոս Դիոսկորիդեսը (40-90 թթ.), ով, ինչպես հայտնի է, կայսր Ներոնի զորամիավորումներում աշխատում էր որպես բանակային վիրաբույժ, հայքարի մասին նշում է, որ այն «ողորկ, երկնագույն և հեշտ լուծվող քար է»: Հայքարի մասին հիշատակություններ կան նաև ավելի ուշ շրջանի բյուզանդական հայտնի բժիշկ Աեցիրիուսի (502-575 թթ.) և հռչակավոր հույն բժիշկ Ալեքսանդր Թրալիացու (525-605 թթ.) մոտ՝ մասնավորապես վերջինս հայքարն առաջարկում էր օգտագործել «չորսօրյա տենդի» բուժման նպատակով[539]:

X դարից սկսած հայքարը հիշատակվում է դեղագործական բնույթի արաբական գրեթե բոլոր ձեռնարկներում: Մասնավորապես, հանրահռչակ պարսիկ գիտնական-էնցիկլոպե-

---

[536] Սեյրանյան Վ., Հայքարը «Հայաստանի բնություն», 1989, N 4, էջ 35:

[537] Տե՛ս նույն տեղում:

[538] Сейранян В.Б., К Истории “Арминакуна”, Известия АН Арм ССР, «Науки о Земле», Ер., 1982, N 3, с. 47, 49.

[539] Սեյրանյան Վ.Բ., Հայքարը, «Հայաստանի բնություն», 1989, N 4, էջ 35:

դիստ Ալ-Բիրունին (973-1048 թթ.), որն, ինչպես հայտնի է, իր ստեղծագործությունները գրել է արաբերեն, իր «Թանկարժեք քարերի ճանաչման տեղեկությունների մասին» ժողովածուում նշում է. «Լազուրիտը (լաջվարդ) ռումեյերեն անվանվում է արմենիկում, որն ածանցվել է Հայաստան բառից: Հայքարն ամոքում է մելամաղձությունը…լազուրիտը Արաբիա է բերվում Հայաստանից, իսկ Հայաստան և Իրաք՝ Բաղդաշխանից»[540]: Այս փաստը հաստատվում է պարսիկ մեկ այլ գիտնականի՝ Համդալլան իբն Աբու Բակիր Ղազվինիի, (1281-1350 թթ.) այն հիշատակմամբ, որ «հայքարը» լաջվարդի գույն ունի և լվացումից հետո Բաղդաշխանի լաջվարդի փոխարեն օգտագործվում է որպես ներկանյութ[541]:

Ալ-Բիրունու և Ղազվինիի վկայությունները խիստ կարևոր են, քանզի դրանցով հերքվում է երկրաբանական գրականության մեջ մինչ այժմ եղած այն թյուր կարծիքը, թե լազուրիտի հին աշխարհի միակ հայտնի հանքավայրը Բաղդաշխանում՝ ներկայիս Աֆղանստանի հյուսիս-արևմտյան մասում, տեղակայված Սարի-Սանգն էր և որ այն «հայքար» էր կոչվում ոչ թե այն պատճառով, որ արդյունահանվում էր պատմական Հայաստանի տարածքում, այլ ընդամենն այն բանի համար, որ Հայաստանի տարանցիկ տարածքով է տեղափոխվել է[542]: Կ.Ն. Պատկանյանը նույնպես այն կարծիքին է, որ լազուրիտի մի տարատեսակ արդյունահանվել և արտահանվել է Հայաստանի տարածքից[543]:

---

[540] Տե՛ս Սեյրանյան Վ., Հայքարը Հայաստանի բնություն, c. 35, տե՛ս նաև Մելքումյան Ա., Հայաստանի քարերի աշխարհում, «Սովետական գրող», Եր., 1986, c. 75-77, Супрычев В.А., Малхасян Э.Г. Представления о самоцветах в средневековой Армении, «Айастан», Ер.,1984, c. 41.

[541] Մելքումյան Ա., նշվ. աշխ., c. 76

[542] Տե՛ս Թաղևոսյան Թ., Քարերը և քաղաքները Եր., Հայաստան, 1990, էջ 117, տե՛ս նաև Эфрос Б.Д., Третьякова Л.И., Сапфир и лазурит, «Природа», М., 1990, N 9, c. 55. Гречиков А., Лазуревый и бирюзовый. «Химия и жизнь», М., 1981, N 7, c. 51.

[543] Տե՛ս Патканян К.Н., Драгоценные камни и их названия и свойства по понятиям армян в XVII в. (второе издание), Ер., Изд. АН. Арм ССР, 1979, c. 45-46.

Հայքարի մասին հիշատակվում է նաև միջնադարյան արաբ աշխարհահռչակ բնագետ-բժիշկներ Աբու-Մանսուր Կյումարիի (917-999 թթ.) և նրա աշակերտ՝ ժամանակակից բժշկության հայր Աբու-Սինայի (Ավիցեննա 980-1037 թթ.) աշխատություններում: Ավիցեննան նշում է, որ հայքարը (խոջար արմինի) լյուպիսլազուրի փոխարեն օգտագործում են նաև ներկարարները և փորագրողները[544]: Հայքարը՝ տարբեր անվանումներով՝ *Pierre d'Arménie Armeniacon, Armenion*, *Armenium* բազմիցս հիշատակվում է նաև համաշխարհային միջնադարյան քիմիական գրականության մեջ: Ֆրանսիացի գիտնական Շարլ Լուի Կադեժը ևս նշում է, որ այդ միներալից պատրաստվում էր վառ կապույտ ներկ՝ ուլտրամարին, և որ այդ կայուն ներկի հանքանյութը գտնվում է Հայաստանում[545]:

Հին աշխարհում մեծ համբավ էր վայելում մեկ այլ ոչ օրգանական հանքային դեղամիջոց՝ հայկական կամ Անիի կավը (*Bolus Armena*): Դեռևս մեր թվարկությունից առաջ այն հայտնի է եղել հին Հայաստանում և արժանացել Արիստոտելի աշակերտ հին հույն փիլիսոփա և բնագետ Թեոֆրաստի (մ.թ.ա. 370–288 թթ.) հավանությանը: Հետագայում այս կավի բուժական հատկությունների մասին հիացմունքով է խոսում նաև աշխարհահռչակ հռոմեացի վիրաբույժ Գալենը (130-200 թթ.), որը Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսի մերձավորն էր, իսկ հետագայում նրա որդու՝ Կոմոդի անձնական բժիշկը:

Ավելի ուշ՝ IX դարում Ավիցեննան իր «Բժշկական գիտության կանոն» հայտնի աշխատությունում այս կավի մասին նշում է հետևյալը. «Հայկական կամ Անիի կավը զարմանալիորեն ներգործում է վերքերի վրա: Այն առանձնապես օգտակար է թոքախտի և ժանտախտի դեմ»[546]: Հետագայում հայկական կավը միջնադարյան աշխարհում լայնորեն արտահանվում էր

---

[544] Տե՛ս Սեյրանյան Վ., նշվ. աշխ, էջ 35:

[545] Տե՛ս Казанчян Т.Т., Очерки по истории химии в Армении. Ереван ЕГУ 1955, с. 19, տե՛ս նաև Մելքումյան Բ.Գ., Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1972, էջ 13:

[546] Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Եր., Քննասեր. 2000, էջ 32:

դեպի Եվրոպա և արևելյան երկրներ ու հաջողությամբ մրցակցում հանքային մեկ այլ բուժանյութի՝ հունական կավի հետ: Արաբական աշխարհում այն հայտնի էր նաև *«գիլ էրմենի»* անվանումով և նույնպես մեծ ճանաչում ուներ:

Այն զարմանահրաշ կավը, որն, ինչպես իր անունն է հուշում, արդյունահանվում էր մայրաքաղաք Անիի շրջակայքից, հայկական ժողովրդական բժշկության մեջ ուշ միջնադարում և մինչև XX դարասկիզբ լայնորեն օգտագործվում էր որպես հակաբորբոքային, հակաալերգիկ, ինչպես նաև հակաուռուցքային դեղամիջոց, ինչպես նաև զանազան թունավորումների ու արնահոսությունների դեպքում: Այդ կավը հարուստ է ալյումինոսիլիկատներով ու երկաթի օքսիդով, ինչով էլ, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է նրա կարմիր գույնը[547]: Այս կավի հակաուռուցքային զարմանահրաշ հատկությունների մասին է հիշատակում նաև XV դարի մեծանուն հայ բժիշկ Ամիլդովլաթ Ամասիացին: Ըստ որոշ տեղեկությունների՝ այդ կավը մինչև XVIII դարը ներառյալ վաճառվում էր որոշ եվրոպական դեղատներում որպես դեղամիջոց[548]: Միջնադարյան Եվրոպայի ալքիմիական ձեռնարկներում մեծ համբավ էր վայելում նաև *Sal armeniacum* անվանմամբ հայկական աղը, որը ենթադրաբար մի քանի տեսակ աղերի, այդ թվում՝ նաև սովորական քարաղի (հավանաբար Կողբի կամ Կաղզվանի աղահանքերից – *ծանոթ. Հ. Մելիք-Ադամյանի*) Հայաստանին վերաբերող լատիներեն անվանումներ[549]:

Ըստ որոշ տվյալների՝ Պատմական Հայաստանի մի քանի գավառներում, այդ թվում՝ Վասպուրականում և Տայքում, հնում արդյունահանում էին երկնագույն ու կապտամանուշա-

---

[547] Տե՛ս Վարդանյան Ս., Բշկության պատմություն հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը, պրակ Ա., Եր., «Նաիրի», 2010, էջ 162, տե՛ս նաև Մելքումյան Ա., Հայաստանի քարերի աշարհում, էջ 108, Варданян С.А., Амирдовлат Амасиаци, М., «Наука», 1987, с. 127.

[548] Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Եր,. 2000, էջ 32:

[549] Ղազանչյան Տիրան, Սալ Արմենիակում: Գիտություն և տեխնիկա, Եր., 1964, N 5, էջ 35:

կագույն երանգավորումով բնորոշվող շափյուղան (քաղկեդոնաքար կամ սապֆիր): Այդ գունագեղ միներալից պատրաստում էին հիմնականում ասորական, ինչպես նաև սասանյան Պարսկաստանի համեմատաբար փոքր չափսերի դրոշմաքարեր ու դրոշմակնիքներ, որոնց որոշ մասը ներկայումս ներկայացված են Էրմիտաժի հավաքածուներում[550]:

Միջին դարերում Եվրոպայում և Արաբական երկրներում մեծ ճանաչում ուներ Բիթլիսի շրջակայքից արդյունահանված լեռնային բյուրեղապակին, որն, ինչպես հայտնի է, հանդիսանում է քվարցի, այսինքն՝ թթվածնի և սիլիցիումի միացություն, պատկանում է գայլախազի ընտանիքին և իրենից ներկայացնում է գրեթե անգույն թափանցիկ լեռնաբյուրեղ: Հայերն այդ լեռնաբյուրեղն անվանում էին վանակն, այսինքն՝ Վանա լճի թանկարժեք քարակն: Հայտնի արաբական բնագետ Մոհամեդ Բեն Մանսուրը (961-1033 թթ.) իր «Թանկարժեք քարերի մասին» գրքում ևս հիշատակում է հայկական լեռնաբյուրեղի՝ վանակնի մասին[551]:

Հայկական բյուրեղապակու մասին ուշագրավ տեղեկություններ է թողել նաև ալ Բիրունին. «Լեռնաղբյուրի մի հանքավայրը գտնվում է Հայաստանում, իսկ մյուսը Բիթլիսում՝ մի տեղանքում, որը սահմանամերձ է նրան, այստեղի լեռնաղբյուրն ունի դեղնավուն երանգ»[552]:

Հարկ է նշել, որ այս պատմական տվյալները հաստատվում են նաև ժամանակակից հետազոտությունների արդյունքում: Ներկայումս Վանա լճի մերձակայքում առկա է քվարցի ևս երկու ոչ մեծ հանքավայր՝ առաջինը Հիզան կամ Խիզան գյուղաքաղաքի շրջակայքում Բիթլիսից մոտ 35-40 կմ հարավարևելք, իսկ մյուսը՝ Հազո կամ Հազզրո բնակավայրի շրջակայքում, Բիթլիսի նահանգի Սղերդ գավառում, Սասունի հա-

---

550 Տե՛ս Սեյրանյան Վ., Պատմական Հայաստանի գունաքարերը, «Սովետական Հայաստան», Եր., 1984, N 8, էջ 28:

551 Տե՛ս նույն տեղում:

552 Տե՛ս Супрычев В.А., Малхасян Э.Г., Представления о самоцветах в средневековой Армении, Ер., «Айастан», 1984, с. 28, տե՛ս նաև Մելքումյան Ա., նշվ, աշխ., էջ 69, Սեյրանյան Վ., նշվ. աշխ., էջ 28:

րավ-արևելյան ծայրամասում, Բիթլիսից մոտ 55 կմ հարավ-արևմուտք: Ներկայումս այդ հանքավայրերը չեն շահագործվում[553]: Հազո գյուղի շրջակայքում, ըստ որոշ տվյալների, առկա էր նաև բնածին ծծմբի խոշոր հանքավայր, որտեղից արդյունահանված ծծումբը մեծ կտորներով վաճառվում էր Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, իսկ Թոնդուրակ լեռան շրջակայքում հայտնի էին ծծմբային բաղադրության հանքային ջրեր, որտեղ ծծմբի միջին պարունակությունը հասնում էր մոտ 35 %-ի[554]: Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարում պատմական Կարինի (Էրզում) գավառում առկա էին բարձրորակ եղնգաքարի (օնիքսանման մարմար) հանքավայրեր[555]:

Սեբաստիա քաղաքի մերձակայքի հյուսիսային լեռնալանջերը հնում աչքի էին ընկնում սպիտակ և կարմրավուն գույնի մարմարներով, իսկ Թիֆլիսում նախահեղափոխական շրջանում հրատարակված մի աշխարհագրության դասագրքում հիշատակում կա Կաղզվանի շրջակայքում արդյունահանվող մի շատ յուրօրինակ մարմարի մասին: Նշվում էր, որ ընդերքից հանելուց այդ մարմարանման զանգվածն այնքան փափուկ էր, որ հնարավոր էր այն կտրել սովորական դանակով, սակայն, օդի հետ շփվելով՝ այն կրկին կարծրանում է[556]:

Միջնադարյան Հայաստանում արդյունահանվում էր ևս մեկ ոչ մետաղական օգտակար հանածո՝ գագաթը, որը հայերեն անվանակոչվել է սեպաճ կամ գիշեր: Այն հատնի է նաև «սև սաթ», «սև համպար», «արաուքարիտ» և այլն, սակայն «գագաթ» անվանումից հետո, ինչը հավանաբար ծագումնաբանորեն կապված է հին Մարաստանի Գագա քաղաքի և համանուն գետի հետ: Միներալի ամենագործածելի և արմատացած

---

553 Տե՛ս Ryan C.W., A guide to the known minerals of Turket, Ankara, 1960, p. 189.

554 Տե՛ս Калантарь А., Экономические перспективы Восточной Анатолии, с. 8, տե՛ս նաև Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, Եր., 2001, էջ 353-354:

555 Տե՛ս Սեյրանյան Վ., նշվ. աշխ., էջ 29, տե՛ս նաև Թադևոսյան Թ., Քարերը և քաղաքները, Եր., «Հայաստան», 1990, էջ 102:

556 Տե՛ս Մելքումյան Ա., նշվ աշխ., էջ 59:

անունը «գիշեր»-ն է, որը տարածվեց նաև Հայաստանի հարևան ժողովուրդների շրջանում, մասնավորապես վրացերենում՝ *գիշերի* ձևով, որը որպես այդ հանածոյի երկրորդ անուն տեղ գտավ որոշ միներալոգիական ձեռնարկներում և ձեռք բերեց միջազգային ճանաչում: Միներալը «գիշեր» էր անվանվում իր ընդգծված սև գույնի պատճառով, այն ունի օրգանական ծագում, իրենից ներկայացնում է ածուխի մի տարատեսակ՝ խեժածուխ, համարվում է դեկորատիվ քարատեսակ և օգտագործվում է տարաբնույթ զարդեր պատրաստելու համար: Գիշերից պատրաստված գնդաձև կնիք է գտնվել Էրեբունու ամրոցի պեղումների ժամանակ, իսկ մեկ այլ ուրարտական բնակավայրում՝ Արգիշտիխինիլիում, գտնվել են գիշերից պատրաստված զարդեր, ինչից կարելի է եզրակացնել, որ այդ քարատեսակը քաջ հայտնի է եղել դեռևս ուրարտական ժամանակներից:

Ըստ որոշ տեղեկությունների, գիշերի խոշոր հանքավայրեր կային Մեծ Հայքի Տայք աշխարհի տարածքում (Ճորոխի շրջակայքում), որոնք աչքի էին ընկնում իրենց բարձր որակով[557]: Անտիկ և միջանադարյան Հայաստանում Վան* և Արճակ լճերից արդյունահանվում էր մեկ այլ կարևոր ոչ մետաղային հանածո՝ բորակ կամ սոդա (նատրիումի բիկարբոնատ), որը գործածում էին օճառի փոխարեն հագուստը լվանալիս: Այն դեռևս հնում արտահանվում էր Իրաք և այլ երկրներ ու

---

557 Տե՛ս Սեյրանյան Վ., Պատմական Հայաստանի գունաքարերը, էջ 29, տե՛ս նաև Մելքումյան Ա., նշվ աշխ., էջ 85-86, Эсадзе Б.С., Очерк Карсской области (1864-1914), вып.1. Экономические и хозяйственные нужды, Карс, 1912, с. 61.

* Հայտնի է, որ Վանա լիճը (Բզնունյաց ծով, Ռշտունյաց ծով, Վասպուրական Աղի լիճ) համարվում է աշխարհի խոշորագույն սոդային լճերից մեկը, որտեղ սոդայի կամ նատրիումի բիկարբոնատի (Na_2CO_3) պարունակությունը 8.6 գ/լ է, նատրիումական աղինը՝ 9.4 գ/լ, իսկ գլաուբերային աղինը՝ 3.3 գ/լ: Սոդայի մեծ քանակությամբ էր պայմանավորված այն, որ լճի ջրերում դեռևս հին դարերում տեղի հայ բնակչությունն առանց օճառի էր լվածք անում: Տե՛ս Бойнагрян В.Р., Озера Армянского нагорья, Ер., ЕГУ, 2007, с. 34.

մեծ պահանջարկ ուներ հացթուխների կողմից[558]: Այդ մասին է վկայում արդեն Ստրաբոնը և X դարի արաբ մատենագիր Իբն Հակուլը, ով դրանից բացի հիշատակում էր նաև Վանա լճից քիչ հարավ տեղակայված զառիկի կամ մկնդեղի հանքերի մասին[559]:

Ըստ որոշակի տեղեկությունների՝ XVIII դարում և XIX դարի առաջին կեսերին Վանա լճից քիչ արևելք Արճակի լճակից տեղի հայ բնակչությունը ևս տնայագործական պարզունակ մեթոդներով տեղական կարիքների համար բավականին մեծ քանակությամբ բորակ էր արդյունահանում[560]: Սկսած 1876 թ.-ից Վան և Արճակ լճերից բորակի արդյունահանմամբ էին զբաղվում **Ճիտէչեան (Ճիտեջյան)** եղբայրները, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել նաև Վանի հանրահռչակ տառեխ ձկան առևտուրը: Այս եղբայրների ընկերությունն իր գործունեությունը դադարեցրեց միայն 1914 թ.-ին[561]:

1200-ական թթ. սկզբներին հայ խոշորագույն կալվածատեր և մեծատու Տիգրան Հոնենցուն են պատկանել Անիի հարավ-արևմտյան թաղամասում տեղակայված քարհանքը, որտեղից արդյունահանվել է մեծ քանակությամբ Անիի տիպի դեղնավուն և դեղնադարչնագույն տուֆաքարը, որից և պատրաստված են եղել Անիի հոյակերտ շինությունները[562]: Կարսի

---

[558] Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարյան Հայաստանում ևս երբեմն հացաթխման ժամանակ թթխմորի փոխարեն հացին բորակ են ավելացրել (տե՛ս Բեգլարյան Հ., Հացագործությունը միջնադարյան Հայաստանում, Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, N 5, էջ 75):

[559] Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական աղբյուրներ: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Թ-Ժ դարեր, հ. Է, Եր., ԵՊՀ, 2005, էջ 634, տե՛ս նաև Նահապետյան Ռ.Ա. Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, Երևան ԵՊՀ, 2018, էջ 94:

[560] Տե՛ս Ավագյան Ա.Մ., Արճակ Հայ ազգագրություն և բանասիրություն, N 8, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1970, c. 10:

[561] Տե՛ս Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ», 1904, N 3, էջ 24:

[562] Առաքելյան Բ. Ն., Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը, Պատմաբանասիրական հանդես, 1958, N 2, էջ 41:

մարզի Կաղզվանի շրջանի Մարմարա լեռան (2460 մ) և Արդահանի շրջանի Պոսխոր բնակավայրի շրջակայքում՝ Ախալցխա քաղաքից մոտ 45 կմ հարավ, դեռևս հնուց ի վեր շահագործվում էին նաև բարձրորակ մարմարների (մարմարանման օնիքս) հանքավայրեր: Պոսխորի մարմարը հիմնականում սպիտակ կաթնագույն-սպիտակավուն երանգ ուներ, աչքի էր ընկնում իր բարձր դեկորատիվ հատկություններով[563]: Բացի մարմարից, Մարմարալեռան շրջակայքում առկա էին բարձրորակ ասբեստի հանքերևակումներ, որոնք 1919 թ. դեռևս չէին շահագործվում[564]:

Կարս քաղաքի շրջակայքում գտնվում էին գիպսի (ալեբաստրի) զգալի պաշարներ, որոնք արտահանվում էին Թիֆլիս, իսկ Կարսի մարզում ընդհանրապես առկա էին նաև պեմզայի զգալի պաշարներ, որոնք մինչև 1914 թ. արտահանվում էին Ռուսաստան և ի հաշիվ իրենց բարձրորակության Ռուսաստանի շուկաներից դուրս էին մղում Իտալիայից ներմուծված ավելի ցածրորակ պեմզան: Կարսի մարզի Կաղզվան քաղաքից մոտ 35 կմ արևմուտք տեղակայված էր մկնդեղի (սնդիկ) մի եզակի հանքավայր՝ ներկայացված ռեալգար և աուրոպիգմենտ միներալներով, որոնք 1910-ական թթ. ինչպես Այսրկովկասի, այնպես էլ հարակից տարածքներում համարվում էին այդօրինակ հանքանյութի միակ հանքավայրը: Հայտնի է, որ միայն 1916 թ. այնտեղից Մոսկվա է արտահանվել ավելի քան 3400 տ հանքանյութ, որն օգտագործվել է հիմնականում խեղդող գազի ստացման նպատակներով[565]:

Վանա լճի հյուսիս-արևելյան ափամերձ շրջաններում՝ Գործոթ, Նավթիկ գյուղերի շրջակայքում, ինչպես նաև Խնուսից մոտ 30 կմ հարավ և Էրզրումից քիչ հարավ-արևելք, հայտնի էին նաև մեկ տասնյակից ավելի փոքր նավթաերևակումներ, որոնցից դեռևս ուշ միջնադարում հայ բնակչությունը տեղական նպատակների համար աննշան քանակությամբ նավթ

---

[563] Տե՛ս Эсадзе Б.С., Очерк Карсской области (1864-1914), с. 62.

[564] Карапетян О.Т. Минеральные богатства Армении. Фонды института геологических наук НАН РА, Отчет 1919 г., с. 14:

[565] Տե՛ս նույն տեղում, էջ 9, 13:

էր արդյունահանում: 1917 թ.-ի ամռանը Ժամանակավոր կառավարությունը առկա նավթաերևակումների և գորշ ածուխի պաշարների վերաուսումնասիրման և վերագնահատման նպատակով Ռուսաստանի երկրաբանական կոմիտեի մի շարք երկրաբաններից (Դ. Նալիվկին, Ա. Ստոյանով, Մ. Մեֆերտ, Կ. Ֆոխտ) կազմված մի խումբ գործուցեց այդ տարածքներ: Այդ էներգակիրներն անհրաժեշտ էին Կովկասյան ռազմաճակատում տեղակայված ռուսական բանակի զորամիավորումներին և մասնավորապես Վանա լճի զինվորական նավատորմին վառելիքային հումքով ապահովելու համար: Սակայն հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ վերը նշված նավթի երևակումներն արդյունաբերական տեսակետից լուրջ պաշարներ չեն պարունակում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ արտասահմանյան մի շարք ընկերությունների անմիջական մասնակցությամբ Վանա լճից բավականին հարավ-արևելք, այսինքն՝ Վիլսոնյան Հայաստանի սահմանագծից դեպի հարավ ընկած տարածքներում թիչ թե շատ արդյունաբերական պաշարներով հայտնաբերվեցին Ռամանդաղի և մի շարք այլ հանքավայրերը, ինչի հետևանքով վերը նշված հանքերևակումները վերջնականապես կորցրեցին իրենց նշանակությունը[566]:

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Վիլսոնյան Հայաստանի ու Կարսի մարզի տարածքում առկա բնական պաշարների գնահատման չափանիշներին, պետք է նշենք, որ ընդհանրապես օգտակար հանածոների արդյունահանման տնտեսական արդյունավետության աստիճանը բնութագրվում է մի շարք տեխնիկա-տնտեսագիտական ցուցանիշներով, որոնցից հիմնականներն են ինքնարժեքը (լրիվ ինքնարժեքը), զուտ շահույթ կամ եկամուտ, զուտ դիսկոնտավորված շահույթ կամ եկամուտ, եկամտաբերության

---

[566] Տե՛ս Մելիք-Ադամյան Հ. Հ., Ակադեմիկոս Նալիվկինը Արևմտյան Հայաստանում, «Գիտություն և Տեխնիկա», Եր., 1989, N 8, էջ 12-17, տե՛ս նաև Мелик-Адамян Г.У. Изыскания российских геологов в Западной Армении летом 1917 г., «Պատմաբանասիրական հանդես», 2011, N 2, с. 60-72:

կամ շահութաբերության ինդեքս և այլն[567]: Սակայն այս հետազոտության մեջ հիմնվելու ենք միայն ինքնարժեք և զուտ շահույթ տնտեսագիտական եզրույթների վրա, քանզի ստորև ներկայացվող օգտակար հանածոների տարբեր տեսակների և կոնկրետ հանքավայրերի բացարձակ մեծամասնության համար լիարժեք տեխնիկա-տնտեսական տվյալները բացակայում են կամ մեզ համար անհասանելի են: Օրինակ, զուտ դիսկոնտավորված եկամուտը հաշվարելու համար հարկավոր է իմանալ նաև կոնկրետ հանքավայրի շահագործման համար նախատեսված ամբողջ ժամանակահատվածը, մինչդեռ հանքավայրերի գերակշիռ մասի վերաբերյալ այդպիսի տվյալները բացակայում են, ինչը գործնականում անհնարին է դառնում նման հաշվարկը:

Ինչպես հայտնի է, **ինքնարժեքն** (լրիվ ինքնարժեք) իր մեջ ներառում է արտադրանքի պայմանական միավորի տվյալ դեպքում օգտակար հանածոյի 1 տոննայի արդյունահանման համար կատարված բոլոր տիպի փաստացի ծախսերի հանրագումարը, այդ թվում՝ ուղղակի և անուղղակի նյութածախսեր, աշխատավարձեր, վերադիր ծախսեր՝ արտադրական, կառավարչական, իրացման և այլն, իր մեջ չներառելով գանձվող տարաբնույթ հարկերը: **Զուտ շահույթը**, որն անգլալեզու տնտեսագիտական գրականության մեջ հանդիպում է տարբեր ձևերով՝ **net income, net profit** կամ **net benefit**, լայն կիրառման տնտեսագիտական տերմին է, որը կիրառվում է այս կամ այն բիզնեսի մաքուր շահութաբերությունը կամ եկամտաբերությունը գնահատելու համար: Զուտ շահույթը հաշվարկվում է օգտակար հանածոյի իրացումից ստացված վերջնական եկամուտից հանելով ինչպես լրիվ ինքնարժեքը, այնպես էլ բոլոր տիպի հարկերը՝ շահութահարկ, բնօգտագործման հարկ և այլն: Զուտ շահույթի նորման կամ ցուցանիշը արտահայտվում է տոկոսներով և հաշվարկվում է զուտ շահույթի թվային

[567] Տ՛ես Орлова Е.Р., Инвестиции. М. Омега-Л, 2012, с. 205.

արտահայտությունը բաժանելով իրացումից ստացված վերջնական եկամուտի թվային արտահանության վրա[568]:

Սովորաբար բաց եղանակով, առանց հորախորշերի շահագործվող օգտական հանածոների հանքավայրերի շահագործումից ստացված զուտ շահույթի նորմը կամ ցուցանիշը ավելի բարձր է, ստորգետնյա եղանակով արդյունահանված օգտակար հանածոների նույնօրինակ ցուցանիշից, ինչը պայմանավորված է գլխավորապես բաց եղանակի ավելի նվազ ծախսատարությամբ: Հետևաբար, այն ոչ մետաղական օգտակար հանածոները՝ պեռլիտ, պեմզա, տուֆ և այլն, որոնց հանքավայրերը շահագործվում են բաց եղանակով, ավելի շահութաբեր են, այսինքն՝ բնութագրվում են զուտ շահույթի ավելի բարձր ցուցանիշով, չնայած այս դեպքում ևս այդ ցուցանիշը կարող է տարբեր լինել՝ կախված մակաբացման աշխատանքների ծավալից:

Ստորև ներկայված 11 տիպի օգտակար հանածոների համար ինքնարժեքի մասին տվյալներ մեզ հաջողվեց ձեռք բերել միայն ոսկու և քարաղի վերաբերյալ: Քանի որ մնացած օգտակար հանածոների համար ինքնարժեքի մասին տվյալները բացակայում են, ստիպված ենք եղել ինչպես արդեն շահագործված, այնպես էլ շահագործվող և դեռևս չշահագործվող մյուս օգտակար հանածոների (բացառությամբ ուրանի, որի շահագործման ինքնարժեքը դեռևս ավելի բարձր է եկամտաբերությունից), զուտ շահույթի նորմը մոտավորապես գնահատելու մեթոդաբանական գործընթացում առաջնորդվել վերջին տարիներին գլոբալ միջազգային լեռնահանքային արդյունաբերությունում առկա միջինացված հաշվարկային նմանօրինակ ցուցանիշներից: Օրինակ, 2006 և 2007 թթ. այդ միջինացված (բոլոր օգտակար հանածոների տիպերի) զուտ շահույթի տոկոսային գլոբալ ցուցանիշը տատանվել է 26-27 %-ի սահմաններում, 2009 թ. կազմել է 15 %, 2012 թ.՝ 25 %: Ամենացածր ցուցանիշը՝ 6 %-ը, եղել է 2008 թ., ինչը պայմանավորված էր

[568] Տ՛ես Գալստյան Մ., Ինքնարժեքի հաշվառում, Եր., 2003, էջ 13; Орлова Е. Р., Инвестиции, с. 25; Моссаковский Я.В., Экономика горной промышленности, М., МГУ 2004, с. 432.

համաշխարհային տնտեսական ճգնաժամով: Նույնպիսի ցուցանիշ եղել է 2002 թ., իսկ 2003 և 2004 թթ. այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 11 % և 15 %[569]: Ըստ համաշխարհային տվյալների՝ Ռուսաստանի համար այդ միջինացված ցուցանիշը 2019 թ.-ի տվյալներով նվազագույնը կանխատեսվում է 9 %-ի սահմաններում:

Վերը նշված փաստարկներից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրեթե բոլոր օգտակար հանածոների միջազգային մեծածախ գները վերջին տարիներին ցուցաբերում են կայում աճի միտում, վստահաբեր կարելի է պնդել, որ առաջիկա տասնամյակներում՝ պայմանավորված օգտակար հանածոներոի հանքավայրերի պաշարների կրճատմամբ այդ գնաճը անընդհատ ավելանալու է: Այդուհանդերձ, Արևմտյան Հայաստանի տարբեր տեսակի դեռևս չարդյունահանված օգտակար հանածոների հետ կապված հիմք ենք ընդունում նվազագույն 6 %, իսկ պեռլիտների և պեմզաների համար՝ 10 % ցուցանիշը, ինչը ևս մոտ 5 %-ով ցածր է նման տեսակների միջազգայնորեն ընդունված զուտ շահույթի նորմից: Նման մոտեցմամբ առաջնորդվելը պայմանավորված է ստացված տվյալների արժանահավատության աստիճանը բարձրացնելու հանգամանքով:

ՊԵՌԼԻՏ

Պեռլիտը, որին հաճախ անվանում են նաև լեռնային մարգարիտ, հրաբխային ապակի է, օբիսիդիան միներալի մի տարատեսակ, որը պարունակում է մոտ 3-ից 5% բյուրեղային ջուր և բացի ապակուց մոտ 95 % պարունակում է նաև դաշտային սպաթներ՝ բիստիտ և այլ միներալներ: Այս ապարը կազմված է 1-15 մմ տրամագծով գնդիկներից ու բնութագրվում է սոխուկանման և վարդանման համակենտրոն թերթիկներով և մարգարտափայլ տեսքով:

[569] Борецкий Е.А., Егорова М.С. Глобальная гронодобывающая промышленность, Молодой ученый, 2015, N 11.4, с. 44:

Բարձր ջերմաստիճանի պայմաններում (900-1200°C) պեռլիտը վերամշակելուց հետո այնտեղ գտնվող բյուրեղային ջուրը մանր ծակոտիների մեջ ներթափանցված գազերի հետ միասին լայնանում է, փքվում՝ 10-ից 12 և ավելի անգամ մեծացնելով ապարի ծավալը: Իր այդ հատկության շնորհիվ պեռլիտը լայնորեն օգտագործվում է արդյունաբերության ամենատարբեր ճյուղերում՝ գլխավորապես որպես լցանյութ թեթև բետոնների, ջերմա- և էլեկտրամեկուսիչ սալիկների և սարքավորումների արտադրության ասպարեզում, հեղուկ ապակու և բյուրեղապակու արտադրության, նավթարդյունաբերության, ինչպես նաև գյուղատնտեսության ասպարեզում՝ որպես հողի կառուցվածքը բարելավող բաղադրիչ: Պեռլիտների տեսակարար կշիռտ 2.3-2.4 գ/սմ^3 է, իսկ ծավալային կշիռը՝ 1550-ից մինչև 2000 կգ/մ^3, այսինքն՝ 1 մ^3-ում կարող է պարունակվել ամենաշատը 2 տոննա[570]:

Հայկական լեռնաշխարհի տարածքը չափազանց հարուստ է պեռլիտի պաշարներով, որոնց առաջացումը կապված է թթու կազմի նորագույն, չորրորդական հասակի հրաբխականության հետ: Սակայն պեռլիտը համարվում է բավականին «երիտասարդ» օգտակար հանածո և արդյունաբերության մեջ սկսել է կիրառվել միայն 1940-ական թթ. սկզբներից՝ սկզբում ԱՄՆ-ում, իսկ այնուհետև՝ այլ զարգացած երկրներում: Շնորհիվ փքվելու հատկության, երբ 1մ^3 չմշակված ապարից կարելի էր ստանալ 10 մ^3, իսկ երբեմն նաև՝ 25 մ^3 փված պեռլիտ, այս հանքավայրերի շահագործումը բոլոր երկրներում աչքի էր ընկնում իր բարձր տնտեսական շահութաբերությամբ: Հայաստանի, ինչպես նաև Կարպատների և Բուրյաթիայի պեռլիտի հանքավայրերը բացահատվել են 1950-ական թթ., իսկ Թուրքիայինը՝ հավանաբար քիչ ավելի ուշ[571]: Հ. Հա-

---

[570] Տ՛ես Շիրինյան Կ. Գ., Հայաստանի հրաբխականությունը և հրաբխային շինանյութերը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 31, տե՛ս նաև Հայաստանի բնաշխարհ, Երևան 2006, էջ 89, Գևորգյան Խ.Հ., Շինարարական նյութեր, Երևան, 1973, էջ 58-59:

[571] Տ՛ես Петров В.В., Неметаллические полезные ископаемые, М., Знание, 1988, с. 17-18:

կոբյանի տվյալներով, Հայաստանում պեռլիտի արտադրությունը կազմակերպելը (ջերմամեկուսիչների և ձայնակլանիչների արտադրություն, ագրոպեռլիտ և այլն) ևս չափազանց եկամտաբեր է, և այդ արտադրության ետգնման ժամկետները չեն գերազանցում 2 տարին[572]:

Հայաստանի Հանրապետության տարածքում առկա է պեռլիտի մի քանի խոշոր հանքավայր, որոնցից ամենախոշորը Արագածինն է՝ Արտենի լեռան շրջակայքում, Արագած գյուղի մոտ, որի հաստատված պաշարները մոտ 76 մլն մ^3 է: Հայտնի են նաև Հրազդանի (Ջրաբերի) պեռլիտի հանքավայրը՝ 26.35 մլն մ^3 կամ 13.7 մլն տ հաստատված պաշարներով և Որոտանի պեռլիտի հանքավայրը՝ 14.745 մ^3 կամ 7.66 մլն տ հաստատված պաշարներով[573]: ՀՀ ամբողջ տարածքի պեռլիտների հաստատված պաշարները 1.04.2011թ.-ի դրությամբ կազմում են 0.141 մլրդ տ, որի շուկայական արժեքը 2016-2017թթ. գներով կազմում է մոտ 9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ կանխատեսումային ռեսուրսները՝ ավելի քան 1 մլրդ մ^3 կամ մոտ 2 մլրդ տ[574]:

Թուրքիայի տարածքում առկա է 16 խոշոր հանքավայր, որոնք տեղակայված են ինչպես երկրի արևմուտքում (Ադանա, Բյութանիա և այլն) և կենտրոնական մասերում (Անկարա), այնպես էլ Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Վիլսոնյան Հայաստանի տարածքում:

2010-2011 թթ.-ի տվյալներով՝ Թուրքիայի պեռլիտների հետախուզված պաշարները (Reserves) (proven+probable =

---

572 Հակոբյան Հ., Պեռլիտային արդյունաբերության զարգացման հեռանկարները Հայաստանում. Հայաստանի բնական քարերը, Երևան 2000, էջ 16:

573 Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և օգտակար հանածոները, Եր., ԵՊՀ, 2001, էջ 179:

574 Տ՛ես Егиазарян А. А., Минеральные ресурсы Армении в контексте Армяно-Российского экономического сотрудничества. Россия и новые государства в Евразии 2012, N 1, с. 32, տե՛ս նաև Ավագյան Հ., Հայաստանի Հանրապետության ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, Երևան, Գիտություն, 2002, էջ 25:

$A+B_1+C_1$ կատեգորիաներով՝ հաշվարկված ըստ ռուսական համակարգի), գնահատվում էին 5.733 մլրդ տ:

Ինչպես պեռլիտների, այնպես էլ մնացած բոլոր տիպի պինդ օգտակար հանածոների պաշարների հաշվարկման և գնահատման համար ներկայումս տարբեր երկրներում կիրառվում են տարբեր մեթոդական մոտեցումներ: Այժմ օգտակար հանածոների դասակարգման տարբեր համակարգներ են առկա ընդամենը 6 երկրում՝ Ավստրալիա, Կանադա, Ֆրանսիա, Հարավ-Աֆրիկյան պետություն, ԱՄՆ և Ռուսաստան: Մնացած երկրներում, ինչպես և Թուրքիայում կիրառվում է ԱՄՆ-ում ընդունված մոտեցումը: Ըստ այդ մեթոդաբանության, օգտակար հանածոների պաշարները մակնշվում են՝

Proved reserves՝ հաստատված կամ ապացուցված պաշարներ,

Probable reserves՝ հավանական կամ հնարավոր պաշարներ,

Probable potential resources՝ հավանական պոտենցիալ ռեսուրսներ,

Speculative potential resources՝ ենթադրվող պոտենցիալ ռեսուրսներ:

Նախկին ԽՍՀՄ-ում, ինչպես նաև ներկայիս Ռուսաստանում՝ համաձայն ՌԴ 1997թ.-ի դասակարգման, պինդ օգտակար հանածոների պաշարների գնահատման արժանահավատության աստիճանը դասակարգվում է առավել մանրամասն և ընդունված է մատնանշել լատիներեն տառերով (կատեգորիաներով)՝ $A+B+C_1$, որոնց ամբողջությունը կոչվում է հետախուզված կամ հաստատված պաշարներ, որտեղ C_1-ը նախնական գնահատված պաշարներն է: Կանխատեսումային ռեսուրսները՝ C_2, P_1, P_2, P_3 են, որտեղ C_2-ից և P_3-ի արժանահավատության աստիճանը հետզհետե նվազում է:

A+B կատեգորիաները համապատասխանում են Proved reserves մակնշմանը (հաստատված պաշարներ) և վկայում են այն մասին, որ տվյալ հանքավայրի պաշարները շատ մանրամասն են հետազոտված տարբեր տիպի լեռնային փորվածքներով և հորատանցքերով պաշարների քանակությունը խիստ

արժանահավատ է, իսկ հումքի տեխնոլոգիական հատկությունները լավ են ուսումնասիրված: C_1-ը համապատասխանում է Probable reserves դասակարգմանը (հավանական կամ հնարավոր պաշարներ) և նշանակում է, որ այս կամ այն հանքավայրի պաշարները համեմատաբար ավելի թույլ են հետազոտված, բայց տված թվային գնահատականը ևս բավականին արժանահավատ է:

C_2+P_1-ը համապատասխանում են Probable potential (հավանական կամ հնարավոր պոտենցիալ) դասակարգմանը, ընդ որում C_2 կատեգորիան՝ նախնական գնահատված պաշարներ, մատնանշում է, որ տվյալ հանքավայրի պաշարները գնահատված են առավելապես երկրաբանական և երկրաֆիզիկական տվյալների հիման վրա, իսկ օգտակար հանածոյի առկայությունը հաստատված է լեռնային փորվածքներով և հորատանցքերով: Կանխատեսումային ռեսուրսների համաձայն՝ իրենց հիմնավորվածության աստիճանի ևս ստորաբաժանվում են 3 կատեգորիայի կամ դասի՝ P_1, P_2, P_3, ընդ որում, P_3-ը ամենաթույլ հիմնավորվածն է և ենթադրում է հավանական, բայց դեռևս չբացահայտված հանքավայրի պաշարներ, որոնք հիմնվում են երկրաֆիզիկական, երկրաքիմիական, աէրոերկրաբանական տվյալների համատեղ վերլուծության վրա[575]:

Ներկայումս այդ պաշարների վերագնահատման արդյունքում Թուրքիայի պեռլիտների հաստատված պաշարները (proved reserves + probable reserves) կազմում են 6.028 միլիարդ տոննա[576]: Այդ 6 միլիարդ տոննան կազմում է պեռլիտի համաշխարհային հետախուզված պաշարների ավելի քան 70%-ը[577]:

---

[575] Տ՛ես Боярко Г.Ю., Экономика минерального сырья, Томск, 2009, с. 81-84, տե՛ս նաև Судо М.М., Геология и экономика, Москва, Знания, 1988, с. 38, Милютин А.Г., Разведка и геолого-экономическая оценка месторождений полезных ископаемых, М,. МГОУ, 2004, с. 45, 47.

[576] Տ՛ես Mineral potential of Turkey. Mining Turkey of March 2012, p. 19, տե՛ս նաև Gul Dilek. Characterization and expansion behavior of perlite. July 2016, Izmir, p.5.

[577] Տե՛ս նույն տեղում:

Վերը նշված 16 հանքավայրից 5-ը գտնվում են Արևմտյան Հայաստանի տարածքում, որոնցից 4-ը՝ Վիլսոնյան Հայաստանում: Այստեղ են տեղակայված՝

• Եղեգնուտի (Սարիղամիշի) հանքավայրը՝ Կարսից մոտ 30կմ հարավ-արևմուտք, Սելիմ երկաթուղային կայարանի մոտ, Սարիղամիշից մոտ 25 կմ հյուսիս-արևելք Ալաջա (հայերեն՝ Առջոառիջ) լեռան լանջին,

• Արճեշի (Ականց, ներկայումս՝ Ercis) հանքավայրը՝ Վանա լճի հյուսիսային ափին, Վանից մոտ 60 կմ հյուսիս,

• Արծկե-Դատվանի (Adilcevasve Tatvan) հանքավայրը՝ Վանա լճի արևմտյան ափամերձ գոտում,

• Բասենի կամ Պասինլերի (Pasinler) հանքավայրը՝ Կարինից (Էրզրում) մոտ 40կմ հյուսիս-արևելք, Արաքս գետի վերին հոսանքի ավազանում:

Ըստ ճանապարհորդ-աշխարհագետ Տ. Բաբայանի բանավոր հաղորդման՝ 2017թ. դրությամբ այդ 4 հանքավայրից շահագործվում էր միայն Բասենինը: Նշված հանքավայրերից ամենախոշորը Եղեգնուտի (Սարիղամիշի) հանքավայրն է, որտեղ պեռլիտի հետախուզված պաշարները կազմում են 2.043 միլիարդ տ: Այն համարվում է նաև Թուրքիայի ամենախոշոր հանքավայրը, որտեղ ներկայումս կենտրոնացված է երկրի ամբողջ պեռլիտի պաշարների 33.9 %-ը: Իր մեծությամբ երկրորդը Արճեշի կամ Ականցի հանքավայրն է, որտեղ կուտակված է 1.400 միլիարդ տ պեռլիտ (ամբողջ Թուրքիայի պաշարների 23.2%-ը): Իր մեծությամբ երրորդը ինչպես ամբողջ Թուրքիայում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, Դատվան-Արծկե հանքավայրախումբն է, որի պաշարները գնահատվում են 0.940 միլիարդ/տ և որտեղ կենտրոնացված է Թուրքիայի պաշարների 15.6 %-ը: Բասենի (Պասինլեր, Փասինլեր) հանքավայրը իր մեծությամբ 5րդն է. այնտեղ առկա է 0.386 մլրդ տ պեռլիտ (Թուրքիայի պաշարի 6.4 %):

Մալլաթեփեի հանքավայրը գտնվում է Երզնկայից (Էրզրում) մոտ 35կմ հարավ-արևելք և քիչ դուրս է մնում Վիլսոնյան Հայաստանի տարածքից: Այն իր մեծությամբ համարվում

է Թուրքիայի 8րդ խոշոր հանքավայրը, որտեղ կենտրոնացված է Թուրքիայի պեռլիտների պաշարի 1.2%-ը՝ 0.071 մլրդ/տ[578]:

Այսինքն, ամբողջ Թուրքիայում հաստատված պաշարներով առկա 6.028 մլրդ/տ պեռլիտի 80.3 %-ը՝ 4.84 մլրդ տ կենտրոնացված է Արևմտյան Հայաստանում, որից 4.768 մլրդ տոննան կամ Թուրքիայի պաշարների 79.1 %-ը գտնվում է Վիլսոնյան Հայաստանի տարածքում:

Չվերամշակված պեռլիտի համաշխարհային գները՝ չնեռառելով տեղափոխման և ապահովագրական ծախսերը, տեղում իրացման պարագայում վերջին տարիներին դրսևորում են ոչ շատ մեծ, բայց ուղղորդված գնաճ: Այսպես, օրինակ, 2007թ. նրանք կազմել են 46 դոլար/տ, 2008թ.՝ 39 դոլար/տ, 2009թ.՝ 50, իսկ 2011թ.՝ 55 դոլար/տ: Այդ թվականներին Թուրքիան գլխավորապես արևմտյան շրջաններից արդյունահանել է 2007-ից 2011 թթ. ներառյալ 1.25 մլն տ պեռլիտ, որը կազմում էր աշխարհի արդյունահանման 14 %-ը[579], որից միայն 2007-2009 թթ. վաճառահանվել է 35 մլն դոլար արժողությամբ 0.619 մլն տ պեռլիտ հիմնականում դեպի Իսպանիա, Իտալիա, Բելգիա և Բրազիլիա: Ընդ որում, 2007 թ. 1 տ չվերամշակված պեռլիտը Թուրքիան վաճառահանել է 40.5 դոլար/տ, իսկ 2008 թ.՝ 19.8 դոլար/տ[580]: Համեմատության համար նշենք, որ փքված ավազային տիպի պեռլիտի 1 տ մեծածախ գինը Ռուսաստանում այժմ կազմում է 500-600 դոլար/տ: 2013 թ. չմշակված պեռլիտի համաշխարհային շուկայական արժեքը 57 դոլար/տ էր, 2014 թ.՝ 55 դոլար/տ, իսկ 2016-2017 թթ. կայունացել էր և կազմում էր 64 դոլար/տ[581]: Ըստ ճշգրտված տվյալների՝ 2019թ. Հայաստանում չվերամշակված կամ հում պեռլիտի (չջարդոտված, չչորացված և չտեսակավորված) 1տ վաճառվում է մոտ 25 դոլարով: Ուստի տրամաբանական է եզրակացնել, որ եթե այժմ Թուրքիան արդյունահաներ Վիլսոնյան Հայաստանի տարած-

---

[578] Տե՛ս Gul Dilek, նշվ. աշխ., էջ 5:

[579] Turkey's mining Industry. Invest.gov.tr Feb 2014, p. 28.

[580] Tülay Uyanik. Mining Industry in Turkey, Export Promotion Center of Turkey 2010, p.8.

[581] U.S. Geological Survey Mineral Commodity Summaries, January 2018, c. 127:

քի դեռևս չշահագործվող 3 խոշորագույն հանքավայր, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան՝ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, չի գտնվում մասնակի շրջափակման մեջ և կարող է օգտվել ինչպես երկաթգծից, այնպես էլ նավահանգիստներից՝ կարելի է ենթադրել, ոչ չվերամշակված պեռլիտի նվազագույն գինը տեղում չի կարող հատել 30 դոլար/տոննա սահմանագիծը: Այդ թիվը և հիմք ենք ընդունում Վիլսոնյան Հայաստանի՝ 2019թ. պեռլիտի պաշարների գնահատման համար:

Հաշվի առնելով, որ Արևմտյան և Վիլսոնյան Հայաստանի պեռլիտի հանքավայրերը առ այսօր համարյա թե չեն շահագործվել, կարելի է վստահաբար նշել, որ Արևմտյան Հայաստանի 4.84 մլրդ դոլար պեռլիտի մոտավոր շուկայական արժեքը 2019թ. նվազագույն գնով (30 դոլար/տ) կազմում է 145.2 մլրդ դոլար, իսկ Վիլսոնյան Հայաստանի տարածքում առկա 4.768 մլրդ տ պեռլիտի շուկայական արժեքը կազմում է 143 մլրդ դոլար, որի լիարժեք շահագործումից, եթե անգամ հաշվի առնենք շահութաբերության նվազագույն շեմը (10% զուտ շահույթ), կարելի է ակնկալել համապատասխանաբար 14.5 և 14.3 միլիարդ դոլարի մաքուր շահույթ*:

ՊԵՄԶԱ

Պեմզան (չեչաքար, պումիցիտ) յուրահատուկ լեռնային ապար է, որը հիմնականում կազմված է թթու կազմի հրա-

---

* Պեռլիտի հանույթի արդյունահանման և վերամշակման համեմատաբար բարձր շահութաբերության մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ Արագածոտնի մարզի Արագած գյուղի պեռլիտի վերամշակման գործարան կառուցելու համար նախատեսվում էր կատարել ընդամենը 0.3 միլիարդ դոլարի ներդրում, որտեղ հնարավոր էր արտադրել մոտ 100 միլիոն ՀՀ դրամի արտադրանք, որի շահութաբերության մակարդակը (զուտ շահույթ) նախատեսված էր 15-20%, իսկ կապիտալ ներդրումների ետգնման ժամանակաշրջանը կանխատեսվում էր ընդամենը 3-4 տարի: (ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2014 թ. –ի 12.11 N1459-Ն որոշման, Երևան 2014, էջ 54):

բխային ապակուց, չափազանց ծակոտկեն է, ունի սպունգանման փրփրանման կառուցվածք և դասվում է ոչ մետաղական օգտակար հանածոների շարքին: Ծակոտկենության պատճառով բավականին թեթև է, ծավալային կշիռը 1-ից ցածր է, տատանվում է 0.3-0.85-ի սահմաններում, և դրա պատճառով լողում է ջրի երեսին: Պեմզան առաջանում է այսպես կոչված պլինյան տիպի հրաբխային ժայթքումների ժամանակ, երբ օդ են շպրտվում հրահեղուկ լավայի բեկորներ, որի մեջ գտնվող գազերի հեռացումից հետո ստացվում է գույների՝ հիմնականում սպիտակ, բաց դեղնավուն, մոխրագույն և կարմրավուն այդ ծակոտկեն ապարը, որի չափսերը սովորաբար տատանվում են 15 սանտիմետրից մինչև 0.5 սմ[582]:

Համեմատաբար փոքր ջերմահաղորդականության և բարձր ծակոտկենության շնորհիվ պեմզան գլխավորապես օգտագործվում է շինարարության մեջ, տարաբնույթ շինարարական շաղախների, թեթև բետոնների և երկաթբետոնե կառույցների համար որպես թեթև լցանյութ, ինչպես նաև ջերմամեկուսիչ նյութեր պատրաստելու համար, ինչպես նաև որպես հղկող (աբրազիվ) և մաքրող (ադսորբենտ) նյութ[583]: Ավելի քիչ քանակությամբ այն օգտագործվում է որպես հումք ապակու և կերամիկական ապրանքների արտադրության ժամանակ, քիմիական արդյունաբերության ոլորտում՝ որպես լցանյութ և որպես աբրազիվ նյութ տարբեր քարերի և մետաղյա իրերի մշակման գործընթացում[584]:

Հայկական լեռնաշխարհի պեմզաների հանքավայրերը կապված են նորագույն հրաբխականության հետ և իրենց պաշարներով գրավում են աշխարհում ամենաառաջատար տեղը: Ներկայիս Հայաստանի տարածքում հայտնի են Անիպեմզայի

---

[582] Տե՛ս Շիրինյան Կ.Գ., Հայաստանի հրաբխականությունը և հրաբխային շինանյութերը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 35, տե՛ս նաև Խաչատրայն Է.Ա., Հայկական ՍՍՌ օգտակար հանածոները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 100:

[583] Ավագյան Հ., Հայաստանի Հանրապետության ոչ մետաղային օգտակար հանածոների արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները, Երևան, Գիտություն, 2002, էջ 17:

[584] Գևորգյան Խ.Հ. Շինարարական նյութեր Երևան, Լույս 1973, էջ 57:

խոշոր հանքավայրը՝ 15.35 մլն տ հաստատված պաշարներով, Իրինդի հանքավայրը՝ 0,685 մլն տ հաստատված պաշարներով, Պեմզաշենի հանքավայրը և այլն: Այս հանքավայրի պեմզաները պարունակում են 67-62 % SiO_2, իսկ նրանց ծավալային զանգվածը տատանվում է 510-560 կգ մ^3, այսինքն՝ 2 մ^3 պեմզան կշռում է 1 տոննայից քիչ ավել[585]:

Ժամանակակից Թուրքիայի տարածքը չափազանց հարուստ է պեմզային պաշարներով, որտեղ 2014 թ.-ի տվյալներով տեղակայված է պեմզայի համաշխարհային պաշարների 68%-ը[586]: Ներկայումս ամբողջ Թուրքիայի տարածքում հայտնի է պեմզայի 10 խոշոր հանքավայր, որոնցից մեկն արևմտյան Թուրքիայի Իզմիրի շրջանում, 2-ը՝ կենտրոնական Թուրքիայում, Արևմտյան Հայաստանի սահմաններից դուրս, Նիգդե և Անկարա քաղաքների շրջակայքում, իսկ մնացած 7-ը՝ Վիլսոնյան Հայաստանի տարածքում, որոնցից չորսը Վանա լճի մերձափնյա գոտում՝ մասնավորապես Դատվան գյուղաքաղաքի մոտ՝ Վանա լճի արևմտյան ափին, Խլաթ (Ախլաթ) բնակավայրի շրջակայքում, լճի հյուսիս-արևմտյան մասում, Ականց (Արճեշ) քաղաքի մոտ, լճի հյուսիսայի մասում և Մոլլակասըմ գյուղի մոտ, Վանա լճի արևմտյան ափին՝ Արճակ լճակից մոտ 30 կմ արևմուտք: Մնացած 3 հանքավայրը գտնվում են Կարս, Իգդիր, քաղաքներից ոչ հեռու և Արարատ լեռան հարավարևմտյան լանջերին, Բայազետ (Դոգուբայազետ) քաղաքից մոտ 10-12 կմ հյուսիս: Այս յոթ հանքավայրում կենտրոնացված է ամբողջ Թուրքիայի պեմզային հաստատված պաշարների 56 %-ը[587]:

---

[585] Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, Եր., 2001, էջ 378-379:

[586] Tapan Mucip. Use of Pumice and scoria aggregates for controlling alkali silica reaction. Physicochem. Probl. Miner. Process. 50(2), 2014, p. 467.

[587] Տե՛ս Kul A.R., Benek V., Selcuk A. et al Using natural stone pumice in Van region on Adsorption of Some Textile Dyes. Journal of the Turkish Chemical Society Chemistry (IOTSA), 2017, N 4, p. 527, տե՛ս նաև Tapan Mucip, նշվ. աշխ., էջ 467: Ըստ ճանապարհորդ Տիգրան Բաբայանի բանավոր վկայության՝ ևս մեկ պեմզային հանքավայր գտնվում է Արալիկ բնակավայրի շրջակայ-

Ըստ Mining Annual Review 2002 տվյալներևի Թուրքիայի տարածքի ամբողջ պեմզայի հանքավայրերի հաստատված պաշարները (proven+probable=A+B+C₁ կատեգորիաներ), կազմում էին 1,750 մլրդ տ, որոնց շուկայական գինը մոտ 70 մլրդ ԱՄՆ դոլար էր, այսինքն՝ 1տ-ի գինը կազմում էր 40 դոլար[588]: Այդ թվի 56 %-ը համամասնությամբ ստացվում է, որ Վիլսոնյան Հայաստանի տարածքում 2002 թ.-ին կենտրոնացված էր մոտ 39,2 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ 0.98 մլրդ տ պեմզա: Քանի որ պեմզայի համաշխարհային գները 2002-ից մինչև 2017 թթ. ներառյալ առանձնապես չեմ փոխվել և տատանվել են 20-ից մինչև 40 դոլար, իսկ 2017 թ. ևս կազմել են 40 դոլար/տ[589], և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված 7 հանքավայրը վերջին 16 տարում առանձնապես շատ չեն շահագործվել, ապա կարելի է վստահաբար պնդել, որ ներկայումս Վիլսոնյան Հայաստանի տարածքի վերը նշված 7 հանքավայրում առկա է առնվազն 38 մլրդ դոլար արժողությամբ 0.95 մլրդ/տ պեմզա:

Այս ենթադրություն արժանահավատությունը պայմանավորված է նրանով, որ Թուրքիան՝ չնայած պեմզայի հսկայական պաշարների, 2000-ական թթ. տարեկան արդյունահանվել է 3.5-ից մինչև 6.7 մլն տ պեմզա, ընդ որում, 2007 թ.՝ 4 մլն, 2008 թ.՝ 3.5 մլն, 2009՝ 4.3 մլն, 2010 թ.՝ 4.2 մլն, 2011 թ.՝ 5.8 մլն, իսկ 2016-2017 թթ.՝ տարեկան 6.7 մլն/տ*: Եթե նույնիսկ ենթադրենք, որ շահագործվել են միայն Վիլսոնյան Հայաստանի տարածքի պեմզայի հանքավայրերը, ապա նույնիսկ այդ դեպ-

---

քում՝ Խոր Վիրապ վանքային համալիրից մոտ 2 կմ հարավ, Արաքս գետի աջափնյակում, գետից մոտ 1 կմ հարավ-արևմուտք:

[588] Տե՛ս Горная промышленность Турции. Полезные ископаемые Турции: общая характеристика, с. 2, http://nado.znate.ru.

[589] U.S. Geological Survey Mineral Commodity Summaries. January 2018, p. 128.

* Ըստ ճանապարհորդ-աշխարհագետ Տիգրան Բաբայանի բանավոր հաղորդման՝ 2017 թ. տվյալներով Վիլսոնյան Հայաստանի տարածքի վերը նշված 7 հանքավայրից շահագործվում էին միայն 2-ը՝ Խլաթի (Ախլաթի) հանքավայրը և Ականցի հանքավայրերը: Դրանք շահագործվում են բաց եղանակով, և արդյունահանված պեմզան հիմնականում օգտագործվում է ճանապարհաշինության և միջնորմային սալերի արտադրության մեջ:

քում անցած 16 տարում արդյունահանված արտադրանքը չէր կարող գերազանցել 30 մլն տ-ի շեմը[590]: Բացի դրանից, ըստ որոշ տվյալների, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, շահագործվել և շահագործվում են առավելապես արևմտյան և կենտրոնական հատվածքի հանքավայրերը: Ըստ նույն աղբյուրների՝ 2010 թ.-ին աշխարհի պեմզայի արդյունահանման մոտ 25 %-ը, որը կազմում էր 100 մլն դոլար, բաժին էր ընկնում Թուրքիային, իսկ 18 %-ը՝ Իտալիային: 2016-2017 թթ. ևս պեմզայի արդյունահանման ուղղությամբ Թուրքիան առաջատարն էր աշխարհում: 2007-2009 թթ. ներառյալ Թուրքիան Չինաստան, Նիդեռլանդներ, Մեծ Բրիտանիա և Միացյալ Արաբական Էմիրություններ է արտահանել 39 մլն դոլար արժողությամբ 0.654 մլն տ պեմզա, ընդ որում, 2007 թ.՝ 1 տ 68 դոլարով, 2008 թ.՝ 1 տ 63 դոլարով, իսկ 2009 թ.՝ 1 տ 51 դոլարով[591]: Այսպիսով, շատ հավանական է, որ 2008 թ. եղած 0.98 մլն տ հանքանյութից առ այսօր արդյունահանվել է ընդամենը առավելագույնը մոտ 1 կամ 2 տասնյակ միլիոն տոննա:

Ըստ այլ աղբյուրների՝ միայն Վանա լճի արևմտյան ափի Դատվանի հանքավայրում, որը դեռևս 2000թ. թույլ էր ուսումնասիրված առկա էր մոտ 9.5 միլիարդ մ^3 պեմզա, որը Հայաստանի հանքավայրերի օրինակով հաշվի առնելով մինիմալ ծավալային կշիռը, 0.51-ից 0.56 տ մ^3, առնվազն կազմում էր 4.7 մլրդ/տ: Սակայն, քանի որ այդտեղ նշվում էր ոչ թե հաստատված, այլ երկրաբանական պաշարների մասին, կարելի է ենթադրել, որ խոսքը կանխատեսումային պաշարների մասին է[592]:

Կարևոր է նշել, որ ավելի թարմ՝ 2018 թ.-ի տվյալների համաձայն, ամբողջ Թուրքիայի պեմզայի ծավալային պաշարը գերազանցում է 9 միլիարդ մ^3-ի շեմը, որը հավասարազոր է

---

[590] Turkey's Mining Industry Invest. Gov. Tr., Feb. 2014, c. 27, U.S. Global Survey 2018, p. 129.

[591] Tülay Uyanik. Mining Industry in Turkey, Export Promotion Center of Turkey, 2010, p. 8.

[592] Տե՛ս Վեհունի Ա., նշվ աշխ., էջ 379:

մոտ 4.5 միլիարդ տոննայի[593]: Եթե համարենք, որ այդ սկզբնաղբյուրում առկա թիվն արժանահավատ է, ապա ստացվում է, որ Վիլսոնյան Հայաստանում կենտրոնացված է ոչ թե 36-39 մլրդ դոլարի արժողությամբ 0.98 մլրդ տ պեմզա, այլ՝ մոտ 100 միլիարդ դոլար արժողությամբ մոտ 2.52 (56%) մլրդ տ պեմզայի հանքաքար:

Քանի որ պեմզայի հանքավայրերը շահագործվում են բաց եղանակով, ապա դրանց շահագործումից ստացված մաքուր շահույթը՝ տրանսպորտային ծախսերը հանած, կարող է կազմել 35-40 % և հետևաբար այդ հանքավայրերի լիակատար շահագործումից 2017 թ.-ի գներով կարելի է ակնկալել մոտ 55-60 միլիարդ դոլարի մաքուր շահույթ: Ինչևիցե, մենք այստեղ հիմք ենք ընդունում Վիլսոնյան Հայաստանի պեմզայի ոչ թե կանխատեսումային, այլ հաստատված պաշարները՝ մոտ 0.95 մլրդ տ և 35 մլրդ դոլար արժողությամբ (2017 թ. գներով), որի լիարժեք շահագործումից՝ հավանաբար տասնյակ կամ նույնիսկ հարյուրավոր տարիների ընթացքում, կարելի է ակնկալել առնվազն 10 %-ի զուտ շահույթ, որը 2017 թ. գներով կկազմեր 3.6 միլիարդ դոլար:

ՔԱՐԱՂ

Քարաղը բնության մեջ հանդիպում է հալիտ NaCl միներալի ձևով և ներկայումս այն լայն կիրառություն ունի ինչպես սննդարդյունաբերության մեջ՝ որպես կերակրի աղի հումք, այնպես էլ քիմիական արդյունաբերության տարբեր ոլորտներում, կալցինացված և կաուստիկ սոդայի, աղաթթվի, քլորիդային կալցիումի, քլորի, նատրիումի, ամոնիումի, ցինական նատրիումի, արտադրանքի համար, ինչպես նաև տեքստիլ, լաքաներկային, դեղագործության, կաշեգործության և թղթի արտադրության ոլորտներում: Այն օգտագործվում է նաև լվացող հեղուկների, հերբիցիդների և նաշատիրային սպիրտի արտադրության համար:

[593] Компания Blokfilms делает ставку на надежные партнерские отношения, Международное бетонное производство, М., 2018, N 2, с. 84:

Աղից ստացված քլորն իր հերթին օգտագործվում է թունաքիմիկատների և պոլիվինիքլորիդի (վինիպլաստի) արտադրության համար: Ընդ որում, բարձրարժեք քարաղերը՝ NaCl-ի բարձր պարունակությամբ, օգտագործվում են կերակրի աղ ստանալու համար, իսկ ավելի ցածրարժեք տեսակները՝ որպես տեխնիկական աղ արդյունաբերության վերը նշված ոլորտների օգտագործման համար:

Ներկայումս պատմական Հայաստանի տարածքում առկա է մեկ տասնյակից ավելի քարաղի հանքավայր՝ մասնավորապես, անցյալում շահագործվել է Խնուսի մերձակայքի Ելթիս գյուղի նշանավոր Շառաղնես աղահանքը[594], ինչպես նաև Խնուսից մոտ 40կմ հյուսիս-արևմուտք գտնվող Թաթոս գյուղի աղահանքը. վերջինիս աղը ստացվում էր հանքային ջրերի պարզունակ վերամշակման արդյունքում[595,596]: Սակայն ամենանշանավոր աղի (քարաղի) հանքավայրը, որը մշտապես դարեր ի վեր ռազմավարական, իսկ երբեմն էլ՝ ճակատագրական նշանակություն է ունեցել պատմական Հայաստանի տնտեսական կյանքում, Կողբի հանքավայրն է, որը շահագործվել է վաղնջական ժամանակներից*:

---

[594] Զատիկյան Հ., Կարինը նահանգը XIX դարի կեսին, Երևան, 2013, էջ 235:

[595] Մելքոնյան Ա.Ա., Էրզրում, Երևան, Հայաստան, ՀՀ ԳԱԱ, 1994, էջ 92:

[596] Համբարյան Ա.Ա., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը: 1856-1914թթ. Արմավիր, Պարգև Ոսկանյան, 2003, էջ 231:

* Վաղ միջնադարում այս աղահանքի մեծ տնտեսական նշանակության մասին է խոսում այն փաստը, որ երբ 620 թ. այն զավթում են բյուզանդական զորքերը, ամենայն Հայոց 28-րդ Կաթողիկոս Եզր Ա. Փառաժամնակերտցին 633 թ. հատուկ մեկնում է Կարին և խնդրում բյուզանդական կայսր Հերակլիսիոսից բյուզանդացիների կողմից շահագործվող Կողբի աղահանքերից ստացված աղի հանույթի գոնե 1/3-ը թողնել Էջմիածնի վանքին: Տե՛ս Ավագյան Ս., Սուրմալու-Երևան, Վան- Արյան 2000, էջ 56:

900-ական թթ. սկզբներին Կողբն իր աղահանքերով անցնում է Աշոտ Մսակեր Բագրատունու եղբոր՝ սպարապետ Շապուհ Բագրատունու որդու՝ Աշոտ Բագրատունի Շապուհյանի տիրապետության ներքո. որը համարվում էր վերջինիս սեփական դաստակերտը: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 170:

Հանքավայրը գտնվում է անմիջականորեն Արաքսի աջ ափին՝ գետի հունից մոտ 4 կմ հարավ-արևմուտք, նախկին Երևանի նահանգի Սուրմալուի գավառում, Բարդող լեռան հյուսիս-արևելյան ստորոտին պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Ճակատեն գավառում, Արաքսի աջակողմյան վտակ Կողբ (հին Հայաստանում Վարդամարգ) գետի ափին: Կողբը ներկայիս թուրքական քարտեզներում վերանվանվել է Թուզլուզա՝ թուրքերեն թուզ՝ աղ բառից[597]:

Կողբի աղահանքի համբավն այնքան մեծ էր, որ այն ճանապարհը, որով այդ աղն արտահանվում էր մինչև Թիֆլիս, Կողբի աղահանքեր-գետանցում Արաքսի վրայով- Երվանդաշատ-Բագարան-Վերին Ջրափի-Բայանդուր-Գյումրի-Բանդիվան-Մեծ Սեպասար-Տրոիցկոյե լեռնանցք (Ախլքալաքի Նովա-Տրոիցկոյե լճի ափին) Գորելովկա-Բոգդանովկա-Ծալկա-Թբիլիսի երթուղով անվանվում էր «աղի ճանապարհ»: Այս ճանապարհով, հիմնականում գարնանը և աշնանը անընդհատ շարժվում էին 40-50 սայրերից կազմված քարաղի քարավաններ:

1880-1890-ական թթ. այս երթուղու աղաքարավանային երթևեկության ինտենսիվությունը մասամբ նվազեց Ռուսաստանի հարավային մասերից արդյունահանված աղի մրցակցության պատճառով: Սակայն այդ թվականներին այս ճանապարհով տարեկան Վրաստան էր արտահանվում մոտավորապես 8000 տ քարաղ: 1902թ., երբ գործարկվեց Թիֆլիս-Երևան երկաթգիծը, այս ճանապարհը վերջնականապես կորցրեց իր նշանակությունը և աղի բեռները սայլերով հասցվում էին մինչև Արաքս կայարան, իսկ այնուհետև տեղափոխվում

[597] Տե՛ս Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 196: Հայտնի է, որ 1230-ական թթ. Կողբի աղահանքը պատկանել է ոմն մեծատու Օտար Կողբեցուն, ով իր կնոջ՝ Սեվդայի հետ միասին նվիրաբերել է աղահանքի մասնաբաժնի կեսը Անիից քիչ արևմուտք գտնվող հայտնի Բագնայի վանքին: Տե՛ս Առաքելյան Բ. Ն., Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը, Պատմաբանասիրական հանդես, 1958, N 2, էջ 46:

երկաթուղիով: Միայն 1912 թ. այս ճանապարհով Թիֆլիս է արտահանվել մոտ 11 հազ. տ աղ[598]:

Ըստ լեռնային ճարտարագետ Ա. Մարգոլիուսի, ով մանրազնին ուսումնասիրել է այդ աղահանքը, 1891թ. այստեղից արդյունահանվել է 5168 տ. քարաղ, 1893 թ.-ին՝ 10500 տ., իսկ 1898 թ.՝ արդեն 17600 տ.: Ամենաշատ քանակությամբ աղ արդյունահանվել է 1902 թ.՝ մոտ 28 հազ. տ., որից վաճառվել է 8 հազ. տ.: Նրա հաշվարկներով Կողբի աղահանքի ամբողջ շահագործման ընթացքում՝ սկսած վաղ միջնադարից, մինչև 1908 թ. ներառյալ այստեղից արդյունահանվել է ընդհանուր առմամբ 2,288 մլն տ. քարաղ, որը կազմում էր իր իսկ կողմից հաշվարկված այս հանքի աղի պաշարների ընդամենը 0,45 %-ը[599]:

Կողբի աղահանքը, ինչպես նաև մնացած գրեթե բոլոր աղահանքերը (բացառությամբ Նախիջևանի Սուստինի հանքավայրի) համարվում էին Ռուսական Կայսրության պետական սեփականությունը և տրվում էին մասնավոր անձանց միայն վարձակալության իրավունքով: Մասնավորապես Կողբի աղահանքը կապալով հանձնված էր հայտնի գործարար Ջանփոլադյան ընտանիքին, որը մեծ նյութական ներդրումներ կատարեց, արդիականացրեց աղահանքը, ներդրեց անգլիական արտադրության աղահատ մեքենաներ, հանքահորում և նրա շրջակայքում կառուցեց նեղգիծ երկաթուղի, աղը հանքախորշերից դուրս էին հանում վագոնետկաներով: Այս հսկայական ներդրումների հետևանքով քարաղի արդյունահանումը որոշակիորեն աճեց: 1907-1908 թթ. Ջանփոլադյաններից բացի Կողբի աղահանքի կապալառուներ դարձան Ա.Ն. Սելյանովը, Բրոդսկին և Պ.Ն. Պրիդոնյանը, որոնք Կողբի աղահանքում ճոպանուղի կառուցելու նախագիծ ներկայացրեցին: 1910 թ.

---

[598] Տե՛ս Օհանյան Ա., Ահռելս տրանսպորտը նախասովետական Հայաստանում: ԵՊՀ գիտ. աշխ. աշխարհագրական գիտ. սերիա. պրակ 1, հ. 43, Եր., 1954, էջ 22-23:

[599] Տե՛ս Марголиус А., Соленосные образованской Карсской области и Эриванской губернии. Материалы для геологии Кавказа, сер. 3, к. 8, Тифлис, 1909, с. 126.

դրությամբ պատմական Հայաստանի տարածքներում աղի արդյունաբերության մեջ ընդհանրապես աշխատում էր 126 մարդ, որոնց մեծ մասն աշխատում էր Կողբի աղահանքերում[600]:

Հարկավոր է նշել, որ մինչ այդ էլ Կողբի կապալառուների թվում եղել են հայտնի հայազգի ձեռնարկատերեր, մասնավորապես թիֆլիսցի ազնվական Մ. Խուդաբաշովը: 1828-1831 թթ. Թիֆլիսի բնակիչներ Պ. Զուբալովը, Մ. Միրիմանովը և այլք 4 տարում արդյունահանված ամբողջ քարաղը վաճառեցին 865552 արծաթե ռուբլով[601]:

1900-ական թթ. սկզբներին Կողբի աղի 1 փութի ինքնարժեքը, որն Այսրկովկասում ամենաբարձրն էր (NaCl՝ մինչև 93,7 %), կազմում էր մոտ 2 կոպ (1 կգ՝ 0,125 կոպ), ընդ որում՝ մակերևութային արդյունահանման ժամանակ ինքնարժեքը 1 կոպ էր 1 փթի դիմաց (1 կգ՝ 0,062 կոպ), իսկ ստորգետնյա արդյունահանման դեպքում ինքնարժեքը թանկանում էր և հասնում 1,8 կոպ/փութ (0,112 կոպ/կգ): Աղի վաճառքի գինը Երևանում 1 կգ համար հասնում էր 1,25 կոպ, Գյումրիում՝ 1,5 կոպ, Կարսում՝ 2 կոպ, Թիֆլիսում՝ 2,2 կոպ[602]:

Կողբից հետո իր նշանակությամբ երկրորդ աղահանքը Կաղզվանի աղահանքն էր՝ Կարսի մարզի Կաղզվան քաղաքից մոտ 3,5-4 կմ հյուսիս-արևմուտք՝ Արաքսի աջ ափին: Այս հանքավայրը ևս շահագործվել էր շատ հնուց և ևս աչքի էր ընկնում բարձրարժեք քարաղով: Դեռևս Բագրատունիների իշխանական տոհմի օրոք՝ XI դարում, Կաղզվանի քարաղը արտահանում էր հարևան Վրաստան և Միջագետք: Այս աղահանքի համբավն այնքան մեծ էր, որ դեպի հարավ-արևելք տարանցիկ քարավանային ճանապարհի՝ Հայկական Պարը

---

[600] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 305, 442, տե՛ս նաև Օհանյան Ա., Երկաթուղային տրանսպորտը նախասովետական Հայաստանում , ԵՊՀ գիտ. աշխատություններ, 1950, հ. 30, էջ 266:

[601] Տե՛ս Тунян В. Г., К истории соляных промыслов Восточной Армении (II четверть XIX) Изв АН Арм СР, Науки о Земле, 1985, № 4, с. 67.

[602] Տե՛ս Марголиус А., Соленосные образования Карсской области и Эриванской губернии, с. 129.

կտրող լեռնանցքը՝ Գայլատու լճից հյուսիս-արևմուտք, անվանվում էր Աղտոռոր, այսինքն՝ Աղի կիրճ[603]:

1896-1905թթ. այստեղից տարեկան արդյունահանվում էր մոտ 7500 տ. քարաղ: Քարաղի հաշվարկված կամ ապացուցված պաշարները խիստ զիջում էին Կողբի պաշարներին ու, ըստ լեռնային ճարտարագետ Ա. Մարգոլիուսի հաշվարկների, կազմում էին ընդամենը 1,66 մլն տ., իսկ աղի արդյունահանության ինքնարժեքը մոտավորապես նույնն էր, ինչ Կողբում[604,605]:

Նշանակությամբ երրորդ, ամենափոքր հանքավայրը գտնվում էր Կարսի մարզի Օլթի քաղաքից մոտ 18 կմ հյուսիս-արևմուտք Ճորոխի վտակ Օլթի գետակի ձախ ափին: Այստեղի աղն իր որակով՝ ի տարբերություն Կողբի և Կաղզվանի քարաղի, ավելի ցածրակարգ էր (NaCl՝ մինչև 88.2 %), իսկ հաստատված պաշարները 1907-1908 թթ. դրությամբ նվազագույնը կազմում էին մոտ 3.2 մլն տ.: 1891-1904 թթ. այս աղահանքից արդյունահանվել է ընդամենը 15600 տ. քարաղ[606], իսկ միայն 1914թ.՝ 1000 տ., որը 11 անգամ քիչ էր Կողբի նույն տարվա արդյունահանումից՝ 11066 տ. և ավելի քան 7.5 անգամ քիչ Նախիջևանի տարածքից արդյունահանված քարաղի (7600 տ.) քանակությունից[607]:

Քարաղի այս 3 հանքավայրից Առաջին Հանրապետության իշխանությունները հնարավորություն է ունեցել շահագործել միայն Կաղզվանի հանքավայրը, այն էլ բավականին կարճ ժամանակով՝ միայն 1920 թ.: Որոշ տվյալներով 1920 թ.

---

[603] Еремян С.Т., Присоединение северо-западных областей к Византии в XI веке, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1971, N3, с. 8:

[604] Նույն տեղում, էջ 46:

[605] Տե՛ս Меллер В., Денисов Д. М., Полезные ископаемые и минеральные воды Кавказского Края, Тифлис, 1917, с. 266.

[606] Տե՛ս Марголиус А., Соленосные образования Карсской области и Эриванской губернии, с. 186, 194-196.

[607] Տե՛ս Карапетян О.Т., Минеральные богатства Армении. Отчет фонда Института геологических наук N300, Ереван 1919, с. 9.

հուլիսին այստեղից արդյունահանվել է օրական մոտ 4.8 տ. քարաղ[608]:

Հարկ է նշել, որ ինչպես վերը նշված 3 հանքավայրի քարաղը, այնպես էլ Նախիջևանի արդյունաբերական նշանակություն ունեցող քարաղի հանքավայրերը (Նեգրամ, Սուստ և այլն) և Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո բացահայտված ՀՍՍՀ տարածքի աղային պաշարները (մերձերևանյան շրջան) և այլն ըստ ճշգրտված տվյալների երկրաժամանակագրական տեսակետից միաժամանակյա գոյացումներ են, առաջացել են սրանից մոտ 13.8-13.6 մլն տարի առաջ եղած ժամանակահատվածում և թվագրվում են միջին միոցենի, միջին կարագանի (միջին լանգիան) ենթահարկով[609,610]:

Հետպատերազմյան տարիներին՝ 1945-1953թթ., միայն Կողբի աղահանքից արդյունահանվում էր տարեկան մոտ 20 հազ. տ. չմշակված քարաղ[611]: 1959 թ. Կողբի աղահանքից արդյունահանվել է 6245 տ. քարաղ, Կաղզվանի աղահանքից՝ 4650 տ., իսկ Օլթիի աղահանքից՝ 1260 տ. (ընդամենը՝ 12550 տ.)[612]:

1966 թ. Թուրքիայի ամբողջ տարածքից արդյունահանվել է 2.665 մլն դոլարի արժողությամբ 0.285 մլն տ. տարբեր տիպի աղ (քարաղ, լճային և ծովային աղեր)[613]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ աղի միջինացված մեծածախ գինը ընդհանրապես 1966 թ. կազմում էր 9.35 դոլար/տ.: Հետևաբար 1958 թ. քարաղի ենթադրաբար հաշվարկված գինը չէր կարող

---

[608] Տե՛ս Աշխատավորի ձայն: Կարս 1920, N 16, հուլիս:

[609] Տե՛ս Мелик-Адамян Г.У., Межрегиональная корреляция миоценовых эвапоритов Южного Кавказа. Материалы конференции. Проблемы региональной геологии сверной Евразии. М., МГРИ-РГГРУ, 2016, с. 64.

[610] Մելիք-Ադամյան Հ., Բաբայան Տ. Հայկական լեռնաշխարհի աղային նստվածքները. Ակադեմիկոս Ա.Տ. Ասլանյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովի թեզիսներ, Երևան, փետրվարի 7-8, ՀՀ ԳԱԱ, 2019, էջ 10:

[611] Տե՛ս Լուդշուվեյտ Ե.Ֆ., Թուրքիա, Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 442:

[612] Տե՛ս Stenley J. Lefond. Handbook of World Salt Resources. New York Plenum Press 1969, p. 362.

[613] Տե՛ս Dogan Zeki. The economic importance of mineral production in Iran, Pakistan and Turkey in view of co-operation in mineral Exports and interregional Trade Bulletin of the Mineral Research and Exploration Institute of Turkey. Ankara 1968, N71, p. 75.

ավելի ցածր լինել, քան 7-8 դոլար/տ: Հարկ է նշել, որ Թուրքիայում աղի արդյունահանումը միմիայն պետական մենաշնորհ էր: 1940-ական թթ. երկրորդ կեսին և 1950-ական թթ. առաջին կեսին ամբողջ Թուրքիայի տարածքում արդյունահանվող աղի տարբեր տարատեսակների (ծովաղ, լճաղ, քարաղ և հանքային ջրերից ստացված աղ) տարեկան հանույթը կազմում էր 0.25-ից 0.3 միլիոն տ, որից ծովաղին բաժին էր ընկնում 60%-ից քիչ ավելի, քարաղին և լճաղին՝ 15-16% յուրաքանչյուրը (այսինքն՝ տարեկան արդյունահանվում էր մոտ 37 հազար տ քարաղ), իսկ հանքային ջրերից ստացված աղին՝ մոտ 8%: Ընդ որում, ծովաղը ստանում էին Արևմտյան Թուրքիայի Իզմիրի շրջանում, լճաղը՝ հիմնականում Կենտրոնական Թուրքիայի Տուզ լճից, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տարածքից դուրս, իսկ քարաղը՝ Հայաստանի առաջին Հանրապետության տարածք համարվող Կողբ, Կաղզվան և Օլթիի հանքավայրերից: Արդյունահանված աղի ընդհանուր քանակի մոտ 0.2-0.25 միլիոն տ սպառվում էր երկրի ներսում, սիկ մոտ 0.05 միլիոն տ՝ արտահանվում[614]: Միայն 1959 թ. ներկայիս Կարսի մարզի տարածքից արդյունահանվել է առնվազն 0.1 մլն դոլարի քարաղ, իսկ 1946-1954 թթ. արդյունահանված մոտ 0.16 մլն տ. քարաղի (տարեկան 20 հազ. տ.) շուկայական մեծածախ գինը ամենահամեստ հաշվարկներով (1տ՝ մոտավորապես 6.5 դոլար) կազմում էր 1 մլն դոլարից ավելին:

1998-1999 թթ. տվյալներով ամբողջ Թուրքիայի տարածքի քարաղի հաստատված (հետախուզված) պաշարները կազմում են 1 միլիարդ 469 մլն տ., որից Կողբինը՝ 100 մլն տ., Կաղզվանինը՝ 60 մլն տ. և Օլթիինը՝ 30 մլն տ.[615], իսկ քարաղի միջազգային վաճառահանման գինը նույն թվերին՝ կախված ո-

---

[614] Լուդշուվեյտ Ե.Ֆ., Թուրքիա, Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 164-165:

[615] Տե՛ս Ertem M.E., Engin V.T., Ertem H.I., Salt in Turkey. 17, International Mining Congress and Exhibition of Turkey. IMCT, 2001, p. 636, տես նաև Боярко Г.Ю., Экономика минерального сырья, Томск, Изд. Ауди – Информ, 2000, с. 21

ռակից, տատանվում էր 35-70 դոլար/տ*: 1996-1999 թթ. աշնանը Թուրքիան չմակված քարաղը վաճառահանել է 1 կգ-ը 6000 թուրքական լիրայի համամասնությամբ, այսինքն՝ մոտ 32.6 դոլար/տ (1997 թ. նոյեմբերին 1 ԱՄՆ դոլար = 183968 թուրքական լիրայի), որն այդ ժամանակվա համաշխարհային գների ստորին նիշից էլ քիչ ցածր էր:

Կողբի աղահանքի ներկայիս տեսքը, լուսանկարը՝ Տ. Բաբայանի

1997-1998 թթ. 1 տ. քարաղի արդյունահանման ինքնարժեքը տատանվում էր մոտ 20 դոլար/տ սահմաններում (այսինքն՝ 61.3% մեծածախ վաճառահանման գնից), որն անհամեմատ ավելի բարձր էր լճային (մոտավորապես 9-10 դոլար/տ.) և ծովային (մոտավորապես 4-5 դոլար/տ.) աղի արդյունահանման ինքնարժեքներից:

1990-ական թթ. վերջին մի քանի տարում Կողբի աղահանքից արդյունահանվում էր միջինը 20 հազ. տ. քարաղ, իսկ

---

* Ռուսաստանի Դաշնությունում ներկայումս ընդունված դասակարգման համաձայն՝ հաստատված պաշարները մատնանշվում են A+B+C_1 կատեգորիաներով, որոնք ըստ ԱՄՆ-ում ընդունված դասակարգման՝ մատնանշվում են որպես reserves, իսկ ըստ ֆրանսիական դասակարգման՝ A+B = reserves, իսկ C_1 = resources: Տե՛ս Боярко Г.Ю., նշվ. աշխ., էջ 81:

Կազվանի աղահանքից՝ մոտ 12 հազ. տ.[616], այսինքն՝ տարին առնվազն 1 մլն դոլար արժողությամբ (1997 թ.-ի նոյեմբերի գներով)՝ 32 հազ տ. քարաղ տարեկան ստացված մաքուր շահույթը՝ մոտ 39 %, հասնում էր մոտ 0.39 մլն դոլարի: Ըստ հավաստի տեղեկությունների՝ 2000 թ.-ից ի վեր ինչպես Կողբ, այնպես էլ Կաղզվանի և Օլթիի քարաղի հանքավայրերը ինչ-ինչ պատճառներով այլևս չեն շահագործվում, իսկ Կողբի հանքավայրի հանքախորշերը թուրքական կառավարությունը մտադրված է ընդգրկել զբոսաշրջության ոլորտում: 2017 թ. 1 տ չմշակված քարաղի միջազգային մեծածախ գինը 45 դոլար/տ էր, որը 5 դոլարով ավելի քիչ էր, քան 2016 թ.[617]:

Այսպիսով, 1990-ական թթ. վերջերին միայն Հայաստանի առաջին Հանրապետության նախկին տարածքներում առկա էր մոտ 8.55 մլրդ դոլարի 190 մլն տ հաստատված պաշարներով քարաղ, որի վերջնական շահագործումից կարելի էր ակնկալել 3.3 մլրդ դոլարի (38.7%) ընդհանուր շահույթ 2017թ.-ի քարաղի վաճառահանման մեծածախ գներով, որից զուտ շահույթը (ընդհանուր շահույթ հանած տարաբնույթ հարկեր) ամենահամեստ հաշվարկներով կարող էր կազմել վաճառահանման գնի առնվազն 15%-ը կամ 1.282 մլրդ դոլար: Ելնելով այս 3 աղահանքի քարաղի արդյունահանման միջինացված տվյալներից՝ բավականին վստահաբար կարելի է ենթադրել, որ 1945-ից մինչև 2000թ., այսինքն՝ 55 տարում, այստեղից արդյունահանվել է նվազագույնը 1.9 մլն տ քարաղ (35 հազ. տ տարեկան), որի մեծածախ վաճառահանման շուկայական արժեքը 2017թ. գներով կազմում է 85.5 մլն դոլար:

ԳՈՐՇ ԱԾՈՒԽ ԿԱՄ ԼԻԳՆԻՏ

Ներկայիս Թուրքիայի տարածքը չափազանց հարուստ է գորշ ածխի կամ լիգնիտի պաշարներով, որը՝ ի տարբերութ-

[616] Տե՛ս Ertem M.E., Engin V.T., Ertem H.I., Salt in Turkey. 17, International Mining Congress and Exhibition of Turkey, pp. 38-39.
[617] Mineral Commodity Summaries 1018, U.S. Geological Survey, Reston, Virginia, 2018, p. 138.

յուն քարածխի, իր ջերմատվությամբ և այլ որակական հատկանիշներով զիջում է վերջինիս և համարվում է ավելի ցածրարժեք ածուխի տեսակ: Գորշ ածուխները ամբողջ աշխարհում գրեթե չեն արտահանվում և հիմնականում օգտագործվում են հանքավայրերից ոչ հեռու կառուցված ջերմակայանները աշխատեցնելու նպատակով: Ներկայումս Թուրքիայի ամբողջ տարածքի լիգնիտների ապացուցված պաշարները կազմում են 8.4 միլիարդ տ, իսկ տարեկան արդյունահանումը՝ 60-65 միլիոն տ.: Արդյունահանվող լիգնիտի մոտ 80%-ը կատարվում է պետական միջոցներով:

Կարսի մարզի և Արևմտյան Հայաստանի տարածքներում առկա է լիգնիտի մեկ տասնյակից ավելի քիչ թե շատ խոշոր հանքավայր, որոնց ընդհանուր պաշարները գերազանցում են 1 միլիարդ տ. և որոնք ենթակա են արդյունաբերական շահագործման: Դրանցից ամենահայտնին թերևս Օլթիի հանքավայրն է՝ Կարսի մարզի Օլթի քաղաքից մոտ 30 կմ հյուսիսարևելք: Անգլիացի լեռնային ճարտարագետ Հովելի կողմից 1900-ական թթ. կատարված հաշվարկներով այդ հանքավայրի լիգնիտի պաշարները գնահատվել էին 205,4 միլիոն տ[618]: Այն Առաջին Հանրապետության կողմից շահագործվել է պետական ֆինանսական միջոցներով 1920 թ. հունիսի վերջերից մինչև նույն թվականի սեպտեմբերի կեսերը և այնտեղից օրական արդյունահանվում էր 80-90 տ գորշ ածուխ, որն այդքան անհրաժեշտ էր մեղմելու երիտասարդ հանրապետության վառելահումքային սովը[619]: Ըստ այլ հաշվարկների՝ այդ հանքավայրի հավանական պաշարները գնահատվում էին 12 միլիոն տ, իսկ հաստատված պաշարները՝ 7.5 միլիոն տ[620]:

---

[618] Карапетян О.Т., Минеральные богатства Армении. Отчет фонда Института геологических наук, N 300, Ереван, 1919, с. 10:

[619] Տե՛ս Բալայան Ա., Սիմոն Վրացյանը ՀՀ գյուղատնտեսության և պետական գույքի նախարար. Բանբեր Հայաստանի արխիվների 2005, N 1, էջ 186:

[620] Меллер В., Денисов Д. М., Полезные ископаемые и минеральные воды Кавказского Края, Тифлис, 1917, с. 294:

Ներկայումս Արևմտյան Հայաստանի տարածքում ամենախոշորը Ղանղալի հանքավայրն է (111 մլն տ.) պատմական Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառում՝ Սվազից մոտ 65 կմ հարավ-արևմուտք, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով նախանշված Հայաստանի տարածքում խոշորներից են Երզնկայի հանքավայրը՝ մոտ 60 մլն տ պաշարներով, Խնուսի հանքավայրը՝ մոտ 33 մլն տ պաշարներով, Կարինի (Էրզրումի) հանքավայրը՝ 9.5 մլն տ պաշարներով, Սրմանցի կամ Բյուրակնի (Բինգյոլի) հանքավայրը՝ 30 մլն տ., Արճեշի հանքավայրը Վանա լճի մոտ՝ 1.2 մլն տ և այլն[621]: Ավելի փոքր ծավալների լիգնիտի երևակումներ հայտնի էին նաև Արճակ լճից մոտ 15-16 կմ հյուսիս-արևմուտք, Վան քաղաքից մոտ 30 կմ հյուսիս և 65 կմ հարավ-արևմուտք, Ալաշկերտից քիչ հարավ՝ Սուկավետ (Կեքսե 3445մ) լեռան շրջակայքում: Վերջինիցս դեռևս 1900-ական թթ. արդյունահանվում էր մոտ 2400 տ միջին որակի գորշ ածուխ[622]:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի տարածքում առկա է մոտ 250 և ավելի մլն տ գորշ ածուխ, իսկ «Վիլսոնյան Հայաստանի» տարածքում՝ մոտ 140 մլն տ[623]: Իրականում այդ թիվը կարող է գերազանցել 200 մլն տ. սահմանագիծը, քանի որ ըստ նորագույն ճշգրտված տվյալների՝ Բյուրակնի (Բինգյոլի) հանքավայրի լիգնիտի հաստատված պաշարները՝ Կարինից (Էրզրումից) մոտ 65-70 կմ հարավ, գնահատվում են ոչ թե 30 մլն տ, այլ 88 մլն տ[624]:

Նշված հանքավայրերի լիգնիտների միջին որակից ելնելով (ջերմատվությունը՝ 4200 կալորիա/կգ Օլթիի լիգնիտների համար, մինչև 2500-ից 1460 կալորիա/կգ Երզնկայի և Սրմանցի լիգնիտների համար)՝ կարելի է ենթադրել, որ նրանց վաճառահանման նվազագույն գինը ներքին շուկայում չէր կարող

---

[621] Վեհունի Ա., նշվ. աշխ., էջ 387-391:

[622] Мелик-Адамян Г.У. Изыскания российских геологов в западной Армении летом 1917г, с. 64-65:

[623] Տե՛ս Վեհունի Ա., նշվ. աշխ., էջ 387-391:

[624] Տե՛ս Мосаки Н.З., Курдистан: ресурсы и политика, М., 2005. с. 161.

հատել 20 դոլար/տ նվազագույն սահմանագիծը*: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ բոլոր լիգնիտների հանքավայրերը շահագործվում են բաց եղանակով, իսկ տեղափոխման ծախսերն էլ այդքան մեծ չեն, քանի որ սովորաբար օգտագործվում են տեղում՝ ջերմաէլեկտրականների կարիքների համար՝ կարելի է ենթադրել, որ այդ հանքավայրերից ստացված զուտ շահույթը չի կարող 10 %-ից ցածր լինել:

Այսպիսով, 2018 թ. տվյալներով Արևմտյան Հայաստանի տարածքում կենտրոնացված է մոտ 5 միլիարդ դոլարի արժողության 250 մլն տ լիգնիտ, որից «Վիլսոնյան Հայաստանի» տարածքին բաժին է ընկնում 4 մլրդ դոլար արժողությամբ 200 մլն տ. գորշ ածուխ, որի վերջնական շահագործումից կարելի է ակնկալել համապատասխանաբար առնվազն մոտ 0.5 միլիարդ և 0.4 մլրդ դոլարի զուտ շահույթ: Կարևոր է նշել, որ համապատասխան Թուրքիայի էներգետիկայի նախարարության պետական երկարաժամկետ ծրագրի՝ մինչև 2020 թ.՝ ներառյալ լիգնիտների արդյունահանումը նախատեսվում է ավելացնել 2.6 անգամ[625], որը ևս մեկ անգամ փաստում է դրանց բարձր շահութաբերության մասին:

ԲԱՐԻՏ ԿԱՄ ԾԱՆՐ ՍՊԱԹ

Բարիտը՝ $BaSO_4$, բարիումի բնական սուլֆատն է, որը պարունակում է 65,7 % BaO և 34,3 % SO_4: Բարիտը աչքի է ընկնում համեմատաբար բարձր տեսակարար կշռով (4,2-4,7

---

* Գորշ ածուխների միջազգային վաճառահանման գները բավականին տատանվում են՝ կախված նրանց որակական հատկանիշներից: Նշված 20 դոլար թիվը հիմնավորվում է նրանով, որ ըստ TrendEconomy.ru կայքի՝ 2018 թ. Ղրղզստանը վաճառահանել է 9.267 մլն դոլար արժողությամբ 0.367 մլն տ լիգնիտ, որից հետևում է, որ 2018 թ. Ղրղզական լիգնիտի 1 տ արժեր մոտ 25 դոլար: Հաշվի առնելով, որ Թուրքիայի լիգնիտները իրենց որակով չեմ զիջում ղրղզականին, կարելի է ենթադրել, որ թուրքական լիգնիտի 1տ կարժենար առնվազն 20 դոլար/տ:

[625] Калугин П.Е., Современное стратегическое сотрудничество РФ с Турцией в сфере энергетики, Диссерт. на соиск. уч. ст. кан. ист. наук., Иркутск, 2014, с. 57-58:

գ/սմ³), որի պատճառով այն երբեմն անվանում են նաև ծանր սպաթ: Բարիտը բնութագրվում է հիմնականում սպիտակ գույնով, երբեմն՝ դեղին և կարմիր երանգավորումներով. այն թթվակայուն է (մեծ դժվարությամբ տարալուծվում է միայն ծծմբային թթվում) և ունակ է կլանել ռենտգենյան և այլ տիպի ռադիոակտիվ ճառագայթներ: Բարիտային հանքանյութերը հարստացվում են հիմնականում գրավիտացիոն և ֆլոտացիոն եղանակներով և կիրառվում են նավթային արդյունաբերության մեջ՝ որպես հորատման համար նախատեսված կավային լուծույթների ծանրացնող նյութ, հորատման ժամանակ նավթագազային հնարավոր, չնախատեսված ժայթքումները կանխարգելու և հորատանցքերի հնարավոր փլուզումները կանխելու նպատակով: Բարիտի մանր աղացած փոշին կիրառվում է նաև որպես ռետինի, բարձրորակ առանձնահատուկ սպիտակության թղթի, հատուկ նշանակության գործիքային ապակիների և մետաղական համակցված համաձուլվածքների, ռադիոճառագայթակլանիչ բետոնների ու այլ շինանյութերի, լաքաներկային, շոկոլադի, բժշկական տարբեր դեղամիջոցների արտադրության մեջ, ինչպես նաև անմիջականորեն միջուկային ռեակտորներում[626]:

Բարիտի ամենամեծ հաստատված պաշարներով Թուրքիան գրավում է 10-րդ տեղը՝ 5 մլն տ. հաստատված պաշարներով, որը կազմում է համաշխարհային պաշարների ընդամենը 1,3 %-ը, սակայն բարիտի արտահանման ծավալներով այն գրավում է աշխարհում երկրորդ տեղը: 2007թ. արտահանել է 5,2 մլն դոլար արժողությամբ 0,115 մլն տ. բարիտ, իսկ 2008 թ-ին՝ 5,8 մլն դոլարի 0,123 մլն տ., 2005թ. արտահանել է 331,5 դոլարի բարիտ[627]:

---

[626] Տե՛ս Խաչատրյան Է.Ա., Հայկական ՍՍՌ օգտակար հանածոները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, էջ 73, տե՛ս նաև Романович И.Ф., Месторождения неметаллических полезных ископаемых, М., Недра, 1986, с. 88-89, Калинин Е.П., Бариты республики Коми: современное состояние и перспективы развития, Вестник института геологии Коми науч. центра РАН, 2010, № 3, с. 2.

[627] Калинин Е.П., Бариты республики Коми: современное состояние и перспективы развития, с. 2.

Բարիտի համաշխարհային գները ներկայումս համահարաբերակցվում են հիմնականում բնական գազի և նավթի համաշխարհային գների հետ: Այսպես, օրինակ, 2008թ. վերջերին սկսված համաշխարհային ճգնաժամի արդյունքում, երբ նավթի ու գազի համաշխարհային գները էապես նվազեցին, ինչի արդյունքում կրճատվեցին նավթագազային հորատանցքերի հորատման ծավալները, բարիտի համաշխարհային գները որոշակիորեն նվազեցին՝ հասնելով մոտ 70-75 դոլար/տ., իսկ հետագայում հետզհետե աճեցին: 2010-ական թթ. սկզբներին տատանվում էին 168-180 դոլար/տ., իսկ 2014-2015 թթ.՝ հասնում մինչև 190-194 դոլար/տ: 2016-2017 թթ. բարիտի գները տատանվում են 170-187 դոլար/տ սահմաններում: 1980-ական թթ. բարիտի 1 տ. գինը տատանվում էր 50 դոլար/տ. սահմաններում, իսկ բարիտի խտանյութի գինը՝ 90-180 դոլարի սահմաններում[628]:

Բուն հայկական լեռնաշխարհում՝ Արևմտյան Հայաստանի տարածքում, տեղակայված է 6 հանքավայր և հանքերհակում, որոնցից ամենախոշորը Մուշի և նրա շրջակայքի Կարմիր եկեղեցու հանքավայրերն են: Համաձայն համացանցային տվյալների՝ բարիտի հանքավայրերը առաջին անգամ հայտնաբերվել են Մուշի շրջակայքում 1945 թ., իսկ 1978թ. Էմաշ EMAS-ընկերության կողմից Մուշում հիմնադրվել է բարիտի վերամշակման գործարան: Ե՛վ հանքավայրը, և՛ գործարանը ներկայումս գործարկվում են: Մուշի հանքավայրը գտնվում է Մուշ քաղաքից 19,5 կմ հարավ-արևելք՝ Բիթլիսի նահանգի Մուշի գավառի (Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Տարոնի գավառ) Հողունի կամ Մոկունք՝ ներկայիս Հասկոյ գյուղի շրջակայքում, որն 1914 թ. ուներ մոտ 600 հայ բնակիչ՝ Մուշ-Բիթլիս ճանապարհի աջ կողմում[629,630,631,632]: Մուշի հան-

---

[628] Տե՛ս Обзор рынка баритовых концентратов в СНГ. Демонстрационная версия., М., Инфомайн, 2010, с. 14, 17-19, տե՛ս նաև U.S. Geological Survey, Mineral Commodity Summaris, January 2018, p. 28, Industry mining Turkey Republic of Turkey Ministry of Economy Ankara, 2017, p. 3.

[629] Տե՛ս Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, էջ 356:

քավայրը ծագումնաբանորեն կապված է վերին պրոտերոզոյի և ստորին պալեոզոյի հասակի ջրաջերմային փոփոխություն-ների ենթարկված փայլարային և քվարցիտային թերթաքարե-րի հետ, որտեղ առկա է բարիտի մինչև 41 շերտ, ուր բարիումի սուլֆատի պարունակությունը տատանվում է 90-99 %: Բարի-տի հետախուզված կամ ապացուցված (հայտնի) պաշարները գնահատվում են 0,57 մլն տ, իսկ հեռանկարային պաշարները՝ մոտ 1,5 մլն տ:

Կարմիր եկեղեցու հանքավայրը իր ծավալներով ավելի փոքր է, տեղակայված է Մուշից մոտ 14-15 կմ արևելք՝ Մուշ գավառի Բուլանըխի գավառակում, Թիլ կամ Կարմիր Վանք գյուղի մոտակայքում: Այստեղ հայտնի պաշարները գնահատ-վում են 0,137 մլն տ, իսկ հեռանկարայինը՝ մոտ 0,7 մլն տ[633]:

Այսպիսով, միայն Մուշի շրջակայքում կուտակված է Թուրքիայի ամբողջ բարիտի հաստատված պաշարների ավե-լի քան 10%-ը՝ մոտ 0.7 մլն տ, իսկ հեռանկարային պաշարները կազմում են 2.2 մլն տ: Այսինքն, 2017թ. միջազգային վաճառա-հանման գներով (չմշակված բարիտի 1 տ = 170 դոլար[634]) «Վիլ-սոնյան Հայաստանի» տարածքում գտնվող Մուշի շրջակայքի բարիտի հանքավայրերում առկա է 119 մլն դոլար արժողութ-յամբ հումք՝ հաստատված պաշարների տեսքով, և 374 մլն դո-լարի արժողությամբ՝ հեռանկարային պաշարների տեսքով:

ՈՍԿԻ

Հայտնի է, որ ոսկին դասվում է ազնիվ մետաղների շար-քին, այն բավականին ծանր (տեսակարար կշիռը՝ 19,26 գ/սմ^3), կռելի, փափուկ, քիմիապես կայուն և հազվագյուտ մետաղ է:

---

[630] Տե՛ս Industry mining Turkey, 2017, p. 3.

[631] Տե՛ս Ryan C.W., A quide of the know minerals of Turkey. Ankara, 1960, p. 183-184.

[632] Տե՛ս Հակոբյան Թ. Խ. և ուրիշ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, էջ 863:

[633] Տե՛ս Վեհունի Ա., նշվ. աշխ., էջ 356:

[634] Mineral Commodity Summaries 2018, U.S. Geological Survey, Reston, Virginia, 2018, p. 28.

Բնության մեջ ոսկին հանդիպում է ինչպես բնածին տեսքով, այնպես էլ տարբեր միացություններով և միներալների ձևով, որոնցից արդյունաբերական տեսանկյունից առավել նշանակալից են ոսկու և արծաթի 25-50% խառնուրդը՝ էլեկտրումը՝ AuAg, սիլիվանիտը՝ $(AuAg)Te_2$, կալիվարիտը $(AuTe_2)$ և այլ միներալներ և միացություններ[635]: Պատմական Հայաստանի տարածքում ոսկի է արդյունահանվել և մշակվել դեռևս վաղնջական ժամանակներից: Մեծ Հայքի տարածքում ոսկու հանքավայրեր և հանքերևակումներ հայտնի էին շատ տեղավայրերից, բայց դրանցից ամենահայտնին թերևս Բարձր Հայքի Սպեր գավառում[636] գտնվող ոսկու հանքավայրներն էին, որոնք գտնվում էին Ճորոխ գետի միջին հոսանքի ավազանում՝ ներկայումս Էրզրումի նահանգի (Իլ) հյուսիս-արևմտյան մասում՝ Էրզրում քաղաքից մոտ 60-70 կմ հյուսիս-արևմուտք տեղակայված Իսպիր քաղաքի շրջակայքում*: Կարևոր է նշել,

---

[635] Խաչատրյան Է.Ա., Հայկական ՍՍՌ օգտակար հանածոները, Եր., 1963, ՀՍՍՌ ԳԱ, 1963, էջ 57-58:

[636] Գավառի հայտնի գյուղերից մեկի՝ Հունուտի անունով Սպերը երբեմն կոչվում էր նաև Հունուտ: Մելքոնյան Ա.Ա. Էրզրում: Երևան, Հայաստան, ԳԱԱ, 1994, էջ 77:

* Այս ցրոնային տիպի ոսկու հանքավայրը շահագործվել է դեռևս Աքեմենյան թագավորների տիրապետության օրոք՝ մասնավորապես սկսած Դարեհ I-ի (մ.թ.ա.522- 485) գահակալության օրոք, երբ Սպերի գավառը աքեմենյանների 18-րդ սատրապության կազմում էր: Հանրահայտ փաստ է, որ Ալեքսանդր Մակեդոնացին, տեղեկացված լինելով այստեղի ոսկու պաշարների մասին, մ.թ.ա. 330-329-ին Սպեր է ուղարկում մի զորամիավորում՝ Մենոնի գլխավորությամբ՝ նպատակ ունենալով զավթելու այդ հանքերը: Սակայն այս զորագունդը տեղի բնակչության կողմից ջախջախվում է, իսկ Մենոն զորավարը սպանվում, խեղդամահ է լինում: Մ.թ.ա. I դարում հույն աշխարհագետ Ստրաբոնը (մ.թ.ա. 63-24 թթ.) ևս հիշատակում է այդ ոսկեհանքերը՝ անվանելով դրանք Սուսպիրիտիս, որը, ըստ Հրաչյա Աճառյանի, պատմական Հայաստանի նույն Սպեր գավառն է: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Եր., ՀՍՍՌ ԳԱ, 1971, էջ 501; Տե՛ս նաև Ինճիճեան Ղ., Հնախօսության Հայաստանյաց Աշխարհի, Վենետիկ, Սուրբ-Ղազար, 1835, c. 184: Զատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Եր., 2013, էջ 272-273:

Վերը նշածից կարելի է եզրակացնել, որ այս ցրոնային ոսկու հանքավայրախմբերը առնվազն 500 տարվա և միգուցե ավելի ժամանակա-

որ այդ հանքավայրերից մեկն անվնավում էր նաև Կարմրադեղ կամ Հայկական գույն: Սպերի ոսկե հանքերը հայերի կողմից վստահաբար շահագործվել են մինչև մ.թ. V դարը ներառյալ և, հավանական է, նաև դրանից հետո[637]:

Բրոնզե դարում մ.թ.ա. 2100-ից մինչև մ.թ.ա. 1200 արդյունահանվել է 40 տ., երկաթե դարում մ.թ.ա. 1200-ից մինչև մ.թ.ա. 50՝ 70 տ. և այսպես կոչված հռոմեական շրջանում մ.թ.ա. 50-ից մինչև մ.թ.ա. 500՝ մոտ 12 տ.: Հետաքրքիր է նշել, որ նույն 500 տարվա ընթացքում Իսպանիայի տարածքից արդյունահանվել է 1850 տ., իսկ Չինաստանից՝ 170 տ.[638]: Որպեսզի հասկանալի լինի, թե ինչ ծավալների ոսկու արդյունահանման մասին է խոսքը այդ հսկայածավալ տարածաշրջանում, նշենք, որ այլ հաշվարկներով, ամբողջ աշխարհում մ.թ.ա. 3900-ից մինչև մ.թ.ա. 500-ը, այսինքն՝ 4400 տարում, արդյունահանվել է մոտ 10000 տ. ոսկի, հաջորդ 1000 տարում՝ 500-ից մինչև 1493թ.՝ ընդամենը՝ 2500 տ. ոսկի[639]:

հատվածում ինտենսիվորեն շահագործվել են, և այստեղից գետաբերուկ նստվածքային ապարների լվացման մեթոդով արդյունահանվել է բավականին մեծ քանակությամբ ոսկի: Ամենայն հավանականությամբ արդեն վաղ միջնադարում Սպերի ոսկեբեր հանքերը գրեթե սպառվել էին, համենայն դեպս, երբ այդ գավառը անցավ Բագրատունի իշխանական տոհմի տիրապետության տակ, այստեղի ոսկեբերության մասին այլևս չի նշվում: Սակայն բացառված չէ, որ ավելի քիչ ծավալներով այս հանքավայրախմբերը դեռևս շահագործվում էին: Դժվար է հաշվարկել, թե Սպերի ոսկեբեր ցրոններից որքան ոսկի է արդյունահանվել, սակայն որոշակի մոտավորությամբ կարելի է ենթադրել, որ ոչ ավելի քան մի քանի տասնյակ տոննա: Այս ենթադրությունը խարսխված է Ս.Վ. Պոտյոմկինի այն մոտավոր հաշվարկների վրա, որ մ.թ.ա. 4500 մինչև մ.թ.ա. 500 տարին, այսինքն՝ 5000 տարվա ընթացքում, ամբողջ Փոքր Ասիայի և Կովկասի ընդարձակ տարածաշրջանից արդյունահանվել է մոտ 130 տ ոսկի, որից մ.թ.ա. 4500-ից մինչև մ.թ.ա. 2100 տարիներին՝ մոտ 10 տ.:

[637] Мкртчян Т.А., Долгий путь от камня до железа, Ер., Чартарагет, 2004, с. 202.

[638] Տե՛ս Потемкин С.В., Благородный 79-й (очерк о золоте), М., Недра, 1988, с. 40.

[639] Տե՛ս Марфунин А.С., История золота, М., Наука, 1987, с. 238.

Չնայած այն հանգամանքին, որ միջնադարում արձանագրված ոսկու համաշխարհային արդյունահանման ծավալների կտրուկ նվազման պատճառները չեն վերլուծվում, կարելի է ենթադրել, որ այն պայմանավորված էր, ինչպես և Սպերի ոսկեհանքերի դեպքում, ոսկու ցրոնային տիպի հանքավայրերի պաշարների հետզհետե սպառմամբ: Հայտնի է, որ ցրոնային տիպի հանքավայրերի շահագործումն ավելի արդյունավետ և դյուրին է, իսկ ինքնարժեքը ևս ավելի ցածր:

Բացի վերը նշված Սպերի ոսկեբեր գոտուց, Հայկական լեռնաշխարհի և պատմական Հայաստանի՝ ներկայիս Թուրքիայի տարածքի ոսկեբեր հանքավայրերի, հանքերևակումների մասին բազմաթիվ տեղեկություններ կան ինչպես սեպագիր և մատենագիր սկզբնաղբյուրներում, այնպես էլ հնագիտական պեղումների ժամանակ ձեռք բերված փաստացի նյութերի վերլուծության արդյունքում: Այսպես, բացի Սպերից, հայտնի են նաև 4 ուրարտական շրջանի հանքավայրեր և հանքերհակումներ՝ Երզնկայից հարավ-արևմուտք, Եփրատ գետի ձախ ափին՝ Ոսկեբեր քաղաքաբերդից քիչ արևմուտք, Բիթլիսից արևմուտք-հարավ-արևմուտք, Մալաթիայի արևելյան շրջակայքում և Սղերտ բնակավայրից քիչ հարավ-արևմուտք, Դիարբեքիրից արևելք:

Միջնադարյան Հայաստանում հայտնի էին ոսկու 20 հանքեր և հանքերևակումներ, որոնք գտնվում են ներկայիս Թուրքիայի տարածքներում: Դրանցից ամենահայտնիներն էին Արծաթահան (Գյումուշխանե) բնակավայրի մոտակայքի հանքավայրերը, Արդվինի օկրուգում՝ Արդվինի քաղաքից մոտ 13-15 կմ հարավ-արևմուտք, Ոսկեբերդ (Կամախ) Երզնկայից հարավ-արևմուտք, Եփրատի վերին հոսանքի ավազանում և Տուժիկ-պապա՝ Երզնկայից մոտ 20 կմ հարավ, նույնանուն լեռնագագաթի շրջակայքում՝ Խարբերդից (Էլյազիգ) արևմուտք, Արշամաշատ և 30 կմ հարավ Էլեգիա կամ Ելիջե, Կղեսարք՝ Մուշից բավականին արևմուտք, համանուն լեռների շրջակայքում, ինչպես նաև Ոսկիի՝ Խնուսից հյուսիս-արևելք, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ծաղկոտն գավառում, Ոսկեհանք-Արճեշից հյուսիս-արևմուտք, Ոսկեբակ Վանի Տոսպ գա-

վառակում՝ Վան քաղաքից քիչ արևելք: Ակնհայտ է, որ վերջին 3 տեղանունները վստահաբար կապված էին ոսկու արդյունահանման և հանքավայրերի հետ[640]: Մեծ Հայքի Տայք աշխարհում՝ Ճորոխ գետի միջին հոսանքի ավազանում, ևս հայտնի էին մի քանի ոսկու միջնադարյան հանքավայրեր, որոնցից ամենանշանավորը Տայք աշխարհի Արսյացփոր գավառի Փառանգիոն ամրոցի մոտակայքի ոսկու հանքն էր, Ճորոխի վտակներ՝ Օլթիի և Թորթում գետերի միախառնման վայրում: Այստեղ ոսկեհանքը վաղ միջնադարում գտնվում էր Հայաստանի հռոմեական և պարսկական մասերի սահմանագլխին և այնքան հայտնի էր ու շահութաբեր, որ դարձել էր կռվախնձոր 2 կողմերի միջև*:

Չնայած ոսկու հանքավայրերի և հանքերևակումների բազմազանությանը, մինչև 2000թթ. սկիզբը Թուրքիան ինչ-ինչ պատճառներով որպես ոսկի արդյունահանող երկիր գրեթե աչքի չէր ընկնում, և այն՝ որպես ուղեկցող մետաղ հիմնակա-

---

640 Տե՛ս Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա. III հազարամյակ-մ.թ.ա. XIV դ.) Երևան, 2007: Ոսկու հանքավայրերի և հանքերակումների քարտեզ մ. 1: 3.000.000. Կազմեց Հ.Գ Սարգսյանը:

* Ըստ VI դարի բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացու՝ ի սկզբանե Փառանգիոնի կամ Ֆառանգիոնի ոսկեհանքերը շահագործել են պարսիկները, բայց այնուհետև բյուզանդացի կայսր Հուստինիանոս Ա-ի գահակալության օրոք (527-565թթ.) այդ ոսկեհանքերի տնօրենն էր հայազգի ոմն Սիմեոնը, ով մինչև այդ պարսիկ արքա Կավադ 1-ի թույլատվությամբ գլխավորում էր այդ հանքի շահագործումը: 527 թ., երբ վերսկսվեց պարսկա-բյուզանդական պատերազմը, նա դադարեցրեց Կավադին վճարել դրամական մուտքեր ոսկու ձևով և այն հանձնեց բյուզանդացիներին: Տե՛ս Պրոկոպիուս Կեսարացի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 5, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ, 1967, էջ 40-41: Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ,, Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան Հ.5, Երևան, 2001, էջ 238:

Տայք աշխարհում ոսկեհանքերի շահագործման և արդյունահանման մասին է հիշատակում նաև V դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցին (442 թ. - VI դարասկիզբ), որի տնօրինությունը իր ձեռքն էր վերցրել Վահան Մամիկոնյանը: Տե՛ս Հակոբյան Ն.Գ., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը: Հայաստանի հնագիտական քարաղ հուշարձանները, հ. 10, պրակ III, Եր., 1981, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1981, էջ 9:

նում արտադրվում էր Արղանամադեն (Էրգանի) պղինձ-բազմամետաղային հանքավայրերից՝ Խարբերդից մոտ 30 կմ հարավ-արևելք: 1950-ական թթ. տվյալներով այս հանքավայրից տարեկան ձուլվում էր մոտ 17 հազ. տ. սև պպղինձ, որի մեկ տ որպես ուղեկցող մետաղ ստացվում էր մոտ 19,4 գ. ոսկի, այսինքն՝ տարեկան մոտ 321 կգ[641]: 1960-ական թթ. առաջին կեսի տվյալներով ոսկու հանույթը ևս տատանվում էր 300 կգ-ի սահմաններում[642]:

XX դարի սկզբներին Օսմանյան կայսրության ամբողջ տարածքից տարեկան ոսկու հանույթը ավելի քիչ էր՝ մոտ 1500 ունցիա, այն է՝ մոտ 45-46 կգ[643]: Ըստ որոշ հաշվարկների՝ հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջերը ներկայիս Թուրքիայի ամբողջ տարածքից արդյունահանվել է ընդամենը 4000 տ. ոսկի[644]:

2018 թ. դեկտեմբերի 18-ի գներով (ոսկու եռակի ունցիան՝ 31,1գ. = 1248 դոլար կամ 1 գ. = 40.1 դոլար), սա կազմում է 160.4 միլիարդ դոլար: Այդ քանակության առյուծի բաժինը արդյունահանվել է պատմական Հայաստանի տարածքից: Մոտավոր հաշիվներով Արղանամադեն հանքավայրից 1950-1970-ական թթ. ձուլվել է ավելի քան 0,5 մլն տ. սև պղինձ (եթե հիմք ընդունենք 1960-ական թթ. միջինացված տվյալները՝ 17000 տ./տարի), որից ստացվել է մոտ 9,5 տ. ոսկի (եթե հիմք ընդունենք, որ մեկ տ. սև պղնձի ձուլումից ստացվում էր առնվազն 19 գ. ոսկի): Հետևաբար միայն երեսուն տարում այդ հանքավայրից արդյունահանված ոսկու շուկայական արժեքը 2018թ. դեկտեմբերի 18-ի գներով կազմում է մոտ 0.371 միլիարդ դոլար: Եթե հաշվարկենք այս հանքավայրից ձուլված ամբողջ քանակությունը 1937 թ.-ից առ այսօր (որը կարող է գե-

---

[641] Տե՛ս Ryan C.W. A quide to the known minerals of Turkey, Ankara, 1960, p. 60.

[642] Տե՛ս Ժամանակակից Թուրքիա, էջ 103:

[643] Տե՛ս Հարաճեան Յ., Հանքեր Հայաստանի Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ, էջ 45:

[644] Տե՛ս Горная промышленность Турции, Mining Annal Review 2002, p. 3, http://nado.znate.ru.

ռազանցել 1 մլն տ.), ապա այստեղից ոսկու արդյունահանված քանակությունը առնվազն կարող է կրկնապատկվել և կազմել 800 միլիոն դոլար արժողությամբ մոտ 20 տ ոսկի:

2000 թ.-ից մինչև 2018 թ. ներառյալ Թուրքիայում ոսկու արդյունահանության ոլորտում կատարվել է իսկական հեղափոխություն, և ներկայումս Թուրքիան համարվում է ոսկի արդյունահանող առաջատար երկրներից մեկը, որը վերջին տարիներին արդյունահանում է տարեկան մոտավորապես 30 տ. ոսկի: 2016 թ.-ի տվյալներով՝ Թուրքիայի ամբողջ տարածքում հաշվառվում էր ոսկու մոտ 30 քիչ թե շատ խոշոր, արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայր, որոնցից 4-ը՝ ցրոնային տիպի: Ոսկու հաշվարկված պաշարները (A, B, C_1 կատեգորիաներով) կազմում են 840 տ., իսկ կանխատեսումնային ռեսուրսները՝ 6,5 հազ. տ.[645]: Այդ հանքավայրերից 9-ը տեղակայված են Արևմտյան Հայաստանի նահանգներում և Կարսի մարզում, իսկ 4-ը՝ «Վիլսոնյան Հայաստանի» տարածքներում, որոնցից 3-ը՝ Էրզրումից հյուսիս, հին հայկական Արծաթահան կամ Գյումուշխանե գավառի (պատմական Փոքր Հայքի առաջին Հայքի պրովինցիա) տարածքում: Այս հանքավայրերից խոշորագույններից է Մաստրա (Mastra) հանքավայրը՝ Գյումուշխանեից 15 կմ հարավ-արևելք, որի ոսկեբեր հանքանյութի պաշարները (A+B+C_1) կատեգորիաներով մոտ 1 մլն. տ են, իսկ ոսկու քանակությունը 12 գ/տ է: Այսինքն, այս հանքավայրում առկա է 12 տ ոսկի[646], որի շուկայական արժեքը 2018 թ. դեկտեմբեր ամսվա տվյալներով կազմում է 481.2 մլն դոլար: Հաշվի առնելով, որ Թուրքիայում ոսկու արդյունահանման ինքնարժեքը սովորաբար չի գերազանցում ոսկու շուկայական արժեքի 60-65 %-ը, կարելի է ենթադրել, որ այս հանքավայրի շահագործումից ստացված ընդհանուր շահույթը կկազմի առնվազն 192 մլն դոլար 2018 թ. դեկտեմբերի

[645] Տե՛ս Mineral Potential of Turkey, Mining Turkey, 01 march 2012, p.18, 21, www.madencilik-turkey.com, տե՛ս նաև Dagistan Hayrullah, Mineral deposits of Turkey, March 4, 2013, p. 22, 25, Верхозин С. С., Золотодобывающая промышленность Турции, Золотодобыча, № 216, ноябрь, 2016, с. 1-2.

[646] Տե՛ս Mineral potential of Turkey, 2012, p. 21.

գներով, որից զուտ շահույթը (ընդհանուր շուկայական վաճառահանման գնի 15 %-ը) կարող է կազմել 72.18 միլիոն դոլար: Գյումուշխանեի գավառի մյուս 2 հանքավայրերի ոսկու պաշարները շատ ավելի համեստ են և կազմում են ընդամենը 2,495 տ., որի շուկայական գինը 2018 թ. դեկտեմբերի գներով կկազմի մոտ 100 մլն դոլար, իսկ շահագործումից ստացված ընդհանուր շահույթը կկազմի մոտ 34 մլն դոլար: Այսինքն, միայն Գյումուշխանեի ոսկու հանքերի շահագործումից ընդհանուր շահույթը կարող է կազմել առնվազն 200 մլն դոլար :

Ջերաթեփին (Cerattepe-Artvin) հանքավայրը՝ Արդվին քաղաքից մոտ 4-5 կմ հարավ-արևելք, պարունակում է 32,8 տ մաքուր ոսկի և 1148 տ արծաթ, իսկ ոսկու պարունակությունը հանքանյութում հասնում է 4 գ/տ[647]: Հետևաբար այստեղ կուտակված է 1.315 մլրդ դոլարի ոսկի, որի շահագործումից վերը նշված մեթոդաբանությամբ հաշվարկելով (առնվազն 35% ընդհանուր շահութաբերություն), զուտ շահույթը (15 %) կկազմի առնվազն 0.197 մլրդ դոլար: Կարսի մարզի՝ Կաղզվանի շրջակայքի ցրոնային ոսկու շահագործման շահութաբերությունը (0,1գ/մ^3) տվյալների սակավության և քիչ արժանահավատության պատճառով հնարավոր չէ հաշվարկել մեծ ճշգրտությամբ:

Այսպիսով, 2012-2013 թթ. տվյալներով միայն «Վիլսոնյան Հայաստանի» տարածքում առկա էր նվազագույնը 47.3 տ 1.896 մլրդ դոլարի (2018 թ.-ի դեկտեմբերի գներով) ոսկի, որի զուտ շահույթը կարող էր կազմել նվազագույնը 0.284 մլն դոլար: «Վիլսոնյան Հայաստանի» տարածքից դուրս է Երզնկայի (Էրզինջան) նահանգի հարավ-արևմտյան մասում գտնվող Թուրքիայի ներկայիս երկրորդ խոշոր ոսկու Իլիջ-Ջոպլեր (Ilic-Copler) հանքավայրը, որը տեղակայված է Երզնկայից մոտ 85 կմ հարավ-արևմուտք՝ Կամախի գավառում՝ Եփրատ գետի աջափնյակում՝ պատմական Բարձր Հայքի նահանգում:

Այս հանքավայրում, որը օլիգոցեն-միոցենի հասակի է, ոսկու պարունակությունը հանքանյութում 2002 թ. տվյալներով կազմում էր միջինը 3.3 գ/տ: Հաշվարկված հանքանյութի պաշարները (A=B+C$_1$) կազմում էին 34 մլն տ, որտեղ պարու-

[647] Տե՛ս Mineral potential of Turkey, 2012, p. 21.

նակվում էր 112.2 տ մաքուր ոսկի[648]: Այն շահագործվում է բաց եղանակով ամերիկա-ավստրալական Alacer-Gold ընկերության կողմից 2014 թ.-ից: Այդ նույն թվականին այստեղ արդյունահանվել է 7,1 տ. ոսկի, իսկ 2015 թ.՝ 6,4 տ.[649]: 2015 թ., երբ ոսկու միջազգային գինը եռակի ունցիայի համար 1138 դոլար էր, այս հանքավայրի մեկ եռակի ունցիայի (31.1 գ.) լրիվ ինքնարժեքը 690 դոլար էր, այսինքն՝ շահագործման ընդհանուր շահութաբերությունը 39,4 % էր: Եթե ենթադրենք, որ նույն շահութաբերությունը եղել է նաև 2014 թ., ապա 2014-2015 թթ. արդյունահանվել է 13,5 տ. ոսկու 2018 թ. հուլիսի կուրսով հաշվարկված 529,2 դոլար արժեքից՝ մաքուր շահույթը կազմել է 208,5 մլն. դոլար: Իսկ եթե ենթադրենք, որ 2016-2018թթ. նեբառյալ այստեղից արտահանվել է ևս մոտ 20 տ ոսկի՝ տարին միջինացված մոտ 6.6 տ, ապա ներկայումս (2018 թ. դեկտեմբեր) այստեղ մնացել է մոտ 79 % ոսկի, որի շուկայական արժեքը 2018 թ. տվյալներով 3.167 մլրդ դոլար է: Բացի այս հանքավայրից ևս երկու ոսկու հանքավայրեր ավելի համեստ՝ միասին 1,197 տ. ոսկի 46,9 մլն դոլար շուկայական արժեքով, տեղակայված են Տրապիզոնի նահանգի Օրդու քաղաքի շրջակայքում[650]: Այս հանքավայրերի շահագործումից ևս կարելի է ստանալ առնվազն 25-26 մլն դոլար շահույթ:

Այս երկու հանքվայրերը՝ Ordu-Akoluk և Ordu Sayaca, որտեղից հաշվարկված են համապատասխան 1,195 տ. և 0,02 տ. ոսկի, տեղակայված են Տրապիզոնի նահանգի Օրդուի գավառակում (պատմական Հայաստանի Վերին Հայքի Խաղտիքի գավառում)[651]: Այս հանքավայրերի ոսկու շուկայական արժեքը ներկայումս կազմում է մոտ 48 մլն դոլար, իսկ հնարավոր շահագործումից ստացված զուտ շահույթը՝ մոտ 7.2 մլն դոլար:

---

[648] Mineral Potential of Turkey. Mining Turkey 01.03.2012, p. 19.

[649] Տե՛ս 2014 Minerals Yearbook Turkey Advance Release V.S. Geological Survey, September, 2016 p. 46, 47, տե՛ս նաև Верхозин С. С., Золотодобывающая промышленность Турции, с. 2-3.

[650] Տե՛ս Dagistan Hayrullah, Mineral deposits of Turkey, March 4, 2013, p. 25.

[651] Տե՛ս Dagistan Hayrullah, Mineral deposits of Turkey, March 4, 2013, p. 25.

Այսպիսով, ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքի բոլոր հանքավայրերում առկա ոսկու քանակությունը մոտ 127.5 տ է, որի շուկայական արժեքը՝ առ 18.12.2018, կազմում է 5.112 միլիարդ դոլար է, իսկ հնարավոր շահագործումից ստացած զուտ շահույթը այսօրվա դրությամբ կարող է կազմել մոտավորապես 0.767 միլիարդ ԱՄՆ դոլար: Մասնավորապես Վիլսոնյան Հայաստանի տարածքում կենտրոնացված է 48.49 տ հաստատված պաշարներով 1.944 միլիարդ դոլարի ոսկի, որի շահագործումից 2018 թ.-ի դեկտեմբերի գներով (1 գ = 40.1 դոլար) կարելի է ակնկալել առնվազն 0.29 միլիարդ դոլարի զուտ շահույթ:

ԱՐԾԱԹ

Արծաթը, որը, ինչպես հայտնի է, ևս դասվում է ազնիվ մետաղների շարքին, տեսակարար կշռով (10,5 գ/սմ^3) ոսկուց անհամեմատ ավելի թեթև է և հադիսանում է սպիտակ, փափուկ և հեշտ կռելի, լավ էլեկտրահաղորդականությամբ օժտված մետաղ: Բնության մեջ այն հանդիպում է ինչպես բնածին տեսքով, այնպես էլ տարբեր միներալների և միացությունների ձևով, որոնցից են արգենտիտը՝ Ag_2S_2, էլեկտրումը՝ AgAu և այլն: Այժմ արծաթի արդյունահանման հիմնական հումք են հանդիսանում գունավոր մետաղների կամ բազմամետաղային համալիր հանքավայրերը, որտեղից արծաթը կորզվում է պղնձի, կապարի, ցինկի, ոսկու և նիկելի հետ միասին համընթաց՝ որպես ուղեկցող մետաղ: Մաքուր արծաթե հանքավայրեր հանդիպում են համեմատաբար հազվադեպ, մոտ 50 % արծաթ կորզվում է կապար-ցինկային հանքանյութերից, 15 %՝ պղնձի հանքաքարերից, 10 %՝ ոսկու հանքաքարերից և միայն 25 %-ը՝ բուն արծաթե հանքավայրերից:

Արդյունաբերական նշանակության և շահագործման տեսակետից շահավետ են համարվում այն հանքավայրերը, որտեղ արծաթի պարունակությունը 1 տ. տատանվում է 45-50-ից մինչև 200գ և ավելին՝ կախված ուղեկցող մետաղների

առկայությունից, նրանց արժեքից և հանքավայրի հզորությունից[652]:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում և Արևմտյան Հայաստանի հատվածում արծաթ է արդյունահանվել դեռևս վաղնջական ժամանակներից*:

Արղանամադենի հանքավայրից բացի, Հայաստանում անտիկ ժամանակաշրջաններից շահագործվել է նաև մեկ այլ նշանավոր արծաթահանք՝ Կապան Մադենը կամ Քեբանը՝ Խարբերդից (ներկայիս Էլյազիգ) մոտ 25 կմ հյուսիս-արևմուտք՝ անմիջականորեն Եփրատի ձախափնյակին: Այստեղի բազմամետաղային ցինկ-կապարային տիպի հանքանյութի (գալենիտ մինեռալ) 1 տ. պարունակվում է մինչև 400 գ. արծաթ և հենց այս հանքավայրի արծաթից են հատվել հելլենիստական Սելևկյանների դինաստիայի (մ.թ.ա. 312-64) արծաթե դրամները՝ մասնավորապես 16,9 գ. քաշով և 30 մմ տրամագծով Անտիոքոս II (մ.թ.ա. 261 - մ.թ.ա. 264) արծաթե տետրադրախմաները[653]: Հին աշխարհի մյուս հայտնի արծաթի հանքավայրը, որը ևս շահագործվել է անտիկ ժամանակաշրջանից, հանրահայտ Գյումուշխանեի կամ Գյումուշխանի հանքավայրն է՝ առաջվա հունական Արգիրոկաստրոն և հետագայում հայկական Արծաթահանը, որը գտնվում է Տրապիզոնից մոտ 80 կմ հարավ-արևմուտք, Սև ծովի ավազանին պատկանող

---

[652] Տե՛ս Максимов М.М., Очерк о серебре, М., Недра, 1981, с. 5.

* Այս տարածաշրջանում արծաթի ամենավաղ արդյունահանումը տեղի է ունեցել դեռևս մ.թ.ա. 2-րդ դարում Արղանամադենի (ներկայումս Մադեն կամ Էրգանի) պղինձ-բազմամետաղային հանքավայրից (Դիարբեքիրի նահանգում՝ Դիարբեքիրից մոտ 37 կմ հյուսիս-արևմուտք), որը համարվում է աշխարհում ամենահին շահագործվող պղնձի հանքը: Այստեղ հանքանյութը, որը ներկայացված է հիմնականում պիրիտով և խալկոպիրիտով, ի սկզբանե տեղադրված էր երկրի մակերևույթին մոտ և մասնակիորեն հասու էր բաց եղանակով շահագործման համար: Արծաթը և ոսկին այստեղ կորզվում էին որպես ուղեկցող մետաղ պղինձ արդյունահանելու ժամանակ: Այն ժամանակ 1 տոննա պղնձից ստացվում էր 1 կգ արծաթ և 17-30 գ. ոսկի:

[653] Տե՛ս Максимов М.М., Очерк о серебре, с. 8, տե՛ս նաև Ժամանակակից Թուրքիա, էջ 103:

Խորաշատ կամ Գյումուշխանե գետի հովտում՝ պատմական Փոքր Հայքի առաջին Հայքի պրովինցիայում: Ըստ որոշ տեղեկությունների՝ այս բազմամետաղային հանքավայրի հանքանյութերից ևս արծաթ է արդյունահանվել անտիկ ժամանակահատվածից[654]:

Հարկ է նշել, որ այս երեք հանքավայրերը որոշակի ընդհատումներով շահագործվել են ինչպես վաղ, այնպես էլ ուշ միջնադարում և ներկայումս էլ են շահագործվում: Այս հանքավայրի մասին ուշագրավ տեղեկություններ է թողել աշխարհահռչակ իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլոն (1254-1324 թթ.), Չինաստանից Թավրիզ-Նախիջևան-Վարդանանց լեռնանցք-Էրզրում-Բաբերդ-Տրապիզոն ուղեգծով հետադարձի ժամանակ:

Ճանապարհորդը Մեծ Հայաստանի մասին խոսելիս նշում է. «Այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որը կոչվում է Արգինգա (Երզնկա), երկրի ժողովուրդը հայեր են, որոնք հպատակվում են թաթարներին: Մի ավանում կոչված Պայպուրթ (Բայբուրդ կամ Բաբերդ), որը դուք անցնում եք Տրապիզոնից-Թավրիզ գնալիս, կա արծաթի մի լավ հանք»[655]: Հ. Հակոբյանը ենթադրում է, որ նշված արծաթե հանքը հենց Գյումուշխանան է, որը գտնվում է Բաբերդից մոտ 70 կմ հյուսիս, հյուսիս-արևմուտք[656]: Հակոբյանի տեսակետը միանգամայն հիմնավոր է, քանի որ մոտակայքում այլ արծաթահանքեր պարզապես չկան, իսկ Մարկո Պոլոյի հիշատակումը վկայում է նաև այն մասին, որ տվյալ հանքավայրն այդ ժամանակաշրջանում շահագործվում էր և մեծ համբավ էր վայելում: Այս տեսակետը հաստատվում է նաև նրանով, որ 1107 թ. հավաստի տվյալներով այստեղ գործում էր պղնձի և արծաթի արդյունահանման հանքավայր[657]:

---

[654] Տե՛ս Максимов М.М., Очерк о серебре, с. 8.

[655] Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ հատ. Ա. ԼՊ-ԼԶ դար, Եր., Մելքոնյան ֆոնդի հրատարակ., 1932, էջ 48:

[656] Տե՛ս նույն տեղում, էջ 50:

[657] Տե՛ս Гордлевский В.А., Избранные сочинения. Т. 3, М., Изд. Восточная литература, 1962, с. 261.

Ուշ միջնադարում այս հանքի տնտեսական մեծ նշանակության մասին է վկայում ճանապարհորդ Էվլյա Չելեբիի (1611-1682 թթ.) հետևյալ հիշատակումը. «Այստեղ գտնված արծաթի հանքերը ոչ մի երկրում չկան: Բնակիչները ամբողջովին ազատված են հարկերից և պարտավոր են արծաթի հումքը մշակել: Կան արծաթի 70 հանքեր, որոնց մի մասը շահագործվում է, մյուս մասը անգործության է մատնված»[658]: Ըստ թուրք պատմաբան Շեֆկեթ Փամուկի՝ XVIII դարի 30-ական թթ. Օսմանյան կայսրության ֆինանսական կայունությունը մեծապես պայմանավորված էր վերը նշված երեք հանքավայրերի (Արղանամդեն, Կապանմադեն և Գյումուշխանե) շահագործումից ստացված արծաթի շատ մեծ քանակությամբ, որի հանրագումարը տարեկան կազմում էր մի պատկառելի թիվ՝ 35-40 տ.[659]:

Գյումուշխանեի բազմամետաղային հանքավայրի շահագործման մասին հիշատակում է նաև պատմիչ Հակոբ Կարնեցին (1622-1662 թթ.) իր՝ «Վերին Հայաստանի նկարագրությունը» աշխատությունում, որտեղ նշում է. «Այնտեղ՝ Հյուսիսային կողմում, գտնվում է Ցանախի կիրճը… այստեղ մշակվում է մեծ քանակությամբ գերազանց ոսկի, արծաթ, ինչպես նաև պղինձ, կապար ու երկաթ»[660]:

Գյումուշխանեի արծաթահանքերի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդել նաև ֆրանսիացի արևելագետ պրոֆեսոր Պիեռ Ամադե Ժոբերը (1779-1847 թթ), ով Նապոլեոն Բոնապարտի հանձնարարությամբ 1806 թ. օգոստոսին՝ Պարսկաստանից դեպի Ֆրանսիա հետդարձի ճանապարհին՝ Թավրիզ-Խոյ-Վան-Էրզրում-Տրապիզոն ուղեգծով, այսպես է նկարագրում Գյումուշխանեի արծաթահանքերը. «Հետևյալ օրը, օգոստոսի 23-ին ուղևորվեցինք Գյումուշխանե՝ մեծ գյու-

---

[658] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Եր., ԳՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 289:

[659] Տե՛ս Pamuk Sevket, The recovery of the Ottoman monetary system in the eighteenth century// Ottoman past and todays Turkey, Edited by Kemal Karpat-Leiden etc. Brill, 2000, p. 193.

[660] Մադաթով Է.Մ., Ձեռագրեր դարերի խորքից, Գիտություն և տեխնիկա, 1984, N 7, էջ 27:

ղաքաղաք, ուր բնակվում էին գլխավորապես հայերը, որոնք մշակում էին նրա հաճելի, արգասաբեր հողերը: Նրանք զբաղվում էին նաև վաճառականությամբ, որը նպաստում էր տեղի բարգավաճման և անհիշելի ժամանակներից ի վեր նրանք շահագործում էին քիչ հեռավորության վրա գտնվող արծաթե կարևոր հանքերը….: Անցյալում շահագործման արդյունքը գնահատվում էր ամսական երեսուն հազար դահեկան (piastre), այսօր չեմ կարծում, թե այդ գումարի մեկ քառորդը լինի»[661]: Ֆրանսիացի պրոֆեսորի հիշատակությունները շատ կարևոր են նաև այն համատեքստում, որ, Գյումուշխանեի հանքերի մեծ տնտեսական նշանակության վերաբերյալ տեղեկություններից բացի՝ այստեղ արդարացիորեն և օբյեկտիվորեն հատուկ ընդգծվում է այդ գավառի մշտապես հայաշատ լինելու փաստը, որը ինչ-որ չափով հակասում է գրականության մեջ արմատացած հույն բնակչության՝ լեռնահանքարդյունաբերության և մասնավորապես պղնձարդյունահանության ու արծաթարդյունահանության մեջ եղած գերիշխող դիրքի մասին եղած կարծրատիպին: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ ավելի վաղ՝ XVI դարում, Գյումուշխանեի արծաթահանքերում հույն վարպետների հետ աշխատել են նաև հայ մասնագետներ[662]:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Գյումուշխանեի, Կապան-Մադենի և Քեբանի արծաթահանքերը շահագործվել են նաև XIX դարի երկրորդ կեսերին, իսկ Քեբանի հանքավայրից 1960-ական թվականների առաջին կեսի տվյալներով, տարեկան արդյունահանվում էր մինչև 18 տ. արծաթ[663]: Այդ կապար-ցինկային բազմամետաղային հանքավայրն իր 1 տ-ում եղած չափազանց բարձր արծաթի պարունակությամբ՝ մինչև 1,150 կգ, նույնիսկ աշխարհի հայտնի հանքավայրերի շարքում է գրա-

---

[661] Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ. Հատ. Զ (1800-1820 թթ.), էջ 243-244:

[662] Տե՛ս Зулалян М., Армения в Первой Половине 16-ого века, М., Наука, 1971, с. 55.

[663] Տե՛ս Ժամանակակից Թուրքիա, էջ 103:

վում իր ուրույն տեղը[664]: Ներկայումս այս հանքավայրի հանքանյութի հաստատված պաշարները՝ հաշվարկված proven+ probably (ապացուցված + հավանական) կատեգորիաներով, կազմում են ընդամենը՝ 51300 տ., իսկ 1 տ հանքանյութում արծաթի քանակությամբ՝ 142,9 գ[665]: Այստեղից հետևում է, որ այս հանքավայրում այսօրվա դրությամբ առկա է 7,3 տ. կորզման ենթակա արծաթ, որի շուկայական գինը 2018 թ. մայիսի դրությամբ կազմում է 3,66 մլն դոլար:

Հարկ է նշել, որ 1901-1909 թթ. Օսմանյան կասրության ամբողջ տարածքից արդյունահանվել է 152 տ. արծաթ, ընդ որում, 1900 թ.՝ արդեն 24 տ. [666]: Կարելի է ենթադրել, որ այս քանակության առյուծի բաժինը արդյունահանվել է վերը նշված 3 հանքավայրից: Հավաստի տեղեկությունների համաձայն, Տրապիզոնի գավառի Յոմարայի գավառակի Ծինկալա (Տրապիզոնից մոտ 15 կմ հարավ) և Կյուշանա կամ Կուշանա (Տրապիզոնի մերձակայք) գյուղերի շրջակայքում 1908-1909 թթ.-ից մինչև 1914 թ. տրապիզոնաբնակ Մարմարյան եղբայրների ընկերությունը շահագործում էր արծաթախառը հանքավայրեր[667]:

1950-1960-ական թթ. Արղանամադեն պղնձի հանքավայրից ձուլված 1 տ պղնձից բացի, 19 կգ ոսկուց ստացվում էր 235,8 գ. արծաթ, իսկ այստեղ տարեկան ձուլվում էր 17 հազ. տ. սև պղինձ[668]: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 1970-1980-ական թթ. ևս այդ հանքավայրից ձուլվել է ոչ պակաս քան 17 հազ. տ.: Հետևաբար 1950-1990 թթ. 40 տարվա ժամանակահատվածում այստեղից ձուլվել է առնվազն 680000-700.000 հազար տ սև պղինձ, որից ստացվել է մոտ 165 տ արծաթ, որի շուկայական գինը 2018 թ. տվյալներով կկազմեր 82-83 մլն դոլար:

---

[664] Տե՛ս Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունը, էջ 339:

[665] Տե՛ս Dagistan Hayrullah, Mineral deposits of Turkey, March 4, 2013, p. 25.

[666] Տե՛ս Հարաճեան Յ., Հանքեր Հայաստանի Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ, էջ 55:

[667] Թոռլաքյան Բ. Գ., Համշենահայերի ազգագրությունը: Հայ ազգագրություն ու բանահյուսություն, հատոր 13, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1982, էջ 26:

[668] Տե՛ս Ryan C.W., A quide to the known minerals of Turkey, p. 60.

Վերջին տարիներին Արևմտյան Հայաստանի տարածքում բացահայտվել են արծաթ պարունակող բազմամետաղային նոր հանքավայրեր:

Այսպես, Գյումուշխանեից 15 կմ հյուսիս-արևմուտքում տեղակայված Մաստրա՝ (Mastra) ոսկի և արծաթ պարունակող հանքավայրից միայն 2009-2015 թթ. ընկած ժամանակահատվածում արդյունահանվել է 5,53 տ. արծաթ և 18,47 տ ոսկի Koza Gold Mining ընկերության կողմից[669]: Արծաթի շուկայական գինը 2018 թ. մայիսի տվյալներով 0,5 դոլար/գ էր, իսկ ոսկունը՝ 2018 թ. տվյալներով՝ 39,2 դոլար/գ: Հետևաբար, նշված ժամանակահատվածում այստեղից արտադրվել է 2,7 մլն դոլարի արծաթ և 724 մլն դոլարի ոսկի: Հաշվի առնելով, որ ինչպես ոսկու, այնպես էլ արծաթի կորզման ինքնարժեքը սովորաբար չի գերազանցում ամբողջ արժողության 60-ից 65 %-ը՝ կարելի է ենթադրել, որ նշված մասնավոր ընկերության մաքուր շահույթը արծաթից կազմում է 1 մլն դոլար, իսկ ոսկուց ստացված շահույթը առնվազն 430 մլն դոլար է:

Մեկ այլ ոսկի-արծաթի խոշոր հանքավայր՝ Ցերաթեփ-Արդվինը (Cerattepe-Artvin), որը ևս բացահայտվել է վերջին տարիներին, գտնվում է Արդվին քաղաքից մոտ 4-5 կմ հարավարևելք: Ըստ 2012 թ. տվյալների՝ հանքանյութի հաստատված պաշարները կազմում են 8,2 մլն տ., որի ամեն մի տ առկա է 140 գ. արծաթ (1148 տ արծաթ) և 4 գ. ոսկի, որոնց շուկայական արժեքը 2018 թ. գներով (1գ արծաթը = 0.5 դոլար) կազմում է համապատասխանաբար 574 մլն դոլար և 1,285 միլիարդ դոլար[670]: Հաշվի առնելով, որ այս պղինձ-ոսկի-արծաթե հանքավայրը շահագործվում է առաջին հերթին պղինձ ստանալու նպատակով (հանքանյութում առկա է 202800 տ. պղինձ) և ազնիվ մետաղները կորզվում են պղինձ արդյունահանելուն համընթաց՝ որպես ուղեկցող մետաղներ՝ նրանց կորզման ինքնարժեքը տրամաբանորեն ավելի փոքր է 60-65 %-անոց ինք-

---

[669] Տե՛ս Revan Kemal M, Goc Deniz Mastra (Gumushane) Au-Ag deposit Workshop on Suf duction Related Ore deposits 23-26 September 2017, Karadeniz Technical University, Trabzon, Turkey, p. 54.

[670] Տե՛ս Mineral potential of Turkey, 2012 p. 21.

նարժեքից, ինչը բնորոշ է միայն մաքուր ոսկի արդյունահանող հանքավայրերի համար (Կոպլեր) և այսպիսով չի կարող գերազանցել 50%-ի շեմը: Այսպիսով, այս հանքավայրից միայն արծաթից ակնկալվող շահույթը մոտ 280 մլն դոլար է, իսկ ոսկուց՝ մոտ 640 մլն դոլար:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի վերը ներկայացված 2 խոշոր հանքավայրի (Mastra և Cerattepe) շրջակայքը, որը մշտապես եղել է հայաշատ, գտնվում է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճիռով նախանշված Անկախ և Միացյալ Հայաստանի (մոտ 90 հազ. կմ²) տարածքում: Այսպիսով, այս տարածաշրջանից արդեն արդյունահանվել է 2,7 մլն դոլարի արծաթ և 724 մլն դոլարի ոսկի, իսկ 2012թ.-ի տվյալներով՝ առկա է նաև 574 մլն դոլար արժողությամբ արծաթ և 1,285 միլիարդ դոլար ոսկի: Միայն այս երկու հանքավայրերի արծաթի շուկայական արժեքի հանրագումարը մոտ 577 մլն դոլար է, իսկ ոսկունը՝ մոտ 2 միլիարդ դոլար:

ՊՂԻՆՁ

Պղինձը դասվում է գունավոր մետաղների շարքին և համարվում է աշխարհի հնագույն օգտագործվող մետաղը: Այն բնության մեջ հանդիպում է ինչպես զանազան քիմիական միացությունների և միներալների ձևով (ավելի քան 80 տարատեսակ), այնպես էլ բնածին կամ հիպերգեն: Այս մետաղի ստացման հիմնական միներալներն են խալկոպիրիտը՝ $CuFs_2$ (պղնձի պարունակությունը հասնում է 34.5 %), խալկոզինը՝ Cu_2S (պղնձի պարունակությունը 79.8 %), բորնիտը, կովելինը, կուպիրտը և այլն[671]: Ինչպես հայտնի է, պղինձը կիրառվում է տնտեսության ամենալայն ու բազմազան ճյուղերում, սակայն նրա կիրառման հիմնական ոլորտը էլեկտրատեխնիկական արդյունաբերությունն է, քանի որ այն աչքի է ընկնում բարձրակարգ էլեկտրահաղորդիչ հատկություններով: Պղինձի

[671] Տե՛ս Магакян И.Г., Металлогения, М., Недра, 1974, с. 225.

տարբեր համաձուլվածքները լայնորեն կիրառվում են նաև մեքենաշինության զանազան ոլորտներում:

Հայկական լեռնաշխարհում պղնձի տարատեսակ հանքավայրերը հայտնի են եղել դեռևս շատ վաղ անցյալում (նեոլիթում), նրանցից արդյունահանվել է հանքանյութ և դեռևս շատ պարզունակ եղանակներով պատրաստվել են պղնձի տարատեսակ իրեր: Մասնավորապես Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգի Արղանամադեն բնակավայրի շրջակայքից (Խարբերդից մոտ 65 կմ հարավ-արևեկք և Դիարբեքիրից մոտ 37 կմ հյուսիս-արևմուտք) ներկայիս Էրգանի բնակավայրի պատմական Չորրորդ Հայքի Անգեղատուն գավառում, Տիգրիսի վերին հոսանքի ավազանում, Չոյունու-Թեփեսի բնակատեղի մոտ, որը գտնվում է Արղանա (Էրգանի) բնակավայրից մոտ 5 կմ հարավ-արևմուտք*:

---

* Այս տարածքից հնագիտական պեղումների ընթացքում չորրորդ ու հինգերորդ մշակութային շերտերից հայտնաբերված պղինձե իրերը (ուլունքներ, ասեղներ, բիզեր և այլն) պարունակում են երկաթ և քիչ քանակությամբ անագ, ինչը նշանակում է, որ դրանք պատրաստված են ոչ թե բնածին պղնձից, այլ ստացվել են ամենայն հավանականությամբ օքսիդացված պղինձե միներալներից, ուստի տվյալ դեպքում գործ ունենք արդեն պարզունակ պղնձագործության հետ: Պղնձյա առարկաներ պարունակող մշակութային շերտերի բացարձակ հասակը ռադիոածխածնային մեթոդով թվագրված է մոտ 8900 տարով[672]: Այսպիսով, այստեղից հայտնաբերված պղինձյա իրերը ցայսօր համարվում են աշխարհում հայտնի պղնձյա իրերից ամենավաղ գտածոները: Տե՛ս Авилова Л.И., Металл Ближнего Востока в контексте социально-экономических и культурных процессов. Автореф. дисс. на соиск. уч. ст. др. ист. наук. М., 2011, с. 19-20: Տե՛ս նաև Եսայան Ս.Ա., Հայաստանի հնագիտություն ԵՊՀ, Եր., 1992, с. 65-66; Տերյան Ա., Միտանի (Խուրի-Միտանի) Հայոց հնագույն պետություն, Եր., Ոսկան Երևանցի, 2006, էջ 14: Гогиян С.Е., Металлопроизводство в древней Армении, Ер., ГЕОИД, 2005, с. 17. Ըստ հանրահայտ ռուս գիտնական Ե. Չեռնիխի՝ այս գավառում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ այս հանքավայրը դեռևս մ.թ.ա. II հազարամյան սկզբներին հանդիսանում էր Խեթական հզոր պետության պղնձի մատակարարման հիմնական և, հավանական է, միակ աղբյուրը: Սեյրանյան Վ., Հին Հայաստանի հանքային հարստությունները, Սովետական Հայաստան, 1986, N 6, էջ 31:

Հանքավայրն իրենից ներկայացնում է փոքր խորության հրաքարային տիպի բազմամետաղային հանքանյութով հարուստ միջին ջերմաստիճանային ծագումնաբանությամբ մի հանքադաշտ, որը ներկայացված է ոսպնյականման հանքամարմինների ձևով, և առաջացել է վերին կավճի ժամանակահատվածում, այսինքն՝ սրանից 100-ից 66 մլն տարի առաջ պղնձի հանքանյութը ներկայացված է հիմնականում խալկոպիրիտով, իսկ ամենավերևի մասերում կովելին CuS միներալով (որտեղ պղնձի քանակությունը 66.4 %-ին մոտ է), ինչպես նաև պիրիտ և խալկոզին միներալներով: Հանքանյութերը գտնվում են երկրի մակերեսին մոտ, որն էլ հեշտացնում էր այդ հանքավայրից հանքանյութի ստացումը: Ամբողջ հանքաքարի միջինացված պղնձի քանակությունը որոշ տվյալներով 9-10 % է, իսկ մեկ այլ տվյալներով՝ 5.35 %: Ամբողջ հանքային դաշտը զբաղեցնում է մոտ 12-13 կմ^2 տարածք[673]: Այսպիսով, այս հանքավայրը ամենայն հավանականությամբ հանդիսանում է աշխարհի ամենահին և նշանավոր պղնձի հանքավայրը, և Չոյունա-Թեփեսի նեոլիթյան բնակատեղիի (բլուր) պղնձյա իրերը ամենայն հավանականությամբ պատրաստվել են հենց այս հանքավայրի հանքանյութից, հավանաբար պղնձով հարուստ մերձմակերեսորեն տեղադրությամբ կովելին միներալից, քանի որ այս նեոլիթյան բլուրը տեղակայված է Արղանամադեն հանքավայրից ընդամենը 17-18 կմ հարավարևելք և մոտ 100-150 կմ շառավղով պղնձի այլ հանքավայրեր պարզապես չկան: Այս մոտեցումը հաստատվում է նաև նրանով, որ պղնձի պարունակությամբ ամենահարուստ կովելին միներալները հանդիպում են գրեթե երկրի մակերեսին և մինչխեցեգործական նոր քարե դարի մշակույթի կրողների առանց հատուկ հանքափորական աշխատանքներ կատարելու

[673] Տե՛ս Մաղաքյան Հ.Գ., Օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման պայմանները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1981, էջ 131: Տե՛ս նաև Հարաճեան Յ., Հանքեր Հայաստանի Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ Նու-Եորք, Հայկ, 1919, էջ 59; Максимов М. М., Горнунг М.Б., Очерк о первой меди, М., Недра, 1976, с. 13; Ryan C.W., A guide to the known minerals of Turkey, Ankara, 1960, p. 60.

դյուրությամբ կարող էին արտահանել այդ միներալը և ամենապարզունակ եղանակով (սառը կռման եղանակ) ստանալ պղնձե իրեր՝ զարդեր, գնդասեղներ և այլն[674]: Սակայն փաստացի տվյալներ (հին հանքախորշեր, շլակներ և հանքաքարի հանման ու մշակման փաստացի հետքեր) այս հանքավայրի շրջակայքից դեռևս չեն հայտնաբերվել, որն իր հերթին բացատրվում է նրա հետագա շահագործման ժամանակ հնարավոր հետքերի ենթադրյալ ոչնչացման հավանականությամբ:

Անկասկած, այս հանքավայրը հազարամյակների պատմության ընթացքում թեև երկարատև դադարներով, բայց մշտապես շահագործվել և այնտեղից արդյունահանվել է որոշ քանակությամբ հանքանյութ: Պետք է նշել, որ բացի պղնձից այս հրաքարային-բազմամետաղային հանքավայրի հանքանյութերը պարունակում էին նաև որոշակի քանակությամբ ոսկի և արծաթ: Որոշ տեղեկություններով 1տ հալված սև պղնձի մեջ պարունակվում է մինչև 1 կգ արծաթ և 17-30 գ. ոսկի[675], իսկ մեկ այլ տվյալներով 1տ հանքաքարում՝ 1 գ. ոսկի, 21.9 գ. արծաթ, ինչպես նաև նիկել՝ 0.07 %, և կոբալտ՝ 0.52 %[676]: 1950-ական թվականներին այստեղ տարեկան ձուլվում էր մոտ 17 հազար տ սև պղինձ, որի մեկ տոննայից ստացվում էր 8.32 ունցիա, այսինքն՝ 235.8 գ. արծաթ (1 սովորական, ոչ եռակի ունցիան = 28.35 գ.) և 0.689 ունցիա (19.4 գ.) ոսկի[677]:

Կարևոր է նշել, որ այդ բոլոր 3 հանքավայրն էլ գտնվում էին Արևմտյան Հայաստանի տարածքում: Մեկ այլ վկայությամբ 1750 թ. Արղանամադեն հանքավայրի հանքաքարերից բացի արծաթից կորզվում էր նաև ոսկի, սակայն դեռևս 1738 թ. այն ավելի հայտնի էր արծաթի արտադրությամբ[678]:

---

[674] Խնկիկյան Օ.Ս. Հայաստանի հնագիտություն, Երևան, Ասողիկ, 2009, էջ 64:

[675] Տե՛ս Максимов М. М., Горнунг М.Б., Очерк о первой меди, с. 13.

[676] Տե՛ս Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, Եր., ԵՊՀ, 2001, էջ 329:

[677] Տե՛ս Ryan C. W., A guide to the known minerals of Turkey, p. 60.

[678] Տե՛ս Гордлевский В.А., Избранные сочинения, т. III, М., Изд. Восточной литературы, 1962, с. 230, 262.

Կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ այս հանքավայրից ոսկին ու արծաթը ստացվում էին հանքանյութերից պղնձի ստացման վերամշակման արդյունքում՝ որպես երկրորդական հումք, սակայն տվյալ ժամանակահատվածում ձուլված սև պղնձի մասին տեղեկություններ չհաջողվեց հավաքել: Հայտնի է, որ 1881 թ. Արղանամադենի պղնձահանքերում տարվա մեջ 6 ամիս աշխատում էին ընդհանուր առմամբ 450 մարդ, որոնք արտադրում էին մինչև 50-60 հազ. կաֆ պղինձ, որը իրացվում էր գլխավորապես կայսրության ներսում տնայագործական և արհեստագործական նպատակներով: Այս հանքավայրը այն ժամանակ համարվում էր կայսրության պղնձաարդյունաբերության գլխավոր կենտրոնը, որովհետև երկրի մյուս պղնձի հանքավայրերում դեռևս շատ չնչին քանակությամբ էր պղինձ արտադրվում[679]: Ա. Նովիչևի տվյալներով 1850-1863 թթ. այս հանքավայրից արդյունահանվել է 11743 տ. պղնձի հանքանյութ, 1864-1873 թթ.՝ 8878 տ., 1874-1883 թթ.՝ 7291 տ., 1884-1893 թթ.՝ 6300 տ., 1894-1901 թթ.՝ 7337տ., իսկ 1902-1907 թթ.՝ ընդամենը 8203 տ., որից երևում է, որ պղնձի հանքանյութի, հետևաբար և ձուլված սև պղնձի արդյունահանումը՝ սկսած 1850-ական թթ.-ից հետզհետե նվազում է և ավելանում է միայն 1902-1907 թթ.: Այսօրինակ նվազման միտումը ռուս հեղինակը բացատրում է հիմնականում նրանով, որ այս հայտնի հանքավայրը գտնվում էր անգլիական, գերմանական, ռուսական և ֆրանսիական լեռնահանքային ընկերությունների շահերի բախման կիզակետում, որոնք ամեն գնով խոչընդոտում էին միմյանց՝ այս հռչակավոր հանքավայրերը շահագործելու և շահույթ ստանալու հարցում[680]: Ըստ մեկ այլ սկզբնաղբյուրի՝ Արմանամադեն հանքավայրից 1900 թ. արտադրվել է 520 տ. սև պղինձ, 1905 թ.՝ 700 տ., իսկ 1910 թ.՝ 600 տ.: Ընդ որում, յուրաքանչյուր 1 լիպրա սև պղնձի հանքանյութի արդյունահանման և զտման համար ծախսվում էր մոտ 3 ցենտ, իսկ փոխադրելու համար՝ 2

---

[679] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Եր., 1981, էջ 63:

[680] Տե՛ս Новичев А.Д., Очерки экономики Турции до мировой войны, М., Изд. АН СССР, 1937, с. 104.

ցենտ[681]: Հայտնի է, որ Արղանամադենի նշանավոր հանքավայրից պղինձ և արծաթ էին արդյունահանում այդ հանքավայրից ընդամենը մոտ 100 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Խարբերդի նահանգի վաճառաշահ Ակն (ներկայումս՝ Էգին կամ Ագին) քաղաքի հատնի **Արփիարյան** ամիրական գերդաստանի ներկայացուցիչները, որոնք ձեռք էին բերել այդ հանքավայրի շահագործման իրավունքը և ստանում էին բավականին մեծ շահույթ, քանի որ բացի պղնձից այդ հանքանյութերից ստանում էին նաև արծաթ:

Եվրոպացի լեռնային ճարտարագետների վկայությամբ հանքանյութի մի մասը հալեցնում էին տեղում, իսկ մեծ մասը՝ հետագա վերամշակման համար ուղարկում այլ քաղաքներ: Հանքանյութը մշակվում էր բավականին պարզունակ մեթոդներով. հանքանյութը հալեցվում էր միայն մեկ անգամ, որից ստացվում էր միջին որակի սև պղինձ, իսկ հիմնական մշակումը կատարվում էր Անգլիայում: Հետաքրքիր է նշել, որ միայն հայազգի լեռնային ճարտարագետների շնորհիվ պարզվեց, որ այդ հանքանյութերում՝ բացի պղնձից և արծաթից, առկա է եղել նաև ոսկի:

Արփիարյանների ընտանիքը հաջողությամբ շահագործում էր այս հանքավայրը մինչև 1860-ական թթ., իսկ հաջորդող տասնամյակներին, Գ. Սրվանձտյանցի վկայությամբ, ինչ-ինչ պատճառներով գրեթե մատնվել էր անուշադրության: Իր ծաղկման ժամանակաշրջանում հանքից արդյունահանվող հանքանյութի ծավալը տարեկան հասնում էր մոտ 300 հազար տ.-ի (երկու միլիոն հոխա՝ 240 հազար թուրքական ոսկու արժողությամբ)[682]:

1900-ական թթ. Արղանամադենում գործում էր պղնձի հանքանյութի արդյունահանման 2 հանք, որտեղ աշխատում էր մոտ 300 բանվոր, որոնց սև պղնձի արտադրանքը տալիս էր տարեկան մոտ 40 հազար օսմ. ոսկու եկամուտ:

---

[681] Տե՛ս Հարաճեան Յ., Հանքեր Հայաստանի Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ, էջ 60:

[682] Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Եր., 2001, էջ 276-277:

Արևմտահայ պատմաբան և գրող Վահե Հայկի (1896 Խարբերդ - 1983 Ֆրեզնո, ԱՄՆ) վկայությամբ 1910-ական թթ. Արմաղանամադենի հանքավայրերի հանքանյութի արդյունահանումը դեռևս մեքենայացված չէր, իսկ ստացված սև պղինձը շարունակում էր ուղարկվել Կ. Պոլիս և արտահանվել Անգլիա՝ հետագա վերամշակման նպատակով[683]:

Հետաքրքիր է նշել, որ Արղանի-Մադենի պղնձահանքերից 1850-1863 թթ. արդյունահանվել է 11743 տ. պղնձի հանքաքար, 1884-1893թթ.՝ 6300 տ., իսկ 1902-1907 թթ.՝ ընդամենը 8200 տ., այսինքն՝ հանքանյութի արտահանումը, որի ձուլումից ստանում էին սև պղինձ, հետզհետե նվազել է[684]: 1913-1914 թթ. այս հանքավայրից ինչպես պղնձի հանքանյութի, այնպես էլ սև պղնձի արդյունահանումը հետզհետե ավելանում է, և ամբողջ ստացված սև պղինձը սկսվում է գնվել անգլիացիների կողմից, իսկ սկսած 1914 թ.-ից այս հանքավայրի պղնձի հանքանյութի արդյունահանումը և սև պղնձի ձուլումը կատարելագործվում է շնորհիվ գերմանացի ճարտարագետների[685]:

1950-ական թթ. առաջին կեսերին այս հանքավայրերից արտադրվում էր տարեկան մոտ 10 հազար տ. սև պղինձ, իսկ 1950-ական թթ. երկրորդ կեսերին՝ տարեկան մոտ 17 հազար տ, այսինքն՝ 1955 թ.-ին ամբողջ Թուրքիայի տարածքում ձուլված 24 հազար տ. սև պղնձի 70%-ից ավելին բաժին էր ընկնում այս հանքավայրին[686]:

1800-ական թթ. առաջին կեսերին պղնձաարդյունաբերության և պղնձագործության նշանավոր կենտրոններից էր համարվում պատմական Փոքր Հայքի Առաջին Հայքի պրովինցիայի Եվդոկիա (Թոքատ) քաղաքը՝ Սեբաստիայի նահանգի Սվազ քաղաքից մոտ 50 կմ հյուսիս-արևմուտք, որտեղ 1830-

---

[683] Տե՛ս Համբարյան Ա.Ս. Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., Արմավիր, Պարգև Ոսկանյան, 2003, էջ 230-231:

[684] Տե՛ս Новичев А.Д. Экономика Турции в период мировой войны, М-Л., Изд АН СССР, 1937, с. 104.

[685] Տե՛ս նույն տեղում, էջ 60:

[686] Տե՛ս Լուդշուվեյտ Ե.Ֆ., Թուրքիա, էջ 409; տե՛ս նաև Ժամանակակից Թուրքիա, էջ 418; Ryan C.W., A guide to the known minerals of Turkey, p. 60.

ական թթ. կառուցվեց 2 ձուլարանով առաջին պղնձաձուլական գործարանը, որը գլխավորապես գործարկվում էր հայ արդյունաբերողների կողմից[687]:

1900-ական թթ. սկզբներին մեկ այլ պղնձահանք հիշատակվում է նաև Բաբերթի (Բայբուրթ) շրջակայքում՝ Էրզրումից մոտ 90 կմ հյուսիս-արևմուտք, որը համատեղ շահագործվում էր թուրք և հայ գործարարների կողմից[688]:

Հայկական լեռնաշխարհի մյուս պղինձ-հրաքարային (կոլչեդանային) հանքայնացումները կենտրոնացված են ներկայիս Թուրքիայի Արդվինի նահանգում՝ Ճորոխ գետի միջին և ստորին հոսանքի ավազանում, որտեղ առկա են մեկ տասնյակից ավելի պղնձի հանքավայրեր: Ա.Ա. Իեսսենի տվյալներով՝ այդ հանքավայրերը ևս շահագործվել են դեռևս շատ հին ժամանակներից, որոնց մասին վկայում են այդ հանքավայրերի շրջակայքերում պղնձե շլակների և հին հանքախորշերի առկայությունը[689]:

1901 թ. գերմանացի խոշոր ձեռնարկատեր Կարլ Սիմենսը Բաթումի նախկին նահանգի Արդվինի օկրուգում (հին հայկական պատմական Եգր աշխարհի Նիգալ գավառ)՝ գերազանցապես հայերով բնակեցված Արդվինի քաղաքից մոտ 6 կմ հյուսիս-արևմուտքում տեղակայված Կվարցխան կամ Քվարցխանա վրացաբնակ գյուղի շրջակայքում սկսում է պղնձի հանքանյութ արտահանել, որը կա՛մ ուղարկվում էր Գետաբակ (Գետաբեկ), կա՛մ էլ վաճառվում էր արտասահման: Միայն 1905 թ. Կվարցխանայի հանքախորշից արդյունահանվել է մոտ 1.5 միլիոն ռուբլու արժողությամբ 90 հազ. տ հանքանյութ:

---

[687] Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, էջ 276-278; տե՛ս նաև Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ. Ռ., Բարսեղյան Հ.Խ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան հ. 2 Երևան ԵՊՀ 1988, էջ 466-467:

[688] Տե՛ս Համբարյան Ա.Ս. Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., էջ 232:

[689] Տե՛ս Геворгян А.Ц., Из истории древнейшей металлургии Армянского нагорья. Ереван АН АрмССР, 1980 с. 31, տե՛ս նաև Меллер В., Денисов Д. М., Полезные ископаемые и минеральные воды Кавказского края, Тифлис, 1917. с. 23-25.

1907թ.-ից այստեղ արդեն կառուցվում է մի պղնձաձուլական գործարան, արդյունահանվում է 100 հազ. տ հանքանյութ, որից ձուլվում է 857 տ. սև պղինձ[690]:

Հետաքրքիր է նշել, որ 1900-ական թթ. սև պղնձի ինքնարժեքը Զանգեզուրի «Սյունիքի» գործարանում մոտ 470 ռուբլի էր՝ մեկ տոննայի համար, իսկ վաճառահանման արժեքը գերազանցում էր ինքնարժեքը ավելի քան 2 անգամ և կազմում էր մոտավորապես 875-880 ռուբ/տ.[691]: Տվյալ մերձսևծովյան տարածաշրջանի չափազանց հարուստ պղնձաբերության մասին է խոսում այն փաստը, որ 1913 թ. Արդվինից մոտ 30 կմ հյուսիս-արևմուտքում տեղակայված Մուրգուլ գյուղի շրջակայքի Դզասուլ պղնձահանքից արտահանվել է ռեկորդային քանակությամբ 224,5 հազ տ. 3-5% պղինձ պարունակող հանքանյութ: Այն իր քանակությամբ անծայրածիր Ռուսական Կայսրության 23 հանքավայրերի շարքում գրավում էր առաջին տեղը: Համեմատության համար նշենք, որ նույն տարածքում՝ Ալավերդու շրջակայքի հանքավայրերից, արդյունահանվել է ավելի քան 3 անգամ քիչ քանակությամբ հանքանյութ՝ ընդամենը 65,9 հազ. տ.[692]:

Պղինձ-հրաքարային մի շարք հանքային, սակայն արդյունաբերական նշանակություն գրեթե չունեցող կամ քիչ նշանակություն ունեցող հանքերևակումներ 1900-ական թթ. սկզբներին հայտնի էին նաև Կարսի մարզի՝ Կաղզվանի օկրուգում՝ Արաքսի աջափնյակում՝ Կաղզվանից մոտ 20-22 կմ արևմուտք, Տայլուբուրուն լեռան (1893 մ) շրջակայքում[693], ինչպես նաև Բիթլիսի նահանգի Մուշի գավառի Բուլանըխի (Շիրվան-

---

[690] Տե՛ս Наниташвили Н.Л., Германский капитал в Закавказье (деятельность фирмы “Сименс” и Гальске, 1860-1917), Тбилиси, 1982, с. 255-256.

[691] Տե՛ս Մելքումյան Բ. Գ., Հայաստանի պղնձաարդյունաբերության պատմություն, Եր., ՀՀ ԳԱԱ, 1972, էջ 167:

[692] Տե՛ս Петров И.М., Добыча и обогащение цветных металлов в Российской империи в начале XX века, Семинар № 24, Москоковский государственный горный университет, 2006, с. 376, табл.1.

[693] Տե՛ս Марголиус А. Соленосные образования Каррсской области и Эриванской губернии, с. 222-223, տե՛ս նաև Меллер В., Денисов Д. М., Полезные ископаемые и минеральные воды Кавказского края, с. 47.

շեն) տարածքում[694]: Որոշ տեղեկություններով Էրզրումի շրջակայքում ևս եղել են մի քանի պղնձահանքեր, որոնք տնայնագործական մեթոդներով շահագործվել են մինչև 1850 թ.[695]:

Ըստ այլ տվյալների՝ 1918-1919 թթ. Օսմանյան կայսրությունում պղնձի հանքանյութ արտահանվում էր միայն ամենախոշոր պղնձի հանքավայրից՝ Արղանամադենից (Դիարբեքիրի նահանգ), գերմանաթուրքական մասնավոր մի ձեռնարկության կողմից, որի կապիտալը հասնում էր մոտ 3 մլն լիրայի[696]: Այնուհետև, պայմանավորված քարածխի և տրանսպորտային միջոցների բացակայությամբ՝ մինչև 1936 թ. այդ պղնձի հանքավայրը բավականին ժամանակ չի շահագործվել: Նույն թվականի հունիսի 11-ին այդ հանքավայրը մասնավոր ընկերությունից ետ է գնվել պետության կողմից, որի համար կոնցեսիոներներին վճարվել է 1,5 մլն գերմանական մարկ[697]: Թուրքիայի տարածքում եղած մյուս պղնձի այդ ժամանակվա խոշոր հանքավայրը՝ Մուրգուլը (Ճորոխի ավազան), վերագործարկվել է 1951 թ.-ից[698]: Կարելի է եզրակացնել, որ 1936-1951 թթ. միջև ընկած ժամանակահատվածում Թուրքիայի տարածքում ձուլված սև պղնձի համար օգտագործվել է գլխավորապես Արղանամադենի հանքավայրի հանքանյութը:

1937 թ. Թուրքիայում ձուլվել է ընդամենը 0,4 հազ. տ սև պղինձ, իսկ արդեն 1938 թ. մոտ 6 անգամ ավելի՝ 2,48 հազ. տ.[699,700]: Հայտնի է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան որպես ռազմավարական նյութ

---

[694] Տե՛ս Калантарь А., Экономические перспективы Восточной Анатолии, Тифлис, 1913, с. 7.

[695] Տե՛ս Հարաճեան Յ., Հանքեր Հայաստանի Փոքր Ասիոյ և Կիլիկիոյ, էջ 57:

[696] Տե՛ս Розалиев Ю. Н., Экономическая история Турецкой Республики, М., Наука, 1980, с. 36.

[697] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

[698] Տե՛ս Джалилов Х,. Экономика Турции, М. Наука, 1971, с. 195-196:

[699] Տե՛ս Розин М. С., География горнодобывающей промышленности капиталистического мира, М., Госгеографиздат, 1962, с. 332.

[700] Տե՛ս Джалилов Х., Экономика Турции, с. 196.

քրոմիթների հետ միասին ֆաշիստական Գերմանիային է մատակարարել նաև մեծ քանակությամբ սև պղինձ[701]: Հետպատերազմյան տարիներին՝ 1947-1950 թթ. ներառյալ, Արղանամադեն հանքավայրից արտադրել է 32,4 հազ. տ. սև պղինձ, իսկ 1951 թ.-ից մինչև 1953 թ. ներառյալ արդեն նաև Մուրգուլի հանքավայրի հանքանյութից՝ 60,5 հազ. տ սև պղինձ[702]: Միայն 1950 թ. Թուրքիայից արտահանվել է 7,1 մլն թուրքական լիրայի արժողությամբ 6,3 հազ. տ սև պղինձ, 1957 թ.՝ 24,2 մլն. թուրքական լիրայի արժողությամբ 14,6 հազ. տ սև պղինձ, 1960 թ.՝ 48,3 մլն. թուրքական լիրայի արժողությամբ 18 հազ. տ սև պղինձ (ընդհանուր արտադրանքը՝ 26 հազ. տ.): 1961-1962 թթ.՝ 57,6 մլն. թուրքական լիրայի արժողությամբ 22,8 հազ. տ, իսկ 1963 թ.՝ 53,6 մլն. թուրքական լիրայի արժողությամբ 10,1 հազ. տ. սև պղինձ, որը կազմում էր Թուրքիայի արտահանման ընդհանուր ծավալի մոտ 1,7 %-ը, իսկ սև պղնձի ամբողջ արտադրությունը՝ 25 հազ. տ.: Մինչև 1960 թ. օգոստոս 1-ը ամերիկյան դոլարը պաշտոնապես համարժեք էր 2,8 թուրքական լիրային, իսկ 1963 թ.՝ 1 դոլար = 9 լիրայի[703]: Այսպիսով ստացվում է, որ 1950 թ. սև պղնձի 1 տոննայի վաճառահանման միջազգային գինը 316 դոլար էր, 1957 թ.՝ 592 դոլար, իսկ 1963 թ.՝ 589: 1960 թ. սև պղնձի միջինացված շուկայական միջազգային գինը 678 դոլար էր[704]: Հետևաբար 1950 թ. Թուրքիան արտահանել է 0,199 մլն դոլար արժողությամբ սև պղինձ, 1957 թ.՝ արդեն 8,64 մլն դոլարի, 1960 թ. արդյունահանել է 1,76 մլն դոլարի սև պղինձ, որից արտահանել է 1,22 մլն դոլար արժողությամբ 18 հազ. տ.: 1961-1962 թթ. արտահանվել է մոտավորապես 15,5 մլն դոլարի սև պղինձ, իսկ 1963 թ. արտադրվել է

---

[701] Տե՛ս Кондакчян Р. П., Турецко-германские торговые связи в годы Второй мировой войны, Вестник общественных наук АН Арм. ССР, 1970, № 6, с. 36.

[702] Տե՛ս Լուդշուվեյտ Ե.Ֆ., Թուրքիա (տնտեսա-աշխարհագրական ակնարկ), էջ 468:

[703] Տե՛ս Ժամանակակից Թուրքիան, էջ 420-421, 188-189,162:

[704] Տե՛ս Минеральные ресурсы промышленно развитых капиталистических и развивающихся стран, М., 1971, с. 191.

14,7 մլն դոլարի սև պղինձ, որից 5,9 մլն-ի չափաբաժինը արտահանվել է:

Այսպիսով, միայն 1950-1963 թթ. ոչ լրիվ, թերի տվյալներով (1951-1956 թթ. տվյալները բացակայում են) Թուրքիան արդյունահանել է մոտ 41 մլն դոլար արժողությամբ սև պղինձ, որի առյուծի բաժինը ստացվել է Արղանամադենի Մուրգուլ հանքավայրերից: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ որոշ թվականների համար՝ 1950, 1957, 1961-1962 թթ., բերված են ոչ թե արդյունահանման, այլ արտահանման ծավալների մասին տվյալներ, իսկ քանի որ, որպես կանոն, արտահանվում էր արդյունահանման ծավալի միայն կեսը, մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ այդ թիվն իրականում տատանվել է մոտ 45 մլն դոլարի սահմաններում: 1966 թ. ամբողջ Թուրքիայի տարածքից՝ հիմնականում Դիարբեքիրի (Արղանամադեն), և Արդվինի (Մուրգուլ) շրջաններից արտադրվել է 34,35 մլն դոլար արժողությամբ 26,2 հազ. տ. սև պղինձ[705]: 1969 թ., երբ պղնձի համաշխարհային միջինացված գինը 167 դոլար/տ. էր, մոտ 45 մլն դոլար արժողությամբ 30,6 հազ. տ. պղինձ, իսկ 1970 թ. արտադրվել է մոտ 43 մլն դոլար արժողությամբ 31,1 հազ. տ. պղինձ (1970 թ. պղնձի համաշխարհային գները քիչ նվազել էին և կազմում էին միջինը 1411 դոլար/տ.)[706]: Կարևոր է նշել, որ սկսած 1936-1937 թթ.-ից մինչև վերջերս, Թուրքիայում պղնձի, ինչպես նաև աղի, քարածխի և ծծմբի արդյունահանումը ամբողջությամբ վերահսկվում էր պետության կողմից՝ առանց մասնավոր կապիտալի մասնակցության: Այդ հանքերը շահագործվում են Թուրքիայի խոշորագույն էթիբանկի ձեռնարկությունների, մասնավորապես «Թուրքական պղնձի», իսկ հետագայում նույն բանկին ենթակա պետական «Ergani Bakir Ilsetmesi» ընկերությունը շահա-

---

[705] Տե՛ս Dogan Zeki, The economic importance of mineral production in Iran. Pakistan and Turkey in view of co-operation in mineral exports and interregional trade Bulletion of the mineral research and Exploration Instituty of Turkey, 1968. October. № 71, p. 76.

[706] Տե՛ս Минеральные ресурсы промышленно развитых капиталистических и развивающихся стран, с. 182-183.

գործում էր Արղանամադենում, ներկայիս Էրգանի՝ Էլյազիգ (Խարբերդ) քաղաքից հարավ գտնվող հանքերը, որտեղ աշխատում էր շուրջ 1400 մարդ, իսկ Murgul Bakir Isletmesi ընկերության կողմից շահագործվում էր Արդվինի շրջանի Մուրգուլ բնակավայրի շրջակայքում գտնվող հանքերը: Ինչպես Էրգանիում, այնպես էլ Մուրգուլում կար 3 բաց պղնձահանք, որոնցից արդյունահանված պղնձի հանքանյութը վերամշակվում էր սև և ռաֆինացված պղնձի:

Բացի հանքարդյունաբերությունից գործում են նաև հարստացուցիչ կոմբինատներ և պղնձաձուլարաններ: Մուրգուլի պղնձահանքերից 1990-ական թթ. տվյալներով տարեկան արդյունահանվում էր մոտ 3,8 մլն տ. հանքանյութ, իսկ 2 հարստացուցիչ ֆաբրիկաները միասին արտադրում էին մոտ 90 հազ. տ պղնձի կոնցենտրատ և մոտ 40 հազ. տ. պիրիտ: Էրգանիի (Արղանամադեն) լեռնահարստացուցիչ համալիրի (բաց շահագործվող հանքավայր, հարստացուցիչ կոմբինատ, պղնձաձուլական գործարան) նախագծային հզորությունները ավելի համեստ էին և նախատեսված էին տարեկան մինչև 1 մլն տ. հանքանյութի վերամշակման համար, որից որպես վերջնաարդյունք ստացվում էր մոտ 70 հազ. տ. սև պղինձ[707]:

1972-1974 թթ. Թուրքիայի՝ գլխավորապես վերը նշված 2 հանքավայրերից ձուլվել է մոտ 0,109 մլն տ. պղինձ, ընդ որում 1972 թ.՝ 42 մլն դոլար արժողությամբ մոտ 25 հազ. տ պղինձ, 1973 թ.՝ 64 մլն դոլար արժողությամբ 36 հազ. տ. պղինձ և 1974 թ.՝ 98 մլն դոլար՝ 48 հազ. տ. պղինձ: Պետք է նշել, որ 1973-1974 թթ. ձուլված պղնձի քանակությամբ Թուրքիան ամբողջ Եվրասիական տարածաշրջանում գրավում էր չորրորդ-երրորդ տեղերը՝ Ֆիլիպիններից (209 հազ. տ.), Ինդոնեզիայից (64,6 հազ. տ.) և Շվեդիայից (44,8 հազ.տ.) հետո, իսկ 1974 թ. ռաֆինացված պղնձի միջազգային միջին գինը (2060 դոլար/տ.) 1973թ. համեմատ (1782 դոլար/տ.) զգալիորեն բարձրացել էր[708]: **Այս-**

---

[707] Տե՛ս Ժամանակակից Թուրքիա, էջ 99,102, տե՛ս նաև Турецкая Республика, с. 161, Горная энциклопедия, Т. 5, М., 1991, с. 213.

[708] Տե՛ս Минеральные ресурсы промышленно развитых капиталистических и развивающихся стран, с. 220-221.

պիսով, միայն 1972-1974 թթ. ընթացքում Թուրքիան Արևմտյան Հայաստանի տարածքից այդ թվերի գներով շուրջ 204 մլն դոլարի պղինձ է արդյունահանել:

1950-ական թթ. վերջերի տվյալներով ամբողջ Թուրքիայի տարածքում առկա է 415 պղնձի հանքավայր և հանքերևակում[709]: Դրանցից միայն 9 հանքավայրախումբն է, որ ունի արդյունաբերական նշանակություն և ուր կուտակված են ամբողջ Թուրքիայի պղնձի մոտ 99 %-ը, որոնցում եղած մաքուր պղնձի քանակությունը ներկայումս գնահատվում է 1,686 մլն տ. (ամբողջ Թուրքիայում՝ 1,786 մլն տ.):

Կարևոր է նշել, որ այդ քանակության 75,9 %-ը՝ 1,28 մլն տ., կենտրոնացված է Արևմտյան Հայաստանի վեց նահանգների տարածքում տեղակայված 6 հանքավայրախմբում՝ Siirt-Madenkoy՝ 3 % հանքաքարում հաշվարկված 0.435 մլն տ. մաքուր պղինձ, Artvin (Արդվին քաղաքից մոտ 30 կմ հյուսիս-արևմուտք՝ Մուրգուլ բնակավայրի շրջակայքում)՝ 5 % հանքաքարում հաշվարկված 0.268 մլն տ. մաքուր պղինձ, և այլն: Դրանցից ամենախոշորը՝ Ջայելի-Մադենքյոյ (Cayeli-Madenkoy) չափազանց հարուստ հանքավայրը, (պղնձի պարունակությունը հանքանյութում՝ 4,6 %, իսկ մաքուր պղնձի ընդհանուր քանկությունը՝ 0,485 մլն տ.) Տրապիզոնի նահանգի Լուզիստան գավառի՝ Ռիզե գավառակում՝ Ռիզե քաղաքից մոտ 19-20 կմ հյուսիս-արևելք՝ անմիջականորեն Սև ծովի ափին[710,711], որը գտնվում է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավական վճռով սահմանազծված Հայաստանի տարածքում:

Այսպիսով, 2013 թ. մարտ ամսի դրությամբ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների տարածքում առկա էր 1.28 մլն տ մետաղական պղինձ, որի շուկայական գինը 2018թ. դեկտեմբերի դրությամբ, երբ 1 տ = 6015 դոլար (ըստ համացանցի տվյալների), կազմում էր 7.699 մլրդ դոլար, իսկ «Վիլսոնյան Հայաստանի» տարածքներում, եթե խոշորագույն Ջայելի-Մա-

---

[709] Տե՛ս Ryan C. W., A guide to the known minerals of Turkey, p. 25.

[710] Տե՛ս Mineral Potential of Turkey. Mining Turkey 01. march, 2012 p. 19, 21. www.maden cilik-turkiye.com.

[711] Տե՛ս Hayrulla Dagistan, Mineral Deposits of Turkey March 4, 2013, p. 20.

դեն հանքավայրից (0,485 մլն. տ. պղինձ) բացի հաշվի առնենք նաև Յոմրա (Yomra) հանքավայրում (Տրապիզոնից 16,5 կմ հարավ-արևելք) առկա 49 հազ. տ պղինձը (ընդհանուր՝ 0.534 մլն տ.), կուտակված էր դարձյալ 2018թ. դեկտեմբերի գներով 3.212 մլրդ դոլարի հարստություն՝ միայն պղնձի տեսքով, այսինքն՝ ամբողջ Թուրքիայի մաքուր պղնձի պաշարի 29.8%-ը:

Ներկայիս Թուրքիայում արտահանման ծավալներով պղինձն իր նշանակությամբ քրոմիտից հետո երկրորդ տեղում է, այն արտահանվում է Չինաստան, Բուլղարիա, Շվեդիա, Թայլանդ: Բավական է նշել միայն այն, որ 2014-2017 թթ. արտահանվել է 778.8 մլն դոլարի պղինձ և պղնձի հանքաքար[712]: **Այդ քանակությունից մոտավորապես 591 մլն դոլարը բաժին է ընկնում Արևմտյան Հայաստանի հանքավայրերից ստացված արտադրանքին, իսկ 232 մլն դոլարը՝ «Վիլսոնյան Հայաստանի» տարածքներից արդյունահանված պղնձի հանքաքարին:**

ՑԻՆԿ

Ցինկը կապարի հետ միասին դասվում է գունավոր մետաղների շարքին: Մաքուր տեսքով ցինկը արծաթավուն-սպիտակ մետաղ է, սակայն բնության մեջ հանդիպում է տարբեր քիմիական միացությունների և միներալների տեսքով, որոնցից ամենատարածվածը և ամենակարևորը սֆալերիտ PFS մեներալն է՝ ցինկի 67% պարունակությամբ: Ցինկը հիմնականում օգտագործվում է երկաթի ցինկապատման արտադրության մեջ՝ որպես պողպատի և չուգունի հակակոռոզիոն բաղադրիչ, իսկ ցինկի համաձուլվածքները՝ պղնձի, ալյումինի, անագի և ծարիրի հետ միասին (արույր, բրոնզ և այլն), լայնորեն կիրառվում են մեքենաշինության, ավտոարտադրության և ինքնաթիռաշինարա-

[712] Տե՛ս Industry Mining Turkey. Republic of Turkey. Ministry of Economy 2017.

ության մեջ համեմատաբար փոքր դետալների պատրաստման համար[713]:

Արդյունաբերական մասշտաբներով Թուրքիայում քիչ քանակությամբ ցինկ է արդյունահանվել սկսած 1950 թ.-ից, երբ արդյունահանվել է ընդհամենը 0,1 հազ. տ հանքաքար, իսկ 1951թ.՝ 1,5 հազ. տ հանքաքար[714]:

1960-ական թթ. սկզբներին Թուրքիան հիմնականում իր արևմտյան նահանգներից մասնավոր ընկերությունների միջոցով արդյունահանում էր անհամեմատ ավելի մեծ քանակությամբ ցինկ և ցինկի կոնցենտրատ: Այսպես, օրինակ, 1966 թ. Թուրքիան արդյունահանել է այն ժամանակվա գներով 1,05 մլն դոլարի կապար-ցինկային 16,6 հազ. տ. խտանյութ, 0,46 մլն դոլարի 1,77 հազ. տ ցինկի հանքանյութ և 0,137 մլն դոլարի 1,77 հազ. տ. ցինկի խտանյութ[715]:

1970-ական թթ. սկզբներին ցինկային և կապարային խտանյութերը ևս արդյունահանվում էին մասնավոր ընկերությունների կողմից՝ հիմնականում Թուրքիայի արևմտյան նահանգներից: Արևմտյան Հայաստանի տարածքում հայտնի էին 2 հանքավայր՝ մեկը Տրապիզոնի նահանգի, Ջանիկի գավառի ֆաթսահ կամ ֆատսահ գավառակում (Օրդու նավահանգստային քաղաքի արևմտյան կողմում, որտեղ Մեծ Եղեռնի նախօրեին բնակվում էր 3200 հայազգի):

Կապան Մադեն (այժմ՝ Քեբան) Խարբերդի նահանգի Խարբերդի գավառի բազմամետաղային հանքավայրից 1970 թթ. սկզբներին պետական միջոցներով արդյունահանվում և արտադրվում էր տարեկան մոտ 2հազ. տ ցինկի և մոտ 1,9 հազ. տ. կապարի խտանյութ[716]:

---

[713] Տե՛ս Խաչատրյան Է.Ա. Հայկական ՍՍՌ օգտակար հանածոները, Եր., 1963: Տե՛ս նաև Горная энциклопедия, т. 5, с. 380.

[714] Տե՛ս Լունդշուվեյտ Ե.Ֆ., Թուրքիա, էջ 164:

[715] Տե՛ս Dogan Zeki, The economic importance of mineral production in Iran, Pakistan and Turkey in view of co-operation in mineral exports and interregional trade Bulletin of the mineral research and Exploration Institute of Turkey, 1968, № 71, p. 75.

[716] Տե՛ս Турецкая Республика, с . 102.

1980-ական թթ. ցինկի և կապարի հանրագումարային տարեկան արտադրությունը տատանվում էր 45 հազ. տ սահմաններում, իսկ Կապան Մադենում, որը շահագործվում էր պետական խոշորագույն Էթիբանկի ձեռնարկությունների կողմից, տարեկան արդյունահանվում էր 50 հազ. տ. հանքանյութ, որից ստացվում էր 8 հազ. տ ցինկ-կապարային խտանյութ[717]: Վերջին տարիներին ցինկի արտարությունը էապես ավելացել է ի շնորհիվ նոր հանքավայրերի բացահայտման և շահագործման:

1998-1999թթ. միջինը 6,2 % ցինկ պարունակող Թուրքիայի ցինկի հանքանյութի հաստատված պաշարները կազմում էին 5,271 մլն տ., իսկ ընդհանուր պաշարները՝ 6,571 մլն. տ. [718], որոնց մեջ մաքուր մետաղական ցինկի պաշարները կազմում էին համապատասխանաբար 0,326 մլն տ. և 0,407 մլն. տ.: 2012-2013թթ. տվյալներով՝ ամբողջ Թուրքիայի բազմամետաղային հանքավայրերի կատեգորիաներով հաշվարկված և հաստատված հանքանյութի ընդհանուր պաշարներում առկա է արդեն 2,294 մլն տ մետաղական մաքուր ցինկ, որի 35 %-ից ավելին կենտրոնացված է Տրապիզոնի նահագի Լուզիստանի գավառի Ռիզե գավառակի Ջայելի-Մադենքյոյ (Cayeli-Madenkoy) հանքավայրում Ռիզե՝ ներկայիս Ջայելի քաղաքից մոտ 6 կմ հարավ[719]: Այս հանքավայրերի պղինձ-ցինկ պարունակող հանքանյութի՝ **Proven+Probable** (A+B+C_1) կատեգորիաներով հաշվարկված հաստատված պաշարները կազմում են 16 մլն տ, իսկ ընդհանուր պաշարները՝ 24 մլն տ, որտեղ ցինկի պարունակությունը տատանվում է 5.5-8.7 % սահմաններում (միջինը՝ 7.1 %):

---

[717] Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Горная энциклопедия, т. 5, с. 213.

[718] Տե՛ս Полезные ископаемые Турции. Общая характеристика Горная промышленность Турции, http://nado.znate.ru.

[719] Տե՛ս Mineral Potential of Turkey, Mining Turkey or March 2012 p. 19 www.madencilic-turkiye.com, տե՛ս նաև Dagistan H., Mineral deposits of Turkey, Canada, March 4, 2013, p. 26, Revan Kemel, Goc Deniz, Cayeli volcanogenic Massive Sulphide deposit Workshop on Sufduction ore deposits karadeniz, Technical University, Trafzon, Turkey, 23-26 September, 2017, p. 37.

Այսինքն, միայն 16 մլն տ հաստատված պաշարներով հանքանյութում 2018 թ. դեկտեմբերի ի ցինկի և պղնձի համաշխարհային գներով հաշվարկված՝ համապատասխանաբար 1 տ՝ 2700 դոլար առկա է մոտ 3 մլրդ դոլարի 1.12 մլն տ մետաղական ցինկ: Եթե ընդհանուր 24 մլն տ պաշարում ցինկի միջին պարունակությունը ընդունենք 6 %, իսկ պղինձինը՝ 4 %, ապա կստացվի մոտ 4 մլրդ դոլար արժողությամբ 1,47 մլն տ ցինկ[720]:

Այսինքն, միայն այս հանքավայրում, որը տեղակայված է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով սահմանված Ազատ և Անկախ Հայաստանի տարածքում միայն ցինկի տեսքով կուտակված է մոտ 4 մլրդ դոլարի պոտենցիալ արժողությամբ հանքանյութ, որի ամբողջական շահագործումից հնարավոր է ստանալ նվազագույնը 6%, այն է՝ 0.24 մլրդ դոլարի զուտ շահույթ:

Հետաքրքիր է նշել, որ 2014 թ.-ին այս հանքավայրից արտադրվել է 81.4 մլն դոլար արժողությամբ (2013-2014 թթ.-ին մետաղական ցինկի 1 տ շուկայական արժեքը մոտ 2200 դոլար էր), 37 հազ. տ. մետաղական ցինկ, այսինքն ավելին քան արտադրվել է ամբողջ Ֆինլանդիայում (35.7 հազ. տ.) 2006 թ., որի շուկայական արժեքը կազմում էր Թուրքիայի 2014 թ.-ի ցինկի արտահանման արժեքի (237.8 մլն դոլար) ավելի քան 34 %-ը:

2013-2014 թթ. Ջայելի հանքավայրից արդյունահանվել է 176 մլն դոլար արժողությամբ 80 հազ. տ մետաղական ցինկ[721]: 2014-2016 թթ. Թուրքիան իր արտադրած ցինկի մի զգալի մասը արտահանում է Բուլղարիա, Իսպանիա, Ավստրալիա և Իրան: Այդ թվականներին նա արտահանել է մոտ 600 մլն դոլար արժողությամբ ցինկ և ցինկի հանքանյութ:

---

[720] Տե՛ս Revan Kemel, Goc Deniz, Cayeli volcanogenic Massive Sulphide deposit Workshop on Sufduction ore deposits karadeniz, p.41.

[721] Տե՛ս 2014 Minerals Yearbook Turkey, USGS ,September 2016, p. 46. Industry mining Turkey Republic of Turkey, Ministry of Economy 2017, p. 4.

ՔՐՈՄԻՏ

Քրոմիտը երկաթի և մանգանի հետ համատեղ դասվում է այսպես կոչված սև մետաղների շարքին և միայն XIX դարի վերջերից է սկսվել արդյունահանվել ու կիրառվել արդյունաբերության տարբեր ոլորտներում՝ հիմնականում սև մետալուրգիայում, գլխավորապես չժանգոտվող պողպատի ու չուգունի արտադրության ժամանակ: Քրոմիտը ավելի քիչ ծավալներով օգտագործվում է նաև հրակայուն նյութերի արտադրության համար և քիմիական արդյունաբերության տարբեր ոլորտներում: Քրոմիտը դասվում է ռազմավարական նշանակություն ունեցող մետաղների շարքին: Քրոմի հանքանյութի, քրոմիտի ամենատարածված միներալը մագնիտոքրոմիտն է՝ (Mg, Fe) Cr_2O_4: Քրոմի հանքանյութը ըստ քրոմի եռօքսիդի՝ Cr_2O_3-ի պարունակության պայմանականորեն դասակարգվում է հարուստ ու աղքատ հանքատեսակների: Առաջինում եռօքսիդի նվազագույն պարունակությունը պետք է լինի 37 %, երկրորդում՝ 12 %[722]:

Քրոմիտի պաշարներ ունեցող երկրների շարքում Թուրքիան աշխարհում զբաղեցնում է չորրորդ տեղը՝ 26 մլն տ. հաստատված պաշարներով[723]: Թուրքիայի հաստատված քրոմիտների պաշարները, ըստ այլ՝ տարբեր աղբյուրների, տատանվում են 25.9-ից 26.6 մլն տ., իսկ կանխատեսումային ռեսուրսները մոտ 400 մլն տ. են[724], այսինքն՝ ներկայումս Թուրքիայի տարածքում կենտրոնացված է քրոմիտի համաշխարհային հաստատված պաշարների մոտ 13%-ը և կանխատեսումային ռեսուրսների մոտ 3.3 %-ը: Ավանդաբար քրոմիտ արդյունահանող երկրները իրենց չմշակված հումքի և մասամբ վերամշակված կիսաֆաբրիկատի (ֆեռոքրոմի) զգալի մասը, իսկ

---

[722] Ермолов В.А., Попов Г.Б., Мосейкам В.В. и др. Месторождения полезных ископаемых, М., Изд. Горная книга, 2009, с. 172.

[723] Տե՛ս U.S. Geological Survey, Reston Virvinia, 2018.

[724] Selahaddin A., Tamzok N., The mining industry of Turkey Slobodan Vujic (ed) 2nd Balkan Mining Congress Book of Proceedings 2007, p. 2. Տե՛ս նաև Mineral Potential of Turkey: www.madencilic-turkiye.com ol. March 2012, p. 20-21.

որոշ դեպքերում՝ նաև առյուծի բաժինը արտահանել են զարգացած երկրներ՝ ԱՄՆ, Գերմանիա, Ճապոնիա և վերջին ժամանակներս նաև Չինաստան:

Օսմանյան կայսրությունը թերևս առաջին երկիրն է, որ իր տարածքից 1850-ական թթ. ի վեր սկսել է արդյունահանել ոչ մեծ քանակությամբ քրոմիտներ, որոնք բացառապես արտահանել է: Մինչև 1915 թ.-ը քրոմիտը կայսրության տարածքից արդյունահանվում էր միմիայն երկրի արևմտյան հատվածից՝ Զմյուռնիայի (ներկայումս՝ Իզմիրի) նահանգից: 1890-ական թթ. Զմյուռնիայից արդյունահանվում էր տարեկան 12-14 հզր. տ. հանքաքար: Կարևոր է նշել, որ 1910-ական թվականներից այդ հանքավայրերից քրոմիտի արդյունահանումը կատարվում էր այն ժամանակվա Կայզերական Գերմանիայի Կրուպ եղբայրների “Krupp AG” ընկերության կողմից, որի ամբողջ պաշարը արտահանվում էր Գերմանիա և օգտագործվում Կրուպպի գործարաններում զենքի և զինամթերքի արտադրության համար: Այսպես օրինակ, 1913 թ.-ին արտահանվել է 20 հզր. տ., 1914թ.-ին՝ 9.8 հզր. տ., իսկ 2015թ.-ին՝ արդեն 33.8 հզր. տ. քրոմիտ: Բացի քրոմիտից, այս նահանգից արտահանվում էին նաև ավելի քիչ չափով մարգանեց, ծարիր, իսկ կայսրության հանքարդյունաբերական ձեռնարկություններում և հանքահորերում ամբողջությամբ վերցրած աշխատում էր մոտ 55 հզր. մարդ: Քրոմիտի արդյունահանումը կատարվում է դեռևս բավականին պարզունակ ձևերով՝ պայթեցումների միջոցով, որի համար օգտագործվում էր դինամիտ[725]:

Հայտնի է, որ 1922-1923 թթ. Օսմանյան կայսրությունից քրոմիտ ընդհանրապես չի արդյունահանվել[726], ինչից կարելի է եզրահանգել, որ 1923-1937 թթ. քրոմիտ գուցե փոքր քանակությամբ, բայց, արդյունահանվել է: Այդ տարիներին արդյու-

---

[725] Տե՛ս Новичев А.Д. Очерки экономики Турции до мировой войны. Изд. АН СССР. М-Л, 1937, с. 104, տե՛ս նաև նույնի Экономика Турции в период первой мировой войны Изд. АН СССР. М-Л. 1935, с. 60, Горная энциклопедия, Изд. Сов. энц. 1991, т. 5, с. 211.

[726] A Guide to the known minerals of Turkey. Revised by S.W. Ryan Ankara. Turkey, 1960, p. 131.

նահանման համեմատաբար փոքր ծավալները ամենայն հավանականությամբ մի կողմից պայմանավորված էին մի կողմից՝ երկրի արևմտյան մասերում եղած հանքավայրերում հանքանյութի կա՛մ սպառման, կա՛մ էլ սպառման եզրին գնտնվելու հանգամանքով, իսկ մյուս կողմից՝ 1929-1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամով: Միայն 1938 թ.-ից սկսած քրոմիտի տարեկան արդյունահանման տվյալները դառնում են անհամեմատ ավելի հասանելի: Ամենայն հավանականությամբ այդ հանգամանքը պայմանավորված էր Խարբերդի նահանգում 1936-1937 թթ. այսպես կոչված Գուլեյմանի քրոմիտի խոշորագույն հանքավայրախմբերի բացահայտման հետ, որտեղ երկրաբանահետախուզական աշխատանքները կազմակերպվել էին Թուրքիայի խոշորագույն պետական բանկի՝ Էթիաբանկի դուստր ձեռնարկություններից մեկի՝ «Արևելքի քրոմիտների» կողմից, որը մինչև 1940-ական թվականների վերջերը արդյունահանում և արտահանում էր Թուրքիայի քրոմիտի մոտ 85 %-ը[727]: Գուլեյմանի հանքային հանգույցը տեղակայված է պատմական Մեծ Հայքի Չորրորդ Հայք աշխարհում՝ Ծոփքի թագավորության արևմտյան մասում Անձիտ (Հանձիտ) գավառում, Խարբերդի նահանգի Խարբերդի գավառակում (Խարբերդի և Դիարբեքիրի նահանգների սահմանագծում), Հոռեբերդ (Խարբերդ)՝ ներկայիս Էլյազիգ քաղաքից ուղիղ գծով մոտ 50 կմ (ավտոճանապարհով՝ 81 կմ հարավարևելք, Գուլեյման (Guleyman) գյուղի շրջակայքում, Ծովք (Խազար) լճից (իր հանրահայտ 12-րդ դարի կաթողիկոսանիստ կղզով՝ Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոս) 15-30 կմ արևելք՝ Խարբերդի դաշտի արևելյան մասում, որտեղ 20-րդ դարի սկզբներին շուրջ 450 գյուղից մոտ 300-ը հայաբնակ էին:

Հանքային դաշտը տեղակայված է Գուլեյման գյուղից հյուսիս և արևմուտք ունի մոտ 15 կմ երկարություն և մոտ 10 կմ երկարություն և բաղկացած է 4 հիմնական տեղամասից[728]:

---

[727] Նույն տեղում, էջ 143:

[728] Տե՛ս Engin T., Balci M., Sumer Y. et all. General Geological Setting and the Structural Features of the Guleman Peridotite unut and the chromite deposits (Elazic, Eastern Turkey).

ճակատագրի դառը հեգնանքով հայկական պատմական տարածքներում քրոմիտի աշխարհի մինչև օրս խոշորագույն հանքավայրերից մեկը, որի շահագործումը մեծագույնս աջակցել է Թուրքիայի տնտեսական բարգավաճմանը, հայտնաբերվել է Մեծ Եղեռնից հետո, երբ Խարբերդի նահանգը ամբողջովին հայաթափվել էր: Հայտնի է, որ 20-րդ դարի սկզբներին Խարբերդի նահանգը ընդգրկում էր մոտ 37.8 հազ կմ^2, որտեղ բնակվում էին 204 հզր. հայեր: Մեծ Եղեռնի տարիներին նահանգը զանգվածային կոտորածների և բռնագաղթման հետևանքով գրեթե ամբողջովին հայաթափվեց, 1921թ.-ին այստեղ մնացել էին ընդամենը 35 հզր. հայ, որոնք, չդիմանալով թուրքական իշխանությունների հալածանքներին, մի քանի տարի հետո գաղթեցին[729]:

Գուլեյմանի հանքավայրի հիմնական հանքայնացումը կապված է վերին կավճի հասակի (100-ից 66 մլն տարի ժամանակահատված) այսպես կոչված օֆիոլիթային համալիրի գերհիմքային ապարների սերպենտիների և պերիդոտիտների հետ 1966 թ.-ին երկրաբանական պաշարները գնահատվում էին մոտ 200 միլին տ. (մոտ 0.75 մլն տ մաքուր Cr-ի տեսքով), իսկ քրոմիտը աչքի էր ընկնում իր չափազանց բարձր որակներով և պարունակում էր մինչև 52.5 % քրոմի եռօքսիդ Cr_2O_3[730]: Գուլեյմանի հանքավայրի արդյունաբերական շահագործմամբ է էապես պայմանավորված այն հանգամանքը, որ արդեն 1938 թ.-ին Թուրքիան արդյունահանել է այդ ժամանակաշրջանի համար ահռելի քանակությամբ քրոմի բարձրարժեք հանքանյութ՝ 0.211 մլն տ., որի առյուծի բաժինը ամենայն հավանականությամբ արտահանել է Մեծ Բրիտանիա[731], որից 85 %-ը, այ-

---

[729] Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ.Խ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, ԵՊՀ հրատ., Երևան. 1986, с. 973, հ. 2, Երևան, 1988, с. 700, с. 863:

[730] Տե՛ս Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, ԵՊՀ, Եր., 2001, էջ 348: Տե՛ս նաև Մուրադյան Յու. Հ. Թուրքիայի օգտակար հանածոները և լեռնահանքային արդյունաբերությունը, Извест. АН. Арм ССР, Науки о Земле 1976, N3, с. 73:

[731] Տե՛ս Ժամանակակից Թուրքիա (տեղեկատու), Հայաստան, Եր., 1967:

սինքն՝ 0.179 մլն տ., արդյունահանվել էր հայկական պատմական հողերից:

Միայն 1938 թ.-ի հոկտեմբերից մինչև 1940թ.-ի դեկտեմբերը ներառյալ, այսինքն՝ 2 տարի 2 ամսում, Թուրքիան Գերմանիա է արտահանել մոտ 1.04 մլն տ բարձրարժեք քրոմիտ[732], որի առյուծի բաժինը պետք է որ արդյունահանված լիներ Գուլեյմանի հանքավայրից, քանի որ այդ ժամանակաշրջանում Թուրքիայի քրոմիտի կարևոր այլ բազմաքանակ հանքավայրեր՝ հիմնականում կենտրոնական և արևմտյան Թուրքիայում, դեռևս բացահայտված չէին:

1938 թ.-ից գործող Սեյհան (Seyhan) հանքավայրը կենտրոնական Թուրքիայում պաշարներով և արդյունահանման քանակություններով շատ ավելի համեստ էր: Այդ մասին է վկայում այն փաստը, որ չնայած այդ հանքավայրի քրոմիտի արդյունահանման և արտահանման 1938-1944 թթ.-ի փաստացի տվյալների բացակայությունը՝ 1945-1952 թթ.-ի այստեղից արդյունահանվել է ընդամենը 0.054 մլն տ, իսկ արտահանվել է 0.023 մլն տ հանքաքար, իսկ Գուլեյմանից՝ համապատասխանաբար 1 մլն տ և 0.86 մլն տ[733]: Կարելի է եզրահանգել, որ 1938-1944 թթ. ներառյալ Թուրքիայի տարածքից արտանահվող քրոմիտի 90%-ը արդյունահանվում էր Գուլեյմանի հանքավայրից:

Թերևս և ոչ մի օգտակար հանածո այսպիսի մեծ ազդեցություն չի ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության ասպարեզում, ինչպես քրոմիտն է: Առանձնապես մեծ է եղել այս «քաղաքականացված հանքաքարի» նշանակությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայի հետ ունեցած տնտեսական փոխհարաբերություններում, ընդ որում՝ Թուրքիան խնամքով թաքցնում էր Գերմանիա արտահանած քրոմիտի քանակությունը: Այդ հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ Թուրքիան մինչ այդ պայմանագիր էր կնքել Անգլիայի հետ, որով պարտավորվում էր իր արդյունահանած ամբողջ քրոմիտը արտա-

[732] Տե՛ս Кондакчян Р.П., Турецко-германские торговые связи в годы Второй мировой войны, Вестник общественных наук АН Арм ССР, 1970, N 6, с. 35.
[733] Տե՛ս A Guide to the known minerals of Turkey, p. 139.

հանել Անգլիա՝ ի հատուցում Քարաբյուքի մետալուրգիական գործարանի շինարարությանը Անգլիայի գործուն մասնակցությանը:

1941 թ.-ի հոկտեմբերի 9-ին Թուրքիան և Գերմանիան ստորագրեցին մոտ 100 մլն. լիրայի 15 տարվա մի նոր առևտրական պայմանագիր, համաձայն որի Գերմանիան պարտավորվում է մատակարարել պողպատ և տարբեր զինատեսակներ՝ հանքահումքային ռեսուրսների՝ գլխավորապես քրոմիտի մատակարարման դիմաց, որի ամենտարյա արտահանումը պետք է կազմեր մոտ 90 հզր. տ.: Քրոմիտի քաղաքական նշանակությունը այնքան մեծ էր, որ որոշ հետազոտողներ, օրինակ, թուրք ուսումնասիրող Յու. Կուրատը (Y. Kurat) գիտական շրջանառության մեջ մտցրեց «գաղտնի պատերազմ» տերմինը, որը ենթադրում էր իսկական առևտրական պատերազմ Անգլիայի և Գերմանիայի միջև քրոմի հանքաքարին տիրանալու նպատակով: Այդ առևտրական պատերազմում բացահայտ առավելությամբ շահում էր Գերմանիան: Թե ինչ մեծագույն նշանակություն ուներ թուրքական՝ նախկինում առավելապես հայաբնակ Գուլեյմանի շրջակայքից քրոմիտը Գերմանիայի համար վկայում է այն փաստը, որ այդ հանքաքարի արտահանումը դյուրացնելու նպատակով Գերմանիան Ստամբուլի Սարայբուռնու թաղամասում կառուցում է մի նոր նավահանգիստ՝ հատուկ հարմարեցված հանքատար նավերի համար: Միայն 1943 թ.-ին Թուրքիայում արդյունահանված բարձրարժեք 100 հզր. տ. քրոմիտից, 47 հզր. տ. արդյունահանվել է Գերմանիա՝ գլխավորապես Կրուպի գործարան, և օգտագործվել բարձրորակ պողպատ ստանալու և դրանից տարբեր զինատեսակներ պատրաստելու համար: Այդ ժամանակ Գերմանիան իր ֆեռոքրոմային համաձուլվածքների համար անհրաժեշտ քրոմիտի 30 %-ը ստանում էր Թուրքիայից[734]:

1941թ.-ին Անկարա է ժամանում ֆաշիստական Գերմանիայի տնտեսության նախարարի տեղակալ Կլոդիուսը, որը պահանջում է չեղարկել մինչ այդ եղած 1940 թ.-ի թուրք-անգ-

[734] Տե՛ս Кондакчян Р.П., Турецко-германские торговые связи в годы Второй мировой войны, с. 35.

լիական առևտրական պայմանագիրը և ամբողջ արդյունահանած քրոմիտը տրամադրել Գերմանիային՝ իր հերթին խոստանալով դրա համար մատակարարել Թուրքիային տարբեր տիպի զենք և զինամթերք: Բացի դրանից, արտանահվող քրոմիտի դիմաց Գերմանիան խոստանում էր տրամադրել Թուրքիային երկարաժամկետ վարկեր և անմիջականորեն մասնակցել նրա տարածքում երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների, կամուրջների և օդանավակայանների կառուցմանը: Սակայն թուրքական իշխանությունները փորձում էին խուսանավել Գերմանիայի և Անգլիայի միջև, և մինչև վերջ չէին համաձանվում խզել իրենց տնտեսական հարաբերություններ Անգլիայի հետ՝ խոստանալով Գերմանիային մատակարարել քրոմիտ, անգլիական համաձայնագրի ժամկետը լրանալուց հետո: Այս հանքաքարի հույժ կարևորությունը ընդգծում է նաև այն հանգամանքը, որ, եթե Գերմանիային միանգամից չհաջողվեց ստանալ քրոմիտ, պղնձի, ինչպես նաև բամբակի և բրդի արտահերթ ու հրատապ արտահանման մասով թուրքական կառավարությունը Գերմանիայի հետ եկավ համաձայնության[735]: Միայն 1944 թ.-ի ապրիլի 20-ին, երբ Թուրքիան վերջնականապես հասկացավ, որ Գերմանիան պարտվելու է՝ դադարեցրեց քրոմիտի արտահանումը այդ երկիր[736]:

1950-ական թթ., երբ Թուրքիայի տարածքում (հիմնականում՝ արևմտյան) բացահայտվում են քրոմիտի նոր հանքավայրեր. հանքաքարի արտահանումը զգալիորեն մեծանում է, սակայն Գուլեյմանի հանքավայրը պահպանում է իր գերիշխող դիրքը քրոմիտի արդյունահանման և արտահանման ասպարեզում: Այսպես օրինակ, 1945 թ.-ից մինչև 1952 թթ. ներառյալ ամբողջ Թուրքիայի տարածքից արդյունահանվել է 2.97 մլն քրոմիտի հանքաքար, որից միայն Գուլեյմանի հանքային դաշտից՝ մոտ 1 միլիարդ տոննա, այսինքն՝ ամբողջ արտադրանքի մոտ 35 %, որից հիմնականում ԱՄՆ և Անգլիա է վա-

---

[735] Տե՛ս Новейшая история Турции. М. Наука 1968, с. 188.

[736] Տե՛ս Кондакчян Р.П., Турецко-германские торговые связи в годы Второй мировой войны, с. 38.

ճառվել 2.2 մլն տ., որից մաիյն 0.8 մլն տ՝ Գուլեյմանի հանքային դաշտից[737]: Միայն 1950 թ.-ին արդյունահանվել է մոտ 0.422 մլն տ.[738]: 1953-1955թթ.-ին Թուրքիայի քրոմիտի արդյունահանման մոտ 25 %-ը (0.5 մլն տ.) և վաճառքի մոտ 27 % (0.4 մլն տ.) ևս բաժին է ընկել Խարբերդի նահանգին: Այդ ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանի տարածքի այլ վայրերից նորահայտ հանքավայրերից՝ Էրզրում, Սեբաստիա, Թոքատ, ևս արդյունահանվել և վաճառվել են ոչ մեծ քանակությամբ քրոմի հանքաքարեր՝ համապատասխանաբար 69 հզր. և 28 հզր. տ.[739]:

Ըստ որոշ հաշվարկների՝ Գուլեյմանի հանքային դաշտից 1936 թ.-ից մինչև 1981 թ.-ը ներառյալ արդյունահանվել է 6.3 մլն տ. բարձրարժեք քրոմիտ[740]: 1955 թ. Թուրքիան արդյունահանել է 0.649 մլն տ. քրոմիտ, իսկ 1956 թ.-ին արտահանել է նույն քանակությամբ, սակայն սկսած 1958 թ.-ից մինչև 1964 թ. նկատվում է քրոմիտի արդյունահանման և արտահանման ծավալների որոշակի կրճատում, որը պայմանավորված էր ԱՄՆ-ի և այլ զարգացած մետալուրգիա ունեցող եվրոպական երկրների պահեստարաններում կուտակված և դեռևս չիրացված քրոմիտի ավելցուկով[741]: Այսպես օրինակ, 1959 թ. քրոմիտի արտահանումը կազմել է 0.5 մլն տ, 1960 թ.՝ աբողջ արդյունահանումը արդեն 0.55 մլն տ.: 1961 թ. արտահանվել է 0.39 մլն տ., իսկ 1963 թ. Թուրքիայից արդյունահանվել է 0.444 մլն տ քրոմիտ (մոտ 60 %-ը՝ 0.26 մլն տ.՝ միայն Գուլեյմանի հանքային դաշտից), որից մոտ 0.213 մլն տ արտահանվել է: 1960-ական թթ. սզկբներին Թուրքիայի քրոմիտի արտահանումից ստանում էր մոտ 40-100 մլն լիր: Որպեսզի հասկանալի լինի

---

[737] Տե՛ս A Guide to the known minerals of Turkey, p. 139.

[738] Տե՛ս Джанилов Х., Экономика Турции, М., Наука, 1971, с. 195.

[739] Տե՛ս A Guide to the known minerals of Turkey, p. 140-141.

[740] Տե՛ս Engin T. Balci M. Sumer Y et al. General Geological setting and the structural Features of the Guleman peridotite unit and the chromite deposites (Elazig, Eastern Turkey). Bulletin of the mineral research and exploration institute of Turkey. October 1980 – April 1981 N 95/96, p. 34.

[741] Տե՛ս Ժամանակակից Թուրքիա, Եր., 1967, էջ 102, 162, 418, տե՛ս նաև Джанилов Х., Экономика Турции, с. 15, 195.

քրոմիտի տեսակարար կշիռը 1950-ականթթ. արդյունաբերության մեջ կարևոր է նշել, որ 1957 թ. արդյունահանված բոլոր տեսակի 1.12 մլն տ. հանքաքարերի մեջ 0.6 մլն տ. բաժին էր ընկնում քրոմիտին[742] (4.4-ից մինչև 11.1 մլն դոլար՝ 1963 թ.-ի կուրսով), որը կազմում էր Թուրքիայի ամբողջ արտահանման ծավալի 1-ից 3 %-ը: Հարկ է նշել, որ ԱՄՆ դոլարը մինչև 1960 թ. օգոստոսը համարժեք էր 2.8 լիրայի, իսկ 1963թ.-ի պաշտոնական տվյալներով՝ այն փոխհարաբերակցվում էր 1:9-ին. դոլարի շուկայական կուրսը մոտ 13-15 լիրա էր[743]: Մեկ այլ տվյալներով՝ 1963 թ.-ին Թուրքիայից ԱՄՆ, ԳՖՀ, Ֆրանսիա և ավելի քիչ քանակությամբ նաև Ավստրիա, Նորվեգիա և Իտալիա է արտահանվել 0.395 մլն տ. քրոմի հանքաքար[744]: 1965 թ. արդյունահանվել է արդեն 0.583 մլն, իսկ 1968 թ.՝ 0.603 մլն տ. քրոմի հանքաքար, որի առյուծի բաժինը արտահանվել և վաճառվել է 9.62 մլն դոլարով:

Համեմատության համար նշենք, որ նույն 1965 թ. քրոմիտ արդյունահանող հիմնական երկրներում արտադրվել է շատ ավելի քիչ և վատորակ հանքաքար Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում՝ 0.39 մլն տ, Ֆիլիպիններում՝ 0.16 մլն տ[745]: 1970թ. արդյունահանվել է 0.51 մլն տ, իսկ 1972թ.՝ արտահանվել է 11.6 մլն դոլարի մոտ 0.285 մլն տ քրոմիտ, որից կարելի է եզրակացնել, որ 1970-ական թթ. սզկբներին թուրքական բարձրարժեք քրոմիտի 1 տ. վաճառվում էր 40.7 ԱՄՆ դոլարով[746]: 1973 թ. քրոմիտի արդյունահանումը կազմել է 0.6 մլն տ,

---

[742] Տե՛ս նույն տեղում, էջ 420:

[743] Տե՛ս նույն տեղում, էջ 102, 162, 189, Տե՛ս նաև Джанилов Х., Экономика Турции, с. 195.

[744] Տե՛ս Մուրադյան Յու. Հ. Թուրքիայի օգտակար հանածոները և լեռնահանքային արդյունաբերությունը. Изв АН Арм ССР, Науки о Земле, Ер., 1967, N 3, с. 73.

[745] Տե՛ս Джанилов Х., Экономика Турции, с. 195, 200, տե՛ս նաև Турецкая республика (справочник), М., Наука, 1975, с. 563.

[746] Տե՛ս Турецкая республика (справочник), с. 563, տե՛ս նաև Капитализм в Турции, М., Наука, 1987, с. 49.

1977թ. արտահանվել է 0.46 մլն տ., 1980թ. արդյունահանվել է 0.515 մլն տ., իսկ 1983թ.՝ արտահանվել 0.32 մլն տ. քրոմիտ[747]:

Ընդ որում, 1970-ական թթ. ամբողջ հանքաքարի մոտ 40 %-ի արդյունահանումը բաժին էր ընկնում պետական ընկերություններին՝ մասնավորապես 2 ընկերության, որոնցից մեկը գտնվում էր արևմտյան Թուրքիայում և ուներ 800 աշխատող, իսկ մյուս ամենախոշորը՝ «Շիրակ Կորմարլին», որը պատկանում էր Թուրքիայի ամենախոշոր պետական բանկին՝ Էթիբանկին, տեղակայված էր Խարբերդի նահանգի Գուլեյմանի շրջանում և ուներ մոտ 1000 բանվոր[748]:

1966 թ. արդյունահանվել է 0.511 մլն տ քրոմիտի հանքաքար, որից 0.499 տ. արտահանվել և վաճառվել է 10.16 մլն դոլարով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ 1966 թ.-ի տվյալներով 1տ թուրքական քրոմիտի շուկայական արժեքը կազմում էր 20.3 ԱՄՆ դոլար: Նույն թվականին Թուրքիայից արտահանվել է նաև 2.21 մլն դոլարի ֆերոքրոմի խտանյութ[749]:

Առայժմ դժվար է վստահաբար և ճշգրտորեն հաշվարկել 1960-1970 թթ.-ի Թուրքիայի տարածքից արդյունահանված և արտահանած քրոմիտի վաճառքի գինը, քանի որ ամենամյա ճշգրիտ տվյալները ամենայն հավանականությամբ կա՛մ բացակայում են, կա՛մ էլ հասու չեն, բայց, հաշվի առնելով որոշակի տարիների մասին եղած վիճակագրական տվյալները, կարելի է վստահաբար նշել, որ այդ ժամանակահատվածում՝ 1960 թ.-ից մինչև 1970 թթ. վերջը, Թուրքիան տարեկան արտահանել է ոչ պակաս, քան 0.4-0.5 մլն տ. բարձրարժեք քրոմի հանքանյութ: Եթե նույնիսկ հաշվարկենք նվազագույն քանակությամբ՝ տարին 0.4 մլն տ., ապա ստացվում է, որ 1960-ական թթ. արդյունահանվել է առնվազն 4 մլն տոննա հանքանյութ՝

---

[747] Տե՛ս Капитализм в Турции, с. 49, տե՛ս նաև Горная Энциклопедия, т. 5, с. 212, Турецкая Республика, с. 101.

[748] Տե՛ս Турецкая республика. с. 101.

[749] Տե՛ս Dogan Zeki. The economic importance of mineral production in Iran, Pakistan and Turkey in view of co-operation in Mineral exports and international trade. Bulletian of the mineral research and exploration Institute of Turkey. October 1968, N. 71, pp. 75-76.

մոտ 80 մլն դոլար արժողությամբ, եթե ենթադրենք, որ 1966 թ.-ի քրոմիտի շուկայական արժեքը (մոտավորապես 20 $/տ) կարելի է տարածել ամբողջ 1960-ական թթ. վրա: Անուղղակիորեն այդ է հաստատում այն հանգամանքը, որ միայն 1968թ. արտահանվել է 9.62 մլն դոլարի քրոմիտ, իսկ 1970, 1972, և 1973 թթ., այսինքն՝ 3 տարում, արտահանվել է 40.5 մլն դոլարի քրոմիտ (տարին 11-ից 15 մլն դոլարի)[750]:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ սկսած 1950 թթ. երկրորդ կեսից Թուրքիան իր արդյունահանած քրոմիտների մոտ 20-30 %-ն արդեն իսկ վերամշակում էր ֆեռոքրոմի (քրոմի և երկաթի համաձուլվածք, առանց որի անհնարին է ստանալ չժանգոտվող պողպատ) և նոր միայն արտահանում այն, ապա արտահանումից ստացված ընդհանուր եկամուտները կարող էին շատ ավելին լինել, քանի որ ֆեռոքրոմի շուկայական արժեքը մի քանի անգամ ավելին է, քան չվերամշակված քրոմիտինը:

ԱՄՆ-ի Երկրաբանական ծառայության՝ USGS-ի տվյալների համաձայն, 2013-2017 թթ. ֆեռոքրոմի շուկայական գները տատանվում էին 1750-2600 դոլար/տ.-ի սահմաններում, իսկ քրոմիտի չմշակված հանքանյութինը՝ համապատասխանաբար 198-320 դոլար/տ.-ի սահմաններում[751]: Մոտավորապես նույն համամասնությունն է նկատվում նաև 2000 թ.-ից ի վեր, որից կարելի է հետևություն կատարել, որ ֆեռոքրոմի շուկայական միջազգային արժեքը քրոմիտի չմաշկված հանքաքարից միշտ մոտ 6-11 անգամ ավելի բարձր է եղել: Թուրքիայից արտահանած ֆեռոքրոմի մասին տվյալները ավելի քիչ են, սակայն վստահաբար կարելի է ասել, որ 2003 թ.-ից մինչև 2006 թ. ներառյալ Թուրքիան արտադրել է 0.163 մլն/տ. և 199 մլն դոլար արժողությամբ ֆեռոքրոմ, որի առյուծի բաժինը արտահանել է[752]: Այդ նույն ժամանակահատվածում, համա-

---

[750] Տե՛ս Турецкая республика, с. 563.

[751] Տե՛ս Mineral Commodity Summaries. US Geological Survey. Roston. Virginia 2018, p. 48.

[752] Տե՛ս Рынок Феррохрома – 2007. Информационный обзор ООО “Инфометгео”, М. 2008, с. 7.

ձայն ԱՄՆ-ի USGS ծառայության և այլ տվյալների՝ Թուրքիան արտահանել է մոտ 463 մլն դոլարի հանքանյութ, որից միայն 2005 թ. արդյունահանել է 1.6 մլն տ. քրոմիտի հանքանյութ, որի մի մասի վերամշակումից արտադրել է ընդամենը 0.026 մլն տ.՝ 37.1 մլն դոլար արժողությամբ:

Վերջին տարիներին Թուրքիայից արտահանած ֆեռոքրոմի մասին տվյալներ հնարավոր չեղավ ձեռք բերել, սակայն ըստ հասանելի համացանցային տվյալների՝ Թուրքիան 2014-ից 2016 թթ. ներառյալ միայն Հոլանդիա է արտահանել 0.069 մլն տ. և 102 մլն դոլար արժողությամբ ֆեռոհամաձուլվածքներ[753], և քանի որ այլ երկաթի համաձուլվածքներ Թուրքիան երբևիցե չի արտադրել և արտահանել, կարելի է եզրակացնել, որ խոսքը գնում է ֆեռոքրոմի մասին:

Ներկայումս Թուրքիայում ֆեռոքրոմի արտադրությամբ զբաղվում է Yildirim Group խոշորագույն արդյունաբերական ընկերությունը, որը հաստատվել է 1963 թ.-ից և քրոմիտի շուկայում սկսել է իր գործունեությունը 2004 թ.-ից, երբ ձեռք բերեց մինչև այդ քրոմի արտադրության մեջ առաջատար Enikrom ընկերության ամբողջ մասնաբաժինը: Ներկայումս այդ ընկերությունը հանդիսանում է քրոմի վերամշակման արդյունաբերության ասպարեզում աշխարհում երկրորդ ամենախոշոր ընկերությունը և քրոմի հանքանյութի ամենախոշոր արդյունահանողներից մեկը, որը դուստր ձեռնարկություններ և մասնաճյուղեր ունի՝ այդ թվում Շվեյցարիայում (Polymetcore Tarading S.A.): Այս թուրքական ընկերությունը ունի նաև մասնաճյուղեր 28 այլ երկրում, որտեղ ընդհանուր առմամբ աշխատում է 12000 մարդ, որից կարելի է եզրակացնել, թե ինչ հսկական տնտեսական և ռազմավարական նշանակություն ունի քրոմիտը ներկայիս Թուրքիայի համար ընդհանրապես:

Այժմ դժվար է քիչ թե շատ ճշգրտորեն հաշվարկել ֆեռոքրոմի արտադրությունը և արդյունահանումը Թուրքիայից վերջին տարիներին: Սակայն միայն 2008թ. և 2010-2011 թթ. ամբողջ Թուրքիայից արտահանվել է մոտ 1.6 միլիարդ դոլար արժողությամբ ֆեռոքրոմ, ընդ որում 2008 թ.-ին՝ 559 մլն դո-

[753] Տե՛ս Trend Economy, 2016.

լար, 2010-2011թթ՝ մոտ 1 միլիարդ դոլարից քիչ ավել՝ մոտ 0.4 մլն տ. ֆեռոքրոմ է արտահանվել: 2013 թ. արտահանվել է ավելի քիչ քանակությամբ՝ մոտ 135 մլն դոլարի, ֆեռոքրոմ[754]: Այսպիսով, միայն 2003-2006 թթ., 2008 թ., 2010-2011 թթ. և 2013 թ. տվյալներով՝ Թուրքիան արտահանել է համապատասխանաբար 199 մլն դոլարի, 559 մլն դոլարի, 1 միլիարդ դոլարի և 135 մլն դոլարի ֆեռոքրոմ, այսինքն՝ 1.89 միլիարդ դոլարի ֆեռոքրոմ: Եթե այդ թվին ավելացնենք 2014-2016 թթ. միայն Հոլանդիա արտահանած 102 մլն դոլարի ֆեռոքրոմի արժեքը, ապա կպարզվի, որ միայն վերը նշված թվերին արտահանված ֆեռոքրոմի հավաստի արժեքը կազմում է 1.99 միլիարդ՝ մոտ 2 միլիարդ դոլարի: Այստեղից կարելի է եզրահանգել, որ 2000թ.-ից ի վեր մնացած տարիներին՝ 2000-2002 թթ., 2007 թ., 2009 թ., 2012 թ., 2017 թ., ինչպես նաև 2014-2016 թթ. համար մասնակի հաշվարկված (ենթադրվում է, որ բացի Հոլանդիայից այդ թվերին ֆեռոքրոմ է արտահանվել նաև այլ երկրներ), նշված 2 միլիարդ դոլարը կարող է առնվազն կրկնապատկվել: Այսպիսով, կարելի է բավականին մեծ հավանականությամբ ենթադրել, որ 2000 թ.-ից ի վեր Թուրքիան արտահանել է մոտ 4 միլիարդ դոլարի ֆեռոքրոմ, որի 71 %-ը, այսինքն՝ մոտ 3 միլիարդ դոլարից ավելին, ստացվել է Արևմտյան Հայաստանի 6 նահանգների տարածքներից ստացված չմշակված քրոմի հանքանյութի վերամշակումից:

Կարևոր է նշել, որ եթե 1960-80-ական թթ. տվյալներով Արևմտյան Հայաստանի տարածքից (հիմնականում Խարբերդի կամ Էլյազիգի նահանգից՝ Գուլեյման) ըստ գրականության տվյալների արդյունահանվում էր քրոմի հանքանյութի մոտ 60%-ը, ապա վերջին 25-30 տարիներին իրավիճակը փոխվել է, և Արևմտյան Հայաստանի նահանգների տարբեր տարածքներից արդյունահանված քրոմիտի քանակությունը Թուրքիայի ամբողջ արդյունահանության մեջ արդեն անցնում է 70 %-ի սահմանագիծը, քանի որ հենց այս տարածքներում է կենտրո-

[754] Տե՛ս Неметаллургический бюлетень 15.06.2011. metallorg.ru, 2.04.2008 https://www.metalorg.ru.

նացված քրոմիտի առկա հաշվարկված պաշարների գերակշռող մասը:

Այսպես օրինակ, 2012-2013 թթ. տվյալներով՝ Թուրքիայի քրոմիտի պաշարների 45%-ը կենտրոնացված է Խարբերդի նահանգում (Գուլեյմանի հանքային դաշտ), իսկ մոտ 13%-ը՝ Սեբաստիայի (Սվազ) և Էրզինջանի (Երզնկա) նահանգներում, իսկ երկրի արևմտյան նահանգներում՝ (Բուրսա, Ադանա, Մուգլա և այլն) հաշվարկվում է քրոմիտի պաշարների ընդամենը 29 %-ը: Այսինքն՝ Արևմտյան Հայաստանի տարածքում կենտրոնացված է Թուրքիայի քրոմիտների հետախուզված պաշարների (proven+probable = A+B+C_1 կատեգորիաներ) 58 %-ը, որը կազմում է մոտ 18 մլն տ բարձրարժեք քրոմիտի հանքանյութ (Cr_2O_3 պարունակությունը 20 %-ի ավել), որից մոտ 8 % (մոտ 2մլն տ) կենտրոնացված է Վիլսոնյան Հայաստանի տարածքում՝ Երզնկա քաղաքի շրջակայքում և նրանից մոտավորապես 100կմ հյուսիս-արևելք Կոպդագ (Kopdag) բնակավայրի մոտ[755]: Եթե հիմք ընդունենք 2018թ. քրոմիտի հանքաքարի 1 տ շուկայական արժեքը (մոտ 320 ԱՄՆ դոլար), ապա Արևմտյան Հայաստանի տարածքում 2012-2013 թթ. առկա էր մոտ 5.76 մլրդ դոլար շուկայական արժողությամբ (2018 թ. գնեռով) քրոմիտի հանքանյութ, որից առնվազն 0.64 մլրդ դոլարը բաժին էր ընկնում Վիլսոնյան Հայաստանի տարածքին: Եթե ընդունենք, որ քրոմիտի հանքավայրերի շահագործման ինքնարժեքը սովորաբար չի գերազանցում 70 %-անոց շեմը, ապա կարելի է ենթադրել, որ Արևմտյան Հայաստանի քրոմիտի հանքավայրերի շահագործումից կարելի է ակնկալել մոտ 1.35 մլրդ դոլար ընդհանուր շահույթ, իսկ Վիլսոնյան Հայաստանի տարածքից՝ մոտ 0.18 մլրդ դոլարի ընդհանուր շահույթ: Հաշվի առնելով, որ 2012-2013 թթ.-ից ի վեր Թուրքիայի տարածքում, համաձայն տարաբնույթ մասնագիտական գրականության և համացանցային տվյալների՝ քրոմիտի նոր հանքավայրեր չեն բացահայտվել, այդ համամասնությունը պահպանվում է ցայսօր:

---

[755] Տե՛ս Mineral Potential of Turkey. Mining Turkey, March 1, 2012, p. 21, տե՛ս նաև Mineral depositts of Turkey. Canada. March 4, 2013 (MTA), p. 17.

Բացի վերը նշված մեծ հանքավայրերից, քրոմիտի ավելի փոքր հանքավայրերից հայտնի են նաև Իգդիրի, Կարսի շրջակայքերում և այլուր (ներկայումս Թուրքիայի տարածքում ընդհանուր առմամբ առկա է քրոմիտի մոտ 710 տարբեր չափսերի և նշանակության հանքավայր), որոնց տնտեսական նշանակությունը բավականին փոքր է և Թուրքիայի քրոմիտի արդյունահանման տեսակարար կշռում կազմում է չնչին քանակություն ու հետևաբար չի հաշվարկվել: Ելնելով վերը մատնանշված տվյալներից, 1995 թ.-ից մինչև 2017 թ.-ը ներառյալ ամբողջ Թուրքիայի տարածքից արդյունահանվել է մոտ 40 մլն/տ քրոմիտի հանքաքար, որից մոտ 71 %-ը՝ Արևմտյան Հայաստանի տարածքից, որի շուկայական արժեքը 2018 թ. միջազգային գներով (այն է՝ միայն հանքաքարի արդյունահանում և արտահանում) կկազմեր մոտ 9 մլրդ դոլար: Ընդ որում, 2014 թ.-ին արտահանվել է 342.8 մլն դոլարի (1.5 մլն/տ.), 2015թ.՝ 249.9 մլն դոլարի (1.32 մլն/տ.), 2015 թ.՝ 249.9 մլն դոլարի (1.32 մլն/տ.), իսկ 2016 թ.՝ 244.8 մլն դոլարի (1.254 մլն/տ.) քրոմիտ[756]: Հաշվի առնելով նաև 2000 թ.-ից ի վեր ֆեռոքրոմի արտահանման մոտավոր արժեքը՝ այդ թիվը ամենահամեստ հաշվարկներով կկազմի մոտ 12 մլրդ ԱՄՆ դոլար:

ՃԱՌԱԳԱՅԹԱԾԻՆ ԿԱՄ ՌԱԴԻՈԱԿՏԻՎ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ (ՈՒՐԱՆ ԵՎ ԹՈՐԻՈՒՄ)

Ռադիոակտիվ կամ ճառագայթածին հանքավայրերը պարունակում են ուրանի և թորիումի տարաբնույթ քիմիական միացություններից հիմնականում օքսիդներ կազմված հանքանյութեր, որոնց վերամշակումից և հարստացումից հետո ստացված վերջնարդյունքը օգտագործվում է որպես ուժանյութ միջուկային էներգետիկայի և զինամթերքի ստացման համար: Այդօրինակ հանքանյութերի հանքավայրերը և երևակումները ծագումնաբանորեն կապված են որպես կանոն թթու

[756] Տե՛ս Industry mining Turkey. Republic of Turkey. Ministry fo Economy 2017, p. 4.

և միջին կազմության, այսինքն՝ սիլիցիումի օքսիդներով համեմատաբար հարուստ գրանիտանման ապարների հետ:

Արևմտյան Հայաստանի տարածքում առկա է թորիումի միներալներով հարուստ ընդամենը մեկ հանքերևակում՝ Մալաթիայի (Մելիտենեի) քաղաքի մերձակայքում, Խարբերդի նահանգի հյուսիս-արևելքում, Մալաթիայի գավառում, որի արդյունաբերական նշանակությունը դեռևս չի պարզաբանված[757]: Արևմտյան Հայաստանի տարածքում՝ ըստ 1950-1970-ական թթ. թուրքական աղբյուրների, առկա է ուրանի տարբեր տիպի օքսիդների ընդամենը 4 հանքավայր և հանքերևակում՝

1) Շապին-Կարահիսարի ոչ մեծ հանքավայրը Սեբաստիայի նահանգի Շապին-Կարահիսար գավառում (պատմական Փոքր Հայքի առաջին Հայք պրովինցիայում)[758], որը ծագումնաբանորեն կապված է վերին կավճի հասակի ապարների հետ (145-100 մլն տարի ժամանակահատված): Հանքայնացումը ներկայացված է ուրանի եռօքսիդի UO_3 ձևով, որն առաջացրել է առանձին երակներ: Պաշարները մեծ չեն և կազմում են մոտ 300 տ.:

2) Սեբաստիայի կամ Սվազի հանքերևակումը՝ Սվազ քաղաքից մոտ 80 կմ հյուսիս-արևմուտք, Իյիլդզելի քաղաքի շրջակայքում: Գլխավոր հանքանյութը ներկայացված է նիկելի միացություններով:

3) Քեբանի հանքերևակումը Խարբերդի նահանգում համանուն քաղաքից (ներկայումս՝ Էլյազիգ), մոտ 80 կմ հյուսիս-արևմուտք, և Մարդեբերդի երևակումը Դիարբեքիրի նահանգի Մարդենի գավառում (պատմական Վերին Հայոց Միջագետք): Այդ դեպքում ևս ուրանի հանքանյութը կապված է

---

[757] Տե՛ս Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, ԵՊՀ հրատ., Եր., 2001, էջ 397:

[758] Տե՛ս Миронов Ю.Б., Типы урановых месторождений Альпийско-Гималайского пояса. Материалы IV Международной Конференции Радиоактивность и радиоактивные элементы в среде обитания человека, Томск, 2013, с. 368-369.

վերին կավճի հասակի գրանիտանման ապարների հետ[759]: 1984 թ.-ի տվյալներով հանքանյութերի զգալի պաշարներ են հայտնաբերվել նաև Վանի նահանգի տարածքում[760]:

Սակայն մինչ օրս Թուրքիայի ուրանի հանքավայրերը՝ չնայած հաստատված և արդյունաբերական նշանակության պաշարների, երբևիցե չեն շահագործվել:

Վերջին ժամանակներում, համաձայն Atominfor.bg բուլղարական կայքի, Ավստրալիայում գրանցված "Anatolia Energy" մասնավոր ընկերությունը ստացել է լիցենզիա կենտրոնական Թուրքիայի Թամրեզլի ուրանի հանքավայրի շահագործման համար (Անկարայից մոտ 200 կմ արևելք)՝ Սեբաստիայի նահանգից քիչ արևմուտք, արևմտյան Թուրքիայի տարածքում: Այդ հանքավայրի հաստատված պաշարները գնահատվել են 4500 տ. ավելի, իսկ հանքաքարի արդյունահանման ինքնարժեքը առանց ռոյալեթի և հարկերի կազմելու է 56.6 դոլար/կգ:

Վերջին տարիներում ամբողջ աշխարհում մեծ ուշադրություն է դարձվում նաև ուրանի հանքանյութի կորզման նոր, ոչ ավանդական՝ հիդրոմիներալոգիական մեթոդների կատարելագործմանը ծովերի, օվկիանոսների և լճերի ջրերից, որը պայմանավորված է ուրանի ավանդական հանքավայրերի քչությամբ և մասամբ սպառմանը: Ծովային ջրերից դեռևս 1980-ական թթ.-ի սկզբից փորձեր են կատարվել կորզել ուրանը, սակայն կորզման ինքնարժեքը մոտ 2 անգամ գերազանցել է ուրանի շուկայական համաշխարհային գները:

Այս առումով առավել ուշագրավ է լճային ջրերում առկա ուրանը, որտեղ որոշ դեպքերում լուծված ուրանի իոնների քանակությունը կարող է գերազանցել ծովերում և օվկիանոսներում եղած քանակությանը՝ մի քանի տասնյակից մի քանի

---

[759] Տե՛ս Վեհունի Ա., Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, էջ 396-397, տե՛ս նաև A Guide of the known minerals of Turkey, p. 296.

[760] Տե՛ս Кохмадзе Н.В., Проблема преодоления социально-экономической отсталости востока Турции в программных установках буржуазных политических партий страны, Тбилиси, Медниерба, 1985, с. 89.

հարյուր անգամ, ինչպես օրինակ Ռուսաստանի, Չինաստանի, Մոնղոլիայի և Ղրղզստանի մի շարք լճերում: Օրինակ, Ղրղզստանի հանրահայտ Իսիկ Կուլ լճում այդ ցուցանիշը տատանվում է 2.8-ից մինչև 10 միկրոգրամ/լիտր, իսկ Մոնղոլիայի խոշոր Խիրգիս-Նուր լճում այդ ցուցանիշը մոտ 90մկգ/լ է, իսկ ^{238}U մետաղի ընդհանուր հաշվարկված պաշարը մոտ 5940 տ. է: Նրա ընդհանուր շուկայական արժեքը 2011-2010 թթ.-ի գներով՝ վերահաշվարկված ուրանի եռօքսիդի քանակության, կազմում է մոտ 1 միլիարդ ԱՄՆ դոլար[761]:

Ուրանի այսօրինակ հագեցվածությունը՝ որոշ հետազոտողների կարծիքով, բավարար է ոչ հեռու ապագայում նորագույն տեխնոլոգիական մեթոդներով այս լճից ուրան կորզելու համար, իսկ մոտ 6000 տ. պաշարը բարձրացնում է տվյալ ծրագրի տնտեսական գրավչությունը[762]:

Այս առումով խիստ ուշագրավ են Թուրքիայի Ֆիրատի համալսարանի (ներկայիս Էլյազիգ քաղաք) քիմիայի պրոֆեսոր Մեհմաթ Յամանի (Mehmat Yaman) վերջերս կատարված հայտնագործությունները Վանա լճի ջրերում կուտակված ուրանի մասին[763]: Ըստ 2008-2009 թթ.-ի կատարված ուսումնասիրությունների՝ Վանա լճում ուրանի ութօքսիդի կամ նաստուրան միներալի U_3O_8 իոնների[764] կոնցենտրացիան տատանվում է 0.037-0.11 մգ/լ (37-110 մկգ/լ), իսկ ուրանի՝ ընդհանուր պաշարը վերահաշվարկված U_3O_8 օքսիդի, հասնում է

---

[761] Տե՛ս Исупов В.П., Степан Л.Ш. Владимиров А.Г. и др. Гидроминеральные реусрсы соленых озер западной Монголии: Мат. VIII международной конференции Недропользования. Горное дело. Новые направления и технологии поиска, разведки и разработки месторождений полезных ископаемых. Интерэкспо-Геосибирь. Новосибирск (10-20 апреля), 2012, с. 43, 45-46.

[762] Տե՛ս Исулов В.П., Владимиров А.Г., Ляхов Н.З. и др. Ураноносносрь и высокоминерализированных озер северо-западной Монголии. Доклады АН России, 2011, т. 437, N 1, с. 88.

[763] Տե՛ս Mehmet Yaman. Mutarrem Ince, Emine Cengiz etal. Distribution Study of U, V, Mo and Zn in Different Sites of Lakes Van and Hazar, River and Seawater Saples by ICS-MS Clean-Soil Air Water 2011, 39 (6), p. 530.

[764] Տե՛ս Самойлина. В.И., Садуакасова А.Г., Гидроминеральное ураносодержащее сырье. Горный информационно-аналитический бюллетень М., 2015 N 6, с. 97,100.

աննախադեպ մեծ քանակության՝ մոտ 50 հազար տ., ինչը թերևս աշխարհի բոլոր լճերի համար, այդ թվում՝ նաև սոդային, ամենամեծ ցուցանիշն է[765]: Ըստ թուրքական «Սաբահ» թերթի, Վանա լճում կուտակված ուրանի հան.քանյութի արժեքը գնահատվում էր մոտ 7.8 միլիարդ դոլար (www.oilru.com): Սակայն չնայած այդ հանգամանքին՝ ցայսօր աշխարհի և ոչ մի լճից, այդ թվում՝ Վանա լճից, ուրանի հանքանյութի արդյունաբերական արդյունահանում չի կատարվում: Այդ հանգամանքը պայմանավորված է ուրանի համաշխարհային՝ վերջին ժամանակներում համեմատաբար ցածր գներով, ինչպես նաև ուրանի ջրերից կորզման տեխնոլոգիական մեթոդների դեռևս անկատարությամբ (հիմնական մեթոդը տարբեր սորբենտների, ցեոլիթներ և այլն ջրից ուրանի իոնների կլանումն է), որը դեռևս բացասականորեն է ազդում կորզման այդ եղանակի բարձր ինքնարժեքի մեղման վրա:

Այդուհանդերձ, վերջին տարիներին ԱՄՆ-ի և Ճապոնիայի որոշ լաբորատորիաներում արդեն իսկ հաջողվում է ծովի ջրերից, որոնցում ուրանի կոնցենտրացիան անհամեմատ ավելի ցածր է (30 ավելի անգամ), ուրան կորզել, որի ինքնարժեքը ներկայիս ուրանի հանքանյութի շուկայական գներից մոտ 2 անգամ է ավել: Այս փաստը հույս է ներշնչում, որ ոչ շատ հեռու ապագայում լճերից ուրանի կորզման գործընթացը կարող է դառնալ տնտեսապես շահավետ:

2018 թ.-ի մայիսի 21-ի դրությամբ ուրանի կիսաֆաբրիկատի՝ U_3O_8-ի 1 կգ-ի շուկայական արժեքը 49.93 դոլար է, հետևաբար ներկայումս Վանա լճում կուտակված 50 հազար տ. ուրանի խտանյութի շուկայական արժեքը կազմում է 2.496 միլիարդ դոլար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովուրդը դարեր ի վեր իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում և նրա մի մասը կազմող Արևմտյան Հայաստանի տարածքում, բազմապիսի տնտեսական գործունեություն է ծավալել, այդ թվում՝ արդյունահանել և վաճառահանել է ընդերքում եղած օգտական հանածոները՝ դրանցից որոշակի շահույթ ստանալով: Ցեղասպանության հետևանքով այլ ծանրագույն, մարդկային, բարոյական և նյութական կորուստների հետ մեկտեղ տեղաբնիկ հայերը և նրանց ժառանգները զրկվել են նաև իրենց հայրենիքում հանքարդյունաբերական գործունեությունը շարունակելու հնարավորությունից, իսկ Կարսի մարզի և Վիլսոնյան Հայաստանի տարածքների պարագայում խոսքը նաև իրավական առումով Հայկական պետության սեփականություն հանդիսացող ընդերքի օգտակար հանածոների բռնազավթման մասին է:

Ուսումնասիրության սույն բաժնի նպատակն էր հստակեցնել այն նյութական վնասը, որը ցեղասպանությունից հետո հասցվել է հայ ժողովրդին, որը շարունակում է կրել այդ վնասի հետևանքները, քանի դեռ Թուրքիան շարունակում է ժխտել Հայոց ցեղասպանությունը և հրաժարվում է բարոյական և նյութական հատուցումներից: Ընդ որում, խոսքն ինչպես առանձին հայ հանքարդյունաբերողներին և նրանց ժառանգներին, այնպես էլ՝ հայ ժողովրդի հավաքական ազգային ունեցվածքին, իսկ ավելի մասնավոր դեպքում՝ նաև Հայկական պետությանը հասցվող նյութական վնասի մասին է, քանի որ այդ օգտակար հանածոների գերակշռող մասը գտնվել է Վիլսոնի իրավարար վճռով սահմանազատված ազատ և անկախ Հայաստանի տարածքներում, իսկ մի որոշ, բայց ծանրակշիռ մասն էլ (պեռլիտ, քարաղ և այլն) Հայաստանի առաջին Հանրապետության Կարսի մարզի տարածքում, որը 1921 թ. Մոսկվայի և Կարսի ապօրինի պայմանագրերի պատճառով օտարվել էր Հայաստանի Հանրապետությունից: Այս պարագայում ՀՀ Երրորդ Հանրապետությունը, որպես առաջին Հանրապետության լիարժեք իրավահաջորդ, միջազգային իրավունքի

տեսանկյունից իրավասու է առնվազն վերականգնել իր օգտակար հանածոները շահագործելու իրավունքը և դրանցից շահույթ ստանալու հնարավորությունը: Հակառակ պարագայում Հայաստանը կարող է հատուցում պահանջել իրենից ապօրինաբար բնռազավթված տարածքների ընդերքի օգտակար հանածոների արդյունահանումից ու վաճառքից ստացվող եկամուտների դիմաց:

Ելնելով այդ նկատառումներից՝ այս ուսումնասիրության մեջ առաջնահերթ ուշադրության են արժանացել միմիայն այն օգտակար հանածոները, որոնք առկա են Արևմտյան Հայաստանի և, մասնավորապես, Վիլսոնյան Հայաստանի տարածքում, որպիսիք են, օրինակ, քրոմիտների, որոնց գերակշռող մասը գտնվում է Վիլսոնյան Հայաստանից դուրս, սակայն մի ոչ մեծ մաս առկա է նաև Վիլսոնյան Հայաստանում:

Արևմտյան Հայաստանի այն օգտակար հանածոները, որոնք դուրս են Վիլսոնյան Հայաստանի տարածքից այստեղ հատուկ չեն քննարկվել, սակայն դրանք նույնպես որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ գտնվել են պատմական հայկական հողերում և այդ տարածքների հայ բնակչությունը ցեղասպանության հետևանքով կա՛մ բնաջնջվել, կա՛մ էլ տեղահանվել է: Այդօրինակ բազմաթիվ օգտակար հանածոներից ուշադրության են արժանի, օրինակ, Սեբաստիայի նահանգի ցելեստինի հանքավայրախումբը՝ Սվազ քաղաքից 20-30 կմ, հարավ-արևելք (Korturla mine), որը հանդիսանում է ամբողջ Թուրքիայի միակ ցելիստինային հանքավայրը և որտեղից մինչև 2008 թ. ներառյալ արդյունահանվել և արտահանվել է մոտ 1.5 մլրդ դոլար արժողությամբ ցելեստինային հումք, որի վերամշակումից ստացված ստրոնցիումը (հողալկալային մետաղի կարբոնատ) ժամանակին լայնորեն կիրառվում էր գունավոր հեռուստացույցների կաթոդա-ճառագայթային էկրանների և համակարգիչների, ապակիների պատրաստման համար՝ որպես ճառագայթակլանիչ նյութ:

Նույն նկատառումներով տվյալ ուսումնասիրությունից դուրս է մնացել նաև Սեբաստիայի նահանգում բոլորովին վերջերս բացահայտված վերմիկուլիտի (ոչ մետաղային օգ-

տակար հանածո, հիդրոփայլար, որը փքվելուց հետո օգտագործվում է հիմնականում թեթև բետոնների և ջերմամեկուսիչ նյութերի արտադրության համար և գյուղատնտեսության մեջ) բավականին խոշոր հանքավայրը Կարակոս բնակավայրի մոտ Սեբաստիայից ավտոճանապարհով մոտ 73 կմ արևմուտք, որի հանքաքարի շուկայական արժեքը վերջին տարիների գներով գնահատվում է մոտ 0.790 մլրդ դոլար: Այս հանքավայրը ևս իր տեսակի մեջ եզակի է ամբողջ Թուրքիայի համար:

Այդ նույն պատճառով վերը նշված 11 հանքատեսակի մեջ չի ներառվել նաև Սեբաստիայի նահանգի Թոքատի (պատմական Փոքր Հայքի Եվդոկիա գավառիկ Գայլ՝ Իրիս գետի վերին հոսանքի ավազանում) ծարիտի կամ անտիմոնիումի հանքավայրը (ծարիրի միջին քանակությունը՝ մոտ 3 %), որը վերջին 70 տարիներին անխնա շահագործվել է և որտեղ ներկայումս ամենահամեստ մոտավոր հաշվարկներով կենտրոնացված է առնվազն 0.22 մլրդ դոլարի արժողությամբ 0.15 մլն տ. հանքանյութ:

Նույն տրամաբանությամբ այստեղ չեն քննարկվել նաև Թուրքիայի խոշորագույն երկաթի հանքավայրերից մեկի՝ Սեբաստիայի նահանգի Տեվրիկի և Հասանջելեբի (Hasancelebli) երկաթի հանքավայրախմբերը՝ Սվազից համապատասխանաբար մոտ 100 և Մալաթիայից մոտ 30 կմ հյուսիս-արևմուտք, որտեղ ըստ որոշ տեղեկությունների (Mineral deposits of Turkey 2013, p. 14) կուտակված է Թուրքիայի երկաթի հանքաքարի ամբողջ հաստատված պաշարների մոտ 40 %-ը միայն Տեվրիկի հանքավայրում՝ ըստ Ազատ Վեհունու տվյալներով (2001) երկաթի բարձրարժեք հանքաքարի (երկաթի պարունակությունը՝ մինչև 66%) հաստատված պաշարները կազմում էին 35.7 մլն տ, որի արժեքը 2017թ. Թուրքիայի արտահանման գներով 57.8 դոլար 1 տ-ի համար կարող էր կազմել մոտ 2 միլիարդ դոլար:

Նույնը վերաբերում է նաև ոչ մետաղական, առաջին հերթին բնական շինանյութերի (գրանիտ, մարմար, թրավերտին, տուֆ և այլն) հանքավայրերին, որոնց տեսակարար կշի-

ռը ներկայիս Թուրքիայի հանքարդյունաբերության ոլորտում զգալիորեն գերազանցում է մետաղական օգտակար հանածոների արդյունահանման վաճառահանման ծավալներին, ինչպես նաև ստացված շահույթը: Մարմարի արդյունահանման և վաճառահանման համաշխարհային շուկայում Թուրքիան գրավում է առաջին տեղը: Ներկայումս այդ երկրի տարածքում հաշվարկվում են տարբեր տիպի խիստ բարձրարժեք մարմարների 45 հանքավայր, որոնցից 7-ը տեղակայված է Արևմտյան Հայաստանի տարածքում, այդ թվում՝ մեկ հանքավայր Վիլսոնյան Հայաստանի տարածքում, Տրապիզոնի նահանգի Ռիզե ծովափնյա քաղաքից մոտ 30 կմ հարավ-արևելք: Արևմտյան Հայաստանի 7 մարմարի հանքավայրերից ամենանշավորը Խարբերդից 40 կմ հարավ-արևմուտք գտնվող աշխարհահռչակ և իր բնույթով եզակի բալագույն մարմարն է (Elazig cherry), որով երեսպատված է ԱՄՆ Սպիտակ տան լրագրողների համար նախատեսված սրահի պատերը: 2016 թ. Թուրքիան արտահանել է 1.74 մլրդ դոլարի մշակված և չմշակված մարմար, որից հավանական է, որ առնվազն 5%-ը բաժին է ընկնում Արևմտյան Հայաստանի հանքավայրերին:

Թուրքիայում առկա գրանիտի 13 քիչ թե շատ հայտնի հանքավայրից 6-ը գտնվում են Արևմտյան Հայաստանի տարածքում՝ մասնավորապես Տրապիզոնի նահանգում: Դրանցից 4-ը՝ Ռիզեի, Բայբուրթի, Գյումուշխանեի և Տրապիզոնի հանքավայրերը գտնվում են Տրապիզոնի նահանգի Վիլսոնյան Հայաստանին միացվելիք հատվածում, իսկ 2-ը դրանից դուրս են՝ Գիրեսուն և Օրդու քաղաքների շրջակայքում: Ըստ 2013 թ. տվյալների (Mining Turkey – 01.03.2013)՝ միայն Տրապիզոնի նահանգում առկա էր 90 միլիարդ դոլար 435 մլն տ բնական քարեր գերազանցապես գրանիտ և քիչ քանակությամբ մարմար, որոնց մոտ 29 %-ը 26.5 մլրդ դոլարի արժողությամբ 126 մլն տ բարձրարժեք քարանյութ կուտակված էր Վիլսոնյան Հայաստանի վերը նշված չորս հանքավայրում: Սակայն, այս հանքավայրերի մասին, ինչպես նաև նրանցից վերջին տարիներին արդյունահանված և արտահանված քարանյութերի եղած ավելի մանրամասն տվյալներ ձեռք բերելու անհնարի-

նությունից ելնելով՝ դրանք ևս ներկայացված նյութերում տեղ չեն գտել: Հայտնի է միայն, որ 2016 թ. տվյալներով Թուրքիան արտահանել է 11 մլն դոլար արժողության 0.123 տ չվերամշակված և 0.017 տ վերամշակված գրանիտ 1 տոննան համապատասխանաբար 57 և 647 մլն գնով: Տվյալների սակավության պատճառով այդպես էլ չհաջողվեց պարզել, թե այդ ամբողջ ծավալից Արևմտյան Հայաստանի և, մասնավորապես, Վիլսոնյան Հայաստանի տարածքներում տեղակայված հանքերին այդ բարձրարժեք շինանյութի որ մասն է բաժին ընկնում:

Վերը նշվածներից բացի Վիլսոնյան Հայաստանի տարածքներում առկա են նաև այլ տիպի օգտակար հանածոների համեմատաբար փոքր հանքավայրեր, որոնց այս ուսումնասիրության մեջ չեն քննարկվել՝ ելնելով նրանց մասին եղած տեղեկությունների սակավությունից և համեմատաբար նվազ տնտեսական նշանակությունից: Օրինակ, մետաղական օգտակար հանածոներից կարելի է նշել մագնեզիումի կամ մագնեզիտի հանքավայրախմբերը Երզնկայի շրջակայքում՝ 3.7 մլն տ հետախուզված հանքաքարի պաշարներով, Տրապիզոնի Ռիզե քաղաքի շրջակայքի մանգանի հանքավայրը, Երզնկայի և Բաղեշի մերձակայքերի երկաթի հանքավայրերը, քրոմի բազմաթիվ փոքր հանքավայրերը: Ոչ մետաղական օգտակար հանածոներից կարելի է նշել Գյումուշխանեի և Երզնկայի շրջանների բարիտի հանքավայրերը Բիթլիսի շրջակայքի ֆոսֆորիտների հանքավայրը, Երզնկայի և Կաղզվանի ասբեստի հանքավայրերը Տրապիզոնի նահանգի դաշտային սպաթերի հանքավայրը (ամբողջ Թուրքիայում առկա է ընդամենը այդպիսի 7 հանքավայր), Արդվինի շրջակայքի կոլինային կավերի, ինչպես նաև բենթոնիթային կավերի, թրավերտինների, դիատոմիտների և տուֆերի բազմաթիվ ոչ մեծ այլ հանքավայրեր:

Հիմնականում տվյալների ոչ լիարժեքության կամ բացակայության պատճառով այս ուսումնասիրության մեջ չի բացահայտվել նաև մեկ այլ կարևոր օգտակար հանածոի՝ հանքային ջրերի տնտեսական նշանակությունը: Մինչդեռ դեռևս

միջնադարյան գրականությունից քաջ հայտնի է, որ Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Վիլսոնյան Հայաստանի տարածքը չափազանց հարուստ է եղել բազմատեսակ հանքային ջրերի աղբյուրներով, որոնք զգալի տնտեսական օգուտներ են բերելում Թուրքիայի Հանրապետությանը: Հիշատակության են արժանի Բյուրակնի (Բինգյոլի) հիդրոկարբոնատահիմքային և հիդրոկարբոնատաալկալային, միջին հանքայնացման ցածրջերմաստիճանային հանքային բազմաթիվ աղբյուրները Բիթլիսի շրջակայքի քսանից ավելի հիմնականում հիդրոկարբոնատակալցիումային միջին հանքայնացման հիմնականում միջին և ցածր ջերմաստիճանային հանքային աղբյուրները, որոնցից մեկը ջերմաստիճանը հասնում է մինչև 66°C, Մշո հիդրոկարբոնատքլորային 12 առանձին ելքերից բաղկացած հանքաղբյուրների խումբը և այլն (Վեհունի Ա., նշվ. աշխ., էջ 407-408):

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է գալ հետևյալ հիմնական եզրահանգումների.

1. Ներկայումս Արևմտյան Հայաստանի տարածքում կուտակված է առնվազն 6.251 տրիլիոն տ հաստատված պաշարներով 11 տեսակի օգտակար հանածո՝ պեռլիտ, պեմզա, քարաղ, գորշ ածուխ, քրոմիտ, բարիտ, ուրան և մաքուր մետաղի տեսքով ոսկի, արծաթ, պղինձ, ցինկ, որոնց հանրագումարային մեծածախ շուկայական արժեքը 2017-2019թթ. գներով կազմում է նվազագույնը 219 մլրդ դոլար: Այս քանակության և արժեքի առյուծի բաժինը՝ 97.7% կամ 6.112 տրիլիոն տ և 94.9% կամ 200.8 մլրդ դոլար, կենտրոնացված է Վիլսոնյան Հայաստանի տարածքում (տե՛ս աղյուսակ 1), որի տասնամյակներ, իսկ երբեմն էլ հարյուրամյակներ տևող վերջնական շահագործումից հետո (առանց Վանա լճի 0.005 մլն տ ուրանի հանքավայրի պաշարների հաշվառման, որի շահագործման ծախսերը դեռևս բարձր են ինքնարժեքից): 2017-2019 թթ. գներով հնարավոր է ակնկալել նվազագույնը 20 միլիարդ դոլարի զուտ շահույթ:

Հաշվի առնելով, որ երկարաժամկետ կտրվածքով բոլոր օգտակար հանածոների գները միտված են շարունակաբար

բարձրանալու, իսկ նրանց արդյունահանման ինքնարժեքը նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը համընթաց դրսևորվելու է հակառակ միտումը՝ հավանական է, որ մի քանի տասնամյակ հետո այդ թիվը կկրկնապատկվի կամ միգուցե եռապատկվի: Իրենց տնտեսական նշանակությամբ վերը նշված օգտակար հանածոների մեջ առաջնահերթ են պեռլիտների և պեմզաների պաշարները՝ 5.418 տրիլիոն տ., որոնք ամբողջովին գտնվում են Վիլսոնյան Հայաստանի տարածքում և որոնց վաճառահանման մեծածախ շուկայական արժեքը 2017-2019թթ. գներով կազմում է մոտ 179 միլիարդ դոլար, իսկ վերջնական շահագործումից ակնկալվող զուտ շահույթի հանրագումարը ամենահամեստ հաշվարկներով ներկայումս կարող է կազմել 18 միլիարդ դոլար: Մնացած օգտակար հանածոների պաշարները և մեծածախ գները Արևմտյան Հայաստանիև Վիլսոնյան Հայաստանի համար դրսևորում են հետևյալ հաջորդականությունը՝

- գորշ ածուխ՝ 250 մլն տ՝ 5 մլրդ դոլար, և 200 մլն տ՝ 4 մլրդ դոլար,
- քարաղ՝ 190 մլն տ՝ 8.55 մլրդ դոլար (առկա է միայն Առաջին Հանրապետության տարածքում),
- ոսկի՝ (մաքուր մետաղի տեսքով) 0.00027 մլն տ՝ 5.1 մլրդ դոլար և 0.000048 մլն տ.՝1.9 մլրդ դոլար),
- պղինձ՝ (մաքուր մետաղի տեսքով) 1.28 մլն տ՝ 7.6 մլրդ դոլար և 0.534 մլն տ.՝ 3.2 մլրդ դոլար,
- ցինկ՝ 1(մաքուր մետաղի տեսքով) 1.12 մլն տ՝ 2.3 մլրդ դոլար և 1.12 մլն տ.՝ 2.376 մլրդ դոլար:

Վիլսոնյան Հայաստանի տարածքում գտնվում է Արևմտյան Հայաստանի քրոմիտի հանքաքարի 18 մլն տ՝ ընդամենը 11 %-ը՝ մոտ 2 մլն տ, որի շուկայական արշեքը մոտ 0.64 մլն դոլար է, իսկ ակնկալվող զուտ շահույթը՝ նվազագույնը 0.0038 մլն դոլար:

Բարիտի հանքանյութը, որը կենտրոնացված է միայն Վիլսոնյան Հայաստանի տարածքում՝ 0.7 մլն տ, իր արժեքով՝ 0.12 մլն դոլար, գրավում է ամենավերջին տեղը:

2. Վերը նշված 11 օգտակար հանածոների հաստատված պաշարների քանակը, արժեքը և շահագործումից ստացված զուտ շահույթը բնավ չեն ներկայացնում ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Վիլսոնյան Հայաստանի օգտակար հանածոների բազմազանությունը, ամբողջական քանակը և արժեքը, քանի որ, ինչպես նշվել էր սույն բաժնի սկզբում, տվյալների սակավության կամ անհասանելիության պատճառով չեն ներառված բազմաթիվ օգտակար այլ հանածոներ, մասնավորապես՝ գրանիտների և մարմարների հաստատված պաշարները:

Հաշվի առնելով Արևմտյան Հայաստանում առկա 90 մլրդ դոլարի գրանիտի և մարմարի պաշարները և Վիլսոնյան Հայաստանում առկա 26.5 մլրդ դոլարի գրանիտի պաշարները, ինչպես նաև դեռևս չշահագործված այլ տիպի օգտակար հանածոների արժեքները՝ պարզ է դառնում, որ այդ տարածքների բնական հանածոների արդյունահանումից ստացված հանրագումարային մեծածախ արժեքը կարող է գերազանցել 310 մլրդ դոլարի սահմանագիծը, որից ստացված զուտ շահույթը ամենահամեստ հաշվարկներով (8%) կկազմեր առնվազն 25 մլրդ դոլար: Այս դեպքում Վիլսոնյան Հայաստանի հայտնի օգտակար հանածոների հանրագումարային արժեքը այսօրվա դրությամբ ամենահամեստ հաշվարկներով կարող է գնահատվել նվազագույնը 391 մլրդ դոլար:

3. Համաշխարհային պրակտիկայից հայտնի է, որ օգտակար հանածոների կանխատեսումային պաշարները ($P_1+P_2+P_3$), որպես կանոն, 3-ից մինչև 6 անգամ գերազանցում են հաստատված պաշարների քանակությանը, որը՝ բացի օբյեկտիվ պատճառներից, պայմանավորված է նաև այս կամ այն երկրի երկրաբանական ուսումնասիրության և կոնկրետ հանքավայրի հետախուզման աստիճանից: Օրինակ, Ռուսաստանի համար այդ ցուցանիշը կազմում է 4.8, այսինքն՝ այդ երկրի հաստատված պաշարները կազմում են 29 տրիլիոն դոլար, իսկ կանախտեսումային պաշարները՝ 2000 թ. դրությամբ գնահատված էին մոտ 140 տրիլիոն դոլար: Եթե հետևենք այդ համամասնությանը և հաշվի առնենք նաև Արևմտյան Հայաստա-

նի պաշարների համեմատաբար թույլ ուսումնասիրվածության հանգամանքը և անգամ այդ պարագայում ընդունենք նվազագույն 3 գործակիցը, ապա կարող ենք վստահաբար պնդել, որ Արևմտյան Հայաստանի բոլոր տիպի օգտակար կանխատեսումային ռեսուրսների հանրագումարը կարող է կազմել ներկա գներով նվազագույնը 660 մլրդ դոլար, իսկ Վիլսոնյան Հայաստանինը՝ համապատասխանաբար 600 մլրդ դոլար:

4. Ի տարբերություն դեռևս չարդյունահանված օգտակար հանածոների պաշարների և նրանց արժեքների բարձր արժանահավատության աստիճանի, որտեղ հնարավոր սխալը չի կարող գերազանցել 10 %-անոց շեմը՝ Արևմտյան Հայաստանի տարածքից արդեն իսկ արդյունահանված տարբեր տիպի օգտակար հանածոների իրական քանակությունը և արժեքը (բնականաբար վերջին տարիների հաշվարկով) շատ ավելի դժվար է գնահատել, ինչը գլխավորապես պայմանավորված է կոնկրետ հանքավայրերից արդյունահանված հումքի մասին եղած տվյալների խիստ սակավությամբ և անհասանելիությամբ, ինչպես նաև եղած տվյալների իրարամերժությամբ: Այդ պատճառով որոշ օգտակար հանածոների համար ստորև ներակայցվող թվերի արժանահավատության աստիճանը բարձրացնելու համար նկատի ենք ունեցել արդյունահանման հնարավոր նվազագույն շեմը:

Այսպիսով, 1915 թ.-ից առ 2000 թ. Արևմտյան Հայաստանի տարածքի 3 խոշոր հանքավայրերից, որոնք տեղակայված էին Վիլսոնյան Հայաստանի և մասնավորապես Առաջին Հանրապետության արևմտյան մասում, նվազագույնը արդյունահանվել է մոտ 1.9 մլն տ քարաղ, որի շուկայական արժեքը 2017 թ.-ի գներով կարող էր կազմել մոտ 9 մլն դոլար, իսկ ստացված զուտ շահույթը՝ մոտ 1 մլն դոլար:

1937-2017 թթ. ամբողջ Արևմտյան Հայաստանից ամենահամեստ հաշվարկներով ձուլվել է մոտ 0.288 մլրդ դոլարի 72 տ ոսկի, որից Վիլսոնյան Հայաստանի տարածքից 0.074 մլրդ տ մոտ 18.5 մլն դոլարի ոսկի և համապատասխանաբար՝ 86 մլն

դոլարի արծաթ, որից Վիլսոնյան Հայաստանի մասնաբաժինը ընդամենը 3 մլն դոլար էր:

Արդյունահանման տեսակետից առավել մեծ է պղնձի արդյունահանման քանակությունը: Ոչ լրիվ թերի հաշվարկով ամբողջ Արևմտյան Հայաստանից 1947 թ.-ից մինչև 2018 թ. ձուլվել է 1,4 մլն տ սև և ռաֆինացված պղինձ, որը մեծածախ արժեքը 2018 թ.-ի դեկտեմբերի գներով կարող էր կազմել մոտ 8.5 մլրդ դոլար: Այդ քանակության մոտավորապես կեսը՝ 0.7 մլն տ համապատասխանաբար 4.25 մլրդ դոլարը, ձուլվել է Վիլսոնյան Հայաստանի, մասնավորապես Տրապիզոնի նահանգից:

Ցինկի մասնաբաժնով հայտնի են միայն 2013-2014թթ. տվյալները, որի համաձայն միայն Վիլսոնյան Հայաստանի տարածքից արդյունահանվել է 0.216 մլրդ դոլար 80 հազ. տ մետաղական ցինկ: Եթե ենթադրենք, որ 2015-2018թթ. ևս արդյունահանվել է նվազագույնը 100 հազ. տ (միջինը 33 հազ. տարում), ապա այդ թիվը կարող է կրկնապատկվել:

1936-2017 թթ. Արևմտյան Հայաստանի տարածքից արդյունահանվել է առնվազն 13 մլն տ բարձրարժեք քրոմի հանքաքար, որի շուկայական արժեքը 2017 թ.-ի գներով կարող էր կազմել 4 մլրդ դոլարից ավել: Հաշվի առնելով, որ նաև ֆեռոքրոմի արտադրությունը մոտ 3 մլրդ դոլար, այդ հանքանյութից ստացված ընդհանուր արժեքը կարող էր կազմել 7 մլրդ դոլար: Այս հանքատեսակով Վիլսոնյան Հայաստանի մասնաբաժինը ամենահամեստն է և ենթադրաբար չի գերազանցում 5 %-անոց շեմը՝ մոտ 0.35 մլրդ դոլար: Բարիտի և լիգնիտի համար տվյալների բացարձակ բացակայության պատճառով արտահանման ծավալների մասով նույնիսկ ենթադրություն անել հնարավոր չեղավ:

Այսպիսով, Ցեղասպանության իրագործումից մինչև մեր օրերը նույնիսկ ոչ լիարժեք և թերի տվյալներով Թուրքիան Արևմտյան Հայաստանի տարածքից արդեն իսկ արդյունահանել է ներկայիս գներով 16-17 մլրդ դոլար արժողությամբ օգտակար հանածոներ, իսկ Վիլսոնյան Հայաստանի տարածքից միայն՝ նվազագույնը 5 մլրդ դոլարի: Սակայն

այստեղ այժմ առկա են ևս նվազագույնը 310 մլրդ դոլարի հաստատված պաշարներով օգտակար հանածոներ, որոնցից առնվազն 227 մլրդ դոլարը կենտրոնացած է Վիլսոնյան Հայաստանի տարածքում: Արևմտյան Հայաստանի և Վիլսոնյան Հայաստանի հանքավայրերի՝ տասնամյակների ընթացքում շահագործումից ակնկալվող զուտ շահույթը (8%) ամենահամեստ հաշվարկներով կարող է կազմել համապատասխանաբար 25 և 18 մլրդ դոլար, որը 3-4 անգամ ավելի շատ է Հայաստանի Հանրապետության ներկայիս ամբողջ ներքին և արտաքին պարտքի հանրագումարից:

Արևմտյան Հայաստանի դեռևս չշահագործված օգտակար հանածոները (հաստատված պաշարներ)

	Արևմտյան Հայաստան		Վիլսոնյան Հայաստան		Ակնկալվող մաքուր շահույթ (net income), մլրդ.դոլար		Զուտ շահույթի նորմա, %
Տեսակներ, թվականի դրությամբ	Քան. մլն տ	Մեծած ախ շուկ.արժեք մլրդ.դոլար	քանակ մլն տ	Մեծած ախ շուկ.արժեք մլրդ.դոլար	Արևմտյան Հայաստան	Վիլսոնյան Հայաստան	
Պեռլիտ 2019	4840	145,2	4768	143	14,5	14,3	10
Պեմզա 2018	950	36	950	36	3,6	3,6	10
Քարաղ 1999	190	8,55	190	8,55	1,982	1,282	15
Լիգնիտ, կամ գորշ ածուխ	250	5	200	4	0,5	0,4	10
Բարիտ	0,7	0,119	0,7	0,119	0,007	0,007	6
Ոսկի՝ մաքուր մետաղի տեսքով	0,00027	5,112	0,000048	1,944	0,767	0,29	15
Արծաթ՝ մաքուր մետաղի տեսքով	0,00115	0,547	0,001148	0,547	0,032	0,032	6

Պղինձ, մաքուր մետաղ 2013	1,28	7,699	0,534	3,212	0,461	0,192	6
Ցինկ մաքուր մետաղ, 2017	1,12	2,376	1,12	2,376	0,142	0,142	6
Քրոմիտ C_2O_3, 2013	18	5,76	2	0,64	0,345	0,038	6
Ուրան U_3O_8 2018	0,005	2,496	0,0005	0,496	-	-	-
Ընդամենը	6251,1	218,86	6112,35	200,88	21,64	20,28	-



Քարտեզը կազմեց՝ Տիգրան Բաբայանը

5.3. Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական վնասների վերաբերյալ Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հուշագրի հաշվարկների հստակեցման հարցի շուրջ

Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված նյութական վնասների հատուցման ուղղությամբ որոշակի քայլեր կատարվեցին Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո:

Հայ ժողովրդի կրած վիթխարի չափերի հասնող նյութական ու մարդկային կորուստների վերաբերյալ Փարիզի վեհաժողովին տեղեկանք-պահանջագիր ներկայացնելու նախաձեռնությամբ առաջիններից մեկը հանդես եկավ մեծանուն բանաստեղծ և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանը, որի ջանքերով 1918 թ. նոյեմբերի 24-ին Թիֆիլսում գործող հայրենակցական միությունների ժողովի որոշմամբ հիմնվում է Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Քննիչ հանձնաժողով): Նույն այդ ժողովում որոշվում է Քննիչ հանձնաժողովի աշխատանքները սահմանափակել Արևելյան Հայաստանի 16 և Այսրկովկասի հայաբնակ շրջաններում: 1918 թ. դեկտեմբերի կեսերին Հովհ. Թումանյանը կոչով դիմում է հայ ժողովրդին՝ խնդրելով աջակցություն ցուցաբերել Քննիչ հանձնաժողովին՝ վկայություններ և ցուցմունքներ տալ ինչպես Այսրկովկասում, այնպես էլ՝ Արևմտյան Հայաստանում թուրքերի գործած ոճրագործությունների մասին[766]:

1919 թ. փետրվարի 6-12-ին Արևմտահայերի երկրորդ համագումարում ընդունված «Քաղաքական բանաձևի» 8-րդ կետով նախատեսվում էր հայ ժողովրդի վնասների ամբողջական հատուցում՝ ի հաշիվ օսմանյան կառավարության[767]:

---

[766] Տե՛ս Я обвиняю! Дело №…1 500 000, материалы Национального архива Армении, сост. С. Мирзоян, Ер., изд. “Мугни”, 2005, с. 8.

[767] Մելիքեան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ, Եր., 2007, էջ 10:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը և Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան 1919 թ. փետրվարի 26-ին Փարիզի վեհաժողովի Տասի խորհրդին ներկայացրեցին հայկական տարածքային պահանջների հուշագիրը, որով Միացյալ Հայաստանի կազմում Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից ու Հայաստանի Հանրապետության տարածքից բացի նախատեսվում էր ներառել նաև Կիլիկիան[768]: Հայկական պատվիրակությունների միացյալ հուշագրի 4-րդ կետով պահանջվում էր, որ հայ ժողովրդի ջարդերի, տեղահանությունների, կողոպուտի ու հասցված վնասների համար Խաղաղության վեհաժողովը օսմանյան պետության նկատմամբ սահմանի տուգանք: Նույն փաստաթղթի համաձայն՝ Օսմանյան կայսրությունը պետք է հանձն առներ վճարել հայերի անշարժ գույքի, եկեղեցիների ու վանքերի կալվածքների, դրանցում եղած ունեցվածքի և համայնքից բռնագրավված կալվածքների դիմաց, իսկ առանց ժառանգ մնացած գույքերի իրավունքները պետք է փոխանցվեին Կ. Պոլսի հայ հոգևոր իշխանություններին[769]: Փաստաթղթում ընդգծվում էր, որ Միացյալ Հայաստանի կազմում ընդգրկվող տարածքներում հայերի զանգվածային բնաջնջման հետևանքով թվաքանակի նվազումը չպետք է հաշվի առնվի, քանզի չի կարելի թույլ տալ, որ հայերի նկատմամբ ոճիրների կազմակերպիչները օգուտ քաղեն դրանից և հասնեն այդ տարածքներում մահմեդականների գերակայության իրենց ծրագրի կենսագործմանը[770]:

Փարիզի վեհաժողովին կից գործում էր «Փոխհատուցումների հանձնաժողովը», որը զբաղվում էր պարտվածների կողմից հաղթողներին տրվելիք ռազմատուգանքների չափերի հստակեցումով: Քննարկումների արդյունքում որոշվեց, որ

---

768 Տե՛ս Ահարոնյան Ա. Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Եր., 2001, էջ 14-16:

769 Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 307:

770 Տե՛ս Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919, էջ 7:

Անտանտի հաղթանակած գլխավոր տերություններին ռազմատուգանք վճարելուց բացի պարտված տերությունները պատերազմի արդյունքում կրած վնասների դիմաց փոխհատուցումներ պետք է վճարեն նաև այլ երկրներին: Դրանից ելնելով, 1919 թ. մարտի 7-ին «Փոխհատուցումների հանձնաժողովին» կից ստեղծվեց «Հատուկ հանձնախումբ», որը պատերազմի ընթացքում կրած նյութական վնասների հաշվարկ ներկայացնելու հարցով մարտի 8-ին դիմեց մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին:

Հայերի կրած նյութական կորուստների հուշագրի նախագծի կազմումը հանձնարարվեց Ա. Թերզիբաշյանին ու Վ. Փափազյանին, որոնց հաշվարկների հիման վրա կազմված հուշագիրն էլ Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունների ղեկավարներ Ա. Ահարոնյանն ու Պ. Նուբարը ներկայացրեցին այդ հանձնախմբին: Պարտված տերությունների կողմից մյուս պետություններին ու ժողովուրդներին պատերազմի ընթացքում հասցված վնասների հատուցման վերաբերյալ ներկայացված պահանջագրերի, այդ թվում՝ հայկական երկու պատվիրակությունների ներկայացրած հուշագրի արդյունքները Հատուկ հանձնախումբն ամփոփեց 1919 թ. ապրիլի 14-ին[771]: Այսինքն՝ պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած վնասների հուշագրի կազմման ու ներկայացման այդ լուրջ և պատասխանատու աշխատանքի համար տրվել է ոչ ավել քան մեկ ամիս ժամանակ, որի ընթացքում ուղղակի անհնար էր ամբողջական տվյալներ հավաքել ու համակողմանիորեն համակարգել դրանք:

Հաշվի առնելով հուշագրի ներկայացման ժամկետների սղությունը, Թերզիբաշյանի ու Փափազյանի գործն արագացնելու նպատակով տեղերում պատրաստվել էին տարբեր բնակավայրերի հայության կրած նյութական կորուստների մանրամասն հաշվարկներով 32 տեղեկագրեր: Հովհ. Թումանյանի գլխավորած Քննիչ հանձնաժողովի առջև նույնպես խնդիր էր դրված՝ 1919 թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում կազ-

---

[771] Տե՛ս Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Եր., 2007, էջ 42:

մել ամբողջ գույքի և բոլոր ապրանքների ցուցակը: Քննիչ հանձնաժողովը բաղկացած էր պատմաքաղաքական, տնտեսական, հետաքննչա-քրեական և ռազմապատմական բաժիններից՝ 27 աշխատակիցներով և պարբերաբար հաշվետվություն էր ներկայացնում հայրենակցական միությունների խորհրդին: Տնտեսական բաժինը, որը սկզբում ղեկավարում էր տնտեսագետ, հասարակական գործիչ Ք. Վերմիշևը, իսկ 1919 թ. մարտից՝ գյուղատնտես Լ. Աթանեսյանը, կազմում էր երեք տեսակի փաստաթղթեր. 1. անհատական քարտ գյուղատնտեսական մասնավոր սեփականատիրական ձեռնարկությունների համար, 2. կորուստների անհատական անկետա քաղաքաբնակների համար, 3. անհատական քարտ ապրանքաարդյունաբերական ձեռնարկությունների համար[772]: Չնայած Քննիչ հանձնաժողովի աշխատակիցների ջանքերին, ակնհայտ էր, որ այդ կարճ ժամանակահատվածում չէր կարող հասցնել ավարտել այդ վիթխարի աշխատանքը: Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի կրած նյութական կորուստների վերաբերյալ տեղերում կազմված տեղեկագրերն այդպես էլ Փարիզ չհասան[773]: Այս փաստերը վկայում է այն մասին, որ ներկայացված հուշագրի ոչ լիարժեք ու ամբողջական լինելու մասին:

Հատկանշական է, որ Թերզիբաշյանն ու Փափազյանը սահմանափակեցին միայն Արևմտյան Հայաստանի նահանգների 1 մլն. 800 հազար հայության կրած նյութական կորուստներով, չկատարելով Կիլիկիայի, Օսմանյան կայսրության արևմտյան նահանգների, մայրաքաղաք Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայերի կրած նյութական կորուստների հաշվարկներ այն հիմնավորմամբ, թե իբր այդ տարածքների շուրջ 226 000 հայ բնակչությունը չի ենթարկվել տեղահանության, հետևաբար նրանց

---

[772] Տե՛ս Я обвиняю! Дело №…1 500 000, материалы Национального архива Армении, с. 8.

[773] Լեւոն Վարդան, նշվ. աշխ., էջ 310:

գույքը չի ենթարկվել բռնագրավման[774]: Հուշագրի հեղինակների նման մոտեցումը պարզապես տարակուսանք է առաջացնում, քանզի քաջ հայտնի է, որ թուրքական իշխանությունները ցեղասպանության քաղաքականությունը և դրան զուգահեռ ընթացող հայերի զանգվածային ունեզրկման գործընթացն իրականացրել են ոչ միայն Արևմտյան Հայաստանի նահանգներում, այլ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում: Որքան էլ ժամկետները սուղ, իսկ տվյալները դժվարհասանելի լինեին, հուշագրի կազմողները պարտավոր էին Արևմտյան Հայաստանի նահանգների հայերի ունեցվածքից բացի ներկայացնել նաև Կիլիկիայի և կայսրության արևմտյան նահանգների, ինչպես նաև մայրաքաղաք Կ.Պոլսի ու Զմյուռնիայի հայ բնակչության ունեցվածքի կորուստների գոնե մոտավոր թվեր, ինչով կուրվագծվեր օսմանահպատակ հայության կրած նյութական վնասների մոտավոր ընդհանուր պատկերը: Արևմտյան Հայաստանից դուրս Օսմանյան կայսրության այլ տարածքների հայ բնակչության կրած նյութական վնասների անտեսումը Փարիզի վեհաժողովի Հատուկ հանձնախմբին ներկայացված հայկական հուշագրի ամենագլխավոր բացթողումն էր, ինչը թույլ է տալիս պնդել, որ հայկական պատվիրակությունների միացյալ հուշագրի մեկնարկային տվյալները ճշգրիտ ու վերջնական համարվել չեն կարող:

Արևմտյան Հայաստանի 360 000 հայ ընտանիքները հուշագրում բաժանվում են երկու խմբի՝ 270 000 գավառաբնակ և 90 000 քաղաքաբնակ ընտանիքների և առանձին-առանձին կատարվում է այդ խմբերի կորուստների հաշվարկ: Գավառաբնակ հայ բնակչության կորուստն ընդգրկում էր շինություններ (տներ, ախոռներ, ամբարներ, ջրաղացներ), անտառներ, այգիներ, թթենու տնկարաններ, երկրագործական գործիքներ, անձնական ունեցվածք (կահույք, հագուստ, թանկարժեք զարդեր), տարեկան բերքի կորուստներ, անասունների գլխաքանակ, սննդի և անասնակերի պաշարներ և դրամագլուխ:

---

[774] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող Լ. Բարսեղյան, Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1999, էջ 6:

Պետք է նշել, որ մեկնարկային թվերի անճշտություններից զատ, հուշագրի նախագծում թույլ են տրվել նաև մեթոդաբանական բնույթի սխալներ՝ հանիրավի նվազեցվելով նույնիսկ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կրած նյութական վնասների ծավալները: Օրինակ, գավառաբնակ հայերի բերքի կորուստը հաշվարկվել է միայն 1914 թ. դրությամբ, մինչդեռ այդ նույն կորուստը հայ գյուղացիները շարունակել են կրել նաև հաջորդ տարիներին՝ ընդուպ մինչև հուշագրի ներկայացման տարեթիվը՝ 1919 թ., ինչը նշանակում է, որ մեկ տարվա բերքի կորստի չափը պետք է հնգապատկվեր: Նույնը վերաբերվում է նաև անասնագլխաքանակի կորստի թերհաշվառմանը, քանզի հաշվարկվել էր միայն տվյալ պահին կորցված անասունների գլխաքանակի կորուստը, անտեսելով 1914-1919 թթ. դրանց թվի բնական ավելացման հանգամանքը[775]: Արդյունքում՝ գավառաբնակ հայ ընտանիքներից յուրաքանչյուրի կրած միջինացված նյութական կորուստները հաշվարկվել են 17 043 ֆրանկ, ընդհանուր առմամբ՝ 4 մլրդ. 601 մլն. 610 հազար ֆրանկ[776]:

Արևմտյան Հայաստանի քաղաքաբնակ հայ բնակչության կորուստն ընդգրկում էր շինություններ (տներ, վաճառատներ, հյուրանոցներ, գործարաններ, արհեստանոցներ, խանութներ), պարտեզներ, այգիներ, անձնական ունեցվածք (կահույք, հագուստ, թանկարժեք զարդեր), պարեն և դրամագլուխ (առևտրականների, արվեստագետների և արհեստավորների արժեթղթեր, ապրանքներ և հիմնադրամներ): Քաղաքաբնակ հայ բնակչության կուրուստների հաշվարկներում նույնպես թույլ են տրվել մեթոդաբանական սխալներ: Չի հաշվառվել նշված շինություններից ստացվելիք հինգ տարիների վարձը, պարենի կորուստն էլ հինգ տարվա փոխարեն հաշվարկվել է վեց ամսվա կտրվածքով: Արդյունքում՝ քաղաքաբնակ հայ ընտանիքներից յուրաքանչյուրի կրած միջինացված վնասները հաշվարկվել են 35 950 ֆրանկ, ընդհանուր առմամբ՝ 3 մլրդ 235 մլն. 500 հազար ֆրանկ[777]:

---

[775] Լեւոն Վարդան, նշվ. աշխ., էջ 315:

[776] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 8:

[777] Նույն տեղում:

Հուշագրում մարդկային կորուստների հատուցման առանձին հաշվարկ է կատարվել և պահանջվել է հատուցել ինչպես մեկ միլիոն սպանվածների ժառանգներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ ազգին, այնպես էլ ցեղասպանությունը վերապրողներին՝ 50 հազար հաշմանդամներին, վիրավորներին և անբուժելի հիվանդներին, բռնագաղթը վերապրած և արտասահմանում ապաստանած աշխատանքից և սեփականությունից զրկված 800 000 անձանց կամ 160 000 ընտանիքներին և 346 350 գաղթականների ժառանգներին: Այս խմբերին տրամադրվելիք հատուցման գումարը հաշվառվել է 6 236 350 000 ֆրանկ[778]: Նախ նշենք, որ արևմտահայության մարդկային կորուստների և վերապրածների թվերի հաշվարկները չեն կարող ստույգ և վերջնական համարվել ինչպես կարճ ժամանակահատվածում դրա վերաբերյալ ամբողջական տեղեկություն հավաքելու անհնարինության, այնպես էլ հուշագրի ներկայացման պահին ցեղասպանության հանցագործության շարունակության պատճառով: Բացի այդ, փաստաթղթում չի պարզաբանվում նաև, թե մարդկային կորստի դիմաց կամ վերապրողի համար հատուցման չափը ինչ սկզբունքով կամ մեթոդով է որոշվել:

Հուշագրի կազմողներն անհասկանալիորեն մարդկային կորուստների բաժնում են ներկայացրել նաև ազգային կառույցների՝ 83 առաջնորդարանների, 1860 եկեղեցիների և մատուռների, 229 վանքերի, 26 վարժարանների և դպրեվանքերի, 1439 դպրոցների, 42 որբանոցների ամբողջական կամ մասնակի ավերման ու դրանց գույքի, ձեռագիր մագաղաթների և այլ արժեքների բռնագրավման, ինչպես նաև այլ շինությունների՝ պատմագեղարվեստական հուշարձանների, ջրաղացների, աղբյուրների ու ջրհորների ավերման, ինչպես նաև դրանց հասցված վնասների հաշվարկները[779]:

Պետք է նշել, որ հուշագրում ներկայացված ամբողջությամբ կամ մասնակի ավերված ազգային կառույցների թվային տվյալները նույնպես լիարժեք և վերջնական չեն: Կ. Պոլսի հա-

---

[778] Նույն տեղում, էջ 9:

[779] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 9:

յոց պատրիարքարանի 1913-1914 թթ. անտիպ նյութերի հիման վրա հետագայում կատարված ուսումնասիրությունների համաձայն, ցեղասպանությունից առաջ Օսմանյան կայսրությունում գործել է 2538 եկեղեցի, 451 վանք և 1996 դպրոց[780]: Ինչպես նկատելի է, եկեղեցիների, վանքերի ու դպրոցների այս թվերը զգալիորեն տարբերվում են 1919 թ. հայկական պատվիրակությունների միասնական հուշագրում նշվածներից և վերահաշվարկ են պահանջում:

Ժամանակի սղության պատճառով հուշագրի կազմողները արևմտահայության ազգային առաջնորդարանների, եկեղեցիների, մատուռների, վանքերի, վարժարանների, դպրեվանքերի և որբանոցների բռնագրավված ունեցվածքի՝ կալվածքներ, շարժական գույքի, ձեռագիր մագաղաթների և այլ արժեքների կորուստը առանձին հաշվարկ չեն կատարել, դա ներկայացնելով այդ կառույցների մասնակի և ամբողջական ավերման վնասի հետ մեկտեղ, մինչդեռ այդ կորուստներն այնքան հսկայական են, որ պետք է ներկայացվեին առանձին բաժնով:

Ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված կորուստները Տաճատ վրդ. Յարտմյանը բաժանում է հետևյալ խմբերի՝ ծիսական առարկաներ, ասեղնագործ կամ ձեռագործ արվեստի հյուսվածքներ, գորգեր և կարպետներ, փայտագործական առարկաներ, սուրբ մասունքներ, ձեռագիր մատյաններ և մանրանկարչական գործեր, ճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր և սրբազան պատկերներ, վանական և եկեղեցական կալվածքներ: Ծիսական առարկաների թվին են պատկանում սկիհները, տարբեր չափի ու ձևերի խաչերը, վարդապետական գավազանները, խնկամանները, արծաթապատ ավետարանները, մյուռոնի ամանները, աղավնիները, տաշտերը, ջրամանները, սափորները, քշոցները, աշտանակները, ջահերը, կանթեղները, գոտիները, մատանիները, ծնծղաները, թանաքամանները և այլն: Թվարկված ծիսական առարկաները հիմնականում պատրաստված են եղել թանկարժեք մետաղներով ու քարերով և թե՛ նյութական և

[780] Տես Kévorkian R., Pamboujian P., Arméniens dans l'Empire ottoman à la vielle du génocide, Paris, 1992.

թե՛ արվեստի տեսակետից մեծ արժեք են ներկայացնում[781]: Օրինակ՝ Չնքուշի վանքն ուներ 550 կտոր արծաթյա և ոսկյա սպասքեղեն, իսկ Արմաշի Աբ. Աստվածածնի վանքում կար ավելի քան 350 կտոր արժեքավոր սպասքեղեն: Կողոպտվել է Սեբաստիայի Սբ. Նշան վանքի 3000 կտոր արժեքավոր առարկաները[782]: 1916 թ. ռուսական մամուլում հրատարակվեցին Արևմտյան Հայաստան ուղևորված Ն. Մառի գլխավորած արշավախմբի տպավորությունները Վանի նահանգի վերաբերյալ: Արշավախմբի անդամները վկայում էին, որ բազմաթիվ հին հայկական մշակութային գանձեր կողոպտված էին թուրքերի կողմից, որոնց թվում՝ Լիմ Անապատ վանքի 300 մագաղաթե ձեռագրերը և 800 կտոր պղնձյա հին առարկաները, հափշտակվել էին նաև Կտուց վանքի մետաղյա հին ու թանկարժեք բոլոր առարկաները[783]:

Բացի ծիսական առարկաներից ու սպասքեղենից, կողոպտվել են նաև եկեղեցիներում պահվող հին ու թանկարժեք գորգերն ու կարպետները, թալանվել կամ ոչնչացվել են փայտագործական առարկաները՝ դռներ, գահեր, աթոռներ, սեղաններ, գրակալներ, խաչեր, մասունքների ու սրբազան առարկաների փայտյա պահարաններ, տուփեր և այլն[784]: Միջին հաշվով յուրաքանչյուր հայկական վանք ու եկեղեցի ուներ 5000 օսմանյան ոսկու արժողությամբ գորգեր և կարպետներ: Որոշ հաշվարկների համաձայն, միայն գորգերի և կարպետների նյութական վնասը կազմում է առնվազն 5 000 000 օսմանյան ոսկի[785]:

Ոչնչացվել են նաև եկեղեցիներում պահվող սուրբ մասունքները՝ կենաց փայտ կամ խաչափայտ, Նոյի տապանի և Հիսուսի Խաչի բեկորներ, որոնց կորուստն անվերականգնելի է: Մասունքները մեծ մասը պահվում էր ոսկյա, արծաթյա, թան-

---

781 Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ-Սբ. Ղազար, 1995, էջ 46:

782 Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 236-237:

783 Մնացականյան Ա. Ն., Հայ ժողովրդի ողբերգությունը, Եր., 1965, էջ 186:

784 Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, նշվ. աշխ., էջ 61-62:

785 Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ. Եր., 2012, էջ 93:

կարժեք կամ կիսաթանկարժեք քարերով զարդարված փայտյա կամ մետաղյա տուփերում կամ պահարաններում, որոնք արվեստի գործեր էին[786]: Այդ թանկարժեք տուփերին ու պահարաններին տիրանալու մոլուցքով տարված՝ բարբարոսները ոչնչացնում էին դրանցում պահվող սուրբ մասունքները, որոնց կորուստը որևէ նյութական արժեքով չի կարող հատուցվել:

Անվերականգնելի է նաև հայ ձեռագրերի ու հնատիպ գրքերի կորուստը, որոնք ոչ միայն մեր ժողովրդի մշակութային հարստությունն էին, այլև մեր նախնիների ու նրանց գիտելիքի հետ հոգևոր կապի աղբյուրը: Այսպես՝ Խիզանի Սբ. Խաչ վանքում պահվող 1000-ի չափ գրքերը մոխիր դարձան[787]: Վարագա վանքի թաքստոցներից մեկում պահվող 150 կտոր մագաղաթները և ընտիր ձեռագիր մատյանները նույնպես անհետացել էին, կորսվեցին նաև Կեսարիայի շուրջ 700 արժեքավոր ձեռագրերը[788]: Մի քանի տվյալների համադրությամբ՝ այդ տարիներին ավելի քան 20000 ձեռագրեր ու հնատիպ մատյաններ հրո ճարակ են դարձել[789]:

Ավերվեցին նաև Հայ Առաքելական եկեղեցու ճարտարապետական հուշարձանները՝ գավիթները, ժամատները, զանգակատներն ու գրադարանները: Դրան զուգահեռ՝ ոչնչացվեցին վանքերի և եկեղեցական հաստատությունների ներսում եղած անթիվ նկարները, որմնանկարները, պատկերաքանդակները, խաչքարերը, տապանաքարերը, վիմական արձանագրություններն ու քանդակագործական աշխատանքները, ինչը պետք է համարել վանդալիզմի արտահայտված դրսևորում ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակութային ժառանգության նկատմամբ: Վանական համալիրները և եկեղեցական հաստատություններն ունեին իրենց սեփական կալվածքները, վարժարանները, իջևանատները, խաները, պանդոկները, տները,

---

786 Հ. Տաճատ վրդ. Եարտրմեան, նշվ. աշխ., էջ 61-62:

787 Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիւ Բ-Դ, էջ 103:

788 Նույնի՝ «Էջմիածին», 1966, թիւ Ե-Է, էջ 143-144:

789 Худавердян К., Саакян Р., Геноцид армян сквозь призму десятилетий, Ер., 1995. с. 37-38.

խանութները, այգիները, պարտեզները, անտառները, ջրաղացները, որոնց եկամուտով էլ գոյատևում էին այդ հաստատությունները[790]: Օրինակ՝ Սսի բազմադարյա Կաթողիկոսության համալիրը, որի ընդհանուր մակերեսը կազմում էր շուրջ 1,250,000 մ², իրենից ներկայացնում էր՝ վեհաշուք կաթողիկոսարանը, հոյակապ Մայրավանքը, որը բաղկացած էր 50 սենյակներից և սրահներից, հարուստ գրադարանից՝ ավելի քան 4000 կտոր գրքերով ու 4000-ից ավել հին ձեռագրերով և արվեստի հնառճ աշխատանքների հարուստ հավաքածու ունեցող թանգարանից: Այն ժամանակ Սսի կաթողիկոսության միայն համալիրը գնահատվել էր 100 000 թուրքական ոսկի: Կաթողիկոսությանն էր պատկանում նաև հին եկեղեցու և բնակելի մի քանի շենքերով 14 500 մ² մակերեսով հողատարածք, որը 2000 թուրքական ոսկի էր գնահատվում[791]:

Նշվածից բացի, Կաթողիկոսության տնօրինության տակ էին գտնվում խանութներ, շենք-շինություններ, երկու ջրաղաց 10 000 մ² մակերեսով պտղատու այգի, 30 000 մ² մակերեսով ցանքատարածք, ինչպես նաև շենք-շինություններով, պահեստներով, ֆերմաներով, 80 եզների, 50 կովերի, 30 ջորիների, այծերի և ոչխարների անթիվ հոտերի ախոռներով, մշակվող հողերով շուրջ 10,000,000 մ² մակերեսով հսկայական մի տարածություն: Սսի Կաթողիկոսության անշարժ գույքի ընդհանուր մակերեսը կազմում էր շուրջ 11,687,000 մ², որն այն ժամանակ 167,520 թուրքական ոսկի էր գնահատվել: Ինչ վերաբերում է Սսի Կաթողիկոսության շարժական գույքին, ապա դրա արժեքը մոտավորապես կազմում էր շուրջ 9-10 մլն թուրքական ոսկի, ինչը համարժեք է 900-1000 մլն ԱՄՆ դոլարի[792]: Ներկայումս այդ բռնազավթված կալվածքների եկամուտը ստանում են կա՛մ անհատներ, կա՛մ էլ թուրքական պետությունը:

---

790 Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, նշվ. աշխ., էջ 76-77:

791 Baghdjian K. K., The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, p. 97-98.

792 Տե՛ս նույն տեղում, էջ 98-99:

Սսի կաթողիկոսությունը նյութական կորուստներն է կրել նաև վարձակալության տրված իր տարածքների դիմաց չվճարումների հետևանքով: Այսպես, Սահակ II կաթողիկոսը Ս. Ստեփանոս եկեղեցուն պատկանող հողատարածքները 1911 թ. 25 տարով վարձակալության է տրամադրել "Orosdi-Back company" ընկերությանը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Փարիզում: Ըստ վարձակալության պայմանագրի, վերջինս պարտավորվում էր այդ հողատարածքի վրա 6000 թուրքական ոսկե լիրայի տարեկան շրջանառություն ունեցող խանութներ կառուցել, սակայն տվյալ հողատարածքի համար տարեկան խորհրդանշական 100 թուրքական ոսկե լիրա պետք է վճարեր Սսի կաթողիկոսությանը և 25 տարի անց կառուցված շինությունները պետք է տրամադրվեին կաթողիկոսությանը: Վարձակալության պայմանագրի համաձայն, հրդեհի դեպքում վնասները պետք է փոխհատուցվեին "Orosdi-Back company" ընկերության հաշվին: Սակայն Առաջին աշխարհամարտի սկսվելուց հետո այդ ընկերությունը ոչ միայն սկսեց չվճարել Սսի կաթողիկոսության խորհրդանշական վարձավճարը, այլև շինությունների այրվելուց հետո կառավարությունից 25 000 թուրքական ոսկե լիրա փոխհատուցում ստացավ՝ կաթողիկոսությանը ոչինչ չտրամադրելով: Այս գործի առնչությամբ Սսի կաթողիկոսությունը տվյալ ընկերությունից պահանջում էր անցած տարիների վարձակալության և հրդեհի հետևանքով առաջացած ապահովագրական վճարները, սակայն կաթողիկոսության բազմաթիվ պահանջագրերը անպատասխան մնացին[793]:

Հարկ է նշել, որ Սսի կաթողիկոսության անշարժ գույքի գնահատման բերված թվային տվյալներն ամենևին չեն արտահայտում դրանց իրական արժեքը, քանզի գնահատողները միտումնավոր կերպով այն ժամանակվա շուկայական գներից ցածր են գնահատել հողատարածքներն և շենք-շինություններ-ը: Դրանից բացի, ներկայացվածը միայն կաթողիկոսարանի ունեցվածքն է և չի արտահայտում նրա ենթակայության տակ

[793] Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 196-197:

գործող թեմերի ու համայնքների անշարժ գույքը, որն ամբողջությամբ մնաց թուրքական պետության հայեցողությանը:

Հասկանալի է, որ ցեղասպանության իրագործմամբ Հայ Առաքելական եկեղեցուն հասցված վիթխարի կորուստների ամբողջական հաշվարկ կատարելը չափազանց բարդ է, քանզի գրեթե անհնարին է նյութականի վերածել ահռելի հոգևոր կորուստները, որոնց մեծագույն մասն ուղղակիորեն անվերականգնելի է: Այդուհանդերձ, այս կորուստների գոնե իրականությանը մոտ պատկերը ստանալու համար անհրաժեշտ է կատարել նշված ճշգրտումները:

Փաստաթղթում բացարձակապես անտեսվել է Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ նահանգների հայ կաթոլիկ և բողոքական համայնքների կրած նյութական կորուստները: Բավական է նշել այն փաստը, որ կայսրությունում հայ բողոքականներն ունեին 310 ժողովարան, որոնց բացարձակ մեծամասնությունը հիմնահատակ կործանվել է[794]:

Մարդկային կորուստների բաժնում զարմանալիորեն ընդգրկվել են նաև կաշառակերության և բռնագրավման հետևանքով հայերի կրած նյութական վնասների, ինչպես նաև արտասահմանում ապաստանած հայ գաղթականներին սպասարկող հիվանդանոցների, որբանոցների, առողջապահական և այլ հաստատությունների պահպանման և մատակարարման համար ֆինանսական միջոցների պահանջի հաշվարկները: Կարծում ենք, որ հասցված վնասների այս շարքում պետք է տեղ գտնեին նաև բռնագաղթից առաջ ու դրա ընթացքում թուրքերին գրոշներով հարկադրաբար վաճառած հայության ունեցվածքի իրական արժեքի հաշվարկները: Բնականաբար, թվարկված կորուստների վերջին այս շարքն առնչություն չունի մարդկային կորուստների հետ և դրանք պետք է ներկայացվեին գավառաբնակ և քաղաքաբնակ արևմտահայ ընտանիքների կրած նյութական վնասների բաժնում:

---

[794] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915–1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «ՎԷմ», Եր., 2010, թիվ 3 (31), հավելված, էջ XXVI:

Այդուհանդերձ, այս բաժնի վնասների համար ընդհանուր առմամբ պահանջվում էր 525 մլն. ֆրանկ, ընդ որում, ազգային կառույցների ոչնչացման ու դրանց գույքի բռնագրավման համար՝ ընդամենը 75 մլն. ֆրանկ[795]: Ակնհայտ է, որ մարդկային կորուստների հետ անհամատեղելիությունից բացի, հայության կրած վնասների վնասների վերջին շարքի հաշվարկներում նկատելի են թերհաշվառման և հատուցման ծավալների հստակեցման այն նույն թերությունները, որոնք մատնանշվել են մարդկային կորուստների հետ կապված:

Փարիզի վեհաժողովի Հատուկ հանձնախմբին ներկայացված հուշագրի երկրորդ հատվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության և Կովկասի հայաբնակ գավառների հայության կրած նյութական կորուստների հաշվառմանը: Արևելահայության կորուստները նույնպես բաժանվում էին երեք խմբի՝ ա./ ամբողջովին ավերված և քանդված շրջաններ, որոնց բնակչությունը տեղահանվել է, բ./ բնակչության կողմից չլքված շրջաններ, որոնք սակայն պատերազմական գործողությունների, բռնագրավումների և աշխատավոր բնակչության նվազեցման հետևանքով տուժել են և գ./ ընդհանուր կորուստներ:

Առաջին խմբի արևելահայ 120 800 ընտանիքները բաժանվում էին 97 440 գյուղաբնակ և 23 360 քաղաքաբնակ ընտանիքների: Գյուղաբնակ արևելահայերի կորուստները ներառում են կալվածքներ (տներ, մառաններ, ախոռներ, ջրաղացներ, պարտեզներ, այգիներ, անտառներ, այլազան ծառերի տնկարաններ), կահ-կարասիներ (կահույք, գույք, հագուստեղեն), երկրագործական գործիքներ (արոր, մանգաղ, սայլ), անասունների գլխաքանակ և դրամագլուխ: Արևելահայ գյուղաբնակ մեկ ընտանիքի կրած կորուստները միջին հաշվով գնահատվել են 13 550 ֆրանկ, ընդհանուր առմամբ կամելով 1 մլրդ 320 մլն. 312 հազար ֆրանկ[796]: Հատկանշական է, որ ի տարբերություն գավառաբնակ արևմտահայերի, առաջին խմբի գյուղաբնակ արևելահայերի պարագայում չեն կատարվել ոչ միայն տարեկան բերքի կորուստների, այլև սննդի և անասնակերի պաշարների

[795] Լեւոն Վարդան, նշվ. աշխ., էջ 316:

[796] Նույն տեղում, էջ 317:

կորստի հաշվարկներ, թեև այս խմբի արևելահայ գյուղացիությունը գավառաբնակ արևմտահայության միևնույն ծանր վիճակում էր հայտնվել:

Առաջին խմբի քաղաքաբնակ արևելահայերի կալվածքների, կահ-կարասիների և դրամագլխի կորուստները մեկ ընտանիքի համար միջին հաշվով գնահատվել են 21 000 ֆրանկ, ընդհանուր առմամբ կազմելով 511 մլն. 560 հազար ֆրանկ[797]: Պետք է նշել, որ արևմտահայ քաղաքաբնակ ազգաբնակչության պարագայում հստակեցված են ինչպես կորցրած անշարժ գույքի՝ տներ, վաճառատներ, հյուրանոցներ, գործարաններ, արհեստանոցներ, խանութներ, պարտեզներ և այգիներ, այնպես էլ շարժական գույքի՝ կահույք, հագուստ, թանկարժեք զարդեր, տեսակները: Մինչդեռ առաջին խմբի քաղաքաբնակ արևելահայերի պարագայում որպես նրանց կորցրած անշարժ գույք ընդհանրական ձևով նշված է միայն՝ կալվածքներ, որպես կորցրած շարժական գույք՝ միայն կահ-կարասի, իսկ պարենի կորստի մասին ընդհանրապես խոսք չկա: Բնական է, որ նման տարբերակված մոտեցման պարագայում գործ ունենք արևելահայ քաղաքաբնակ ազգաբնակչության կրած կորուստների թերհաշվառման հետ, մինչդեռ նրանք թուրքական զորքերի առաջխաղացման հետևանքով հայտնվել էին նույնպիսի ծանր պահմաններում, ինչպես արևմտահայ քաղաքաբնակ ազգաբնակչությունը:

Երկրորդ խմբի արևելահայ 154 000 ընտանիքները բաժանվում էին 123 200 գյուղաբնակ և 30 800 քաղաքաբնակ ընտանիքների: Գյուղաբնակ յուրաքանչյուր ընտանիքի տնտեսությունը վերականգնելու՝ մսացու և ընտանի կենդանիներ, երկրագործական գործիքներ ձեռք բերելու և շինությունները վերանորոգելու, համար պահանջվում էր 8000 ֆրանկ, ընդհանուր առմամբ՝ 985 մլն. 560 հազար ֆրանկ[798]: Իսկ քաղաքաբնակ յուրաքանչյուր ընտանիքի տների, աշխատատեղերի, մթերանոցների և այլ ձեռնարկությունների վերանորոգման, արհեստագործա-

---

[797] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 11:

[798] Լեւոն Վարդան, նշվ. աշխ., էջ 317:

կան, արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների վերակազմակերպման համար պահանջվում էր 10 000 ֆրանկ, ընդհանուր առմամբ՝ 308 մլն ֆրանկ[799]: Ինչպես արևմտահայ քաղաքաբնակ ազգաբնակչության կուրուստների հաշվարկներում, այնպես էլ արևելահայ քաղաքաբնակ բնակչության պարագայում չեն հաշվարկվել նշված շինություններից ստացվելիք հինգ տարիների վարձը:

Ընդհանուր կորուստների երրորդ խմբում պահանջվում էր հատուցել ռազմաճակատներում զոհված, ինչպես նաև հաշմանդամ և վիրավոր հայ զինվորների և սպաների համապատասխանաբար՝ 35 հազար և 90 հազար ընտանիքներին, զոհված կամ սովի և տարագրության հետևանքով մահացած 100 հազար անձերի ընտանիքներին, աքսորված և աշխատանքից ու սեփականությունից զրկված 35 000 ընտանիքներին: Այս խմբերին տրամադրվելիք հատուցման գումարը հաշվարկվել է 1 մլրդ. 277 մլն ֆրանկ[800]: Արևելահայերի դեպքում կիրառվում է արևմտահայության մարդկային կորուստների դիմաց կամ վերապրողի համար հատուցման նույն չափը, ուստի այն նկատարումները, որոնք նշել ենք արևմտահայության մարդկային կորուստների և վերապրածների թվերի անլիարժեքության ու հատուցման ծավալների առնչությամբ, լիովին վերաբերվում են նաև արևելահայությանը:

Կովկասի և Պարսկաստանի տարբեր շրջաններում հայ գաղթականներին սպասարկող հիվանդանոցների, մատակարարման կենտրոնների, որբանոցների և առողջապահական և այլ հաստատությունների պահպանման և մատակարարման, դպրոցների, եկեղեցիների և հանրային շենքերի վերանորոգման, Հայաստանի Հանրապետության տարածքում երկաթուղիների և հաղորդակցության ճանապարհների վերակառուցման համար էլ պահանջվում էր ընդամենը 220 մլն. ֆրանկ[801]: Դժվար չէ նկատել, որ եթե Արևմտյան Հայաստանի մասնակի կամ ամ-

---

[799] Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 12:

[800] Նույն տեղում:

[801] Լեւոն Վարդան, նշվ. աշխ., էջ 319:

բողջությամբ ավերված ազգային կառույցների որոշակի թվեր էին նշվում, ապա Հայաստանի Հանրապետությունում, Կովկասի և Պարսկաստանի հայաբնակ գավառներում մասնակի կամ ամբողջությամբ ավերված ազգային կառույցների թվերը բացակայում են: Մինչդեռ թուրքական զորքերի վերահսկողությունից արդեն ազատված այդ տարածքներում հնարավոր էր առավել մեծ ճշգրտությամբ պարզել ազգային շինությունների ու ենթակառուցվածքների վնասների թվերը: Այս թերությունից ելնելով էլ ֆինանսական պահանջի չափը հիմնավորված չէ և հասկանալի չէ, թե ինչ սկզբունքով է դա կատարվել:

Հուշագրում հպանցիկ անդրադարձ է կատարվել հայերի բանկային ավանդներին, մինչդեռ հետագայում բացահայտվել են այդ ավանդների ծավալներին ու դրանց բռնագրավման մեխանիզմները: Ֆրիտյոֆ Նանսենի «Խաբված ժողովուրդ» գրքում առկա է Մեծ Բրիտանիայի Պահպանողական և Լիբերալ կուսակցությունների պարագլուխներ Սթենլի Բոլդուինի և Հերբերտ Ասկվիտի կողմից իշխող լեյբորիստական կուսակցությունը ներկայացնող վարչապետ Ռամզեյ Մակդոնալդին 1924 թ. սեպտեմբերին հղված դիմումը, որում բրիտանական կառավարությունը մեղադրվում էր 1915 թ. հայերի կոտորածից ու արտաքսումից հետո նրանց շուրջ 5 մլն. ֆունտ ստերլինգ (թուրքական ոսկով) գնահատվող հարստությանը տիրանալու մեջ: Հայերի զանգվածային սպանություններից ու բռնի տեղահանությունից հետո Օսմանյան բանկում արևմտահայերի ընթացիկ և ավանդային բանկային հաշիվները թուրքական կառավարության հրամանով փոխանցվեցին Կ. Պոլիս՝ պետական գանձատուն, իսկ 1916 թ. կառավարությունն այդ գումարից 5 միլիոն ֆունտ ստերլինգ ուղարկեց Բեռլին՝ Գերմանիայի կայսերական բանկ (Reichbank)՝ նոր արժեթղթերի թողարկման նպատակով[802]: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն. օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր[803]:

---

802 Արզումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, Եր., 1986, էջ 128–129:

803 Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ոչնչացման գործընթացը, «ՎԷՄ», Եր., 2011, թիվ 1, էջ 172:

Դժվար չէ նկատել թողարկված այդ արժեթղթերի և Օսմանյան բանկից Գերմանիայի կայսերական բանկ տեղափոխված ու դեպոզիտացված ոսկու միջև: Բրիտանական դիվանագիտական փաստաթղթերից պարզ է դառնում, որ հետագայում Գերմանիան օսմանյան պարտքի դիմաց Օսմանյան կայսրությունից բռնագանձել է այդ կապիտալը, իսկ Մեծ Բրիտանիան, իր հերթին, իբրև ռազմատուգանք այն բռնագրավել է Բեռլինից[804]: Ի դեպ, Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացած այս 30.000 կգ ոսկու հարցը հայերի կողմից առաջին անգամ բարձրացվել է 1984 թ. Տիգրան Գույումճյանի կողմից՝ Ժողովուրդների մշտական տրիբունալում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելու ժամանակ, երբ տրիբունալին ներկայացվեց «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» վերնագրով զեկույցը[805]:

Հայկական պատվիրակությունների ներկայացրած փաստաթղթում չեն հաշվառվել այն նյութական վնասները, որոնք թուրքական և արհեստածին «Ադրբեջան» պետության զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին և, բնականաբար, չէին կարող հաշվառվել նաև հուշագրի ներկայացնելուց հետո արդեն քեմալականների կողմից 1920 թ. արևելահայությանը, 1921 թ. կիլիկիահայությանը և 1922 թ. Զմյուռնիայի հայ բնակչությանը հասցված նյութական վնասները[806]: Ուստի՝ որոշ հեղինակների կարծիքով, ցեղասպանության շարունակության քաղաքականության հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական վնասների հու-

---

[804] Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915–1918), Եր., 2005, էջ 90–91:

[805] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, էջ 169:

[806] Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1999, էջ 11:

շագրում նշված թիվն առնվազն պետք է ավելանա 20%-ի չափով[807]:

Ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված նյութական գոնե մոտավոր վնասները և դրանից թուրքական պետության ստացած գոնե մոտավոր օգուտները պատկերացնելու համար բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կատվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ, այսպես՝ եթե 1913–1914 թթ. այն կազմում էր 35 մլն. օսմ. ոսկի, ապա 1915–1916 թթ. 38 մլն., իսկ 1917–1918 թթ.՝ 85 մլն[808]: Ակնհայտ է, որ տվյալ պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել, որ թուրքական պետությունը, կոպտորեն խախտելով դեռ հռոմեական իրավունքից հայտնի Ex injuria jus non oritur* սկզբունքը, օգտվել և մինչ օրս շարունակում է օգտվել էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

Նշված թերություններով հանդերձ, հայկական պատվիրակությունների կողմից Փարիզի Խաղաղության վեհաժողովին հայ ժողովրդի կրած կորուստների վերաբերյալ համատեղ հուշագրի ներկայացումն ունի չափազանց կարևոր քաղաքական նշանակություն: Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփող նման հեղինակավոր միջազգային վեհաժողովին այդ փաստաթղթի ներկայացման քայլով հայկական պետությունը և արևմտահայության իրավունքները ներկայացնող Աղգային պատվիրակությունը հայերի ցեղասպանությունն իրա-

---

807 Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18–19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 180:

808 Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ XXIX:

* «Իրավախախտումից իրավունք չի կարող առաջանալ»:

գործած Օսմանյան կայսրությանը փաստորեն հայ ժողովրդի խախտված գույքային իրավունքների վերականգնման ու հատուցման պահանջ էին ներկայացնում:

Այս հանգամանքից ելնելով, Առաջին աշխարհամարտում հայ ժողովրդի կրած նյութական վնասների վերաբերյալ հայկական պատվիրակությունների կողմից Փարիզի վեհաժողովի Հատուկ հանձնախմբին ներկայացրած համատեղ հուշագրի հաշվարկների կառուցվածքը հիմք է ծառայել Մեծ եղեռնի ընթացքում հայ բնակչության կրած նյութական վնասների հաշվարկների նոր աղյուսակ կազմելու համար՝ ըստ Արևմտյան Հայաստանի նահանգների, Օսմանյան կայսրության այլ տարածքների և Պարսկահայքի գավառների առանձին բնակավայրերի: Ցեղասպանության իրագործմամբ Արևմտյան Հայաստանի Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Խարբերդի, Դիրբեքիրի և Սեբաստիայի նահանգների, ինչպես նաև Տրապիզոնի նահանգի, Պարսկահայքի Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գավառների առանձին բնակավայրերի հայ բնակչությանը պատկանող անշարժ և շարժական գույքի, արդյունաբերական ձեռնարկությունների, հանքավայրերի և արհեստագործական կազմակերպությունների, բանկային հաշիվներում և առձեռն ունեցած դրամական միջոցների ինչպես նաև կրած նյութական վնասների մասին տեղեկությունները հավաքագրվել են արխիվային փաստաթղթերից և մուտքագրվել կազմված աղյուսակի համապատասխան սյունյակներում: Աղյուսակի համապատասխան սյունյակում մուտքագրվել են համայնքային սեփականության՝ դպրոցների, ակումբների, կրոնական և այլ շինությունների վերաբերյալ տեղեկությունները:

Թվարկված տարածքների բնակավայրերի հայ բնակչության ունեցվածքի և կրած նյութական վնասների վերաբերյալ տեղեկությունները քաղվել են Հայաստանի ազգային արխիվի 227 ֆոնդի գործերից, որոնցում զետեղված են Մեծ եղեռնից հրաշքով փրկված ականատես վերապրողների վկայությունները և Քննիչ հանձնաժողովի 221 ֆոնդի գործերից, որոնք ականատես վերապրողների հետ զրույցների հիման վրա բյուրոյի աշխատակիցների կողմից կազմված անկետաներ են:

Պետք է նշել, որ 227 ֆոնդի նյութերը պարունակում են բնակավայրերի հայ բնակչության ունեցվածքի և կրած նյութական վնասների վերաբերյալ ընդհանուր և քանակական բնույթի տեղեկություններ[809], իսկ 221 ֆոնդի գործերի անկետաներում պարունակվում են բնակավայրերի հայ բնակչության ունեցվածքի և կրած նյութական վնասների մասին անհատական տվյալներ, որոնք այդ պահի դրությամբ շուկայական գներին համարժեք գնահատվել են բյուրոյի աշխատակիցների կողմից և արտահայտվել դրամական (հիմնականում՝ ռուսական ռուբլով) արտահայտությամբ: Հ. Թումանյանի գլխավորած Առաջին համաշխարհային պատերազմում հայերի կորուստները որոշող բյուրոյի աշխատակիցների կազմած անկետաները պարունակում էր տվյալներ տուժողի մասին, բնակության վայրը՝ գործող վարչատարածքային բաժանման համաձայն, երբ, որտեղ և ում կողմից է իրականացվել կոտորածը, տվյալներ գույքային կորուստների մասին (քանակական և դրամական արտահայտությամբ), մարդկային կորուստներ (սպանությունների փաստեր և այլն)[810]:

Եզակի դեպքեր կան, երբ նյութական կորուստների հաշվարկներն արտահայտված են օսմանյան լիրայով, որոնք 1919 թ. դրությամբ եղած օսմանյան լիրա – ռուսական ռուբլի փոխառժեքով վերածվել են ռուբլու՝ ընդհանուր հաշվարկները մեկ դրամական արտահայտությամբ ներկայացնելու նպատակով: Այն բացառիկ դեպքերում, երբ անկետաներում որոշ բնակավայրերի հայ բնակչության կրած նյութական կորուստները գնահատված չեն եղել և արտահայտվել են միայն քանակական ձևով, ապա տվյալ գույքի գնահատումը կատարվել է այլ

---

809 Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. I, Վանի նահանգ, հ. II, Բիթլիսի նահանգ, հ. III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ և Պարսկահայք, գլխ. խմբ., հեղինակ և կազմող Ա. Վիրաբյան, հեղինակ և կազմող Գ. Ավագյան, Հայաստանի ազգային արխիվ, Եր., 2012,

810 Տե՛ս Я обвиняю! Дело №…1 500 000, материалы Национального архива Армении, с. 8.

բնակավայրերի պարագայում այդ նույն գույքի գնահատված արժեքի հետ համադրման միջոցով:

Արխիվային նյութերի միջև եղած այս տարբերությունից ելնելով, Արևմտյան Հայաստանի Բիթլիսի, Վանի, Էրզրումի և Խարբերդի նահանգների որոշ բնակավայրերի հայ բնակչության կրած նյութական կորուստների վերաբերյալ կազմված աղյուսակները ներկայացրել ենք հայ բնակչության ունեցվածքի և կրած նյութական վնասների ընդհանրական և դրամական արտահայտությամբ ներկայացված անհատական հատվածներով*, որոնց տվյալները ենթակա են վերջնական համադրման:

Որպես կանոն, ականատես վերապրողների վկայություններում Արևմտյան Հայաստանի նահանգների բնակավայրերի ընդհանուր ունեցվածքի վերաբերյալ տեղեկություններն ավելի մոտավոր են, իսկ որպես պատերազմական տուրք հայերից բռնազավթված ունեցվածքի տվյալները բավական հստակ են: Այդ երկու տվյալների համադրման միջոցով հնարավոր է դարձել ավելի որոշակիացնել կոնկրետ բնակավայրերի հայերի ընդհանուր ունեցվածքի ծավալները, որն ի վերջո նույնպես բռնազավթվել կամ ոչնչացվել է:

Արխիվային որոշ փաստաթղթերում նույն բնակավայրի տարբեր վերապրողներ իրենց բնակավայրի ընդհանուր շարժական և ոչ շարժական գույքի վերաբերյալ նշում են իրարից տարբերվող տվյալներ, որոնք համադրվել են և արդյունքում հիմք են ընդունվել դրանց միջինացված տվյալները: Երբեմն էլ վերապրողներն իրենց վկայություններում, չհստակեցնելով տվյալ բնակավայրի հարուստ հայերի թիվը, առանձին տեղեկություններ են հաղորդում աղքատ և հարուստ հայերի կրած կորուստների մասին: Այդ դեպքերում որպես հարուստ հայե-

* Հավելվածում տե՛ս Արևմտյան Հայաստանի Բիթլիսի, Վանի, Էրզրումի և Խարբերդի նահանգների որոշ բնակավայրերի հայ բնակչության ունեցվածքի և կրած նյութական կորուստների աղյուսակների ընդհանուր և դրամական արտահայտությամբ ներկայացված անհատական բաժինները:

րի մոտավոր թիվ ընդունվել է տվյալ բնակավայրի հայերի ընդհանուր թվաքանակի առավելագույնը 5 տոկոսը:

Բնական է, որ եթե որևէ բնակավայրից առկա է միայն մեկ – երկու ականատես վերապրողի վկայություն, ապա այդ տեղեկությունները բնականաբար չեն արտահայտում տվյալ բնակավայրի հայերի կրած նյութական կորստի իրական ծավալները, քանզի այդ վերապրողները ներկայացնում են միայն իրենց ընտանիքի, լավագույն դեպքում նաև հարազատների ու հարևանների, բայց ոչ երբեք ամբողջ բնակավայրի ունեցած կորուստների մասին տեղեկությունները:

Հավելվածում ներկայացված աղյուսակների «Ֆինանսական միջոցներ, դրամ և արժեթղթեր» այունյակում տեղ են գտել ինչպես վերապրողների մոտ եղած կանխիկ գումարները, որոնք բռնագրավվել են տեղահանությունների ընթացքում, այլև Օսմանյան բանկում հայերի հաշվեհամարների գումարները: Իսկ արժեթղթերի տակ հասկացվում են նաև «Լքյալ գույքի մասին» օրենքի հոդվածների համաձայն Օսմանյան բանկին ունեցվածքը ի պահ հանձնելու դիմաց հայերին տրված պարտամուրհակներն ու ստացականները:

6.ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանությանն առնչվող իրավական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը հայ իրականության առջև ծառացած ամենալուրջ մարտահրավերներից մեկն է:

Տարատեսակ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով երկար տարիներ Հայոց ցեղասպանությանն առնչվող հիմնահարցերը դիտարկվել են հիմնականում պատմական փաստերի վերլուծության լույսի ներքո, ինչը թույլ չի տվել բացահայտել ու գնահատել ցեղասպանություն երևույթի ու դրա հետևանքների բոլոր բաղկացուցիչների փոխկապակցված էությունն ու բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների հաղթահարման հիմնահարցերը բարձրացվեցին պետական քաղաքականության մակարդակի՝ ձեռք բերելով նոր որակ և բովանդակություն:

Դեռևս 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված անկախ պետականության կայացման գործընթացին սկիզբ դրած Հայաստանի անկախության մասին հռչակագիրը՝ կետ 11-ում հստակորեն ամրագրեց Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում Հայոց պետականության առանցքային հանձնառությունները՝ սահմանելով, որ *«Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»*[811]: Անկախության հռչակագրի ընդունումն իրավական հիմք ստեղծեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված համապատասխան իրավաքաղաքական միջոցներ ձեռնարկելու

[811] Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990/16.

համար: Հայոց պետականության ստեղծումն ազդարարող հիմնադիր փաստաթղթում ամրագրվեց Հայաստանի արտաքին քաղաքականության անկյունաքարային հիմնախնդիրներից մեկը, այն է՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը: Այս գործընթացի տրամաբանական շարունակությունը դարձավ 2015 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի ընդունումը, որով հռչակվում էր հայ ժողովրդի պայքարի մեկնարկը ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, այլև այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ուղղությամբ:

XX դարի վերջին տասնամյակը բեկումնային դարձավ Հայոց ցեղասպանության հիմնախնդրին առնչվող հարցերի վերահիմաստավորման և նորովի ընկալման տեսանկյունից: Եթե 1980-ականների երկրորդ կեսին կարելի էր խոսել Հայոց ցեղասպանության հիմնախնդիրն իրավական դաշտ տեղափոխելու որոշ միտումների մասին, 1990-ականները նշանավորվեցին Հայոց ցեղասպանության իրավական հարթությանն առնչվող հիմնախնդիրների ակտիվ լուսաբանմամբ, ապա երրորդ հազարամյակում Հայոց ցեղասպանության հիմնական բաղկացուցիչը դարձան հենց իրավական հարթության հիմնահարցերը: Իրավական դաշտ Հայոց ցեղասպանության հիմնախնդրի տեղափոխումը փաստորեն վերակենդանացրեց այդ հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու՝ դեռևս XX դարի 20-ական թթ. վերջից սառեցված գործընթացը: Ինքնին հասկանալի է, որ առավել քան 70 տարի սառեցված լինելուց հետո տվյալ հարցի ժամանակակից արծարծումը չէր կարող նույն բովանդակությունն ու ծավալն ունենար, ինչ 1920-ականներին: Մասնավորապես, հիմնախնդրի պարտադրված սառեցումը բացառեց ցեղասպանության կազմակերպիչներին և անմիջական կատարողներին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը նրանց արդեն ողջ չլինելու պատճառով: Այսօր շատ բարդ է նաև վերականգնել այդ հանցագործության ար-

դյունքում պատճառված հստակ նյութական վնասի չափը և ծավալները:

1920 թ. հայկական անկախ պետականության կորուստը և Հայաստանի հետագա խորհրդայնացումը, որի արդյունքում հայ ժողովուրդը զրկվեց իր օրինական շահերը ներկայացնող միջազգային իրավունքի սուբյեկտի հովանավորությունից, առավել խորացրեց Հայոց ցեղասպանության հետևանքները՝ թույլ չտալով հնարավորինս արագ արձագանքել դրա հետևանքով պատճառված վնասի վերացմանը և հավուր պատշաճի ձեռնարկել դրա հետևանքների հաղթահարմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ:

Ժամանակի գործոնի ազդեցության ներքո Հայոց ցեղասպանության բացասական հետևանքներից շատերն առավել արմատավորվեցին՝ բացասաբար անդրադառնալով իրավական լիարժեք պահանջներ ներկայացնելու հնարավորությունների վրա: Մասնավորապես, տարիների ընթացքում ամենաթողության մթնոլորտում ոճրագործներին հաջողվեց զգալիորեն պարտակել Հայոց ցեղասպանության հետևանքները, վերացնել ապացուցողական նշանակության բազում փաստաթղթեր, խիստ սահմանափակել կամ արգելել դրանց հասանելիությունը, շարունակել հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը, յուրացումը և ձևախեղումը, ինչպես նաև հսկայական ջանքեր գործադրել Արևմտյան Հայաստանում հայկական էթնիկ տարրի գոյությունը մոռացության մատնելու համար:

Նշված հիմնախնդիրներից զատ, Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնապես ուրացման ագրեսիվ քաղաքականության նախաձեռնումն առավել բարդացրեց Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական պահանջների թղթածրարի ստեղծումը ժամանակի հրամայականն է, սակայն այն չպետք է ընկալվի որպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված այլ միջոցներին փոխարինող: Իրավական հիմ-

նախնդիրների վերլուծությունից զատ, պետք է շարունակվեն Հայոց ցեղասպանությանն առնչվող պատմական, քաղաքագիտական, սոցիոլոգիական, մարդաբանական և այլ ոլորտների հետազոտությունները:

Հայոց ցեղասպանության արդյունքում առաջացած հետևանքները բազմատեսակ են և բազմապիսի (հայրենազրկում, Օսմանյան կայսրության և դրա վերահսկողության ներքո ընկած տարածքներում հայկական էթնիկ տարրի և հայ ինքնության ոչնչացում, հարկադրված դավանափոխություն, հայերին պատկանող մասնավոր և համայնքային գույքի, հայ մշակութային արժեքների յուրացում և ոչնչացում և այլն), դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը պահանջում է առանձնակի, յուրահատուկ մոտեցում, առանց որի համապատասխան հետևանքի վերացումը չի կարող ամբողջական, իսկ պատճառված վնասի հատուցումը լիարժեք լինել:

Հայոց ցեղասպանության իրագործմամբ պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ է հստակ տարբերակում անցկացնել բուն ցեղասպանության հանցագործության հետևանքով առաջացած անմիջական կամ ուղղակի վնասի և այլ միջնորդավորված (անուղղակի) վնասների միջև (այն վնասների, որոնք կարող էին առաջանալ նաև ցեղասպանության իրագործման փաստից անկախ):

Ցեղասպանության հանցագործության թիրախը հետապնդվող համապատասխան կայուն և մշտական մարդկային խմբի գոյությունն է: Այլ կերպ ասած, ցեղասպանությունը ոտնձգություն է ոչ թե առանձին անհատների՝ անկախ նրանց թվից, նրանց գույքի կամ բնակության վայրից, այլ հենց մարդկային մշտական և կայուն խմբերի գոյության դեմ: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հստակորեն ընդգծել, որ Հայոց ցեղասպանության նպատակներից մեկն էլ եղել է Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության վերահսկողության ներքո գտնված տարածքներում հայության ինքնության ոչնչացումը: Սա Հայոց ցեղասպանության առավել ծանր հետևանքներից է, որովհետև հայության լիարժեք վերականգնումն իր բնօրրանում այսօր հնարավոր է միայն տեսականորեն: Եթե

այսօր անգամ հնարավոր լինի հայերով վերաբնակեցնել ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքը և նախկին հայաբնակ այլ վայրերը, ապա նույնիսկ այդ պարագայում էլ չենք կարող խոսել հայկական էթնիկ տարրի ամբողջական վերականգնման մասին, քանի որ անհետացել և ձուլվել են ոչ միայն տվյալ տարածքի էթնիկ բնակչության սերունդների մեծ մասը, այլև վերացել են նրանց բարբառները, սովորույթները, ավանդույթներից շատերը, իսկ դրանց վերականգնման փորձը տվյալ տարածքներում չի կարող համարժեք լինել կորսվածի համադրությամբ: Ուստի Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքներից մեկը պետք է համարել հենց հայության ինքնության ոչնչացումը և վերհանել դրա հետևանքով առաջացած վնասի հատուցման հնարավոր իրավական միջոցները:

Հետազոտության սույն հատվածի շրջանակներում վերլուծության առարկա են հանդիսանալու այն հնարավոր իրավական միջոցները, որոնք կարող են ուղղվել արևմտահայ տարրի ոչնչացման արդյունքում առաջացած հետևանքների հաղթահարմանը:

Հայոց ցեղասպանության ուղղակի (անմիջական) հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցների վերլուծություն

Իրավական միջոցներով Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարման հարցը քննարկելիս անհրաժեշտ է նախևառաջ անդրադառնալ այն հնարավոր միջազգային իրավական մեխանիզմներին, որոնք հնարավորություն կընձեռեն բարձրացնել Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության հարցը միջազգային մակարդակում:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հարցը միջազգային դատական ատյաններում բարձրացնելն անուղղակիորեն կարող է հանգեցնել Հայոց ցեղասպանության եղելության և որակման հարցին անդրադառնալուն, հետևաբար՝ միջազգային մակարդակում Հայոց ցեղասպանության իրավական հետևանքների հաղթահարմանն ուղղված հայցապահանջներ

ներկայացնելու պարագայում անհրաժեշտ է չափազանց աչալուրջ մոտեցում դրսևորել:

Անհրաժեշտ է նաև հստակեցնել, թե հայեցակարգային առումով ի՞նչ կարգի իրավական միջոցներով է պետք առաջնորդվել՝ դատական, թե արտադատական: Արտադատական մեխանիզմները (բանակցություններ, հաշտեցման կամ այլ հանձնաժողովներ և այլն) շատ ավելի ճկուն են, թեև պարտադիրության ավելի նվազ աստիճան կարող են ունենալ, քան, օրինակ, դատական կամ արբիտրաժային մեխանիզմները: Վերջինները, իրենց հերթին, պարտադիրության առավել մեծ աստիճան ունեն, սակայն միաժամանակ բավականին կարծր են և ժամանակատար:

Արտադատական մեխանիզմների միջոցով Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարման հետ կապված հարցերը դուրս են սույն հետազոտության շրջանակներից, քանի որ վերջիններս առավելապես կրում են քաղաքական բնույթ և կարող են ընդունել կողմերի համար ցանկացած ընդունելի ձևաչափ՝ պայմանով, որ վերջիններս չեն հակասում միջազգային իրավունքի նորմերին:

Առավել ուշագրավ է միջազգային դատական ատյանների միջոցով Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հիմնահարցերի քննարկումը, քանի որ վերջիններս ենթադրում են համապատասխան իրավական նախապայմանների և ընթացակարգի առկայություն և դրանց խստագույն պահպանություն:

Այսօր միջազգային ասպարեզում ձևավորվել է միջազգային դատական մարմինների մի ամբողջ համակարգ, որոնք օժտված են իրավազորությամբ իրավական հարցերի որոշակի շրջանակի նկատմամբ (Միջազգային քրեական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Եվրոպական միության դատարան, նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի համար ստեղծված *ad hoc* տրիբունալներ, միջազգայնացված (հիբրիդային) տրիբունալներ և այլն):

Այդուհանդերձ, տվյալ համակարգում միջազգային վեճերի լուծման գործում գերակայող դերը շարունակում է պատ-

կանել ՄԱԿ-ի միջազգային դատարանին՝ ՄԱԿ-ի գլխավոր դատական ատյանին:

Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան հոդված 9-ում նախատեսում է, որ *«Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանության կամ սույն Կոնվենցիայի III հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Արդարադատության միջազգային դատարանի քննությանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»*[812]:

Ինչպես հայտնի է, և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Թուրքիայի Հանրապետությունը համապատասխանաբար՝ 1993 թ. հունիսի 23-ից և 1950 թ. հուլիսի 31-ից Ցեղասպանության մասին կոնվենցիայի մասնակիցներ են: Ավելին, ինչպես Հայաստանը, այնպես էլ Թուրքիան որևէ վերապահում չեն արել հիշատակված Կոնվենցիայի հոդված 9-ի, ինչպես նաև դրա այլ հոդվածների կապակցությամբ: Հետևաբար, Հայոց ցեղասպանության հարցը ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննության առարկա կարող էր դառնալ արդեն 1951 թ. հունվարի 12-ից (կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ամսաթվից), սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ կազմում Հայկական ԽՍՀ միջազգային իրավասուբյեկտությունը, սոսկ անվանական բնույթ էր կրում, նման գործի հարուցումը գործնականում անհնար էր:

Հայաստանի Հանրապետությունն արդեն ավելի քան 20 տարի օժտված է Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության հարցը ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննությանը միակողմանի կարգով՝ Կոնվենցիայի հոդված 9-ի հիման վրա փոխանցելու իրավունքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիայի Հան-

---

[812] Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Adopted by the General Assembly of the. United Nations on 9 December 1948, United Nations— Treaty Series, 1951, vol. 78, No. 1021, p. 282.

բապետությունը Ցեղասպանության մասին կոնվենցիայի վավերացմամբ (առանց հոդված 9-ի վերաբերյալ վերապահման) ճանաչել է դատարանի իրավազորությունն այդ հարցի կապակցությամբ: Սակայն տվյալ դեպքում Հայաստանը կարող է բախվել բազմաթիվ ստորջրյա խութերի, որոնցից կարելի է հիշատակել Կոնվենցիայի հետադարձության, Թուրքիայի Հանրապետության իրավահաջորդության, կոնվենցիայի տարածքային կիրառելիության հետ կապված հարցերը և այլն:

Պարզելու համար, թե արդյոք դատարանն օժտված է Ցեղասպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա գործը քննելու իրավազորությամբ, դատարանին անհրաժեշտ է հաստատել, թե գոյություն ունի՞, արդյոք, կողմերի միջև տվյալ դրույթի գործողության տակ ընկնող վեճ[813]:

Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության մասին գործով (Բոսնիան և Հերցեգովինան՝ ընդդեմ Հարավսլավիայի) որոշման մեջ դատարանը վեճի առկայության հաստատման համար, դիտարկելով կողմերի բևեռային և իրարամերժ դիրքորոշումները և հղում կատարելով նախկինում իր իսկ կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներին, եկավ այն եզրակացության, որ «ձևավորված պրակտիկային համապատասխան… շարունակում է գոյություն ունենալ մի իրավիճակ, որում երկու կողմերն զբաղեցնում են ծայրահեղ հակադիր տեսակետներ որոշակի պայմանագրային պարտավորությունների կատարման կամ չկատարման հարցի վերաբերյալ»[814], և որ Հարավսլավիայի կողմից Բոսնիայի և Հերցեգովինայի ներկայացրած պահանջների ժխտման պատճառով նրանց միջև «առկա է իրավական վեճ»[815]:

---

[813] Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996, para. 27.

[814] Interpretation of Peace Treaties with Bulgaria, Hungary and Romania, First Phase, Advisory Opinion, I.C.J. Reports 1950, p. 74.

[815] East Timor (Portugal v. Australia), I.C.J. Reports 1995, p. 100, para 22. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime

Հիմք ընդունելով դատարանի նշված իրավական դիրքորոշումը՝ կարելի է վստահորեն հայտարարել, որ Հայոց ցեղասպանության հարցում Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունն ունեն հստակ արտահայտված ծայրահեղ հակադիր դիրքորոշումներ որոշակի միջազգային իրավական պարտավորությունների կատարման կամ չկատարման վերաբերյալ, որոնք, մասնավորապես, շարադրված են 1948թ. դեկտեմբերի 9-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայում: Հետևաբար, հղում կատարելով ՄԱԿ-ի միջազգային դատարանի պրակտիկային՝ կարելի է ենթադրել, որ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից իրավաբանական բնույթի միջազգային վեճ է: Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է հայտարարել, որ տվյալ հարցում Միջազգային դատարանի *ratione materiae* իրավազորությունը որևիցե էական առարկություն առաջացնել չի կարող:

Ավելի բարդ է դատարանի *ratione temporis* իրավազորության հարցը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վեճի առարկա կազմող արարքները տեղի են ունեցել Ցեղասպանության մասին կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց շատ ավելի վաղ: Կարևոր ռազմավարական ուղենիշ այս առումով կարող է հանդիսանալ ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից *Խորվաթիան ընդդեմ Սերբիայի* գործով 2015 թ. մարտի 3-ին կայացրած վճիռը, որը, ըստ էության, բացառել է Ցեղասպանության կոնվենցիայի հետադարձ կիրառելիության հիման վրա Հայոց ցեղասպանության վերաբերյալ պահանջներ ներկայացնելու հնարավորությունը: Նշված վճռում ՄԱԿ-ի միջազգային դատարանը, մասնավորապես, արտահայտեց իրավական դիրքորոշում առ այն, որ «ցեղասպանությունը պատժելու պարտականությունը, ինչպես և [Ցեղասպանության մասին 1948թ.] կոնվենցիայի այլ նյութական դրույթները նախատեսված են եղել ապագայում տեղի ունեցող արարքների նկատմամբ կիրառվելու համար և ոչ թե Երկրորդ համաշ-

---

Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) – Judgments – Preliminary Objections – 11 July 1996, para. 29.

խարհային պատերազմի կամ որևէ ժամանակ անցյալում տեղի ունեցած արարքների նկատմամբ կիրառվելու համար»[816]: Այլ կերպ ասած, Դատարանն արդեն իսկ տեսականորեն սահմանափակել է Կոնվենցիայի 9-րդ հոդվածի հիման վրա Թուրքիայի դեմ իրավական պահանջ ներկայացնելու իրավական հնարավորությունը:

Ըստ էության, Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ը ՄԱԿ-ի միջազգային դատարանում միակողմանի դիմումի հիման վրա գործ հարուցելու միակ իրավական հիմքն է, քանի որ վեճի կողմերը ճանաչել են դատարանի իրավազորությունը՝ դառնալով կոնվենցիայի մասնակից: Բոլոր մնացած դեպքերում, գտնում ենք, որ կողմերը պետք է գործը ներկայացնեն Միջազգային դատարան երկկողմ համաձայնության, այն է՝ տվյալ հարցով դատարանի իրավազորությունը ճանաչող հատուկ համաձայնագրի հիման վրա:

Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը, որևէ միջազգային պայմանագրի դրույթի հիման վրա, այս պարագայում՝ Ցեղասպանության կոնվենցիայի 9-րդ հոդվածի, իրավազորություն իրականացնելիս սահմանափակված է միայն այդ կոնվենցիայի դրույթների կիրառմամբ:[817] Այդ իսկ պատճառով, դատարանը նույնիսկ չի փորձի կիրառել մինչև Կոնվենցիայի ընդունումը գոյություն ունեցած սովորութային իրավունքն իր իրավազորությունը հաստատելու համար:

Վերջնական եզրահանգումն այն է, որ որպես պայմանագրային իրավազորության հիմք՝ պետք է փորձել ներկայացնել Թուրքիայի և Հայաստանի կողմից վավերացված այլ միջազգային իրավական փաստաթղթեր, որոնցում առկա է դատարանի իրավազորությանն առնչվող դրույթ:

---

[816]Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Croatia v. Serbia), 2015 I.C.J-unreported, p. 97.

[817]Այս հարցով առավել մանրամասն տե՛ս Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Georgia v. Russian Federation), Preliminary Objections, Judgment, I.C.J. Reports 2011, p. 70:

Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան ՄԱԿ-ի միջազգային դատարան դիմելու հնարավորություն ընձեռող միակ փաստաթուղթը չէ, քանզի դառնալով Միավորված ազգերի կազմակերպության անդամ՝ ինչպես Հայաստանի Հանրապետությունը, այնպես էլ Թուրքիայի Հանրապետությունը ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 93-ի մաս 1-ի համաձայն՝ դարձել են, Միջազգային դատարանի կանոնադրության *ipso facto* կողմեր: Դատարանի կանոնադրության հոդված 36-ի մաս 1-ը սահմանում է, որ «Դատարանի իրավասությանն են վերաբերում բոլոր գործերը, որոնք կփոխանցեն իրեն կողմերը…»[818]: Սակայն պետությունը, դառնալով Միջազգային դատարանի Կանոնադրության մասնակից, ինքնաբերաբար չի ճանաչում դատարանի պարտադիր իրավազորությունը բոլոր իրավական հարցերով, դրա համար պետություններից պահանջվում է առանձին ուղղակի արտահայտված համաձայնություն ցանկացած իրավական վեճի շուրջ: Միջազգային դատարանի կանոնադրության հոդված 36-ի մաս 2-ը սահմանում է, որ «սույն Կանոնադրության մասնակից պետությունները կարող են ցանկացած ժամանակ հայտարարել, որ իրենք ճանաչում են՝ առանց դրա վերաբերյալ հատուկ համաձայնության *ipso facto* նման պարտավորություն ստանձնած ցանկացած այլ պետության վերաբերյալ, դատարանի իրավազորությունը պարտադիր բոլոր իրավական հարցերով, որոնք վերաբերում են.

ա) պայմանագրի մեկնաբանությանը,

բ) միջազգային իրավունքի ցանկացած հարցի,

գ) փաստի առկայությանը, որը, հաստատվելու պարագայում, իրենից կներկայացնի միջազգային պարտավորության խախտում,

դ) միջազգային պարտավորության խախտման համար հասանելի հատուցման բնույթին և չափերին»[819]*:*

Այսօր ո՛չ Հայաստանի Հանրապետությունը, ո՛չ էլ Թուրքիայի Հանրապետությունը նման հայտարարություններ չեն

[818] The Statute of tJhe International Court of Justice, Article 36/1.

[819] The Statute of tJhe International Court of Justice, Article 36/2.

կատարել ո՛չ միակողմանի, ո՛չ փոխադարձությամբ պայմանավորված և ո՛չ էլ որոշակի ժամկետով սահմանափակված, ինչպես դա սահմանված է նշված հոդվածի մաս 3-ում:

Կանոնադրության հոդված 40-ի մաս 1-ը սահմանում է, որ դատարանում գործերը հարուցվում են կախված հանգամանքներից կամ հատուկ համաձայնության նոտիֆիկացիայով, կամ Քարտուղարին հասցեագրված գրավոր դիմումի հիման վրա: Երկու դեպքերում էլ պետք է նշված լինեն վեճի առարկան և կողմերը: Եթե Միջազգային դատարանում Թուրքիայի Հանրապետության դեմ գործ հարուցելու դեպքում Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ի հիման վրա բավարար կլիներ Դատարանի Քարտուղարին հասցեագրված գրավոր դիմում ուղարկելը, ապա Հայոց ցեղասպանության վերաբերյալ գործի հարուցման դեպքում առանց Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված 9-ին հղում կատարելու անհրաժեշտ է հատուկ համաձայնության կայացում, այսինքն՝ տվյալ գործը դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ կողմերի փոխադարձ համաձայնության կայացումը՝ հաշվի առնելով տվյալ կոնկրետ դեպքում դատարանի պարտադիր իրավազորությունը ճանաչելու անհրաժեշտությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ըստ Միջազգային դատարանի կանոնակարգի հոդված 39-ի մաս 1-ի՝ Կանոնադրության հոդված 40-ի մաս 1-ի համաձայն՝ հատուկ համաձայնության ծանուցման միջոցով դատարանում գործ հարուցելու դեպքում այդ ծանուցումը կարող է հանձնվել Կողմերի կողմից համատեղ կամ մեկ կամ մի քանի Կողմի կողմից: Եթե ծանուցումը համատեղ չէ, դրա վավերացված օրինակը Քարտուղարի կողմից անմիջապես փոխանցվում է մյուս կողմին: Նույն հոդվածի մաս 2-ը սահմանում է, որ «Ցանկացած դեպքում ծանուցման պարագայում տրամադրվում է հատուկ համաձայնության բնօրինակը կամ վավերացրած պատճենը: Բացի դրանից, ծանուցման մեջ հստակ նշվում են վեճի առարկան և դրա կողմերը, եթե դա չի բխում հատուկ համաձայնությունից»:

Հետևաբար, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Միջազգային դատարանում գործ հարուցելը հատուկ համաձայ-

նագրի հիման վրա լիովին հնարավոր է և իրավաչափ, քանի որ տվյալ հարցը միաժամանակ վերաբերում է և՛ պայմանագրի մեկնաբանությանը, և՛ միջազգային իրավունքի բազում հարցերին (մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունումը ցեղասպանությունն արգելող նորմերի առկայություն), և՛ փաստի առկայությանը, որը, հաստատվելու պարագայում, իրենից կներկայացնի միջազգային պարտավորության խախտում (Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքների հաստատում), և՛ միջազգային պարտավորության խախտման համար հատուցման բնույթին և չափերին, այլ կերպ ասած՝ Միջազգային դատարանի կանոնադրության հոդված 36-ի մաս 2-ի համաձայն՝ Միջազգային դատարանի իրավազորությանը վերաբերող գրեթե բոլոր իրավական հարցերին:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է մեկ անգամ ևս նշել, որ ի տարբերություն Կոնվենցիայի հոդված 9-ի հիման վրա դատարանում գործ հարուցելուն՝ ընդհանուր հիմունքներով գործ հարուցելու դեպքում անհրաժեշտ է վեճի մեջ ներքաշված բոլոր կողմերի համաձայնությունը, որը Թուրքիայից ստանալն այնքան էլ իրատեսական չի թվում՝ հաշվի առնելով տվյալ հարցում վերջինիս ծայրահեղ ժխտողական դիրքորոշումը: Այդուհանդերձ, գտնում ենք, որ հատուկ համաձայնության հիման վրա գործ հարուցելու առավելություններից մեկն այն է, որ դատարանը տվյալ դեպքում կլուծի ոչ միայն Թուրքիայի կողմից Ցեղասպանության մասին կոնվենցիայի խախտման հետ կապված հարցերը, այլ նաև, օգտագործելով իրավունքի այլ աղբյուրները, գործը կլուծի ըստ էության՝ ամրագրելով Հայոց ցեղասպանության հանցակազմը կազմող փաստերում լուրջ միջազգային իրավախախտման անհրաժեշտ տարրերի առկայությունը:

Ըստ էության, դատարանը կարող է օգտագործել իրավունքի բոլոր աղբյուրները, որոնք կիրառելու իրավունք ունի՝ համաձայն հոդված 38-ի մաս 1-ի, մասնավորապես՝ միջազգային կոնվենցիաները՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ, որոնք սահմանում են վիճող պետությունների կողմից որոշա-

կիորեն ճանաչված կանոններ, միջազգային սովորույթները՝ որպես իրավական նորմ ճանաչված համընդհանուր պրակտիկայի ապացույց, քաղաքակիրթ պետությունների կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները, հոդված 59-ում նշված վերապահմամբ՝ դատական որոշումները, տարբեր ազգերի հանրային իրավունքի առավել որակյալ մասնագետների դոկտրինները՝ որպես իրավական նորմերի հաստատման օժանդակ միջոց:

Շատ դեպքերում, իհարկե, կիրառելի իրավունքի աղբյուրների մասին հարցը կախված է հատուկ համաձայնության կոնկրետ դրույթներից և կողմերի կամաարտահայտությունից: Բացի դրանից, կողմերի համապատասխան համաձայնությունն ստանալիս դատարանը՝ Կանոնադրության հոդված 38-ի մաս 2-ի հիման վրա, կարող է լուծել այդ գործը *ex aequo et bono*[820]: Սակայն այդ հնարավորությունը պետությունների կողմից երբևիցե դեռ չի օգտագործվել[821]:

Պետությունների միջև վեճ քննելու իրավազորությունից զատ, ՄԱԿ-ի միջազգային դատարանը, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 96-րդ հոդվածի համաձայն, Գլխավոր ասամբլեան կամ Անվտանգության խորհուրդը կարող են դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարանին՝ որևէ իրավական հարցի առնչությամբ խորհրդատվական եզրակացություն տալու նպատակով: Նույն հոդվածի համաձայն ՄԱԿ-ի այլ մարմինները և մասնագիտացված կազմակերպությունները ևս կարող են, Գլխավոր ասամբլեայի կողմից թույլտվություն ստանալու դեպքում, հայցել դատարանին տրամադրել խորհրդատվական եզրակացություն՝ իրենց գործունեության շրջանակներում ծագող իրավական հարցի առնչությամբ: Մինչ օրս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից խորհրդատվական եզրակացություն հայցելու թույլտվության համար դիմել են՝ Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուր-

---

[820] Արդարությամբ և բարի կամքով (լատ.):

[821] Տե՛ս Лукашук И.И., Международное право. Особенная часть. Учебник, М., Издательство БЕК, 1998, с. 130.

դը, Քարտուղարությունը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը[822]:

ՄԱԿ-ի դատարանի խորհրդատվական եզրակացությունները, ի տարբերություն իրավական վեճով կայացված վճիռների, չեն հանդիսանում իրավաբանորեն պարտադիր և ունեն լոկ խորհրդատվական բնույթ:[823] Չնայած որ նշված եզրակացությունները չունեն պարտադիր իրավաբանական ուժ, միևնույն է, դատարանի հեղինակությունն այնքան բարձր է, որ նույնիսկ առանց պարտադիր իրավաբանական ուժի հանգամանքի Խորհրդատվական եզրակացությունները խստորեն հաշվի են առնվում և իրավաբանական նախադեպային նշանակությամբ որևէ կերպ չեն տարբերվում վճիռներից:[824]

Իհարկե, ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից նման խորհրդատվական եզրակացություն հայցելը Հայաստանի Հանրապետությունից և այլ շահագրգիռ սուբյեկտներից կպահանջի հսկայածավալ դիվանագիտական աշխատանք, քանզի տվյալ պարագայում նման խորհրդատվական եզրակացություն հայցելը միջնորդավորված է լինելու ՄԱԿ-ի և դրա մասնագիտացված հաստատությունների կամքով: Այդուհանդերձ, նման խորհրդատվական եզրակացության հայցումն առավել իրատեսական է թվում՝ Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության առնչությամբ գործով ՄԱԿ-ի միջազգային դատարանի իրավազորության ճանաչման հեռանկարների համեմատությամբ:

ՄԱԿ-ի միջազգային դատարանից Հայոց ցեղասպանությանն առնչվող խորհրդատվական եզրակացություն հայցելու պարագայում կարևորագույն նշանակություն կունենա ներկայացված հարցի հստակ ձևակերպումը՝ հնարավոր բացասական պատասխանից խուսափելու համար: Հարցը, մասնա-

---

[822] Տե՛ս Mahasen M. Aljahoub, The Advisory Function of the International Court of Justice. 1946-2005. Springer, 2006, pp.46-56.

[823] ICJ Reports, 1950, p. 71. Հետագա գործերում այս դիրքորոշումը կրկին անգամ վերահաստատվել է, այսպես, օրինակ՝ ICJ Reports, 1956, p. 84.

[824] Mahasen M. Aljahoub, The Advisory Function of the International Court of Justice. 1946-2005. Springer, 2006, pp.116-121.

վորապես, կարող է վերաբերել նրան, թե ինչ իրավական հետևանքներ է առաջացնում Օսմանյան կայսրության կողմից հայ ազգաբնակչության նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարված արարքների ամբողջությունը:

Նման քայլի դիմելիս անհրաժեշտ է խորապես և բազմակողմանի քննարկել հարցը՝ ներգրավելով միջազգային ճանաչված փորձագետների: Խորհրդատվական եզրակացություն հայցելու դեպքում չպետք է մոռանալ, որ դատարանն իրավասություն ունի ներկայացված հարցը փոփոխել, միևնույն ժամանակ, Գլխավոր ասամբլեայի օրակարգում հարցի ձևակերպումն այնպիսին պետք է լինի, որ հնարավորինս դյուրին դարձնի դրա ընդունումը:

Հայոց ցեղասպանության անմիջական հետևանքների հաղթահարմանն ուղղված միջազգային իրավական հատուցման հնարավոր ձևերի և եղանակների վերլուծություն

Ցեղասպանության համար միջազգային իրավական պատասխանատվության ձևերի և տեսակների հիմնահարցը ցայսօր շարունակում է մնալ ժամանակակից միջազգային իրավունքի ամենաբարդ խնդիրներից մեկը՝ ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլ նաև ցեղասպանության մյուս դեպքերի պարագայում: Դա, առաջին հերթին, պայմանավորված է միջազգային իրավախախտումների համար պատասխանատվության ձևերի և տեսակների որոշման հարցում հստակ պրակտիկայի բացակայությամբ: Այդուհանդերձ, հետազոտողների ճնշող մեծամասնությունը, միջազգային պրակտիկան և միջազգային իրավական փաստաթղթերը միասնական են մի հարցում՝ ցանկացած միջազգային իրավախախտում ենթադրում է դրանով պատճառված վնասի հատուցում:

«Պետությունների պատասխանատվության մասին հոդվածները» վնասի հատուցմանը նվիրված հոդված 31-ի կետ 1-ում սահմանել են, որ «միջազգային հակահիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է միջազգային հակահիրավական արարքով պատճառ-

ված վնասի համար լիարժեք հատուցում տրամադրել»[825]: Նշված հոդվածի կետ 2-ի համաձայն՝ «վնասը ներառում է պետության հակահիրավական արարքով պատճառված ցանկացած կորուստ՝ ինչպես նյութական, այնպես էլ բարոյական»[826]:

Վնասի հատուցման բազմաթիվ ձևեր գոյություն ունեն: Այդ ձևերը ներկայացնում են, մի կողմից, վնասի լիակատար հատուցման պարտականություն, մյուս կողմից՝ նման հատուցում ստանալու իրավունք[827]: «Պատասխանատվության մասին հոդվածների» հոդված 34-ի համաձայն՝ «Միջազգային հակահիրավական արարքով պատճառված վնասի լիարժեք հատուցումն իրականացվում է ռեստիտուցիայի, կոմպենսացիայի և սատիսֆակցիայի ձևով՝ կամ առանձին, կամ դրանց համադրությամբ...»[828]: «Պատասխանատվության մասին հոդվածները» պատահականորեն չեն թվարկել պատասխանատվության տվյալ տեսակները՝ նշված հերթականությամբ. փաստաթղթի՝ ռեստիտուցիային, կոմպենսացիային և սատիսֆակցիային նվիրված համապատասխանաբար՝ 35, 36 և 37 հոդվածները սահմանել են դրանց կիրառման որոշակի աստիճանակարգություն: Որպես հատուցման հիմնական և օպտիմալ միջոց ճանաչվել է ռեստիտուցիան: Կոմպենսացիան գտնվում է երկրորդ տեղում և կիրառվում է այն դեպքում, եթե ռեստիտուցիան ոչ արդյունավետ է կամ կապված է այնպիսի բեռի հետ, որն ընդհանրապես անհամաչափ է կոմպենսացիայից ստացված օգտին: Սատիսֆակցիան բնութագրվում է որպես լրացուցիչ, բացառիկ միջոց, որը կիրառվում է այն դեպքում, երբ ռեստիտուցիայի կամ կոմպենսացիայի կիրառումն անհնարին կամ ոչ բավարար է վնասը հատուցելու համար:

Պետք է նշել, որ միջազգային իրավական գրականության մեջ, համենայնդեպս, մինչև «Պատասխանատվության մասին

---

[825] Responsibility of States for Internationally Wrongful Acts, General Assembly resolution 56/83 of 12 December 2001, United Nations, 2005, Article 31/1.

[826] Նույն տեղում, Article 31/2.

[827] Տե՛ս Лукашук И.И., Право международной ответственности, М., «Волтерс Клувер», 2004, с. 211.

[828] Responsibility of States for Internationally Wrongful Acts, Article 34.

հոդվածների» ընդունումը, պատասխանատվության ձևերի հարցում որպես հիմք ընդունվում էին այլ մոտեցումներ, որոնց համաձայն՝ վերջիններս բաժանվում էին նյութականի և ոչ նյութականի կամ քաղաքականի (իսկ երբեմն՝ նաև բարոյականի): Չներքաշվելով տեսական վեճի մեջ պատասխանատվության ձևերի դասակարգման ճշգրիտ մեթոդաբանության վերաբերյալ՝ հետազոտության սույն հատվածի շրջանակներում կառաջնորդվենք «Պետությունների պատասխանատվության մասին հոդվածներում» ամրագրված իրավախախտմամբ պատճառված վնասի հատուցմանն ուղղված եղանակներով, նախևառաջ անդրադառնալով պատասխանատվության այն ձևերին, որոնք կարող են կիրառելի լինել Հայոց ցեղասպանությամբ պատճառված նյութական և բարոյական վնասի հատուցման պարագայում:

Ռեստիտուցիա. ռեստիտուցիան, որպես միջազգային իրավական պատասխանատվության ձև, մինչև միջազգային հակաիրավական արարքը գոյություն ունեցած վիճակի վերականգնմանն ուղղված միջոցառումների ամբողջությունն է: Ռեստիտուցիայի նման մեկնաբանությունը հանրաճանաչ է համարվում միջազգային իրավունքում: Այսպես, դեռևս Դ. Բ. Լևինը նշում էր, որ «ռեստիտուցիան իրերի, նյութական արժեքների նախկին վիճակի վերականգնումն է՝ այդ թվում նաև բնեղենով»[829]: Ռեստիտուցիան միջազգային իրավական պատասխանատվության առավել առաջնային ձևն է, քանի որ հատուցման հիմնախնդիրը լուծելիս նախևառաջ առաջանում է մինչև հակաիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակի վերականգնման հնարավորության խնդիրը: Ռեստիտուցիայի առաջնային բնույթը հաստատվել է դեռևս Միջազգային արդարադատության մշտական պալատի կողմից Խոժուվի գործարանի գործով կայացրած որոշմամբ[830]: Ռեստիտուցիան, որպես այդպիսին, կարող է ներառել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական պատասխանատվութ-

---

[829] Տե՛ս Левин Д.Б., Ответственность государств в современном международном праве, М., «Международные отношения», 1966, с. 115.

[830] Factory at Chorzów, Merits, 1928, P.C.I.J Series A, No. 17, p. 48.

յան ձևեր: Միջազգային իրավունքի գիտության մեջ առանձնացնում են ռեստիտուցիայի երկու տարատեսակներ՝ ռեստիտուցիա բնեղենով (*restitutio in integrum*), որը նախկին նյութական վիճակի վերականգնումն է, և ռեստորացիա կամ իրավական ռեստիտուցիա (*restitutio in pristinum*), որը խախտված իրավունքների վերականգնումն է: Տվյալ տարատեսակին են դասվում, մասնավորապես, ապօրինի բռնազավթման դադարեցումը, օրենսդրական, ենթաօրենսդրական, վարչական և դատական ակտերի անվավեր ճանաչումը և այլն[831]:

Պատասխանատվության մասին հոդվածներում ռեստիտուցիային նվիրված է հոդված 35-ը, համաձայն որի՝ «միջազգային հակահիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է ռեստիտուցիա իրականացնել, այսինքն՝ վերականգնել մինչև հակահիրավական արարքի կատարումը գոյություն ունեցած վիճակը, այն ծավալով, որով այդ ռեստիտուցիան.

ա) նյութապես անհնար չէ,

բ) չի առաջացնում կոմպենսացիայից ստացված օգտին ակնհայտորեն անհամաչափ բեռ»[832]:

Անշուշտ, Հայոց ցեղասպանության պարագայում ևս ռեստիտուցիան ունի առաջնային նշանակություն: Ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման համար սովորաբար անհրաժեշտ է լինում ռեստիտուցիայի բոլոր հնարավոր տարատեսակների՝ ինչպես նյութական (restitutio in integrum), այնպես էլ ոչ նյութական (restitutio in pristinum), համադրումը:

Ցեղասպանության դեպքում նյութական ռեստիտուցիան ներառում է պատճառված նյութական վնասի՝ բնեղենով հատուցումը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ցեղասպանությունը հաճախ ուղեկցվում է հետապնդվող խմբի ներկայացուցիչներին պատճառած լուրջ նյութական վնասով, քանզի վերջիններս սովորաբար ստիպված են լինում լքել իրենց շարժական և անշարժ գույքը (տներ, կալվածքներ, խնայողություն-

---

[831] Ավելի մանրամասն տե՛ս Курс международного права: В 7 т. Т. 3. Отв. ред. Н.А. Ушаков, М., «Наука», 1990, с. 237.

[832] Responsibility of States for Internationally Wrongful Acts, Article 35.

ներ, արժեթղթեր և այլն): Որպես կանոն, ցեղասպանության զոհերի ունեցվածքը կամ բռնագրավվում է պետության կողմից, կամ ոչնչացվում, կամ պարզապես հափշտակվում է դիակապտիչների կողմից:

Հետևաբար, ցեղասպանության հանցագործության դեպքում պատասխանատվություն կրող պետությունը, առաջին հերթին, պարտավոր է հատուցել այդ հանցագործությամբ պատճառված վնասը բնեղենով, որը հիմնականում ներառում է հանցագործության արդյունքում ապօրինաբար օտարված գույքը ցեղասպանության զոհերին կամ նրանց ժառանգներին և իրավահաջորդներին վերադարձնելը, իսկ վնասված լինելու դեպքում՝ այն վերականգնելը:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի 2007թ. որոշման մեջ դիմողը՝ Բոսնիան և Հերցեգովինան, ընդունել էր, որ պատշաճ չէ դատարանից պահանջել պատասխանողի վրա նյութական ռեստիտուցիայի *restitutio in integrum*, այլ կերպ ասած՝ մինչև հակաիրավական արարքն առկա վիճակի վերականգնման պարտավորություն դնելը, քանզի ռեստիտուցիան հնարավոր չէ[833]:

Ցավոք, ավելի քան մեկ դար անց դժվար է ակնկալել Հայոց ցեղասպանության զոհերին պատկանած շարժական գույքը վերադարձնելը՝ չպահպանված լինելու պատճառով: Երևի թե միակ բացառությունը կարող են կազմել հայ մշակութային արժեքները, որոնց վերադարձի հեռանկարները մասնավոր հայցերի շրջանակներում կքննարկենք ստորև:

Այս տեսանկյունից, մեր կարծիքով, բնեղենով նյութական ռեստիտուցիան (*restitutio in integrum*) դժվար թե Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության հիմնական ձև հանդիսանա: Սակայն նշվածը որևիցե կերպ չպետք է ընկալվի իբրև ընդհանրապես պատասխանատվության նման տեսակի բացառում: Հայոց ցեղասպանության զոհերին պատկանած

---

[833] Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.164, para. 460, http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf.

գույքը պահպանված լինելու վերաբերյալ բավարար հիմքերի ու պահպանված իրավական ապացույցների առկայության բոլոր դեպքերում ռեստիտուցիայի պահանջ կարող է ներկայացվել:

Այլ կերպ է դրված հարցը ռեստորացիայի (այսպես կոչված՝ «իրավական ռեստիտուցիայի»), այսինքն՝ մինչև տվյալ հանցագործությունը գոյություն ունեցած իրավական վիճակի՝ *status quo ante*-ի վերականգնման դեպքում: Հենց այս իմաստով էլ ռեստիտուցիան հիմնարար նշանակություն ունի Հայոց ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման գործում:

Իրավական ռեստիտուցիայի ձևեր կարող են լինել՝ ի խախտումն միջազգային իրավունքի ընդունված օրենքի անվավեր ճանաչումը կամ հակաիրավական կերպով ընդունված վարչական կամ դատական ակտի վերանայումը: Կարող է նաև որոշակի միջազգային պայմանագիրը դադարեցնելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու պահանջ ներկայացվել, եթե միջազգային իրավունքը դա թույլ է տալիս[834]:

Նշված ձևերից ցեղասպանության դեպքում առաջնային նշանակություն ունեն օրենսդրական փոփոխությունները, առաջին հերթին՝ ցեղասպանության քաղաքականությունն ուղղակի կամ անուղղակի կերպով լեգիտիմացնող օրենքներն ու համապատասխան նորմատիվ իրավական ակտերն անվավեր ճանաչելը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ցեղասպանության հանցագործության կատարման դեպքում օրենսդիր մարմիններն ընդունում են օրենքներ, որոնք ուղղակի կամ քողարկված ձևով լեգիտիմացնում են ցեղասպանության քաղաքականությունը: Նման չքողարկված լեգիտիմացման դեպքերից են, մասնավորապես, նացիստական Գերմանիայում ընդունված՝ ռասայական սեգրեգացիան ամրագրող փաստաթղթերը (օրինակ՝ 1935թ. սեպտեմբերի 15-ի Նյուրնբերգյան օրենքները), իսկ քողարկված լեգիտիմացման դեպքերից՝ Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից անմիջապես հետո ընդունված օրենքները, մասնավորապես՝ հա-

---

[834] Տե՛ս Лукашук И.И., Право международной ответственности, М., «Волтерс Клувер», 2004, с. 214.

յերի սեփականության բռնագրավումն օրինականացնող և Թուրքիա նրանց վերադառնալու և բնակություն հաստատելու իրավունքից զրկող օրենքները և այլն[835]: Հայոց ցեղասպանության դեպքում իրավական ռեստիտուցիան կարող է ներառել, մասնավորապես, նշված իրավական ակտերն անվավեր ճանաչելը, քանզի առանց դրա անհնար է Հայոց ցեղասպանությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը:

Ընդ որում, չեղարկվել կարող են ոչ միայն դեռևս գործող օրենքները, այլ նաև արդեն իսկ ուժը կորցրածները՝ ի սկզբանե (*ex tunc*) ոչ իրավաչափ լինելու հիմքով: Նման «ի սկզբանե» օրենքները չեղարկելու պարագայում կչեղարկվեն նաև դրանց հիման վրա ընդունված իրավակիրառ ակտերը՝ հնարավորություն ընձեռելով Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդներին վերականգնել իրենց նախնիների համապատասխան իրավունքները:

Նոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունումը ևս պետք է դիտել որպես ցեղասպանության հանցագործության համար իրավական ռեստիտուցիայի դրսևորում: Ելնելով կոնկրետ իրավիճակից՝ տվյալ օրենսդրական ակտերը կարող են վերաբերել քրեական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելուն, ցեղասպանության փաստը չճանաչելու համար պատասխանատվություն նախատեսելուն (Գերմանիայի օրինակով), խմբի անդամներին պատճառված

---

[835] Այսպես, օրինակ, 1923թ. սեպտեմբերին Լոզանի պայմանագրի վավերացումից անմիջապես հետո Թուրքիայում ընդունվեց օրենք, որով վերադառնալու իրավունքից զրկվում էին Կիլիկիայից և արևելյան վիլայեթներից «արտագաղթած» հայերը, իսկ 1927թ. մայիսի 23-ին օրենք ընդունվեց, որով գործադիր իշխանությունը լիազորվում էր հայտարարել «Օսմանյան կայսրության այն հպատակներին, որոնք անկախության համար պատերազմի ժամանակ ազգային պայքարին մասնակցություն չեն ունեցել, գտնվել են Թուրքիայից դուրս և չեն վերինտեգրվել թուրքական տարածքում 1923թ. հուլիսի 24-ի և սույն օրենքի ընդունման միջև ընկած ժամանակահատվածում՝ զրկված Թուրքիայի քաղաքացու իրենց կարգավիճակից»: Ավելի մանրամասն տե՛ս Барсегов Ю.Г., Геноцид армян - преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, с. 199-200.

նյութական և ոչ նյութական վնասի հատուցմանը նպատակաուղղված միջոցներ ձեռնարկելուն, հասարակությունում հակասությունների հարթեցման աջակցմանն ու հետապնդվող խմբի անդամների ռեաբիլիտացիային և տվյալ հասարակությունում վերջիններիս վերաինտեգրմանը և այլն:

Գտնում ենք, որ սա սոսկ օրինակելի ցանկ է և կարող է ներառել նաև իրավական հատուցման այլ տարատեսակներ: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Հայոց ցեղասպանության հետևանքով ցեղասպանության բազում զոհեր ստիպված էին ապաստան գտնել այլ պետություններում (Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իրան, Պաղեստին, Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան, Սերբիա, Խորվաթիա, Կիպրոս, Ֆրանսիա, Եթովպիա, Եգիպտոս և այլն)՝ վերածվելով փախստականների և կորցնելով կապերն իրենց հայրենակիցների հետ: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ գտնում ենք, որ որպես իրավական ռեստիտուցիայի տարատեսակ, ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը պարտավոր է և կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ուղղված նախնիների բնակության վայրեր ցեղասպանության զոհերի ժառանգների ու իրավահաջորդների վերադարձի և վերաբնակվելու հնարավորության ապահովմանը, ինչը, մեր կարծիքով, լավագույն կերպով կանդրադառնար արևմտահայերի հետագա ասիմիլյացիան կանխարգելելուն և կաջակցեր պատմական հայրենիքում հայկական ազգաբնակչության հետագա վերականգնմանը: Առանց նման պայմանների ստեղծման, առանց ցեղասպանության զոհերին և նրանց ժառանգներին ու իրավահաջորդներին ավանդական բնակության վայրեր վերադառնալու հնարավորության ապահովման՝ անհնար է տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը:

Կոմպենսացիա (փոխհատուցում). «Պետությունների պատասխանատվության մասին հոդվածների» 35-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ռեստիտուցիան բացարձակ բնույթ չի կրում: Այն իրականաց-

վում է այն ծավալով և այն չափով, որով այն անհնար և կոմպենսացիայից ստացված օգտին անհամաչափ չէ:

Կոմպենսացիան (փոխհատուցումը) ցեղասպանությամբ պատճառված վնասի հատուցման համընդգրկուն ձև է: Այն հատկապես կարևոր է Հայոց ցեղասպանության պարագայում և, ըստ էության, կարող է այդ հանցագործության համար նյութական պատասխանատվության կենտրոնական ձև հանդիսանալ:

Ընդհանրապես, ցեղասպանության հանցագործության պարագայում կոմպենսացիան պատճառած վնասի հատուցման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար միջոց է: Կոմպենսացիայի իրավունքն ամրագրված է ընդհանուր միջազգային իրավունքի նորմերով: «Լուզիտանիա» նավի գործով 1923թ. հայտնի արբիտրաժային որոշման մեջ, մասնավորապես, սահմանվում էր, որ ««վնասի հատուցման» հիմնական հայեցակարգը կայանում է կրած վնասի հատուցման՝ հակահիրավական արարքի համար դատական կարգով սահմանված փոխհատուցման (կոմպենսացիայի) վճարման մեջ: Դատական պաշտպանության միջոցը պետք է համապատասխան լինի պատճառված վնասին, որպեսզի տուժող կողմը կարողանա լիարժեք հատուցում ստանալ»[836]:

«Պետությունների պատասխանատվության մասին հոդվածներում» կոմպենսացիայի վերաբերյալ դրույթները սահմանված են հետևյալ կերպ. «Միջազգային հակահիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է փոխհատուցել այդպիսի արարքով պատճառած վնասն այնքանով, որքանով այդ վնասը չի հատուցվում ռեստիտուցիայով»[837]: Նույն հոդվածի կետ 2-ը սահմանել է, որ «Կոմպենսացիան ընդգրկում է ֆինանսական արտահայտությամբ հաշվարկվող ցանկացած վնաս՝ ներառյալ բաց թողնված օգուտն այնքանով, որքանով այն հաստատված է»[838]:

---

[836] «Լուզիտանիա» նավի գործով որոշումը: RIAA Vol. VII (1923), p. 39.

[837] Responsibility of States for Internationally Wrongful Acts, Article 36/1.

[838] Նույն տեղում, Article 36/2.

Ինչպես երևում է նշված դրույթների վերլուծությունից, «Պետությունների պատասխանատվության մասին հոդվածները» կոմպենսացիայի բավական ճկուն բանաձև են որդեգրել, ինչը, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ արտացոլում է միջազգային իրավական պրակտիկան և լիովին հիմնավորված է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր առանձին դեպքում կոմպենսացիայի չափի որոշումը պայմանավորված է համապատասխան իրավախախտման առանձնահատկություններով:

Ընդ որում՝ պետք է նշել, որ դրամով հաշվարկվող վնասը ներառում է ինչպես բուն պետությանը, այնպես էլ դրա ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը[839]: Ցեղասպանության հանցագործության պարագայում առաջնային նշանակություն ունի հենց ցեղասպանության զոհերին, այլ ոչ թե պետությանը պատճառված վնասը: Թեև Հայոց ցեղասպանության արդյունքում հենց Հայաստանի Հանրապետությանն է պատճառվել հսկայական նյութական վնաս, որն արտահայտվել է ցեղասպանությամբ պատճառված վնասի վերացմանը կամ նվազեցմանն ուղղված համապատասխան միջոցների ձեռնարկմամբ, այդուհանդերձ, կոմպենսացիայի հարցում հիմնական բեռն ընկնում է հենց ցեղասպանության զոհերին պատճառված վնասի վրա:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ փոխհատուցման ենթակա է ոչ միայն ցեղասպանության զոհերին պատճառված նյութական, այլ նաև ոչ նյութական (բարոյական) վնասը, որի ներքո սովորաբար հասկանում են հարազատների և ազգականների կորուստը, ցավը և տառապանքը, անձի, բնակարանի կամ մասնավոր կյանքի նկատմամբ ոտնձգությունների հետ կապված զգացմունքների վիրավորումը և այլն:

ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը «Պետությունների պատասխանատվության մասին հոդվածների» մեկնաբանություններում հատուկ ընդգծել է ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությունը՝ նշելով այն հանգա-

---

[839] Տե՛ս Лукашук И.И., Право международной ответственности, М., «Волтерс Клувер», 2004, с. 217.

մանքը, որ ոչ նյութական վնասը կարող է ունենալ դրամական արտահայտություն և կարող է համապատասխան պահանջի հիմք դառնալ: Նշվածը հաստատվում է ծավալուն միջազգային իրավական պրակտիկայով: Այսպես, օրինակ, «Լուզիտանիա» նավի գործով 1923 թ. արբիտրաժային որոշման մեջ նշվում էր, որ միջազգային իրավունքը փոխհատուցում է նախատեսում հոգեկան տառապանքների, զգացմունքները վիրավորելու, անձին և նրա արժանապատվությունը նվաստացնելու, հասարակական դիրքից զրկելու, վստահությանը կամ հեղինակությանը վնաս պատճառելու համար: Միաժամանակ նշվում էր, որ նման վնասը «լիովին իրական է, և այն ակնհայտ փաստը, որ այն դժվար է ենթարկվում քանակական որոշման կամ դրամական արտահայտությամբ գնահատման, չի դարձնում այն նվազ իրական և հիմքեր չի տալիս տուժած անձին համապատասխան փոխհատուցումից զրկելու համար»[840]: Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ 20-րդ դարասկզբին ձևավորված դատական պրակտիկան վկայում է բարոյական վնասը դրամական արտահայտությամբ փոխհատուցելու հնարավորության և իրավաչափության մասին, ինչը կարևոր է Հայոց ցեղասպանության պարագայում Թուրքիայի Հանրապետությանը՝ նման վնասը փոխհատուցելու համապատասխան պահանջները հիմնավորելու տեսանկյունից:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության պարագայում հատկապես սուր է դրված ցեղասպանության զոհերի ժառանգների և իրավահաջորդների կողմից միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու հնարավորության խնդիրը, քանի որ այդ հանցագործության դեպքում զոհերի մեծամասնությունը ֆիզիկապես ոչնչացվում է՝ բնականաբար զրկվելով իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու հնարավորությունից: ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը, անդրադառնալով նշված հիմնախնդրին, սահմանել է, որ «անձի մահվան հետ կապված պահանջների դեպքում վնասը, որպես կանոն, որոշվում է ժառանգների կամ իրավահաջորդների կողմից վնասների գնահատման հիման վրա»: Այս

[840] «Լուզիտանիա» նավի գործով որոշումը: RIAA Vol. VII (1923), p. 32.

հարցի վերաբերյալ համապատասխան կանոնները ևս շարադրվել են «Լուզիտանիա» նավի գործով արբիտրաժային որոշման մեջ, որում ուղղակիորեն նշվում էր, որ հատուցման ենթակա են հետևյալ գումարները.

«ա) որոնք հանգուցյալը՝ եթե կենդանի մնար, կարող էր փոխանցել հայցվորին,

բ) հանգուցյալի՝ հայցվորին նրա ապահովման, կրթության կամ հսկողության համար հատկացվելիք անձնական ծառայությունների դրամական արժեքը և

գ) ողջամիտ փոխհատուցում ընտանեկան կապերի բռնի խզմամբ պատճառած այնպիսի հոգեկան տառապանքների կամ ցնցումների համար, եթե այդպիսիք տեղի են ունեցել, որոնք հայցվորը կարող էր փաստացիորեն ապրել նման մահվան արդյունքում:

Այդպիսի գնահատումների գումարը՝ դրանց ներկայիս դրամական արժեքի հաշվարկմամբ նվազեցրած, որպես կանոն, և կկազմի հայցվորի կրած վնասը»[841]:

Ըստ էության, ցեղասպանության հանցագործության պարագայում հետապնդվող խմբի անդամների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, ռեգեներացիային, հոգեկան վիճակին վնաս պատճառելը, նրանց ազգականների և հարազատների մահվան արդյունքում բոլոր տեսակի առավելություններից զրկվելն էլ կազմում են բարոյական վնասի հատուցման հիմքը:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված վնասների նախնական գնահատման մեկ կարևոր փորձ իրականացվել է դեռևս 1919 թ. Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար Փաշայի նախաձեռնությամբ, որը ներկայացվել էր 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին: Նյութական հատուցման վերաբերյալ հուշագիրը, որը կրում էր «Թուրքիայի և Կովկասի Հայկական Հանրապետության հայ բնակչության կրած վնասների ռեպարացիայի և հատուցման մոտավոր աղյուսակ» անվանումը, անդրադառնում էր այն փոփոխություններին, որոնք տեղի էին ունեցել Օսմանյան

[841] «Լուզիտանիա» նավի գործով որոշումը: RIAA Vol. VII (1923), p. 32.

կայսրության տարածքում բնակվող հայ բնակչության շրջանակներում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

Հուշագրի համաձայն՝ 1914 թ. դրությամբ Օսմանյան կայսրությունում բնակվող հայության թիվը կազմում էր 2,026,000: Այս թվից միայն Կ. Պոլսում և Զմյուռնիայում բնակվող 226 հազարն էր, որ չէր կրել Հայոց ցեղասպանության բոլոր բացասական հետևանքները. մնացած 1,800,000-ը տեղահանվեցին, սպանվեցին կամ ապաստան գտան Եվրոպայում, Մերձավոր Արևելքում կամ Կովկասում՝ լքելով իրենց գույքը:

Հիմնվելով վիճակագրական սկզբունքների վրա՝ այդ 1,800,000-ը ներառում էին 360,000 ընտանիք (1 ընտանիք՝ 5 անդամ հաշվարկով), որից ¼-ը (90,000 ընտանիք) բնակվում էր քաղաքներում, մինչդեռ մնացած ¾-ը (270,000 ընտանիք)՝ գյուղական վայրերում:

Հուշագիրը հիշատակում էր 19,130,982,000 ֆրանսիական ֆրանկ թիվը (հիմնված 1919 թ. կիրառվող արժույթի վրա) որպես պատճառված վնասների արժեք, որից 14,598,460,000 ֆրանկը Օսմանյան կայսրության հայերին պատճառված վնասներն էին, իսկ 4,532,472,000 ֆրանկը՝ Հայաստանի Հանրապետության և Կովկասի հայերին պատճառված վնասները:

Այս հաշվարկները, իհարկե, չեն ներառում 1919 թ.-ից մինչ օրս ձեռնարկությունների և այլ սեփականությունից բաց թողնված եկամուտը, չեն ներառում հայերին պատկանող և թուրքական բանկերում պահվող ֆինանսական միջոցների, ոսկու, մուրհակների և արժեթղթերի վրա կուտակված տոկոսները, դրանք չեն ներառում ոչ նյութական վնասները, որոնք կապված են հայրենազրկման և մշակութային ժառանգությունից զրկելու, մշակութային կոթողների ոչնչացման և պատմության կեղծման հետ:

Չնայած հակառակ այդ ամենի՝ հատուցումների հուշագիրը պաշտոնական փաստաթուղթ է, որն ընդունվել է Փարիզի խաղաղության վեհաժողովի կողմից և որպես այդպիսին հանդիսանում է Հայոց ցեղասպանությամբ հայությանը պատճառ-

ված կոլեկտիվ վնասների գնահատման համար անգնահատելի սկզբնակետ:

Ամփոփելով նշվածը՝ կարող ենք նշել, որ կոմպենսացիայի նմանօրինակ ընկալումն ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ դատական պրակտիկայում, թույլ է տալիս եզրակացնել, որ այն Հայոց ցեղասպանությամբ պատճառված վնասի նյութական հատուցման իդեալական ձև կարող է լինել՝ հնարավորություն ընձեռելով փոխհատուցել ինչպես նյութական կորուստները, այնպես էլ բարոյական վնասը:

Սատիսֆակցիա. սատիսֆակցիան միջազգային հակահրավական արարքով պատճառված բարոյական վնասի հատուցման ձևն է: Սատիսֆակցիայի նման ընկալումը լայնորեն ճանաչված է ինչպես միջազգային իրավունքի գիտության մեջ, այնպես էլ պրակտիկայում[842]: «Պետությունների պատասխանատվության մասին հոդվածների» համաձայն՝ «Միջազգային հակահիրավական արարքի համար պատասխանատվություն կրող պետությունը պարտավոր է սատիսֆակցիան տրամադրել տվյալ արարքով պատճառած վնասի համար այնքանով, որքանով այն չի կարող հատուցվել ռեստիտուցիայով կամ կոմպենսացիայով»[843]: Թեև սատիսֆակցիայի ձևերի որևիցե կոնկրետ ցանկ միջազգային իրավունքում նախատեսված չէ, այդուհանդերձ, նշված հոդվածի երկրորդ կետն առաջարկում է պատասխանատվության ձևերի, որոնք կարող են ներառվել սատիսֆակցիա հասկացության շրջանակների մեջ, մոտավոր ցանկը, մասնավորապես, նշելով, որ «սատիսֆակցիան կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ այլ պատշաճ ձևի միջոցով»[844]: Սատիսֆակցիայի ձևը և ծավալը յուրաքանչյուր

---

[842] Տե՛ս Левин Д.Б., Ответственность государств в современном международном праве, М., «Международные отношения», 1966, с. 214-215; Василенко В. А., Ответственность государств за международные правонарушения, Киев: «Вища школа», 1976, с. 213.

[843] Responsibility of States for Internationally Wrongful Acts, Article 37/1.

[844] Նույն տեղքում, Article 37/2.

կոնկրետ դեպքում կախված է իրավախախտման բնույթից և ծանրությունից[845]: Երևի թե ոչ ոքի մոտ կասկած չի առաջացնում այն հանգամանքը, որ ցեղասպանությունն իր բնույթով և ծանրությամբ ենթադրում է սատիսֆակցիայի ամենալուրջ ձևերի կիրառումը: Պատասխանատվության մասին հոդվածները նախատեսում են սատիսֆակցիայի կիրառման անհնարինությունը միայն այն դեպքում, երբ այն անհամաչափ է վնասին կամ կարող է ընդունել պատասխանատվություն կրող պետությանը նվաստացնող ձև:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը 2007 թ. Բոսնիան և Հերցեգովինան Սերբիայի դեմ գործով կայացրած որոշմամբ նշեց, որ հստակ է, որ դիմողը իրավասու է սատիսֆակցիայի տեսքով հատուցում պահանջել, և այն կարող է ընդունել առավել պատշաճ ձև, ինչպես դիմողն ինքն է առաջարկել, սույն որոշման մեջ հռչակել, որ պատասխանողը ձախողվել է Կոնվենցիայում նախատեսված՝ ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու պարտավորությանը համապատասխանելու հարցում[846]:

Ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ ցեղասպանությունների այլ դեպքերում, շատ հաճախ պատասխանատվություն կրող պետությունը չի ճանաչում, ժխտում է դրա կատարման փաստը, ահա ինչու արդեն իսկ ցեղասպանության փաստի ճանաչման հնարավորությունը՝ որպես սատիսֆակցիա, ձեռք է բերում հատուկ նշանակություն: Թեև միջազգային իրավունքում գոյություն չունի հստակ ձևավորված պրակտիկա ցեղասպանության հանցագործության համար պատասխանատվության ձևերի և տեսակների հարցում, ինչը թույլ չի տալիս ներկայացնել ցեղասպանության համար կիրառելի սա-

---

845 Տե՛ս Рассказов Л.П., Упоров И.В., Понятие и принципы ответственности в международном праве // Московский журнал международного права, 2000, №2 (38), с. 43-44.

846 Case concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J., p.165, para. 462 http://www.icj-cij.org/docket/files /91/13685.pdf.

տիսֆակցիայի ձևերի լրիվ կամ գոնե մոտավոր ցանկը, այդուհանդերձ, ցեղասպանության հանցագործության բնույթը և կուտակված միջազգային իրավական պրակտիկան թույլ են տալիս ենթադրել, որ ցեղասպանության հանցագործության դեպքում որպես սատիսֆակցիայի տարբեր դրսևորումներ կարող են հանդես գալ՝ ցեղասպանության համար անկյունաքարային նշանակություն ունեցող՝ ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումից զատ, նաև ձևական (ֆորմալ) ափսոսանքի արտահայտումը, ցեղասպանության փաստի ժխտման տարբեր դրսևորումների կանխմանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, ցեղասպանության մեջ մեղավոր անձանց դատապարտումը[847], տվյալ մարդկային խմբին պատկանող մշակութային, պատմական և կրոնական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված հատուկ միջոցառումների մշակումը, ի հիշատակ ցեղասպանության զոհերի՝ հուշարձանների և հուշակոթողների կառուցումը և այլն:

Հայոց ցեղասպանության պարագայում սատիսֆակցիան կարող է ներառել հետևյալ միջոցները. նախևառաջ՝ Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական հրապարակային ճանաչումն ու ափսոսանքի և ցավակցության արտահայտումը, Հայոց ցեղասպանության փաստի մերժման քաղաքականությունից հրաժարումը և անհրաժեշտ օրենսդրության ընդունումը, որն ի վիճակի կլինի համարժեք կերպով հակազդել Հայոց ցեղասպանության ժխտման տարատեսակ դրսևորումներին, Հայոց ցեղասպանության մեջ մեղավոր անձանց հրապարակային դատապարտումը, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված հատուկ միջոցների մշակումը[848]:

---

[847] Այն դեպքերում, երբ տվյալ անձինք մինչև պետությանը միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելը չեն դատապարտվել կամ ազգային, կամ միջազգային դատական մարմինների կողմից:

[848] Այս առումով բավական հետաքրքրական է Յու.Գ.Բարսեղովի առաջարկը, որպեսզի Թուրքիայի Հանրապետությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովա-

Սրանք ընդամենը սատիսֆակցիայի այն հնարավոր դրսևորումներն ու տարատեսակներն են, որոնք, մեր կարծիքով, կարող են կիրառելի լինել Հայոց ցեղասպանությամբ պատճառված ոչ նյութական վնասները հատուցելու պարագայում:

Ամփոփելով նշվածը՝ կցանկանայինք ևս մեկ անգամ նշել, որ միայն Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը և այդ հանցագործությամբ պատճառված վնասի լիարժեք հատուցումը կարող է պարարտ հող ստեղծել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները բնականոն հուն տեղափոխելու համար և նպաստել տարածաշրջանում կայունության և հարատև զարգացման ամրապնդմանը: Ավելին, գտնում ենք, որ միայն Հայոց ցեղասպանության փաստի պաշտոնական ճանաչումը Թուրքիայի կողմից կարող է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները միասնական եվրոպական տարածության մեջ վերջինիս համապարփակ ինտեգրման համար:

3. Հայոց ցեղասպանության միջնորդավորված հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր իրավական միջոցների վերլուծություն

Ընդհանուր առմամբ, Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցները բազմաբնույթ են և բազմաբովանդակ: Նման պահանջները կարող են ընդգրկել պատճառված գույքային և բարոյական վնասի հատուցմանն ուղղված տարաբնույթ գործողություններ ոչ միայն Թուրքիայի, այլ նաև այլ երկրների ազգային իրավազորության ներքո:

նու ներքո ծրագիր ընդունի՝ ուղղված իր տարածքում գտնվող հայկական մշակույթի հուշարձանների հետագա քայքայման դեմ, ինչպես նաև որպես պատմական արգելոց առանձնացնի կամ Հայաստանին հանձնի դրա սահմանին հարող միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակներով փոքրիկ տարածքը: Տե՛ս Барсегов Ю.Г., Геноцид армян – преступление по международному праву, М., «XXI век – Согласие», 2000, с. 13.

Պետք է նշել, որ նման պահանջներ իրավասու են ներկայացնել թե անհատները, թե համապատասխան հաստատությունները, ներառյալ՝ եկեղեցին և այլ կրոնական կազմակերպությունները: Պատճառված գույքային կամ բարոյական վնասի հատուցման համար ներկայացվելիք յուրաքանչյուր պահանջ ենթադրում է համապատասխան իրավական գործընթաց՝ պայմանավորված յուրաքանչյուր պետության օրենսդրական կանոնակարգումների առանձնահատկություններով: Ընդ որում, պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ նման պահանջներ ներկայացնելիս, առնվազն նյութաիրավական առումով, պետք է առաջնորդվել իրավախախտումները կատարելու պահին գործող օրենսդրությամբ (եթե նման խախտումները չեն կրում շարունակական բնույթ):

Նման վնասը ներառում է կորսված կյանքերը, յուրացված, ոչնչացված և բռնագրավված սեփականությունը, բաց թողնված օգուտը (եկամուտները), խեղված ինքնության, փաստերի մերժման և պատմության շարունակական կեղծման, ոչ միայն Հայոց ցեղասպանության հերքման, այլև արևմտահայությանն իր սեփական պատմության մերժման հետ կապված բարոյական վնասը, վնասներ՝ կապված պատմական կոթողների ոչնչացման, յուրացման և ձևախեղման հետ և այլն:

Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքներից առավել արդիական պետք է համարել ունեզրկման, սեփականության յուրացման, առգրավման, բռնագրավման և ոչնչացման հետ կապված հարցերը: Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների իրավական պահանջները՝ ուղղված իրենց նախնիներին պատկանող սեփականության վերականգնմանը, իհարկե, պետք է ներկայացվեն հենց Թուրքիայի իրավազորությանը, այդուհանդերձ, տվյալ պարագայում, պայմանավորված Թուրքիայի ժխտողական դիրքորոշմամբ, նման պահանջներ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք բախվում են բազում իրավական խոչընդոտների: Խոսելով Հայոց ցեղասպանության արդյունքում սեփականազրկման առումով պահանջներ ներկայացնելու մասին՝ նախևառաջ նկատի ունենք Հայոց ցեղասպանության զոհերին մասնավոր կամ հա-

մայնքային սեփականության իրավունքով պատկանող ***անշարժ գույքին*** առնչվող իրավական պահանջները, հատկապես հողի և պահպանված կառույցների և շինությունների առնչությամբ: Անշարժ գույքին առնչվող նման հայցապահանջներ ներկայացնելու համար կարևոր նշանակություն ունի անշարժ գույքի պետական գրանցում իրականացնող մարմինների կողմից տրամադրված տեղեկատվությունը, քանի որ անշարժ գույքի նկատմամբ տիտղոսի փոխանցումը պայմանավորված է պետական գրանցման գործընթացի պահպանմամբ:

Այս առումով տեղեկատվության առաջնային աղբյուր են հանդիսանում Թուրքիայի Հողային ռեգիստրի և կադաստրի գլխավոր տնօրինության վերահսկողության ներքո գտնվող տվյալները: Սակայն 2001 թ. հունիսի 29-ին վերջինս արձակեց հրաման՝ արգելելով «լքյալ գույքի» վերաբերյալ ցանկացած տեղեկատվության հրապարակումը և բացահայտորեն խախտելով արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունքը և սեփականության խաղաղ իրացման իրավունքը՝ սահմանված, համապատասխանորեն, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով: Այս փաստը, ինչպես ցույց կտրվի ստորև, էական հետևանքներ ունի Հայոց ցեղասպանության արդյունքում պատճառված միջնորդավորված հետևանքների առկայության ապացուցման բեռի և ապացուցման շեմի որոշման համար:

Պատճառված վնասները քննարկելիս և հաշվի առնելով նաև թուրքական պետության՝ ապացույցների ոչնչացմանը և գաղտնագրմանն ուղղված մեկդարյա գործունեությունը՝ անհրաժեշտ է անդրադառնալ ապացուցման շեմի և ապացուցման բեռի բաշխման հիմնահարցերին: Այս առումով առանձնակի կարևորություն են ներկայացնում միջազգային դատական ատյանների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից օգտագործվող չափանիշները:

Այսպես, ՄԱԿ-ի միջազգային դատարանի պրակտիկայի համաձայն ապացուցման շեմը ենթակա է նվազեցման այնպիսի իրավիճակներում, երբ պատասխանող կողմը, ինչպես 1915 թ. իրադարձությունների դեպքում (որոնք ամբողջությամբ տե-

ղի են ունեցել ժամանակակից Թուրքիայի, Հայաստանի Հանրապետության և մասամբ՝ նաև Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքում), ունի լիարժեք վերահսկողություն այն տարածքի նկատմամբ, որտեղ տեղի են ունեցել վիճելի գործողությունները և երբ հայցվորների ապացույցներից օգտվելու հնարավորությունը սահմանափակված է:

Այսպես՝ *Քորֆու ջրանցքի վերաբերյալ գործով* ՄԱԿ-ի միջազգային դատարանը նշել է. «Այս բացառիկ վերահսկողության ուժով, մյուս [կողմը]՝ միջազգային իրավունքի խախտման զոհը, հաճախ անկարող է լինում ներկայացնել պատասխանատվության համար հիմք հանդիսացող փաստերի անմիջական ապացույց: Նման [կողմին] պետք է իրավունք վերապահվի հետևություններ անելու ոչ անմիջական ապացույցներից»[849]:

Մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ Հայոց ցեղասպանության մասին խոսելիս գործ ունենք այնպիսի իրադարձությունների հետ, որոնք խնդրո առարկա ժամանակահատվածում արժանացել են լայնածավալ հանրային քննարկման և ճանաչման: Նման լայնածավալ հանրային քննարկման արժանացած իրադարձությունները ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից որակվել են որպես «հանրային իմացություն», որոնց ապացուցման շեմը ենթակա է նվազեցման[850]:

Վերոնշյալ գործոնները և միջազգային չափանիշները պետք է հաշվի առնվեն ապացուցման շեմի նվազեցման համար: Առերևույթ ապացույցներն ինքնին բավարար են արևմտահայության պահանջներն ապացուցված համարելու համար, որից հետո արդեն Թուրքիայի Հանրապետության պարտականությունն է դառնում ապացուցել հակառակը:

Թուրքիայի ազգային դատական իրավազորության ներքո համապատասխան գույքային և ոչ գույքային պահանջներ ներկայացնելու պարագայում չպետք է անտեսվեն երիտթուրքերի դատավարությունների արդյունքները:

---

[849] Corfu Channel (UK/Albania), 1949 I.C.J. Reports 4, p. 18.

[850] United State Diplomatic and Consular Staff in Tehran (U.S.A. v. Iran), 1980 I.C.J. Reports 3,p. 9,12.

Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների վերացմանն ուղղված մի շարք դատավարություններ՝ տարատեսակ ելքերով, արդեն իսկ իրականացվել են տարբեր երկրների իրավազորությունների ներքո: Վերլուծելով Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների վերացմանն ուղղված դատական պահանջները՝ կարող ենք պայմանականորեն առանձնացնել հետևյալ խումբ հայցերը

1. Հայոց ցեղասպանությունից առաջ կամ դրա ընթացքում իրենց կյանքը ապահովագրած անձանց մահվան համար ապահովագրական ընկերությունների դեմ ներկայացված հայցեր:

2. Հայոց ցեղասպանության արդյունքում բռնագրավված, ապօրինի օտարված, ոչնչացված կամ յուրացված գույքի վերադարձմանը կամ դրա համար փոխհատուցում պահանջելուն ուղղված հայցեր:

3. Հայոց ցեղասպանության արդյունքում յուրացված հայ մշակութային արժեքների վերադարձմանն ուղղված հայցեր:

4. Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալուն ուղղված հայցեր:

Հայոց ցեղասպանությունից առաջ կամ դրա ընթացքում իրենց կյանքն ապահովագրած անձանց մահվան համար ապահովագրական ընկերությունների դեմ ներկայացված հայցերն առավելապես հարուցվել են ԱՄՆ դատական իրավազորության ներքո: Նշված գործընթացն զգալիորեն պայմանավորված էր Կալիֆոռնիայի նահանգային օրենսդրության մակարդակով հայանպաստ օրենսդրության ընդունմամբ, որի արդյունքում հնարավոր եղավ երկարաձգել Հայոց ցեղասպանության առնչությամբ ապահովագրական ընկերությունների դեմ հայց ներկայացնելու վաղեմության ժամկետները: Այսպես, 2000 թ. Կալիֆոռնիայի խորհրդարանն ընդունեց օրենսդրական ակտ, որով Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդներն իրավունք ձեռք բերեցին մինչև 2010 թ. ավարտը դատական կարգով փոխհատուցում պահանջել այն ապահովագրական ընկերություններից, որոնք ապահովագրել են ի-

րենց զոհված նախնիներին[851]: Տվյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգային դատարանում հարուցվեց հավաքական հայց «New York Life Insurance» ընկերության դեմ, որի շրջանակներում հայցվորները պահանջում էին փոխհատուցում տրամադրել 50 միլիոն ԱՄՆ դոլարի չափով այդ ընկերությունում իրենց կյանքն ապահովագրած Հայոց ցեղասպանության զոհերի իրավահաջորդներին: Արդյունքում՝ կողմերը դատական կարգով կնքեցին հաշտության համաձայնություն, որով ընկերությունը պարտավորվեց 20 միլիոն ԱՄՆ դոլարի չափով փոխհատուցում տրամադրել հայցվորներին:

2002 թ. կրկին Կալիֆոռնիայում հավաքական հայց (Class action) ներկայացվեց Ֆրանսիական AXA ապահովագրական ընկերության դեմ: «Քյուրքչյանը և Ուզունյանն ընդդեմ AXA-ի» անունն ստացած դատավարությունն անցնում էր ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի կենտրոնական շրջանի դատարանում: AXA ընկերությունը հանդիսանում է «L'Union Vie», «Caisse Paternelle» и «La Confiance» ֆրանսիական ապահովագրական ընկերությունների իրավահաջորդը, որոնք 1880-1930 թթ. ապահովագրական գործունեություն են իրականացրել Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության տարածքում՝ ապահովագրելով, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության զոհ դարձած բազում հայերի կյանքերը: Դատարան ներկայացված ցուցակում առկա էր ավելի քան 7000 հայի անուն: 2006 թ. մայիսի 16-ին դատավոր Քրիստինա Շնայդերը հաստատեց կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը, որի արդյունքում պահանջներ ներկայացրած զոհերի իրավահաջորդներն ստացան մոտ 17 միլիոն ԱՄՆ դոլարի փոխհատուցում: 2003 թ. հայց հարուցվեց «Victoria» գերմանական ապահովագրական ընկերության, իսկ 2008 թ. սեպտեմբերին նմանօրինակ հայց հարուցվեց նաև «Aviva» բրիտանական ապահովագրական ընկերության դեմ:

---

[851] Маноян К., Обама должен выступить против решения Федерального апелляционного суда, http://glamakama.com/index.php?name=pages&op=printe&id=3254

Այդուհանդերձ, Կալիֆոռնիայի իրավազորության ներքո ապահովագրական ընկերությունների դեմ հայցեր ներկայացնելն արգելափակվեց ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից, որը հաստատեց ԱՄՆ 9-րդ շրջանի դաշնային վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը, ըստ որի՝ Կալիֆոռնիայի նահանգային օրենքը համահունչ չէ դաշնային օրենսդրությանը, քանզի խոչընդոտում է օտարերկրյա պետությունների հետ հարաբերություններին[852]:

Հայոց ցեղասպանության արդյունքում բռնագրավված, ապօրինի օտարված, ոչնչացված կամ յուրացված գույքի վերադարձմանը կամ դրա համար փոխհատուցում պահանջելուն ուղղված հայցերը, ելնելով իրենց բնույթից, չափազանց տարատեսակ են: Դրանք, ի տարբերություն վերը նշված հայցերի, ապահովագրական ընկերությունների դեմ հարուցվել են ինչպես Թուրքիայի, այնպես էլ այլ օտարերկրյա դատական իրավազորությունների ներքո: Մասնավորապես, Թուրքիայի իրավազորության ներքո որոշ հայցեր են հարուցվել բռնագրավված գույքի վերադարձման առնչությամբ, սակայն, ինչպես նշել ենք վերը, Թուրքիայում առկա ընդհանուր ժխտողական քաղաքականության և հստակ օրենսդրական խոչընդոտների առկայության պարագայում դրանց դրական ելքն առավել մշուշոտ է թվում: Փոքր-ինչ այլ է իրավիճակն այլ պետությունների իրավազորության ներքո ներկայացված նմանօրինակ հայցերի պարագայում:

Այսպես, 2006 թ. փետրվարին կրկին ԱՄՆ Կալիֆոռնիայի նահանգային իրավազորության ներքո հայց է ներկայացվել «Deutsche Bank»-ի դեմ՝ Հայոց ցեղասպանության զոհ դարձաց անձանց բանկային հաշիվներում պահվող գումարները և այլ արժեքավոր իրերը չվերադարձնելու, ինչպես նաև Հայոց ցեղասպանության տարիներին Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման ժամանակ հայերի հարկադիր աշխատանքը փոխհատուցելու պահանջով: Նմանատիպ հայց է ներկայացվել նաև «Dresdener Bank» ընկերության դեմ:

---

[852] Верховный суд США не станет пересматривать неблагоприятное для армян решение, http://www.azatutyun.am/a/25015301.html

2010 թ. դեկտեմբերին կրկին ԱՄՆ իրավազորության ներքո հավաքական հայց հարուցվեց Թուրքիայի Հանրապետության, Թուրքիայի կենտրոնական բանկի և «Զիրաաթ» բանկի դեմ՝ 16 հայցվորի անունից Ինջիրլիք տարածաշրջանում Հայոց ցեղասպանության ընթացքում բռնագրավված հողատարածքների վերադարձման առնչությամբ:

Նույն թվականի հուլիսին կրկին ԱՄՆ-ում կոլեկտիվ հայց է ներկայացվել մի շարք հայ փաստաբանների կողմից (Davoyan v. Turkey) Թուրքիայի Հանրապետության, Թուրքիայի կենտրոնական բանկի և «Զիրաաթ» բանկի դեմ՝ Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին բռնագրավված ողջ սեփականության համար, ներառյալ նաև Սիսի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի առնչությամբ:

Տվյալ գործերով դատավարությունները դեռ գտնվում են ընթացքում և դրանցով վերջնական որոշումներ դեռևս չեն կայացվել: Պետք է նշել, սակայն, որ չափազանց վտանգավոր պետք է համարել հատկապես վերջին հավաքական հայցը, քանի որ վերջինս առնչվում է հայերին պատկանող ***ողջ սեփականությանը:*** Դատարանի կողմից վերջնական անբարենպաստ ակտի կայացումը կարող է արգելափակել ԱՄՆ-ի իրավազորության ներքո Հայոց ցեղասպանությանն առնչվող որևէ գույքային պահանջ ներկայացնելու հեռանկարները:

Հայոց ցեղասպանության արդյունքում հայ մշակութային արժեքների վերադարձմանն ուղղված հայցերը Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների հաղթահարմանն ուղղված կարևորագույն իրավական միջոցների թվին կարելի է դասել: Առայսօր նման հայցեր են ներկայացվել ԱՄՆ-ի, Թուրքիայի և միջազգային իրավազորության ներքո:

Այսպես, 2010 թ. հուլիսին հայց ներկայացվեց «The Getty Museum» թանգարանում գտնվող հայկական մշակութային արժեքների վերադարձման կապակցությամբ : Հայցն առնչվում էր դեռևս 1994 թ. «Getty» թանգարանի կողմից 950 հազար ԱՄՆ դոլարով ձեռք բերված՝ Թորոս Ռոսլինի մանրանկարներով Զեյթունի ավետարանի ութ էջերին, որոնք առանձնացվել են ավետարանից 1916 թ. Հայոց ցեղասպանության տարինե-

ին: Ըստ հայցվորի՝ թանգարանը ձեռք է բերել նշված մանրանկարները հափշտակողի ժառանգից՝ առանց փորձելու պարզել ձեռագրի ծագումը: Ինչպես հայտնի է, Զեյթունի ավետարանը գտնվում է Մատենադարանում: Այն թվագրված է մոտավորապես 1256-68 թթ: Հայցը ներկայացվել էր Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևմտյան թեմի կողմից: Մատենադարանը և Հայաստանի Հանրապետությունը թեև չէին մասնակցում դատավարությանը, սակայն Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանը նամակ էր հղել փաստաբաններին՝ հայցելով հաշվի առնել Մատենադարանի և Հայաստանի Հանրապետության շահերը և աջակցել մանրանկարներն իրական սեփականատիրոջը վերադարձնելու ուղղությամբ[853]:

Թեև պատասխանողը դատարանում պնդում էր, որ վաղեմության ժամկետների անցման հետևանքով հայցը պետք է մերժվի, սակայն Կալիֆոռնիայի Գերագույն դատարանը բավարարեց Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևմտյան թեմի ներկայացրած հայցը և առաջարկեց դիմել միջնորդության ընթացակարգին:

Թեև հայցվորների հիմնական մտադրությունն էր դատավարության դրական ելքի պարագայում վերադարձնել նշված մանրանկարները Մատենադարանում պահվող Զեյթունի ավետարանի հետ վերամիավորվելու համար, սակայն «Getty» թանգարանի հետ ձեռք բերված համաձայնության արդյունքում կողմերը համաձայնեցին, որ թանգարանը կճանաչի մանրանկարների նկատմամբ եկեղեցու սեփականության իրավունքը, իսկ եկեղեցին կփոխանցի նշված մանրանկարները թանգարանին հանդիսավոր արարողության ընթացքում, որից հետո դրանք մաս կկազմեն «Շրջագայություն աշխարհով Միջնադարի և Վերածննդի մանրանկարների միջոցով» ցուցահանդեսի, որը պետք է անցկացվեր 2016թ. հունվարի 26-ից հունիսի 26-ը[854]:

---

[853] Гетти судится с церковью, http://artchronika.ru/news/гетти-судится-с-церковью/

[854] Арт-дайджест: Рембрандт - сенсация на аукционе, реституция древней рукописи, https://artchive.ru/news/1269

2015թ. ապրիլի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը դատական հայց ներկայացրեց Թուրքիայի սահմանադրական դատարան՝ պահանջելով Սիսի պատմական կաթողիկոսարանի վերադարձը: Հայցի ընդունումը, սակայն, մերժվեց Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից, որից հետո 2016թ. դեկտեմբերին հայց ներկայացվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան Սիսի կաթողիկոսարանը վերադարձնելու վերաբերյալ: Սակայն 2017թ. հոկտեմբերին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մերժել է քննել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի նախաձեռնությամբ ներկայացված դատական հայցը:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալուն ուղղված հայցեր: Նման հայցերը թեև մեծաթիվ չեն, սակայն դրանք ևս կարող են չափազանց մեծ նշանակություն ունենալ Հայոց ցեղասպանության անուղղակի հետևանքների վերացման համար՝ հստակեցնելով Հայոց ցեղասպանությանն առնչվող տեղեկատվությունը: Այս հարցում հատկապես հետաքրքրական են ճշմարտությունն իմանալու իրավունքի վրա հարուցված հայցերը: Այսօր կարող ենք փաստել, որ նման դատական պրակտիկա արդեն իսկ առկա է Արգենտինայի Հանրապետությունում, մասնավորապես 2011թ. ապրիլի 1-ին Բուենոս Այրեսի թիվ 5 դաշնային դատարանը, ճշմարտությունն իմանալու իրավունքի շրջանակներում, քննեց Գրեգորիո Հայրապետյանը և այլոք հայցով գործը և վճռեց, որ 1915-1923թթ. ընթացքում Թուրքիան ցեղասպանության հանցագործություն է կատարել հայ ժողովրդի նկատմամբ: Նշված իրավունքի իրագործման շրջանակներում ևս հնարավոր է մասնակիորեն հաղթահարել Հայոց ցեղասպանության հետևանքներն առնվազն մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան համակարգի շրջանակներում, ինչպես նաև Լատինական Ամերիկայի պետությունների ազգային իրավազորության ներքո:

4. Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելուն ուղղված հիմնական ռազմավարական մոտեցումները

Հայոց ցեղասպանության հետևանքով պատճառված վնասը միաբնույթ և միատեսակ չէ: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար անհրաժեշտ է մշակել միասնական ռազմավարություն, որի շրջանակներում կհստակեցվի ներկայացվելիք պահանջների շրջանակը, կորոշվեն պայքարի առանցքային ուղղությունները, կսահմանվի գործողությունների հերթականությունը և կլուծվեն այլ առանցքային հարցեր:

Հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մոտեցումների հարցում միակարծություն գոյություն չունի, հետազոտողների, հասարակական կազմակերպությունների, ցեղասպանության զոհերի շահերը ներկայացնող հաստատությունների, հայաստանյան և սփյուռքի կառույցների մոտեցումներում առկա են զգալի տարբերություններ: Չի կարելի իրատեսական համարել այն, որ մեկ օր հնարավոր կլինի սեղանի վրա դնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցների միասնական հայեցակարգ, այդուհանդերձ, գտնում ենք, որ հնարավոր է մշակել առանցքային հայեցակարգային մոտեցումների համառոտագիր, որը կարող է միասնականացնել Հայաստանի և Սփյուռքի ջանքերը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում յուրաքանչյուր տարածաշրջանում պետք է որդեգրել յուրահատուկ մոտեցում, որը կբխեր օբյեկտիվորեն գոյություն ունեցող առանձնահատկություններից:

Մասնավորապես, եվրոպական իրավական համակարգի շրջանակներում պետք է շարունակել Հայոց ցեղասպանության ուրացման դեմ պայքարող համապատասխան օրենսդրության մշակմանն ու ընդունմանը և այդ հարցում հայանպաստ դատական պրակտիկայի ձևավորմանն ուղղված

ջանքերը՝ շեշտադրելով այլատյացության դեմ պայքարի կարևորությունը:

Քննարկելով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իրավական ուղիները՝ հնարավոր չէ չանդրադառնալ Հայոց ցեղասպանության միջազգային իրավական ճանաչման հիմնահարցերին: Նման ճանաչումները, թեև իրավական պարտադիր ուժ չեն կարող ունենալ Թուրքիայի Հանրապետության համար, սակայն չափազանց բարենպաստ հիմնապաստառ են ստեղծում վերջինիս տվյալ հարցում առավել զիջող դարձնելու համար: Այդուհանդերձ, պետք է նշել, որ պետությունների կողմից Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչման ռեսուրսները սահմանափակ են: Ներկայումս կարելի է փաստել, որ հայությունն այդ հարցում հաջողություններ է արձանագրել Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Եվրոպայում, Ավստրալիայում (նահանգային մակարդակով), սակայն Ասիայում և Աֆրիկայում, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ճանաչման գործընթացը չափազանց ոչ արդյունավետ է (փաստացիորեն Ասիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչել են միայն Կիպրոսը և Լիբանանը):

Ելնելով վերը շարադրված հայեցակարգային կանխադրույթներից՝ նպատակահարմար ենք համարում ստորև ներկայացնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված հնարավոր առանցքային իրավական միջոցներ.

1. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը վերաբերող և հայոց պահանջատիրությունը հիմնավորող միջազգային իրավական փաթեթի ստեղծում: Միջազգային իրավական փաթեթը կներառի Ցեղասպանության հիմնավորումները, դրա հետևանքների ու վնասների ամփոփումը, ցեղասպանության դատապարտման և փոխհատուցման միջազգային իրավական մեխանիզմների կիրառման իրավական հիմնավորումները: Լայնորեն կօգտագործվեն տարբեր միջազգային կազմակերպությունների, դատական ատյանների, միջազգային դատարանների, ինչպես նաև առանձին պետություններ-

րի դատական համակարգերի կողմից ընձեռվող հնարավորությունները:

2. Միջազգային իրավունքի, միջազգային և ներպետական դատավարական ընթացակարգերի հեղինակավոր փորձագետների, փորձառու իրավաբանների ներգարվում կոնկրետ իրավական պահանջ ներկայացնող փաթեթի նախապատրաստման գործընթացում:

3. Արխիվային և վավերագրական նյութերի կենտրոնացված բազայի ստեղծում՝ դրանք այդ ոլորտում գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի և միջազգային դատարանների որոշումներին համահունչ դասակարգելու նպատակով: Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր և միջազգային դատարանների որոշումներ ճանաչում են անհատի՝ իր բնակության վայր վերադարձի, սեփականության իրավունքի վերականգնման, փոխհատուցումներ ստանալու և պահանջատիրությանն առնչվող այլ իրավունքներ:

4. Ցեղասպանության զոհերի և վերապրածների ժառանգներին դատական ճանապարհով դրամական և բարոյական փոխհատուցումներ տրամադրելու նպատակով ապահովագրական, բանկային և այլ ընկերությունների դեմ հայցերի ներկայացման ու դատական որոշումների ընդունման գործընթացի խրախուսում:

5. Հայցվորների, զոհերի և վերապրածների ժառանգների և նրանց հասցված վնասների մասին տվյալների կենտրոնացված թվայնացված բազայի ստեղծում, որը կունենա համացանցային հասանելիություն: Նման տվյալների կենտրոնացված բազայի ստեղծումը հնարավորություն կընձեռի նույնականացնել Հայոց ցեղասպանության զոհերին և վերապրածներին, կուղղվեն վերջիններիս և նրանց ժառանգների միջև ազգակցական կապերի վերականգնմանը և այլն:

6. Թուրքիայում հայերի գույքի մասով փաստաթղթերի թվայնացված կենտրոնացված բազայի ձևավորում՝ հայ ժողովրդի հայրենազրկման և ունեզրկման խնդիրները միջազգային ատյաններում բարձրաձայնելու և հատուցման պահանջներով հանդես գալու նպատակով:

7. 1919-1920 թթ. թուրքական ազգային դատական ատյանների կողմից Հայոց ցեղասպանությունը հաստատող և դատապարտող դատական ակտերի վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

8. Աշխատանքներ տարբեր երկրներում Հայոց ցեղասպանությանն առնչվող արխիվները հանրամատչելի դարձնելու ուղղությամբ:

9. Հատուցման պահանջների զուգորդում Թուրքիայի պատասխանատվության խնդրին առավել քիչ ուղղորդված այնպիսի միջոցներով, որոնք ավելի կմեծացնեն ճնշումը Թուրքիայի վրա: Որոշ գործողություններ արդեն իսկ ձեռնարկվել են (եկեղեցիների գույքի վերադարձման պահանջները), այդ գործողությունները կարող են ներառել ԵԽ, ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակում սահմանված իրավական մեխանիզմների ու համապատասխան կոմիտեների ընթացակարգերի կիրառման աշխատանքները:

10. Միջազգային ասպարեզում ցեղասպանության և մարդկայնության դեմ գործած հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային մեխանիզմների ձևավորման ու կիրառման, ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացն իրավական հիմքերի վրա դնելու ուղղությամբ շարունակական քայլերի ձեռնարկում:

11. Ձեռնարկվելիք գործողությունների համատեքստում Թուրքիայի հնարավոր բացասական արձագանքների դեմ ուղղված միջոցների ձեռնարկում: Ժամանակակից գիտության, մասնավորապես՝ մարդաբանության, կենսաբանության, բժշկության, հոգեբանության և այլ գիտությունների նվաճումների օգտագործում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված իրավական միջոցների ձեռնարկման պարագայում, որոնք կարող են, մասնավորապես, վերաբերել ցեղասպանության ազդեցությանը հանցագործության զոհերի ժառանգների ԴՆԹ-ի վրա, ցեղասպանության զոհերի խեղված ինքնության և այլ հոգեբանական խնդիրներին, զոհ-

վածների և նրանց իրավահաջորդների ազգակցական կապը հիմնավորելուն, զոհերին նույնականացնելուն և այլն:

12. Թուրքիայում և այլ երկրներում բնակվող իսլամացած հայերի ինքնության վերականգմանն ուղղված համապատասխան իրավական միջոցների ձեռնարկում:

Իհարկե, բոլորս քաջ գիտակցում ենք, որ այս հետազոտությունն ընդամենը մի կաթիլ է Հայոց ցեղասպանության իրավական հարթության հիմնահարցերի օվկիանոսում: Դրանում շոշափված յուրաքանչյուր հիմնահարց պետք է առանձին գիտական վերլուծության առարկա դառնա՝ հայերի դեմ իրագործված ցեղասպանության իրավական հարթության առանձին գորշ կետերը վերացնելու և նշված հիմնախնդրի միջազգային իրավական պատկերն առավել հստակ դարձնելու նպատակով:

Եզրափակելով հարկ ենք համարում ևս մեկ անգամ նշել, որ միայն Հայոց ցեղասպանության իրավական հիմնահարցերի հետագա ուսումնասիրության արդյունքում է հնարավոր Թուրքիայի Հանրապետությանը համապատասխան միջազգային իրավական պահանջներ ներկայացնելու համար ամուր հայեցակարգային հիմք ստեղծել և ապահովել բոլոր անհրաժեշտ պայմանները՝ դրա հետևանքով պատճառված վնասների լիարժեք հատուցման համար:

7. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ (հնարավոր «ճանապարհային քարտեզի» ուրվագիծ)

2015 թ. հունվարի 29-ին պաշտոնապես «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» հրապարակումով միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարեցին, որ այդ պահից սկսած մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի

համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար, ինչը ենթադրում է իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ այն դիտելով որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ[855]:

Միանգամայն բնական է, որ **հատուցման հիմնախնդրի** դիվանագիտական ձևակերպումը հանդիսացող «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում» հասկացությունը պաշտոնական շրջանառության մեջ դրած հռչակագրային բնույթ ունեցող սույն փաստաթղթում չէր հստակեցվում, թե ի՞նչ է հասկացվում նման ձևակերպման տակ: Ուրեմն՝ դրանից հետո անհրաժեշտություն է առաջացել հստակություն մտցնել Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասների ու կորուստների հարցում, որոնք ընդհանուր առմամբ կարելի է բաժանել մի քանի պայմանական խմբերի. **հայրենազրկում, մարդկային կորուստներ, մշակութային ժառանգության ոչնչացում, նյութական կորուստներ, հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ:**

Քանի որ Թուրքիան այսօր էլ հետևողականորեն շարունակում է իր ժխտողական քաղաքականությունը և բացառում է անգամ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցի քննարկումը, ակնհայտ է դառնում, որ թուրքական իշխանությունները միայն արտաքին ու ներքին ճնշումների պայմաններում հարկադրված կլինեն անդրադառնալ հատուցման հիմնախնդրին: Դա կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարները թուրքական կողմին հստակ հասկացնել կտան, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում Թուրքիան այլևս այլընտրանք չունի, որ այդ գործընթացը բխում է նաև թուրքական կողմի շահերից, քանի որ այդ կերպ թուրք ժողովուրդը հնարավորություն կստանա հաղթահարել ցեղասպան ժողովրդի բարդույթը և ազատվել մեղքի զգացումից, իսկ թուրքական պետությունը՝

[855] Տե՛ս http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/

մուտք գործել ժողովրդավարական երկրների ընտանիք, ինչպես ժամանակին դա տեղի ունեցավ գերմանացի ժողովրդի և Գերմանիա պետության հետ: Մեր կարծիքով, **ներկայումս Թուրքիայի ներսում և նրա շուրջ ծավալվող քաղաքական զարգացումները միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում կարող են հանգեցնել նաև նման իրավիճակի առաջացմանը**:

Ցավոք, վերջին շրջանում մեզանում սկսել են շրջանառվել Հայոց ցեղասպանության համար հատուցման գործընթացի անհնարինության կամ դրա մեխանիզմների բացակայության վերաբերյալ թյուր տեսակետներ, որոնք կամա թե ակամա պարզունակացնում են հարցը, իջեցնում կենցաղային մակարդակի և այդպիսով արժեզրկում են հատուցման գաղափարը: Մինչդեռ, ծայրահեղությունների մեջ չընկնելու և իրատեսական պատկերացումներով առաջնորդվելու պարագայում հնարավոր է գտնել այս հիմնահարցի ռացիոնալ լուծումները: Համապատասխան փաստերի ու միջազգային իրավական նորմերի հիման վրա լիովին հնարավոր է մշակել հատուցման գործընթացի որոշակի մեխանիզմներ և գործիքակազմ՝ հիմնվելով նախկինում արդեն կիրառված նման գործընթացի նախադեպերի վրա: Խոսքը մասնավորապես Հոլոքոստի հետևանքով հրեա ժողովրդին հասցված բարոյական ու նյութական վնասների հատուցման մեխանիզմների մասին է, որոնք կարող են օգտագործվել նաև Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված բարոյական ու նյութական վնասների հատուցման գործում: Ինչ վերաբերում է հայերի կորցված հայրենիքի և պատմամշակության ժառանգության հետևանքների հաղթահարմանը, ապա այս պարագայում հատուցման մեխանիզմի հիմքում կարող են դրվել մեր տրամադրության տակ եղած փաստերն ու միջազգային իրավական համապատասխան փաստաթղթերը:

Մեր պատկերացմամբ հատուցման գործընթացի սկզբնավորման համար անհրաժեշտ կլինեն համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դրակատարների այն ջանքերը, որոնք գործադրվեցին Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագի-

տական հարաբերությունների հաստատման գործընթացում՝ կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու և նրանց միջև համապատասխան փաստաթղթեր ստորագրելու առումով: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մասին հայ-թուրքական համաձայնագրի համար օրինակ կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի **Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը**, որով սկիզբ դրվեց Գերմանիայի կողմից Հոլոքոստի հետևանքով հրեաներին հասցված նյութական վնասների հատուցման գործընթացին: Ի դեպ, Գերմանիայի հետ կնքված այդ համաձայնագիրը հրեական կողմից ստորագրվեց ոչ միայն Իսրայել պետության, այլև հրեական Սփյուռքի նախաձեռնությամբ հրավիրված «Պահանջների կոնֆերանսի» ներկայացուցչի կողմից[856]: Կարծում ենք, որ այս նույն սկզբունքը պետք է կիրառվի նաև Թուրքիայի հետ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մասին համաձայնագրի պարագայում: Հայկական կողմից այն պետք է ստորգրվի ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ, օրինակ՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում» ընդգրկված Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների՝ կոնսենսուսով ընտրված գործիչներից որևէ մեկը, քանզի այդ հանցագործության հետևանքները վերաբերում են համայն հայությանը: Համաձայնագրին պետք է կցվի հատուցման գործընթացի **ճանապարհային քարտեզը**, որով կհստակեցվեն վերը թվարկված հետևանքների հաղթահարման տարբեր ուղղություններով թուրքական պետության կողմից ձեռնարկվելիք քայլերը, դրանց հաջորդականությունն ու ժամանակացույցը:

Թեև մեզ՝ հայերիս համար Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում առաջնահերթություն է

---

[856] Տես Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 81–82:

Հայրենիքի նկատմամբ մեր իրավունքի վերականգնման պահանջը, այդուհանդերձ, պետք է գիտակցենք, որ ի սկզբանե այդ պահանջի առաջադրումը միանգամից կհանգեցնի թուրքական կողմի հակազդեցությանը և փակուղի կմտցնի հատուցման ողջ գործընթացը: Ուստի, ավելի խելամիտ կլինի ճանապարհային քարտեզում առաջին պլան մղել Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների հաղթահարման ուղղությամբ կատարվելիք քայլերը՝ թուրքական իշխանություններին ու հասարակությանը հնարավորություն տալով աստիճանաբար համակերպվել նաև հետագայում սպասվելիք որոշ տարածքային հատուցումների անխուսափելիության մտքի հետ:

1. Ցեղասպանության հոգեբանական հետևանքների հաղթահարման անհրաժեշտ առաջին քայլերը

Հայոց ցեղասպանության **հոգեբանական հետևանքների** հաղթահարման ուղղությամբ թուրքական իշխանություններից ակնկալվում են օրենսդրական և ենթաօրենսդրական բնույթի հետևյալ քայլերը՝

1. 2010 թ. «Մավի Մարմարա» նավի վրա հարձակման հետևանքով Թուրքիայի քաղաքացիների սպանության համար Իսրայելից ներողություն և հատուցում պահանջող Թուրքիան, ի վերջո, պետք է գիտակցի, որ հայ ժողովուրդն էլ իրենից է նույն քայլը սպասում ցեղասպանության զոհ դարձած միլիոն ու կես անմեղ նահատակների համար: Թուրքիան պետք է պաշտոնապես ներողություն խնդրի հայ ժողովրդից և հայտարարի այդ հանցագործությունը ժխտելու քաղաքականությունից ընդմիշտ հրաժարվելու մասին;
2. Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդին կից գործող «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհրդի» լուծարումը:

Հիշյալ կառույցի գործունեության և առհասարակ՝ Հայոց ցեղասպանության ժխտման նպատակով թուրքական բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցները նույն ծավալով պետք հատկացվեն Թուրքիայում Հայոց ցեղասպա-

նության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի, ինչպես նաև թանգարանի կառուցմանը, թուրքական համալսարաններում իսկական հայագիտական կենտրոնների ստեղծմանը, որտեղ ուսանողների համար կկազմակերպվեն Հայոց պատմության դասընթացներ, նրանց հնարավորություն տալով ոչ միայն ճշմարտությունը իմանալ Հայոց ցեղասպանության մասին, այլև ծանոթանալ տեղաբնիկ ժողովրդի պատմությանը: Նշված դրամական միջոցները պետք է նպատակաուղղվեն նաև նոր դպրոցական դասագրքերի հրատարակմանը, որոնցում կբացառվեն հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների վերաբերյալ զրպարտություններ պարունակող և նրանց նկատմամբ ատելություն սերմանող նյութերը: Հատկապես վերահրատարակման են ենթակա Թուրքիայի պատմության դասագրքերը, որոնք պետք է համապատասխանեցվեն պատմական փաստերին: Դրանցում աշակերտներին նախևառաջ պետք է ներկայացվի Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների իրավազուրկ կարգավիճակի և նրանց նկատմամբ իրագործված ցեղասպան քաղաքականության մասին ողջ ճշմարտությունը: Ժխտողականությանն ուղղվող ֆինանսական միջոցները պետք է հատկացվեն նաև պատմական քարտեզների վերահրատարակմանը՝ վերականգնելով Արևմտյան Հայաստանի նախկին աշխարհագրական անվանումներն ու տեղանունները, ինչպես նաև հեռուստածրագրերի և ֆիլմերի նկարահանմանը, որոնք թուրք հասարակայնությանը ճշմարիտ տեղեկություններ կներկայացնեն հայ ժողովրդի պատմության և մասնավորապես Հայոց ցեղասպանության մասին:

3. Թուրքիայի քրեական օրենսգրքից հանել «Թուրք ինքնությանը, հանրապետությանը և պետության կառույցներին հասցրած զրպարտանքի» համար քրեական պատիժ նախատեսող տխրահռչակ 301-րդ հոդվածը, որը թուրքական իշխանություններն օգտագործում են իրենց քաղաքական ընդդիմախոսներին, այլախոհներին ու լրագրողներին հետապնդելու նպա-

տակով[857]: Հիշյալ հոդվածի վերացումից հետո Եվրամիությանն անդամակցելու ձգտում ունեցող թուրքական պետությանը՝ եվրոպական որոշ երկրների օրինակով, կարող է առաջարկվել կատարել դրանից բխող հաջորդ տրամաբանական քայլը՝ օրենսդրորեն քրեականացնել ցեղասպանությունների ժխտումը Թուրքիայում, ինչը կդիտվի որպես երաշխիք, որ այդ երկիրը հետագայում չի փորձի վերադառնալ նախկին ժխտողական քաղաքականությանը:

4. Վերահաստատել դեռևս օսմանյան խորհրդարանի կողմից 1918 թ. նոյեմբերի 22-ին ընդունված՝ «Տեղահանության մասին օրենքը» չեղյալ հայտարարելու մասին որոշումը, որով «օրինական» տեսք էր տրվում հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությանը: Դրանից ելնելով՝ օրինական ճանաչել թուրքական ռազմական տրիբունալների կողմից 1919-1921 թթ. ընդունված վճիռները և ուժը կորցրած համարել Քեմալի վարչակարգի կողմից այդ վճիռների վերանայման մասին որոշումները: Թուրքիայի տարածքում դադարեցնել Առաջին աշխարհամարտի տարիներին հանցագործություններ կատարած անձանց հերոսացումը՝ նրանց հրապարակայնորեն հայտարարելով հանցագործներ:

Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների հաղթահարման գործընթացին զուգահեռ քայլեր պետք է իրականացվեն նաև այդ հանցագործության նյութական հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Այս գործընթացի հիմքում պետք է դրվի Ex injuria jus non oritur («Իրավախախտումից իրավունք չի կարող առաջանալ») հայտնի իրավական սկզբունքը, որով բացառվում է հանցագործի, տվյալ դեպքում՝ հանցավոր պետության, կողմից հանցագործության հետևանքով զոհից, տվյալ դեպքում՝ հայ ժողովրդից, զավթված ունեցվածքին տիրանալու և վերջինիս իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

---

857 Տե՛ս http://www.amnesty.org/en/alfresco_asset/c8f87ee9-a303-11dc-8d74-6f45f39984e5/eur 440352005en.htm

2. Հասցված նյութական վնասների ու դրանց հետևանքների վերականգնման կամ դրա դիմաց հատուցման պատմաիրավական հիմքերը

Հայոց ցեղասպանության **նյութական հետևանքների** հաղթահարման նպատակով պետք է ձևավորվի միջազգային հանձնաժողով, որը կազմված կլինի Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների, ինչպես նաև «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում» ընդգրկված Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների կոնսենսուսով ընտրված գործիչներով և կղեկավարվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից նշանակված նախագահի կողմից:

Հայոց ցեղասպանության նյութական վնասների հատուցման այս մեխանիզմը ժամանակին տեղ էր գտել Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածում և դրա տակ ստորագրել էր նաև Օսմանյան կայսրության պատվիրակությունը: Տարբերությունը միայն այն էր, որ հանձնաժողովի գործունեությունը ղեկավարելու էր Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահը[858]: Հատկանշական է, որ խառը միջազգային հանձնաժողովի մասին այս դրույթը ավելի ուշ կրկնվել է նաև Թուրքիայի կողմից վավերացված և ուժի մեջ մտած Լոզանի պայմանագրի 66-րդ հոդվածում[859]:

Ի դեպ նյութական հատուցման հարցերով զբաղվող խառը հանձնաժողովի գործունեության արդյունքում էր, որ ժամանակին հաշվարկվեցին Հոլոքոստի հետևանքով հասցված նյութական վնասի չափերը և այդ հանցագործության զոհ դարձած հրեաներին ու նրանց ժառանգներին հատուցում տրամադրեցին ինչպես Գերմանիայի, այնպես էլ, օրինակ՝ Նորվեգիայի իշ-

---

[858] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբագիր՝ Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 679:

[859] Տե՛ս Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php

խանությունները[860]: Միջազգային հանձնաժողովի գործունեության բոլոր ծախսերը պետք է դրվեն թուրքական պետության վրա:

Իր առջև դրված խնդիրները լուծելու համար միջազգային հանձնաժողովը նախևառաջ պետք է ճշտումներ կատարի Փարիզի վեհաժողովին հայկական պատվիրակությունների ներկայացված հուշագրի նախնական և ոչ լիարժեք հաշվարկներում և, վերացնելով դրանցում առկա բացթողումներն ու թերությունները, ստեղծի հայ ժողովրդին հասցված նյութական վնասների մասին ամբողական ու վերջնական մի փաստաթուղթ: Պետք է նկատի ունենալ, որ Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի զանգվածային ունեզրկումը կանխեց այդ նյութական հարստության բազմապատկման հնարավորությունը: Ցեղապանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայեր, կորցնելով իրենց ունեցվածքը, ստիպված էին արտասահմանում ամեն ինչ սկսել զրոյից՝ կրելով անասելի սոցիալ-տնտեսական զրկանքներ: Նյութական կորուստների հետևանքների հետ կապված պետք է հաշվարկվեն նաև անցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած՝ թե՛ գնաճը, և թե՛ բանկային տոկոսները: Վերջապես, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին, ինչով միայն կամբողջականացվի հայերին հասցված նյութական կորուստների վերջնական թիվը: Այս առումով նշենք, որ եթե 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովին Ա. Ահարոնյանի և Նուբար փաշայի ներկայացրած հուշագրով հայ ժողովրդի նյութական կորուստների 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկը գնաճի վերահաշվառմամբ 1987 թ. պետք է կազմեր 640.89 մլրդ ֆրանկ*, ինչը համարժեք է 106.82 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ 2008 թվականի դրությամբ՝ 298 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ գումարին հետազոտող Գ. Բաղջյանը անցած տասնամյակների համար ավելացնում է տարեկան 5 % նվազագույն բանկային տոկոսադրույ-

---

860 Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

* 1915-1919 թթ. 1 ֆրանկը 1987 թ. համարժեք էր 33.5 ֆրանկի:

քը, ինչի արդյունքում 2008 թ. դրությամբ ստացվում է մոտ 9.97 տրլն ԱՄՆ դոլար[861]: Այս գումարը Գ. Բաղջյանը ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված միայն փաստացի նյութական վնասի (damnum emergens) չափն է համարում, որի մեջ չի ներառվում հասցված նյութական վնասի հետևանքով բաց թողնված շահույթը (lucrum cessans), ինչպես նաև բարոյական վնասը (pretium doloris)[862]:

Դրանից հետո միջազգային հանձնաժողովը պետք է հստակեցնի հայերից բռնազավթված ունեցվածի և խախտված գույքային իրավունքների վերականգնման գործընթացի մարտավարությունը: Այս առումով առաջնահերթությունը պետք է տրվի միջազգային իրավունքում սահմանված՝ նյութական վնասի հատուցման այնպիսի ձևերին, ինչպիսիք են **ռեստիտուցիան**, որը ենթադրում է նախկին վիճակով նյութական արժեքների վերականգնումը, այդ թվում՝ բնեղենով և **ռեստորացիան**, որը նախատեսում է նյութական արժեքների նկատմամբ այն բոլոր իրավունքների վերականգնումը, որոնք առկա են եղել նախկինում: Միայն այս ձևերի կիրառման անհնարինության դեպքում միջազգային հանձնաժողովը հարկադրված կարող է դիմել **կոմպենսացիայի** հատկացմանը՝ հայերի կորցրած գույքի և ունեցվածքի դիմաց համարժեք դրամական փոխհատուցման ձևին: Դրամական փոխհատուցումները պետք է փոխանցվեն միջազգային հանձնաժողովին կից ստեղծված Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հատուկ **հիմնադրամին**:

Նման մեթոդաբանությամբ առաջնորդվելու պարագայում միջազգային հանձնաժողովը թուրքական իշխանություններին կարող է պարտավորեցնել կատարել Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածով ամրագրված այն պահանջը, որով ոչ միայն ուժը կորցրած պետք է ճանաչվի օսմանյան կառավարության «Լքյալ գույքի» մասին 1915 թ. օրենքն ու դրա լրացումները, որոնցով

---

[861] Տե՛ս Baghdjian K. K., The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned,
p. 275-276.

[862] Տե՛ս Baghdjian K. K., նշվ. աշխ., էջ 277-278:

հայերի գույքն իբր թե ի պահ էր հանձնվում թուրքական իշխանություններին, սակայն գործնականում, ըստ էության, «օրինականացվում» էր ցեղասպանության ենթարկված հայության ամբողջ ունեցվածքի թալանի քաղաքականությունը, այլև պետք է բացառվի նման օրենքների ընդունումն ապագայում[863]:

Սրանից բխող հաջորդ տրամաբանական քայլը պետք է լինի թուրքական իշխանություններին ուղղված միջազգային հաձնաժողովի պահանջը՝ պաշտոնապես չեղյալ հայտարարել 2001 թ. հունիսի 29-ի **նախարարական գաղտնի շրջաբերականը** և հանձնաժողովի տրամադրության տակ դնել Կարսի, Արդահանի մարզերի ու Սուրմալուի գավառի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի նահանգների ու նախկինում հայերով բնակեցված կայսրության այլ տարածքների գույքերին վերաբերող Թափուի և կադաստրի գլխավոր վարչության արխիվներում պահվող մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը թվագրված բոլոր փաստաթղթերը: Այս շրջաբերականի չեղարկումը փաստաթղթերի հրապարակման պարտադիր նախապայմանն է, քանի որ հենց դրանով է Թափուի և կադաստրի գլխավոր վարչությանը կարգադրվել արխիվում պահվող մինչև 1924 թ. օգոստոսի 6-ի փաստաթղթերից՝ հայերի, հույների և ասորիների թափուների գրանցումների մասին տեղեկություններ չտրամադրել: Ավելին, այդ տեղեկությունների արտահոսքը համարվել է Թուրքիայի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգ և կադաստրային տեղական մարմիններին հրահանգվել է նման պահանջ ներկայացնողների ինքնության մասին անմիջապես հայտնել Թափուի և կադաստրի գլխավոր վարչություն[864]:

Թուրքիային պետք է հարկադրվի ընդունել նաև օրենք, որով կամրագրվի նախկին օսմանահպատակ հայերի ժառանգների իրավունքն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ այլ շրջանների տարածքներում հայտանաբերված թաքստոցների նկատմամբ, իսկ սեփականատերերի ժառանգներին կողոպտ-

---

863 Հայաստանը…փաստաթղթերում, էջ 678:

864 Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Եր., 2015, էջ 101:

ված ունեցվածքի մասին տեղեկություններ ստանալու երաշխավորված իրավունք պետք է ընձեռվի[865]: Հանձնաժողովը պետք է առանձին բնակավայրերով հրապարակի իր կողմից հայտնաբերված հաշիվների, շարժական և անշարժ գույքի բոլոր տերերի անունները՝ ժառանգներին որոնելու համար: Չպահանջված միջոցները պետք է փոխանցվեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հատուկ հիմնադրամին: Առանց այս պարտադիր նախապայմանների միջազգային հանձնաժողովը պարզապես չի կարողանա իրականացնել հայերի բռնազավթված գույքի և ունեցվածքի վերականգնման իր գործառույթը:

Հայտնաբերված անշարժ ու շարժական գույքի վերադարձման տեխնիկական հարցերում հանձնաժողովը լիովին կարող է առաջնորդվել Սևրի պայմանագրի նույն 144-րդ հոդվածի դրույթներով, որոնք միանգամայն կիրառելի են նաև այսօր: Հանձնաժողովի ստորաբաժանումների կողմից հայերին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվի օրինական տերերին: Ընդ որում՝ վերադարձվող գույքը պետք է ազատված լինի ցանկացած պարտքից, որոնցով դրանք կարող են ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից և վերադարձվի՝ առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցում տրամադրելու: Այն դեպքերում, երբ հանձնաժողովը գույքի նկատմամբ չեղյալ կհամարի նոր սեփականատերերի իրավունքները, նրանց փոխհատուցելու պարտականությունը պետք է դրվի թուրքական կառավարության վրա, և դա առիթ չի կարող դառնալ այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումն ուշացնելու համար: Թուրքական իշխանությունները պետք է նպաստեն հանձնաժողովի որոշումների կատարմանը, որոնք անբեկանելի են և չեն կարող վիճարկվել կամ

---

[865] Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 31:

վերանայվել թուրքական դատական կամ վարչական մարմինների կողմից[866]:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի դրույթներին լրացնելու էին գալիս նույն փաստաթղթի 285-րդ և 288-րդ հոդվածները, որոնց համաձայն՝ դաշնակից երկրի կամ Օսմանյան կայսրությունից անջատված տարածքների վրա առաջացած նոր պետությունների քաղաքացիություն ձեռք բերած նախկին օսմանահպատակները Թուրքիայի տարածքում մնացած իրենց գույքի նկատմամբ պահպանում էին բոլոր իրավունքները և դրանք նախկին վիճակով պետք է վերադարձվեին օրինական տերերին[867]:

Սևրի պայմանագրի վավերացված չլինելու և իրավական ուժի մեջ չմտնելը հանգամանքը չի նսեմացնում նշված հոդվածների նշանակությունը, քանզի դրանց որոշ դրույթները փաստորեն կրկնվում են օրինական ուժի մեջ մտած 1923 թ. Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներում, որոնցով Թուրքիան ընդունել է, որ բռնագրաված լքյալ գույքը ենթակա է վերադարձման տերերին կամ նրանց ժառանգներին: Լոզանի պայմանագրի 3-րդ բաժնում՝ «Տնտեսական դրույթներ» առկա են «Հիմնական իրավունքներ և շահեր» դրույթները, որոնց 65-րդ հոդվածի երրորդ պարբերության համաձայն՝ 1915 թ. տեղահանությունն ու սպանությունները բնորոշվում են որպես «անօրինական կերպով ձեռնարկված ռազմական միջոց», և սահմանվում է, որ դրա հետևանքով մարդկանց կրած վնասները պետք է փոխհատուցվեն: Այդ հոդվածի համաձայն՝ ողջ մնացած յուրաքանչյուր հայ կամ սպանված հայի ժառանգ ունի տեղահանության հետևանքով բռնազավթված իր գույքը նախկին վիճակով հետ ստանալու իրավունք[868]:

Հատկանշական է, որ Լոզանի պայմանագրի 66-րդ հոդվածը կրկնում է Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի այն դրույթը, որ գույքային հարցերի շուրջ վեճերը պետք է կարգա-

---

866 Տե՛ս Հայաստանը…փաստաթղթերում, էջ 679-680:

867 Տե՛ս Treaty of Peace with Turkey. Sighned at Sevres. August 10, 1920, p. 65, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf

868 Տե՛ս Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php

վորվեն խառը հանձնաժողովների կողմից, իսկ վերադարձվող գույքը պետք է ազատված լինի ցանկացած պարտքից, որոնցով կարող են ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից, իսկ նոր սեփականատերերին և օգտագործողներին հատուցում տրամադրելու հարցը դրվում էր թուրքական պետության վրա: Նույն պայմանագրի 65-րդ հոդվածն էլ վերաշարադրում է Սևրի պայմանագրի 285-րդ և 288-րդ հոդվածների այն դրույթները, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ձեռք բերած նախկին թուրքահպատակների ունեցվածքը և գույքային իրավունքներն ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրանից անջատված տարածքներում պետք է վերադարձվեին նախկին տերերին[869]: Սա վկայում է այն մասին, որ Լոզանի պայմանագրի 65-րդ և 66-րդ հոդվածները Սևրի պայմանագրի 144-րդ, 285-րդ և 288-րդ հոդվածների վերախմբագրված տարբերակներն են հանդիսանում:

Սակայն իրենց գույքի նկատմամբ իրավունքը վերականգնելու հարցում թուրքական կողմը պնդմամբ ժամանակային սահմանափակում մտցվեց նախկին օսմանահպատակների, այդ թվում՝ հայերի համար: Այդ իրավունքից օգտվել կարողանալու համար նրանք պետք է մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը լինեին իրենց գույքի մոտ: Թուրքիան այդ դրույթը չկատարելու համար ներս չի թողել երկրի սահմանից դուրս գտնվող հայերին և կարծես պատնեշ է ստեղծել պետության շուրջ: Թուրքիայում իշխանության եկած քեմալական վարչախումբը սկսեց հետևողական օրենքներ ընդունել, որոնցով արգելվում էր հայերի մուտքը երկիր և անգամ արգելվում էր պետության ներսում ապրող հայերի ազատ տեղաշարժը, նպատակ հետապնդելով թույլ չտալ, որ նրանք Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածների հիման վրա վերականգնեն իրենց գույքային իրավունքները և տեր կանգնեն իրենց ունեցվածքին:

Այսպես, Լոզանի պայմանագրի վավերացումից անմիջապես հետո՝ 1923 թ. սեպտեմբերին, քեմալական իշխանությունները «Լքյալ գույքերի մասին» հերթական օրենքն ընդունեցին, որի 2-րդ հոդվածի համաձայն, Կիլիկիայից և արևելյան նա-

---

[869] Տե՛ս նույն տեղում:

հանգներից գաղթած հայերը չպետք է ստանային երկրի մուտքի արտոնագիր, իսկ 3-րդ հոդվածում սահմանվում էր, որ երկիր չպետք է մուտք գործեին նախկին օսմանահպատակ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք նոր կարգավիճակ էին ստացել առանց թույլտվության[870]: Տվյալ օրենքի «տրամաբանությամբ» ենթադրվում էր, որ բոլոր նախկին օսմանահպատակները, մասնավորապես հայերը, որոնք արդեն հասցրել էին ճաշակել այդ հպատակության ողջ «քաղցրությունը», ենթարկվելով ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման, կրել անասելի տառապանքներ բռնագաղթի ճանապարհներին, և ի վերջո հայտնվել Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրներում, դրանց քաղաքացիությունը ստանալուց առաջ պետք է թույլտվություն խնդրեին այն պետությունից, որն ամեն կերպ ջանում էր ոչնչացնել իրենց: Այս աբսուրդային «փաստարկով» թուրքական իշխանություններն ընդամենը փորձում էին «հիմնավորել» իրենց նախկին հպատակների իրավունքների, մասնավորապես՝ գույքային իրավունքի, պետականորեն վարվող զանգվածային ոտնահարման քաղաքականության ճշմարիտ լինելը: Մինչդեռ նոր քաղաքացիություն ձեռք բերելը բացարձակապես չի ենթադրում նախկին հպատակության երկրի թույլտվությունը և նախկին հպատակության երկրում չի կարող հանգեցնել սեփականության նկատմամբ տվյալ անձի ունեցած իրավունքների չեզոքացմանը: Հետագայում՝ 1927 թ. մայիսի 23-ին ընդունվեց «Օսմանյան կայսրության հպատակների որոշակի կատեգորիաների» մասին օրենքը, որի համաձայն Թուրքիայի քաղաքացիությունից զրկվում էին Օսմանյան կայսրության այն հպատակները, որոնք անկախության պատերազմի ժամանակ չէին մասնակցել ազգային պայքարին, գտնվել էին Թուրքիայից դուրս և Լոզանի պայմանագրի ստորագրումից՝ 1923 թ. հուլիսի 24-ից, մինչև տվյալ օրենքի հրապարակումն ընկած ժամանակահատվածը չէին ներգաղթել թուրքական տարածք[871]: Այս օրենքն ար-

---

[870] Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 258:

[871] Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 15:

դեն լիովին բացառում էր իրենց հայրենիք հայերի վերադարձի իրավունքը:

Թուրքական իշխանությունների այս գործողությունների վերաբերյալ իրավական գնահատական ստանալու նպատակով Հայ գաղթականների Կենտրոնական կոմիտեն 1929 թ. հունիսի 5-ին ստիպված եղավ դիմել հեղինակավոր չորս իրավաբան-միջազգայնագետների՝ Ժիլբեր Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին և Անդրե Մանդելշտամին՝ խնդրելով խորհրդատվական եզրակացություն: Ի պատասխան դիմումի՝ 1929 թ. օգոստոսի 2-ին նրանք հրապարակեցին իրենց խորհրդատվական եզրակացությունը: Հրապարակված փաստաթղթի համաձայն թուրքական իշխանությունների գործողությունները որակվում էին որպես անօրինական, որոնցով խախտվում էին ո՛չ միջազգային իրավունքի գործող նորմերը, այլև Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով Թուրքիայի ստանձնած պարտավորությունները: Մասնագետները միաբերան պնդում էին, որ նախկին հայ հպատակների նկատմամբ իրականացվող սահմանափակումները որևէ իրավունք չեն տալիս թուրքական կառավարությանը բռնազավթելու հայերի ունեցվածքը, ինչը ենթակա է վերադարձման օրինական տերերին: Որպես ասվածի հիմնավորում, նրանք մեջբերում էին հետպատերազմյան խաղաղության պայմանագրերից հոդվածներ, որոնցով ընդգծվում էր մասնավոր սեփականության պաշտպանության և վնասված կամ բռնագրավված ունեցվածքի վերականգնման պարտադիր սկզբունքը[872]:

Այսպիսով, նախկին օսմանահպատակ հայերի կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը, թուրքական իշխանությունների կողմից նրանց հպատակությունից և հայրենիք վերադառնալու իրավունքից զրկելը չի կարող օրինական հիմք հանդիսանալ նրանց իրենց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելու համար: Թուրքական կողմն, անշուշտ, փորձելու է խուսափել սեփական գույքի նկատմամբ հայերի իրավունքների վերականգնման գործընթացից, առաջ քաշելով այն թեզը, թե իբր նրանք բաց են թողել իրենց իրավունքները

[872] Նույն տեղում, էջ 27:

վերականգնելու համար Լոզանի պայմանագրով սահմանված ժամկետները՝ մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը չգտնվելով իրենց գույքի մոտ: Սակայն իր տրամադրության տակ ունենալով վերը բերված փաստերը, հանձնաժողովը հեշտությամբ կարող է չեզոքացնել թուրքական կողմի պնդումները այն հակափաստարկով, որ եթե անգամ տեղի է ունեցել ժամկետների բացթողում, ապա դա եղել է ոչ հայերի պատճառով, այլ թուրքական իշխանությունների կողմից ընդունված խտրական օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի ընդունման հետևանքով, որոնցով նպատակ է հետապնդվել ձախողել Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով հայերի կողմից իրենց գույքային իրավունքների վերականգնման հնարավորությունը:

Միջազգային հանձնաժողովը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, որ ցեղասպանությունից հետո հայերի ունեզրկման քաղաքականությունը շարունակվել է նաև Հանրապետական Թուրքիայի կողմից, որը կոպտորեն խախտելով Լոզանի պայմանագրի դրույթները, ապօրինաբար բռնագրավել է հայկական համայնքին պատկանող կալվածքները[873]: Ուստի, միանգամայն բնական պետք է դիտվի հանձնաժողովի կողմից Լոզանի պայմանագրի 38-րդ և 39-րդ հոդվածներով ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության Թուրքիայի ստանձնած պարտավորությունների կատարման պահանջը: Նշված հոդվածներով Թուրքիան պարտավորվել է երաշխավորել իր բոլոր բնակիչների կյանքի և գույքի լրիվ և ամբողջական պաշտպանությունը՝ առանց ազգության, սեռի, լեզվի կամ կրոնի խտրականության: Ի կատարումն այդ հոդվածների, հանձնաժողովը կարող է պահանջել, որ թուրքական իշխանությունները սկսեն կենսագործել 2008 թ. «Համայնքային կալվածքների մասին» օրենքի դրույթները, որոնցով թուրքական կառավարությունը պարտավորվել է 18 ամիսների ընթաց-

[873] Թորիկյան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ 1976, էջ 138:

քում վերադարձնել ոչ մահմեդական համայնքների ու մասնավորապես՝ հայերի բռնազավթված գույքը[874]:

3.Ցեղասպանության հոգևոր-մշակութային հետևանքների հաղթահարումը

Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հարցում նախանշված մեխանիզմները լիովին կիրառելի են նաև այդ հանցագործության **հոգևոր-մշակութային հետևանքների** հաղթահարման գործում: Մասնավորապես նույն սկզբունքներով կարող է ստեղծվել Հայ պատմամշակութային ժառանգության պահպանման և վերականգնման միջազգային հանձնաժողով, օրինակ, UNESCO-ի հովանու ներքո, որը կազմված կլինի Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների, ինչպես նաև «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում» ընդգրկված Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների կոնսենսուսով ընտրված ներկայացուցիչներից և կղեկավարվի UNESCO-ի կողմից նշանակված նախագահի կողմից: Հանձնաժողովի առաքելությունը պետք է լինի Արևմտյան Հայաստանում և ներկայիս Թուրքիայի այլ տարածքներում հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանների ներկա և ապագա իրավական կարգավիճակի հստակեցումը, ինչպես նաև դրանց հնարավոր վերանորոգման աշխատանքների նախագծերի և նախահաշիվների կազմումը, որոնց ծախսերը պետք է դրվեն թուրքական պետության վրա: Այս միջազգային հանձնաժողովը պետք է ստեղծի յուրաքանչյուր հուշարձանի անձնագիրը, վեր հանելով դրա կառուցման ստույգ պատմական հիմքերը, որոնք հետագայում պետք է զետեղվեն այդ հուշարձանների մոտ տեղակայված վահանակների վրա և որպես պարտադիր տեղեկատվական նյութեր օգտագործվեն թուրքական զբոսաշրջային կազմակերպությունների կողմից: Հուշարձաննե-

---

[874] Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», էջ 185:

րի վերականգնողական աշխատանքների բոլոր փուլերը պետք է վերահսկվեն հանձնաժողովի կողմից՝ դրանց նախնական տեսքից շեղումներ թույլ չտալու նպատակով: Վերականգնողական աշխատանքներից հետո եկեղեցիները պետք է վերադարձվեն համապատասխան հայ հոգևոր կառույցի տնօրինությանը:

4. Բռնազավթված հայրենիքի նկատմամբ իրավունքի վերականգնման փուլային լուծումը

Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ **հայրենազրկման հաղթահարման** համար, ցավոք, մեր տրամադրության տակ չկա այնպիսի իրավական փաստաթուղթ, որով կհաստատվեր հայ ժողովրդի իրավունքը Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգների նկատմամբ: Առաջին աշխարհամարտից առաջ, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական պայմանագրով նախատեսվում էր եվրոպացի վերատեսուչների միջոցով Արևմտյան Հայաստանի նահանգներն ու Տրապիզոնի նահանգը բաժանել երկու վարչական միավորների որոնց հայ բնակչության իրավունքների պաշտպանության նպատակով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր բարենորոգումներ իրականացնել[875]: Ուստի, այս հարցում ավելի խելամիտ կլինի որպես հայրենազրկման հետևանքների հաղթահարման իրավական հիմք ընդունել 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը, որով հայ ժողովրդի իրավունքը վերականգնվում էր Արևմտյան Հայաստանի երեք նահանգների՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի մեծ մասի վրա, իսկ Հայաստանի համար դեպի Սև ծով ելք ապահովելու նպատակով այդ տարածքին կցվում էր Տրապիզոնի նահանգի մեկ երրորդ մասը: Հայոց հայրենազրկման հետևանքների հաղթահարման հարցում անպայմանորեն պետք է պահպանվի Վուդրո Վիլսոնի իրավարար վճռում ամրագրված Հայաստանի դեպի Սև ծով ելք ապահովելու կարևորագույն սկզբունքը: Քանի որ տարածքային խնդիրների վերջնական կարգավորումը երկար ժամանակ կպահանջի, ուստի թուրքական կողմը հատուցման հարցի շուրջ հա-

[875] Հայաստանը…փաստաթղթերում, էջ 210–219:

մաձայնության ձեռքբերումից անմիջապես հետո Հայաստանին Տրապիզոնի նավահանգստից անվարձահատույց օգտվելու իրավունք պետք է տրամադրի:

Ակնհայտ է, սակայն, որ նախքան Վիլսոնյան Հայաստանի տարածքների հարցերի քննարկումը պետք է հստակեցվի Հայաստանի Հանրապետությանը սահմանակից Կարսի, Արդահանի մարզերի ու Սուրմալուի գավառի իրավական կարգավիճակը: Հայկական կողմն իրավասու է ի սկզբանե պահանջ ներկայացնել Արևելյան Հայաստանից միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի կոպիտ խախտումներով անջատված նշված տարածքների նկատմամբ, վիճարկելով 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի օրինականությունը[876]: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ 1945 թ. հուլիսի 22-ին Պոտսդամի կոնֆերանսում Խորհրդային Հայաստանի անունից ԽՍՀՄ-ը Թուրքիային արդեն իսկ ներկայացրել է այդ տարածքների վերադարձման պահանջը[877]:

Բայց կարծում ենք, որ անգամ Հայաստանի Հանրապետությանը սահմանակից Կարսի, Արդահանի և Սուրմալուի տարածքների նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների վերականգնումը տեղի չի ունենալու միանգամից և ամբողջական ձևով. դա լինելու է տևական, փուլային մի գործընթաց: Թուրքական կողմին տարածքային զիջումների մտքի հետ աստիճանաբար ընտելացնելու նպատակով, այդ ուղղությամբ նրա կողմից կատարվելիք առաջին քայլերը կարող են լինել խորհրդանշական բնույթի, օրինակ՝ Հայաստանին փոխանցել համայն հայության խորհրդանիշներ հանդիսացող **Արարատ լեռը** և հայ միջնադարյան մայրաքաղաք **Անիի ավերակները**: Ինչ վերաբերում է օրինակ՝ Սուրմալուի գավառի բնակավայրերի փուլային տարբերակով Հայաստանի Հանրապետությանը միացմանը, ապա դա պետք է կա-

---

876 Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 121-137:

877 Դաշնակից երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2), Եր., 1989, էջ 168:

տարվի միայն այն բանից հետո, երբ միջազգային հանձնաժողովի կողմից վերջնականապես կարգավորված կլինեն կոնկրետ բնակավայրերի հետ կապված գույքային բոլոր հարցերը և հայերին պատկանող գույքը վերադարձված կլինի ժառանգներին կամ նրանց շահերի ներկայացուցչին՝ ՀՀ-ին: Այս հանգամանքը կարևոր է այնքանով, որ հայերին պատկանող անշարժ գույքի վրա ապօրինաբար բնակվող Թուրքիայի քաղաքացի թուրքերը կամ քրդերը, մինչև տվյալ բնակավայրերի Հայաստանին միացնելը պետք է ազատած լինեն հայերի սեփականությունը կամ սահմանված կարգով սկսեն բնակվարձ վճարել հայկական կողմին: Հայերին պատկանող անշարժ գույքի հետ կապված խնդիրները նախապես լուծելու պարագայում Հայաստանի Հանրապետությանը փոխանցման ենթակա տարածքներում բնակվող Թուրքիայի քաղաքացիների մի մասը ինքնակամ կհեռանա նշված բնակավայրերից:

Թուրքական կողմին պետք է բացատրվի, որ իր քաղաքացիների կողմից անշարժ գույքը օրինական տերերի ժառանգներին կամ նրանց շահերի ներկայացուցիչներին, օրինակ՝ ՀՀ-ին, փոխանցելու ձգձգումները և առավել ևս այդ գույքին հասցված վնասի, օրինակ ավերման, դեպքում դրա պատասխանատվությունը և հասցված վնասի փոխհատուցման պարտավորությունը դրվելու է թուրքական իշխանությունների վրա: Մյուս կողմից, Թուրքիայի քաղաքացի թուրքերին կամ քրդերին պետք է բացատրվի, որ անգամ եթե նրանք ցանկանան շարունակել բնակվել Հայաստանին փոխանցվող տարածքներում, ապա միանշանակ պահպանելու են իրենց թուրքական քաղաքացիությունը և համարվելու են օտարերկրյա քաղաքացիներ՝ դրանից բխող իրավական կարգավորումներով:

Միջազգային հանձնաժողովի գործունեության արդյունքում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հատուկ հիմնադրամին փոխանցված դրամական միջոցները առաջին հերթին պետք է նպատակաուղղվեն միացվող բնակավայրերում ենթակառուցվածքների ստեղծմանը և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, արտոնյալ պայմաններ ստեղծելով այնտեղ հայ բնակչության վերաբնակեցման համար: Այսպիսով,

հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների վերականգնումը դժվար և տևական գործընթաց է լինելու, որը տասնամյակներ կպահանջի: Չմոռանանք, որ Գերմանիայի կողմից հրեաներին տրամադրվող միայն նյութական հատուցման գործընթացը շարունակվում է արդեն վեց տասնամյակ:

Անշուշտ, քաջ գիտակցում ենք, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման և մասնավորապես այդ հանցագործությամբ հայ ժողովրդին հասցված նյութական վնասների հատուցման գործընթացի մեկնարկի համար նախ անհրաժեշտ է համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների եթե ոչ լիակատար աջակցությունը, ապա առնվազն դրական վերաբերմունքը: Դրան զուգահեռ՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նպատակով հարկավոր է խոսել թուրքերի հետ, նրանց իրազեկել ցեղասպանության ընթացքում մեր ժողովրդի կրած տառապանքների մասին, ներկայացնել դրա հետևանքների հաղթահարման հարցում թուրքական կողմից մեր ակնկալիքները և թուրքերի ներկա և ապագա հարաբերությունների կարգավորման մեր մոտեցումները: Այս առումով պետք է նշել, որ արդեն քսան տարի է թուրք հասարակության մեջ այս խնդիրները բարձրաձայնվում են Թուրքիայի հայերի՝ պոլսահայության և ծպտյալ հայերի ներկայացուցիչների կողմից: Չափազանց կարևոր համարելով, որ թուրքահայերն այդ գործն արդեն սկսել են, միևնույն ժամանակ նրանք պետք է ստանան ողջ հայության աջակցությունը: Սակայն, նշված հարցերի շուրջ թուրքերի հետ երկխոսություն սկսելուց առաջ, նախ հարկավոր է ընտրել ճիշտ զրուցակցի՝ մտավորականների, որոնք չեն ուղղորդվում իշխանությունների կամ ծայրահեղ ազգայնական ուժերի կողմից, հակառակ պարագայում ձեռնարկված ջանքերը կլինեն ապարդյուն, անտեղի կվատնվեն ռեսուրսներն ու ժամանակը: Կարծում ենք, որ թուրք հասարակության մեջ ճիշտ թիրախ խումբ ընտրելու և նրա հետ նշված հարցերի շուրջ քննարկում սկսելու համար հարկավոր կլինի նույն պոլսահայերի և ծպտյալ հայերի միջնորդությունը:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ վաղուց հասունացել է պահը, որ մենք թեկուզև՝ ընդհանուր գծերով, մշակենք Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի մեխանիզմների և գործիքակազմի մոդել կամ մոդելներ, որպեսզի մեզ համար բարենպաստ աշխարհաքաղաքական և տարածաշրջանային իրավիճակների ստեղծման պարագայում ունենանք ներկայացնելիք փաստաթղթի նախնական տարբերակը: Սույն զեկույցը այդ խնդիրներին լուծումներ գտնելու ընդամենը մի փորձ է, որն, անշուշտ, չի հավակնում վերջնական ճշմարտության: Առաջարկվող մոդելը գուցե երազանքի կամ երևակայության ոլորտից կարող է համարվել, սակայն եթե յուրաքանչյուրս մտովի մի քանի տասնամյակ հետ գնանք, ապա անկեղծորեն կխոստովանենք, որ այն ժամանակ կարող էր զառանցանք համարվել անգամ ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Չմոռանանք՝ մեր ժողովրդի մոտ մշտապես եղած Արցախի ազատագրման երազանքն էր, որ հնարավոր դարձրեց մեր հաղթանակը Արցախյան պատերազմում և հանգեցրեց երկրորդ հայկական պետության հռչակմանն ու փաստացի գոյությանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1.«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ» ՁԵՎԱ-ԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՇՈՒՐՋ
(*Արմեն Մարությունի*)……..7

2.ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
(*Աշոտ Մելքոնյան*)……13

3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ…42

3.1. Հայ բնակչությունն Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս տարածաշրջաններում Առաջին աշխարհամարտի նախօրեին
(*Գեղամ Բաղալյան*)……42

3.2 Հայերի սոցիալ-ժողովրդագրական վիճակն Օսմանյան կայսրությունում ցեղասպանությունից առաջ և ներկայիս Թուրքիայի Հանրապետությունում
(*Գևորգ Պողոսյան*)……..65

4. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ……..90

4.1. Հայոց ցեղասպանության ընթացքում հայ պատմաճարտարապետական ժառանգության ոչնչացումն ու դրա դիմաց հատուցման խնդիրները
(*Դավիթ Քերթմենջյան*)……..…90

4.2.Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում հայկական կերպարվեստի ու կիրառական

արվեստի կորուստները համիդյան ջարդերից ու Մեծ եղեռնից մինչև մեր օրերը (պատմական համառոտ ակնարկ)
(*Արարատ Աղասյան*)……135

5. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ……202

5.1. Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում
(*Անուշ Հովհաննիսյան*)……....202

5.2. Հայոց ցեղասպանության իրագործմամբ Արևմտյան Հայաստանի հանքահումքային ռեսուրսների շահագործումից տեղաբնիկ հայ ժողովրդին զրկելն ու դրա հետևանքները
(*Հայկ Մելիք-Ադամյան*)……270

5.3. Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված նյութական վնասների վերաբերյալ Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հուշագրի հաշվարկների հստակեցման հարցի շուրջ
(*Արմեն Մարուքյան*)……..387

6. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(*Վլադիմիր Վարդանյան*)……410

7. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ (հնարավոր «ճանապարհային քարտեզի» ուրվագիծ)
(*Արմեն Մարուքյան*)……..455

8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Արևմտյան Հայաստանի Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սեբաստիայի նահանգների, Տրապիզոնի նահանգի և Պարսկահայքի Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գավառների որոշ բնակավայրերի հայ բնակչության ունեցվածքը և կրած նյութական կորուստներն ըստ ականատես վերապրողների վկայությունների
(*Արմեն Մարուքյան*).....481